ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ЛЕЧЕБНИК
ЛОШАДЕЙ И ВООБЩЕ ВЬЮЧНЫХ ЖИВОТНЫХ (XIII в.)

Текст, предисловие и словарь
Б. Л. ЧУКАСЗЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԺՇԿԱՐԱՆ
ՁԻՈՑ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՑ (ԺԳ ԴԱՐ)

2066

Աշխատասիրությամբ
Բ. Լ. ՉՈՒԳԱՍԶՅԱՆԻ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

636. 1 ինդեքս ԳՄԴ 46. 1
Բ 615

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս՝ բժշկական գիտությունների թեկնածու Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ: (ԺԳ դար)
Բ 615 /Աշխատասիր. Բ. Լ. Չուգասզյանի; Պատ. խմբ. Մ. Հ. Մուրադյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980.—273 էջ

«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկը մեզ է հասել մեկ ձեռագրով միայն և հրապարակվում է առաջին անգամ: «Բժշկարանը» միջնադարյան Հայաստանի մշակութային կարևոր երևույթներից է և իր բառագանձով՝ հայերեն անծանոթ նոր բարդություններով, օտար, հիմնականում արաբերեն ու պարսկերեն, բառերի ու տերմինների փոխառություններով, միջին հայերենի եզակի հուշարձաններից է:

Գիրքը հասցեագրվում է հայ բժշկության պատմությամբ և հայագիտությամբ զբաղվողներին:

Բ $\frac{3805000000}{703(02)-80}$ 99—79

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980. ներածության և բառարանի համար:

636. 1
ԳՄԴ 46. 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծանուն հայագետ պրոֆ. Հրաչյա Աճառյանը 1906 թ. Իրանի Թավրիզ քաղաքում տեսել ու նկարագրել է 13-րդ դարի մի եզակի անասնաբուժական մատյան, որը նա հիացմունքով բնութագրել է որպես «նյութով ու գրությամբ պատվական» ձեռագիր: Պրոֆ. Աճառյանը, ինչպես տեղեկանում ենք նրա հիշողություններից[1], ժամանակի սղության պատճառով «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» կոչվող այս հուշարձանին ծանոթացել է հպանցիկ, ուստի միայն կարողացել է կատարել դրա նկարագրությունը և ընդօրինակել հիշատակարանը: Այս կապակցությամբ նա գրել է. «Սույն պատվական և խիստ հետաքրքիր գրվածքը ընտիր գանձարան մ՚ է հայերեն անասնաբուժական և անասնաբուժական բառերու, այնպես որ գրքիս լիակատար ուսումնասիրությունը պիտի տա թե՛ ընդարձակ տեղեկություններ գիտության մասին և թե՛ բազմաթիվ հայերեն նոր բառեր մեր բառարանի համար»[2]:

Հետագայում, քանական թվականներին, պրոֆ. Աճառյանը մի քանի տարի ապրել և դասավանդել է Թավրիզում, բայց մեզ անհայտ պատճառներով, այլևս չի անդրադարձել այդ կարևոր երկին:

1968 թ. հայ-վրացական մատենագրական կապերին քաջատեղյակ բանասեր Պ. Մուրադյանը Աճառյանի «Կյանքիս հուշերից» գրքի լույս ընծայման առիթով «Սովետական Հայաստան» լրագրում հրապարակած «Որտե՞ղ է հիմա «նյութով ու գրությամբ պատվական ձեռագիրը» վերնագրով հոդվածում անդրադարձել է այդ «Բժշկարանի» 18-րդ դարում հայերենից վրացերենի կատարված թարգմանությանը, նշելով, որ թարգմանության ձեռագիրը

[1] Տե՛ս Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 300:
[2] Հր. Աճառյան, Ցուցակ ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 137:

ներկայումս պահվում է Թբիլիսիի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (S-3467)։ Նկատի ունենալով, որ հայերեն թարգմանության ձեռագիրը համարվում էր կորած, հարգելի բանասերը առաջարկում էր վրացերենից այն վերաթարգմանել հայերեն[3]։

Դեռևս 50-ական թվականներից Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը սկսել էր հետաքրքրվել «Բժշկարանի» ճակատագրով։ Ստացված կցկտուր տեղեկությունները ձեռագրի հետքերը տանում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներ։ Եվ ահա, 1971 թ. Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր Արևելյան երկրների բաժնի վարիչ պրոֆ. Ա. Սանջյանը, Երևանում գտնված ժամանակ, հայտնեց, որ «Բժշկարանը» ներկայումս գտնվում է Լոս-Անջելոս քաղաքի բնակիչ Զարեհ Սարաչյանի մոտ, իսկ 1972 թ. տողերիս հեղինակին բախտ վիճակվեց ձեռագիրը տեսնել և ստանալ դրա մանրաժապավենը։ Ինչպես մեզ տեղեկացրեց Զ. Սարաչյանը, տարիներ առաջ, երբ իր ընտանիքը ապրում էր Թավրիզում, հայրը՝ Խաչիկ-աղա Սարաչյանը «Բժշկարանը» գնել է դերձակ Շիրմազանից, որի մոտ և ժամանակին տեսել է պրոֆ. Աճառյանը։ Ձեռագիրը պահվում է խնամքով ու հոգատարությամբ և գտնվում է այն նույն վիճակում, ինչպես նկարագրված է Թավրիզի ձեռագրացուցակում։

Ձիագիտությունը հին և միջնադարյան Հայաստանում.—Հանրահայտ է, որ Հայկական բարձրավանդակում ձին հայտնի է եղել հին ժամանակներից։ Ինչպես գրում է կենսաբան Ս. Մեժլումյանը, «Փոքր Ասիայի արևելքում ձիերի գոյության առաջին վստահելի ապացույցները վերաբերում են մ. թ. ա. 2000 թվականին։ Այստեղ ձին արդեն մ. թ. ա. 1900—1700 թվականներին օգտագործվում էր ռազմակառքերում։ Հին Արևելքում Փոքր Ասիայի, Սիրիայի, Հայաստանի և Կովկասի լեռնային շրջաններում մեծ եղջերավոր անասունների հետ մեկտեղ ձին օգտագործվում էր

[3] Տե՛ս «Սովետական Հայաստան» լրագիր, 1968, հուլիսի 24, № 171։ Ձեռագիրն առաջին անգամ նկարագրել է Է. Թաղայշվիլին, տե՛ս «Описание рукописей», I, էջ 690—693. այնուհետև դրա մասին հիշատակել է Լ. Մելիքսեթ-բեկն իր «Հայերը վրաց հին գրականության մեջ» հոդվածում. տե՛ս «Գեղարվեստ», 1921, № 7, էջ 48։

որպես լծկան»[4]։ Իսկ մ. թ. ա. առաջին հազարամյակում Հայաստանն արդեն հռչակված էր իր ազնվացեղ ձիերով և դրա շնորհիվ, ձիաբուծությունը երկրի տնտեսության հիմնական ճյուղերից էր։ «Գրավոր աղբյուրները հավաստում են,— գրում է ուրարտագետ Ն. Հարությունյանը,—որ ձիաբուծությունը եղել է Ուրարտուի և նրան առ ժամանակ ենթակա մի ամբողջ շարք նահանգների բնակիչների սիրած զբաղմունքը... Ուրարտուի և նրա ենթակա երկրների անասնապահության մեջ առանձին տեղ են ունեցել նաև ջորիները և ավանակները»[5]։ Ուրարտուում ձիերը «օգտագործվում էին հողագործական և այգեգործական-խաղողագործական աշխատանքներում, ինչպես նաև անասնապահության մեջ։ Դրանք կանոնավորապես օգտագործվում էին նաև ռազմական նպատակներով, հատկապես մի շարք երկրների ու ցեղերի դեմ ուրարտացիների սրընթաց արշավանքների ժամանակ»[6]։

Հին Հայաստանում ձիաբուծության զարգացման մասին են վկայում Քսենոֆոնն (430—354 մ. թ. ա.) ու Ստրաբոնը (I դ. մ. թ. ա.)։ Քսենոֆոնը իր հանրահայտ «Անաբասիսում» գրում է, որ Հայաստանում պարսից արքայի համար ձիեր էին բուծվում, որ ուղարկվում էին նրան որպես տուրք[7]։ Հույն հեղինակը, որ հին աշխարհի առաջին ձիագետներից է եղել (տե՛ս նրա «Ձիավարժության արվեստը»[8]), ավելացնում է, որ հայկական «ձիերը փոքր էին պարսկականներից , բայց ավելի աշխույժ»[9]։ Ստրաբոնը, երեք դար հետո, ավելի հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում. ըստ նրա՝ Հայաստանը «ձիերի համար սքանչելի արոտավայրեր ունի և ոչնչով չի զիջում Մեդիային, այնպես որ պարսից արքաների տրամադրության տակ գտնվող Նեսայական ձիերը այստեղ են վար-

[4] *С. К. Межлумян,* Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972, стр. 89.

[5] «Հայ ժողովրդի պատմություն», հ. Ա, Երևան, 1971, էջ 374։

[6] *Н. Арутюнян,* Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 210.

[7] Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, թրգմ. Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 98։

[8] *Xenophon*, VII, Scripta Minora, Translated by E. C. Marchant and G. W. Bowersock (Loeb Classical Library), London, 1968, p. 296—369. Այս տեղեկությունը մեզ հայտնեց պատմաբան դոկտ. Հր. Բարթիկյանը։

[9] «Անաբասիս», էջ 98։

ժեցվում, իսկ Հայաստանի սատրապը Միհրի հանդեսների համար ամեն տարի Պարսկաստան է ուղարկում մոտ 20.000 մտրուկ։ Մյուս կողմից Արտավազդը, երբ Անտոնիոսի հետ Մեդիա մտավ, բացի հեծելազորից, նրան մատուցեց նաև 6000 զրահապատ ձի»[10]։

Աստվածաշնչում հաղորդված է, որ «ի տանէ Թորգոմայ» բերված ձիերն ու ջորիները վաճառվում էին փյունիկյան քաղաքներում (Եզեկիել, իէ, 14)։

Անասնագետ Գ. Կ. Աֆինյանը, որ իր «Ձիաբուծությունը հին Հայաստանում»[11] հետաքրքիր աշխատանքում ի մի է բերել այս հարցի կապակցությամբ հայ և օտար աղբյուրների վկայությունները, հավաստում է, որ մինչ արաբական արշավանքները Հայաստանը, հատկապես Արշակունիների ժամանակ, ունեցել է հզոր հեծյալ բանակ, և գալիս է այն եզրակացության, որ «դեռևս հայկական պետականության կազմավորման արշալույսին հայերը զարգացած ձիաբուծություն ունեին»[12]։

Ավելի ուշ, 10-րդ դարում, Իբն Հաուկալը վկայում է, որ Հայաստանի շահրիները (ազնվացեղ սևորակ գրաստներ) իրենց տոկունությամբ, գեղեցկությամբ, աշխուժությամբ ու համբերությամբ հայտնի են եղել Իրաքում, Սիրիայում և Խորասանում[13]։

Ձիաբուծական ավանդները Հայաստանում շարունակվել են նաև հետագա դարերում. Կիլիկիայի ձիերը նույնպես մեծ համբավ ու ճանաչում են ունեցել ներքին ու արտաքին շուկաներում։ Եվ դա հասկանալի է. մարտական ու տոկուն ձիերի ու գրաստների մեծ կարիք ուներ հայկական հեծելազորը, միաժամանակ դրանք եկամտի կարևոր աղբյուր էին և արտահանվում էին շատ երկրներ։ Բավական է հիշել, որ 1263 թ. Հեթում Ա-ն մարտի է հանել

10 Տե՛ս Н. Арутюнян, Նշված աշխ., էջ 174։

11 Տե՛ս Գ. Կ. Աֆինյան, Ձիաբուծությունը հին Հայաստանում. «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. 1, 1964, էջ 236—258։

12 Անդ, էջ 243։

13 Տե՛ս Opus Geographicum auctore Ibn Haukal, ed. J. H. Kramer, Lugduni, 1938, p. 346. Այս վկայությունը մեզ է տրամադրել պատմաբան դոկտ. Ա. Տեր-Ղևոնդյանը։

18.000[14] (Ալիշանի մոտ 12.000[15]) հեծյալ, Թորոս Բ-ը Մանուիլ կայսրին է նվիրաբերել «ձիս ազնիւս», իսկ Լևոն Բ-ը Եգիպտոսի սուլթանի հետ 1288 թ. կնքած պայմանագրով պարտավորվել է յուրաքանչյուր տարի նրան տալ 25 ընտիր երիվար և 25 ընտիր ջորի[16]։ Նույն 1288 թ. Լևոն Բ-ը հատուկ հրովարտակով ճենովացիներին թույլատրել է Այասից ձի և ջորի արտահանել[17]։ Նման պայմաններում միանգամայն պարզ է, թե ինչու Կիլիկյան Հայաստանում մեծ ուշադրություն էին դարձնում ձիաբուծության զարգացմանը, թե ինչու Հեթում Ա-ը հրամայում է պատրաստել «Վասն ձիոյ պայթարնման», իսկ Սմբատ Գ-ը՝ «Բժշկարան վասն ձիոյ ի առհասարակ գրաստնոյ» ձեռնարկները, թե ինչու «Գիրք վաստակոց» գյուղատնտեսական այլ ճյուղերի հետ մեկտեղ թարգմանված են նաև ձիերի բուծման, բուժման ու խնամքին վերաբերող հատվածները։

Հայկական ձիերի ավանդական հռչակը շարունակվել է և հետագա դարերում։ Այս կապակցությամբ հետաքրքիր է 15-րդ դարի սկզբներին Հայաստանից Իրան անցնող Իսպանիայի դեսպան Ռույ Գոնզալես դի Կլավիխոյի (1403—1406 թթ.) վկայությունը։ Իր ուղեգրությունների մեջ նա պատմում է, որ Մակվի բերդի հայ իշխան Նուր էդ-Դինը իր որդու հետ «երեք լավ թամբված ձիեր» է նվեր ուղարկել Լենկ-Թեմուրին, երբ վերջինս մոտեցել և սպառնացել է բերդին[18]։ Ձիերի թվական այս փոքր քանակը ինքնին թելադրում է, որ նվիրաբերված նժույգները արտակարգ լավ և ազնվացեղ պիտի լինեին, որպեսզի բավարարեին քմահաճ բռնակալին և չվիրավորեին նրա ինքնասիրությունը։

Ձիագիտության հարցերի նկատմամբ հետաքրքրությունը Հայաստանում չի դադարում անգամ հայկական պետականության անկումից հետո՝ ուշ միջնադարում, երբ երկիրը գտնվում էր թուրք-պարսկական տիրապետության ներքո։ Սրա ապացույցն է 1696 թ. Վանա Հոգոց վանքում Ղազար վարդապետի ձեռքով գրված ձիա-

14 Տե՛ս «Բազմավեպ», 1924, էջ 387—388։

15 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 32։

16 Անդ։

17 Անդ, էջ 387։

18 Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. Ա, Երևան, 1932, էջ 114։

մատյանը, որը կրում է «Բժշկարան վասն ձիոյ և ջորոյ և կամ իշու, որ խոսրով արքայն գրել էտ» խորագիրը[19]։ Նման աշխատանքի ստեղծումը, անկասկած, թելադրված է եղել անհրաժեշտությունից, միայն ձիաբուծական մեծ կենտրոնների առկայությունը կարող էր այսպիսի ձեռնարկի պահանջ առաջադրել։

* * *

Անասնաբուժության վերաբերյալ առաջին գրավոր վկայությունները մեզ են հասել Հին Եգիպտոսից, Բաբելոնից, մասնագետ ձիաբույժներ են եղել Հնդկաստանում, Իրանում, Հին Հունաստանում, ամենայն հավանականությամբ նաև Ուրարտուում։ Հունական աղբյուրները ձիագիտական և ձիաբուժական ձեռնարկների հեղինակներ են հիշում Քսենոփոնին (430—354 մ. թ. ա), Հիերոկլեսին (3-րդ դ.), Ապսիրտոսին (4-րդ դ.), Թեոմնեստոսին (ժամանակն անհայտ)[20] և ուրիշների, իսկ 10-րդ դարում Կոստանդին Ծիրանածին կայսրը կազմել է տալիս ձիաբուժական և երկրագործական ամբողջական ձեռնարկներ՝ «Գեոպոնիկա» և «Հիպպիատրիկա» անուններով, որտեղ ի մի են բերված հին աշխարհի երկրագործական ու ձիաբուժական մտքի նվաճումները։

Ձիաբուծական ու ձիաբուժական առանձին ուսումնասիրություններ ու ձեռնարկներ են պահպանվել հնդկական, արաբական ու պարսկական գրականության մեջ։

Արաբական գրականությունը հարուստ է եղել ձիագիտության վերաբերյալ երկերով. Ալ-Նադիմին իր «Ֆիհրիստում» («Ցանկում», մոտ 988 թ.) թվարկել է այդպիսի բազմաթիվ գրքերի անուններ[21], իսկ աշխարհի շատ գրադարաններում պահպանված են արաբերեն ձիագիտական երկեր[22], որոնցից մի քանիսն են միայն հրապա-

19 Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 459, էջ 104 բ։

20 Տե՛ս Геопоники, Византийская сельскохозяйственная энциклопедия X века. Введение, перевод с греческого и комментарий *Е. Э. Липшиц*, М — Л., 1960, стр. 345—346.

21 Տե՛ս The Encyclopaedia of Islam, v. II, 1965, p. 786.

22 Եվրոպական արևելագիտական կենտրոններում պահվող ձիագիտական ձեռագրերի մասին տե՛ս Hammer-Purgstall, Sur la Chevalerie des Arabes antérieure à celle de l'Europe, Journal Asiatique, 1849 և *L. Mercier*, La chasse et les sports chez les Arabes, Paris, 1927.

րակված։ Արաբերեն ձիագիտության հնագույն ձեռնարկն Ասմաիի «Ձիամատյանն»[23] է (հրատ. 1895 թ.), այնուհետև հայտնի են Հիշամ ալ-Քալբիի և Իբն ալ-Արաբիի աշխատությունները[24] (հրատ. 1928 թ.)։ Կահիրեի Ահմադ երրորդի դպրոցում ներկայումս պահվող հեջրի 605 (1208/9) թվականին գրված «Ձիաբուժության համառոտ մատյանը»[25], ինչպես նաև Բրիտանական գրադարանի Or. 3483 պարսկերեն ձիագիտությունը[26], որ ալ-Մուջահիդ Ալի իբն ալ-Մալիք ալ-Մուայադ Դավուդի (14-րդ դ.) արաբերեն երկի թարգմանությունն է, իրենց կառուցվածքով և բովանդակությամբ հիմնականում համընկնում են պահպանված արաբերեն այլ ձիագիտարաններին։

Պարսից գրականության հնագույն արձակ երկերից Օնսոր ալ-Մ՚ալի Քեյ Քավուսի (11-րդ դ.) հայտնի «Կաբուսնամեի» 25-րդ գլուխը[27] ձիագիտական հետաքրքիր տեղեկություններ է պարունա-

23 *A. Haffner*, Das Kitab Al Chail von Al Asmai, Vienna, 1895.

24 Ibn al-Kalbi and Ibn al-Arabi, Kitab Asma khayl al-Arab wa fursanihim, ed. G. Levi Della Vida, Les „Livres de chevaux", Leiden, 1928.

25 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս ابراهيم شبوح، فهرست المخطوطات المصورة، الجزء الثالث، العلوم القسم الثانى، الطب، القاهره، ١٩٥٩، ص ١٦٩. (Իբրահիմ Շաբուհ, Պատկերազարդ ձեռագրերի ցուցակ, Գ հատոր՝ Գիտություններ, Բ մաս՝ Բժշկություն, Կահիրե, 1959, էջ 169)։

Այս ձեռագրի և դրա 1209/10 թվականի մի այլ ընդօրինակության մանրաժապավենները շնորհակալությամբ ստացել ենք Կահիրեի ֆրանչեսկյան միաբանության անդամ հայագետ Հ. Վ. Մուսթարիհից, իսկ ձեռագրի վայրը մեզ է հայտնել գերմանացի արևելագետ պրոֆ. Բ. Բրենտյեսը (Հալեի համալսարան, ԳԴՀ)։

26 Տե՛ս *Ch. Rieu*, Supplement to the Catalogue of the Persian Manuscripts in British Museum, London, 1895, p. 114.

Այս և Ռյուի ցուցակում (Ch. Rieu, Catalogue of the Persian Manuscripts in British Museum, v. II, 1966, p. 480—482) նկարագրված պարսկերեն երեք այլ ձիագիտարանների ձեռագրերի մանրաժապավենները դոկտ. Վ. Ներսիսյանի օժանդակությամբ շնորհակալությամբ ստացել ենք Բրիտանական գրադարանից (ձեռագրերը նախկինում պատկանել են Բրիտանական թանգարանին)։

27 قابوس بن وشمگیر زیار، قابوسنامه، باتصحیح و مقدمه و حواشی عبدالمجید بدوی، تهران، ۱۳۴۲، ص ۱۰۵. (Կաբուս իբն-Վեշմգիր Զիար, Կաբուսնամե, Աբդ ալ-Մաջիդ Բադավիի առաջաբանով և ծանոթագրություններով, Թեհրան, 1342/1963, էջ 105)։

կում. այստեղ հեղինակը նախ բազմաթիվ խորհուրդներ է տալիս ձի գնելու վերաբերյալ, ապա համառոտակի թվարկում է մի շարք հիվանդություններ, որոնք ձիերի համար թերություններ են և նվազեցնում են նրանց արժեքը։ Այս հուշարձանում ձիերի արատների ու արժանիքների նկարագրությունները, գույների թվարկումն ու հիվանդությունների անվանումները վկայում են, որ հեղինակը շատ ընդարձակ գիտելիքներ է ունեցել ձիաբուծության ու ձիաբուժության վերաբերյալ, իսկ կիրառված տերմինները, հիմնականում արաբերեն, ցույց են տալիս, որ 11-րդ դարում արդեն արաբական ձիագիտությունը ուներ այնպիսի բարձր մակարդակ, որ հարևան երկրներում, ինչպես Պարսկաստանում, անկաշկանդ օգտվում էին դրանից, անգամ փոխ առնում արաբական տերմինները։ Այս ավանդները հետագայում ևս շարունակվել են պարսից գրականության մեջ։ Արաբերենից, ինչպես և սանսկրիտից պարսկերեն թարգմանված ձիագիտարաններին զուգահեռ պարսիկներն ունեցել են նաև նմանատիպ ինքնուրույն երկեր. սրանք հիմնականում ձեռագիր վիճակում են։

Բրիտանական գրադարանում պահվող մեզ ծանոթ պարսկերեն հինգ անտիպ ձիագիտարաններից[28] *երկուսը* (Add. *14057 և* Add. *16854) թարգմանված են սանսկրիտից (առաջինը 15-րդ, իսկ երկրորդը 18-րդ դարերում), մեկը* (Or. *3483)՝ արաբերենից, իսկ երկուսը* (Add. *7716, 23562) ինքնուրույն են (18-րդ դար)։ Սանսկրիտից թարգմանվածների տերմինները հիմնականում հնդկական են, իսկ արաբերենից թարգմանվածներինն ու ինքնուրույն գործերինը՝ արաբական։*

Հնդկաստանում գրված երկու ձիագիտարաններ 1911 թվականին հրատարակել է Դ. Ս. Ֆիլլոտը. մեկը հինդուստանի լեզվից անգլերենի թարգմանված Ռանգին անունով հեղինակի «Ձիամատյանն» է, մյուսը Զաբարդաստ խանի (18-րդ դար) «Թուհֆաթ-ուս-Սադր» («Նվեր թագաժառանգին») խորագրով պարսկերեն ձիամատյանի բնագիրը՝ որոշ տերմինների անգլերեն համառոտ բացատրությամբ[29]*։*

28 *Տե՛ս Ch. Rieu-ի նշված ձեռագրացուցակները։*

29 *Zabardast Khan*, The Faras-nama, Edited in the Original Persian with English notes by D. C. Phillott, Calcutta, 1911.

Վերը հիշված ձիագիտարաններում գործնական նկատառումներով նկարագրվում են ձիերի տեսակները, նրանց կազմվածքից ու գույներից ճանաչելու, խնամելու եղանակները, հիվանդություններն ու բուժման միջոցները, երբեմն էլ՝ ձիավարժության որոշ ձևեր։

Ձիագիտությունը հայ մատենագրության մեջ.—*Հայ հեղինակների ինքնուրույն ձիագիտական երկեր մեր մատենագրությանը հայտնի չեն, բայց պետք է ենթադրել, որ Հայաստանի հարուստ արոտավայրերում սփռված տասնյակ հազարների հասնող ձիերը խնամվել ու բուժվել են գործնական գիտելիքներ ունեցող ձիապանների ու ձիաբույժների միջոցով։*

Հայ մատենագրության մեջ ձիագիտության վերաբերյալ պահպանված երկերն ու մի քանի փոքր բնագրերը ժամանակագրական կարգով հետևյալներն են.

1. «Վասն ձիոց ազգաց և ցեղից մատակաց, յովտակաց և քուռակաց, խրատք և բժշկութիւնք»։—Սա 10-րդ դարի հունական «Գեոպոնիկայի» 16-րդ գիրքն է, որ հայերեն «Գիրք վաստակոցի» ՄՂԴ-ՅԺ (294—310) գլուխներն է ընդգրկում։ «Այս (իմա՝ 16-րդ) գրքի տեղեկությունները ձիերի խնամքի, նրանց բուժման, ավանակների ու ուղտերի վերաբերյալ,—գրում է «Գեոպոնիկայի» ռուսերեն գիտական թարգմանությունը (1960 թ.) իրականացնող Ե. Լիպշիցը,—քիչ ընդհանրություններ չունեն հին հեղինակների «Հիպպիատրիկաների» ու «Կինեգետիկոնների» հետ։ Համեմատել նաև հռոմեական գյուղատնտեսներ Վարրոնի (2-րդ դ.), Կոլումելլայի (6-րդ դ.), Պալլադիոսի (4-րդ դ.), ինչպես նաև Պլինիոսի (8-րդ դ.) մոտ եղած տեղեկությունների հետ»[30]*։*

Հայերեն «Գիրք վաստակոցը», որ թարգմանված է «Գեոպոնիկայի» արաբական տարբերակից և հիմնականում արտացոլում է հունական բնագրի բովանդակությունը, իր 294—310-րդ գլուխներում (դուռն) մոտավոր ճշտությամբ պահպանել է նաև «Գեոպոնիկայի» 16-րդ գրքի գլուխների հերթական կարգը. հայկական բնագրում, ձեռագրից թերթեր ընկած լինելու հետևանքով, պակասում են միայն վերջինիս 16—22 գլուխները[31]*։ Բովանդակության որոշ*

30 Геопоники, стр. 345—346.

31 *Տե՛ս «Գիրք վաստակոց», Թարգմանութիւն նախնեաց արաբացի լեզուէ, Վենետիկ, 1877, էջ 209 տողատակի ծանոթագրությունը։*

խոտորումները հավանաբար գալիս են արաբական թարգմանությունից և կամ հայ թարգմանչի միջամտությունից։

«Գիրք վաստակոցի» ձիաբուծության և ձիաբուժության հարցերին նվիրված գլուխները հետևյալներն են (ըստ որում ՄՂԴ գլխի վերնագիրը «Գեոպոնիկայի» 16-րդ գրքի ընդհանուր վերնագիրն է).

Դուռն ՄՂԴ. Վասն ձիոց ազգաց և ցեղից մատակաց, յովտակաց և քուռակաց, խրատք և բժշկութիւնք։
Դուռն ՄՂԵ. Յաղագս գունոց։
Դուռն ՄՂԶ. Վասն յովտակաց և վազցընելոյ։
Դուռն ՄՂԷ. Վասն վազցընելոյն։
Դուռն ՄՂԸ. Վասն սնուցանելոյ զքուռակն, խրատ։
Դուռն ՄՂԹ. Վասն խշոյ ջորի ծնուցանելոյ, խրատք։
Դուռն Յ. Վասն դեղերոյ և ցաւոց, որ ընծայի ի գրաստ։
Դուռն ՅԱ. Յաղագս տաքութեան գրաստու։
Դուռն ՅԲ. Յաղագս աչացն թէ ցաւի կամ սպիտակի։
Դուռն ՅԳ. Յաղագս ջղերոյն թէ ցաւի կամ ուռենայ։
Դուռն ՅԴ. Վասն խոցտուկի։
Դուռն ՅԵ. Յաղագս թոքցաւի։
Դուռն ՅԶ. Վասն այն ցաւերուն, որ չլինին յերևան։
Դուռն ՅԷ. Յաղագս զոզարգելի։
Դուռն ՅԸ. Յաղագս արիւն գոզելոյ ձիոյ։
Դուռն ՅԹ. Վասն ձիոյ, որ ողն տեռի։

Ղ. Ալիշանը, որ 1877 թ. իրականացրել է «Գիրք վաստակոցի» հրատարակությունը, հայերեն թարգմանության ժամանակը դնում է 13-րդ դարից ոչ ուշ՝ «Վաղագոյն քան թէ անագան»[32]։ Ալիշանի կարծիքն ընդունելի է եղել բոլոր այն հեղինակների համար, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են «Գիրք վաստակոցին», միայն բանասեր Կ. Բրոքելմանն է, որ 1896 թ. «Byzantinische Zeitschrift» հանդեսում (հ. Ե, էջ 385—409) ինչ-ինչ փաստերից ելնելով՝ «Գիրք վաստակոցի» թարգմանության վայրը համարում է Լեհաստանը, իսկ ժամանակը՝ ուշ միջնադար։ Բրոքելմանի փաստարկները հիմնավորապես մերժված են 1900 թ.

32 Անդ, էջ ԺԵ։

«Բազմավեպում» տպագրված Ս. Սարյանի հոդվածում[33]։ Բանասեր Գ. Անդրիկյանը թարգմանության ժամանակը դնում է «ԺԲ. դարուն մէջ և ապահովապես 1160 թվականեն վերջ»[34], իսկ թարգմանիչ համարում է Մխիթար Հերացուն։ Անդրիկյանը իր եզրակացությունը բխեցնում է «Ջերմանց մխիթարութեան» և «Գիրք վաստակոցի» մեջ առկա մի քանի բառերի ընդհանրությունից. այսպես՝ Մխիթար Հերացին մի անգամ գործածել է դուռն «գլուխ» իմաստով, այն դեպքում, երբ «Գիրք վաստակոցը» գրքի բոլոր բաժանումները «դուռն» է անվանում, Հերացին գործածում է ճովուփ բիր խոտի անունը, «Գիրք վաստակոցը» նույնպես հաճախ հիշատակում է այդ խոտը, Հերացին ունի ճոռոմ ձեթ, նույնը նաև «Գիրք վաստակոցը», Հերացին գործածում է տանու («ընտանի»), նույնը նաև «Գիրք վաստակոցը» և նման մի երկու այլ զուգահեռներ ևս։

Հավանաբար այսպիսի այլ ընդհանրություններ կարելի է գտնել Մխիթարի, ինչպես նաև 13-րդ դարի այլ հեղինակների գործերում, բայց սրանք թույլ փաստարկներ են որևէ հուշարձանի ժամանակը ճշտելու համար։ Մինչդեռ «Գիրք վաստակոցի» և քննության առարկա «Բժշկարանի» բառապաշարների մեջ եղած բազմաթիվ ընդհանրությունները (տե՛ս բառարան) գալիս են հաստատելու, որ այս երկու երկերի թարգմանությունները արտացոլում են համարյա նույն ժամանակաշրջանի լեզվական իրողությունները, և ճիշտ է եղել Ղ. Ալիշանը «Գիրք վաստակոցի» թարգմանության ժամանակը դնելով ոչ ուշ քան 13-րդ դարը։

2. «Վասն ձիոյ պայթարնման»—1263 թ. Հեթում Ա-ի հրամանով Ստեփանոս սարկավագի կողմից թարգմանված ձիադարմանական երկն է, որ մեզ չի հասել (տե՛ս էջ 22)։

Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» ռուսերեն աշխատության մեջ միջնադարյան հայկական ձիաբուժարանները թվարկելիս հիշատակում է նաև արաբերենից հայերեն թարգմանված մի երկ, որի հեղինակն իբր Իբն ալ-Բեյտարն է[35]։ Վերջինս հայտնի միջատաբան է եղել. սակայն

33 Տե՛ս Ս. Սարյան, Կ. Պրոքելմանը և «Գիրք վաստակոց»-ի հայերեն թարգմանությունը։ «Բազմավեպ», 1900, էջ 4—7, 52—58։

34 Տե՛ս Գ. Անդրիկյան, Վաստակոց գրքին թարգմանիչը, «Բազմավեպ», 1906, էջ 439։

35 Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении с древнейших времен до наших дней, ч. II, Ереван, 1946, стр. 171.

նրա վերաբերյալ եղած հանրահայտ գրականության մեջ նման որևէ աշխատություն չի հիշատակված։ Այստեղ պրոֆ. Հովհաննիսյանն ինչ-որ բան շփոթել է. թերևս նրան թյուրիմացության մեջ է գցել այս երկի վերնագիրը՝ «Վասն ձիոյ պայթարեման». պայթար (պայտար) կամ բեյտար արաբերեն հասարակ անուն է և նշանակում է «անասնաբույժ»։

3. «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ».—1296—98 թթ. Սմբատ Գ-ի հրամանով բժիշկ Ֆարաջի կազմած, մեր քննության առարկա ձիաբուժական ձեռնարկն է. (մանրամասն նկարագրությունը տե՛ս էջ 31—32)։

4. «Ի գրաստու բժշկարանէն փոխած».—Ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում, 5 էջից բաղկացած պակասավոր մի բնագիր է (ունի Ա-Ժ Թ, ԻԹ-Լ գլուխները). հրատարակված է 1867 թ. «Բազմավեպում»։ Հրատարակիչը՝ Հ. Հ. Թ., այս կապակցությամբ գրում է. «Թերևս ուրիշ մշակյալ լեզուներե շատ վար չմնար մեր լեզուն ալ բուսաբանության, կենդանաբանության, մարդակազմության և մանավանդ բժշկության բառերու կողմանե, որոնք հարյուրով, հազարով կը գտնվին միայն բժշկարաններուն մեջ... կիսակատար ծանոթությամբ զոր ունինք լեզուներնուս բովանդակ հարստությանը՝ շատ անգամ իզուր կը հոգնինք նորանոր բառեր ստեղծելու (որոնց ստեպ կը պակսի ալ արվեստը և վայելչությունը), մինչդեռ նախնիք արդեն մեզմե առաջ անվանած և բացատրած են զանոնք, ոչ եթե մեկ, այլ երբեմն նաև երկու երեք զանազան բառերով»[35]ա։ Հ. Հ. Թ. հիմք ընդունելով բնագրի մեջ առկա մի քանի ֆրանսերեն բառերը (որոնք արդյունք են խաչակրաց արշավանքների հետևանքով հայերի ու լատինների սերտ շփումների), ենթադրում է, թե այն «գաղիերենէ թարգմանուած է», մինչդեռ սրա առաջին իսկ համեմատությունը բժիշկ Ֆարաջի «Բժշկարանի» հետ ցույց է տալիս, որ այն վերջինիս մի քանի հատվածների խիստ համառոտությունն է[36]. այստեղ պահպանված

[35]ա «Բազմավեպ», 1867, էջ 354։

[36] Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» աշխատության մեջ, ձեռքի տակ չունենալով Ֆարաջի կազմած «Բժշկարանը» և միայն օգտվելով Հր. Աճառյանի նկարագրությունից, այս երկու բնագրերը տարբեր աշխատանքներ է համարել. տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении с древнейших времен до наших дней, ч. II, Ереван, 1946, стр. 171—174.

են թե՛ կիլիկյան միջին հայերենին բնորոշ հատկանիշները, և թե՛ արաբական փոխառությունները։ Հետևյալ զուգադրությունն իսկ ցույց է տալիս երկու բնագրերի ընդհանրությունը։

Բժշկարան ձիոյ...	Ի գրաստուն բժշկարանէն
Ա. Յաղագս ցաւուն, որ կոչի համր	Բ. Յաղագս ֆընտուի
Նշանքն այս է. որ է ֆընտու, հեվայ գրաստն խիստ, և լարի պինչքն, ու թուլնայ գլուխն և ամէն զաւդվածքն և փայտնայ ոտվին, և կտրի ի կերոյ, և ի սկիզբն այս ցաւուս՝ ինչվի յերեք աւրն, լինի շունչն տաք, և հետ երեք աւուրն պաղ լինի շունչն ու այլընդլի, ու խփի աչվին, ու խիստ դժար շարժի զամէն զաւդվածքն, ու տքալով գոզէ, և չկարէ քայլ փոխել քանձ խիստ դժար, և երբ ընկնի՝ դժար ելնէ յոտն, ու լինի, որ քրտնի անդմունքն։	Գրաստ որ ֆընտու լինի՝ հեայ խիստ և լարի պինչքն, թուլնայ գլուխն և ամէն զօդվածքըն, փայտնայ ոտվին, կտրի ի կերոյ և ի սկիզբն մինչև յերեք օրն շունչն տաք լինի և ապա պաղէ շունչն և այլընդլի, աչվին խփի և դժար շարժի ամէն զօդվածքն, և տքալով գոզէ և դժար քայլ փոխէ, և թէ ընկնի դժար ելնէ ի յոտն. և լինի որ քրտնէ անդմունքն։
Դեղ գայլցաւու, եբ ուժով լինի.	Բժշկութիւնն է այս ցաւուս.-
Առ բողկի հունդ ճանկ մի, լեսէ ու մաղէ, ու դիր զինք ի պտուկ մի, ու լից ի վրայ նարընջի ծաղկի ջուր՝ նուկի երեք, ու եփէ զինք քաջ, ու առ ի վայր, որ եղկնայ, ու լից ի յիրմէ բաժին մի ընդ փողքն ի վայր, ու բաժին մի դիր հոռոմ	

2066
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

դեղ և առ ի երակ ու հան յա-
րենէն աղէկ մի, և ապա կապէ
զերկնին ամուր քթեթով, ու առ
քացախ և ջրխռնէ ջրով և շող-
ցոյ, և լից ի վրայ այլ մարմ-
նոյն. և լինի ջրին չակքն
լիտր ինն, և քացխին լիտր ու
կէս, ու լից ի վրա ուսացն, որ իջ-
նի հետ ի հետ ի վրայ բազկացն,
ու չորս աւր գարի մի տար գրաս-
տուն, որ ուտէ, ու հետ չորս ա-
ւուրն կանգնեցոյ զինք երեք աւր
ի գնացք ջուր, որ թաղվի ոտքն
ինչվի քովքն ի ջուրն ու չէ
պարտ կանգնեցնել քանձ երեք
աւրն այլ աւելի ի ջուրն։ Եւ յա-
մէն աւր տարպա մի հան զինք
ի ջրէն ու աւծնէ զինք անպակ
գինով ու հոռոմ ձիթով աղէկ
շատ, ու մարձէ դէպ ի վայր։
Երբ տեսնուս, որ ոտվին աղէկ-
նա ու թուլնայ ու քայլէ աղէկ,
դու զինք մտոյ այլ վայր ի
ջուրն ու հան այլ վայր, ու աւծ-
նէ ու անցմնեցոյ։

Երակն(՞), և չորս օր չուտեցնել
գարի, յետ չորս աւուրն կանգ-
նեցնել զինք երեք օր ի գնացք
ջուր, որ թաղվի ինչվի քովքն ի
ջուրն, ու յամէն օր տարպա մի
հանեն ի ջրէն և օծնեն ամպակ
գինով և հոռոմ ձիթով աղէկ,
ու մարձեն դէպ ի վայր. եբ
ոտվին կակղնա ու լանա որ
աղէկ քայլէ՝ նա անցմնցեցնեն
ու արծլն։

(«Բազմավէպ», 1867,
էջ 355)

Հիմք օրինակում Ծ գլուխը դեռևս շարունակվում է և հիշված հիվանդության համար երեք այլ բուժումներ է առաջարկվում, մինչդեռ համառոտ օրինակի Բ գլուխը այս բնագրով իսկ ավարտվում է։

Համառոտ տարբերակի գլուխների համեմատությունը Ֆարաջի «Բժշկարանի» հետ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ա. Յաղագս կաղնալոյ = «Բժշկարան» գլխ. ԽԷ
Բ. Յաղագս ֆընտուի = » գլխ. Ծ
Գ. Յաղագս քամոյ և ուռեցի, որ չկարէ թրքել և գոզել=
«Բժշկարան» գլխ. ԾԱ

Դ. Յաղագս թթի, որ լինի ի գրաստուն տոշն կամ ի ձուքն=
«Բժշկարան» գլխ. Կ
Ե. Յաղագս կոլընջի = » գլխ. ԿԴ
Զ. Յաղագս քածպարի = » գլխ. ԿԸ
Է. Յաղագս մկնատմերոյ = » գլխ. Հ
Ը. Յաղագս ըռամատխսի = » գլխ. ՀԲ
Թ. Յաղագս ֆարսնի = » գլխ. ՀԳ
Ժ. Յաղագս գայլցաւի = » գլխ. ՀԴ
ԻԹ. Յաղագս սրօսի = » չիք
Լ. Յաղագս նշանաց ճանաչելոյ պլաւ գրաստն ու զվատթարն=
«Բժշկարան» գլխ. Բ

5. Բժիշկ Ֆարաջի «Բժշկարանի» մի եռկրորդ ընդօրինակություն կամ խմբագրություն պիտի լինի հավանաբար այն օրինակը, որ հիմք է հանդիսացել վրացերեն թարգմանության համար։

«Բժշկարանի» վրացերեն թարգմանությունը կատարվել է 1788 թ. վրաց Գեորգի Հերակլյան արքայազնի պատվերով։ Թարգմանությունը իրականացրել են Հովհան Օսեսձե և հայազգի Տեր-Պետրոս քահանաները՝ Փիլիպոս Ղայթմազյանի և նրա որդի Տեր-Սամվելի մասնակցությամբ[37]։

Պ. Մուրադյանը իր վերոհիշյալ հոդվածում նշել է, որ հայերեն բնագրի հիշատակարանը որոշ կրճատումներով ու աղավաղումներով փոխանցվել է վրացերենին. այսպես՝ գրչության վայրը՝ Միսր, փոխարինված է Սեբաստիայով, ժամանակը 1296—98 թվականների փոխարեն 953 թվական (1504 թ.)։ Կարծում ենք, որ այս տվյալները աղավաղման արդյունք չեն կարող լինել. դրանք, ամենայն հավանականությամբ, բխել են հայերեն հիմք բնագրից և իրավունք են տալիս ենթադրելու, որ գոյություն է ունեցել Ֆարաջի «Բժշկարանի» մի երկրորդ ընդօրինակություն կամ խմբագրություն, որ գրչագրվել է Սեբաստիայում 1504 թվականին։

Այս ենթադրությունը ավելի հիմնավորվում է, երբ համեմատում ենք մեր բնագիրը վրացերենի հետ[38]։ Վերջինս երկու

37 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1968, հուլիսի 24, № 171 և Լ. Մելիքսեթ-բեկ, Հայերը վրաց գրականության մեջ, «Գեղարվեստ», 1921, № 7, էջ 48։

38 Հայերեն բնագիրը վրացերենի հետ համեմատել ենք երիտասարդ վրացագետ Պ. Զորանյանի սիրահոժար օժանդակությամբ։

մեծ բաժնից է բաղկացած, առաջին բաժինը ունի 56 գլուխ, իսկ երկրորդը՝ 224[39], այն դեպքում, երբ մեր հայերեն տարբերակը մի ամբողջություն է՝ 182 գլխից բաղկացած։ Հիմնականում գլուխների բովանդակությունը ճիշտ է թարգմանված, միայն թարգմանչին անհասկանալի արաբական տերմինների տեղերը բաց են թողնված՝ հավանաբար հետագայում լրացնելու նպատակով։

6. «Բժշկարան վասն ձիու և ջորոյ և կամ իշու, որ խոսրով արքա զգրել ետ».—մի փոքրածավալ բնագիր է, որ գրված է 1696 թ. Վանա Հոգոց վանքում Ղազար Ամթեցու ձեռքով, պահվում է Մաշտոցյան Մատենադարանում (ձեռագիր № 459, էջ 104բ—114բ)[40]։ Այս բնագրից փոքրիկ նմուշներ հրապարակված են պրոֆ. Ավ. Տեր-Պողոսյանի «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում» աշխատության մեջ (Երևան, 1960, էջ 334)։

Պրոֆ. Տեր-Պողոսյանը այս ձիաբուժարանի գրվելու ժամանակի մասին հետևյալ մտորումներն է անում. «Մեր նախնիք,—գրում է նա,—բժշկական պրակտիկ խնդիրներով մեծ թափով զբաղվել են սկսել և ժողովրդական լեզվով գրել՝ հայկական Կիլիկիայում։ Այս բժշկարանն էլ հավանորեն կիլիկյան շրջանի արդյունք պետք է նկատել, իսկ խոսրով թագավորին օտար ազգի մեջ որոնել»։ Այնուհետև անվանի կենսաբանը հավանական է համարում, որ հիշատակված խոսրովը կարող է VII դարի պարսից արքա խոսրով Պարվիզը լինել, իսկ բժշկարանի բնագիրը՝ պարսկերեն, որ հետագա դարերում հավանաբար թարգմանվել է արաբերեն և ապա դրանից փոխադրվել հայերենի[41]։

Պրոֆ. Տեր-Պողոսյանը, ցավոք, իր ենթադրությունները լեզվական փաստերով չի հիմնավորում։ Իրականում այս ձիաբուժարանի լեզուն, առաջին իսկ հայացքից, ենթադրել է տալիս ավելի ուշ ժամանակներ. այստեղ շատ սակավ են արաբական բժշկական փոխառյալ տերմինները, մի երևույթ, որ այնքան բնորոշ է կիլիկյան գիտական աշխատասիրություններին, և ավելի շատ են թուրքերեն փոխառությունները. ձեռնարկի լեզուն պարզ է և չունի կիլիկյան միջին հայերենի առանձնահատկությունները։

Որոշակի տվյալներ չունենալով ձիաբուժական այս երկի հեղինակի կամ հիմք-բնագրի մասին, ելնելով միայն լեզվա-ոճական տվյալներից, կարելի է հավանական համարել, որ այն ինքնուրույն գործ լինի. թերևս ձեռնարկը գործնական նպատակներով կազմել է ինչ-որ ձիաբույժ։ Չի բացառվում, որ կազմողը կարող էր ձեռքի տակ ունենալ նաև այլալեզու ձիագիտարաններ, որոնցից և մեկը կրել է խոսրով արքայի (՞) անունը։

Ձիաբուժական այս փոքր երկը Ֆարաջի «Բժշկարանի» հետ առնչվում է հիմնականում առանձին տերմինների ընդհանրությամբ, որոշ հիվանդությունների նկարագրության մասնակի նմանությամբ, որ կարող է արդյունք լինել տվյալ հիվանդության հանրահայտ ախտանիշների նկարագրության. այսպես օրինակ.

Բժշկարան ձիոյ	Բժշկարան վասն ձիոյ և ջորոյ
ՀԲ. Յաղագս ռամատիսի	Վասն որ ռամատիս լինի
Նշանքն այս է. իջնի ընդ քիթն ջուրն ու չլինի հոտած և փաքայ և արցվէ աչին։ Բժշկութիւնն այս է...	Այս է նշանն. զականջսն թափթփէ և յերակ ջուր երթա ի քնթէն։

7. «Յաղագս ձիոյ մարաղի (իմա՝ հիվանդության) և ուռեցքի».—Մեկ թերթանոց բնագիր է, պահպանված Մաշտոցյան Մատենադարանի № 550 բժշկական ձեռագրում (էջ 18—19), գրված է ԺԸ դարում (1710-ից հետո), գրչության վայրը անհայտ է։ Շատ համառոտակի տրված են ձիերի մի քանի հիվանդությունների բուժման եղանակները[42]։

---

39 Վրաց ձեռագրի առաջին նկարագրող Թաղայշվիլիի («Описание рукописей», էջ 693) ուշադրությունից վրիպել է առաջին հատվածը, ուստի և. ձեռագրի նկարագրության վերջում գլուխների քանակը 224 է նշել։ Ձեռագրի նկարագրությունը սիրահոժար մեզ է տրամադրել լենինգրադաբնակ դոկ. Կ. Յուզբաշյանը։

40 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 324։

41 Ավ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 335։

42 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 346։

Բնագիրը բաղկացած է հետևյալ 5 հատվածներից.

1. Վասն ձիոյ սօլուղանի։
2. Յաղագս ձիոյ ույսուղի, որ է քոս։
3. Յաղագս ձիոյ սօլուղանի։
4. Յաղագս ձիոյ բզրղանի և սիրաջի դեղ։
5. Յաղագս ձիոյ հազի և սօլուղանի։

«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձեռնարկը.— Հայ մշակույթի պատմության համար կարևոր ժամանակաշրջան է 13-րդ դարը, երբ գրականության ու արվեստի ծաղկմանը համընթաց վերելք են ապրում նաև գործնական գիտությունները։ Բավական է հիշել, որ միայն 1263 թ., ինչպես տեղեկանում ենք Փարիզի Ազգային գրադարանում պահվող «Գիրք արուեստի քիմիական» խորագիրը կրող հայերեն մի ձեռագրում պահվող հիշատակագրություններից[43], Հայոց Հեթում Ա թագավորի հանձնարարությամբ հայերեն են թարգմանվել պողպատաձուլության, ձիադարմանության, թրագործության և աստղագիտության վերաբերյալ գրքեր, որոնք, դժբախտաբար, մեզ չեն հասել. «Եւ այս իրանիս,—ասված է քիմիաբանության այդ ձեռագրում,— այլ ի հեւռ պողպատ շինելուն և մուխ տալուն էր գրած ի նոյն իմաստասիրացն պարսից զոր թարքմանեց Հեթում թագաւորն հայոց յորժամ գնաց ԺԸՌ (18.000) հեծելով ի վերայ Թշնամոյն սուլտանին և կոտորեաց և սպառեաց զամենեսին և գնաց մեծաւ պատւով ի Պաղտատ առ Նսոր խալիֆայն և մեծ պարգևօք դարձաւ։ Եւ իմաստասէր ոմն սարկաւագ Ստեփանոս անուն գտեալ առ կայսրըն, որ այնչափ ազգ ազգի գիր և լեզու ուսեալ՝ նման առաջի փիլիսոփայիցն և ոչ կայր գիր որ առ նմայ ոչ գտանէր. և նա սիրեցեալ եղև ի հայոց թագաւորէն վասն հզօր գիտութեան և խընդրեաց յարքայէն և ետ թարգմանել երեք գիրս Վասն ձիոյ պայթարնման և Վասն Թրի շինելոյ և Վասն արեգական և լուսնի արվեստին և բերեալ ի հայոց աշխարհ»[44]։

43 Տե՛ս Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par F. Macler, Paris, 1908, p. 130 (MS 248).

44 «Բազմավեպ», 1867, էջ 354։ Գ. Զարպհանալյան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, էջ 558։ Տոքթ. Վահրամ Հ. Թորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղազարու վանքին, «Բազմավեպ», 1924, էջ 387—388։

Գիտության տարբեր բնագավառներին վերաբերող երկերի ստեղծումը Կիլիկյան թագավորության մեջ պատահական չէր. հայկական պետականությունը ամրապնդվել էր երկրում, ընդարձակվել էին նրա քաղաքական ու տնտեսական կապերը հարևան ու հեռավոր շատ պետությունների ու իշխանությունների հետ, ժողովուրդն ապրում էր համեմատաբար ավելի խաղաղ պայմաններում։ Երկրի քաղաքական ու ռազմական հզորությունն ամրապնդելու, ուժեղացող արտաքին վտանգին դիմագրավելու համար հայ իշխանավորները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեին երկրի տնտեսությանը, մասնավորապես գյուղատնտեսության զարգացմանը, արտաքին ու ներքին առևտրի ծավալմանը։

Քննության առարկա «Բժշկարանը», ինչպես ասվեց վերը, Սմբատ Գ թագավորի (1296—1298) հրամանով, Գրիգորիս կաթողիկոսի օրոք, կազմել է Ֆարաչ անունով մի ասորի բժիշկ՝ հայազգի Թորոս քահանայի օժանդակությամբ։ Վերջինս էլ եղել է ձեռագրի գրիչը։

«Բժշկարանի» ձեռագրի հիշատակարանում բժիշկ Ֆարաջը պատմում է, որ այդ ձեռնարկը «թարգմանել» է «ի յարապ գրէ ի հայ բառ»։

Հայ բժշկության պատմության լավագույն գիտակ պրոֆ. Լ. Հովհաննիսյանը գրում է, որ միջնադարում բժշկական գրականության մեջ թարգմանություն ասելով ավելի հաճախ հասկանում էին օտար աղբյուրների օգտագործումով կազմված աշխատանք[45]։ Այս առումով և պիտի ընկալել Ֆարաջի «թարգմանեցի» նշումը։

Հայերեն սույն ձիամատյանի համեմատությունը մեզ մատչելի արաբերեն ու պարսկերեն ձիագիտական մի քանի ձեռնարկների հետ[46] ցույց է տալիս նրանց կառուցվածքի ու բովանդակության որոշ ընդհանրություն, բայց կան և բացահայտ տարբերություններ ու հեղինակային միջամտություններ, մի հանգամանք, որ խորհել է տալիս, թե բժիշկ Ֆարաջը, թերևս հետևելով արաբական ձիամատյաններին, որոնք «ասացեալ են» «ի բազում իմաստասիրաց՝ Ծրնայ և Ապի Ուսուֆին և Ըռայշիտայ և այլ բազում հնդկաց և Պաղտըտայ իմաստասիրացն» և դրանց երկերի նմա-

45 Տե՛ս Л. А. Оганесян, նշվ. աշխ., էջ 173։

46 Տե՛ս սույն գրքի էջ 10—13։

նությամբ, բայց ոչ այդ ձեռնարկների բարդությամբ ու մանրամասնությամբ, կազմել է պարզ ու համառոտ շարադրված իր ձիամատյանը[47]։

Հիրավի, պետք է ընդգծել նմանատիպ արաբերեն և պարսկերեն միջնադարյան երկերի շարադրանքի բարդությունը և չափազանց մանրամասն բնույթը, մասնավորաբար ձիերի դրական և բացասական հատկությունների ճանաչման համար նրանց գույներին և անորսալի երանգներին տրվող մեծ նշանակությունը, որով խճողվում է շարադրանքը, դժվարանում նյութի ընկալումը, այնինչ ձիերի հիվանդությունների ու բուժման եղանակների նկարագրությունը համեմատաբար ավելի փոքր տեղ է գրավում։ Ի հավելումն սրա, պետք է ասել, որ պարսկական ձիամատյաններում, գույնի նկատմամբ սնոտի նախապաշարումից դրդված, տասնյակ էջեր նվիրվում են Մոհամեդ մարգարեի և նրա հետնորդների կյանքի դրվագներին՝ շեշտելով պատերազմների ժամանակ տարբեր գույների նժույգների վրա նրանց նստած լինելու «բախտորոշ» նշանակությունը։ Մեր հուշարձանում բժիշկ Ֆարաջը ձիերի գույների և երանգների նկարագրությանը փոքր տեղ է հատկացրել և, ընդհակառակը, լայնորեն լուսաբանել է ձիերի խնամքին, հիվանդություններին և բուժմանը վերաբերող հարցերը։

Բժիշկ Ֆարաջի «Բժշկարանի»՝ ինքնուրույն երկ լինելու փաստարկ պետք է դիտել նաև առաջին գլուխը, որը փոքրիկ առաջաբանի բնույթ ունի, շարադրված է քրիստոնյա մարդու աշխարհատեսությամբ, ավելին՝ այն կրում է հայերեն լեզվամտածողության որոշակի հետք. ձի բառը մեկնաբանված է ժողովրդական ստուգաբանությամբ, այն է՝ «ձիգ ընթացող և արագ արշավող». ձիերի խարանանշանների (դաղերի) մեջ կան նաև հայկական տառաձևեր, «տլսմների» հատվածում բերված է հայերեն տառանիշերով մի թալիսման։ Բժիշկ Ֆարաջը, որ, ինչպես ինքն է գրում, բազում տարիներ «ի մեծն Պաղտատ», հմտացել և վարժվել էր բժշկության մեջ, հաճախ իր փորձի մասին ակնարկներ է անում՝

47 Հավանաբար պրոֆ. Աճառյանն այս հանգամանքը նկատի ունենալով է, որ «Բժշկարանի» ձեռագրի նկարագրության մեջ բժիշկ Ֆարաջին և Թորոս քահանային համարել է «գրքիս հեղինակներ». տե՛ս Հ. Աճառյան, Ցուցակ ձեռագրաց Թավրիզի, էջ 137։

հաստատելով այս կամ այն բուժման դրական արդյունքը կամ առաջարկելով մի այլ բուժում[48]։

Բժիշկ Ֆարաջի ինքնության մասին առայժմ ոչինչ հայտնի չէ։ Պրոֆ. Լ. Հովհաննիսյանն իր «Հայ բժշկության պատմության» մեջ գրում է. «Քննարկվող ժամանակաշրջանի քիչ թե շատ հայտնի արաբ բժիշկների մեջ մենք չենք կարողացել տեղեկություններ գտնել Ֆարաջ անունով բժշկի կամ անասնաբույժի վերաբերյալ»[49]։

«Բժշկարանը» բաղկացած է 182 գլուխներից. ինչպես ասվեց, Ա գլուխը փոքր առաջաբանի բնույթ ունի, Բ-Դ գլուխները նվիրված են ձիաճանաչությանը, ԺԱ-ԺԵ գլուխները՝ ձիերի հղիությանն ու ծննդաբերությանը, ԺԶ-ԻԱ գլուխները՝ գույներին, նշաններին ու մազաոլորքներին (ձիան մարմնի վրա ոլորաձև աճած մազերի դասավորությանը), ԻԲ-ԼԱ գլուխները՝ խնամքին, ԼԲ-Խէ գլուխները՝ մարմնի տարբեր մասերի արատներին, իսկ ԽԸ—ՃՁԲ գլուխներն ամբողջությամբ վերաբերում են ձիերի այլևայլ հիվանդություններին ու դրանց բուժմանը։

Երկի՝ վերը բերված խորագիրը, պետք է ասել, ճշտորեն չի արտացոլում բովանդակությունը, որն իրականում վերաբերում է ձիագիտության և ձիաբուժության հարցերին։ Խնդիրն այն է, որ միջին դարերում, ինչպես հաստատում են մասնագետները[50], արաբական գիտության մեջ և, դրա հետևողականությամբ, սույն մատյանում, ձիագիտությունը (hippology) տարբերակված չէ անասնաբուժությունից (veterinary)։ Սրանով իսկ պիտի բացատրել, որ պրոֆ. Աճառյանը այս երկը վերնագրել է ընդհանրապես «Անասնաբուժություն»[51]։

Բժիշկ Ֆարաջն իր առջև դրված խնդիրն ի կատար է ածել մասնագետի ամենայն բարեխղճությամբ. ինչպես Մխիթար Հերա-

48 Տե՛ս բնագրի էջ 78 «Եւ շատ ենք այս կերպովս գրաստընի զորդել և հանել ի հարունթենէ», էջ 84 «Եւ ես, որ զգիրքս փոխեցի, ասեմ, զայն ֆառայիս դնելն ի վրայ Պաղտտայ աշխարհուցն է ացել և ի Շամբին տանն, նաև ի Մըրրայ, այլ ի մեր աշխարհս, որ անուանել կոչի Կիլիկէ. նա զգրաստն ի ֆառայ դնեն ի սպկիկ և յաղէկ ախոռ և ինք մէն», էջ 87 «Եւ եբ յերկրէ (իմա՝ երկարէ) առվոյտին տալն ու լինի դահ, նայ առ իս այդ լաւ է», նաև էջք 102, 103, 129։

49 Л. А. Оганесян, նշվ. աշխ., էջ 173։

50 Տե՛ս The Encyclopaedia of Islam, vol. II, 1965, p. 786.

51 Տե՛ս Հր. Աճառյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, էջ 137։

ցին, նա ևս վկայակոչում է իր աղբյուրները՝ հանվանե հիշատակելով դրանց հեղինակներին թե՛ հիշատակարանում և թե՛ բնագրում, անգամ մատյանի սկզբում դրել է հնդիկ Ճնա իմաստունի գծանկարը: Ձեռնարկը դյուրըմբռնելի դարձնելու նպատակով Ֆարաջը վարպետությամբ նկարել է նաև մի ձի՝ մարմնի յուրաքանչյուր անդամի մոտ գրելով նրա դրական և մերժելի հատկությունները. այս կապակցությամբ նա գրում է. «Այնոք, որ չէին գիտաւըք և ճանաչողք զաւդվածոց և կերպարանաց ձիոյ, մեք հանաք զձիոյն կերպն ու գրեցաք ի խէչ ամէն զաւդվածի զիր որպիսութիւնն, զաղէկն և զպեղծն» (տե՛ս ներդիր նկարը՝ էջ 58բ):

«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկի լեզուն.— Լեզվական իր ատաղձով Ֆարաջի կազմած սույն «Բժշկարանը» համահունչ է 13-րդ դարի Կիլիկիայում ստեղծված այնպիսի հանրահայտ հուշարձանների հետ, ինչպիսիք են Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը», ֆրանսերենից թարգմանված «Անսիզք Անտիոքայ» օրենքների ժողովածուն, Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» բժշկագիտական երկը և, մասնավորապես, արաբերենից թարգմանված «Գիրք վաստակոց» գյուղատնտեսական ձեռնարկը:

Անասնաբուժության զարգացման ներկա ժամանակաշրջանում, երբ մեծ ուշադրություն է դարձվում անցյալի փորձին, միջնադարյան ու ժողովրդական բժշկությանը, անկասկած հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև հայկական միջնադարյան բժշկական ձեռնարկները՝ լինեն դրանք թարգմանական թե ինքնուրույն: Հայտնի է, որ մինչև ուշ միջնադար մարդկանց և անասունների բժշկությամբ կարող էր զբաղվել բժիշկ անունը իր վրա կրող յուրաքանչյուր անձնավորություն. Թե՛ մարդաբուժության և թե՛ անասնաբուժության մեջ հիվանդությունների անունները և դեղամիջոցները գրեթե նույնն էին, միայն տարբեր էին դեղամիջոցների համամասնությունները:

Հրապարակվող «Բժշկարանը» տվյալ դեպքում արժեքավորվելով որպես միջնադարյան Հայաստանի մշակութային մի կարևոր երևույթ, աշխատասիրողի կողմից քննարկվում է որպես միջին հայերենի հուշարձան: Ինչպես 12-րդ դարում հայ բժշկության մեծագույն ներկայացուցիչ Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւնը» գրել է «գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց», այնպես և հետագա՝ 13-րդ դարի գործնական նշանակություն ունեցող մի շարք երկեր («Գիրք վաստակոց», «Քիմիաբանութիւն» են), այդ թվում և Ֆարաջի «Բժշկարանը» շարադրված են ժողովրդին հասկանալի խոսակցական լեզվով: Սրանով պետք է բացատրել մեր բառարաններին անծանոթ բազմաթիվ հայերեն բարդությունների (105 բառ) և օտար, հիմնականում արաբերեն և իրանական ծագում ունեցող, անգամ ֆրանսերեն մի քանի բառերի ու ձիագիտական տերմինների (146 բառ) առկայությունը «Բժշկարանում»:

Հայերեն բարդություններից կարելի է հիշատակել **արօտկան** «արոտավայր», **բեռնաս**, **բէնցաւ**, **նովամուտ**, **մազբերան** «ճաքի բացվածք», **նեղնրել** «սեղմել, ճնշել», **պախրեցաւ**, **սմբակբերան**, **քաշտեղ** «ձիան փորքաշի հարած տեղը» և այլն, փոխառյալ արմատներով կազմված հայերեն բառերից՝ **արղապել** «ծռել, կորացնել», **գանլնալ** «թուլանալ, հիվանդանալ», **նլել** «շուլով ծածկել», **մազքալել** «հղկել, փայլեցնել», **յայպել** «արատավորել», արաբերեն փոխառություններից՝ **անսաֆ** «սպի», **այսամ** «մեկ կամ երկու ոտքը սպիտակ ձի», **ատալայ** «մկան», **զիար** «լանջապանի և ողնաշարի միջև գտնվող առասանը կամ թոկը», **խարտաս** «կոկված թուղթ» (հնում ունենք հունարենից փոխառյալ **քարտէս** ձևով), **խուբ** «առվույտ», **նատ** «սահման», **նարուն** «կամակոր ձի», **նարտ** «թիկնոսկրի ցավ», **մուտլայ** «ոսկեգույն, ոսկեզօծ», **մքուք** «ընդեղենների և հեղուկների չափ», **յան** «փղի ժանիք, փղոսկր», **նասայ** «նստատեղային ջիղ», **սամանդ** «սև բաշով և պոչով ձի», **տանին** «քունջութի ձեթ», պարսկերեն փոխառություններից՝ **զառք** «դեղին», **ծնուր** (պարսկ. **զնուր**) «արյուն ծծելու ապակե խողովակ», **ռասխուտ** «ծարիր», **ռքէպ** «ասպանդակ», **սուսանի** «կապտավուն», **քիքք** «աչքի բիբ» և այլն:

Առանձին դեպքերում մի քանի օտար բառերին ու տերմիններին զուգահեռ «Բժշկարանում» տրվում են դրանց հայերեն ճշգրիտ թարգմանությունները կամ համարժեք տերմինները. այսպես՝

«**Ընթիշարն**, որ թարքմանի ցրքիլն ու մէկնիլն» (էջ 98).

«**Յատասի**, որ թարգմանի իր սպնախայտ» (իմա՝ ոսպնախայտ) (էջ 59).

«**Նէքթաֆ**, որ թարգմանի բէճցաւ» (էջ 101).

«Նուֆախ, որ թարգմանի փուքք» (էջ 100).

«Շուռնախ, որ է քացպարն» (էջ 117).

«Յաղագս տարֆայի, որ է զարկք ի յաչքն» (էջ 149) և այլն։

Պետք է հավանական համարել, որ հայերեն բարդությունների ու փոխառյալ բառերի մի մասը, հատկապես իրանական ձևերը, վաղուց ի վեր գործածական են եղել խոսակցական լեզվում, սակայն չեն գրանցվել մեր մատենագրության մեջ։

Խոսակցական լեզվի արդյունք են նաև «Բժշկարանում» առկա մի քանի ժողովրդական ասույթներ, ինչպես, օրինակ՝

«Նա որ շատ ջանայ՝ նա շատ գիտենայ» (էջ 75).

«Չիկ(ք) լաւ էր քեզ, թէ մայրն զքեզ չէր բերել» (էջ 76).

«Աղվոր բաժնելն ի ձիոյն աժէ զաղվոր ի վրայ կենալն» (էջ 76).

«Բերդ ամուր է և զարկնաւղն ըմբերելի» (էջ 77).

«Թէ ձիաւոր ես՝ նա քո ձիովն ես» (էջ 77)։

«Բժշկարանի» ձիավարժության հատվածում նկարագրված հետևյալ խաղը ժամանակի հայոց մարզական կյանքից մեզ ավանդված մի թանկարժեք բեկոր է և ազգագրական կարևոր նշանակություն ունի.

«Այր ոմն ձիաւոր... դրամ մի մէկ ոտին ներքև դներ և դրամ մի մէկայլին ի հեծելնին, և խաղայր, և շատ մի ըռմբնի (իմա՝ նիզակներ) կոտըրտէր և պուհուրտէր (՞), ու եբ տեսնուին նա հաւն կայր ի տեղին՝ դրամն անխախտ ներքև ոտինն» (էջ 77)։

Ուշադրության արժանի են «Բժշկարանում» հիշատակված դեղաբույսերի անունները, որոնց քանակը հասնում է մի քանի տասնյակի։ Հայտնի է, որ հայ միջնադարյան բժշկական գրականությունը X—XI դարերից արդեն օգտագործում էր «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանը, իսկ մեր «Բժշկարանի» ստեղծման ժամանակներում՝ 13-րդ դարի վերջերին, ավելի ստույգ 1294 թ., արդեն մեր ձեռագրերում ընդօրինակվում էր «Թարգմանութիւն անուանց դեղոց» վերնագրով դեղաբանական-բժշկական բառարանը[52]։ Գուցե բժիշկ Ցարաջն ու Թորոս քահանան այս և

52 Այս բառարանների մասին մանրամասն տե՛ս Խ. Հ. Մելիք-Փարսադանյան, Համառոտ տեղեկություններ մեզ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին, «Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության

նման այլ բառարաններ ունեցել են ձեռքի տակ և օգտվել են դրանցից, բայց և անհրաժեշտ է ասել, որ նրանց կազմած ձիամատյանում կան մի քանի դեղաբույսերի անուններ, որոնք մեր բառարաններում չկան և մեր մատենագրության մեջ հանդիպում են առաջին անգամ. այդպիսիք են՝ գում, մօրմուր, սպունգուռ, ֆախտ և այլն։

«Բժշկարանում» պահպանված են ժամանակի Կիլիկյան Հայաստանում օգտագործվող չափ ու կշռի մի քանի անուններ, որոնք հետաքրքիր են Կիլիկիայի տնտեսական կյանքի ուսումնասիրման տեսանկյունից. դրանք են՝ պաղտացի (=պաղտատցի) կանգուն (էջ 68), որ, ինչպես ասված է «Բժշկարանում», հավասար է «Հայոց երկրին կանկնովն՝ զէդ երեք հարիւր կանկուն» (էջ 68), լիտր պաղտացի (=պաղտատցի), որ հավասար է «հարիւր ու երեսուն դրամակշէռ» (էջ 66), մքուք (էջ 66), նուկի (էջ 103), կուտ (139), դրամ (114), թուղթ (104), դանգ (139)։

Հետաքրքիր է նաև հուշարձանի ուղղագրությունը. թե՛ թարգմանիչը և թե՛ ընդօրինակող գրիչը, ուշադրություն չդարձնելով ուղղագրությանը, հաճախ տալիս են գրության կրկնակ ձևեր, դրանով իսկ հնարավորություն տալով մերօրյա ուսումնասիրողին ավելի հստակ պատկերացնել ժամանակի հայերենի հնչյունական համակարգը։

Այս բոլորը և ձեռագրիս մեջ արտացոլված լեզվական բազմաթիվ այլ երևույթներ հարստացնում են մեր գիտելիքները միջին հայերենի վերաբերյալ և հաստատում վաստակաշատ գիտնականի եզրակացությունը, որ հիրավի մեր առջև ունենք «նյութով և գրությամբ պատվական» մի հուշարձան։

սեկտորի», հ. 2. Երևան, 1949, էջ 67—74։ Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (X—XV դդ.), Երևան, 1966, էջ 179—208։ Խ. Մելիք-Փարսադանյանն իր հոդվածում վերը հիշված երկու բառարանները նույնացրել է, մինչդեռ Հ. Ամալյանը, թեև ձեռքի տակ չի ունեցել «Գագիկ-Հեթումյան» բժշկարանի բառարանը և միայն օգտվել է Վ. Թորգոմյանի հոդվածից («Բազմավեպ», 1923), մանրամասն համեմատությունից եկել է այն եզրակացության, որ դրանք տարբեր բառարաններ են։ Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող «Գագիկ-Հեթումյան» կոչվող ձեռագիր բժշկարանի բառարանի լուսանկարների օգտագործմամբ մենք ևս գտնում ենք, որ դրանք տարբեր բառարաններ են։

Միջին հայերենի իրողությունները համակողմանի քննված են անվանի հայագետներ Ա. Այտընյանի, Ղ. Հովնանյանի, Յ. Կարստի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Ա. Աբրահամյանի և Գ. Ջահուկյանի ուսումնասիրություններում[53]։ Այս բնագավառում նոր առաջընթաց քայլ են Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան ինստիտուտի վերջին տարիներս (1972 և 1975) հրապարակած «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» Ա և Բ հատորները, որտեղ հեղինակները (Հ. Դ. Մուրադյան, Մ. Հ. Մուրադյան, Ս. Մ. Անթոսյան, Լ. Ս. Հովսեփյան, Պ. Կ. Վարդապետյան, Լ. Լ. Կարապետյան), ի մի բերելով միջին հայերենի ուսումնասիրման բնագավառում ձեռք բերված արդյունքները, միաժամանակ վերջին տասնամյակներում լույս տեսած նոր սկզբնաղբյուրների հիման վրա վերանայել են տեսական որոշ դրույթներ ու եզրակացություններ և ամբողջացրել միջին հայերենի ուսումնասիրության հարցերը։

Հրատարակվող «Բժշկարանը» նոր տվյալներով հաստատում է ուսումնասիրողների հիմնական եզրակացությունները և հնարավորություն է ընձեռում բացահայտելու լեզվական առանձին նոր իրողություններ ու փաստեր։ Մասնավորաբար ընդգծելի է հուշարձանիս բառապաշարը։ Միջին հայերենի բառաքննությանը նպաստելու համար աշխատասիրողը «Բժշկարանին» կցել է բառարան, որտեղ մի խումբ դժվարհասկանալի բառերի հետ տրված են մեր բառարաններին անծանոթ հայերեն նոր բարդություններն ու փոխառյալ բառերը՝ ստուգաբանությամբ հանդերձ։ Բառարանում միաժամանակ բերված են հուշարձանում հանդիպող մի շարք բառեր, որոնց ծագումն այլ բառարաններում լուծված չէ, ինչպես նաև այն բառերը, որոնք գրավոր հնագույն վկայություններ են մեր մատենագրության մեջ։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ԲՆԱԳՐԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

1. Սույն հրատարակության համար հիմք է ընդունվել «Բժշկարանի» այն միակ ձեռագիրը, որ ներկայումս պահվում է Լոս Անջելոս քաղաքում (ԱՄՆ) բնակվող Զարեհ Սարաչյանի մոտ։ Ձեռագրի մանրաժապավենը 1972 թ. աշխատասիրողը շնորհակալությամբ ստացել է Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր արևելյան երկրների բաժնի վարիչ պրոֆ. Ա. Սանջյանից։

Ձեռագրի նկարագրությունը.

Ժամանակ՝ *ԺԳ դար (1296—1298)*։ **Տեղ**՝ *Սիս*։ **Գրիչ**՝ *Թորոս քահանա*։ **Ստացող**՝ *Սմբատ Գ. արքա*։ **Թերթ**՝ *184*։ **Նյութ**՝ *թուղթ*։ **Մեծություն**՝ *16×18 սմ*։ **Գրություն**՝ *միասյուն*։ **Գիր**՝ *բոլորգիր*։ **Տող**՝ *17*։ **Մանրանկարչություն—նկարներ**՝ *«Ծնայ իմաստասէր» (4ա), ձիու գծանկար՝ շուրջը ձիու մարմնի մասերի գովելի և այպանելի բնութագրումները (33բ), ձիու խարանանշաններ (դաղեր) (37բ—39բ), ճակատազարդ (7ա, 34բ), լուսանցազարդ (7ա, 8ա, 34բ, 40ա, 101ա), զարդագիր[54] (7ա, 34բ, 40ա, 101ա)*։ **Կազմ**՝ *կաշեպատ տախտակ*։ **Պահպանակ**՝ *մագաղաթ, երկսյուն, բոլորգիր երկաթագիր 2 (Ա-Բ)+2 (Գ-Դ)*։ **Հանգամանք**՝ *լավ*։

Ծանոթագր. *Ձեռագրի սկզբից և վերջից թերթեր են ընկած. սկզբից պակասում է Ա-ԺԳ գլուխների ցանկը, իսկ վերջից՝ հիշատակարանի մի մասը։ Գլուխների վերնագրերը կարմրագիր են։*

Հիշատակարան գրչի՝ 183ա—184բ (տե՛ս Բնագիր, էջ 163—164)։

Հիշատակագրություններ՝

Գրչի՝ *էջ 6բ. Զգործս ձեռաց մերոց, ուղիղ արա ի մեզ տէր,|| (7ա) զգործս ձեռաց մերոց յաջողեա ի մեզ։*

Հետագայի՝ *էջ 1ա. վերի լուսանցքի ձախ անկյունում՝ № 475, ներքևի լուսանցքի ձախ անկյունում՝ Ես խաչիկ աղա։*

---

53 Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866*։ Ղ. Հովնանյան, *Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ. տետր Ա, Վիեննա, 1897*։ J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901. Մ. Աբեղյան, *Հին գուսանական ժողովրդական երգեր, «ՀՍԽՀ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1927, № 2—3*, Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1951*, Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953*։ Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954*։ Ս. Ղազարյան, *Միջին հայերեն, գիրք Ա., Երևան, 1960*։

54 *Պրոֆ. Աճառյանն իր նկարագրության մեջ թյուրիմացաբար նշել է, որ լուսանցազարդեր ու զարդագրեր չկան ձեռագրում։*

էջ 7ա. Երկու կնիք՝ «Եփրեմ վարդապետ. 1222 (≈1773)»։

էջ 19ա. Ես տէր Թաթէոսիկ որդի Յօվնէսս գրեցի թվին փոքր ՃԽԴ (144+1616≈1760) օվդանի 5-ումն (հունվարի 20) աստուծով։

էջ 21ա, 32ա, 39բ, 63ա, 94ա գրչափորձեր։

էջ 94ա. Գորքին, Վարդան, Դատոս, Ոհանէս։

Պահպանակ 2 գ, պարսկերեն բեյթի հատված՝ ساقی بیا كه باده
بنام عشق تا بر حط او...

2. «Բժշկարանին» կից որպես հավելված հրապարակվող «Ի գրաստուն բժշկարանէն փոխած» բնագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում և, ըստ «Բազմավեպի» (1867, էջ 354—357), «մաղագաթի վրա մաքուր գրված տետրակ մըն է, որ դժբաղդաբար կը պակսի մեջտեղեն և վերջեն»։

Տոքթ. Վահրամ Թորգոմյանն իր «Հայ բժշկական ձեռագիրքս ս. Ղազարու վանքին» հոդվածաշարքում («Բազմավեպ», 1924, էջ 387) հետևյալ տեղեկություններն է տալիս այս բնագրի մասին. «Խմբագիրf» անունը կրող ձեռագրատան 33-րդ տուփին 5 թիվն ունեցող երկն է սա. դժբախտաբար հազիվ երեք թերթ, որու համար գրված է ցուցակին մեջ՝ թե ինկած է «Ի բժշկարանէն Գունդըստաբլի»:

21 հարյուրորդամեդր մեծություն և 14 հարյուրորդամեդր լայնություն ունին այս թերթերը, և են մագաղաթյա։

Ընդ ամենը 5 էջ միասյուն գրություն է, բոլորագիր սև թանաքով, բայց տուներու սկիզբը կարմրագիր»։

ՍՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Նկատի ունենալով, որ ձեռագրի սկզբից 2 թերթ է ընկած, Ա-ԺԳ գլուխների վերնագրերը ցանկում վերականգնվում են ըստ բնագրի։ ԺԴ-ՃՋԳ գլուխների վերնագրերը ցանկում տրված են «Վասն...» սկզբնաբառով, մինչդեռ բնագրում ամենուրեք «Յաղագս...» սկզբնաբառով են. այստեղից էլ այն տարբերությունը, որ կա ցանկում Ա-ԺԳ և մյուս գլուխների միջև։

Գլխացանկում բերված վերնագրերը ոչ միշտ են համընկնում բնագրի վերնագրերին. այսպես՝

Գլխացանկ	Բնագիր
ԺԹ. Վասն նշանոյ, որ յագին լինի։	ԺԹ. Յաղագս ագոյն նշանի։
ԻԸ. Վասն ֆառայլի և առվուտի և խոտի տալոյ։	ԻԸ. Յաղագս ալկելոյ գարոյ և առվոյտի և ֆառայլի, որ տան գրաստուն և այլ ուտելոյն ընչից։
ՃԳ. Վասն քուռկցաւի ի կզակն։	ՃԳ. Յաղագս գրաստու, որ խոզք ունենայ։

Նման բազմաթիվ տարբերությունները թողնված են նույնությամբ։

Ձեռագրից պակասում են Ժ պրակի վերջին թերթը և ԺՁ պրակի 3-րդ թերթը, որոնք ընկած են եղել էջահամարները դրվելուց առաջ։

2. «Բժշկարանում» կիրառված ուղղագրությունը միօրինակ չէ. այստեղ հաճախ գրաբարյան ձևերի մոտ հավասարազոր օգտագործվում են միջին հայերենին բնորոշ ձևերը, որի հետևանքով և հուշարձանիս մեջ առկա են կրկնակ ձևեր. այսպես՝

ա, ե, ո ձայնավորները երկու կամ երեք վանկանի բառերում բառի թեքման կամ աճման ժամանակ հիմնականում սղված են. օր. արծեն (=արածեն), արձկնայ (=արձականայ), առւել (=առաւել), ավղութիւն (=աւաղութիւն), բարկնայ (=բարականայ), դիմնայ (=դիմանայ), երեսնակ (=երեսանակ), ի յերեսնկին (=ի յերեսանակին), ունենայ (=ունենայ), սովրիմ (=սովորիմ).

ա հոդակապը բարդ բառերում հիմնականում սղված է, բայց և առանձին դեպքերում պահպանված է. օր.՝ ականչքոռ և ականջաքոռ, fուռկցաւ և fուռակցաւ.

Ե-ով գրվող բառերը գրվում են նաև Է-ով. օր.՝ զարդել-զարդէլ, գեղ-գէղ, և այլն.

Եւ գրվում է միացյալ՝ և, մերթ էլ՝ եվ:

Իւ գրաբարյան երկբարբառը հիմնականում արմատական բառերում ունի ոյ գրությունը. օր.՝ ալոյր, աղջոյր (=եղջիւր), առոյն,

3—1034

դոյր, ճերմոյն, ձոյն և այլն, բայց և մերթ ընդ մերթ հանդիպում են իւ-ով բառեր. օր.՝ արիւնկապ.

յ-ն բառասկզբում պահպանվում է, բայց և կան անկման օրինակներ. յովտակ և ովտակ, յայպ և այպ. նույնը և բառավերջում։ Հրամայականների վերջում մեծ մասամբ դրվում է յ. օր՝ խմցոյ, ճալծեցոյ և այլն.

վ հնչյունը արտահայտվում է հիմնականում և՛ ւ և՛ վ գրերով, օր.՝ աւղութիւն–ավղութիւն, յեշաւ–յեշավ, անգամ մի քանի դեպքում, երբ սղվում է եւ-ի ե-ն, ւ-ն փոխարինվում է վ-ով. օր.՝ 'վ ի ճետ ֆիչ մի վարդ։ Վ-ով է արտահայտվում նաև ու-ն, օր.՝ աղուար–աղվոր։

Գրաբարի ձայնեղները հիմնականում խլացված են, բայց և երբեմն նույն բառը գրված է և՛ խուլով, և՛ ձայնեղով, օր.՝ խնծոր–խնձոր, կանկուն–կանգուն, օկտել–օգտել։ Այս օրինաչափությունը գործում է նաև օտար բառերի տառադարձման ժամանակ։

Որոշ բառեր գրված են և՛ մեկ, և՛ կրկնակ բաղաձայններով, օր.՝ լինալ–լիննալ, սոթել–սոթթել, կամ բաղաձայնները գրված են թե՛ ուղիղ և թե՛ դրափոխված ձևով. օր.՝ ավղցնել և աղվցնել։

«Բժշկարանի» այս և այլ կրկնակ ձևերը օգնում են առավել հստակ ճանաչել միջին հայերենի կիլիկյան բարբառի որոշ հատկանիշներ, ուստի նպատակահարմար գտնվեց նույնությամբ պահպանել բնագրի ուղղագրությունը։

Ընթերցողի ուշադրությունը հրավիրվում է այս խնդրի վրա, որպեսզի ուղղագրական երկվությունները կասկածի առիթ չհանդիսանան։ Հրատարակվող բնագիրը խստագույնս համեմատված է հիմք ձեռագրի լուսանկարի հետ։

3. Եթե որևիցե բառ բնագրում անհասկանալիության չափ աղավաղված է, ապա փակագծերում տրվում է ճիշտ ձևը։

4. Բնագրում եղած ավելորդ բառերն ու տառերը տրվում են < > փակագծերում, իսկ աշխատասիրողի հավելումները՝ [ ] փակագծերում։

5. Բնագրի տողատումներն ու կետադրությունը աշխատասիրողինն են։

ԲԺՇԿԱՐԱՆ
ՁԻՈՑ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՑ

(ԲՆԱԳԻՐ)

[ՑԱՆԿ ԳԼԽՈՑ]*

[Ա. . . .

Բ. Յաղագս զաւղվածաց ձիոյ, յերկայնութիւնն և ի կարճութիւնն և ի բարակութիւնն և ի հաստութիւնն և ի նաւսրութիւնն։ Թէ որ է աղէկ և գովական կամ որ է պիղծ և ապիզոված.

Գ. Յաղագս քովացն.

Դ. Խրատք վասն ճանչելոյ աղէկ ձիաննոյ.

Ե. Վասն անցմնցելոյ և գորգզացնելոյ.

Զ. Յաղագս աղէկ նշաննոյ.

Է. Յաղագս չափելոյ, որ ի յեշավն չափեն զքայլքն, որ փոխէ և այնով ճանաչեն զսուր ձին.

Ը. Յաղագս դիմակաց ձիոյ, որ չունի զչափն.

Թ. Յաղագս ճանչել զձին, երբ ճլած լինի.

Ժ. Յաղագս մատակ ձիաննոյ, թէ ինչ զաւղվածք բարժանի ի յորձ ձիոյն.

ԺԱ. Յաղագս մատակ ձիաննոյ, որ պահնայ; թէ ի յորժամ պահնայ և որպէս պահնայ.

ԺԲ. Յաղագս նշաննոյ վանց պահնալոյ.

ԺԳ. Յաղագս մատկնոյ և յովտկնոյ, որ երբ խառնին ի յիրար, նա երբ ծնանի, թէ որպէս լինի քուռակն.]

‖(1ա) ԺԴ. Վասն ճանաչելոյ թէ որպէս ծնանի ջորին յամէն երկիր.

ԺԵ. Վասն քուռկնոյ և իրենց ծնընդեանն խրատք.

ԺԶ. Վասն գոյներոյ և պտուտնոյ ի ձին.

ԺԷ. Վասն նշաննոյ և հետ որոյ լինի ձին.

ԺԸ. Վասն նշանն, որ ի չորս ոտքն լինի.

---

* Ձեռագրի առաջին երկու թերթն ընկած է. Ա-ԺԳ գլուխների վերնագրերը վերականգնել ենք ըստ բնագրի

ԺԹ. Վասն նշանոյ, որ յագին լինի.
Ի. Վասն պտուտնոյ, որ ի մազն լինի.
ԻԱ. Վասն խրատուց և ճանչելոյ զգրաստն ամենայն դիմաւք
զլաւն ի վաթարէն.
— Վասն տաղերոյ և իրենց ազգին և ամէն ազգոյն ձիոյ.
ԻԲ. Վասն որ զգէր ձին կամենաս ավղցնել.
ԻԳ. Վասն հալծեցնելոյ և ղորդելոյ զձին.
ԻԴ. Վասն որ զհեծնաւղն ուսցնես.
ԻԵ. Վասն արմուհի ղորդելոյ և մղելոյ.
ԻԶ. Վասն հարուն գրաստուն.
ԻԷ. Վասն գորգզան և քայլան գրաստուն.
ԻԸ. Վասն ֆառայի և առվուտի և խոտի տալոյ.
||(1բ) ԻԹ. Վասն ճլելոյ.
Լ. Վասն լուսնելոյ.
ԼԱ. Վասն նշդրկի ի գործ տանելոյ.
ԼԲ. Վասն այպերոյ, որ լինի.
ԼԳ. Վասն տուբեթին յայպերոյ.
ԼԴ. Վասն ականջացն այպերոյ.
ԼԵ. Վասն աչիցն յայպերոյ.
ԼԶ. Վասն երեսացն և քթին յայպերոյ
ԼԷ. Վասն բերնին յայպերոյ.
ԼԸ. Վասն շլնոյն այպերոյ.
ԼԹ. Վասն միջացն այպերոյ.
Խ. Վասն գավկին այպերոյ.
ԽԱ. Վասն կրծոցն այպերոյ.
ԽԲ. Վասն ձեռվոյն այպերոյ.
ԽԳ. Վասն սմբակացն այպերոյ.
ԽԴ. Վասն ոտվոյն այպերոյն.
ԽԵ. Վասն ագոյն յա[յ]պերոյ.
||(2ա) ԽԶ. Վասն յայպերոյ, որ ի պատահման գայ.
ԽԷ. Վասն ծածուկ կաղալոյ պատճառ.
ԽԸ. Վասն յազար ցաւուն, որ է տաքութիւն յովտին (=յոտ-
վին).
ԽԹ. Վասն ցաւոց եւ դեղոց. եւ յառաջ զխունան յիշենք.
Ծ. Վասն ֆնտունին (=ֆնտուին), որ է համր ցաւն.

ԾԱ. Վասն ուռէցի և քամոյ ի փորն, որ չկարէ թրքել և գոզել.
ԾԲ. Վասն ցաւոց, որ կոտրտուտ (=կոտրտուկ) ասեն.
ԾԳ. Վասն մաղձի զաւրանալոյ.
ԾԴ. Վասն ցաւուն, [որ] քարաք ասեն.
ԾԵ. Վասն ցաւուն, որ փորքացն ներքսև լինի
ԾԶ. Վասն ցաւուն, որ ի սաւտայէ գայ.
ԾԷ. Վասն ցաւուն, որ ի գլու[խ]ն.
ԾԸ. Վասն ցաւուն, որ խումր է գրաստն.
ԾԹ. Վասն ցաւուն, որ պախրէցաւ ասեն.
Կ. Վասն թթի, որ ի տոշն կամ ի ձուկն (=ձուքն) լինի.
ԿԱ. Վասն որ տոշն և ձուքն ուռենայ.
ԿԲ. Վասն ելնդի, որ ի փողքն ելնէ.
||(2բ) ԿԳ. Վասն ոչլի, որ ի գրաստն լինի.
ԿԴ. Վասն կոլնջի գրաստու.
ԿԵ. Վասն մկնացաւուն անուն է.
ԿԶ. Վասն որ գրաստն կանաչ տուղտ ուտէ.
ԿԷ. Վասն կերիչ ցաւն, որ է դաշտիկն.
ԿԸ. Վասն քածպրի.
ԿԹ. Վասն պատխունամ ցաւուն.
Հ. Վասն մկնատմերոյ.
ՀԱ. Վասն հլելիճ անուն ցաւուն.
ՀԲ. Վասն ֆարցնի*.
ՀԳ. Վասն ռամատխս ցաւուն*.
ՀԴ. Վասն գայլցաւի, որ է հովութիւն.
ՀԵ. Վասն որ շփվի [և] <ի> զարատ հանէ ի քթացն.
ՀԶ. Վասն ռեպցաւուն.
ՀԷ. Վասն գլխացաւի.
ՀԸ. Վասն որ ընդ ներքսէ կտրի գրաստն.
ՀԹ. Վասն տաք ջերմանն.
||(3ա) Ձ. Վասն որ ըղտացաւ ասեն, որ լինի ի գրաստն.
ՁԱ. Վասն լերդացաւութեան.
ՁԲ. Վասն քամոյ, որ յերջքն լինի.

---

* Գլուխների հերթականությունը այստեղ խախտված է. «Վասն ֆարցնի» ըստ բնագրի ՀԳ գլուխն է և ընդհակառակը:

ՁԳ. Վասն սրտացաւութեան.
ՁԴ. Վասն փայծաղնացաւութեան.
ՁԵ. Վասն գոզարգելի.
ՁԶ. Վասն որ ոռն ի դուրս գայ և շրջի.
ՁԷ. Վասն քուսայի և ազգ մի այլ գայլցաւի.
ՁԸ. Վասն նըկըտսի (=նըկըրսի)։
ՁԹ. Վասն ասահար ցաւուն.
Ղ. Վասն որ տզրուկ կլել կամ փակել.
ՂԱ. Վասն խոստկի, որ լինի ի գրաստն.
ՂԲ. Վասն որ աւձն խայթէ.
ՂԳ. Վասն որ կորն խայթէ.
ՂԴ. Վասն որ հետ խոտի սարդոստէն կլնի.
ՂԵ. Վասն փողացաւութեան.
ՂԶ. Վասն որ դողցնէ զաւդվածքն.
||(3բ) ՂԷ. Վասն որ վայրի կաղամբ ուտէ.
ՂԸ. Վասն ճիճոյ, որ ի փորն լինի.
ՂԹ. Վասն որ պեղծ խոտ լինի կերել.
Ճ. Վասն ստամոքցվի.
ՃԱ. Վասն որ հաւու ծիրտ ուտէ.
ՃԲ. Վասն թոքցվութեան.
ՃԳ. Վասն քուռկցաւի ի կզակն.
ՃԴ. Վասն խոցի, որ յաղիքն լինի.
ՃԵ. Վասն որ տոշն լարի և այլ չնստի.
ՃԶ. Վասն որ արծվիք լինի.
ՃԷ. Վասն որ պիսկոտի գրաստն.
ՃԸ. Վասն ելընդի, որ ի փողքն ելնէ.
ՃԹ. Վասն բարակցաւի, որ ի թոքացն գայ.
ՃԺ. Վասն թաղասուֆի (=թավասուֆի). ինքս ի շուղաղ նմանէ.
ՃԺԱ. Վասն կոտրածի, որ ծուռ կցի.
ՃԺԲ. Վասն որ ուսն ցաւ լինի տվել և քթահրել.
ՃԺԳ. Վասն կոտրածի և թափածի.
||(4ա) ՃԺԴ. Վասն ազգ մի այլ ֆնտունի (=ֆնտուի).
ՃԺԵ. Վասն որ ցաւուն, որ ի սմբակբերանն լինի.
ՃԺԶ. Վասն սմբակցաւերոյ.

ՃԺԷ. Վասն որ թուլթն ելնէ ի սմբակն.
ՃԺԸ. Վասն քամնայ յաչացաւութեան.
ՃԺԹ. Վասն գազանաւռ խոցի.
ՃԻ. Վասն ցաւի, որ յոռն լինի.
ՃԻԱ. Վասն որ շողոտէ և խաշվի.
ՃԻԲ. Վասն պինդ ուռեցնոյ յոտներն.
ՃԻԳ Վասն որ աչքն սպիտկէ.
ՃԻԴ. Վասն փաքալոյ ամէն ազգ ցաւու.
ՃԻԵ. Վասն պրսեմ գլխացաւութեան.
ՃԻԶ. Վասն տայար բերնցվութեան.
ՃԻԷ. Վասն որ տոշն կեղևի ձիոյ.
ՃԻԸ. Վասն ականջացաւութեան.
ՃԻԹ. Վասն զարկուցի յաչքն և դիպուցի.
ՃԼ. Վասն որ ի խոցէ սպիտկէ մազն ուրեք և նշաննի լինի.
||(4բ) ՃԼԱ. Վասն որ վիզն ծըռի.
ՃԼԲ. Վասն թըթի, որ ի յաչքն լինի.
ՃԼԳ. Վասն սապալի, որ յաչքն լինի.
ՃԼԴ. Վասն արեխանի, որ աչքն դեղնի.
ՃԼԵ. Վասն կոլընջի.
ՃԼԶ. Վասն հերքոյնի.
ՃԼԷ. Վասն երիկամնացաւութեան.
ՃԼԸ. Վասն որ ճըֆն լինի կերել և ահոկէ իր.
ՃԼԹ. Վասն մատկի, որ արգանդն ի դուրս գայ.
ՃԽ. Վասն որ հաւկոյր լինի.
ՃԽԱ. Վասն պեղծ հոտ գայ յանձնէ.
ՃԽԲ. Վասն որ կոճքն թուլնայ.
ՃԽԳ. Վասն որ հալծնացն աչերն կարմրի
ՃԽԴ. Վասն բորոյ, որ ի գրաստն.
ՃԽԵ. Վասն որ շատ հալծէ նա խրատ.
ՃԽԶ. Վասն որ չուտէ զալիկն.
ՃԽԷ. Վասն որ զգարին անարատ թրքէ.
||(5ա) ՃԽԸ. Վասն որ ագին փետի.
ՃԽԹ. Վասն մատկի, որ քուռակ ձգէ.
ՃԾ. Վասն թէ ուզես, որ զմազն նաւսրցնես.
ՃԾԱ. Վասն խոյլերոյ, որ լինի ի փորն.

ՃՄԲ. Վասն որ արոյն գայ ի քթացն.
ՃՄԳ. Վասն որ թուլնայ ակռայքն և շարժին.
ՃՄԴ. Վասն թէ քար ընկնի յականջն՝ հնարք.
ՃՄԵ. Վասն որ ի բերանն գորտն ելնէ.
ՃՄԶ. Վասն որ կանաչ գորտն առնու գրաստն.
ՃՄԷ. Վասն վատ մազերոյ ի կոպքն.
ՃՄԸ. Վասն կերի, որ ակռայքն ուտվի և լինդքն.
ՃՄԹ. Վասն որ լինդն ուռենայ.
ՃԿ. Վասն նասուրի ամէն ազգի.
ՃԿԱ. Վասն որ արոյն գայ ընդ ոռն.
ՃԿԲ. Վասն կծի, որ ի սմբակնին լինի և յոտվին.
ՃԿԳ. Վասն խիճիփրի, որ ի վերի սպավայքն լինի.
ՃԿԴ. Վասն ցաւուն, որ յաճուկն լինի.
‖(5բ) ՃԿԵ. Վասն որ ծալի ոտներն ի հալծնաց.
ՃԿԶ. Վասն մազկերի, որ յագին լինի.
ՃԿԷ. Վասն որ արոյն շռէ.
ՃԿԸ. Վասն որ ի զարկուց քիթն կալվի.
ՃԿԹ. Վասն մեղրագոյն խոցին.
ՃՀ. Վասն թըթի, որ ի քիթն լինի.
ՃՀԱ. Վասն խումրելոյ, որ ղէդ կատղած լինի.
ՃՀԲ. Վասն աւկտակար լուծման դեղի.
ՃՀԳ. Վասն որ զամէն ազգ<ել> պինդ ելունդ կակղցնեն.
ՃՀԴ. Վասն տեռերոյ դեղեր.
ՃՀԵ. Վասն մորհամնոյ ազգերոյ <բնեռահասի>.
ՃՀԶ. Վասն զարկուց շաղփելոյ և բնեռնհասի յոտք.
ՃՀԷ. Վասն որ ոլոքացն մազն փետի.
ՃՀԸ. Վասն խոյլերոյ, որ լինի ի մէջ Բ. կռճացն.
ՃՀԹ. Վասն ճարատի.
ՃՁ. Վասն ի որ (=որ ի) ծունկն ատոյց (=այտուց) լինի.
‖(6ա) ՃՁԱ. Վասն շուկակի, որ ի յոտքն լինի.
ՃՁԲ. Վասն սուլախ աչացաւութեան.

‖(6բ. Ճնա իմաստասէրի նկարը).

[Ա. ՅԱՂԱԳՍ ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ]*

||(7ա) Արարիչն աստուած յորժամ ստեղծեաց զաշխարհս, նախ՝ զերկինս և ապա՝ զերկիր. զերկինս զարդարեաց անհամար բազմութեամբ հրեշտակաց, արեգակամբ և լուսնիւ և անթիւ աստեղաւք, ||(7բ) և զերկիրս զարդարեաց բուսովք և զանազան տնկաւք, սողնաւք և չորքոտանեաւք, լուղականովք և թռչնաւք, նաև ստեղծ զմարդն ի պատկեր իւրոյ բարեվայելչութեան՝ ըստ իւր բարերարութեան։ Եւ զամենայն զսոսա հնազանդ արար Ադամայ։ Եւ աստուած զամենայն կենդանիս [էած] առ Ադամ՝ դնել անուանս նոցա։ Եւ եդ Ադամ անուանս ամենայն կենդանեաց յոյժ խորհրդաբար, մինչև զի և զմի ի կենդանի չորքոտանեաց ձի անուանեաց. այս է՝ ձիգ ընթացող և արագ ||(8ա) արշաւող։ Եւ աւրհնեաց աստուած զԱդամ և ասէ. Քեզ տաց զձիդ ի զբաւսանս և որդւոց քոց։

Այր ոմն Աբրահամ ասէ, թէ սիրած է մատակ ձիանն, որ յեշաւ այնեն ու թախթան, զի սուր յեշվեն։ Եւ սիրած է կրտած ձիան, որ քըմի դնեն, և քըմնհան երթան, զի սալար կենան և շատ դիմանան, և ձվաւք ձիանն, որ ծանըր ծածկեն և ծանըր հագնին և դիպին ընդ չարկամն ու փլցնեն ու խոյլ հեծելնի և ի սղարնի և ընդդէմ բերդի։

Բ. ՅԱՂԱԳՍ ՋԱԽԴՎԱԾԱՑ ՁԻՈՅ. ՅԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ||(8բ) Ի ԿԱՐՃՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ԲԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ՀԱՍՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ՆԱԽՍՐՈՒԹԻՒՆՆ. ԹԷ Ո՛Ր Է ԱՂԷԿ ԵՒ ԳՈՎԱԿԱՆ ԿԱՄ Ո՛Ր Է ՊԻՂԾ ԵՒ ԱՊԻԳՈՎԱԾ

Գոված է գեղեցկութիւնն երեսին և արձկութիւն յերկու ականջին մէջն և նաւսրութիւն շրթանցն. և նա գուշակէ աղէկ ազգ ձիոյ։

Եւ որ լինի ճեղքն քթացն յերկայն, զի յաւժար ելնէ շունչն։

Եւ որ լինի յերկայն լեզու, զի երբ յերկայն լինի լեզուն, նա շատնա շողիքն և սուր լինի յեշաւն։

Եւ որ լինի բարակ քթին ոսկորն՝ աղէկ ազգ է, և երբ լայն լինի՝ վըլախ է, զի||(9ա) նեղ ելնէ շունչն։

---

* Վերնագիրը՝ ըստ բովանդակության։

Եւ որ քթափողքն լայն լինի և ներքի դեհն լայն և վերի դեհն բարակ, եւ որ դունչն ի պաղցտեղացն ի վայր պարկեշտ և քանի երթայ բարկնայ ինչվի պռնկին հատն, վերի խամծեկն և ներքինն այսպէս, և որ չլինի տափքիթ, զի պեղծ է վասն շնչին, որ նեղ ելնէ։

Եւ որ լինի ներքի խամծեկացն երկու զաւդվածն ականջթոացն դեհն արձակ և դնչին դեհն բարակ։

Եւ որ լինի քթին ոսկորն ի պաղցոցն ու ինչվի ճակատն զորդ ու չլինի այս տեղս կուզ՝ զէդ ||(9բ) խոյաքիթ կամ փոս՝ զէդ մըզմունի, զի պեղծ է վասն նեղ շնչին։

Եւ որ լինի քթափողքն նաւսր ու լայն ու կակուղ՝ աղէկ է։

Եւ երեսացն երկու ոսկորն, որ կայ ի յաչիցն ի վայր, երբ լինի կաշին չոր և աւաղ ու փակել լինի ի վրայ ոսկրին ու լինի դարտակ՝ աղէկ է։

Ձնոյն և երեսն լայն և կակուղ ու սոփ՝ աղէկ է։

Եւ որձ ձիոյն ճիթքն, որ լինի մսաւք՝ նայ գոված է, և մատակ ձիոյն՝ ապիգոված։

Մեծութիւն աչվոյն ու յիստկութիւնն և պտուղն թուխ և սև, ու հայի յերակ, ու լինի աչ||(10ա)վին հեռու մէկ ի մէկէ, և կոպերն նաւսր՝ աղէկ է։

Լայնութիւն ճակտին և աւաղութիւն ի մսէ, որպէս փակած յոսկորն մորթին, աղէկ է։

Յերկայնութիւն ականջին և որ սկսնու յականջթոացն բարակ ու ինչվի մէջ ականջին քանի երթայ լայնընայ ու յայնկի ի վեր բարակնայ և ծայրքն սուր ու լինի նաւսր և պարկեշտ և ի հալածն հեշտ և ի շաւշափելիքն պինդ՝ աղէկ է։

Կակղութիւն տուբեթին և յերկայնութիւն և մանըր մազն, որ կայ հետ տուբեթին, նայ լինի կակուղ, և այն ոսկորն, որ ի յիր||(10բ)մէ է բուսել, լինի ցած։

Եւ այս մանըր մազս, որ կայ խեչ տուբեթին, լինի կակուղ որպէս զայծենի՝ աղէկ է։ Եւ թէ այս մազս խոշոր լինի՝ նա ի վլախի ազգէ է։

Եւ յերկայնութիւն շլնեցն, և բարակութիւն փողացն, և նաւսրութիւն վըզին, և այն երկու ջեղն, որ ծնել է ի կզակէն ու կու երթայ ներքև բաշին ինչվի յուսն՝ նա պինդ լինի, նա աղէկ է։

Եւ որ լինի շլնին կզողն ու բարձր մէջ շլնեցն՝ աղէկ է, և որ ցած լինի՝ պեղծ է։

Եւ լայնութիւն ներքի դեհին շըլնեցն կաշոյն, որ լինի որպէս ||(11ա) եղին ի կախ, նա շունչն ճարտար՝ ելնէ, և աղէկ է։

Եւ բոլորութիւն շլնեցն և բարակութիւն այն երկու ջղին, որ ասացաք, և աւղութիւն վըզին՝ գուշակումն է ի վերա վատուժ ազգ ձիոյ։

Եւ բարձրութիւնը նքթէպին աղէկ է։ Եւ այնպէս բարձր լինի շըլինքն ինչվի կզակն և լինի ողն հաւասար ղորդ՝ ամուր ձի է։

Եւ բարձրութիւն երկու բէճգլխոյն, որ թաղվել լինի նքթէպն, ու վերի դեհն նքթեպին պինդ՝ աղէկ է։

Եւ որ լինի միջի կրծոցն երկու մեծ մկունքն, որ կայ ի բազ-||(11բ) կացն ի մէջն լինի ի դուրս, ու լինի կրծոցն կաշին կակուղ ի վրայ՝ գուշակէ ի յամրութիւն և ի սրութիւն։

Եւ որ լինի մէջ բիճացն ի դուրս և կուրծքն արձակ՝ գուշակէ ամրութիւն ձիոյն։

Եւ կարճութիւն ծղեցն աղէկ է, զի երբ կարճ լինի՝ ճարտար խաղայ զաւդուածքն և բէճքն և լինի սուր։

Կակղութիւն մըսին, որ կայ ի ծղատակքն յերջի դեհին վերայ, և մեծութիւն մկանցն, որ կայ ի վրայ ծխեացն, և հաստութիւնն և շատ երկնին, որ կայ ընդ ծղիքն, ընդ կուրծքն ի մէջ՝ լաւ է||(12ա) իր, զի սուր լինի և ամուր յեշավն։

Նաւսրութիւն ու բարակութիւն կրծոցն ոսկրին, որ կայ կողքն ի յինք ի շարման, սիրուն է, զի փորն մեծ լինի։

Եւ յերկայնութիւն բազկացն ու հաստութիւն ու լայնութիւն ի վերի դեհն և հաստութիւն այն ջղին, որ կայ ի վրայ բազկացն, և դարտկութիւն այս ջղացս վերև ծնկացն, որ լինի կաշին փակման ի վրայ ջղին, գուշակէ ի յամրութիւն և ի սրութիւն։

Պարկեշտութիւն ծնկացն և ամրութիւնն և որ լինի մաւտ ի յիրար, կարճութիւն ձեռացն և բազ||(12բ)կացն լինի լայն ու նաւսր և կաշին փակման ի վրայ և ջղերն փըռած ի վրայ բազկացն յերեվան և ճաղերն ի թաղման. այսոք ամէնս աղէկի նշան է։

Մեծութիւն խալկին և փոքրութիւն կոճացն, որ լինի միսն քըշիք ի վրայ ու լինի ջղերն ի թաղման ու չլինի կոճն խիստ ղորդ և ոչ խիստ էջ, զի երբ ղորդ լինի՝ նա կանկնի ջեղքն ու երբ էջ՝ նա քթահրի։

Եւ կոճացն ներքի դեհին լայնքն և կըընկացն մեծութիւն ու եր-

կու խնձորքն կըընկացն ի դուրս և սմբակացն մեծութիւն՝ սիրուն է։ ||(13ա) Եւ նաւսրութիւն սմբակին ու կակղութիւն, և որ լինի փոս, որ երբ կոխէ, նա գորտն չհասնի ի գետինն, և որ լինի գորտն պինդ՝ աղէկ է։

Գ. ՅԱՂԱԳՍ ՔՈՎԱՑՆ

Սիրած է, երբ լինի մսանքն ի վրա քովացն՝ վերի դեհն հաստ ու ներքի դեհն նաւսր և էջ դէպ ի փորն, որ լինի արձակ ի վրայ թո-քին, որ չհասնի ուժ ի թոքն և նեղհրէ զսիրտն ու դադրի։

Կարճութիւն միջացն ի նքթեպէն ինչճվի պճկոռացն ոսկորն և ողնշրին ոսկորն լայն և պճկոռացն ոսկորն ոչ յերկայն և ոչ կարճ՝ գուշակէ ամրութիւն||(13բ) և աղէկութիւն։

Եւ կարճ կողացն բարձրութիւն ու հաստութիւնն, և ամրութիւն ու լայնութիւնն քովացն՝ աղէկ է եւ պահէ զիրիկամունքն։

Եւ պորտոյն և ձվտկո[ւ]ցն ցոփութիւնն գոված է։

Եւ լայնութիւնն ու բարձրութիւն ու բոլրութիւն գաւկին գո-ված է։

Եւ որ լինի անդմացն զաւդվածն, որ ի պճկոռքն կայ արձակ յիրացմէ, և ագէտկուցն միսն, որ կայ յետև անդմացն, նա լինի հաստ և պինդ, ի կաշին փակման ի վրայ, այս աղէկ է։ Եւ առջի ոս-կորն ագոյն, որ կայ||(14ա) ի փակման ի պճկոռքն, ոչ բարձր լի-նի և ոչ ցած ի թաղման, ապա հաւասար ի հետ։

Եւ խնձորքն ոչ ի դուրս լինի և ոչ ի ներս, և լինի որովայնն ի ձվտկուցն ի հեռու, զի թէ նեղ լինի՝ նա հրահնաց քշտէ ոտքն ու լինի գնացքն ի նման ի մատակ ձիոյ։ Եւ լինի անդմացն ձկունքն ներքսի դեհն և դրսի դեհն հաստ և լայն և միսն շատ ի վրայ, զի ձիոյն ամէն ուժն և յիշաւն ի վրայ այս ձկանցս է. նա քանի ամուր լինի՝ նայ դիմակաց ու սուր լինի։

Եւ որ լինի սրունքն կարճ և միսն սրաւնացն, որ է այն ձուկն, որ ի վրայ սրաւնացն կայ, շատ և ||(14բ) ի դուրս, և երկու զաւդվածն վերի դեհն, որ է ծունկ և ներքինն, որ է կոճքն, նա լինի դարտակ ի մսոյ, և երակքն ու ջղերն ի բաց և յերևան, և մեծ երակն, որ կայ ներքսէ անդմանցն, նա լինի հաստ ու կարճ և ի լար, այս ամէնս ամրութիւն է ոտացն։

Եւ փոքրութիւն կոճացն և սրութիւն կոճքերնացն և հաւսրու-թիւն ջղացն, որ կայ ի հետ յետի ոտացն, և լինի կաշին խիստ ի

փակման յիրենք, և լինի ճաղերն սրաւնացն սուրն ու կարճ և ի թաղման, նա ամրութիւն է գրաստուն։

||(15ա) Եւ գոված է ի յամէն իրք, զոր ասացաք ի յառջի ոտվին, նա զնոյն ու հայնց ի վերջի ոտվին, զարդէլ որ յետի ոտվին պիտի լինի ի կանգուն որպէս զցից։ Եւ ասած է այս ի ձեռվին, զարդէլ ձեռացն բազուկն մէն, զի ձեռացն բազուկն պատեհ է, որ կարճ լինի և ոտացն՝ յերկայն և ի նման էշ (՞) որպէս զայծմնու։ Եւ որ այս կերպովս լինի, նա սուր լինի յեշաւն։

Եւ այս է կերպերն, որ յիշեցաք և գովեցաք վասն ստեղծուածոյ ձիոյն և վանց առաւել ճանչվորութեան։ Այնոք, որ չէին գիտաւղք և ճանչողք զաւ||(15բ)դվածոց և կերպարանաց ձիոյ, նա մեք հանաք զձիոյն կերպն և գրեցաք ի խէչ ամէն զաւդվածի զիր որպիսութիւնն զաղէկն և զպեղծն (տե՛ս ներդիր նկարը՝ էջ 58բ)։

Դ. ԽՐԱՏՔ ՎԱՍՆ ՃԱՆՉԵԼՈՅ ԱՂԷԿ ՁԻԱՆՆՈՅ

Յորժամ հաստատես և ուսնիս զայս, զոր ասացաք, ընդելնայ քո տեսդ ընդ աղէկ նշաններին, որ տվաք, և ընդ պեղծն, նա պարտ է քեզ, որ հաստատես զքո տեսդ ի յինք աղէկ ընդ ամէն դեհաց՝ ի յանցմնցելն, ի գորգզացնելն, ի կալափցնելն, ի յիշվեցնելն, ի հեռու տեսանել և ի մաւտ։||(16ա) Ձի յորժամ ի կանկուն տեսնուս ու մտիկ դնես ձիոյն և զաւդված զաւդված տեսնու[ս] և աղվոր թվայ քեզ, պատեհ է յայն ժամն մտիկ դնել իր, երբ աւաղ լինի և մերկիկ և քայլեցնես ու հայիս։ Կամ երբ ի նստուկ լինի՝ նա մտիկ դնես իր՝ դու տեսնաւս զաւդվածքն. թէ փոխել է յիր կերպարանացն՝ նա գիտացիր, որ այն զաւդվածնոցն ի թոյլ շարվծոցն է։

Եւ թէ երբ ի նստուկ լինի, նա մտիկ դնես իր ու տեսնուս զաւդվածքն ի յիր կերպարանաց ու աղվոր թվենայ քեզ. նա այն աղէկ է։

Վասն այս, որ չէ պատեհ արտորալ ||(16բ) և խաւսք կտրել ի վրայ ձիոյ, թէ աղէկ է, թէ պիղծ։

Ե. ՎԱՍՆ ԱՆՑՄՆՑԵԼՈՅ ԵՒ ԳՈՐԳԶԱՑՆԵԼՈՅ

Կալնու զաչքն ի բաց և չթարթէ և ձգէ զձեռվին արձակ արձակ և հետ ՚վ ի հետ։

Զ. ՅԱՂԱԳՍ ԱՂԷԿ ՆՇԱՆՆՈՅ

Յորժամ յեշվեցնեն, նա կալնու զշլնիքն բարձր ու կալնու զգլուխն ի վերա շլնեցն և չի ճկմկէ զվիզն ի դեհաց դեհ։

Եւ յորժամ ձգէ զչորս ոտքն, նա մէնակ վերցնէ հետ իրաց ու ի տեղ մի այլ ձգէ, հանց որ չկարէնայ մարդ տեսնուլ զվերցնելն ու զձգելն, և չձգէ զոտվին խառնումառն։ Եւ այն ձին, որ լինի այն աղէկ նշանովն, որ գրած է, ||(17ա) և այս յեշվեցնելովս՝ նա կատարել ձի է։

Է. ՅԱՂԱԳՍ ՉԱՓԵԼՈՅ, ՈՐ Ի ՅԵՇԱՎՆ ՉԱՓԵՆ ՁՔԱՅ[Լ]ՔՆ, ՈՐ ՓՈԽԷ, ԵՒ ԱՅՆՈՎ ՃԱՆԱՉԵՆ ԶՍՈՒՐ ՁԻՆ

Յորժամ կենայ ու յեշվէ, նա տես թէ զչորս ոտքն ի յոր տեղի է զարկել ի մէկ տեղ ու նշան արել սմբակքն ու զմէկ այլ զարկքն զչորս ոտացն հետն ի յոր տեղի կայ։ Ու չափէ ի մէկ նշանէն ի մէկայլն, թէ վեց կանգուն պաղտցի կենայ՝ նա աղէկ է, և թէ այլ աւելի՝ նա այնոր նման չկայ ի սրութիւնն։ Եւ որ այլ պակաս ինչվի յերեք կանգուն ու կէսն, նա յոյլ կոչի, և որ այլ աւելի՝ նա միջակ։

Եւ այս||(17բ)պէս կարես ճանչել զսուր ձին։

Ը. ՅԱՂԱԳՍ ԴԻՄԱԿԱՑ ՁԻՈՅ, ՈՐ ՉՈՒՆԻ ԶՉԱՓՆ

Ձի կան ի գրաստնին, որ են դիմակաց ու չունենայ զայդ չափդ, զոր անուանել ենք, և նշանն այս է, որ շլնի յերկայն շլնի ու յերկայն ու հաստ բազուկ, ու չլինի մեծ անդամն ու շատ միս ի վրայ. և այն երակն, որ կայ յանդմացն ներքսևէ, որ կոչի իր նասայ, նա լինի կարճ ու պինդ. շնչայ ուժով և լինի փորն մեծ և քթայփողքն լայն։ Այսպիսի ձիս դիմակաց լինի և ոչ ունենայ զչափն։

Եւ կան ի ձիանն, որ ունենան զչափն և լինի դիմակաց։ Եւ այս է կատարել ձին։

||(18ա) Եւ այն ձին, որ ուն[ն]այ զչափն ու չլինի դիմակաց, նշանն այս է. լինի յերկայն շլնի, յերկայն բազկունք, հաստ անդամունք, կակուղ բազկնի։

Թ. ՅԱՂԱԳՍ ՃԱՆՉԵԼ ԶՁԻՆ, ԵՐԲ ՃԼԱԾ ԼԻՆԻ

Իր նշանին այս է. արձակ բերան և շատ շաւղիք, և քթափողքն արձակ, և աչիցն միջոցն արձակ յոյժ մէկ ի մէկէ, որ հայի յերակ

4—1034

և ի հեռու, և ականջվոյն ծայրն սուր և տակքն, և հեռու բաշին ծայրն ի նքթնպէն, և լինի բարձր նքթէպ, և սուր երևնայ ներքև ճլին, և կարճ ողնն, և ծնկուքն երկուքն ի մաւտ, և բազկնին ի հեռու յիրացմէ։ Եւ այս նշանովս կարես ճանչել զաղէկ ձին։

||(18բ) Ժ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԱԿ ՁԻԱՆՆՈՅ, ԹԷ ԻՆՉ ԶԱՐԴՎԱԾՔ ԲԱՐԺԱՆԻ Ի ՅՈՐՁ ՁԻՈՅՆ

Ամենայն ինչ զաւդված սիրուն է ի յորձն՝ նայ աստծ է ի մատակն։

Գոված է մատակ ձին, որ լինի շատ կանկնան ու նստի քչիկ. և ի յորձն աստծ է։

Գոված է մատակ ձիոյն ներքի խամծեկացն միսն, [որ] լինի քչիկ, զնոյն ու պռկանցն. և այտ աստծ է ի յորձն։

Եւ գոված է մատակ ձին, որ մէջքն քիչ մի էջ լինի և կաւճքն մաւտ ի մաւտ լինի. և այտ ի յորձն աստծ է։

Եւ յորժամ գովէ յարապն զձին, նա ասէ՝ Որձ քնու և մատակ արթուն։

Եւ գոված է մատակն, որ լինի կար||(19ա)ճ պճկոռք, և ոտվին լինի մաւտ ի մաւտ, զի երբ արձակ լինի մատակն, նա այսպիսի լինի պճկոռքն և ոտքն։ Եւ սիրած է ի մատակն, որ չորս ոտաւքն պորտքայ։

ԺԱ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԱԿ ՁԻԱՆՆՈՅ, ՈՐ ՊԱՀՆԱՅ, ԹԷ Ի ՅՈՐԺԱՄ ՊԱՀՆԱՅ ԵՒ ՈՐՊԷՍ ՊԱՀՆԱՅ

Մատակ ձին չընդունի զովտակն ինչվի մտէ ի յերեք տարին։

Նշանն այս է, որ ընդունի զովտակն, որ սկսու ու ախտ իջնու ի յիրմէ։

Եւ յորժամ վազցնեն զյովտակն, նա շատ նոր երևնայ իր ախտըն, ինչվի յեւթն աւրն երևնայ. ու կարէ լինել, որ քանց եւթն աւրն առջև ցամքի։

Եւ հետ այնոր, որ վազցնեն, նա ||(19բ) պահեն ի յովտկէն ի յետ քսան աւր։ Եւ հետ քսան աւուրն տեսնուն, թէ այլ երևնայ յինք ախտ, նա ցուցնեն իր զովտակն. թէ ուզենայ՝ նա այլվայ վազցնեն որպես զառջի տարպայն։

Եւ կայ ի մատկնին, որ ի յայն աւուրն ի վեր, որ վազցնեն ինչվի քառսուն աւրն, ապայ անցնի իր շողութիւնն։ Եւ կայ, որ խիստ լինի նա ինչվի յերկու ամիսն, նա ապայ անցնի շողութիւնն։ Եւ այլվայ, որ լինի նայ ի հետ երկու ամսոյն, ցուցնեն իր զովտակն. նա թէ չուզենայ, նա վստահ ի առել լինի զսերմն ու պահցել լինի։

Եւ յորժամ մաւտենայ, որ կամենայ ծնանիլ, նա հեռենայ ի մարդկաց ու ուզենայ||(20ա) զմեն կենալն, և սևնա պտուկն։ Եւ թէ խիստ լինի սև պտուկն՝ նա որձ պիտի ծնանի։

Եւ յորժամ ծնանի, թողուն զինք եւթն աւր, որ ձգէ զամէն ախտն ի ծնաքերնէն։

Եւ հետ այնոր, թէ սկսնու ախտն երևնայ, նա բուն ու ճարտարն է, որ կուզէ զովտակն։

Եւ ի յայն աւուրն ի վեր, որ պահնայ, ու ինչվի ծնանի, նա լինի շատն տասնումէկ ամիս ու կէս։ Եւ քչիկն լինի ծնունդն ի յութ ամիսն։ Եւ կարէ լինել, որ ի յերմակն, այլ առջև քանձ որ երեք տարոյ լինի, նայ պահնայ։

Եւ զնոյն ու թէ ի յաջ ծծէն առջև իջնու կաթն՝ նա որձ է քուռակն, և թէ ի ձախէն՝ նա մատակ։

||(20բ) Եւ կայ ի մատկնին, որ չընդունին զյովտակն, քաւել շքելով նա չկարեն ճանչենալ թէ պահցել, թէ չէ։ Եւ նշանն այս է, որ աստև ու անդև ծծին յիստակ լինի գոյնն, քանձ զոր առջև էր, և ժողովի, և աչիցն հայեցքն յերկար լինի դէպ ի յովտակն, որ ցուցնեն։

Եւ կան ի մատկնին, որ խակի չընդունի զյովտակն և ոչ շողնայ։

ԺԲ. ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆՆՈՅ ՎԱՆՑ ՊԱՀՆԱԼՈՅ

Յորժամ վազցնես զյովտակն ի վրայ մատկին, դու մտիկ դիր զառջի տարպայն, որ գողէ ի վրայ կանաչ խոտի, ու տե՛ս մէկայլն աւրն. թէ չորցել է խոտն՝ նա պահցել է, ու թէ չէ չորցել՝ նա ||(21ա) չէ պահցել։

Եւ կան ի մատկնին, որ ծնանին երկու քուռակ, և ես չեմ տեսել, որ ի յայն մատկնոյն ապրել է։

Եւ մատկնին, որ յերամակն կայ, որ չլինի խալս մատակ։

Պատեհ է ի հետ ամէն տասն մատկի յովտակ մի, որ ձգի թողուլ։

Եւ կան ի մատկնին, որ երբ ծնանի զքուռակն, նա ի յիր շատ ցաւէն ի ծնընդեանն, ատէ զքուռակն։

ԺԳ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԿՆՈՅ ԵՒ ՅՈՎՏԿՆՈՅ, ՈՐ ԵՐԲ ԽԱՌՆԻՆ Ի ՅԻՐԱՐ, ՆԱ ԵՐԲ ԾՆԱՆԻ, ԹԷ ՈՐՊԷՍ ԼԻՆԻ ՔՈՒՌԱԿՆ

Վլախ ձին այն ազգն է, որ որձն ու մատակն վլախ լինի։ Եւ թէ տաճիկ ձի վազցնեն ի վրայ վլախ ձիոյ, նա չկարէ լինել, որ||(21բ) կարէ ի գովութիւն գալ, որ բերէ զքուռակն, կամ զքուռակն ձգէ ու կամ ինք վնասի։

Եւ թէ վազցնէ վլախ ի վրայ ի յարապ մատկի, նա այն քուռակն, որ ի յիրմէ ելնէ, նա կոչեն իր շահրի, և լինի դիմակաց ու սուր։

Եւ վլախնին լինի դիմակաց ու ամուր ի ցուրտն ու ի հով աշխարհք։ Եւ շահրիկքն ու յարապ ձիան լինի անդիմակաց ի շող աշխարք։

Եւ զովտակն պարտ է ընտրել, որ ի յաղվոր ձև լինի և ի տեսակ աղէկ և ի յամենայն ազգ յայտէ ի յետ, զի թէ ունենայ պեղծ գնացք ու կամ լինի հարուն և կամ լինի ճինար և վազցնեն մատ||(22ա) կին, նա ու զնոյն ու լինի իր քուռակն. հայնց այլ քանի <ու> աղէկ կարես ընտրել զովտակն, նա ու զնոյն ու աղէկ լինի իր քուռակն։

Եւ պարտ է վազցնել զովտակն ի գարնան ի մուտն, որ ծնանի այլվայ ընդդէմ գարնան. նա ծնանի ի վերայ խոտի ու քուռակն աղէկ սնանի։

Եւ կա գետին, որ աղէկցնէ զմաքակն, ու ի յայն երկիրն, որ շող լինի ու հողն գիճային, նա աւիրի քուռկին սմբակքն։

ԺԴ. ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՊԷՍ ԾՆԱՆԻ ՋՈՐԻՆ

Յամէն երկիր ի ձեռք զգրաստն կալնուն ու ապա վազցնեն զովտակն։ Եւ յորժամ վազցնեն ||(22բ) աղէկ էշ ի վրայ աղէկ մատկի, նա լինի յիրմնցնէ (=յիրնցնմէ) կատարել ջորի։

Եւ յորժամ վազցնեն վլախ ի վրայ իշու, նա ծնանի փոքր ջորի, և կոչի իր անունն մզմուն։

Գոված է մարցի իշվին վասն հեծնելոյ և այլ ի հետ ի ամանցի իշվին, և որ լինի ի յիշվին յերկայն շլնիք, շունչ ուժով և սպրկիկ ի յամենայն յայտէ։

Եւ յորժամ կենայ ու մարդն հեծնու զէշն ու խիստ խառանչէ, նա թող առնու շիրիկ ձէթ ու կամ արդար եղ ու աւծն[է] զներքսև պռկանցն. նա քանի այն աւծն ի վրայ կենայ՝ նա չխառնչէ կամաւն աստուծոյ։

Եւ յորժամ կամենայս ընտրել ջոր||(23ա)ի ու պահել, նա դու զժողով ու զբոլոր գրաստն ընտրէ. զի ամենայն, որ յերկայն լինի շլնին և փորն մեծ և գաւակն լայն, նա թէ հազար ի տեսակ փոքր թվենայ, բայց չկոչի փոքր գրաստ, այլ փոքր այն գրաստն է, որ ի յայս կերպարանացս ի յետ է։

Գոված է և բեռին ջորին, որ լինի իր չորս ոտքն ամուր, և մէջքն մեծ, ու շլինքն ու գագաթն մեծ, ու լինի աչվին պարզ, և աչիցն ճոյթերն կարմրգոյն, և փորն մեծ, և շունչն ուժով, և սրպկիկ ի յամէն ազգ ցաւոց, ի յայտէ։ Եւ աղէկն ի յայս ազգէս, որ Հայոց երկրին ծնունդ լինի, և գոված է ջորեստանն ի||(23բ) Ցրիխի կ[ղ]զոյն, վանց հեծնելոյ ու յեշաւ գնալոյ, զի դիմանայ շատ և յեշվէ սուր։

Եւ չէ պարտ կապել զջորին ի խէչ տաճիկ ձիոյն, զի աւիրի տաճիկ ձին։

Եւ գոված է մարցի ջորեստանն վանց հեծնելոյ, զի իրենց մայրերն աղէկ ազգ ձիան լինի։

Եւ ես փորձել եմ, որ ի յայս ի յամէն ազգերս ի գրաստնիս, զոր յիշեցաք, նայ չկայ այլ համբերկոտ ի վրայ սովոյ, ի վրայ ծարվոյ, ու ի վրայ քշիկ ուտելոյ ու խմելոյ, և յերկար ճամփու, քանձ չորեք կոյս յիրար ընկած գրաստնին ևս առաւել ի ջորեստանն և մեծ գրաստնին ու բարձրն ու յերկայնն. փորձեցի, ||(24ա) որ ոչ սովոյ կու դիմանան ու ոչ ծարվոյ, քանձ երբ ուտէ ու խմէ զամէն, նա ապա կարէ ելնել ի ճամբահ։

ԺԵ. ՅԱՂԱԳՍ ՔՈՒՌԿՆՈՅ

Ի ծնընդէնէ ի վեր 'վ ինչվի մեծնայ, և յորժամ ծնանի քուռակն, ու ինչվի տարոյ մի լինի, նա անուն քուռակ կոչի։ Եւ երբ յերկու տարին մտէ 'վ ինչվի որ լնու զերկու տարին, նա յարապն իր անուն ճրտյայ կոչէ։ Եւ երբ յերեք տարին մտէ ու դռունքն սկսնու ի սևնալ ու ջանայ, որ փոխէ, նա երեք տարոյ կոչի։ Եւ երբ զչորս տարին լմնցնէ, նա փոխէ զայն չորս ակռայն, որ կայ խէչ դռանցն, և մտէ ի հինգ տարին։ Եւ երբ զհինգ տարին լմն||(24բ)ցնէ՝ նա սրբել է ու կարէ լինել, որ առջև քանձ զհինգ տարին սրբի, երբ իրենց հայրն ու մայրն դահ լինի։

Ու երբ ուզենաս, որ ճանչնաս զքուռկին ակռայքն, որ չէ փոխել, լինի սպիտակ ու կոկ ու մանդր՝ զէդ խորնճաւղ սպիտակ։ Եւ յորժամ փոխէ զակռայն, նայ դեղնէ և խոշրնայ ակռայն ու լինի խաղ խաղ և կարէ լինել, որ ի ստեղծուածէ ակռայքն յերկայն լինի։ Եւ այսով ճանչես, որ երբ փոխել լինի զակռայն, նա հաստ լինի ու յերկայն, և այնոր ի ծնընդենէ նայ բարակ լինի ու յերկայն։

Եւ կարէ լինել, որ գրաստուն ակ||(25ա)ռայքն յերկայնան ի յաւղութենէն, զի կծկի լինդքն, նա յերկայն երևնայ ակռայն։

Եւ դահ գրաստուն նշանքն այս է, որ շատնա շողիքն ու չկարէ արգելել, ու թուլնայ պռկունքն ու յեր[կ]այնայ ակռայքն և ընկնի դահ ռէչքն և դահնայ երեսն ու փոխի աչիցն կերպն։

Եւ ձիոյն ակռայնոյն համարն քառասուն ու չորս ակռայ է, տասներկուքն այն է, որ յառաջ բուսնի։

Եւ առջի ակռայքն, որ բուսնի քուռկին, նա դռունքն է և բուսնի ի ծնընդենէ ի վեր և ի հինգ աւուրն ինչվի յինն աւր։ Եւ այլ ակռայքն բուսնին ի հետ||(25բ) այսոց։ Եւ ի յայնոց իրք չփոխէ։

Եւ քուռակն, որ ծծկան լինի, նա չկարէ մարդ զաղէկն ու զպեղծն ճանչել, զի երևնայ զաւդված ի քուռկութիւնն, որ աղվոր թվենայ, ու եբ մեծնայ, նա հաստնայ ու յերկայննայ կամ լայննայ, ու ելնէ ի հնդամէ։ Հանցու կայ զաւդված, որ աղծրի թվենայ, նա ի մեծութիւնն աղվորնայ։ Վասն այսոր չէ պարտ զքուռակն ծծկան ընտրել և սակաւ մի կարէ մարդ ճանչել։

Զքուռակն յորժամ մեծնայ ու հաստնա ու գարի ուտէ, թողու զկաթինն միսքն ու հագնի զգարոյն միսքն, առաւել թէ հեծնուլ կարէ զինք||(26ա) ու յիմնայ զիր գնացքն. նա թէ ուն[ն]այ զընական գնացքն որպէս գոված է՝ նա աղէկ ձի պիտի լինի։ Բայց կարէ լինել, որ չունննայ երկու տարէկնակն զգնացքն, նա վանց վատուժութեան է, ու երեկ տարոյ լինի՝ նա առնու զգնացքն հայնցու չորս տարոյն, հայնցու հինգ տարոյն։

Աղէկ քուռկնոյն նշաննին, որ վազվզտէ ի վրայ մաւրն և ուտէ ի հետն ու արծի ի հետն, եւ վատուժ քուռկնին, եբ հեծնուն զինք, նա մէջքն իջնու և ձանձրնա ճարտար, և երբ իջնուս ի յիրմէ, նայ ի մէկ տեղ կանգնի և քրտնի ճարտար։

||(26բ) Եւ կան ի քուռկնին, որ բազկունքն ի ներքսէ դարտակ լինին ի մազէ։ Ասցած է, որ այն վանց այնոր է, որ եփ ի

մաւրն ի փորն կու կենայ, նայ շունչն ի յայն տեղն խիստ կու դիպի, նա կու այրէ շունչն զայն տեղն ու մազ չի ի բուսնիլ։ Ասցած է, թէ ամբակքն ծալած կու լինի ի մաւրն ի փորն ու հանապազ կու հալծի ի վրայ այն տեղացն, նա չի ի բուսնիլ մազ։ Եւ այսպիսի քուռկնիս կոչէ յարապն ըռախմաթէն։

Եւ ասեմ, որ ի ստեղծուածոց է, նա չէ պատճառաց, զի տեսել եմ ի ցռիշվոյն, որ չէ ի լինել ոչ ի ձեռվին, ոչ ի յոտվին, և իշվոյն ամ||(27ա)բակքն այլ աւելի սուր է, քանց ձիոյն։

ԺԶ. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՆԵՐՈՅՆ ԵՒ ՆՇԱՆՆՈՅՆ ՈՒ ԲՈՂՈՐՆՈՅՆ, ՈՐ ԿՆՆԱՅ Ի ԳՐԱՍՏՆ, ԹԷ Ո՛Ր Է ՍԻՐԱԾ ԿԱՄ Ո՛Ր ԱՏԱԾ Է

Կան ի ձիան[ն]ին թուխ սև և փայլկտուկ. և յարապն ասէ իր անուն ատհամ։ Եւ կայ ի յայս գունէս, որ քիչ մի կարմրգոյն լինի։

Եւ կան ի ձիան[ն]ին, որ յարապն ասէ իր հուայ, և լինի ի բաց սևգոյն ընդ կարմիր ընդ սևի մեջ, և լինի քիթքն կարմիր և անդմմէջն կարմիր դեղնգոյն։

Եւ կան ի ձիաննին քումայթ։ Եւ ազգեր են. կայ կարմիր քումայթ, որ լինի մազծայրքն և տակքն խիստ կարմիր։

Եւ կայ ոսկէգոյն քու||(27բ)մայթ, որ է դեղին փայլկտուկ կարմրգոյն. այտ նման է յոսկոյն գոյնն. և ասէ իր յարապն քումայթ քլաֆ։

Եւ կան ի քումայթնին կարմիր թխգոյն։

Եւ կայ խիստ թխգոյն քումայթ, որ լինի քիթքն կարմիր և անդըմմէջքն, և յանդմէն ի վայր դէպ ի յոտքն քանի իջնու նա դեղնգոյն լինի. և յարապն ասէ իր մայտմի։

Եւ կան ի ձիաննին խարտեշ։ Կայ խալտեշ խլուխի, որ լինի զէդ զաֆրնգոյն։ Կարէ լինել, որ գլուխն այլ թուխ կարմիր լինի, քանձ զանձն։

Եւ կայ խարտեշ ըռպի գոյնով||(28ա) և բաշն ու տուբէթն ու ագին այլ թրխգոյն։

Եւ կայ խարտեշ մայտմի, որ լինի մազծայրքն դեղնգոյն, և մազտակքն զէդ հինայի ներկած՝ կարմիր։

Եւ կայ խարտեշ դեղին, որ չլինի ոչ խիստ դեղին, ոչ խիստ կարմիր, ու տուբէթն ու բաշն ու ագին այլ կարմրգոյն լինի։

Եւ կայ ի բաց խարտեշ, որ լինի մազծայրքն և մազտակքն սպիտկ[գ]ոյն, ու բաշն ու ագին ու տուբեթն սպիտակ. և կոչէ պարսիկն իր քարտուշ։

Եւ կայ թուխ խարտեշ, նմանէ ի յըռպի գոյն, ապա այլ ի բաց է||(28բ) իբրև զերկաթի ժանգ։

Եւ կան ի ձիաններին դեղին։ Կայ խիստ դեղին՝ որպէս մազքա-լած ոսկի, և կարէ լինել, որ կենայ ի յինքն թուխ մազկներ, և տուբեթն ու բաշն ու ագին լինի սպիտ[կ]գոյն դեղին։

Եւ կայ դեղին դեկնայխայտ, որ լինի յիր մարմինն իր գոյնովն բոլոր բոլոր զէգ դէկնի, և բաշն ու տուբէթն սպիտակ։

Եւ կայ ի բաց դեղին, որ լինի սպիտկգոյն, և լինի տուբեթն ու բաշն ու ագին սպիտակ. և կոչէ իր անուն պարսիկն զառտ։

Եւ կան ի դեղնոյն, որ լինի ընդ դեղին ընդ կապոյտի մէջ, և ||(29ա) տուբեթն ու բաշն ու ագին մշկի գոյնով։ Եւ թագաւորքն ա-նուն կոչեն Հարաւի։

Եւ կան ձիաններին, որ կոչեն սամանդ, և իր գոյնն է սևգոյն դեղին և իր կայշին ու մազտակքն սև, և բաշն ու տուբեթն ու ա-գին թուխ սև, և աչվին կապոյտ գոյն։

Եւ կայ դեկնախայտ սամանդ և կարէ լինել, որ քանձ դեկնի այլ մեծ մեծ, բոլոր բոլոր կենայ ի յիր մարմինն իր գոյնովն և ագին, որ նմանէ ի բաց թուխ, անդամն լինի մէջն սև ու չորս ոտքն ու տուբեթն ու բաշն ու ագին, և լինի ամէն փորն ու անթքն ու աքոմէջէն և շուրջ աչիցն ընդ դեղին||(29բ) ընդ կապոյտի մէջ, ու կարէ լինել, որ մէջքն կարմիր լինի, և այլն այս գոյնովս, որ յիշե-ցաք։

Եւ կան ի ձիանն պաւզեր. կայ պաւզ, որ լինի թխգոյն սպիտակ ու լինի կաշին սև, նա ասեն այսոր սպիտակ պաւզ։

Եւ կայ պաւզ, որ սպիտակ լինի և խառնի ի յինք սև մազեր, և ասեն իր զառզուռի։ Եւ թէ լինի սևն աւելի, քանձ սպիտակն, նա ասէ իր յարապն պաւզ հալաճոյն։

Եւ թէ լինի սև մազերն ի սպիտկին մէջն, որ կապոյտ գոյն քշտէ, ասեն իր քարկապոյտ։

Եւ թէ լինի այս գոյնովն, որ բոլոր բոլոր լինի, ասէ իր յարապն մրֆալաս (=մըֆալաս)։

||(30ա) Եւ թէ խառնի ի սպիտակ մազերն կարմիր, նա կոչէ իր յարապն մուլահամահ։

Եւ կան ի ձիանն սպիտակ։ Եւ սպիտակն այն է, որ ոչ ինչ ազգ գոյն չխառնի յինք, և լինի հայնց սպիտակ, որպէս այլ սպիտակ

նշաննի, որ կենայ յայլ գրաստ, զի նշաններն, որ ի յայլ գրաստ կե-նայ, նա պիտի խիստ սպիտակ լինի և կաշոյն գոյն այլ սպիտակ։

Եւ կան ի սպիտկներն, որ լինին կապոյտ աչք, ու կայ, որ լինի թուխ ակն և թարթևունքն որպէս զծայրոյրած։ Եւ կան ի սպտկնին սպիտակ ու մազծայրքն դեղնգոյն, աչքն խայտ։ Եւ կայ, որ լինի կապոյտ աչք. ||(30բ) և այս ազգս բնաւ չլինի աչքն զէտ ծայրու-րած և ասեն իր անուն տուսանի։

Եւ կան ի ձիանն չալ ձի, որ լինի իր ամէն մարմինն սպիտակ ու գլուխն ու շլնիքն այլ գոյն, զինչ որ լինի. ասէ իր յարապն ատ-րայայ։

Եւ թէ լինի գլուխն ու շլնիքն ու ագին սպիտակ և այլ մար-մինն զինչ գոյն որ լինի, ասեն իր մուտրաֆ։

Եւ թէ լինի ի տեղոց տեղ սպիտակ և ի տեղոց տեղ այլ գոյն, նայ ասեն իր մուտլայ։

Եւ թէ լինի քովքն սպիտակ, ասեն իր ահսաֆ։

Եւ թէ լինի մէջքն ու փորն սպիտակ, ասեն իր մուպայտան։

Եւ սխալախն թէ լինի սպիտակ||(31ա) ու խառն քումայթ, նա ասեն սխալախ քումայթ։

Ջնոյն ու թէ լինի սպիտակ ու խարտեշ, նա ասեն խարտեշ սխալախ։

Ջնոյն ու որ գոյն ու խառնի ընդ սպիտակն, նայ այն գոյնովն չալ ասեն։

Եւ թէ լինի մանտր կետ կետ թուխ ու սպիտակ կամ կարմիր լայն, և թէ լինի վերի պռու[ն]կն սպիտակ՝ շատ կամ քիչ, կոչեն իր անուն ռայֆիմէ։

Եւ թէ լինի քթին վերայ սպիտակ, զէդ խազ խազ ու չհասնի ինչվի ճակատն ու կամ ի յաչքն, նա ասեն իր իազուֆ։

Եւ թէ լինի ճակատն բոլոր կամ չորեք կոյս կամ երեք կոյս սպիտակ, նա կոչեն իր աստղաճակատ։

[ԺԷ. ՎԱՍՆ ՆՇԱՆՆՈՑ ԵՒ ՀԵՏ ՈՐՈՑ ԼԻՆԻ ՁԻՆ]*

||(31բ) ԺԸ. ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆՆՈՑ, ՈՐ Ի ՉՈՐՍ ՈՏՔՆ ԿԵՆԱՅ

Թէ լինի չորս ոտքն բոլոր սպիտակ, նա ասեն իր մուհաճալ չորս ոտաւքն։

* Ցանկում առկա այս գլուխը բացակայում է բնագրում։

Եւ թէ երեք ոտուքն, նա ասեն իր երեք ոտաւք մուհաճալ։

Եւ այն ոտքն, որ չկենայ սպիտակ նշան, ասեն իր ազատ։

[Կա]մ կայ, որ ասէ երկուքովն կամ երեքովն մուհաճալ։

Եւ կայ, որ ասէ երկուքովն մուհաճալ և երկուքովն ազատ։

Եւ թէ մէկ ոտն լինի սպիտակ ու ի ճակատն չկենայ նշան, նա կոչեն իր այսամ։

Եւ ի յոր ոտք որ կենայ սպիտակ ու կենայ ի յինք սև մազեր խառն, նա ասեն իր աշխառ։

‖(32ա) ԺԹ. ՅԱՂԱԳՍ ԱԳՈՅՆ ՆՇԱՆԻ

Յորժամ կենայ ագոյն բոլորն սպիտակ նշան, կոչեն իր աշհալ. և առէ զինքդ յարապն։

Եւ ամենայն նշան, որ կենայ ի գրաստուն փորն կամ ի կո[ն]ակն, որ ի խոցէ լինի<ն> ու կամ հարել լինի զինք իրք, նա այն չէ ի յայս նշանոյս, որ յիշեցաք, ապա այս, որ հետ կոչի։

Ի. ՅԱՂԱԳՍ ԲՈԼՈՐՆՈՅՆ, ՈՐ ԼԻՆԻ Ի ՄԱԶ, Ի ՅԻՆՋ ԳՈՅՆ ՁԻ ՈՐ ԼԻՆԻ։ ԵՒ ԹԵ Ո՛Ր Է Ի ՅԻՐԵՆՔ ՍԻՐԱԾ ԲՈԼՈՐ ՅԱՐԱՊՆ ԿԱՄ Ո՛Ր Է ԱՏԱԾ

Բոլորնին, որ կենա ի գրաստն, նա տասն և ութ են։ Եւ զոր սիրել են երեք բոլոր են, և զոր ատել են՝ նա չորս են։ Եւ այլքն ոչ սիրած են և ոչ ատած։

Եւ յայն‖(32բ)ոց, որ սիրել են։

Եւ ասցել է յարապն, ո՛ր է շնոֆոր. նա մէկն այն բոլորն է, որ ի շլինքն խեչ ճտացն կենայ, և մէկայլն, որ կենայ ի մէջ շըլնեցն, և երեքն, որ կենայ ի կրծոցն ի վերի դեհն։ Այս երեք բոլորս սիրած է առ յարապն և շնոֆոր են ասցել։

Եւ զոր ատել են. մէկն այն է, որ լինի ի մէջ ճակտին, և մէկայլն, որ լինի ներքև խամծեկացն, երեքն, որ կենայ ի նքթէպն ու կամ ի վրայ ողինն <ու որ կենայ>, և չորսն, որ կենայ ի կարթքն և ի վրա անդմին։

Եւ այլքն ոչ ատած են և ոչ սիրած. և այն, որ կայ ներքև տուբեթին ի ճակտին վերի դեհն, ու մէկայլն այն է, որ կայ ի շլնեցն ի վեր‖(33ա)ի դեհն, և երեք՝ բոլորն, որ լինի ի ճակատն ի յերկայնքն, և չորսն, որ կենայ ներքև տուբեթին և կէսն երևնայ և կէսն

(Ձիան նկարի շուրջ տրված բացատրությունները) →

Գագաթանն աղջոյրն ցածն գոված է։

Բարակ գլուխն և բարակ վիզն և ղորդն, որ դէպ ի վեր կալնու և ականջն[ին] յերկայն, երեսն և դոյր և լայն գոված է։

Երեսին բարձր ոսկորն, եբ կաշին ի վրայ պինդ փակման լինի, աղէկ է։

Յերկայն շլնին և բարակ ճիտն գոված է, ցած՝ յայպ է։

Բաշն յերկայն և ղորդ և մանր մազն յատակն զէտ այծենի գոված է։

Արձակ կաշին ի վրայ շլնեցն, որ ի վաղելն դնդղայ միսն և կաշին, գոված է։

Շլնեցն ջղերն հաստ և պինդ ի լար և բարձր գոված է և ցածն և թոյլն յայպ է։

Շլնեցն յետի դեհն բարակ յայպ է։

Ներքև բաշին մազն նաւսր ու կակուղ և ղորդ գոված է։

Նաւսր շլնին գոված է։

Շլնեցն գ… ռակն զեդ եզին լաւ է։

Բէճգլխնին ի նքդէպն ի մաւտ և տակն ի հեռու լաւ է։

Բէճգլխնին ի թմաղման ու ի վրայ շատ միս լաւ է։

Բէճքն հեռու մէկ ի մէկէ գոված է։

Բարձր նքթէպն և զաւդվածքն ի թաղման լաւ է։

Նքթէպն աւելի բարձր յայպ է։

Ի նքթէպէն ինչվի գաւակն ղորդ գոված է։

Թամքողն ու կզողն ու ծուռ ողն յայպ է։ Յերկայն ողն և աղեղնաձեն գոված է։

Մսանացն միսն կլոնճմտած ու պատ և ի լի մսանքն ի ծայրէ ծայր գոված է։

Լայն անդամն և յերկայնն և ձկունկն մեծ լաւ է, քանց բարակ և յերկայն։

Անդմնացն զաւդվածքն մեծ և լայն, անդմնոյն միսն շատ ու կաշին ի վրայ փակման գոված է։

Պլատն (՞) անդամն լաւ է և ղորդն յայպած է։

Գաւակն քանի բոլոր լինի ու լայն գոված է։ Սուր գաւակն և թոյլ յայպ է։ Եւ յերկայնն ու շատ միս ի վրայ գաւկին գոված է։ Եղնգաւակն ատած է։ Դար ի վեր գաւակն ատած է։

Ակէտակն հաստ լաւ է, զի ձին ուժովն լինի և բարակն՝ վատուժ։

Շատ շարժելն այգոյն յայպ է։

Յետի ոտացն գաւակն կարճ և լայն գոված է։

Ընդ կոճքն ընդ սմբակնի մէջ, երբ անմազ լինի, յայպ է։

Ընդ ձուքն ընդ որովայնի մէջ կարճն յայպ է։

Սուր արմունկն և ամուր գոված է։

Յետի սրաւնն յերկայն է գոված։

Փոքր կոճն և հաւսար և այն ջեղն, որ յինք կուգայ սուր և ղորդ ինչվի կոճբերանն, և ղորդ կոճքն յայպ է։

Սմբակին վերև յետին դեհացն, որ մազն յերկայն, երբ կարճ լինի ու թաղման…

Պորտն ի դուրս յայտ է։
Քաշքն բարձր ու սոթոթ գոված է։
Յերկայն խալիկն և թոյլ ջեղն յայտ է։
Եւ որ պինդ լինի գորտն գոված է։
Փոքր գորտն ու իր տեղն նեղ գոված է։
Ջոր սմբակն յայտ է։
Առջի կոճերն հաստ, խալիկն ու տեղն և ջեղն ի հետ հաւասար գոված է։
Ծ[ն]կացն ընդ իրար ծեծելն յայտ է։
Կարճ ծղին լաւ է, որ ճարտար խաղայ։
Առջի կոճերն փոքր ու ջղերն պինդ ի թաղման, փոքր ու աւա<վ>ղն ու իրն ներքև։
Բազկացն դրուց<ն> և մեծ ձկու<կ>նքն, շատ երկնին ի ձղեցն ու ի ձկանցն, ի վրայ բազկացն ջղերն հաստ յայտ է։ Կաշին ի վրայ փակման լաւ է։
Պնչերն երբ լայն ու կակուղ ու քթին սունակն նաւսր՝ գոված է։
Կարճ ձեռվին, յերկայն ոտ[վ]ին, յերկայն աչքն յայտ է։
Ծնկացն խուփն պինդ և բազուկն և կաշին [ի] վրայ փակման գոված է։
Սրունացն ճաղն ու իր երկու երակն քամիք...
Արձակ կուրծքն, բարակ երբուծն և մեծ ձկներն լայն լաւ է։ Եւ երիՃն ի յիրացմէ ի զատ գոված է։
Յերկայն լեզուն և շատ շողիքն գոված է։
Բերնին ճեղքն, եբ շատ լինի, գոված է։
Պարկեշտ պռունկ և բարակ գոված է։
Կարճ լեզուն յայտ է։
Կակուղ ու[ն]կն յայտ է։
Պարկեշտ ակռայք գոված է, մեծն յայտ է։
Խունանն և սնուկն ի քիթն յայտ է։
Պնչերն երբ լայն լինի ու կակուղ ու քթնին սունակն նաւսր՝ գոված է։
Եբ խոյաքիթ լինի կամ փոքր կամ քթին ոսկորն ղորդ լինի, գո[ված է]։
Կապոյտ աչքն և դեղին յայտ է։
Աչերն ի յիրացմէ ի հետ արձակ, աչիցն պատուածքն նեղ լինի լաւ է։
Յունքն մեծ ի վրա ի կախ գոված [է] և երբ նաւսր լինի՝ գո[ված է]։
Լայն, տափակն ու աւաղ կաշին աննման աղէկ գոված է։
Ականջին մէջն լայն սիրած է։
Գագթանն աղջոյրն յեր[կ]այն և ցածն գոված է։
Փոքրութիւն ականջացն վատ է։
Խամծկացն ներքի դեհն բարակած գո[ված է]։

չերևնա, և հինգ՝ քոլորն այն, որ կենայ ի վրայ փորոյն, և վեց՝ քոլորն, որ կենայ ի կրծոցն ի ձկունքն, և եւթն, որ լինի ի քաշքն. ամ ի յայսոց կան, որ են ի շլնեցն երկու դեհն, և կրծոցն երկու մսանքն, և ի փորոյն յերկու դեհին վերայ, և ի կարթք[ի]ն յերկու դեհն։

Եւ եղաւ այս բոլորնիս տասն և ութն։ ‖(33բ. տե՛ս ներդիր ձիան նկարը)։

‖(34ա) ԻԱ. ՅԱՂԱԳՍ ԲԱՆԻՑ, ԶՈՐ ԱՍԱՑԵԼ ԵՆ ՀՆԴԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԷՐՔՆ ՎԱՍՆ ԳՈՅՆԵՐՈՅՆ ՈՒ ՆՇԱՆՆՈՅ, ՈՐ ԱՍԱՑԵԼ ԵՆ Ի ԳՐԱՍՏՆԻՆ ՁԱՂԷԿՆ ՈՒ ՁՊԵՂՇՆ

Ասացել է Ճնայ իմաստասէրն հնդկաց, թէ այն յարապ ձին, որ լինի սպիտակ, զէդ ձկնքաղ սպիտակ, նայ այն քանձ զամէն ձիանն գոված է, յամէն ազգ գովք և բարձրագոյն աստիճան է, քանձ զամէն ազգ ձիոյ, զի կարող է ի պատերազմն, և շնոֆոր է իր տիրոջն և ի թագաւ‖(34բ)որական գրաստնոյն է։

Ի պոման, որ չկենայ այս յայպերս, զոր ասենք. մէկ այպն, որ երբ ծնանի, բուսած ակռայ ունենայ կամ երևնայ իր ձուքն ի յայս ժամս, կամ ի ծնկվին՝ բոլորնի, կամ կենայ ի ներքի խամծեկն, կամ լինի ակռայքն քանձ քառսուն ու չորսն աւելի, կամ լինի ակընջվին յաեւվծեր ի ցից, զէդ ակընջվի, ու ի վերա իր մազեր։ Եւ ի յայս յայպերոյս այս կերպս գրաստս կենայ կամ ի յայլ ազգ գոյն, որու լինի, նա խիստ յայպած է ու պեղծ ազգ գրաստնոյ է։

Եւ մէկայլն, որ գոված էր, մշկաբաշն ու տուբեթն սև. և կոչեն‖(35ա) իր դեկնախայտ սամանդ։ Եւ լինի որպէս այս կերպովս ասցաք և կենայ ի յինք սպիտակ դեղին մազեր նա խառն, կոչեն իր սամանդ յատասի, որ թարգմանի իր սպնախայտ սամանդ։

Եւ տարբերութիւնն, որ ընդ դեղինն ու ընդ սամանդն. լինի դեղին՝ բաշն ու տուբեթն ու ագին ի սպիտակն ի յար, և սամանդն լինի՝ թխգոյն դեղին իր տուբեթն ու բաշն ու ագին. և այս ընդհանուր նշաննի է։ Եւ զոր ես եմ մտիկ դրել ու ճանչցել, որ ո՛ր ձիոյ մորթի սև լինի, նա զմազն պիտի սև բուսցնէ, և որ սպիտակ՝ նա սպիտակ։ Եւ այնոք, որ դեղննի են, նա կաշին պիտի սպիտակ լինի։

‖(35բ) Եւ կան ի ձիաննին վարդգոյն։ Եւ կայ վարդգոյն, որ լինի ընդ կարմիր, ընդ դեղին, ընդ խլուխիի մէջ, և իր կաշին ու

մազտակքն թուխ և ի նքթեպէն ինչվի յագիտակն զէդ մատն մի բարակ ու յերկայն սև, որ լինի խիստ սև։

Եւ կարէ լինել, որ լինի չորս ոտքն սևգոյն և վարդգոյն, որ լինի կաշին սև, և լինի մազծայրքն զէդ ոսկէգոյն քումայթի։ Եւ այն խազն, որ կայ ի նքթեպէն ինչվի յագիտակն, նա լինի թուխ սև, և չորս ոտքն՝ Հայնցեղ թուխ խազեր, զէդ ապըրնճներ լինի։

[Ե]ւ կան ի ձիայնն խարինճ. և այն է գոյնն, զի ի մաւտ է յայս սպիտակս, որ գովեցաք։

‖(36ա) Եւ կայ ձի, որ լինի զէդ ցուէշ, չորս ոտքն սև, նայ գոված է։

Ապա այլ ցած է քանձ մշկագոյնն և այլ ի Հետ քարկապոյտքն, Հայնցու թուխ սևն, որ իսկի սպիտակ նշան չունենայ. նայ խիստ գոված է։

Եւ թէ լինի թուխ՝ աննիշ սև, որպէս ասցաք, ու ի վրայ գագթանն ի մազին փայլկտուկ՝ զէդ ճանփնի, որ նման է յերկնի, զէդ կիլխտռած կտաւ, նա Հրեղէն է։ Եւ գոված է ի ձիաննին։ Եւ որ կալնու զինք վանց պատերազմի՝ նա Հասնի իր ամէն կամացն, և քանի երթայ աւր [ը]ստ աւրէ մեծնայ։

Եւ գոված է դեղին ձին, կապոյտ աչքն և մշկագոյն ու աչքն դեղ‖(36բ)նգոյն։ Եւ այն ձին, որ կենայ յիր մարմինն կէտ կէտ կարմիր ու սպիտակ և կենայ յինք բոլորտի՝ զէդ արծվու պճղներ, նա գոված է։

Եւ գոված է կարմրգոյն պաւղն, և գոված է սամանդն, և գոված է ըռպգոյնն, և գոված է ի քումայթն այն, որ լինի թուխ ու բաշն ու ագին ու տուբեթն ու չորս ոտքն սև։

Եւ ասցել է Ճնայ Հնդկցին, թէ չէ պարտ ունենալ զայս գրաստնիս, զոր յիշել կամինք։ Ձի որ լինի իր մազն զէդ տուսիճի փետրի գոյն, և այն ձին, որ սև կայտեր և ի վրայ պոկանն կամ ի ներքսէ կամ ի դրացէ՝ որպէս զշուշմայ կետեր, կամ‖(37ա) լինի ի վրա կողացն բարձր բոլորնի, կամ լինի ի վրա ձվոցն կակուղ մազ սև, [կամ]այլ ցեղ գոյն, քանձ զինչ իր գոյնն է, կամ լինի ի վրա ճակտին սև մազեր, այս նշաննիս զոր ասվաք, նա ամէնս չէ շնոֆրը։

Յաղագս տաղերոյն և իրենց անուանցն

Գրվի տաղերն և իրենց անուններն











5—1034

Յոր ուզէ, որ գրաստ ավղցնէ և գրաւ դնէ, որ յեշվեցնէ ընդ այլ ձի, նա յառաջ փնդռէ աղէկ ձի իր ամէն կերպովն ի յաղէկ ազգէ։

Եւ աղէկ ձին այն է, զոր նախ յիշեցաք ու զնշաննին ցուցուցաք, որ լինի սուր և դիմակաց ի յեշավն։ Եւ ավղցնել վանց այն գրաստուն կու ասենք, որ նախ գիրցնէ, որ զճրագուն դնէ ու միսք դնէ, նա ոսկորքն ամրնայ, և վասն գիրութեան չկարէ յերակ յեշվել և ոչ ի պատերազմ դիմնայ. նա ավղցնես այս կերպովս որպես կու տանք զնշանքն։ ||(40բ) Զի որ կամիս ընդ ինք գրաւել, դու իր զաւղվծացն մտիկ դիր ու իր նշաննոյն ու համբրէ թէ քանի աղէկ զաւղված կայ յինք կամ քանի աղէկ նշան. նա թէ ի քոյն այլ աւելի լինի աղէկ նշաննին, նայ դու գրաւէ, և թէ քամաթք, նա դու մի գրաւել։

Եւ յորժամ կամենաս ձի ավղցնել, նա դու ընտրէ զայն ձին, որ առողջ լինի և անարատ և սպկիկ յամէն յայպէ. նա թէ աւաղ լինի՝ այս աղէկ կերպ ձիս նա գիրցոյ։

Եւ երբ գիրցնես ու լնուս զինք ու կամենաս ավղցնել, դու սկսիր երկու շաբաթ ու տուր||(41ա) իր առվուտ, որ ուտէ, ու տես, որ այլ իրք չտաս իր, որ զճրագուն քչկցնէ և քրտնցնէ զինք և աղէկցնէ զ<ի>ստամոքքերանն ու զուարճ պահէ զինք։ Եւ հետ երկու շաբթուն կտրէ զինք։ Եւ թէ չկենայ առվոյտ, դու շինէ իր մսուր ի սպկիկ ախոռ՝ բարձր ինչվի կուրծքն՝ տախտկերով. ու զներքի տախտակն, որ մսրին ոտքն է, դու մանդր ծակտէ, որ քանի զալիկն ժաժէ՝ նա փոշին ի վայր լցուի, ու լինի ներքև մսրին փորոք։

Եւ այն փայտն, որ դէմ մսրին կենայ, բոլոր արայ, որ առջի ոտաւքն չքշտէ ու ծունկն ցաւ ||(41բ) տայ։ Եւ համապազ, զոր թրքէ ու գոզէ, նա դու սրբէ։ Եւ նաւսր մաղած աղբ չոր ներքև ոտացն ցանէ, որ կակուղ կենայ, և կամ աւազ, և քանի թացվի՝ նա զայն սրբէ ու ձգէ ու այլ նոր ձգէ ներքևն։

Եւ ալկէ զինք գարի զայն չակքն, զոր գիտես, որ կարէ հալել։ Եւ միջակ ալիկն, որ տաս՝ մքուք մի ընտրած գարի, որ լինի կշեռքն տասնուհինգ լիտր պաղտացի ու ինչվի տասնուերեքն, որ է ամէն լիտր հարիւր ու երեսուն դրամակշեռ։

Եւ ընտրէ զգարին սպկիկ խիստ, որ չկենայ քար ու ակռային||(42ա) ցաւ տայ։

Եւ զալիկն այսպէս դիր, որ դնես ափկից մի յերդ ու ճանկ մի գարի, ու տուր իր ջուր ի հետ ու ի հետ յամէն երկու պահ ու յամէն երեք պահ։

Երբ սկսնուս ու կամենաս աղվցնել, նա երբ ուտէ զայն յերդն ու զգարին, նա սրբէ զինք ու տար ի յաւազ կամ ի կակուղ տեղ մի այլ, որ թապլի, ու տես, որ չկենայ քար կամ ոսկոր ի տեղն, որ թապլել կամի, կամ կղիմիտր, ու իր վնաս այնէ։

Եւ երբ թապլի, նա սրբէ զինք ու ձգէ զճուլն ի վրայն և կապէ զինք ի յիր մսուրն։ ||(42բ) Եւ դիր յերդ ու գարի զնոյն որպէս ասցաք, որ ուտէ։ Եւ հեծիր ու անցմնցեցոյ պահ մի և այլ վայր դարձոյ զինք ու ի յիր մսուրն կապէ։

Եւ զոր մնայ ի յայս գարոյս, որ յիշեցաք, նա դիր, որ ուտէ, և ընդիր ի կացքն՝ առ զինք ի ձեռքդ ու անցմնցեցոյ պահ մի եւ առվաւտուցն այլ վայր, սրբէ զինք։ Եւ աւրեր մի այսպէս ծառայէ, և հետ այնոր հեծնու զինք իր տէրն, որ կալաւփցնէ ու հալծեցնէ պահ մի։

Եւ յորժամ սոթէ զփորն, նա թէ ժամն ցուրտ լինի՝ նա այլ աւելի ծածկէ ճլով ու երկոքով||(43ա) ի վրայ ժամուն ու պատրաստ կալ ի ցրտոյ ի վրայ ժմուն։ Եւ յամէն աւր հեծնու ու հալծեցնէ զինք աւրեր՝ ինչվի յայն, որ ականջըն մէն քրտնի, ու եբ բերէ, նա ծածկէ զինք։

Եւ քանի երթայ աւր քանց աւր՝ յեվելցնէ զհալածն, հայնց որ իրր գայ [քրտինքն] նա իր մէջ, ու<ր> կաթկթէ ու իջնու, ու եբ կամենայ ծածկել՝ նա չծածկէ խիստ, որ աւելի շշնչատէ, զի ի հետ ամէն շնչալոյ քրտինք պիտի գայ։

Եւ երբ կըտրի կաթկթելն քրտնացն, նա դու ձեռաւքդ սրբէ ու քամէ զքրտինքն ի յիրմէ ի փորոյն և ի յամէն մսացն ու թող||(43բ), որ ցամքի, ապա՝ որ խոց ի ձեռքդ չկենայ՝ թիշիկնետդ եղէ. ձիոյ քրտինքն սպաննէ զքեզ։

Եւ քանի ցամքի՝ դու զճլերն թէթեցոյ յիրմէ՝ ինչվի ցամքի քըրտինքն, ու եբ ցամքի՝ նա դու սրբէ ֆրպուլովն։

Եւ աղէկ է զինք կշռով որպէս սահմանած է, որ թէ մնացնէ ի յայս ալկէս, նայ դու յիմնաս ու պակսեցնես։ Եւ թէ կատարել ուտէ զայտ, նա զնոյն թող, որ ուտէ։

Ի վաղվնէ հան զինք ու սվլէ, որ ճապկտի ու թաղթփֆի, ու թէ կամենայ թապլել՝ նա թապլի։

Եւ թէ աւրն խիստ շող լինի կամ թէ հւսւսոյ (=հիւսիսոյ) հողմն կենայ ու գայ, նա հեծնու պահ մ[ի] ու անցմցե‖(44ա)ցնէ։ Եւ թէ աւրն հով լինի ու անուշ հողմն, նա այլ աւելի գահէ զինք ու քրտնցնէ։

Եւ այնպէս ծառայէ, որպէս ասցաք, և աւր քանց աւր յաւելցնէ ի հալածն, որ յաւելնայ քրտինքն, որ ճրագուն պակսէ ու փորն սոթթի։ Եւ թէ թոյլութիւն ընկնի ի գրաստն վասն հալծնացն, դու հանգոյ զինք աւր մի երկուք ի գահելոյ, ապա զանցմնեցնելն մի կտրել յիմէ ու ի յերեքշաբթին ու ի յուրբաթն պատրաստ կալ զինք ի հալծելոյ։

Քաւէլ մաւտեցել լինի գրաւուն պոմանն կամ այլ պիտի նա պակսեցնել ի գիրութենէն։

‖(44բ) Եւ այսպէս ծառայէ ու հալծեցոյ, որպէս նախ ասցաք, ինչվի գայ ճրագուն ու հատնի ու մնա պինդ միսն և անուշնա շունչն։

Եւ հետ այսոր առ ու գահէ զինք սուր աւելի, քանձ զայլ աւբերն, ու տես, թէ աւելի չէ ի շնչատտել կամ աւելի ուժ ի յինք հասնել, նա առել է զաղվղութեան հնդամն։

Եւ թէ աւելի շնչատէ ու թուլնայ պնչերն, դու հանգոյ զինք աւր մի ու ի յանցմնցելոյ մի կտրել, և զնոյն ծառայէ ու գահէ ու հալծեցոյ մէկայլն աւրն որպէս յիշեցաք, ինչվի որ տեսնուս, որ առել լինի զավղութեան հնդամն‖(45ա) և գահելոյն չակքն, որ գահես զինք յամէն աւր հինգ հարիւր կանկուն պաղտացի, որ է Հայոց երկրին կանկնովն՝ զէդ երեք հարիւր կանկուն։

Եւ պատեհ է, որ ծառութրարն ձիոյն, որ հայնց ծառայէ զինք, որ սիրէ զինք, զի ավղցնելն չէ հայնց, որ քաղցեցնէ կամ ծարվեցցնէ կամ պեղծ ծառայէ, որ ավղնայ, քանձ որ կուշտ պահէ ու աղէկ ծառայէ ու հալծելովն ավղցնէ։

Եւ գիտացաք, որ զձիոյն յեշաւն չկտրէ, քանձ հանգիստ պահելն ու չհալծեցնելն, ու զճրագուն չհանէ, քանց քրտինքն։

‖(45բ) Եւ զայս ավղութիւնս վանց այնոր ասցաք, որ զճրագուն թեթեցնէ ու զպինդ միսն պահէ։

Եւ մի արտորալ յավղցնելն, քանց ի հետ ու ի հետ ու հանապազ զոտվին տես ու մտիկ դիր, որ չիջնու ջուր կամ արոյն կամ այլ ցաւ բնակի յինք։

Եւ թէ պէտ չայնես մենակ, նայ ավիրի գրաստն, և թէ ճրագուն հալել է ու առել է զավղութեան հնդամն ու այս ցաւս պատահի՝ նա կան ի պարոնացն, որ չեն ի քննել, կու յիշվեցնեն, ու թէ բնակի այս ցաւս յինք, դու մի հալծեր զինք, ապա աղեկցոյ։ Եւ կանգնեցնելն ի ջուրն այս ցաւուս աղէկ է։ ‖(46ա) Ապա բադդոցավ կու բաղդեն պինդ զոտքն ու կու յիշվեցնեն։ Եւ մէկ ոտքն լինի կամ մէկ ձեռքն ցաւոտ՝ նա դու բադդէ զառողջ ոտքն։ Ձի յորժամ ցաւի խանկրած ոտքն, նա պիտի ի վրայ մէկայլին հաստի։ Եւ այտ վնաս է։

Եւ թէ պատահի քեզ աղէկ ձի, որ չլինի խիստ քրտնկոտ, դու յեվելցոյ զճլերն ու զծածկոցինն (=զծածկոցնին) ի վրայն, քանձ զոր ասցաք, և այլ աւելի հալծեցոյ, քանձ զայլդ, ինչվի գայ ու քրտինքն զորդի ու առնու զավղութեան հնդամն, և թէ արգիլի քրտինքն ու չյորդի ջուրն, դու առ‖(46բ) խմոր ու տրորէ ի ջուրն ու խմցոյ զինք ու տուր հնդի ունկուդայ. որ ուտէ, և քիչ մի դալար հացմամեմ (=հացհամեմ). նա յորդ<ր>ի քրտինք։

Եւ թէ ավղցնես հայնց գրաստ, որ ճարտար գայ քրտինքն, գիտացիր, որ ինք է բուն ու շնոֆոր ու աղէկ ձին, ու պատրաստ, որ չհալծեցնես զինք. այսպէս յիշեցաք։ Եւ մի աւելի ճլեր ձգես ի վրայն, որ աւելի չքրտնի ու վատուժի ու ի յուժէ կտրի։ Ու նշանքն այս է, որ երբ տեսնուս, որ մազին փայ[լ]քն ու աչիցն նուազել է, և տեսնուս զմազն որպէս ի ջուր լուացած և փակման ի վրայ կաշոյն‖(47ա)։ Երբ զայս նշաննիս տեսնուս, նա պարտ է քեզ աղէկ ծառայել ու հանգցնել, ու ալկին ու ջրին խմելոյն մտիկ դնել։

Եւ թէ հետ այս նշանոյս տեսնիս, որ թոյլ կենայ գրաստն ու մնացնէ յալկէն, նա դու գիտացիր, որ ցաւ է բնակել ի յինք։ Դու մտիկ դիր այն ցաւուն ու այն ցաւովն զինք ծառայէ։ Եւ յորժամ ողջնայ՝ տեսնուս որ կայտըռցաւ, որ կամենաս ավղցնել, նա դու պատրաստ ու պարկեշտ հալծեցոյ ու թեթև ճլով կալ՝ ինչվի առնու զավղութեան հնդամն, ու պատրաստ կալ, որ չընկ[ն]ի ի բարակցաւ, զի երբ ի յայս‖(47բ)պիսի ցաւս ընկնի գրաստն, նա դժար կարէ ողջնալ։

Եւ հնար է, որ զաւկես թեթև տղայ ի վրայ գրաստուն, զի խիստ զարմանալի է այս գործս։ Ու գիտացիր, որ աղէկ ձին ի

* Ձեռ. կրկնված է՝ որ գահես։

յաղէկ ձիոյն, եբ իր տէրն երեք լիտր աւելի լինի, նա երևնայ, և թեթև հեծմանն լաւ է, քանձ ծանդր հեծմանն։ Եւ ես զայս փորձել եմ։ Եւ հեծնաւղն պարտ է, որ գիտենայ զձիոյն բնութիւնն, և իր բնութենովն զինք յեշվեցնէ։

Եւ այն ձին, որ սարել ես յեշվեցնելոյ, դու թեթև լկամ դիր իր ու կարճ, զի յերկայն ու ծանդր լկամն սակվեցնէ զյեշաւն։

||(48ա) Եւ դու հանապազ ջանայ, որ քաշան չլինի, զի թէ քաշան լինի, նա դ[ու] ոչինչ ազգ հնարաւք չկարես ղորդել զինք. և թեթև թամբք ու թոյլ քաշիկ, որ աղէկ յեշվէ։

ԻԳ. [ՅԱՂԱԳՍ] ՀԱԼԾՆԱՑ, ՈՐ ՂՈՐԴԷ ԶԳՐԱՍՏՆ, ՈՐ ՊԵՂԾ ԲՆՈՒԹԵՆ[Ն]ԵՐ ԶԱՌՆՈՒ

Գիտացիր, որ ամենայն ազգ գրաստ չղորդի և ոչ առնու աղէկ բնութեն[ն]եր։ Առաւել այն գրաստն, որ բնութենով ուննայ զպեղծն, նա ոչ որ ազգ հեծելվոր չկարենայ զայն ղորդել ի յիր բնութենէն։

Ապա որ ուզենա, որ ձի ղորդէ, նա ընտրէ ու տեսնու աղէկ ազգ ձի ազկիկ և անարատ իր զաւդվածաւքն, զի այն գրաստն, որ իր զաւդ||(48բ)վածքն չլինի հաւասար ու կամաթք և լինի շնիքն ու գլուխն ու խամծեկն այնպէս, որպէս նախ յիշեցաք, որ առնու զլկամըն, և դու կարենաս լկամովն ի համանք կալնուս որպէս ուզես, նա կարես ղորդել զինք ու ի կամք պահել, բայց թէ չուննայ հաւասար զիր զաւդվածքն, որ պակաս լինի նա զայն, զոր աստուած չէ ղորդել զինք, նա դու ի՞նչ ցեղ կարես ղորդել։ Եւ գիտացիր, որ հարուն, որ ի բնութենէ լինի, ու ճինար ու խրշան, կայ որ ղորդի քչիկ քչիկ և կայ որ չղորդի։

Ապա այն ձին, որ աղէկ ձի լինի, ու առնուս ու հալծես, ու ջանաս||(49ա), որ յաղէկ բնութիւն ձգես զինք, և այն, որ ի ծեծելոյ կամ ի լկամին քշտելոյ և կամ յայս ցեղ իրացս հարուն լինի կամ այլ ազգ պեղծ բնութիւն առնու, նա այլ լաւ կարես ղորդել զինք, քանձ զաղէկ ազգ ձին։ Այն, որ վլախգոյն լինի ձին և ի յղորդելն պեղծ բնութիւն առնու, նա այլ լաւ կարես ղորդել։

Զնոյն ու աղէկ ազգ ձին, որ զաղէկ բնութիւն առնու, նա յայն բնութենէն բնաւ չելնէ։

Վասն այսոր պարտ է, որ հեծելվորն գիտուն լինի, որ թէ ուզէ ի վրայ բոլմբի ղորդէ, թէ ուզէ ի վրայ թրի, թէ ուզէ ի վրայ նետելոյ, թէ ուզէ ի վրայ պուհուրտելո[յ],||(49բ) որ զինչ ուզենայ, նա յայնոր վերայ ղորդէ։ Եւ ամենայն երվեստ ղորդելոյն այն է, որ կամաւք ղորդէ։ Եւ գիտացիր, որ հալծեցնելն գրաստուն իր պոմնի ունի, որ լինի գրաստն ուժով և արիական և չլինի քաղցած։

Եւ հեծնելոյն ժամն առաւաւտուն է, քանի հով կենայ և ընդիր ի կացքն, և գիշերն, զի գրաստն գիշերն հանգել է ու գիճացել է իր մարմինն։ Եւ հովուն յորժամ հալծեցնես զինք, նա բանայ զիրակքն ու հալէ զեվ|ելվածն ու հանէ յիրմէ, և այլոր գիշերն հայհանդէ՝ նա շունչն ժողով լինի գրաստուն, և հեծնողն||(50ա) այլ արի լինի։

ԻԴ. ՅԱՂԱԳՍ ՀԵԾԵԼՎՈՐԻՆ, ԹԷ ՈՐՊԷՍ ՀԵԾՆՈՒ ՈՒ ՂՈՐԴԷ ԶՁԻՆ

Յորժամ կամենաս, որ գրաստ հեծնուս ու ղորդես, դու զիր տակ թաղին կակուղ արայ, որ զոզն սպկիկ պահես, և տես աղէկ սայլևառ(՞) որ ոչ նեղ լինի և ոչ արձակ։

Եւ քանձ ամէն զլկամնին սայլևառն(՞) աղէկ է, զի եբ սայլևվռավն(՞)ղորդես, նա ամէն ազգի լկամով կարես ղորդել։

Եւ բռնէ զգրաստն ու հեծիր և եբ հեծնիս, նա պահիկ մի կանկ առ իրովն, ու մենակ մի գահել, որ չառնու սովորութիւն, որ զէդ հեծնուս՝ նա դուրս վազէ||(50բ), զի պարոնացն ու թագաւորացն ի պետք է, որ երբ հեծնի՝ նա պահ մի կանկնի, և ամենայն մարդոյ, զի երբ հեծելվորն ինք մէն լինի ու հագած լինի ու կամենայ զիր ձին հեծնուլ ու չլինի ուսել զայն, որ երբ հեծնու՝ նա պահ մի կանկ առնու՝ նա ի դուրս վազէ ու չկարենա հեծնուլ. ամ պատրաստ, որ զայս ցեղ բնութիւնդ չուսնի գրաստն, զի եբ զայս բնութիւնդ առնու, նա խիստ պեղծ խասիաթ է, ու դժար կարես կարել։

Եւ յորժամ հեծնուս ի վրայ, նա սոթթէ զհալավդ, որ հայհանդի գրաստն, և ի կամուց վերայ յուշիկ յուշիկ գահէ, ոչ||(51ա) հայնց, որ խամճնես կամ մահմիզես, ապա յուշիկ յուշիկ հալծես զինք։ Եւ յորժամ ի մարդձայնի մաւտ տանիս զինք կամ ի դուան

մտել ու ելնել, նա պատրաստ ի կամուց վերայ տար, որ շխրշի ի մարդկացն ու առնու զայն բնութիւնն ու ի վրայ այնոր կենայ։

Եւ գիտացիր, որ այն, որ պահ պահ հեծնուս զինք ի մէջ մարդկաց ու հալծես ու պահ պահ թողուս, նա չէ աղէկ, քանձ ի յամէն ժամ հալծէ զինք։ Ու բուն ու մեծ վնասն այն է, որ յորժամ զորդես, նա ի հեծման կանկնիս ու ընդ մարդ զրուցես, զի առնու զայն բնութիւնն, որ քանի մարդ տեսնի՝ նա կանգնի։

‖(51բ) Եւ յորժամ կամենաս, որ զգրաստն կանգնեցնես, դու զլոքէպքդ լարէ ու կանգնեցոյ։

Եւ յորժամ կենաս ու հալծեցնես յաղագս զորդելոյ, դու հանապազ ջանայ, որ ի վրայ ձախ ոտիցդ հաստիս, զի ձախ ոտիցն հաստելն աղէկ սովորութիւն է, որ գրաստն սովրի առաւել վասն նետելոյ։ Եւ քո ամէն ջանքն այն թող լինի, որ զերսնակն բոլոր բռնես ու ի համանք կալնուս զգրաստն, զի կշռէքն ինքն է։ Եւ գիտացիր, որ ի գնա<ն>ցքն գրաստուն բնութեն[ն]եր կայ. կայ, որ զյեշավն աղէկ ուննայ, կայ որ կալաւփցնելն, և կայ որ ի դուրս վազելն‖(52ա) ու ի պորտքալն, և կայ ի գորգզալն, և կայ որ ի քայլելն և ի մանտր գնացքն։ Ամ տես ու մտիկ դիր գրաստուն, թէ զոր գնացք աղէկ ունի և իր բնութիւնն ի յոր կու քաշէ։ Զոր յիշեցաք՝ դու ի վրայ այնոր զորդէ զինք աւրեր մի, որ ինչվի ամրնայ իր գործքն ի վրայ այնոր ու պնդի։

Եւ կապէ ի յիր լկամն պլուզ ծրարոց ակ մի աղ, որ հանապազ ծամէ ու անուշնայ։

Եւ յորժամ հաստատի ի յիր բնական գնացուցն ի վրայ, դու ի յարձակ ու ի կակուղ տեղի հալծէ զինք, ու ոլլէ զերսնակն ու բոլոր կալաւփցոյ, որ աւր քանձ‖(52բ) աւր նեղցոյ զբոլորն. նա ժամ մի ի յաջի ոլլէ զբոլոր երսնակն ու կալաւփցոյ ու ժամ մի ի ձախի, ու մի զարկներ զբերանն լկամաւվն, որ բերնվախ լինի, քանձ զամէնն ի կամուց վերա զերսնակն կալ և ապա զորդէ, որ ընդդէմ գահես ու զերսնակն առնուս, որ կանկ առնուս։ Եւ այսպէս արայ, որ կանկնեցնես մարդ ընդ դէմդ՝ հագած, ու առնու իր յերկայն վարոց նա ու մէկ դու, ու գահես, ու տֆրնտէ դու իր ու կանկ առ։ Ու զորդէ ի վրայ այտոր։

Եւ հետ աւրերոյ գահէ ի վրայն, որ ինք քեզ տֆրնտէ, ու դու զերսնակն ոլլես յայն դեհն ու ի յայնու‖(53ա) փախչիս ի յիրմէ։ Եւ զորդես ի վրայ այտ գնացուցդ այլ, և ապա դարձիր. և գահե-

ցէք մէկ ի մէկ և անցիք։ Եւ այսպէս զորդէ, քանի խսկի կարես վասն պատերազմի զնետելն ու զշալիշելն։ [Ե]ւ երբ ի վրայ այտոր զորդես զինք, դու աւուրք մի ի վրայ այտոր տար, որ հաստատի։

Յետ այնոր գնայ յարձակ տեղի ու տուր այնել ի յինք խանդըկնի՝ մէկ ի մէկէ հեռու զէդ քսան կանգուն։ Եւ զորդէ, որ գայ ու վազէ ի վրայ այն խանդկնոյն։ Եւ աւուրք մի ի վրայ այտոր պահէ զինք, զի ամէն մարդ ի յիր գրաստնի կարիք է ի յայտ տեղտ։

Եւ կենայ ի գրաստն շատ յայտեր (=յայպեր), որպէս զխըրշիլն և զքթահր‖(53բ)ելն և ծառ կանգնելն և փախչելն։ Զի այս յա[յ]պերս ի յոտվին է, կարէ լինել, որ զորդես. ջանք դիր ամէնին։ Ապա խրչելն պատեհ է ու ի հետ ու ի հետ վախցնես փայտովն և ոչ խիստ ծեծես, թէ չի յեվելցնես ի յայպն։ Եւ պարտ է քեզ սովրեցնելն ընդ նեղ զուկակնի ու փողոցնի ի յանցմնցեցելն ու ի մէջ մարդկաց ու ընդ դռան մտել ու ելնել, զի հանապազ այտ ի պետք է գրաստուն։

ԻԵ. ՅԱՂԱԳՍ ԱՐՄՈՒՀԻ ԳՐԱՍՏՆՈՅ

Յորժամ կամենաս հեծնուլ արմուհի գրաստ, դու խափ տուր ու զլկամն ի գլուխն դիր։ Զնոյն ու զթամքն ողքնաւք ու ի կամկ‖(54ա)եկ կամկեկ ի վրայն դիր՝ ոչ սրտելնելով կամ հանց որ քշտես։

Եւ յորժամ հեծնուս զլկամն մի՛ քաշել, ապա ի յինք թող ու վարէ սերտ՝ քանի խսկի կարես, ու ոտաւքդ իր մի՛ քշտեր, ապա վարոցով քշտէ իր ու զորդէ. ու զվարելն նախ յիշել ենք, թէ որպէս գահես։ Ու զքո ամէն ջանքն դիր, որ շատ գահես ու յերկար ու համնցնես։ Եւ յորժամ ուզենաս, որ արգելցնես զքուռակն, նա մի՛ բռնես զերսնակն ու սերտ ի քեզ քաշես, ապա բռնէ ի կամկեկ կամկեկ պաղցաւքն ու արգելցոյ, զի թէ պինդ բռնես, նա պիտի որ ափրես զքուռակն ու բերնվախ լինի։

‖(54բ) Եւ կրկնակի կու պնդեմ, որ պինդ չկալնուս զլկամն ու քաշես, թէ չի կշիկ աւիրել ես զքուռակն։ Եւ թէ այլ ցեղ այնես, քանց զոր ասցել ենք, ու պինդ բռնես զլկամն, նա ոչ ի գիտնականէն և ոչ ի յաղէկ հեծելվորութենէ, զի պիտի որ յեվելցնես ի յիր արմուհութիւնն

Եւ երբ այլ մարդ կենայ ու հեծնու, նա բնաւ այլ մարդ չկարենայ արգելել, զի պիտի որ քաշան լինի։ Ամ զայս բարակ տեսս ի միտ կալ, զի ես այտով շատ մարդ ամաւթերես եմ այրել առջև խալիֆայնոյ ու պարոնաց։ Առաւել այն գրաստն, որ բնութեամբ զլկամն ատէ, դու քանի խսկի կարես, ողջնաւք զինք մղէ։

||(55ա) Եւ մտոյ ի մէջ մարդկաց և ի շուկայնոյ և ի փողոցնին և կանկնէ հետէն ու զրուցէ ընդ մարդիկ։

Եւ այլ ի յեռաջն գրել ենք և ապիգովել ու խոտել, որ զխաս ձին չկանկնեցնեն ու զրուցեն ընդ մարդ, զի պիտի աւիրի։ Եւ այս ազգ ձիս, որ վլախգոյն ձի է, նա աղէկ է, զի ընդելնայ մարդն և ընդ կանկնելն ՚վ ընդ գնալն ու գալն, և կոտրի սիրտն և իջնու։ Եւ նշանքն այս է, որ սիրտն իջել է ու կու առնու զլկամն, որ յորժամ առնուս զլկամն ու արգելես, նա չը ծաւճտայ։

Եւ առաջի ուսումն, որ ուսցնես՝ նա զկալափցնելն ուսոյ և շատ աւուրք ի վրայ այնոր կալ զինք և զլկամն թոյլ կալ ի յինք ||(55բ), որ բնական առնու առ ինք զկալափելն և մոռնայ զլկամին չառնուլն։ Եւ հանապազ զինք ի խալապայի և ի ժողով ի շատ մարդկաց մէջ տար, որ ընդելնայ, որ եբ հանդիպի ի պատերազմն ու աղլուտ լինի, նա չառնու զիր առջի բնութիւնն ու վախէ կամ խրչի ու ի սիրտ ելնէ ու զելն ուզենայ։

Եւ այն քուռակն, որ բնութենով ունենայ զխամրութիւն, նա չկայ ճարակ, որ կարենայ մարդ զինք զորդել կամ հանել ի յիր բնութենէն։ Եւ գիտացիր, որ ով ի յիր երվեստն չփորձէ ու այնէ քն[ն]ութիւն ի յամէն բարակ տեսողութիւնն, նա չկարէ ի կատարումն գալ։

||(56ա) Եւ պարտ է, որ հանապազ մտիկ դնես գրաստուն իր զաւդվծոցն ու ի կերպարանացն ու իր ստեղծուածոցն ու այնես քննողութիւն ի յիր ազգն, զի ոչ կարենայ տեսանելովն մէն ճանչենալ զգրաստն։

Ապա քո ամէն զգայրանաւքդ տես ու մտիկ արա գրաստուն։ Եւ ապա իմանաս զիր գործն, թէ որպէս է, և ի վրայ այն գործոյն զորդէ զայն ձին։

Եւ գիտացիր, որ զգրաստուն զգիտութիւնն և զգործն ոք չկարէ իր ի կատարումն հասնել, որ զիր ամէն բնութեն[ն]երն և զայլպերն և զցաւերն, որ փոփոխի ի յիր մարմինն, նա կարէ կատարել գիտենալ այլ զոր կարէ ջանալ ի բարագ||(56բ) մտիկ դնել մտաւք

և փորձելով. նա որ շատ ջանայ՝ նա շատ գիտենայ, զի մեր պապքն հայնց են այրել ու ջանցել ու այսպիսի են գտել ու այսոր հասել։

Եւ գիտացիր, որ սկիզբն հեծնելուն հաստատելն է և մեկնելն անդմացն և յերկայնցնելն և անդմաւքն բռնես ամուր, զի այն, որ հեծնու զգրաստն, նա չէ պատեհ, որ ժաժի ի դեհաց դեհ ու թոյլ կենայ ի վրայ ձիոյն առանց պատճռնաց, որ ի կարիք է, զի աղէկ հեծնուլն հայնց կարէ զորդել զիր ձին, որ թէ խաւսի ընդ ձին, ու հնայր կայր, որ խաւսէր, նա պացխուն այնէր իր։ Կամ ակ, որ թէ իր ժա||(57ա)ժելովն, որ ժաժէ զձեռքն ու կամ զանդամն ու կամ զաւդված մի այլ, նա սովորութիւն առնու իր բնական, որ ի յորժամ ժաժէ զայն զաւդվածն, նա գիտենայ ու զայն բռնէ ու զգործն այնէ. ի յոր գործոյ վերայ զորդես զինք, նա դու աղէկ զինք ի յայն պահէ, որ հաստատէ առ ինք, ու ապայ ի յայլ գործոյ վերայ զորդէ զինք։ Զի թէ ճարտար ի գործէ ի գործ դնես զինք, նա զոչ որ չառնու հաստատուն, որ ի վրայ այնոր երթայ՝ գրաստն աւիրի։

Եւ գրաստ, զոր կամենաս զորդել, նա դուն հայնց այնես, որ <յ> ի սկզբանէ ի վեր ձգես զինք ի յաղէկ ||(57բ) բնութեն[ն]երոյ վերայ ու զորդես, ու մի՛ թողուլ, որ այլ մարդ հեծնու ու աւիրէ զոր դու զորդել ես։

Եւ մի՛ թողուր, որ հայնց լինի, որ երբ կենաս ի վրայ ձիոյն, նա ուզենաս, որ զդրաւշակդ բռնես և կամ զորդես, և թէ վարոց ի ձեռքդ առնուս, նա խրչի. ապա հայնց արայ, որ ամէն գործով մղես զձին։

Եւ գոված է, որ ի հայհանդ տեղի զգրաստն զորդեն, որ առնու բնութիւն աղէկ, ու ապա ի մարդձայն մտցնեն։

Եւ յորժամ նեղէ գրաստն զքեզ, որ չկարենաս զինք ի յիր պեղծ կամուցն հանել, նա դու հետ պատի և կամ հետ լերին տակուց անցմնցեցոյ զինք։

||(58ա) Եւ գիտուն հեծելվորքն գովել են, որ անդամաւքն բռնէ ու զլուքէպքն լարէ, որպէս թէ ի կանկուն կայ ի վրայ ձիոյն։

Եւ գիտացի՛ր, որ սկիզբն հեծնէլոյն կատարումն լուքէպքն է, որ զանդմունքն ամուր ու անշարժ պահէ ի թամքն, ու ի ծնկացն ի վայր հեծնելնաւքն այնէ զիր շարժվածքն ի հնդամն ու ի տարպն և զմահմեպացն հասցնելն ի ձին ի շակք և ի կարիքն, մի զէդ ի

պատ լուր սկսուս ու ծեծես, թէ չի գիտացիր, որ բուն ու աղէկ ձին, որ յաշխարհս կայ ի մէկ նետընկէց տեղին հայնց դադրէ, որ լուր կանկնի, թէ զիր ամէն երս||(58բ)նակն ուննայ և զանպատեհ խոամճին և կամ զմահմեզքն, ապա ձիոյն և մարդոյն գաւզանն երսնակն է և զոռն անխախտ ի թամբքն ի անժած ի միջացն ի վայր և ի միջացդ ի վեր, երբ սնկիս՝ ցածցիր, ու երբ ուզես յանկարիք՝ նա աղվոր ի յոտն և զմէկ ըոքէպքտ զամէն ի լար, ու երբ դադրէ՝ փոխէ ի մէկայլն, որ յանկասկած չխրչի ձին կամ քթահրի, և զքեզ աղփուրթ գտնու ի թամբքն և ձգէ զքեզ կամ աղփրթէ, թե չիկ լաւ էր քեզ թէ մայրն զքեզ չէր բերել։

Եւ տե՛ս որդեակ և գիտացի՛ր, զի ոմանք, որ նստին ի ձին և են, որ հեծնին, և այսոք ուրիշ||(59ա) են ի միմեանց նստելն և հեծնուլն, զի վաճռկըներն և շինականեր և աբեղայք նստին ի ձին։ Եւ հայնց, որ երբ ի դուրք վազէ, նա զէդ նստած զգետինն դիպի։ Եւ հեծնաւղն, որ հեծնի, նա հայնց ամուր կենայ, որ քաւել ձին ընկնի, որ ինք զըլըմփի։

Եւ այլ ասեն լաւ ձիաւորքն ի յիրենց խրատն, թէ աղվոր բաժնելն ի ձիոյն աժէ զաղվոր ի վրայ կենալն, այս ինքն է՝ երբ ձին անկածնի, նա դուն ի յետ վազէ կամ ի յետ ընկիր ի ձիոյն առջուցն, որ չգայ ի վրայդ ու կոտրտէ զքեզ։ Եւ այս է, որ անմոռաց պահես ի մտացդ զամէն, քանզի ի հեծման կենաս կամ իրք վարես զանկածնելն և զերսնակ ի լար։

||(59բ) Եւ այլոր եբ յասպար ու ի յռումբ ընթանաս, նա դու ղորդ գիտացիր ամ պահէ զքեզ, չբանայ և ի քո մարմինդ քշտէ և վնասէ, մանաւանդ յերեսդ, և դուն սուր աչաւք և անըմբերելի մտաւք զքո չարկամն աչէ և որսայ, որ բանաս զինք և զինք աւերես կամ պրկես։ Եւ եբ քշտես ի պինդ զռումբն, և մի՛ իջցներ զարմունկդ, որ կոտրի ըռումբըն, ապա ղորդ նշանէ և զարկիր՝ ի տեղի քո աղվոր ծածկելովդ։ Եւ զինք բանալովն հայնց զարկք, որ յիմնա, թէ ի մարդվէ ելաւ այն զարկքն։ [Ե]ւ զամէն զասպարն բազկովտ առջևտ ի քենէ ի զատ պահէ և մի՛ ցածցներ զգլուխդ ներքև աս||(60ա)պրին, ապա զասպարն վերոյ և ծածկէ զերեսդ, որ թէ ի վրայ ասպրին ուժով զարկք դիպի, նա չգտնու զասպարն ի վրայ մարմնոյդ, որ զարկքն անձնտ առնու։ Ապա ի յետ, որ ինչվի զբազուկդ տահրկէ զարկքն ու ի քեզ հաստեցնես, նա զարկքն ու ըռումբն չարկմուն թափահրել լինի։ Ու մի՛ գիտենար

փոքր զարկք զձիոյն կամ զըռըմբին զարկքն, ապա մեծ տես և լաւ պատրաստէ յիրմէ՝ զէդ ի բաքնքարէ, և լաւ ծածկէ զքեզ քո ասպրովն և լաւ զարկ, զի թէ չծած[կ]վիս՝ նա դուն զայն ամէն տախտակն ինչ կու շալկես շընովըդ և կու գումարեցնես զքեզ։ Ո՛վ մարդ, լաւ է քեզ բալէ||(60բ) անասպար լինել, որ շալկելոյն հալածն մնա քեզ, և միշտ զըռքէպքտ և զանդմունքտ և զոռդ ի թամբքն հագոյ, որ անխախտ մնայ, [զ]էդ այլ ոմն ձիաւոր, որ էր որ դրամ մի մէկ ոտինն ներքև դնէր և դրամ մի մէկայլին ի հեծնելին, և խաղայր, և շատ մի ըռըմբնի կոտըրտէր և պուհուրտէր, ու եբ տեսնուին նա հաւն կայր ի տեղին՝ դրամն անխախտ ներքև ոտինն։

[Բ]այց ի՞նչ ասեմ, եբ ձիաւորն լինի ուժով ու հասուկ ու սրտով ու ուննայ աղէկ ձի ըստ իր կամացն, նա կատարեալ է։ Պատրաստ կեցի՛ր յիրմէ ու յետ ի յիր առջուցն՝ թէ ինձ լսես, զի բերդ ամուր է և զարկնաւ||(61ա)ղն ըմբերելի։

Եւ արդ պատեհ է, որ գիտենայք, որ հեծելվորն զիր ձին քանձ զիր անձն լաւ պահէ և ըստ իր անձինն սազէ և ղորդէ և չթողու, որ հեծնի զինք անգէտ ծուլուկ կամ տղայ և սազթըփէ ու աւիրէ, և ոչ զիր լկամն փոխփոխէ, [ք]անձ ի մէկ լկամի վերա զինչ ղորդէ ու մէկ ըռքիպուց ի տաճկինակն ու ի մահ[մ]էզն, ի դոյրն և ի դաշտն և ի լեռն և ի մատներն, ի հետ որսոյ, ի փուշն, և ի խարձերն, ի գետերն և ի խանդկնին և յամէն տեղ ըստ քո կամաց, զի թէ ձիաւոր ես, նա քո ձիովն ես և աւդնականն տէր աստուած է, որ պահէ զքեզ։

ԻԶ. ՑԱՂԱԳՍ ՀԱՐՈՒՆ ԳՐԱՍՏՈՒ

Գիտ||(61բ)ացիք, որ կայ գրաստ, որ ի հեծնուլն և կամ ի քաշկելն սոսկայ, և անգէտ հեծնաւղն հայնց գիտէնայ, թէ այն հարուն է։ Եւ այնպէս չէ հարուն։ Առաւել խորասնա գրաստնին ուննայ զայս բնութիւնս ընդ առաւել սրտութենէն և դառն բնութենէն։ Եւ առաւել աւիրի գրաստն, որ զայտ բնութիւնդ ուննայ, եբ մերկիկ հեծնուն և երբ առաւել պինդ քաշկեն։ Եւ այն գրաստն, որ ի մերկիկ հեծնելոյն առնու զայս սովորութիւնս, նա ձգեն ի վրայն ճուլ և այնով հեծնուն։ Նա թողու զայն բնութիւնն։ Եւ այն ձին, որ ի թամբուցն սոսկայ, նա դու երբ հեծնուս՝ պահ մի կանկ առ ի

վրայ||(62ա). նա թողու զայն բնութիւնն։ Եւ թէ հայնց է, որ պզմի ու չերթայ, ու կանկնեցոյ մարդիկ ընդդէմն և ասա, որ այն մարդիքն երթան. նա ինքն այլ ըղղվի ու երթայ։ Եւ այս աղէկ ու գոված հնարք է։

Եւ այն հարունն, որ ի բնութենէ ուննայ զհարունն, նա չկարես զինք իսկի յայնոր հանել և նշանն այն է, որ ի բնութենէ լինի հարուն, որ եբ փայտովն վախցնես որ երթայ, նա զոտվին ի գետինն քշտէ ու ոռ ի յեց երթայ և թէ պատ կենայ ի հաւն՝ երթայ դիպի. և այդ է ղորդ հարուն։ [Ե]ւ այտոր հնար չկայ, որ կարես ղորդել։

Եւ հարունին ազգեր են.

Կայ, որ եբ հեծնու յախոռէն ու մենակ||(62բ) դառնայ այլ վայր, ի յախոռն իջնու, նա սովրի զայն սովորութիւնն ու ի յախոռոյն չելնէ։

Եւ կայ, որ հանէ յախոռոյն ու հեծնու ու չկարենայ զատել յախոռոյն ու արգիլի ու առնու զայն իր բնութիւն։

[Ե]ւ կայ, որ յախոռն սովրել լինի ի գրաստ ու սիրենայ զընկերն, և յորժամ հանեն յախոռոյն, նա չերթա ու զընկերն ուզենայ. ու զայն իր բնութիւն առնու։

Եւ կայ, որ հեծնուն ու երթան ի պարոնացն ի դարպասն ու ի խեչ շատ գրաստնոյ իջնու, նա եբ կամենայ որ հեծնու՝ նա ճորտն քաշէ որ հեծնու, նա չուզենայ, որ ի գրաստնոյն ի յետ ելնէ ու բռնէ զայն իր սովորութիւնն։

||(63ա) Եւ կայ, որ ի տղայոց հեծնելոյն ու ի ծեծելոյն ու ընդ վայր ընդ վայր գահելոյն լինի հարուն։

Եւ այս ազգերս կարէ լինալ, որ հանդարտութենով խալսի և ելնէ յայն բնութենէն։

[Ե]ւ տքնութիւն, որ տքնեցնես զգրաստ ի յայն տեղն, որ հարուն այնէ, նա այսպէս լինի, որ կանգնեցնես զինքն ի տեղն թամբած ու լկամած ու մէկն հեծնու ու մէկն իջնու*։ Եւ շատ ենք այս կերպովս գրաստըն ղորդել և հանել ի հարու[ն]թենէ. այս ծառութեամբս, զոր յիշեցաք և զոր կու ղորդէի, ես զշատն գիշերն ի ժուռ կու տայի ածել, ինչվի կու թողոյր զայն բնութիւնն։ ||(63բ) Եւ կայ, որ ծեծեն վարոցնով և կանչեն ի վրայն ու վախցնեն, նա կու ղորդի։

---

* Ձեռ. կրկնված է՝ մէկն հեծնու ու մէկն իջնու։

Եւ շատն, որ ի հեծնելոյն կու լինի պեղծ հարուն, որ բնաւ չղորդի, որպէս նախ յիշեցաք, և զայն, որ ասցել են, որ եփ հարուն այնէ ու ի յայն տեղն խարեն զինք, նա ելնէ ի յայն տեղացն, նա սուտ են, զի տեսել եմ թագաւորք, որ այն ձին, որ հեծել է, նա հարուն է այրել, նա ի վայր է իջեալ ու այրել է տվել կրակով, նա բնաւ չէ ակտել։ Ու տեսել եմ, որ երբ հարուն է այրել, նա ի վայր է իջել ու բոլմբովն զարկել ի վրայ անդմանցն, որ անցել է դեհաց դեհ. նա իրք չէ աժեցել։

ԻԷ. ՅԱՂԱԳՍ ԳՈՐԳԶԱՆ ԵՒ ՔԱՅԼԱՆ Գ||(64ա)ՐԱՍՏՈՒՆ

Կան ոմանք մի, որ ի վրայ գորգզան գրաստուն ի յետ տայ թամբել, որ շատն ի վրայ գաւկին լինի ծանդր, ու հեծնեն ու ասեն, թէ աղէկ է։ Եւ այն պեղծ սովորութիւն է, և ես զայն պատեհ չեմ ի տեսնուլ, զի յորժամ իսկի քթահրի՝ նա տէրն չդադրի ի վրայ թամբուցն, և եբ խումրնա գրաստն, նա այլ առաւել գաղնայ։ Եւ զայս տակշուրնին կու այնեն, զի յորժամ ծանդրանայ ի վրայ գաւկին, նա պիտի որ վրայ յերչի ոտացն հաստի ու ժմուն ծայր մի լաւ երթայ։ Եւ այտ առ իս ոչինչ գործ չէ, քանձ ղորդ հեծնուլն, որպէս նախ յիշեցաք, զի յորժամ չլինի||(64բ) հեծնաւղն հաստատել ի վրայ իր գրաստուն ի ներքեն յղորդ հեծնուլն, կամ ձիաւորն ի յիր անձն հարկ ձգէ վանց ձիոյն, և կամ զձին ի հարկ դնէ վանց իր, նա չէ ղորդ հեծելվորութիւն։ Զի եփ հեծնաւղն զէդ աղէկ հեծնաւղ հեծնու ու զձին ի յիր ղորդ գնացուցն ի վրայ հեծնու, նա կատարել երևնայ հեծնաւղին գործքն և գրաստուն, և հեծնաւղն անհոգք կենայ գրաստուն, սիրտն ամուր լինի և զիր գործքն, զոր իսկի կամենայ այնել, նա անվախ այնէ։ Զի եփ ու[ն]նայ զայն կարիքն, թէ զձիս ծուռ եմ հեծել կամ ի վրայ գաւկին, կամ ի վրայ շլնեացն, կամ ի յայլ ազգ հարկ դնել զձին, ||(65ա) նա երկու տիրանց չկարէ ծառայել. կամ կամենայ ի յիր անձինն ի հոգքն ղէմ պատահման, թէ ի պատերազմ մտէ, որ յաղագս գահելոյ թրի կամ բոլմբի ընդդէմ թշնամոյն, կամ զգրաստն ուննայ պատրաստ, որ ի գրաստեն չգայ իր պատահումն, զի որպէս սովորեցնես զգրաստն, նա պիտի որ ի յայն սովորութիւնն կենայ՝ զէդ որ հեծնու զինք։ Եւ թէ անդէտ հեծնաւղ հեծնու զձին մինակ յիմացութիւն լինի առ գրաստն, որ գիտենայ զմարդոյն թուլութիւնն ու անգի-

տութիւն, առաւել թէ սովորած լինի աղէկ հեծնաւղի, և հեծնու անգէտ հեծնաւղ։ Եւ երբ սկսուս ի հեծնուլ ||(65բ) զգրաստն և հալծել, դու յամէն աւր հեծիր և մի նեղել ի յիր վերայ աւելի, որ չկտրես զիր արիութիւնն, զի թէ կտրէ զիր արիութիւնն՝ նա չլինի աղէկ ու չգայ ի յասլ ու չկենայ հաստատուն ներքևն։

Եւ յորժամ զորդես զգրաստն, դուն հայնց հեծիր, որ հաստատես զիր գնացքն։ Եւ եբ աղէկ հաստատէ, դու աւր մի հեծիր ու թող զինք երեք աւր, և ապա հեծնուս և մի՛ աւելի հալծես, զի աւելի հալծելն աւիրէ զգրաստն ու թուլցնէ։

[Ե]ւ թէ կամենաս, որ զգրաստն գէր պահես, դու աւր մի հեծիր ու աւր մի մի՛ հեծնուր. և զայս իր սկիզբն այնես։ Եւ կամ հեծնուս երկու աւր||(66ա) ու թողուս երեք աւր, նա յաելնայ ճրագուն։ Եւ թէ գիրնա աւելի, որ ելնէ ի հնգամէ, դու հեծիր ու յաելցոյ ի հալծելն, որ աւրղնայ ու նստի ճրագուն, զի միսն ու ճրագուն յորժամ յաելնայ, նա գահլցնէ ու աւիրէ զգրաստն։

Եւ կան ի գրաստնին, որ լինի քայլան. և ասէ իր յարապն հմլայճ։ Եւ կայ, որ գորգզայ ու գշլնիքն գլխովն ի հետ ի դեհաց դեհ ձգէ. և ասէ իր յարապն մղայնեխ։

[Ե]ւ կան քուռկնի և կան վլախնի և քայլանք և աղէկ ազգ ձիանք, նա պարտ է քեզ զամէն ազգ գրաստու բնութիւն ուրիշ ուրիշ գիտենալ։ Եւ յոր ազգէ ուզես, նա մտիկ դիր իր զաւղվածացն ||(66բ) և իր կերպերոյն և իր կտորին, թէ ի յինչ չակք գրաստ է. և յայնկից կարես ճանչել։ Զի տեսել եմ ոմանք մի, որ ձի այն է որ ասէն, որ լինի ամուր ու դիմակաց և ունենայ աղէկ գնացք։ Եւ ասեն, թէ հեծնելոյ ձի այն է, որ լինի չորս ոտաւքն հաստատուն և գաւակնի լի և փորն արձակ և աղէկ բնութիւնն, որ ճարտար զորդես ի յաղէկ գնացուց վերայ։ Եւ կենայ ի ձիանն, որ լինի սրտով ու աղէկ կերպ ու սուր և չորս ոտքն յերկայն լինի և բարձր։ [Ե]ւ այս նշաննիս երբ խառնի յիրար, նա աղէկ ձի է։ Եւ քանի պակսի ի յայս նշաննոյս, նա պակաս լինի յաղէկութենէն, և քո ամէն ||(67ա) տեսնոյն, որ մտիկ դնես ի ձին, նա յայն թող լինի, որ ի յիր կտորն հայիս և ի յայլ նշաննին, զոր ի յայս գիրքս յիշեցաք։

[Ե]ւ յորժամ ուզես, որ ունենաս քայլան ձի, դու զքուռակն փնդռես յաղէկ ազգէ։

Եւ գիտացիք, որ ժաժցնելն ի հետ աղէկ գնացուցն, և որ լինի ուժով բազկունքն ու կողքն, նա աղէկ է և չլինի քթահրկոտ։

Եւ այս կերպ ձիս չլինի դիմակաց քայլան, որ չժաժցնէ զվիզն, զի այն, որ զվիզն կու ժաժցնէ, նա ի գորգզալոյ ազգէ է։

[Ե]ւ այն քայլայն ձին, որ քաշէ զբարձր դեհն ու ժաժցնէ զներքի դեհն ի յաջ դեհ ու ի ձախ, նա եփ փոքր լինի՝ նա չլինի դիմացկոտ։ ||(67բ) Եւ թէ ի բնութենէն չլինի քայլան, նա պիտի գորգզայ. ու բուն ու հեշտն գորգզալն է գրաստուն, զի ի հանգիստ կենայ գրաստն և պատեհ է ի վրայ աղէկ տես մարդոյն, որ մտիկ դնէ աղէկ տեսոյն և շնչին համբերութեանն գրաստուն, զի շատ գնալն և յեշվելն քայլան ձիոյն չէ՝ թեվզեն մեկնելովն լինի, ապա պարտ է, որ զոտվին ի բաց ձգէ ու հալծի, զի թէ չայնէ այսպէս՝ նա խալտենայ ի գնացքն։

[Ե]ւ գիտացիք, որ աղէկն ի քայլան ձիոյն, երբ աւաղ ու վատուժ լինի, նա չերևնայ իր գնացքն, և թե պեղծ լինի քայլանն, այլ աղէկ գնացք ունենայ||(68ա), զի իր ուժովն ու մարմնովն ջանա ի գնալն։ Եւ աղէկ ձին քայլան, եբ վատուժ լինի, նա ջանա սրտովն, ապա ի գնացքն խալտենայ։

[Ե]ւ այս տեղեստնոյս մտիկ դիր, որ զգրաստն ի յաղէկն ու ի պեղծն ճանչենաս։ Ու եբ ձին ընդ քայլան ընդ գորգզանի մէջ լինի, որպէս թէ քուռակն ի յայս երկու ազգէս լինի ծնել, դու մտիկ դիր իր գնացուցն՝ թէ զոր ազգ բնութիւն է առել, և յայնոր վերա զորդէ զինք, զոր իր բնութիւնն կու քաշէ։ Զի թէ ջանաս, որ ի յայն բնութենէն հանես և այլ ազգ գնացք ուսցնես զինք, դուն զայն չկարես ուսցնել, և զոր գիտենայ՝ զայն այլ||(68բ) մոռնայ. որպէս թէ զաղէկ ազգ ձին բեռին սովրեցնես, նա աւիրես զինքն ու չլինի բեռին, զի կոտրի սիրտն ու թուլնայ զաւղվածքն ու ելնէ յաղէկ ձիութենէ։ Եւ զայն, որ բեռին ձի է ու ի բեռն դնես, նա աւր քան զաւր աղէկնայ ու ամրնայ զաւղվածքն, զի ամէն գրաստ ի յիր ստեղծուածոցն ի վրայ ու ի յիր բնութեանն, զոր տված է՝ պիտի որ յայնոր վերայ երթայ, զի յորժամ գիտենաս զիր շինուածքն զներքսէ և զդրացէ և զիր երակքն և զիր զաւղվածքն գիտենաս, որ ի վրայ այն շինուածոցն, որ ինք է ստեղծած, չկարենաս զայն բնութիւնն ի յիր||(69ա)մէ զատել, զի նախ յիշեցաք ի գիրքս զաւղվածացն կերպերն թէ որպէս է, զի այն զաւղվածովքն ունենայ զիր գնացքն։

Եւ այն ազգ գրաստն, որ ասացաք, թէ մղայնեխ ասեն իր, նա նշանքն այն է, որ ի գնացքն զէդ գորգզան լինի ու տուբէթն, ու ականջվին ու շլնին ի հետ շարժի ու զերկու առջի ոտքն կամաթք ձգէ։

Եւ կան ի յղորդ գորգզանքն, որ դիւրաւ գորգզայ, թվենայ թէ զէդ եւ և էջ կու երթայ։

[Ե]ւ կայ ի պարոնայքն, որ այլ բարձրագոյն կայնուն զայս, քան զքայլանքն։

Եւ պեղծ գորգզան այն է, որ վերնայ վատուժ ու դիպի ուժով ընդ գետինն, և հետ||(69բ) այսոր անգէտ երթայ։

Եւ յորժամ ուզենաս, որ զվլախ ձին գնացք ուսցնես, որ ճարտար ու սուր երթայ ու կակղնայ շլնիքն ու զաւդվածքն, դու եւ ի դոյր տեղի մի ու զինք բոլոր ի շուրջ ած, որ լինի արձկութիւնն որպէս տասն կանկուն պաղտատցի ու հանապազ զգլուխն բարձր կալ, որ ի վրայ ձեռվոյն աւելի լինի հալածն։ [Ե]ւ աւր քան զաւր փոքրցո զբոլորն, որ մնայ զէդ երկու կանգուն կամ երեք՝ մէջն։ Եւ հետ այնոր դարձոյ ի մէկ այլ դեհին վերա ու սկսիր և աւր քանձ զաւր բարձկցոյ, որ զյետի ոտվոյն գնացքն առնու. և այսով կարես ղորդել, ||(70ա) թէ ուննայ բնութիւն գրաստն։

ԻԸ. ՅԱՂԱԳՍ ԱԼԿԵԼՈՅ ԳԱՐՈՅ ԵՒ ԱՌՎՈՅՏԻ ԵՒ ՖԱՌԱՅԻ, ՈՐ ՏԱՆ ԳՐԱՍՏՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՈՒՏԵԼՈՅՆ ԸՆՉԻՑ

Յորժամ տաս զֆառայն կամ զառվոյտն, դու թապլեցոյ զձին յամէն պահու։ Ու տեղն, որ ֆառայ դնես, նա թող լինի արձակ, զի ղորդ ֆառային ու առվոյտին տեղն այն է, որ դնեն, որ լինի ի դաշտ տեղ, և եբ կամենայն որ գարի տալ, նա զշակքն գարոյն, որպէս գրած է ի գիրքն, որ մքուք մի լինի, ու քշիկ մի աղ իր հետ, ու թող, ու (=որ) գարին աղէկ սպկիկ լինի ու ընտրած ի քարէ ու չգայ ի յիրմէ մգլահոտ, և սպրկիկ խթ, որ է առվոյտին հունդն։||(70բ) Եւ ոմանք մի ասցել են չոր առվոյտն է քսան լիտր ինչվի քսանուհինգ լիտրն. և թէ ուտէ՝ այլ դու տուր, զի խութն չահոկէ, և այլ միջակ գրաստուն՝ մքուք մի, ու խթ խոտ՝ լիտր տասն, ու յերդ՝ լիտր քսան, և հեծնելոյ ջորեստնոյն՝ նոյնպէս, և բեռին ջորեստնոյն՝ մքուք մի գարի, և խոտ՝ լիտր հինգ, և յերդ՝ լիտր քսան, և իշվոյն՝ գարի՝ կէս մքուք, և խոտ՝ լիտր հինգ, և յերդ՝ լիտր տասնուհինգ։

Եւ զայս ամէն գրաստու մի՛ այնես, ապա ի վրայ գրաստուն հայեաց. թէ կարէ հալել՝ նա դու տուր, ու թէ չկարէ հալել՝ նա ի վրայ այնոր տուր։ Եւ թէ լինի մեծ կտոր գրաստ, դու ինչվի||(71ա) մքուք ու կէսն տուր։ Եւ ղորդ խառնելն, որ խառնէ զյերդն ու զգարին ու զխոտն, նա լինի կէս խոտ ու կէսն յերդ ու անարատ գարի, ու եբ դա դրել լինի, նա ո՛չ գարի մի տաս և ո՛չ ջուր, զի ֆնտու այնէ։

[Ե]ւ գիտացիք, որ խիստ է գոված, որ խոտ մէն տան գրաստուն։ Ու ընդ գէր գրաստուն ալկելն շատ տեսութիւն կայ, զի աւաղ գրաստն ուտէ շատ և չհալէ, նա վասն այսոր պարտ է կշռել ու տալ, և յիմնայ, որ զոր կարէ հալել, նա զայն տայ, զի խիստ աւաղն կարէ լիննալ, որ ուտէ քառասուն լիտր պաղտատցի։ Եւ քշիկն, որ տան ի գարոյն, տասն լիտր է, ու խթ՝ ութ լիտր է, և թէ այլ՝ քշիկ||(71բ) տաս։ Եփ կապած լինի գրաստն՝ նա ահոկէ, զարդել որ ի ճամբահն չէ պեղծ։

Եւ հեծնելոյ ջորեստանն, թէ յեվելցնես ի յիր գարին, նա չէ պիղծ։

Եւ զամէն գրաստ, որ ի խթէ կտրես, նա խիստ պիղծ է, և քանի կանգնած լինի ու յեվելցնես ի խթն քանի գարին, նա աղէկ է։ Ու հանապազ պատրաստ կալ ի գարոյ և ի ջրէ, որ ֆնտու չլինի։

[Ե]ւ յորժամ իջնուս ի գրաստվէն ու տեսնուս, ու(=որ) կենայ ու փաշխտի, նա դու ի շուրջած մի՛ կանգնեցներ։

Եւ եբ զֆառայն կամենաս տալ, նա ի մատղաշն տուր, ապա լինի ժամն հով՝ դու համբերցոյ։ Եւ յորժամ որ տաս՝ նա հայնց ջանայ, որ զմատղաշն տաս ի յիրմէ, ||(72ա) զի զֆառայն վանց այնոր տան, որ զգրաստն սրբէ, և յորժամ դահնայ, նա զէդ յերդ է, և զոր իսկի կարես՝ դու տուր ի յիրմէ։

Եւ կան ոմանք մի, որ շաբաթ մի տան զֆառայն և այն ոչինչ ազգ աւգտութիւն չայնէ և կամ երկու շաբաթ. այլ պարտ է տալ զֆառայն վեց շաբաթ ինչվի խ (40) աւրն։ Եվ պարտ է զֆառայն ցանել ի յառջի ամիսն ի ձմռան։ Եւ զոր ի յերջի ցան լինի, նա չէ պատեհ տալ, զի չէ աղէկ՝ վատուժ լինի, ու զսերմն, որ ցանեն, նա սպիտակ գարի թող լինի։ [Ե]ւ թող լինի ֆառայն մատղայշ ու յերկայն, զի այլ ուժով լինի։ Եւ այն, որ կարճ լինի, աւեր է. մի՛ տար ի յայնոր գրաստու։ Եւ տե՛ս||(72բ), որ ի յայն ֆա-

ույնէ չտաս, որ հասկնած լինի, զի խոշրցնէ զփողքն և այնէ հազ և չաւգտէ իր։

Եւ ի տեղի, որ ի ֆառայ դնես, նա կապէ, որ ուտէ կանգուն մի, ու հետ ի հետ, կանգուն կանգուն տեղէ փոխէ և կամ կապէ զինք ի յարձակ շուք տեղ ու հետէն քչիկ քչիկ ձգէ զֆառայն ու յամէն ժամ ջուր տուր, զի եբ ի ֆառայ դրել լինի․․, նա ոչ կարես գիտենալ, թե ի յորժամ ծարվենայ։ Եւ ծառութրարն, որ կենայ ու ծառայէ, նա պարտ է, որ զամէն տեսնու, որ առջև կոթինք չկենայ, զի երբ կոթինք կենայ՝ նա աչքն լցվի ու չկարենայ ուտել։

[Ե]ւ մէկ ծառութրար թող չկե||(73ա)նայ այն գրաստուն, որ ի ֆառայ լինի դրած, ապա երկուք և կամ երեք, որ չձանձրանան ու չծառայվի աղէկ։

Եւ ես, որ զգիրքս փոխեցի, ասեմ, զայն ֆառայիս դնելն ի վրայ Պաղտտայ աշխարհուցն է ացել և ի Շամբին տանն, նաև ի Մսրայ, այլ ի մեր աշխարհս, որ անուանել կոչի Կիլիկէ․ նա զգրաստն ի ֆառայ դնեն ի սպկիկ և յաղէկ ախոռ և ինք մէն։

Եւ այլ գրաստ, որ զնոյն ի ֆառայ լինի դրած, և կալնուն զլուսամտերն, որ լինի մութն, ու կալնուն պարտակ դէմ դռանն, և ծածկեն ճլաւվ ու կալնուն պատրաստ ի հովէ, և չմը||(73բ)տէ ի վրայ գրաստուն այլ մարդ, քանձ միայն ծառութրարն։

Եւ ի յախոռն, որ կանգնի գրաստն, նա այնեն խոր ու փոս ու դնէ ի վրայ հաստատուն փայտեր, կաղնի ջողեր ու շարէ ի վերայ այն փոսին զէդ մատունք ի կարգն ու լնու ի վրայ աւզի խիճ և ապա լնու ի վրայ այն խճին մանդր աւազ զէդ չորս մատն, որ կակուղ ու ցամաք կենայ ներքև գրաստուն, և զոր գողէ՝ նա ծծէ ու ի վայր ի փոսն իջնու։

[Ե]ւ ծառութրարն արիական կենայ, որ եբ գրաստն ի վայր լինի կորել, նա սրբէ ներքևն ու ձգէ ի դուրս ի յախոռոյն, որ չկենայ ի յախոռն ու հոտէ․ ու զհոտն առնու ու ||(74ա) ահոկէ գրաստուն։

Եւ զճուլն եբ թացվի, նա փոխէ, ու ճուլ մի այլ ձգէ ի վրայ գրաստուն։ Եւ յայն ժամն, եբ գրաստն ի վայր լինի կորել, նա պատրաստ կալ ի հովէ և ջեր կալ։ Ու եբ կենայ ու կապի փորն, դու աւելի ջեր մի պահեր և զայլ ծառութիւնն՝ որպէս ի յայս գիրգս է գրած։

Եւ ասէ գիրքս այս, թէ առջև, որ ի ֆառայն դնես, եթէ աւուրք մի հեծնուս զինք և ապա ի ֆառայն դնես, նա այլ լաւ է․ մէկ որ աղէկ դիմէ ի ֆառայն և մէկ այլ վանց յերկար կանգնելոյն։

Եւ թէ ի գրաստն բոր կամ կիծ կենայ, դու ի յիր գոզէն ու ի յիր թրքէն, եբ ի վայր լինի կորել, նա դու առ ու ի վրա շփէ՝||(74բ) աւկտէ։ Եւ [եբ] թափի, դու մի՛ թողուր, որ շաղախն ի վրայն չորանայ, զի չմարսէ զկերակուրն։ Եւ հանապազ զկոճբերանն զոտվոյն ու զձեռվոյն սրբէ։ Եւ թէ կարես, որ հանապազ ներքեն սրբես ու աւազ ձգես՝ նա աղէկ է, զի գոզն ու թրիքն խիստ ահոկէ և ափրէ զգրաստուն ոտքն, ու հանապազ ցամաք կալ ներքև գրաստուն։

Եւ յորժամ զֆառայն ընձես, նա մենակ այն առվաւտուցն վերոյ, որ արեգակն ի վրայ չցայթէ ու թառմի։ Եւ զֆառայն ի հայնց տեղի դիր, որ ո՛չ արեգակն կայ ի վրայ իր և ո՛չ հողմ ծեծէ և ափրէ։

[Ե]ւ զառվոյտն տուր, եբ հով է գիշերն։ Եւ տես զառ||(75ա)վոյտն, որ միջակ լինի, որ ո՛չ դաժ լինի և ո՛չ մատղայշ, և լինի տարեց հին ցանած։ Եւ զկանաչն և զաղվորն ընձէ ու տուր։ Եւ մի՛ տար զայն, որ տարովն է ցանած։

Եւ պատրաստ կալ ի գիշերուն հովէն և ի ցորեկվան ի շողոյն, առաւել ի յառվոյտն․ նա այտով կարես զգրաստն աղէկ ծառայել և յնելեցնես ի յղուղն և զաւդվածքն աղեկցնես ու ամրցնես․ ու քանի յերկար տաս զառվոյտն, նա կարիք չկայ։

Եւ այլ ծառութիւն, թէ որպէս ծառայես, նա այնպէս է որպէս յիշեցաք ի ֆառայն։ Եւ ի յարաւտկահն, որ արծես, դու մի՛ հալծել զգրաստն։ Կամակ թէ գահեն և կամ չարչեն, առ||(75բ)աւել թէ լինի գրաստն գէր և կամ լինի խմել շատ ջուր, նա խիստ ահոկէ։

Եւ կան ոմանք մի, որ զգրաստն լուսնել տան, երբ առվոյտ տան։ Ու պատրաստ<ութին>, որ չաւրի սմբակն ի գոզէն ու ի թրքէն․ և չէ այտ ոչինչ իրաց աւգտակար, այլ ջանայ, որ ներքև ոտվոյն ցամաք ուննաս։ Եւ թէ զայտ հայնց չայնես, նա առվոյտն այլ չմարսէ իր։

Եւ զայն տեղն, որ յառվոյտն դնես, նա տես, որ սրտբաց տեղ լինի ու հովամուտ։ Ու պատրաստ, որ ի պեղծ տեղ չդնես ի յառվոյտ և կամ ի ֆառայ․ առ աւելի ի յառվոյտն խիստ վնասի։

Եւ ջանայ, որ զախտռն սալրկած այնես, թէ չկա||(76ա)րէնաս՝ դու չոր մաղած թրիք ձգէ ներքեն կամ մանդր աւազ, զի այն լաւ է, քանձ թրիքն։ Եւ հանապազ ի յախոռն քարկոփ լից, որ հող չլինի ու ծխէ ի հողէն գոզէն (=գոզին) հոտն ու գետնին ծուխն ու պուխարն ու ահոկէ սմբակին։ Եւ գրաստն քանի յաւզին վերա կանգուն լինի, չահոկէ սմբակին և այլ դիւրաւ գայ իր։

[Ա]լիկ, որ զաւաղ գրաստն գիրցնէ։ Կտրէ մանտր խոտ և աղա գարի իբրև զկորկոտ և լից զխըլթն ի թաղառ մի ու վրայ ջուր, և թող զինք զէդ երկու պահ։ Եւ դիր ի մսուրն թաղառ մի և առ երկու ափկից ի յայն խըլթէն ու լից ի ներս, և առ ի յաղցած գարոյն զէդ ի խթին||(76բ) երեք ակն կամ չորեք ակն և ցանէ ի վրայ ան խթին։ Եւ քանի ուտէ զայն, նա զայս չակըս քչիկ քչիկ տուր, որ ուտէ, զի աղցած գարին այլ քչիկ ահոկրար է, քանձ զանարատ գարին, զի աղցած կարես մէկ ու կէս տալ, քանձ մէկ մի անարատ։

Եւ եբ կամենաս գարի տալ, նա ի հետ թացած խոթի (=խութի) տուր։ Եւ քուռկին մի՛ տայք յայսոր գիշերն ու ցորեկն, զի քուռկնին չհալեն աղէկ։

Եւ զայս ալիկս, որ ասցաք, նա ձմեռն լաւ է, յորժամ չգովի (=չգտվի) առվոյտն։ [Ա]պա թէ առվոյտ կամ ֆառայ գտվի՝ նա այլ աղէկ է, քան զայնս։ Եւ կան, որ վլախ ձիաննոյն կու տան զայս ալիկս, եբ աւաղ լինի։

||(77ա) Եւ յորժամ վերնայ փառայն յառաջ քանձ որ խիստ շողէ, նա չէ աղէկ ի շողն։ Վանց այսոր չէ պարտ զգարին քան զքսան լիտր աւելի տալ՝ քանձ պարտ է, որ քանի գարին լինի ու քանի խթն խառնած ընդ իրար, որ չահոկէ իր։

Եւ այն ալիկն, որ անուանեն իր տորաշթայք(°), նա առնուն զխռթըն (=զխութն) ու կտրեն մանտր մանտր. զնոյնն կամ ֆառայ կամ առվոյտ։ Եւ եբ կամենան խառնել ընդ իրար, նա առնուն ափկից մի խըլթ ու ափկից մի առվոյտ կամ ֆառայ. ու թէ ուզենայ՝ երկու երկու ափկից <ու> ձգէ առջև գրաստուն, և չտայ շատ, որ ուտէ. և առնու զգարին ու լուա||(77բ)նա ու դնէ, որ քամի ջուրն, ու չթողու աւելի ի ջուրն, որ չքացխի, և առնու ափկից մի ի յայս գարոյս ու ափկից մի թացած խթ՝ կտրած մանտր, ու խառնէ յիրար ու տայ գրաստուն, որ ուտէ։ Եւ մի՛ դնել տաւպրակ, որ

շողռէ գրաստն։ Այս է տարեշթայքն(°), որ յետև առվոյտին տան կամ ի ֆառայէն հանեն՝ նա տան։

Եւ այն ալիկն, որ ասեն իր յամմիր. նա կտրէ զֆառայն ու զառվոյտն ընդ իրար մանտր ու տա, որ ուտէ։ Եւ տարեշթայքն(°) լաւ է, քանձ զայս, զի ի հետ առվոյտին գարի չէ աղէկ, ու (=որ) տան, զի ահոկրար է։ Քաւէլ թէ լինի առվոյտն||(78ա) չոր ու լուացած և թաժայն ու կանանչն՝ լաւ է, քան զգարին։

Եւ ոմանք մի զգարին տան հետ առվոյտին։ Եւ եբ յերկրէ առվոյտին տալն ու լինի դահ, նայ առ իս այդ լաւ է։ [Ա]պա հետ յիսուն կամ վաթսուն աւուրն տուրն, ապա այս պոմնովս տուր, որ գարին լինի թրջած։

Եւ խոտն ազգի ազգի են. յամէն երկիր ազգ մի են։ Նա մտիկ դիր ու տես, թէ որ կու աւկտէ գրաստուն ի յայն ե[ր]կիրն, նա ճանչենաս իր անուամբն. ազգ մի, որ երկուք ու Գ (երեք) և ի յայն խոտէն դնես զմատղաշն ու զուժովն, զի կայ ի խոտերոյն, որ չաւկտէ գրաստուն, և կայ խոտ, որ բնաւ չուտէ զինք գրաստն, և կա, որ ահոկէ, և կայ, որ սպաննէ զինք։ Եւ արծեն ի յինք ի յայս ||(78բ) խոտս իշվի և ջորեստան։ Եւ կայ ի յայս խոտէս, որ արծեն պախրէք և ոչխարք։ Ամ դու փնդռէ, որ զաղէկն տեսնուք, քչիկ քչիկ, բուռն բուռն ձգէ, որ ուտէ։ Եւ զառվոյտն ու զֆառայն աւելի քչիկ, բուռն բուռն ձգէ, որ ուտէ։ Եւ թէ ձգէ ու զգարին թաց վաղն ու յիրիկունն, ու տուր, որ ուտէ։ Եւ թէ հեծնուս ի հետ այս ալկիս, նա չահոկէ իր, ապա մի՛ աւելի հալհեծես զինքն, զի թեթև և աղէկ ալիկէ, առաւել ի յայն աշխարհքն, որ կոչի Յարախ։ Եւ ամառն առվոյտ բնաւ մի տալ, զի չէ աղէկ։

Եւ տակշուրնին առնուն զաւաղ գրաստնին և ալկեն այսպէս, զոր նախ յիշած է ի գիրքս, զի ճարտար գիրնայ ու լցուի ոսկորքն, առաւել թէ ի սրտբաց տեղ ու ի հովամուտ տեղ կապեն||(79ա) ու ջրցնեն ներքին։

Եւ կան ոմանք մի ի տակշուրնին, որ աղընձեն զգարին ու այնեն որպէս փոխինդ ու տան գրաստուն. Նա ճարտար գիրցնէ։ Եւ զայս ի յայնժամն այնեն, եբ չգտնուն կանայչ խոտ։

[Ե]ւ կան ոմանք մի, որ խառնեն հետ գարոյն քիչ մի համեմ ու տան գրաստուն. նա պայծռցնէ զգոյնն։

[Ա]յլ ազգ ուտելիք, զոր պատեհն է. նա տան զխթն ու զգարին ու զյերդն ու զառվոյտն ու զֆառայն և զաղն. երբ կանայչ

տան, որ ուտէ, նա ի յայն ժամն տան, և աւր մի տան ու աւր մի չտան, և քանձ երեք աւրն աւելի չանցնէ, որ չտա զաղն, և թէ խիստ յիմէ, նա ի շաբաթն աւր մի տուր բահրակ՝ թէ հանգիստ կենայ գրաստն։

[Ե]ւ կան ոմանք մի ի||(79բ) Խորասանա յաշխարհքն, որ առնուն կտոր մի աղ ու ձգեն ի մսուրն, որ հանապազ լիզէ, և թէ հայնց որ չսովրի ի լեզելն, նա առնուն ծայր մի աղ ու լնուն ի բերանն ու կալնուն զգլուխն ի վեր։ Եւ եբ ի ֆառայն դնես զգրաստն կամ ի յառվոյտն, նա հանապազ զպախուցքն փնդռէ, որ պախուցքն չհարու զպախցտեղն, զի զայն տեղն, որ հարու, նա բնաւ մազ չգայ. և թէ գայ, նա յայլ գոյն մազ գայ։ Ամ քանի կարես կակուղ արա զպախուցքն և թէ կարես ի յաւրն շատ տարպայնի վրայ քո գրաստուն հայիս, նա պատեհ է, զի խաւսրանք չունի, ծառայէ առանց լեզու ու չկարէ զիր ցաւն զանկտել։ Եւ քանի կարես զջուրն ցցոյ իր, զի ջրին||(80ա) խմելն շատ աւգտութիւն է իր, հովցնէ զփորոքն, հահընդցնէ զտաքութիւնն, գիճացնէ զկաշին և արձկցնէ զսաղրին, պնդէ զմիսն և յեվելցնէ ի յարաւտն։ Եւ յորժամ հալծես զգրաստն, դու մի՛ մէնակ ջուր տուր կամ գարի. և պատրաստ ի յաւելի գարոյ, զի ֆնտուն այնէ ու աւիրէ զսմբակքն և այնէ քամի ու գլոտատւ աղիքն և այլ ազգ շատ ցաւէր։

ԻԹ. ՅԱՂԱԳՍ ՃԼԵԼՈՅ ԳՐԱՍՏՈՒՆ

Յորժամ տանիս զգրաստն ի ջուրն, դու զջուրն ի յագէտակն զարկ աղէկ, զի գիճացնէ և հովցնէ ի վրայ գրաստուն։ Եւ ամառն զլափեր դիր ի վրայ գրաստուն գագթանն, ապա զաչիցն||(80բ) տեղն արձակ, որ չհարու զաչքն, և զճուլն կակուղ արայ և կրծաւք, որ զկուրծքն աղէկ պահէ։ Եւ զվլախ գրաստուն ճուլն մազէ արայ։ Ձմեռն ի վրայ ճլին քիսէ անցոյ, որ քիսէն վերև լինի, և ամառն՝ առանց քիսէի, զի զմազն պաղ պահէ զգրաստուն և զմազն պայծառ։

Եւ մազէ ճուլ մի՛ ձգեր ի վրայ մատակ ձիաննոյն և ո՛չ ի վրայ ջորեստնոյն, որ կիծ չայնէ, ու պնդէ զծուլուկն, որ զմատակ ձին ու զմատակ ջորոյն յեչքն խիստ չքերէ, որ կիծ չայնէ։

[Ե]ւ ամառն ընդ իրիկացքն զճլերն ի յետ առնու ի գրաստէն և ի գոլերն աչվոյն վերև չվաննի կապէ, որ զճանճն քշէ։ Եւ զգրաս-

տըն թափլեցո||(81ա) և յարձակ տեղի տար, որ թափլի, որ չկենայ քար, ու կամ հողային ու գիճային տեղ լինի, և այլ ի յաւզի կամ ի չոր թրքի վերայ թապլեցոյ, որ գարի կերել լինի, զի այն թրիքն, որ յերդի լինի, նա այն ձին, որ թափլի ի վրայ, նա աւերի ի կաշին, և ոչ ի հայնց տեղաց վերայ, որ անձրև լինի եկել և ոչ ի յեղման վերայ, որ ձմեռն կու գայ։ Եւ եբ թափլեցնես՝ նա սովրեցոյ, որ կալաւպէ պահ մի, զի արձկցնէ զկաշին։ Մի՛ թողուր զձին, որ աւելի խայտայ, զի ի շատ խա[յ]տալն շրջի յանկասկած աղիքն ու այնէ հատուած ու սովրի և խածնան լինի։

Լ. ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍՆԵԼՈՅ ԳՐԱՍՏՈՒ

||(81բ) Յառաջ ասեմ, որ ի յամենայն գրաստ զսմբակն աւելի չտաշեն, զի թէ յանկասկած ընկնի լուսինն ի գրաստվէն, նա աւուրք մի դիմնայ. որ թէ այլ լուսին դնէ ի վրայ, նա կարէ լուսնել, և թէ բևեռքն առվել է, նա կարենա այլ վայր քշտել։

Եւ լուսնաւղն պարտ է, որ մտիկ դնէ սմբակին որպէսութեանն. եթէ յոտն է սմբակքն՝ նա զառջի բևեռտին մեծ քշտէ ու զյետինն* փոքր, և թէ կակուղ լինի սմբակքն՝ դու զառջինն ու զյետինն փոքր արայ։ Եւ կայ, որ լինի գրաստուն սմբակքն զորդ, և կա, որ լինի ծուռ։ Եւ ծռութիւն կայ, որ ներքսևէ լինի, և ասեն իր ահնաֆ։ Եւ կայ, որ դրուցևէ լինի, և ասեն իր աստաֆ։

||(82ա) Եւ կայ, որ գորտն սմբակնին ոլոր լինի առել. ամ ի յոր դեհի վերա ծուռ լինի սմբակն, նա զլուսինն ի մէկայլ դեհին վերայ հակեցոյ քիչ մի։ Եւ գորտն, որ ոլոր լինի առել, նա տաշէ յայն դեհէն և յայն ինչվի զորդի։

Եւ գրաստ, որ նաւսրսմբակք է, դու խուլ լուսնով լուսնէ զինք, և կամ, որ քիչ մի լինի բացած լուսինն ի սմբակբերանն, և չորս բևեռն աղէկ է. և երեքն այլ աղէկ է ի ձեռվին։ Եվ կայ, որ նաւսրսմբակ լինի, կամենայ ցաւի սմբակն, դու առ մագաղաթ կտոր մի և կամ սեկ կտոր մի ու դիր ներքև լուսնին ու լուսնէ. զի այտ խիստ աղէկ է և գոված է ի յայս տեղս։ Եւ կայ, որ թաղաւք կու լուսնեն. և ես զայն պատեհ չեմ||(82բ) ի տեսնուլ, զի ջուր առնու

* Ձեռ. զյերջինն։ Ուղղում ենք հաջորդ նախադասության հիման վրա։

թաղիքն։ Եւ զայս ցեղ սմբակ գրաստս շաղփով լուսնեն և զբեռտին խիստ բարակ այնեն, զի այլ թեթև է, և այլ անհոգք ի վրայ սմբակին և քչիկն ի յերկթէն շատ է։ Եւ քանի երկաթն կակուղ լինի, նա աղէկ է, ու սմբակին այլ ախորժէ։ Եւ բեռտին թող ծուռ լինի, որ ընդ կուղումծն ի ներս երթայ, որ եբ բեռվի՝ նա թաղվի յինք, զի թէ ղորդ լինի բեռն, նա ղորդ երթայ ընդ սմբակն ու բեռհաս այնէ։

Եւ երբ գրաստն գործնփոխ լինի, նա դնեն ներքև լուսնին սեկ ու լուսնեն ու թողուն աւելի ի կընկանն ի դեհն զէդ չորս մատն, որ կապեն չուանով վերև մազբերնին, որ առնու այն աւելի սեկն ի վրայ||(83ա) գործանն, ու ծառայեն, որ երբ երթայ, նա քար չդիպի ու աւիրի։

Եւ կայ կաշէ կաւշիկ կու շինէ գրաստուն և կու հագցնէ ու կու ծառայէ։ Ու թէ չթողու գրաստն, որ լուսնեն, դու հնար է, որ առնուս չուան ու ձգես ի վիզն ու խեղդես խորասնցնակ որպէս խեղդեն զֆնտուն, հայնց որ կամենայն զգետինն դիպել, և տարպայնի արայ, նա սիրտն կոտրի ու թողու, որ լուսնեն։

[Ե]ւ թէ լինի գրաստուն սմբակքն խիստ նաւսր ու ուզենաս, որ աղեկցնես զսմբակն, դու շինէ լուսին խիստ նաւսր ու խիստ բարակ, որ լայնքն լինի զէդ մատն մի, և զբեռնին բարակ և զբեռգլխնին այլ փոքր, քան զլուսնին լայնքն, որ բռնէ զղունկն ||(83բ), որ ոչ թողու, որ աղջոյրն կոտրտի, և ներքև ձգէ աւազ մանտր խղճով (=խիճով), որ ի վրայ կանգնի. նա աղեկնայ սըմբակն։

ԼԱ. ՅԱՂԱԳՍ ՆՇԴՐԿԻ, ՈՐ Ի ԳՈՐԾ ՏԱՆԻ

Պարտ է շինել պատռելոյ նշդրակ, որ լինի գլուխն լայն և երկին, սրծայր ու նաւսր ու սուր։

Եւ յորժամ ուզես, որ երակ առնուս, դու բռնէ ի նշդրակն ու թող ի ծայրէն ի դուրս զէդ կէս ղունգն։ Եւ թէ կամիս ի վերի դեհն առնուլ երակ, նա զգլուխն բարձր կալ և մի ատորալ, ինչուր աղէկ զերակն գտնուս, և շքելէ ու դիր զիար, և առ երակ և դիր ի փողքն չուան, որ երկնին ամէնն լարին ու երևնայ, և առ զերակն։ Եւ ճտացն երկնին խիստ վնաս տեղ է, հայնց որ||(84ա) եթէ երկթեն չառնու ի յինք և ի յայլ տեղ առնու խեչ իր, նա սպաննէ զգրաստն։

Եւ թէ կամենաս խպիթէ հանել, որ կայ խոյլ ընդ ականջաթուռն և ընդ փողքն ի մէջ, նա ճեղքէ, որ երևնայ ջեղն, և մտոյ զնշդրակն ու քերէ զայն խուլն պահ մի. նա ելնէ ի վրայ նշդրկին զէդ հաւկութի դեղնուց. դու հան զինք զայն խուլն ու մաղտէ նշդրկին ծայրովն ի վրայ լեզուին և ի վրայ ակընջվոյն. թէ ուզենաս՝ նա աքցնաւք առնուս զինք։

ԼԲ. ՅԱՂԱԳՍ ՅԱՅՊԵՐՈՅ, ՈՐ ԿԵՆԱՅ Ի ԳՐԱՍՏՆ

Գիտացիք, որ զոր գովեցաք ի գրաստուն զաւդվածքըն, թէ սիրած է յերկայնն՝ նա կարճ լինի, և կամ թէ սիրած է կարճն՝ նա յերկայն լի||(84բ)նի, և կամ թէ լինի լայն՝ նա լինի նուրբ, և կամ թէ նուրբ լինի՝ նա լինի լայն, եւ կամ, զոր սիրած է հաստ՝ նա լինի բարակ, և կամ զ[որ] սիրած է բարակ՝ նա լինի հաստ։ Եւ զոր զաւդված, որ յիշեցաք ի յիր կերպն թէ գոված է, նա լինի այն (=այլ) կերպովն, նա յայպ է կոչած, և չկայ կարիք, որ կրկնակ զայն անուանել։

Զաւդվածքն, զոր ասացաք, նա այլ վայր յիշենք, զի կարդայ զայն և ի միտ կալ, նա կարես յայնկից ճանչենալ զայպերն, զոր ասցաք, նա մենք այլ վայր յիշենք։

Եւ զոր իսկի հնար կայր վանց ճանչվորութեան, նա զամէնն յիշեցաք, և զոր գոված էր ի յաղէկ ազգ ձին զնոյնն. և այն կերպարանաւք ճանչենան և զվլախ ||(85ա) ձին. և մասն մի յիշել ենք վասն ջորեստնոյն։

ԼԳ. ՅԱՂԱԳՍ ՏՈՒԲԵԹԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ ՆՇԱՆՔ ԵՒ ԳԱԳԹԱՆՆ

Թէ տուբէթն փոքր լինի և կամ ծայրքն մազին սպիտակ փայլկտուկ լինի, որ վառք ուննա և կամ բնաւ խաղ չկենայ, նա ապիգոված է։

Եւ գագթանն փոքրութիւն ապիգոված է։

ԼԴ. ՅԱՂԱԳՍ ԱԿԸՆՋՎՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Յորժամ տեսնիս զգրաստուն ականջն դէպ ի յետ ի ցից և յորժամ ձեռնես նա շլսէ, նա գիտացիր, որ խուլ է. և շատն ի սխալխն լինի։ Եւ թուլութիւն ակընջվոյն կամ ուննայ պտոյտ ի ճակատն, նա ատած է։

Եւ յերկայն ակընջվին և ի կախ՝ որպէս կովու, նա յայպած է, և կոչեն իր կաւշկաւշ։

Եւ այն, որ լինի||(85բ) մէկ ականջն յերկայն ու մէկն կարճ, նա ատած է։

Եւ հեռվութիւնն, որ լինի ի մէկ ակընջէն ի մէկ այլն, նա ատած է։

ԼԵ. ՅԱՂԱԳՍ ԱՉԻՑ ՅԱՅՊԵՐՈՑ

Կապոյտ աչվին յայպած է, զի խոտխոտի աչքն դէմ արեգականն ու դէմ սպիտակ իրաց, և եբ հայի՝ զնոյն։ Եւ թէ մէկ աչքն լինի կապոյտ և կամ շիլ, և աչիցն կոպքն եբ սպիտակ լինի և կամ շուրջ, նա ատած է. և այն լինի ի խիստ ցրտոյն և կամ յարեգակնէն և և կամ ի ձոյնէն։ Եւ հաւկոյրն զնոյնն։ Եւ որ լինի խորու աչվին և գորոփն մեծնայ. և այս իրվիս յայպած է։ Եւ յայն, որ լինի աչիցն սպիտկուցն շատ և պտուղն փոքր, առանց այնոր լինի կապոյտ և կամ շիլ, նա յայպած է։

||(86ա) ԼԶ. ՅԱՂԱԳՍ ԵՐԵՍԱՑՆ ԵՒ ՔԹԻՆ ԱՅՊԵՐՈՑ

Նշանք. խոյայքիթն և այն, որ քթին ծայրն տափակ լինի և տափքիթն և գէր երեսն, նա յայպած է։

ԼԷ. ՅԱՂԱԳՍ ԲԵՐՆԻՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Թոյլ պռկնին, որ եբ յիշվեցնես՝ նա զիրար դիպի և ղաբղաբ այնէ, եւ յերկայնութիւն ակռայուցն, և աւելի ակռայն, և կարճ լեզուն, և մունջն, որ խրխնճէ. այս ամէնս յայպեր են։

ԼԸ. ՅԱՂԱԳՍ ՇԼՆԵՑՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Նախ յիշել ենք զիր զաւղվածքն եւ զնոյն յիշել ենք, զոր գոված է։ Եւ զոր այլ ցեղ լինի, նա ապիգոված է։

Եւ զոր պարտ է յիշել բաժին մի, մենք ասենք՝ շլնէտակն եբ ղարտակ լինի ի մսէ, նա յայպ է և քչիկ յիշվէ։ Եւ եբ||(86բ) յիշվէ, նա զգլուխն բարձր պահէ ու չտեսնու, թէ ինչ կայ առաջին, և այն որ մէջ շլնեցն էջ լինի. նա յայպ է։

Եւ բէջքն, որ ցից լինի, նա յայպած է։

ԼԹ. ՅԱՂԱԳՍ ՄԻՋԱՑՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Յերկայն մէջքն ու կակուղն ու թոյլն յայպ է։

Թամբուցն տեղն, եբ ցած լինի, և նքթէպն խիստ բարձր լինի, նա յայպ է։

Ջնոյն և այն ողնաշարն ու գաւակն ցած լինի, նա յայպ է։

Եւ կզութիւնն և այն կուզն, որ թամբուցն տեղն բարձր լինի, նա յայպած է։

Նաւսրութիւն փորոյն և բարձրութիւն քովացն և քաշքանն ատած է։

Խ. ՅԱՂԱԳՍ ԳԱՒԿԻՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Սուր||(87ա) գաւակն և դէպ ի յագէտակն ցած <է> և եղնգաւակն յայպած է։

Եւ այն, որ լինի մէկ դեհ գաւկին բարձր և մէկ դէհն ցած, և այս կամ լինի ի տեղծուածէ և կամ լինի, որ քուսակն ի մատղըշութիւնն մտել է ընդ նեղ տեղի ի ներս, նա հարուել է մէկ դէհն, և կամ հանապազ ընդ ծառ և կամ ընդ պատ շփէ, և կամ լինի առել զարկք ի վրա գաւկին, նա յայպած է։

Յերկայն գաւակն և թոյլն ու փոքր գաւակն ատած է։

Եւ փոքրութիւն պճկոռացն և ղորդ լինի բազկունքն ու կարճ, նա յայպած է։

ԽԱ. ՅԱՂԱԳՍ ԿՐԾՈՑՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Նեղ կուրծքն, որ ամէն կուրծքն լինի նեղ, և կրծոցն մկունքն մեծ լինի, ու մէկն||(87բ) փոքր, և կամ մէկն ի դուրս և կամ մէկն ի ներս, նա ապիգոված է։

ԽԲ. ՅԱՂԱԳՍ ՁԵՌՎՈՑՆ ՅԱՅՊԵՐՈՑ

Յերկայն ոտվին և կարճ ձեռվին և, որ լինի գաւակն բարձր, քան զառաջքն, նա յայպած է, զի հանապազ զթամբքն ի վրայ շլնեցն ձգէ։

Եւ յերկայն կոճքն ու թոյլ չեղն և այն, որ զծնկվին յիրար ածէ, զի ղորդ լինի ծնկվին. նա այսոք ամէնս յայպած է։

Եւ այն, որ սատափ կոչեն իր. զոր գրած է ի գիրքս, նա լինի սմբակքն դէպ ի դուրս ու ծունկքն դէպ ի ներս և կոճացն լայնքն դէպ ի ներս և սրութիւնն ի վրայ սմբակին, նա ապիգոված է։

Եւ այն, որ զկոճքն ընդ իրար ծեծէ և կամ ի յաֆէ է և կամ ի ձանձրա||(88ա)նալոյ. այս ապիգոված է։

Եւ հանաֆն, որ լինի ի սմբակքն ի մաւտ դէպ ի ներս, որ հակառակն է սատաֆին, է այն, որ լինի սմբակքն կոճքն ղորդ և չլինի կրունկն դէպ ի փորն, և այն, որ եբ երթայ, նա ձեռվին ընդ իրար բադղէ, և այն, որ լինի ի կանկուն ամէն ձեռվին ու բազկունքն ղորդ, նա յայպած է. և այս լինի ի ջղին ի կարճութենէն, զի խիստ քթահրան լինի և իր աւելի քթահրելն ի կանգնեցելոյն լինի։

ԽԳ. ՅԱՂԱԳՍ ՍՄԲԱԿԻՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նշանքն է. խիստ փոքր սմբակն ու նեղն որպէս զկծիկ և ի յոտն լինի, նա յայպ է, զի խիստ քթահրկոտ լինի։

Եւ նաւսր սմբակն և արձակն պեղծ է։

||(88բ) Եւ չորն, որ հանապազ պատռտի ու փշրի ու չդադրի յինք բևեռ, նա այտ է <ու> բուն ու պեղծն, որ խսկի լել է։

Եւ կակուղ սմբակքն, որ լինի առջնոյն խիստ նաւսր և մէջըն փշրի, նայ խիստ յայպած է։

ԽԴ. ՅԱՂԱԳՍ ՈՏՎՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Նշանքն է. այն, որ լինի կոճքն հեռու մէկ ի մէկէ, նա յայպած է. առաւել ի մատակն և ճարատն ի ծննդոյ։

Եւ զարկնելն կոճացն յիրար և թուլութիւն կոճացն, և փոքր անդամն, և ղորդն, և կարճ սրունքն ապիգոված է, զի վատուժութիւն է։

Եւ այն, որ չկարէ կանգնել հանապազ ի վրայ ոտացն ու հանգցնէ դեհաց դեհէ, և ավղութիւն անդմացն, և այն, որ մէկ ||(89ա) ձեռք ուննայ, նա ամէնտ յայպած է։

ԽԵ. ՅԱՂԱԳՍ ԱԳՈՅՆ ՅԱՅՊԵՐՈՅ

Այն, որ ճանէ զագին, և այն, որ եբ գահէ զձին՝ նա ինք զագին արղպէ ի վրայ գաւկին ի մէկ դ՚հի վերա, և սպիտակ ագին, և այն, որ բաժին մի սպիտակ և այլ այլ գոյն. և զայս երկուքս յարապն յայպել է, և առ իս չէ ապիգոված։

ԽԶ. ՅԱՂԱԳՍ ՅԱՅՊԵՐՈՅ, ՈՐ ԼԻՆԻ Ի ՊԱՏԱՀՄԱՆՑ

Կուրութիւն. յառաջ. որ փնդռես զինք, դու ճանչենաս զինք, թէ կոյր է, թէ չէ. եբ կապած լինի գրաստն, նա նեղու ու ձգէ զձեռվին ու զոտվին, և եբ գահէ՝ նա աղսիբաղս երթայ։

Եւ կտրած լեզուն յայպ է, զի չկարէ զգարին աղէկ ուտել, շոդէ, թրթխէ զինք և քշկցնէ զջրին խմ||(89բ)ելն։ Եւ շատն ի յայնոր լինի, երբ լըկամն լեզվեռվ լինի ու զերսնակն ի թամբքն ձգես, պատրաստ կալ, զի խիստ պեղծ է ինք։

Եւ ակռայ պակասն ատած է, զի կոպիտ է ու շողիքն իջնու, և լինի քաշան և արոյն ի ռնգանն։

Եւ հարուճն, որ եկամուտ լինի ի գրաստն, նա լինի ի պեղծ հեծնողէն, և լինի յայնոր, որ հեծնու յախռոյն ու դառնայ ճարտար յախռոն, և ի յանպատեհ հեծնելո, և յայնոր, որ ի մէջ գրաստնոյ թողու զգրաստն և խածնան լինի ի ծառութրուն (=ծառութրարուն) շատ ծեծելոյն ու առաւել ի թամ[բ]ելոյ և ի հանգստութենէ տեղեստնոյն։

Եւ կայ, որ կատղենայ ի պեղծ յարոյնէ և ի սուր մաղձէ||(90ա) յաւելվածէ։

Եւ այն ձին, երբ գահեն, նա ելնէ յռավնէն, նա կոչէ յարապն իր ռուղան. նա լինի ի պեղծ հեծնողէն, որ թողու, որ ի հետ իր կամացն երթայ և շատ ծեծէ ի մէկ դեհի վերայ։

Եւ այն, որ չթողու, որ թամբեն և կամ լկամեն, և ճինարէ, և կամ չթողու, որ հեծնուս զինք, նա լինի ի շատ մկնատմերոյն, որ ելնէ ի թամբուցն ի տեղն, և կամ ի տեռերոյ, որ լինի յայն տեղն, և կամ ի քաշտեղն և կամ յողն, և յառաջ, որ ողջնայ և հաստատի՝ նա թամբեն նա չթողու, և ճինարէ ընդ ցաւէն, և եբ ողջանա՝ նա մնայ այն իր սովորութիւնն զնոյն ու ի հեծնուլն չթողու։

Եւ որ զլկամն չթողու, նա ի յայնոր է, որ բերնվախ||(90բ) է արած և կամ լինի եղել նեղ լկամն և կամ ծանդր և կամ զբերանն շատ ծեծէ։

Եւ այն, որ չթողու զականջն, որ զլկամն գլուխն ի ներս անցնեն, նա լինի յայնոր, որ լինի հարել աւղինն և կամ փորն և կամ ի զիարէն վախէ նա. և այն իր սովորութիւնն մնայ։

Եւ այն, որ ձեռվաւվն քշտէ, նա պեղծ բնութիւն է ի գրաստն։

Եւ կայ, որ ի զիարէն լինի, նա ձեռվաւվն քշտէ և երթայ սովրի։

Եւ կայ, որ զիարն ի պռու[ն]գն չթողու, որ դնէ, նա զնոյն ոտաւքն քշտէ. ու զայն իր սովորութիւն առնու։

Եւ այն, որ ի սրտէն պտոյտ առնու ու կանչէ, նա լինի ի շատ ծեծելոյն ու ի յերսնկին ի շատ քաշելոյն. նա սովրի զայն, որ ի շուրջ գայ և կանչէ։

Եւ այն, որ շտա||(91ա) լուս[ն]ելն, նա լինի յայնոր, որ բևեռ գտնու և կամ ի շատ տաշելոյն. նա ցաւի ու վախէ յայնկից. և այն մնայ իր բնութիւն։

Եւ խրտչիլն լինի ի սրտին վատուժութենէն, և լինի ի խրտութենէն և ընդ խումրութենէն, և որ չլինի անցմնցեցուցած ի փողոցնի և ի նեղ զուղաղնի և ի մարդձայն տեղեստան։ Եւ խիստ պեղծ խրչիլն այն է, որ յղտոյն խրտչի, և այն բնաւ չղորդի։

ԽԷ. ՅԱՂԱԳՍ ԿԱՂՆԱԼՈՅ, ՈՐ Ի ԾԱԾՈՒԿ ԿԱՂԱՅ, ԵՒ ՈՐ Ի ԲԱՑ ԿԱՂԱՅ, ԵՒ ԶԻՐ ՓՆԴՌՆԵԼՆ՝ ԹԷ ՈՐՊԷՍ ԶԻՆՔ ՃԱՆՉԵՆԱՍ

Գիտացիր, որ կաղնալն մէկ ոտիցն ի գլխոյն ճանչվի։ Եւ աղէկ ղորդ ճանչենալն կալաւփցնելն է, որ հալծեցնես ու բերես կանգնեցնես և սեղմես ձեռ||(91բ)աւքդ. նա որ տեղի ցաւի՝ նա պիտի որ երևնայ։

Եւ ղորդ փնդռելն՝ եբ կամենաս փնդռել. որ ի հետ հալծնացն կանգնեցնես ու ալկես ի մսուրն և թողուս, որ պաղի ու ուտէ ու հանգչի, և հետ այնոր առնուս զպախուցքն ու յուշկիկ յուշկիկ քաշես՝ առանց այնոր, որ զարկնես ու կամ նեղես. նա եբ կենայ՝ յինք ծածուկ կաղութիւն նա պիտի երևնայ։

Եւ թէ ուզես, որ յիմնաս, թէ ի սմբակէն է կաղութիւնն և կամ ի կոճէն, դու առ զգրաստն ու ի վրայ դոյլ քարուտ գետնի կալաւփցոյ*. նա թէ ի սմբակէն է՝ թէ կենա՝ ցաւի յոտքն։ Որ չլինի ի սմբակ[է]ն, դու ընդ դար ի վեր զէդ սանդղմատներ ի վեր տար զգրաստն. նա||(92ա) պիտի երևնայ, զի եբ դնէ զձեռն ի սանդղմատն, նա պիտի մնայ ոտվին ի ցած տեղն և ի վրայ բաղկացն հաստի, և ապա փոխէ զոտքն. նա թէ կենայ կաղութիւն՝ նա երևնայ և հանապազ ի կալաւփցնելն**։

---

* Ձեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ կալեցու։
** Ձեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ կալեցնելն։

Եւ ի յանցմնցեցնելն գլխոյն մտիկ դիր և յերկարցոյ զմիտքդ ի յիր տեսն ու կշռէ զիր գնացքն, զի պիտի զիր ուժն ի վրայ ողջ ձեռացն դնէ ու զգլուխն ի հետ հնազանդէ և զայն, որ ցաւն կայ, թոյլ ի հետ տանի։ Այսով կարես ճանչենալ զծածուկ յայպն և զայն, որ յայտնի է և ի բաց յայպ, նա մենակ պիտի որ ճանչենաս։

Եւ թէ յոտվին լինի այպն, դու զնոյն մտիկ դիր, նա պիտի որ ի յողջ ոտինն ի վրա հաստի ու մէկ դէհ գաւկին իջ||(92բ)նու։ Եւ այն ոտքն, որ ցաւն կայ, նա պիտի ոտքն ի հետն ի քաշ երթա և ի դար ի վերն և ի կալաւփցնելն* աւելի պիտի ցուցէ։ Եթե խիստ ի ծածուկ լինի այպն, որ ի յերշի ոտքն լինի, նա դու տար զգրաստն, որ թապլի ի տեղի. նա ի թափլելն պիտի որ առաւել ցաւն ուժվորէ. նա դու տար զձեռքդ ու փնդռնէ, նա պիտի որ երևնայ։

Եւ թէ կամենաս յիմնալ, թէ ի սրանքն և կամ ի բազուկն և կամ ի կոճքն է ցաւն, դու զգրաստն բոլոր ի շուրջ ած յուշկիկ յուշկիկ. նա թէ յայպ կենայ, նա չկարէ աղվոր զէդ սպրկիկ գրաստըն զանձն ի հետն ի շուրջ ածել, դու տար զձեռքդ ի վերևէ ի վայր||(93ա) ու փնդռէ. նա ուր իսկի կայ ցաւն՝ նա պիտի որ երևնայ։

Եւ թէ ուզես, որ յիմանաս, թէ ի կուրծքն է և կամ թէ ի բէճքն և կամ թէ այլ ի վեր է ցաւն, դու զգրաստն յանկասկած ոլլէ** ի յետ ի մէկ դեհի վերա, նա պիտի ձեռվին ընդ իրար բաղդի. նա ուր կայ ցաւնի՝ պիտի երևնա. նա դու ձեռաւքդ տար ու փնդռէ։

Եւ թէ լինի յայպն յերկու ձեռքն, նա չկարես ի գլուխն ճանչենալ, ապա խո նշանն այս է, որ եբ կենա ու երթայ, նա զերկու ձեռքն պատրաստ հետ իրաց ձգէ, ու ապա հաստի ի վրայ երկու ոտացն ու քաշէ յառաջ, և պատրաստանաւք զգլուխն ու զկուրծքն վերցնէ։ Եւ թէ յայպն ի ցաւէ լինի, նա ի||(93բ) հետ ցաւերոյն զինք յիշենք։

Եւ քթահրելն, որ ի յամէն ժամ քթահրի, նա լինի ի յոտվոյն վատուժութենէ և ընդ թուլլսրտութենէն, և լինի քթահրելն, եբ ծնկվին զիրար ծեծէ ու կամ կոճքն, և կամ լինի ջեղն կարճ, նա ի

---

* Ձեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ քալեցնելն։
** Ձեռ. այլ ձեռագրով բառի վրա՝ ոլորէ։

7—1034

յայտող քթահրի։ Եւ այն, որ յանկասկած ոտքն ի փոս տեղի ընկնի կամ ընդ քար դիպի ու քթահրի, նա չէ յայպ։

Եւ սրաւսն կայ, որ յանկասկած գրաստուն ոտքն ի ծագ քար ընկնի և կամ ի քարի մէջ և կամ շքեղացն փայտն հարէ զոտքն, նա թոյլցնէ զոսկորն և աճէ և ի դուրս գայ ու լինի ծածկ[ո]ած, որպէս զծուծոսկոր. և այսոր կոչի սրաւս։

Եւ կայ, որ լինի ի սրաւնացն ի լայնք. և այդ քչիկ վր||(94ա)նասէ։

Եւ կայ, որ լինի ի ծունկքն և ի խալիկն. և ինքն է բուն ու պեղծն, և կարէ լինալ, որ աւիրէ զգրաստն։

Եւ կայ, որ լինի ի զաւդվածն ի ծնկացն երկու դեհն ի ներքսէ և ընդ դրացէ. և այն, որ չկայ բնաւ բժշկութիւն։

Եւ տեսել եմ, որ խիստ զաւրաւորն ի յիրմէս, եբ լինի պեղծ տեղն, որ է զաւդվածին խաղն, նա բնաւ չէ ողջցել։ Եւ զոր փոքր ելել է, նա ի վրայ սրաւնացն ելել է, նա սրբել է։

Եւ կայ, որ լինի ելունդ ի վրայ սրաւնացն կակուղ, որպես զխոյլ, և եբ դնես զմատըտ ի վրայ, նա երթայ ու գայ։ Եւ կայ, որ լինի կակուղ, և կայ, որ լինի պինդ, և կայ, որ լինի ի վրայ սրաւնացն, և այլ ի վեր քան զսրաւնքն ու այլ ի վայր քան||(94բ) զսրաւնքն, և յառջի ոտվին ու ի վերջի ոտվին։

Ընթիշարն, որ թարքմանի ցրքիլն և մէկնելն, որ լինի ի ջղերն ի յառջի ոտացն ու վերջի, ու իր սկիզբն ընդ շատ գահելոյն ու ընդ հալծեցնելոյն լինի, նա ուռենայ առաջքն գրաստուն ու կամ ի վերջքն, նա լարվի ու ցրքի երկնին ու ջղերն յիրացմէ ի յետ։

Եւ կայ, որ պատահի իր այս ցաւս, ու ինքն ի կանկուն կենայ, նա զձեռքն վերցնէ ու ծեծէ զգետինն և դիպի ի մսուրն ու այլ չկարէ վերցնել։ Եւ չէ այս ցաւս վնասակար, այլ թէ պէտ այնես՝ նայ ճարտար ողջնայ, ու լինի, որ ուռենա ի վերի դեհն ջղին սկիզբն և ի շուրջ գայ։ Եւ յորժամ բռնես մատամբտ՝ ||(95ա) նա ճանչենաս, որ չլինի սպրկիկ։ Եւ յորժամ ուզենաս, որ յիմնաս, որ սպրկիկ լինի, նա տեսնուս զինք ի լար* ներքև մատինդ՝ եբ տանիս զձեռքդ։ Եւ անծանաւթ մարդիկն չի ճանչենան զայս։ Այսպէս գտնուս ղերակքն ի լար*, որպէս զուռեցած, նա գիտացիր, որ չէ սպրկիկ։

* Ձեռ. այլ ձեռագրով ավելացված՝ ած (=լարած)։

Որ է տաքութիւն, որ կենայ ի չորս ոտքն, և առաւել այս, որ ի յոտվին կենայ դէպ ի վեր և քանի երթայ՝ նա աճէ ու արձկնայ։ Եւ թէ ի գէջէ լինի, նայ ելնէ յիրմէ թարախ, և թէ ի չորէ լինի, նա ելնէ յիրմէ որպէս զձկան խորխ։ Եւ քանի լինի, որ ի ծունկքն լինի և ի ձեռվին։

Եւ կայ, որ խլի բազկին ճաղն||(95բ)։ Եւ ոմանք մի ասցել են, թէ չէ այն բազկին ճաղն, ապա այն երակ է ու ի դուրս կու գայ։ Եւ ոմանք մի ասցել են, թէ երկնոյն ծայրքն է ու ի դուրս կու գա։ Եւ ես կու ասեմ, որ հայնց է, զի ոսկորն, որ ի սրունքն կայ, նա ի յիր տեղացնմէն գայ ի դուրս։ Եւ այս ցաւս կայ, որ կու գայ ի դրուցէ։ Եւ կայ, որ ի ներքսէ։ Եւ թէ ճաղներն յայն տեղն ելնէր, ուր ճաղն կայր, և ինքս պեղծ ցաւ է, և յոտքն այլ պեղծ ցաւ է, քան ի ձեռքն։ Եւ յսելվածերն ցաւ է ի կոճքն, որ հաստնայ ի կոճացն ու ինչվի ծունկքն, և յորժամ զմատնդ դնես, նա պիտի լինի որպէս զոսկոր։ Եւ կայ, որ լինի զէդ ընկոյզ ու այլ մեծ, և զոր ընդ ներքսէ աճէ ու մեծանայ՝ նայ այլ պեղ||(96ա)ծ է, զի հանապազ ընդ իրար դիպի ոտվին ու քթահրի ու աւիրի ոտվին. և զոր ի դրուցէ լինի, նա կարէ դիմնալ գրաստն, և եբ յոտվին ու ի ձեռվին լինի, նա չլինի այն ցաւն, զոր ասցաք ընթիշար։

Եւ տայխաւնն, որ լինի յոտքն ու ի ձեռքն, որ է ցաւ, որ ի կոճին մէջն լինի յեվելված՝ իբրև զկատու կամ այլ մեծ, և թէ ներքսէ լինի, որ յուշ երևնայ, այլ պեղծ է, քան թէ ի դրուցէ լինի։

Եւ խիչիփարն, որ լինի յոտքն <ու> ՚վ ի ձեռքն, նշան է, որ լինի ի դրուց՝ ի դեհն ի խալկին։ Եւ քանի երթայ, մեծնայ ու պինդ լինի, որ չորցնէ զխալիկքն։ Եւ թէ յոտքն լինի՝ այլ հեշտ է, քան թէ ի ձեռքն։

[Ե]ւ ֆասխն, որ լինի յոտքն և ի ձեռքն, ||(96բ) նշանն այս է, որ քաշվի ջղերն ու յերկայնայ՝ ինչվի թուլնայ զաւդվածքն ու ելնէ ի տեղացն. և այսոր ոչ կայ բժշկութիւն։

Եւ ճնրատն, որ է մնացական այպ ոտիցն, կայ, որ լինի ի ծննդոյ, և կայ, որ լինի ի ցաւէ. և ինք յսելված է, որ լինի ի ծընկացն ի ջղերն։ Եւ այն, որ ի ծննդենէ լինի, նա յերկայնգոյն լինի։ Եւ այն, որ ի ցաւէ լինի, բոլոր որպէս ընկոյզ, և քանի երթայ՝

մեծնայ, որ աւիրէ զաւղվածքն, որ ոչ կարէ ծալել։ Եւ կայ ի նմանի սրաւսն, ապա չէ սրաւսն։ Եւ այն, որ ի ծնէ լինի, նա ի ջղին յերկայքն լինի, որպէս զպախրի, զի զինչ պախրէ կայ՝ նա ամէնն ճարատ լինի։ Եւ այն, որ ի ծնէ լինի ճարատ, նա չի կաղայ։ Եւ այս ||(97ա) լաւ է, քան զայն, որ ի ցաւէ լինի, զի որ ի ցաւէ [է] եղել՝ նա խսկի չեմ տեսել ողջցել է։

Եւ կայ ցաւ, որ ասեն իր ըռքապի, որ թարգմանի ի հայն քամախ յաեւլված, որ իջնու ի յակն ի ծնկացն հաստ, նման է ի սրաւսըն, լինի ի զարկուց կամ ի քթահրելոյ. և կայ, որ դիպել է։

Եւ շուկակն լինի ի տաքութենէ և ի չորութենէ. և կամ, որ գրաստն ի ջրէն հանեն ամառն ի վրայ շող աւզի կամ ի շող մոխրի, նա պատռտէ զո[տ]քն, նա լինի շուկակ։ Եւ կայ, որ որդնի։ Եւ այն, որ կոճբխի իջուվածք է, որ իջնու ի մէջ կոճին որպէս ոսկոր, և շքելին տեղն յերկու դեհն, եւ եբ կենայ ու երթայ գրաստն, նա ցաւ տայ։ Առաւել պեղծ լինի, եբ հալծի գրաստն, ||(97բ) և եբ սկիզբն լինի, որ տանիս զձեռքդ, նա երևնայ իբրև զնուշ։ Եւ շատն ի մարցի գրաստնին լինի յերկու ոտքն։

Եւ կայ ցաւ, որ ասեն իր նուֆախ, որ թարգմանի փուքք, որ ուռեցվոր լինի ի ծնկացն, ի ներքի ջեղն կակուղ, և լինի ի մէկ ոտքն, և լինի յերկու ոտքն, և լինի ի մէջ ուռեցին և մէջ կաշոյն, դեղին ջուր ելնէ՝ զէդ հաւուկթի սպիտկուց. ու չլինի այս ցաւս քանձ ի յայն ջեղն, որ ասցաք։ Եւ ոմանք մի զայս ցաւս չընդունին. և ես կասեմ, որ բուն ու պեղծ ցաւն այս ցաւս է։

Եւ ֆախատն ցաւ է, որ քաշվի կոճացն ջեղն ու կարճնայ ու քաշէ զսմբակն ու ի մէկ դէհն ոլլէ*։

Եւ ցաւն, որ կոչի յախալ, որ լինի յետի ոտքն||(98ա) ջեղն, որ կայ յանդմանցն ի վեր ի խաղն, նա եբ կենայ գրաստն ու երթայ, նա զոտքն քաշէ ի վեր դէպ ի փորն ու կծկէ ու այլ վայր թողու. և ինք պեղծ յայպ է։ Ապա թէ պէտ այնէն, նա ճարտար ողջնայ։ Եւ կայ, որ առանց պէտ այնելոյ կու ողջնայ։

Եւ ցաւն, որ կոչեն իր ղըմըն, նշանն այս է, որ յորժամ կենայ գրաստն ու երթայ, նա պայթոտէ խալիկն, ու արիւն կենայ ու երթայ յիրմէ։

---

* Ձեռ. այլ ձեռագրով ուղղված է՝ ոլորէ.

[Ե]ւ ցաւն, որ կոչի մուլահն, ներքև ծնկացն լինի ուռէց՝ զէդ կէս խիարի, յերկայն ու պինդ և կամ այլ փոքր, և տաք լինի՝ եբ բռնես։ Եւ թէ ի քուռակ ելնէ այս ցաւս՝ նա սպաննէ։ Եւ որ կատարել ձի լինի, նա չկաղայ յիրմէ։

Եւ խումահն ուռէց է, որ իջնու ի ծնկացն||(98բ) ի բարակ դեհն, և քչիկ յայպ է։

[Ե]ւ նեքթաֆն, որ թարգմանի բէճցաւ, որ ոլլի* բիճգլխնին, վանց կարճութեան նքթէպին. և բուն ու պեղծ յայպն, որ կենայ յողնն։

Եւ հարտքն, որ նքթէպցան է, յորժամ ցաւ դիպի զնքթէպն ի տեռէ և ի զարկուց՝ նա աւիրի ոսկորն ու ելէ յիրմէ կտոր մի ոսկոր։ Եւ բնաւ չգայ այլ ոսկոր ի յայն տեղն. և ի պեղծ յայպերոյն է։

Եւ պաճարն**, որ է հատուածն, որ լինի ի գրաստնուն պորտն, և չկարէ գրաստն այլ յիշվել յերկար զէդ առջև։

Եւ ագոյն ոսկրին կոտրելն լինի ի պատահմանէ, որ կոտրի և այլ չկարէ ցցել։

Եւ յազրն սովորութիւն է, որ գրաստն հանապազ ի մէկ դեհի վրայ դնէ և||(99ա) յիշվէ։

[Ե]ւ մրջմոցն ցաւ է, որ լինի ի սմբակքն և յայլ տեղեստան, և առաւել լինի յիշվին, և ի չոր ու ի պեղծ սմբակնին։ Եւ յորժամ ելնէ ի կոճքն և ի միսն՝ նա խոցռի, ու ելնէ ի յիրմէ թարախ ու աւիրի սմբակքն։ Եւ զոր գայ սմբակ՝ նա պեղծ գայ։ Եւ ցաւն, որ ի գրաստուն սմբակքն ելնէ, ի յիրմէ ի յերկայնքն տաշեղ տաշել, առաւել եբ կենայ ու երթայ՝ նա կեղևի ու արոյն ելնէ։ Եւ լինի ինք ի սմբակին յերկու դեհն։ Եւ շատն յառջի ոտվին լինի, զի առաւել չոր է։ Եւ լինի, որ գրաստուն ոտքն դիպի ի վրայ քարի և այլ յաեւլնայ ցաւս։ Եւ լինի ի շատ փարոյն ուտելոյն և ի շատ կանգնելոյն։ Եւ հատվածն ի յոտվին լինի ի կըրընգնին||(99բ) ու լինի ի գորտն, և լինի ի լայնքն ընդ կոճքն և ընդ սմբակնի մէջ, հայնց որ աճէ ու բոլոր առնու զսմբակքն։ Եւ տեսել եմ, որ գրաստն զոտքն ի կախ կու թողու, որ պատռի հատվածն և ողջնայ սմբակն. պիղծ ողջնալ է, զի ելնէ ի յիրմէ հանապազ արոյն և թարախ։ Եւ կայ, որ ընկնի սմբակն։

---

* Ձեռ. այլ ձեռագրով ավելացված է ն (=ոլլին)։

** Ձեռ. բառի վրա այլ ձեռագրով սխալ ուղղում է կատարված՝ ատ (=պատճարն)։

Եւ խոյլքն, որ ելնէ ի յողնն և ի յայլ տեղեստան, լինի ի թամբուցն ի կոխելոյն։ Գայ (=կայ), որ կապի ու լինի ելունդ և չկենայ իր ճարակ, զի պեղծ յայպ է։ Եւ թէ աւելի ոսկոր կենայ ի յայն տեղն, նա բնաւ չողջնայ։

[Ե]ւ յասամն ցաւ է, որ քաշվի ձեռացն ջեղն ու շրջի սմբակն և աւիրի վերի սմբակն, լինի որ ի պեղծ ծառութենէ է, որ հանապազ ոտքն ի վրայ թրքին||(100ա) և գոզին կենայ. նա նաւսրնա սմբակքն ու բորբոսի ու աւիրի։

Եւ իրթէհաշմն, որ է ցաւ, լինի ի ձեռացն և ի ջղացն ի թուլութենէն, և կամ ի շատ հալծնաց, նա դողայ ձեռքն և դիպի յիրար։ Եւ զնոյն ու լինի ի յետի ոտվին։

Այսոք են յայպերն և ցաւերն, որ զէդ յայպեր է, զոր կարցի գտնուլ։ Նա ես գտայ և ճանչեցի։ Եւ կան ի ցաւերն, որ լինան յայպեր։ Եւ ցաւերն շատ են, և մենք, զոր կարենք, յիշել ենք ի յայս գիրքս ու ցուցուցել զայպերն ու զցաւերն։ Եւ հանենք զձին այլ ու գրենք խէչ ամէն զաւդվածի զիր յայպերն*։

Եւ ասցել է յարապն, թէ գրաստ, որ պարտ է պահել ու կապել, նա մէկն ուղտն է և ի շնորհոր, և զաղէկն ի յիր||(100բ)մէ բառնան հարիւր լիտր։ Եւ աղէկ ձին ընդ իր հեծնաւղն ու ընդ մարդոյն ու գրաստուն ու ընդ իր ռումբն, առաւել եբ նշանակ կենայ ու հողմ աւր լինի, նա առնտղած է, որ հարիւր լիտր լինի և յիշվէ սուր։ Եւ այնով գիտացաք, որ այն այլ աւելի ուժով է, քան զուղտն։ Եւ վասն այսոր զմտաւ ածելով հալծեցաք և գտաք զիր աղէկ ու միրած զաւդվածն ու զպիղծն ու զատածն։

Եւ հետ այս բանիս հանենք զհիւանդ ձին ու գրենք զիր ամէն ցաւերն ու զայպերն ու զդեղապետեալն*։

Եւ յառաջքն հանել ենք զաղէկ ձին ու գրել ենք զիր ամէն զաւդվածք, թէ որմէ գոված է և սիրուն և որմէ ապիգոված**։

||(101ա) ԽԹ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՑ ԳՐԱՍՏՆՈՑ. ՎԱՍՆ ԽՈՒՆԱՆԻ

Առաջինքն ասացեալ են, թէ խունանն չորս ազգ են՝ չոր և գէջ և այն, որ ներքև ոսկրին լինի. եւ հայնց տեսան, որ չորն ու գէջն ի յաւելվածէ լինի. և այն, որ ներքև կաշոյն։

Եւ ես ասեմ, որ խունանն ազգ մի է ի ցաւոցն և են երկու

---

* Բնագրում հիշված այս նկարը չկա:

** Տե՛ս էջ 58բ:

ազգ, որ է չորն և գէջն։ Եւ այն տեղեստանն, որ խունանն ի յինք լինի, շատ են։ Կարէ լինել, որ այն յաւելվածն, որ բորբսի, նա ուր և բնակի՝ խունան այնէ։ Ապա թէ իջնի յանդմացն ի վերի զաւդվածն, նա թուլցնէ զգրաստն ու վատուժցնէ ու կտրէ յուտելոյ ու ի խմելոյ։ Եւ ասեն այս ազգիս անուն՝ անդմաց խունան, ու եբ ||(101բ) իջնի յայլ զաւդվածքն, նա կոչի զաւդվածաց խունան, և եբ ժողվի ի սիրտն պեղծ յաւելված՝ կոչի սրտի խունան։ Եւ այս ազգս սպաննէ խիստ ճարտար զգրաստն։ Եւ ես, զոր փորձել եմ, նա կու ասեմ, որ շատն ի յայս ազգ ցաւոցս եբ հաստատի՝ դժար բժշկի, և քչիկ գրաստ խալսի յիրմէ։ Այլ մենք գրել ենք զմեր ջանքս ի յայս ցաւուս ծառութիւնն, զոր իսկի կարցաք մեք փորձեցաք ի մենէ և յառաջնոցն և գրեցաք.

[Ն]շանքն այս է չոր խունանին. աւրղնայ գրաստն զէդ բարակցաւու, և փորոյն ջղերն քաշվի դէպ ի ներս, և ձկտի ամէն կաշին և խոշրնայ և հաստնա. և եբ զարկնես ձեռաւքդ||(102ա) ի վերայ քովա<ն>ցն, նա զէդ նագար ձայն տայ և ջանա, որ հազայ, և չկարէ հազալ, և թվենայ, թէ ոսկոր է կլել ու կու հարուզինք։ Եւ եբ այս նշաննիս մաւտեցել լինի, նա չկարէ զերծանել ի մահուանէ, ապա թէ յառաջքն կարես ճանչել, դու արա դեղ զայս.

Դեղ, որ բանայ և սրբէ զչոր խունանն, որ չուն[ն]ա հոտ։

Առ Գ (3) հաւուկիթ հում, ծակէ և հան զամէն մէջն ու լից զԳ (3) յաման մի, ու չափէ երկուքովն մեղր, ու մեկովն աղէկ մորէ ու խառնէ հետ հաւուկթին հոռոմ ձէթ և կամ մրտի ձէթ կամ մանուշկի, զոր հանդիպի, յայս չաքս զոր ասցաք, և խառնէ ի հետ լեսած պղպեղ հինգ մթխալ և յայն դեղէն,||(102բ) որ ասեն իր ֆարխութզին՝ մրտի տակ, հինգ մթխալ։ Ամէնս լեսած և մաղած խառնէ հետ այն հաւուկթին, որ այլ նիւթն ի հետ կայ, ու ի յիրմէս բաժին մի լից ընդ գրաստուն փողքն ի վայր ու բաժին մի փչէ ընդ քիթն ի վեր և կապէ զգլուխն բարձր՝ զէդ կէս պահ, և ապա արձկէ և քայլեցոյ՝ զէդ հինգ վեց քայլ, և ապա կապէ զպախուցքն ի ձեռքն ի շքելեացն ի տեղն, որ ցածցնէ զգլուխն. եթէ քաշէ զգլուխն, նա պիտի ելնէ ամէն գիճութիւնն ընդ քիթն։ Եւ արա զայս Գ(3) աւր հետ իրաց այսպէս։ Եւ թէ չիջնու գիջութիւն, դու առ ջանդիանէ, ռեւանդ, կասլայի սրտուղ, յամէն մեկէ երկու ||(103ա) մթխալ, մեղրջուր՝ նուկի ու կէս, և լեսէ զդեղերն ու խառ-

նէ հետ մեղրջրին. և լից ի յիրմէ բաժին մի ընդ փողքն ի վայր և բաժին մի ընդ քիթն։ Եւ արա զայս տարպայնիս ինչվի այշողնայ։ Եւ թէ հոտ չգայ ու այշողնայ այս ծառութեամբս, նա խունանն դեռ չէ խոցուել։

Այլ դեղ այս չոր խունանիս.

Առ հազրի ունդ նուկի մէկ, անմեռկի բազկի ջուր՝ նուկի մէկ, վարթի ձէթ՝ թուղթ մի, զաֆրան՝ թուղթ մէկ, խաշխշի քամուկ՝ կէս թո[ւ]ղթ, կաւդայի հունդ՝ թուղթ մի, թաժայ աւշընդրի ջուր՝ թուղթ մի։ Լեսէ զդէղերս ու խառնէ ընդ ջրերն և լից զինք յարճիճէ աման և պահէ, և եբ ի կարիք լինիս, առ ի յիրմէ մթխալ Գ(3) և խառնէ ընդ կէս||(103բ) թուղթ վարդի ձէթ և ընդ նուկի մի մեղրջուր, և լից Գ(3) աւր ընդ գրաստուն փողքն ի վայր, ու տուր իր խոտ, որ ուտէ յայն աւուրքն, որ կու ծառայես զինք այս դեղովս, ու կապէ զինք ի գետեղեր, և ժամ ժամ ի շուրջ ած։ Եւ այս փորձած դեղ է։

Այլ դեղ չոր խունանին, այն ազգին, որ գայ ընդ քիթքն սպիտակ ջուր.

Քամէ զսպիտակ խաղողն և առ յիրմէ նուկի ու կէս և խառնէ ի յինք լեսած մուռ մթխալ Գ(3), ռևանդ՝ մթխալ Դ(4), լեսէ և մանդր աղայ և մաղէ, և խառնէ յայն ջուրն, և լից ընդ ձախ քթափողն ի վայր։ Եւ արա զայս եւթն աւր։ Եւ բռնէ զքիմքն, որ շնչարգելի քիչ մի։ Եւ այսպիսի ծառութեամբ լինի, որ բժշկի||(104ա) չոր խունանն, քաշվի ջղերն և կռկվի դէպ ի ներս, և գայ ընդ քիթքն հոտած ջուր։ Եւ այս վասն այնոր լինի, որ յղուղն խոց լինի և դժար բժշկի։ Եւ կարէ լինել, որ ներքև քմացն աւելի մսեր կենայ։ Եւ չեմ ի տեսնուլ պատեհ այսոր ծառութեանս, այլ և ջանք դնել պարտ է։ Եւ յորժամ կտրի ի կերոյ, գիտացիր, որ ի սիրտն հասել է և ոչ բժշկի։

[Դ]եղ գէջ խունանին.

Առ մեղրջուր նուկի Ա(1), հոռոմ ձէթ՝ թուղթ Ա(1), խառնէ ընդ իրար ու լից ընդ քթափողն երեք աւր։ Եւ թէ տեսնուս, որ իջնու գիջութիւնն հեշտ ընդ քիթքն, դու առ կաղամբ նուկի մէկ, խուպայզ՝ նուկի մէկ, քուռաթ՝ նուկի Ա (1), հին խոզտի՝ նուկի մէկ ||(104բ), խաշէ զբանջրնիտ ու քամէ, ու դիր ի հաւանն ու ծեծէ, ու խառնէ զխոզտինի հետ։ Եւ առ և արա զիրենքդ զէդ խոզկաղնի

մեծ մեծ, ու ձգէ յիրմէ ընդ գրաստուն փողքն ի վայր հինգ կամ եւթն։ Եւ յորժամ կլնու՝ դու խմցոյ իր շարապ խընդխունի։ Եւ զայս արա երեք աւր։ Եւ հետ երեք աւուրն խմցոյ իր հին գինի ու սեվ մորհամ հանչաք մի, որ գիտենաս, որ կարէ առնուլ գրաստն։ Նա բժշկի, թէ չլինի խոցն սուր ու յիշվաւղ։ Ու թէ լինի սուր և յիշվաւղ՝ դու խմցոյ իր մեղրջուր հետ չորրորդ դեղին, զոր և մեր գիրքս մեք ենք յիշել զինք ու գրել։

Այլ դեղ այս ցաւուս.

Առ ֆարխութզին ու կիպեռիս, ու ճաւշիր, ու||(105ա) զընճպիլ, ու վայրի քրեֆսի հունդ, ու զուֆայ, ու աղվանաղի, ու քիթիրէ, ու զաֆրան, մուռ, սապռ, աւթխաւր, քլիլմելէք, համամայ, յերկայն զրևանդ, բարակ խանդարիուն՝ յամէն մեկէ չորս մթխալ, լեսէ ու մաղէ, ու լից ի ներս կէս նուկի մեղր ու շաղէ, և արա հայնցեղ զէդ կաղնի՝ զամէն մէկ մթխալ երեք ու ձգէ ընդ փողքն ի վայր՝ յամէն աւր մէկ մի, ու ձմեռն հին գինի լից ընդ փողքն ի վայր՝ կթխա<մ> մի, ու ամառն ջրի գինի ՚վ ի հետ քիչ մի վարդի ձէթ։

Վասն խունանի, որ ի զաւդվածքն լինի։ Նշանք. յաւելնա ի գրաստն թմբրութիւն, ու թուլնայ գլուխն ու ականջքն դէպ ի վայր, ||(105բ) և իջնու ընդ քթափողն ժանգջուր, ու ավըղնայ ամէն մարմինն, ու ուռենայ զաւդվածքն պինդ ուռէց, և լարի ագոյն մազերն և չորնայ, և կախվի արանքն, և հանգցնէ զոտվին ի դեհէ դեհ։

Ծառութիւնն այսպէս արայ. շառտէ զբազկունքն և խարէ զաւդվածնին զայն տեղն, որ ուռէցն կենայ, զորդ վարոցնի, որ իջնու ի յիրմէ ջուր։ Եւ ապայ [առ] աղցած քունչաիա նուկի մէկ, և դիր զինք ի նոր պուտուկ, և լից ի վերա հին գինի՝ նուկի երեք, եփէ՝ որ մնայ կէսն։ Եւ առ յիրմէ յամէն աւր թուղթ մի և խառնէ ընդ ինք ջրկոտիմն և հոռոմ ձէթ թուղթ Ա(1), ջաւշիր՝ մթխալ երեք, և կանգնե||(106ա)ցոյ զգրաստն ի ցուրտ տեղ, և թէ յամառն լինի՝ դու մտոյ ի ջուր և շփէ և քերէ։ Եւ թէ կեղևի ի խարանացն ու խոցերուն տեղեսատանն ու բացվի խոցերն, նա պարտ է դեղդրել որպէս զայլ խոցերն։

[Դ]եղ խոցերոյ.

Առ ժանգառ և արջասպն և խլխտիս, լեսէ ու մաղէ և շինէ մարհամ հոռոմ ձիթով, և աւծնէ իրովն զկաշին։

Այլ դեղ խունանի, որ ի զաւդվածքն լինի.

Առ սատանայի խիարի տակ ծեծած՝ նուկի Ա(1), նատրուն, որ ազգ մի ի բուրակնոյն, թուղթ մէկ, թուղթ մէկ մուռ, սապոն՝ թուղթ մէկ, համամա (=համամայ)՝ կէս թուղթ, վայրի դաղձն՝ թուղթ մէկ, ծեծէ ու մաղէ և խառնէ յիրմէ մթխալ‖(106բ) հինգ և նուկի ու կէս ջուր ու քիչ մի ժանգառ. խմցոյ գրաստուն։

Այլ դեղ այս ցաւուս.

Առ մկնտախ ու խորվէ ու կեղևէ, ու առ զմէջն ու կշռէ մըթխալ Բ(2), մեղր՝ թուղթ մէկ, հոռոմ ձէթ՝ թուղթ մէկ։ Ծեծէ զմկընտախն ու խառնէ ընդ հոռոմ ձէթն ու ընդ մեղրն ու ձգէ ընդ գրաստուն փողքն ի վայր, որ կլնու, ու արա զայս երեք աւր՝ յամէն աւր երեք տարպա. նա բժշկի։

Այլ դեղ այս ցաւուս.

Առ ճոն, աղայ ու արայ ալոյր, ու խառնէ ի հոռոմ ձէթ ու գինի ու ջուր ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։

[Ա]յլ նշանք խունանի, որ շոյտ բժշկի։ Նշանն այս է, որ երթայ ընդ քիթքն գիջութիւն ու չլինի հոտած, ու չքա‖(107ա)շվի փորն խիստ ի ներք[ս], ու դիմէ յուտելն խիստ։

Խաւսեր (=խուրսեր), որ տան գրաստուն, որ վախեն թէ խունանն լինի, տան իր երեք չորս աւր հետ իրաց, նա չլինի խունանն, և աւգտէ զարմանալի աւկտութիւն. առ վայրի քրեֆս նուկի Ա(1), զաֆրան՝ թուղթ մէկ, լեռին դաղձն՝ թուղթ մէկ, յաճի խարտուկը՝ թուղթ մէկ, լեսէ և մաղէ և շաղէ բարկ քացախով, ու շինէ խուրսեր մթխալ մթխալ։ Եւ առ յիրմէ խուրս մէկ և լեսէ և խառնէ ի սպիտակ գինի. թէ քուռկի կամենաս տալ, նա լինի գինոյն չաքն կէս նուկի, և թէ մեծ գրաստու, նա լինի գինոյն չաքն նուկի ու կէս։ Եւ խմցոյ գրաստուն ու կանգնեցոյ յարձակ տեղ։

‖(107բ) Ծ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀԱՄՐ

Նշանքն այս է, որ է ֆրնտու, հեվայ գրաստն խիստ, և լարիպինչքն, ու թուլնա գլուխն և ամէն զաւդվածքն, և փայտնայ ոտվին, և կտրի ի կերոյ, և ի սկիզբն այս ցաւուս՝ ինչվի յերեք աւրն՝ լինի շունչն տաք, և հետ երեք աւուրն պաղ լինի շունչն ու այլընդլի, ու խփի աչվին, ու խիստ դժար շարժի զամէն զաւդվածքն, ու տքալով գողէ, և չկարէ քայլ փոխել քանձ խիստ դժար, և երբ ընկնի՝ դժար ելնէ յոտն, ու լինի, որ քրտնի անդմունքն։

[Դ]եղ զայլցաւու, եբ ուժով լինի.

Առ բողկի հունդ ճանկ մի, լեսէ ու մաղէ ու դիր զինք ի պտ‖(108ա)ուկ մի, ու լից ի վրայ նարընջի ծաղկի ջուր՝ նուկի երեք, ու եփէ զինք քաջ, ու առ ի վայր, որ եղկնայ, ու լից ի յիրմէ բաժին մի ընդ փողքն ի վայր, ու բաժին մի դիր հոռոմ դեղ, և առ ի երակ ու հան յարենէն աղէկ մի, և ապա կապէ զերկնին ամուր քթեթնով, ու առ քացախ և ջրխառնէ ջրով և շողցոյ, և լից ի վրայ այլ մարմնոյն. և լինի ջրին չաքն լիտր ինն, և քացխին՝ լիտր ու կէս, ու լից ի վրա ուսացն, որ իջնի հետ ի հետ ի վրայ բազկացն, ու չորս աւր զարի մի՛ տար գրաստուն, որ ուտէ, ու հետ չորս աւուրն կանգնեցոյ զինք երեք աւր ի գնացք ջուր, որ թաղվի ոտքն ինչվի քովքն ի ջուրն, ու չէ պարտ կան‖(108բ)գնեցնել քանձ երեք աւրն այլ աւելի ի ջուրն։ Եւ յամէն աւր տարպա մի հան զինք ի ջրէն ու ածնէ զինք անպակ գինով ու հոռոմ ձիթով աղէկ շատ ու մարձէ դէպ ի վայր։ Երբ տեսնուս, որ ոտվին աղէկնա ու թուլնայ ու քայլէ աղէկ, դու զինք մտոյ այլ վայր ի ջուրն ու հան այլ վայր, ու ածնէ ու անցմնեցոյ։ Ու երբ տեսնուս, որ դարձվորտէ, դու տուր իր զայն խոտն, որ ասեն իր անուն կորի ագի և կու բուսնի ի դաշտն և իր ծայրերն լինի կուկէռ, զէթ կորի ագի, և վասն այսոր կոչի այս անունս իր։ Եւ լինի այս ցաւս ի ջրին խմելոյն, ևս առաւել՝ եբ կալնու զայն ցաւն, որ ասեն‖(109ա) իր ըռիալան։ Եւ այս ցաւս վատուժ է. ճարտար հայընդի։

Այլ բժշկութիւն զայլցաւուն.

Թ՛է լինի ի գարոյ՝ տուր ցորեն, որ ուտէ։ Եւ թէ լինի ի ցորնէ՝ դու տուր զարի, որ ուտէ։

Այլ բժշկութիւն այս ցաւուս.

Եբ իջնի այս ցաւս ի մէջ սմբակացն և մնայ ի տեղն, դու ծառայէ այն ծառութեամբն, որ ասցել ենք ի սմբակաց ցաւութիւնն։

Այլ բժշկութիւն այս ցաւուս.

Առաջինքն են ասցել. առ սուղաէ, որ է խոտ, լեսէ և մաղէ, և առ դրամովն քանի դրամն, շալկէ երկու տարպայ և փչէ ընդ գրաստուն քթափողքն, և անցմնցեցոյ զինք աւր մի և գիշեր մի, ու տես զջուրն, որ իջնու ի քթացն, թէ ‖(109բ) յիստակ լինի, նա ճար-

տար ողջնայ, դու արժէ զինք կանաչ խոտով, և թէ դեղին զարկնէ ջուրն, որ իջնու ի քթացն, դու գիտացիր, որ գրաստն մահու է։

ԾԱ. ՅԱՂԱԳՍ ՈՒՌԵՑԻ Ի ՔԱՄՈՅ, ԵՒ ՈՐ ՉԿԱՐԷ ԹՐՐՔԵԼ ԵՒ ԳՈՉԵԼ

Նշանքն այս է, որ քըթահրի ու ջանայ, որ նստի ու դառնայ, հայի դէպ ի յետ։

Բժշկութիւն այս ցաւուս.

Առ հին գինի երկու նուկի և տասն նուկի ջուր և լից ի վրայ։ Եւ առ խոզտի նուկի մէկ և անգուժատ՝ դրամ տասն, ծեծէ զանգուժատն ու խառնէ ի հետ քիչ մի ալոյր, ու խառնէ ի ջրած գինին, ու եղկցոյ ու դիր հոռոմ դեղ, և ապա առ կանաչ գնձի ջուր ||(110ա) նուկի մի և խմցոյ քիչ քիչ. նա աւգտէ։

ԾԲ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ԿՈՏՐՏՈՒԿ*, ԵՒ ԱՅՆ ՔԱՄՈՅՆ, ՈՐ Ի ՅԱՅՍ ՅԱՒԷՍ ԼԻՆԻ

Նշանքն այս է. եբ տեսնուս, որ գրաստն ուռենայ ու փքռի, որ քրտնէ, որ քիրտն ընդ ինք ի վայր իջնու ու կտրի զողն ու թրիքն։

Բժշկութիւն[ն] այս է.

Առ ի յայն խոտէն, որ է ի տերևն զէդ ակներ ու սպիտկգոյն և առնու հունդ և ուննա կուտ, ծեծէ ու քամէ զիր ջուրն ու խառնէ ընդ արդար եղն և խմցոյ գրաստուն։

ԾԳ. ՅԱՂԱԳՍ ՄԱՂՁԻՆ, ՈՐ ՁԱՒՐՆԱՅ

Նշանքն այս է. ձգի ոտվին ի կանգուն և խփէ զաշվին, և զողըն լինի կարմիր, հաստնայ ու ուռենայ գլուխն ու փողքն։

Բժշկութիւնն այս է.

||(110բ) Առ սպիտակ խարբախ և սղանճի տակ՝ յամէն մեկէ մասն մի, պարսիկ աղ՝ մասն և կէս, ծեծէ և մաղէ և փչէ ընդ քիթն, որ աչքն արցվէ։ Ու եբ տեսնուս, որ աչքն արցվէ, դու զգլուխն ցած կապէ, որ իջնի այն ջուրն, զոր յղուղն կենայ ի խոցէն։ Եւ մէկայլ աւրն մի՛ տար իր ջուր։ Եւ ապա առ երկու հաւու-

* Յանկում՝ կոտրտում։

կիթ և կտրէ յաման և խառնէ ընդ ինք շրիկ ձէթ՝ նուկի մէկ, և լից ընդ քթափողքն ի վայր։ Եւ արա զայս յերեք աւրն, որ այլ յառաջ ջուր խմցնես, աւկտակար է աստուծով։

Վասն քամոյ, որ ի մաղձէ լինի, չորցնէ զոտվին։

Կտրէ զինք ի կերոյ գիշեր մի։ Եւ ապա առ քացախ և շրիկ ձէթ՝ յամէն մեկէ նուկի Բ(2), ||(111ա) նուշ՝ մթխալ հինգ, աւշնան և քրեֆսի ունդ՝ յամէն մէկէ մթխալ երեք, լեսէ և մաղէ և քշտէ, որ միամորթի ընդ ձէթն ու ընդ քացախն, և խմցոյ գրաստուն, նա աւկտէ։

ԾԴ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՔԱՐԱՔ

Նշանքն այս է. գրաստն գահըլնա ու ուռենայ կուրծքն, որ ի մէջ երկու ձեռացն պինդ ուռէց լինի ու բարձրաբոլորգոյն, ու քանի երթայ զաւրնա, ու հայնց կարէ լինել, որ ցրուի ուռէցն ի փորն ու ի յամէն մարմինն, ապա շատն այն լինի, որ ի կուրծքն լինի ու ի փորն, ու կարէ լինել, որ պատռի ու ելնէ յիրմէ թարախ խիստ շատ։

Բժշկութիւն այս ցաւուս.

Աւծնէ յամէն աւր արդար եղ||(111բ)ով ու աղով և ած ի շուրջ յուշկիկ. թէ հայնց է, որ պատռի՝ նա եղաւ, ու թէ չպատռի՝ դու դիր ի վրայ դեղ զայս. առ սև ձոյթ նուկի Գ(3), չարհոտ՝ թուղթ մի, ճաւշիր՝ նուկի երկու, ջուհուտ մուղլ՝ նուկի մէկ, հալէ զամէնս ու դիր ի ներքս քիչ մի հոռոմ ձէթ։ Ու թէ հինայի ձէթ դնես՝ նա լաւ է։ Ու դիր ի վրայ և, թէ չպատռի, դու ճեղքէ ի ներքևէ, որ ելնէ ու ելնէ թարախն։ Ու եբ սրբի ամէն թարախն ու ելնէ, դու ծառայէ զտեղն որպէս զայլ խոցերն, որ սահմանած է։

ԾԵ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ԸՆԴ ՆԵՐՔՍԵՒԷ* ՈՒՆ[Ն]ԱՅ

Իջնու ընդ քիթն թարախ քիքքին և չուննայ հոտ, որ արց||(112ա)վէ աչվին ու զալիկն ուտէ ի լման։

Բժշկութիւնն այս է.

Առ զմրտին ծաղիկն ու չորցոյ և կշռէ յիրմէ մասն մի, պըղպեղ՝ կէս մասն, մեղր՝ զայն չակքն, զոր յինք շաղղէ, չամիչ ի կտէն հանած՝ քանի [մի], մեղրն՝ երկուք, ծեծէ զամէնն ու միամորթէ ու առ յիրմէ քանի հաւուկիթ մի, ու տրորէ յանպակ գի-

* Յանկում՝ ...որ ընդ փորքացն ներքսև է։

նին, ու լից ի ներս քիչ մի հոռոմ ձէթ, ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։ Եւ այս բժշկէ զամէն ցաւ, որ ի գրաստուն փորոք լինի։

Այլ բժշկութիւն այս ցաւուս․

Առ ցորեն սպկիկ ընդրած ու թրջէ ի հին գինի գիշեր մի։ Ու ալկէ զինք իրովն յամէն յիրիկուն կէս մարծպան։ Տասնուչորս ||(112բ) գիշեր հետ իրաց․ նա բժշկի։

Այլ բժշկութիւն այս ցաւուս․

Առ արդար եղ նուկի Բ(2), սինապ ծեծած՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար ու ձգէ ընդ փողքն ի վայր՝ յամէն երիկուն քանի հաւուկիթ մի։

ԾԶ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ Ի ՍԱՒՏԱՅԷ ԼԻՆԻ

Նշանքն է․ խոշրնայ կաշին, որ եբ շաւշափես՝ նա չոր ցուցնէ, ու կտրի ի կերոյ, ու ուռենա կուրծքն, լարի պնչերն, կարճնայ շունչն, ու չկարէ խմել ջուր, ու լինի մարմինն շող, ու փորն աւելի տաք լինի, քանձ զայլ մարմինն, ու նըգայ ի թրքելն։

Բժշկութիւն[ն] այս է․

Առ հոռոմ ձէթ ու հացի բուրակ, ու մեղր ու եղի ջուր, ու շինէ հոռոմ դեղ և դիր կոտոշով||(113ա), ու դալար խոտ տուր, որ ուտէ։ Ու թէ դարալ (=դալար) խոտ չկենայ, դու զչոր խոտն թաց ի մեղրջուրն ու ցանէ ի վրայ քիչ մի բուրակ ու տուր, որ ուտէ։ Ու տուր իր ուտելոյ ի ժմէ ժամ ճակընդղի բազուկ։ Ու փոընքտացուց զինք անպակ գինով։ Եբ տեսնուս, որ քչկնայ փորոյն տաքութիւնն ու գոզէ ու քրթէ (=թրքէ) ու չնըգայ, ու լինի թրիքն սպկիկ, դու գիտացիր, որ բժշկել է։

Այլ բժշկութիւն․

Առ քահրապա դրամ երեք, պապունիճ՝ դրամ չորս, լեսէ և խառնէ ի տղայի գող և լից ընդ գրաստուն փողքն ի վայր, նա բժշկի աստուծով։

ԾԷ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ԳԼԽՈՅՆ ՂՈՒՂՆ ԼԻՆԻ

[Եթէ ի] ձմեռն [լինի՝]||(113բ) նշանքն այս է․ ձգէ զգլուխն ի դեհէ դեհ ու մթընայ աչվին։

Եթէ յամառն լինի՝ նշանքն այս է․ որ այլընդլի գրաստն և չախէ զգլուխն, դողա բազկունքն, թուլնայ ակընջվին, մթնայ աչքն, շունչն պաղ լինի։

Բժշկութիւն այն ցաւուն, որ ի ձմեռն լինի․

Առ շայեորեճ(՞) դրամ տասն, սնֆուլ, հայխունկ՝ հինգ հինգ դրամ, ճաւշիր՝ դրամ երեք, խախուլայ՝ դրամ չորս, դեղնխունկ ու կամ զաֆրան՝ դրամ չորս, շաքար տապարզի՝ դրամ տասն, ֆրանճ[ի] մուշկի ունդ՝ դրամ տասն, լեսէ ու մաղէ ու դիր ի պուտուկ մի, ու լից ի վրայ ջուր նուկի ԺԲ(12) ու եփէ, որ մնայ չորեք ակն։ ||(114ա) Ու առ յիրմէ ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր՝ յամէն աւր նուկի երեք։

Այլ բժշկութիւն այս ցաւուս․ փորձած։

Առ մրտի տակ նուկի երկուք ու լից ի վրայ ջուր լիտր մէկ, ու եփէ, որ մնայ կէսն։ Եւ ապա առ բաշխտակ և զրևանդ՝ յամէն մէկէ չորս դրամ, զաֆրան, ֆռանկի մուշկի հունդ, յերկայն պըղպեղ՝ յամէն մեկէ դրամ չորս, լեսէ ու մաղէ ու լից ի յայն ջուրն, ու դիր ի յինք քիչ մի շաքար ու շրիկ ձէթ նուկի մէկ, ու զարկ ընդ իրար, ու արայ զինք երեք բաժին, ու խմցոյ զինք յամէն աւր բաժին մի։

Այլ բժշկութիւն այս ցաւուս․

Կտրէ զգրաստն ի կերոյ ի կէս գիշերվնէ ի վեր և առ հին գինի ||(114բ) նուկի վեց, ջուր՝ նուկի չորս, ջրխռնէ, ու առ պղպեղ՝ հատ յիսուն, չաման և ցրդոյ պտուղ՝ յամէն մէկէ դրամ չորս, լեսէ և մաղէ, ու խառնէ ի յայն ջրխռնած գինին, ու կոտրէ ի վրայ իր հաւուկիթ հինգ, ու զարկ ընդ իրար ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր, և ած ի շուրջ յուշկիկ յուշկիկ, ու կանգնեցոյ զինք ի ջըրտեղ։ Եւ հետ երեք աւուրն զենէ խոչքոր մի, ու առ զարիւնն յաման մի, ու լից ի վրայ իր հին գինի նուկի երեք, ջուր՝ նուկի երկուք, և կոտրէ ի վրայ հինգ հաւուկիթ։ Եւ առ խոզի գումն և պատռէ ի ներս, և դիր ի յինք քիչ մի չաման, ու խառնէ ընդ այս ջր||(115ա)խռնած գինիս ու ի յարոյնս ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր, ու կտրէ զինք ի յուտելոյ՝ ինչվի յերկու պահն ցերեկուն, ու զինք ի յետ կապէ յայլ գրաստվէ։

Բժշկութիւն այս ցաւուս, որ յամառն լինի․

Խարէ յակընջթոռքն երկու խարանք, ու դիր խարանք ի յանթքն ու ի փորոյն վերայ խաչք․ և թէ մատակ լինի՝ յարգանդն այլ։ Թէ տեսնուս, որ աչքն ի լոյս գայ ու դարձվորտէ ու շուղնա շունչն ու բարձրնայ ականջն, դու այլ մի՛ ծառայել, զի չէ ի սնիկ,

և կտրէ զինք ի գարոյ հինգ աւր ու տուր իր առվոյտ ու յերդ կամ առվոյտի ուն[տ], որ ուտէ: Թէ աջողցաւ՝ աւրհնել է աստուած, և թէ‖(115բ) ոչ՝ դու առ զեղէգն, այրէ ու առ ի յիր այրած մախրէն դրգալ երեք և ծրարէ զինք ի սերտ քթեթ ու կապէ պինդ, ու դիր զինք ի ջուրն, և առ դեղնխունկ լեսած կէս նուկի ու հինգ հաւուկթի դեղնուց, շրիկ ձէթ՝ նուկի մէկ: Եւ լից զամէնն յայն ջուրն ու զարկ, որ միամորթի, ու լից ընդ փողքն ի վայր: Ու առ ի յայն փշէն, որ ասեն իր մաւրմուր, հան ի յիրմէ երկու փոքր տակ ու եփէ. յերկու նուկի ջուր քաշ եփէ ու խառնէ ու քամէ: Եւ խառնէ ի ներս արդար եղ կամ հինայի ճէթ ու զարկ, որ միամորթի, ու մտոյ զձեռքդ ընդ գրաստուն ոռաղին ու սրբէ: Եւ դիր զայս դեղերս իր հոռոմ դեղ:

‖(116ա) ԾԸ. ՅԱՂԱԳՍ ԽՈՒՄՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍՏՈՒ

Նշանքն այս է, որ այլընդայլի գրաստն և լարվի պնչերն, կախէ զգլուխն և իշանայ, չկանգնի ի մէկ տեղ, կտրի ի կերոյ:

Բժշկութիւն է.

Որ առնուս բվի ղուղ ու գիր լեղին ու արծվոյ ճրագու մթխալ մէկ ու խառնէ ընդ իրար, ու խառնէ ի կարմիր որձ խոզի գող ու լից ընդ քիթքն ի վայր, որ փռընքտայ. և այս դեղովս մարդիքն այլ բժշկին:

ԾԹ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՊԱԽՐԷՅԱՒ

Նշանքն այս է. տեսնուս զգողն, որ գողէ զէդ պտտոր (=պըղտոր) ջուր, ու քչիկ փրշի յայս ցաւէս:

Իր բժշկութիւնն այս է.

Առ գարի ու թրջէ ի քացախն ու խառնէ ի հետ աղտոր‖(116բ) ու ալկէ զինք իրովն:

Այլ բժշկութիւն.

Առ ալոյր ու մորմենոյ տերև չոր՝ լեսած ու խառնէ ընդ գարի փոխինդ, ու շաղղէ ջրով, ու շինէ խուրսեր, ու ջրխռնէ զքացախն, ու տրորէ յինք խուրս մի, ու տուր, որ խմէ:

Այլ բժշկութիւն.

Լեսէ զմորմենոյ տերևն ու դիր ի ջուրն, որ խըմէ: Ու առ խս ցաւս դժար է, ու չէ ի թուել ինձ, թէ գրաստ կարէ յայսոր փրչել:

Կ. ՅԱՂԱԳՍ ԹԸԹԻ, ՈՐ ԼԻՆԻ Ի ՏՈՇՆ ԵՒ Ի ՁՈՒՔՆ

Նշանքն այս է*: Իր բժշկութիւն.

Քաշէ ձար մի յիր ագոյն ու կապէ զթըթին տակն պինդ ու թող զինք հինգ աւր, ու ծխէ ներքեն անծրուծ. նա կտրի ու ընկնի ու բժշկի:

Այլ բժշկու‖(117ա)թիւն.

Ի յորտեղ որ ելնէ ի մարմինն թուխ, առ խիմաղիա կաւ, լեսէ, մանտրէ ու խառնէ մրտենի ձիթով, ու աւծնէ. բժշկի:

ԿԱ. ՅԱՂԱԳՍ ՈՒՌԵՑԻ, ՈՐ ԼԻՆԻ ՅԱՐԱՆՔՆ ԵՒ Ի ՁՈՒՔՆ

Նշանքն այս է. կենայ ուռէցն յարանքն ու ի ձուքն, ու կենայ զամէն աւաղ:

Բժշկութիւն[ն] այս է.

Կանգնեցոյ զինք ի գնացք ջուր, որ դար ի վայր լինի, հայնց, որ եբ դիպի ջուրն ի յոտքն, նա իջցէ զոտքն:

Այլ դեղ: Առ պախրի ճրագու ու մոմ ու բուրակ, եփէ ու շինէ մորհամ ու աւծնէ զարանքն ու ձուքն, ու լից ի վրա իր խիստ պաղ ջուր: Ու թէ ծովու ջուր լինի՝ նա այլ աղէկ է:

Այլ դեղ: Խոթէ բարակ ասղամ ‖(117բ) ի տոշփողն ու ապա ծփէ բարկ քացախով: Եւ կայ, որ եղճով կու քշտէ ի ջրփողն, նա կու բժշկի:

Այլ դեղ: Առ չաման ու բակլայի ալոյր ու չամիչ ի կտէն հանած՝ յամէն մէկէ չակք մի, ծեծէ ընդ իրար, որ միամորթի, ու աւծնէ: Եւ թէ ուռէցն ուժով լինի, խարկէ զինք շող հոռոմ ձիթով:

ԿԲ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ ԹՈՒԼՆԱՅ ԱՐԱՆՔՆ ՈՒ ՁՈՒՔՆ

Բժշկութիւնն այս է.

Առ վարդի ձէթ և հոռոմ ձէթ ու խառնէ ընդ իրար, ու լից ընդ փողքն ի վայր:

Այլ դեղ: Առ կաթն նուկի Ա(1) ու խառնէ յինք շաքար, որ քաղցրնա, ու լից Է(7) աւր ընդ փողքն ի վայր: Թէ չբժշկի՝ դու արա ինչվի տասնուերկու աւրն:

---

* Ձեռագրում բացակայում է այս հիվանդության նշանների նկարագրությունը:

8—1034

Այլ դեղ։ Առ շիրիկ ձէթ*...

||(118ա)...ար խոտ և թէ ինք արծի՝ նա բարոյ նշան է։ Եւ թէ չգտվի խոտ, դու թաց զիր ալիկն ջրով և տուր, որ ուտէ։

Այլ դեղ ելընդի, որ կոչի տուպիայ, որ եբ պատռէ բայտարն, նա ելնէ յիրմէ յիստակ ջուր ու թանայ զտաւպրակն. առ որթոյ թրիք շող շող, դիր ի վրայ պատռած տեղացն. նա աւկտէ։ Ու տես, որ այլ արոյն չթողուս յայլ տեղաց, քանձ ի ճտէն։ Եւ թէ յայլ տեղաց հանես՝ նա աճոկէ իր։ Եւ պարտ է լուծել զփորն բուրկով և սատանայի սեղկով։ Եւ թէ այս ելունդս ելնէ՝ յակնջթոռքն պատռէ, և ծառայէ պաղլեղով և մեղրով։

Այլ դեղ այս ելընդիս, որ ելնէ խէչ երկի և չժմնէ ճարտար ու հանէ։

Բժշկու(118բ)թիւն[ն] այս է.

Մտոյ զձին ի բաղանիս և ծփէ զայն ելունդն, և թէ պատռի ի դրուցնէ, նա բժշկի։ Եւ թէ ի ներքսնէ պատռի, նա դժար է։ Առաւել թէ չելնէ ի քիթքն իրք, նա դիպի ընդ ինք լուծումն և կտրի ի կերոյ, զի այն ուռէցն ի ստամոքն վարէ զլեելվածն ու ուռենայ փորն և խոշրնա կաշին։ Եւ երբ այսպէս լինի իր, հնանայ ցաւն, նա չբըժըշկի։ Եւ թէ նոր լինի ցաւն, նա ծառայվի այսպէս. առ խնկի փոշի դրամ մէկ, լեսէ և խառնէ յամպակ գինին՝ նուկի երկուք, ու փոընքտացո. իրովն բժշկի։

Այլ դեղ այս ցաւուս և այն, որ ուտիճ կոչվի։ Առ դեղին զառիկ ու կարմիր զառիկ՝ յամէն մէկէ դրամ տասն։ Եւ առ ի յայն քարէն, որ գտ||(119ա)վի և կրին մէջն, որ չլինի այրած, լուայ և թնջրով <և> առ յիրմէ քառսուն դրամ, լեսէ և մաղէ և լից ի վրայ բարկ քացախ, որ ծածկէ զինք։ Եւ քա[ն]ի խմէ զքացախն՝ դուն այլ լից երեք չորս տարպայ, ու խառնէ զինք երեք աւր հետ իրաց. և քանի խմէ զքացախն՝ դուն այլ լից և չորցոյ, և լեսէ և մաղէ ի նաշէ մաղ, և եբ սնկիս՝ դու առ յիրմէ ու լուա բարկ քացխով ու չորցոյ ու ցանէ ի վրա խոցին. բժշկի կարողութեամբն աստուծոյ։

ԿԳ. ՅԱՂԱԳՍ ՈՋԼԻ

Եբ բնակի ի գրաստն, նա պիտի գայ մազն ի վայր և խոշրնայ կաշին։

* Ձեռագրի ժ պրակի վերջին թերթը ընկած է: Էջահամարները դրվել են այս թերթի բացակայության ժամանակ:

Բժշկութիւնն այս է։

Առ զմարեմա տակն, լեսէ և մաղէ ու խառնէ ընդ հոռոմ ձէթն, ու աւծնէ զգրաստն։ Եւ մէկայլն աւրն լուայ շող||(119բ) ջրով և մախրով. և այսպէս ծառայել զգրաստն աւրեր, որ բժշկի։

Այլ դեղ։ Առ սնդիկ ու կոտրէ և աւծնէ զգրաստն զայն տեղաստանն, որ մազն փետեալ է, և խառնէ յիր գարին յամէն ափկից երեք չորս հատ կանիփայտորիզ։

Այլ դեղ։ Առ պաղլեղ թուղթ մի, զպիպճպէլ՝ կէս նուկի, լեսէ և մաղէ։ Եւ կանգնեցոյ զգրաստ յարեգակն և շփէ յինք զդեղս։

Այլ դեղ։ Եփէ զթրմուզն ու զիր ջուրն ու լուայ իրովն զգրաստըն և թող, որ ցամքի։ Եւ ապա եոցոյ զսև ձոյթն ու զհոռոմ ձէթըն ընդ իրար և աւծնէ իրովն։

ԿԴ. ՅԱՂԱԳՍ ԿՈԼԻՆՋ ՑԱՒՈՒ

Նշանքն այս է, որ թուլնայ շլնիքն ու բռընվի զաւդվածքն ու դողայ||(120ա), նստի ու թապլտի, ու ելնէ ի բերնէն փրփուր։

Բժշկութիւնն այս է.

Առ թառանգոյն դրամ տասն ու արծկէ զինք յերեք նուկի շող ջուր ու լից ընդ փողքն ի վայր, և անցմնցեցոյ։

Այլ դեղ։ Առ դեղին հլելիճ հանած ի կտէն դրամ տասնուհինգ, մրտի տակ՝ դրամ երեք, ծեծէ, որ մանտրի, ու լից ի վրա ջուր՝ նուկի տասն, եփէ, որ մնայ նուկի երկուք, եւ քամէ ու դիր հոռոմ դեղ, ու կտրէ զգրաստն ի կերոյ, և անցմնցեցոյ։ Եւ այս դեղս աւկտէ ոչխարաց և պախրէաց։

Այլ դեղ։ Թաթխէ զձեռքդ ի մեղրն և ի ձէթն, ու մտոյ ի գրաստուն որովայնն ու սրբէ։ Եւ առ մեղր և եփէ, որ թանձրանայ, ու խառնէ յինք սակամունի՝ դրամ մէկ, և ամբրաւ շաղղծոյ՝ դրամ||(120բ) երեք, ու շինէ զինք զէթ հաւուկիթ մի ու դիր ի գրաստուն որովայնն։

ԿԵ. ՅԱՂԱԳՍ ՄԿՆԱՑԱՒՈՒԹԵԱՆ

Նշանքն այս է. քրտնէ ագէտակն և ապա այլ մարմինն, թուլնայ գլուխն, շանթնայ աչվին, ո[ւ] ել ու ելէ, որ վազէ, ու չկարէ վազել, և թէ ձգեն յականջն խիճ մի, նա չյիմնա, որ թախթփէ, ու ձգէ ու կտրի ի ջրէ։

Բժշկութիւնն այս է.

Կապէ ներքև ականջթռացն խէշ փողացն ու պատռէ շուրջանիկէ ու լից աղ ի պատռածն ու շփէ սերտ, և ապա խարէ զպատռածն։

Այլ դեղ։ Ճեղքէ յականջթռոքն, և առ մուշք դրամ մէկ, և աղայ զինք հին գինով, և լից ընդ քթափողն ի վայր, որ փռընքտայ։

‖(121ա) ԿԶ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՆ ԿԱՆԱՉ ՏՈՒՂՏ ՈՒՏԷ

Նշանքն այս է․ թուլնայ զաւզվածքն, առաւել՝ պռունգն։

Բժշկութիւնն այս է․

Առ ռասան ու եփէ ու առ զջուրն ու լից ի ներք քան ի զինք հին գինի ու խմցոյ գրաստուն։ Եւ առ բուրակ դրամ տասն, լեսէ ու յերոյ զինք քացխով ու դիր ի յինք քիչ մի շաքար և զարկ, որ միամորթի, ու ածնէ զգրաստուն ամէն մարմինն, զարդի բաղկացն, և ածնէ արդւր եղով զպռկունքն։

Այլ ուժով դեղ։ Առ լեսած զնճպիլ մթխալ տասն ու եփէ զինք յարդար եղ, որ լինի թուղթ մի, և ածնէ իրովն զգրաստուն պռկունքն։

ԿԷ. ՅԱՂԱԳՍ ՈՒՏԻՉ ՑԱՒՈՒ

Նշ‖(121բ)անքն այս է, որ խոցն աւր ըստ աւրէ ուռվի ու լինի խոց հոտած, ու կարէ լինել, որ լինի ի գրաստուն ագէտակն, նա կարմրի ու ուռվի։ Ու թէ պէտ չայնեն՝ նա կտրի ու ագին ընկնի։

Բժշկութիւն, զոր ացել է Ուսուֆն․ փորձած։

Առ կարմիր զառեկ ու դեղին զառեկ ու կալէքար ու խախխայ՝ յամէն մէկէ թուղթ մէկ, սպիտակ աւշնան և ապակ կիր՝ յամէն մէկէ թուղթ մէկ, լեսէ զամէնն ու մաղէ, ու շաղղէ զինք գինով ու դիր յարեգակն, որ չորնայ, ու աղա զինք ու պահէ, ու եբ սնկիս՝ առ մուշախայ ու թաթխէ զինք ի ջուրն ու թաթխէ ի դեղն ու դիր ի վրայ խոցին՝ յերիկվնէն ի վեր ինչվի լոյսն, ու վաղն հան ու սրբէ։ Եւ‖(122ա) <վ> այլ վայր դիր ինչվի աջողնայ։ Եւ թէ լինի տեղն հայնց, որ չկարես դնել մուշախայով ու կապել, դու ցանէ զդեղն ի վրայ ու դիր ի վրայ կաղըմբի տերև, ու ծածկէ զտերևն երկու երեք տեղ, և դիր ի վրայ մուշախայ։

Այլ դեղ այս ցաւուս․ առ մաքոյ պճեղն և այրէ ու լեսէ, ու խառնէ ի մեղրն, ու դիր ի վրայ խոցին։

Այլ դեղ ուտչի և այլ խոցերոյ։ Առ բամբկի կտի մէջ, լեսէ ու մաղէ, ու ցանէ ի վրայ խոցին։

ԿԸ. ՅԱՂԱԳՍ ՇՈՒՌՆԱԽԻ, ՈՐ Է ՔԱՅՊԱՐՆ

Եւ նշանքն այս է․ նման է այս ցաւս ի շուկակն, ու չառնու զամէն ձեռն, և ելնէ յիրմէ գիճութիւն և թարախ։

Բժշկութիւնն է։

Գիտացիր, որ իշվածքն, որ իջնու ի չորս ոտքն ու*‖(122բ) իջնու ի բազկացն ի խորու տեղեստանն, նմանէ ի շուկակն, ելնէ ի յիրմէ ջուր և թարախ ու կծկի ոտքն։ Եւ այս ցաւս, երբ բնակի ի գրաստն, նա չլինի ի զաւզվածոց խունան։ Եւ աստուած է ճշմարտագէտն։

Առ զբուրակն և յերոյ շող ջրով, և ած[ն]է իրովն զքածպարն, ու թող երեք պահ, և ապա առ ժանգառ ու մոմ ու հոռոմ ձէթ, ու շինէ ածնելիք, ու ածնէ յամէն աւր երեք տարպայ։ Եւ առ երակ ի բազուկն ընդ ներքսէ և ընդ դրացէ, ու շառտէ զքածպարն, ու լուայ զինք անպակ գինով, ու լեսէ զխախիայն, ու շփէ զինք ինչվի հատնայ ու թանձրնա շառտուկքն, ու լեսէ զխախիայն ու‖(123ա) խառնէ ընդ սև ձոյթն, ու ցանէ ու շփէ զինք ի վրայ։ Եւ ի ջրոյ մտցնելոյ պատրաստ կալ։

Այլ դեղ․ փորձած։ Լուայ զքածպարն շող ջրով սպկիկ, ու թող, որ ցամքի։ Ու առ մեղր դրամ քսան ու դդմի կտոր ու այրէ, որ լինի գործելի, լեսէ և խառնէ հետ մեղրին, և ածնէ զքածպարն, ու կապէ քթեթով՝ երեք աւր հետ իրաց։ Եւ հետ երեք աւուրն արծկէ ու տես թէ աջողցաւ։ Ու թէ չաջողցաւ՝ դու ածնէ երկու երեք հետ այլ՝ ինչուր աջողնայ։

Այլ դեղ։ Առ քուշնայի ալոյր, խառնէ ի գինին ու ի մեղրն, ու ածնէ իրովն, հայնցու թէ առնուս զբակլայի ալոյրն։

Այլ դեղ։ Առ զխոզին չոր աղբն ու եփէ ի ջուրն, ու‖(123բ) յերոյ զինք քացխով ու ածնէ։

Այլ դեղ։ Լեսէ զգխթորն ու ցանէ ի վրայ․ բժշկի։

Այլ դեղ․ փորձած։ Առ հոռոմ ձիթի մրուր ու պինդ գինի, զարկ ընդ իրար, ու լից ի յինք քիչ մի հինայ, ու դիր ի վրայ քածպըրին։

* Ձեռ. կրկնված է՝ իջնու ի չորս ոտքն ու։

Այլ դեղ։ Լեսէ զքար մարտսանքն, որ լինի զէղ ծարոյր, ու լից ի ներք բարկ քացախ քիչ մի ու հոռոմ ձէթ, ու շինէ հաւնդեղ ու ածնէ։

Այլ դեղ, որ ի ձեռվին լինի։ Առ սև թուզ հատ տասն ու թրջէ գիշեր մի ի քացախն, ու հան ու ծեծէ, ու դիր ի վրայ ու կապէ։

Եւ զայս դեղերս, զոր ասցաք, յառաջ լուայ զխոցն ու թող, որ ցամքի, և ապա դիր ի վրայ զդեղն։

||(124ա) ԿԹ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՊԱՏԽՈՒՆԱՄ

Նշանքն այս է. գրաստուն ոտքն ուռենայ հետէն ու հետէն նստի. և կարէ լինել, որ ելնէ ի յիրմէ դեղին ջուր։

Բժշկութիւն[ն] է.

Առ տղտի տակ և ճեղքէ ու հան զմէջն, լեսէ ու աղայ ու խառնէ ընդ խոզտի, որ թաժայ լինի, ու հան զինք ի վրայ քթեթի, ու դիր ի վրայ խոցին։

Այլ դեղ։ Առ զդեղն, որ կոչի ֆախրի* հութ, դրամ ութ, փիճոյ խէժ՝ դրամ չորս, շարհոտ՝ դրամ ութ, աղայ ու շինէ <ու> հոռոմ ձիթով ու մոմով մորհամ ու ածնէ իրովն զուռէցն։

Այլ դեղ, Ապի Ուսուֆին ասցած։ Առ զշահմիհանդալի թուփն իր տակովն, եփէ ու ծեծէ ու դիր ի վրայ ուռէցին ու կապէ||(124բ), և ապա ածելէ զինք ու թող յինք տզրուկ։ Եբ թողու տզրուկն, դու առ մանդր աղ ու շփէ զտեղն խիստ քաջ։ Թէ ուժով լինի գրաստն, դու խայծղնէ զինք ու դիր ի յինք զճիճին, որ կոչի յիշոցք, ու պաղլեղ, ու շողցոյ ու ածնէ զինք տասն աւր հետ իրաց։ Եւ ապա ածնէ զխոցերն, որ լինի յետև, վարդի ձիթով։ Եւ եբ խոցնայ, դու ծառայէ զէդ այլ խոցերն։

Հ. ՅԱՂԱԳՍ ՄԿՆԱՏՄԵՐՈՅ

Նշանքն այս է. եբ ելնէ մկնատամն ու թամբեն զգրաստն, նա խոցնայ։

Բժշկութիւնն է.

Եփէ զաւշնանն ի ջուրն ու լուայ զինք սպրկիկ, ու թող որ ցամքի, ու ածնէ զինք քաղցր կարգով յաւրն երկու տարպայ ու մի՛ թամբեր||(125ա) ու մի՛ հեծնուր, ինչվի աղէկ աջողնայ։

---

* Ձեռ. ր-ի վրա սխալ կերպով ավելացված է լ։

ՀԱ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ԿՈՉԻ ՀԼԵԼԻՃ, ՈՐ ԼԻՆԻ ՅԱԿԱՆՋՆ Ի ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն այս է. իր ելունդն նման է ի հլելիճն ու ցաւի ու մեծնայ ու բացվի։

Բժշկութիւն[ն] է.

Առ զարէ ալոյր ու բարկ քացախ ու շինէ լանթակ, ու դիր ի վրայ ելընդին յաւրն երկու տարպայ. նա պիտի կակղցնէ զինք։ Ու երբ կակղնայ, դու կտրէ զինք ի տակն ածելով ու ցանէ ի վրայ տեղացն մանտր աղ, ու դիր ի վրայ այն դեղէն տարպայ մի, ու լուայ զինք վաղն շող ջրով, և ցանէ ի վրայ քուշնայի ալոյր, և շաղղէ զքուշնայի ալոյրն ու զմեղրն ընդ իրար, և հաւու թևով ածնէ զինք. որ (=ու) տես, որ մատաւմբտ չհասցնես, զի ահոկէ։

||(125բ) ՀԲ. ՅԱՂԱԳՍ ՌԱՄԱՏԻՍԻ

Նշանքն այս է. իջնի ընդ քիթն ջուրն ու ՚լինի հոտած, և փաքայ և արցվէ աչքն։

Բժշկութիւնն այս է.

Լից ընդ քիթն ի վայր մանիշկի ձէթ երեք աւր, որ փռընքտայ, ու խաշէ զաղի ձուկն ու լից զիր ջուրն ընդ քիթն ի վայր, որ փըռընքտայ, ու ծխէ ներքևն յատպէ ու խունկ, ու ծածկէ զգլուխն, ու ծուխն ընդ քիթն ելնէ։

Այլ դեղ։ Առ զայն ջուրն, որ ելնէ ի սահնէէն, որ կու շինվի մանր ձկաւմ, մասն մի, արդար եղ՝ կէս մասն, խառնէ ընդ իրար ու լից ընդ ամէն քթափողն քուռճայ մի։ Ու մի՛ թողուր, որ ցածցնէ զգլուխն, որ վայթէ, ու մի՛ խիստ բարձր կալնուր, որ չհասնի յղուղն։ Ու ինչվայն արայ ինչվի ձգէ||(126ա) ընդ քիթն կտորնի խլինք։ Ու թէ մէկ աւրն ձգէ ընդ քիթն, դու ծառայէ այլ վայր՝ ինչվի ձգէ, ու հանգոյ զինք աւր մի։ Եւ փռընքտացոյ զինք արդար եղով։ Եւ ձգէ ընդ փողքն ի վայր կարագ։

ՀԳ. ՅԱՂԱԳՍ ՎԻՐԱՑ, ՈՐ Ի ՖՐԱՅԻՆՆ*, ՈՐ ԿՈՉԻ ՋԻՍԽՈՅ

Ելնէ ելընդնի ի գրաստուն երեսն ու ի բազկունքն և ապա հաւսրի ի յամէն մարմինն։

Նշանքն այս է. լինի բոլոր, ու բացվի ակներ, ու լինի չոր չոր, ու քիչ մի գիճութիւն իջնու ընդ ինք։

---

* Ցանկում՝ Ֆարցին։

Բժշկութիւնն այս է.

Առ սպիտակ կղիմիտր, որ ււինի հասել յինք ջուր, եւ զայն ակներն աղէկ շփէ՝ վաղն ու յերիկունն։ Եւ լուայ զինք պախրշի գօզով. նա պիտի որ ելնէ յիրմէ զէդ կորեկի հատեր։ Եւ առ աղէկ կալէքար, լեսէ||(126բ) ու մաղէ, ու ի վրայ ցանէ, ու լըվայ զխո-ցերն այլ վայր[ի] պախրշի գօզով՝ վաղն ու յերիկունն. նա բժշկի։

ՀԴ. ՅԱՂԱԳՍ ԳԱՅԼՑԱՒԻ

Նշանքն. լարի շլնիքն և ակընջվին և քաշվի աչիցն սեւուցն, որ սպիտկուցն շատ երևնայ, և փայտնայ շլնիքն, որ չհասնի ի գե-տինն և կտրի յալկէ և ի ջրէ։ Պատճառքն լինի ի հովէ և ի քրտնելոյ, որ դիպի ի յինք քամի ու պաղի, և ի խոցէ. որ յարեգակն կապեն, նա ի յայս ցաւս ընկնի. և է դժար ցաւ։

Բժշկութիւնն այս է.

Գիտացիր, որ այս ցաւս խիստ պեղծ ցաւ է, և պարտ է աղէկ ծառայել։ Կապէ զգրաստն ի մութն տուն մի և առ մաքի ու զենէ ու քերթէ, ու առ զմորթին||(127ա) ու շող շող հագոյ ի վրայ գլխոյն ու շլնեցն, որ հասնի, և զբուրդն ի դուրս արայ։ Հետ այնոր առ արդար եղ ու շողցոյ, և լից ընդ ականջն ի վայր, և ածնէ զա-մէն կոնակն ու զողն ու զքովքն, ու տուր առվույտ, որ ուտէ, և հա-նապազ ի խեչն կեցիր ու բարձր կապէ, որ չնստի, ու զմոշին ու զխնկին փոշին ծխէ ներքեն, և վառէ զմոշոյն փայտ ի խեչն. և թէ չկենայ մոշոյ փայտ, նայ հայնց փայտ վառէ, որ մուխ չայնէ։ Եւ լից ընդ փողքն ի վայր խանդխունի շարապ։ Եւ զայս շարապս բժշկապետերն գիտեն։

Այլ դեղ։ Առ խողտի և փիճոյ խէժ, և բնկի խէժ ու հոռոմ ձէթ, ու շինէ զինքս ածնելիք, ու ածնէ զգրաստուն ամէն մար-մինն||(127բ) մազ ի վէր։

Այլ դեղ։ Առ քուշնա ու գարի, եփէ, ու առ զջուրն ու լից ի վրայ գլխոյն շող. աւկտէ։

Այլ դեղ, զոր առաջինքն ասցել։ Գրաստ, որու լինի ու բնակի յինք այս ցաւս, նա առնէին և թաղէին զինք ի յաղբն ու զգլուխն ի դուրս, որ շունչն ելնէր, մինչև գայր և քրտնէր։ Հետ այնոր հանէին ու ծածկէին ջեր, ու մտցնէին ի ջեր տուն, և առնուին խողտի ու հոռոմ ձէթ ու եռցնէին ընդ իրար, ու լնուին ընդ փողքն ի վայր հայնց չաք շող, որ չայրէր, և առնուին զջուհուտ մուղլն և հալէին ի խլին ձէթն, որ է մնթուրն, և շինէին ածնելիք, ու ածնէին զգրաստն. նա բժշկէր։

Այլ դեղ։ Առ խողտի երկու նուկի ու կէս,||(128ա) առ այծու ճրագու երկու նուկի ու կէս, բնկի խէժ՝ նուկի մէկ, վայրի մրտի ձէթ՝ թուղթ մէկ, հին հոռոմ ձէթ՝ նուկի չորս, առ զամէն դեղերս ու լից ի վրայ անպակ գինի՝ մէկ նուկի, և աղ՝ թուղթ մէկ, շինէ ածնելիք և ածնէ զամէն զաւդվածքն գրաստուն շող շող, և տուր զսեսեռն և զամէն հնդանք, որ ուտէ, զարդի բակլայէ։ Եւ դիր ի յեղկ ջուրն բուրակ ու տուր գրաստուն, որ խմէ, և հանապազ ածնելաւք ու ճլերով, որ ջեր ուննա<ս>, ու ծխելաւք կալ, մինչև գայ, որ քրտնի, զի այս ցաւս ի յայնոր լինի ի գրաստն, որ քրտնի ու պաղէ ջղերն, ու շատն, որ բնակի նա ի գլուխն ու շլնիքն ու ի յակնջվին, ու քանի գրաս||(128բ)տուն սիրտն տաք կենայ, նա ապրի գրաստն, և յորժամ պաղի, նա մեռնի։

Այլ դեղ։ Առ պղպեղ քսան հատ և բուրակ՝ մթխալ մէկ, ճաւ-շիր՝ քանի, բակլա՝ հատ մի, անգուժատ՝ քանի, բակլա՝ հատ մի. լեսէ ու մաղէ ու լից ի վրայ անպակ գինի ու հոռոմ ձէթ, զայն շակքն, որ շաղէ զինք։ Ու արայ զինք երեք բաժին ու լից ընդ քիթն ի վայր զմէկ բաժինն։ Ու հայնց կեցիր պահ մի ու զմէկ այլ բա-ժինն լից։ Եւ հետինն աւուրն զնոյն դեղս արայ. բժշկի։

Եւ ասցել են, թէ քաւշի արոյն լից ընդ քիթն ի վայր ու գահէ զինք. զայն պահն բժշկի։

Այլ դեղ։ Առ խնկի փոշի երեք մթխալ և լից ի վրայ անպակ գինի զիր շակքն, և լինի դեղ||(129ա)երս լեսած և մաղած, և դիր ի վրայ կրակին ու եռցոյ ու եղկցոյ ու լից ընդ քիթն ի վայր ու փռընքտացոյ, և ածնէ զգլուխն հոռոմ ձիթով ու ամբակ գինով, բուռկաւ, մազն ի վեր շփէ ու աճռէ. շատ աւգտէ։

ՀԵ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ, ՈՐ ԿԻՏ ՈՒՆՆԱՅ

Ծփվի ու ելնէ ընդ քիթն արոյն։ Առ կամփէ չուան ու կապէ զագէտակն պինդ. նա կտրի արոյնն։

ՀԶ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ ՅԱՒՈՒ, ՈՐ Է ՌԵՊՈՒ

Նշանն է. յորժամ շնչայ, նա տայ քովացն, որ թուենայ, թէ կողքն յիրացմէ կու բաժնի, և թէ ցաւն թեթև լինի ու չկարես ճան-

չել, դու խմցոյ ջուր ու թապլեցոյ, նայ ուժվորնայ ցաւն ու հազայ։

||(129բ) Բժշկութիւնն է։ Առ զաֆրան դրամ երեք, մատուտակ՝ դրամ վեց, պղպեղ՝ դրամ երեք, մեղր՝ կէս նուկի, չամիչ ի կտէն հանած՝ կէս թուղթ, սանաւպարի կուտ՝ ութ դրամ, լեսէ զամենն ու խառնէ ընդ մեղրն, ու ձգէ ընդ փողքն ի վայր՝ զէդ երկու հաւուկիթ։ Եւ թէ ուժով լինի ցաւն՝ դու առ մրվայ գինի ու հոռոմ ձէթ, ու խառնէ յայս դեղս ու լից ընդ փողքն [ի] վայր։

Այլ դեղ։ Առ անպակ գինի ու խառնէ ընդ մեղրն, առանց այլ դեղի, ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ թէ ուռէց կենայ ի քովքն ու շունչն կարճ ելնէ, դու մի տար իր գինի, ապա առ զաֆրան կէս մթխալ ու լից ընդ ձախ||(130ա) քթափողքն ի վայր, որ փռընքտայ։

Այլ դեղ։ Առ հայխունկ երկու մթխալ, լեսէ և խառնէ յանպակ գինին ու ի մեղրն ու լից ընդ քթափողն ի վայր, որ փռընքտայ, և մի՛ հեծնուլ զգրաստն ու պահէ ջեր։ Ու զջուրն, որ խմցնես, նա բուրակ խառնէ, և տուր իր լուծման դեղեր։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ եղրդկան ծաղկի հունդ ափկից երկու, լեսէ և մաղէ, ու խառնէ ի հետ լիտր մի սպիտակ շաքարու պենիթ, ու լից ծայր մի ջուր ու շաղէ, ու լից ընդ փողքն ի վայր։

Այլ դեղ։ Ասեմ, որ երբ բնակի այս ցաւս, նա դժար ողջնայ։ Եւ իր աղէկ դեղն այն է, որ հեծնու ու անցմնցիցէ զինք, ապա ||(130բ) չյեչվեցնէ և ոչ կալաւփցնէ։ Եւ առ գարի լուացած ու լից ի թաղառ մի ճանգ մի, ու առ եղէգն ու այրէ, և լից զմախիրն ի ներս, ու ի վրայ ջուր խառնէ ի թաղառն, ու ձգէ ի ներս ծայր մի չոր գինձ, ու հանապազ ի յայտ ջրէտ տուր, որ խմէ. նա աւկտէ աստուծով։

Այլ դեղ։ Տակշուրնին գիտեն, որ կապք կու այնեն յառվոյտն և կու տան զառվոյտն, որ կու ուտէ։ Եւ զայն վանց այնոր կու այնեն, որ առ ժամն ողջնայ. ու ի ձեռվոյն հանեն ու զկատարածն չեն ի քննել։

Այլ դեղ։ Եփէ զմատուտակն ու խմցնել տուր զջուրն իր երեք աւր։

Այլ դեղ։ Առ սամղ յարապի կէս նուկի, քթիրայ՝ կէս նուկի, երեք||(131ա) դրամ ռևանդ, լեսէ զդեղերս ու մաղէ։ Եւ առ Բ(2) նուկի կաթն, շողցոյ ու լից զդեղերն ի ներս, ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր երեք աւր։

ՀԷ. ՅԱՂԱԳՍ ԳԼԽՑՒՈՒ

Նշանք, որ հանապազ զգլուխն խոնարհած կալնու, ու զգլուխն չկարէ ի վեր կալնուլ, ու անցի ի վրայ աչիցն զէդ գլխադիր, և հանապազ արցունքն երթայ, և չկարէ զաչքն խփել, որ կոպերն թանձրցել լինի, և կտրի յալկէ, ու չկարենայ քայլ փոխել յաւժար, և աչիցն երակքն լըցվի արոյնով։

Բժշկութիւն է. Յուսուֆին ասցած.

Առ կտաւատ նուկի մէկ, վայրի քրէֆս՝ կէս նուկի, եփած քուռաթի ջուր՝ թուղթ մի, և ամպակ գինի ու||(131բ) հոռոմ ձէթ՝ նուկի ու թուղթ մի։ Եփէ զամէնն ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր, և անցմնցոյ զինք աղէկ ու հանգոյ աղէկ ժամ մի, հետ այնոր զարկ զինք ի պաղ ջուրն. նա բժշկի։

Եւ լինի, որ ի յայս ցաւէս սպիտկի աչքն։ Դու առ զըռզիանի ջուրն ու զմեղրն ու խառնէ յիրար ու լից յաչքն։ Նա բժշկի աստուծով։

Այլ դեղ։ Առ սպիտկդեղ Գ(3) նուկի և լից ի վրայ ջուր, որ թրջի՝ աւր մի ու գիշեր մի, ու առ քամէ զջուրն և առ ու լից ի հաւանն։ Եւ առ մոմ ու հալէ ու լից ի ներս ու աղայ, ու շինէ մորհամ, ու խառնէ ի հետ մեղր ու հոռոմ ձէթ։ Եւ աւծնէ այս մորհամովս զքունքն։

Այլ դեղ։ Առ երակ յերեսն, և առ||(132ա) չրկոտիմն նուկի մի, քուռաթ՝ նուկի ու թուղթ մի, ու լից ի վրայ յիստակ ջուր երկու նուկի, գինի՝ նուկի մի, հոռոմ ձէթ՝ կէս նուկի, եւ եփէ ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր։

ՀԸ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՑ, ՈՐ ԸՆԴ ՆԵՐՔՍԷ ՓՈՐՈՔԱՑՆ ԻՐՔ ԼԻՆԻ ԿՏՐԵԼ ՁԷԴ ՃՐԱԳՈՒ ԿԱՄ ԱՂԻՔ, ԿԱՄ Ի ԱՅԼ ՓՈՐՈՏԵԱՅՆ

Նշանքն այս է. յորժամ զքաշիկն արծկէս, նա զգետինն դիպի։

Բժշկութիւնն այս է.

Առ տղայի գոզ ու կապնդեղ, ծեծէ ու խառնէ ի ներս ու ի վրա լից հին գինի, եփէ ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։

Եւ առ տախտակ մի և շինէ զայս գրես ի վրայ տախտկին ու դիր ի վրայ գետնին, որ քայլ փոխէ գրաստն ի վրա. նա բժշկի։

Հաշիւ է ||(132բ) տլիսմն և կերպն այս է (տե՛ս հաջորդ էջի նկարը)։



Ձեռ. էջ 132բ.

Այլ դեղ։ Առ սև մոշոյ հունդ ու զտերևն՝ յամէն մէկէ Բ(2) նուկի, ամբրաւ Բ(2) նուկի, լից ի վրայ Զ(6) նուկի ջուր, եփէ ու քամէ ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։

Այլ դեղ։ Առ բաշխտակ և զրևանդ՝ յամէն մէկէ նուկի Ա(1), լեսէ ու մաղէ, ու լից ի վրայ հին գինի ու ջուր՝ զէդ Դ(4) նուկի, և լից ընդ գրաստուն փողքն ի վայր։

Այլ դեղ։ Առ սև հլելիճ Ե(5) մթխալ, հնդկցի աղ՝ Բ(2) դրամ, քաֆուր՝ երկու դրամ, չաման ու հոտած||(133ա) անկուժատ՝ յամէն մեկէ չորս դրամ, լեսէ ու մաղէ, և խառնէ յինք լիտր մի ջուր և լից ընդ փողքն ի վայր։

ՀԹ. ՅԱՂԱԳՍ ՅԱԻՈՅ, ՈՐ ՋԵՐՄՆ ՈՒՆՆԱ ԳՐԱՍՏՆ

Նշանքն է. ուննայ գրաստն հեվք, և աչիցն սպիտկուցն կարմրի, և մարմինն լիննայ խիստ շող, և լեզուն չոր և խոշոր, և կապէ զպռկունքն, և ունենայ պռկունքն և նրակքն, որ կենայ ներքև ձախ անթին, նա խիստ ուժով քշտէ, ու զգլուխն զամէն ի կապ կալնու ու չկարենայ ի վեր կալնուլ, և աչվին ուռեցած լինի և չկարենայ բանալ, և եբ կապած լինի, նա ջեղքն կենայ ու դողայ, և կայ, որ ունենայ ձուերն, և արտասվէ աչքն, և կտրի յալկէ, և եբ մտցնես զձեռքս||(133բ) ի բերանն, նա գտնուս խիստ շող, և ու-զենայ, որ ճանճայ ու չկարէ, և չկարէ թապլել, և կախէ զլեզուն, և թէ գարի ուտէ, նա չէ ջերմնոտ, և թէ յերկարի տաքութիւնն ու երեք աւրն առջև չողջնայ՝ նա չորս աւրն թողու գինք։

Բժշկութիւնն այս է.

Բայց թէ բնակի այս ցաւս ի ձմեռն, առ իր երակ ի քունքն, և տուր կանաչ խոտ, որ ուտէ, և կապէ զինք ի մութն և ի ջեր տուն, և վառէ կրակ ի տունն՝ ապա որ մուխ չլինի։ Եւ եբ թո-ղու<ս> զինք տաքութիւնն, լից ի վրայն շող ջուր ու լուայ զինք և սրբէ <զ>խիստ աղէկ, և առ գինի ու զամէն մարմինն շփէ, և կալ ի ջեր տեղ, և կտրէ զգարին եւթն աւր, զի թէ գարի տաս, նա յերկարի ցաւն։

||(134ա) Եւ ջերման դեղ, որ չլինի ձմեռն։ Առ իր երակ և թող երթայ աղէկ։ Եւ առ երեք հաւուկիթ, կոտրէ յաման մի, և դիր ի վրայ իր վարդի ձէթ թուղթ մի, սպիտակ նաւսր գինի անուշհոտ՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար և աւծնէ զմարմինն, և կապէ զինք ի

պաղ տեղ, և տուր կանաչ խոտ, որ ուտէ, ու պաղ ջուր խմցոյ ճիճն, և թէ չխմցէ զջուրն, դու բաց զբերանն ու ձեռաւքտ զպաղ ջուրն ի ներս քշտէ, որ պաղէ։ Եւ եբ փարատի տաքութիւնն, նա հետ երեք աւուրն տուր իր գարի։

Ձ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՅ, ՈՐ ԿՈՉԻ ԸՂՏԱՅԱՒ

Նշանքն է· ցաւ, որ բնակի ի յետի կիցքն ի գաւակի, զի յոր-ժամ||(134բ) հանես ի յախոռոյն՝ նա զյետի կիցքն ի հետև ի քաշ տանի ինչվի աղէկ երթայ ու ապա ղորդի։

Բժշկութիւն[ն] է։

Աւծնէ զանդմացն զաւղվածքն սպիտակ նաւդով. նա բժշկի։

Այլ դեղ՝ Առ ֆարպիուն թուղթ մի, աղ՝ թուղթ մի, ձէթ և սև ձոյթ՝ նուկի մի, ու խառնէ զձէթն ու զամէնս ընդ իրար, ու եփէ, ու աւծնէ զծնկվին ու զանդմացն վերի զաւղվածքն։ Եւ թէ չբժշկի՝ նա խարէ զխնծորքն։

Այլ դեղ։ Առ զյիշոցքն ու զխայծղանն, խառնէ ընդ իրար, և աւծնէ զանդամացն զաւղվածքն։

ՁԱ. ՅԱՂԱԳՍ ԼԵՐԴԱՅԱՒՈՒՆ

Նշանքն այս է· հանապազ ծմայ||(135ա) ու զգլուխն ի լերդին դեհն դարձընէ՝ յաջ դեհի վրա, ուր ցաւն կայ։ Եւ լինի լեզուն չոր և խոշոր, ուռեցած։ Եւ կայ, որ ուռենայ աջ քովն և պիղծ շնչայ։ Եւ եբ դնես զձեռքդ ի յաջ քովին վերայ, նա գիտենաս, որ ցաւ կու տայ իր։

Բժշկութիւնն է։

Անցմնցեցո զգրաստն կամկեկ, և կենայ ծածկած։ Եւ առ հո-ռոմ ձէթ ու գինի և աւծնէ զմարմինն։ Եւ արայ եղկ ջուր և դիր ի ներս բուրակ ու խմցոյ գրաստուն։

Այլ դեղ՝ Առ խունկ, ողկուզուկ ու եփէ ի գինին և լից ընդ գրաստուն փողքն ի վայր և ի յաջ քթափողքն այլ, ու փռընքտացոյ եաւթն աւր։

Այլ դեղ։ Առ մատուտակ ու եփէ ջրով ու լից ի յաջ քթափողքն, ու||(135բ) փռընքտացոյ է(7) աւր։

Այլ դեղ· փորձած։ Առ մեղր նուկի մէկ, բուրակ՝ կէս նուկի, գինի՝ նուկի մէկ, ջուր՝ նուկի մէկ, շփէ և կաթեցոյ յաջ քթափողն,

ու փռընքտացոյ հինգ աւր։ Եւ թէ ողջնայ գրաստն, դու առ իր երակ ի բազկունքն, ու թէ չողջնայ, դու համբրէ յաջ դեհին վերա Գ(3) կող ու խարէ ի վրայ. նա աղեկնայ կամաւքն աստուծոյ։ Եւ տուր ուտելոյ կանաչ խոտ։ Եւ զաղվանեղին եփէ ի ջուրն ու խմցոյ գրաստուն։

ՁԲ. ՅԱՂԱԳՍ ՔԱՄՈՅ, ՈՐ ՅԵՐՋՔՆ ՈՒՆ[Ն]ԱՅ

Յասացելոց ապի Ուստուֆին։

Նշանքն է· ցաւ, որ բնակի յետի կիցքն ի գրաստուն, և եփ ուժվորնայ այս քամիս, նա կանգնի երկու ձեռքն||(136ա) ու ընկ-նի յետի կիցքն, ու բնաւ չկարենայ կանգնել։

Բժշկութիւնն է·

Առ բողկի հունդ ափկից մի, դիր ի պտուկ մի, ու լից ի վրայ վեց նուկի ջուր ու եփէ ուժով, ու թող աղէկնայ այս քամիս, ու առ յերեք բաժնէն զմէկն ու լից ընդ փողքն ի վայր։ Ու զայլ մնացորդքն դիր հոռոմ դէղ տկճորով ի յորովայնն, ու աւրեր այս-պէս ծառայէ։

Այլ դեղ։ Առ կասլայի պտուղ ու չաման՝ յամէն մէկէ մասն մի, ու դեղին ծծում ու չարհոտ՝ յամէն մէկէ երեք մասն, բեբեկի խէժ ու հոռոմ ձէթ՝ յամէն մէկէ Գ(3) նուկի, շինէ աւծնելիք ու աւծ-նէ զմէջքն ու զայն տեղն, որ ուռեցել է։

Այլ դեղ։ Առ մոմ նուկի մէկ ու ճաւշիր՝ նուկի||(136բ) մէկ, հոռոմ ձէթ՝ նուկի մէկ, շինէ աւծնելիք ու լից ի վրայ քիչ մի քա-ցախ, ու միամորթէ ընդ իրար ու աւծնէ զմէջքն։

ՁԳ. ՅԱՂԱԳՍ ՄՐՏԱՅԱՒՈՒՆ

Նշանքն այս է· յորժամ կանգուն լինի, նա դողայ ու դիպի ի վրայ երեսացն, ու հաստի ի պատն և քըռնէ, ու սկսնու քրտինքն ի ձախ անթէն, ու կախէ զգլուխն ի ժմէ ժամ, եբ ուզենայ, որ կանգնի, նա դողայ ձեռվին, որպէս զֆնտու և կամ զէդ բոկիկ գրաստ, և կախէ զտոշն, և կարէ լինալ, որ լինի գոզարգել։

Բժշկութիւնն է·

Առ աղվանեղի լոսած, քանի բակլայ մի, և մեղր դրամ հինգ, բուրակ՝ թուղթ մի, ջուր՝ երեք նուկի ու կէս,||(137ա) քացախ՝ նուկի մէկ ու կէս, եփէ և լից ընդ փողքն ի վայր, ու ճլէ, և ած

զինք ի շուրջ։ Եւ աւրեր զայս դեղս խմցոյ։ Եւ տուր աւվոյտ, որ ուտէ, կամ սէզ։ Եւ թէ չբժշկէ զինք այս դեղերս, դու առ երակ յերկու բազուկն, զայն մեծ երկու երակն, որ կա անդմացն ներքսև, որ ասէ յարապն իր անսայ, նա առ ի հաւն այլ երակ. նա բժշկի։

Այլ դեղ։ Առ կասլայի պտուղ ու հայխունկ՝ յամէն մէկէ մասն մի, և խառնէ յամբակ գինին և ի հոռոմ ձէթն ու լից ի յիրմէ ընդ քթափողքն ի վայր և փռընքտացոյ։

Այլ դեղ։ Առ հայխունկ նուկի մի, մուռ՝ նուկի մէկ, և խառնէ ընդ իրար և լից ընդ փողքն ի վայր, և պահէ զինք ճլաւվ ||(137բ) ի ջեր սխոռ, ու ձգէ ներքեն անուշահոտ իրք, զէդ կասլայի տերև, ու թող, որ պառիկի ու հանկչի ի տեղն։ Եւ որ զայս դեղս է ասցել, նա կու ասէ, թէ երակ մի՛ առնուս, զի թէ երակ առնուս, նա պաղի մարմինն և բարկնայ։ Եւ յորժամ տեսնիս, որ թեթևնայ ցաւն ի յիրմէ, նայ տուր, որ ուտէ չոր խոտ։ Եւ թէ լինի ձմեռն կամ մաւտ ի ձմեռն, դու վառէ չոր փայտ, որ մուխ չայնէ։

ՁԴ. ՅԱՂԱԳՍ ՓԱՅՏՂԱՆ ՑԱՒՈՒ

Նշանքն այս է, որ ուռենայ փորն և ձախ դեհն աւելի ուռենայ, և թէ երթայ և թէ ի կանգուն լինի՝ աւելի հեվա, և կարճ լինի շունչըն և յոյլ լինի ի գնալն։

Բժշկութիւնն այս է.

||(138ա) Առ պանի պտղի քամուքք նուկի մի, քացախ ու ջուր՝ նուկի մի ու կէս, և խառնէ ընդ իրար ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։ Եւ թէ գտնուս պանի պտուղ, դու առ մոշոյ ցախ ու լից ի վրայ ջուր ու եփէ, որ մնայ կէս ջրին, ու լից ի ներս քացախ քիչ մի ու լից ընդ փողքն ի վայր տարպայնի։ Եւ առ կաւ ու ձէթ ու շփէ ի վրայ փայծղաննի։ Այլ որ պինդ լինի փայծաղն (=փայծղան) դեղ, առ պանի ծառի տակ ու լից ի ներս քացախ ու ջուր ու եփէ, որ մնայ յերեքէն մէկն, ու լից ընդ փողքն ի վայր։

ՁԵ. ՅԱՂԱԳՍ ԳՈԶԱՐԳԵԼԻ

Նշանքն այս է. խածտէ զիր մարմինն ու չկարէ գոզել ու նստի ու ելնէ։

||(138բ) Բժշկութիւնն այս է.

Առ կաղամբի ջուր ու հոռոմ ձէթ և ամպակ գինի, խառնէ ընդ իրար ու լից ընդ գրաստուն ձախ քթափողն ի վայր։

Այլ դեղ։ Լինի, որ գոզարգելն ի ճիճոյ լինի, որ ի փորն կենայ, և կամ ի բզեզնոյ. դուն առ պզրղայտուն նուկի մէկ, բաեկ՝ նուկի կէս, կասլայի մատղաշ տերև՝ նուկի կէս, խառնէ ընդ իրար լեսած։ Նա թէ ի յայս ցաւէս լինի գոզարգելն, նա լից ընդ քթափողն ի վայր, ու փռընքտացոյ. նա բժշկի։

Ասցել են ոմանք մի վասն գոզարգելեացն, թէ դնեն յորովայն սոխ և կամ սխտոր, նա անհոկէ և աւիրէ զփաղաբուշտն։ Եւ մեք փորձեցաք ու գտաք, որ խիստ||(139ա) աւկտակար է, առաւել թէ ի հովութենէ լինի և կամ ի յեշվեցնելոյ, կամ ի յաղեացն ի նեղութենէն, և կամ քարցել լինի թրիքն ի փորն, յորոյ ու լինի՝ նա ծառայէ այսպէս. եռցո զջուրն մեծ պղընձով մի և առ շող հոռոմ ձէթ և աւծնէ ի միջացն ու ինչվի յագէտակն, ու մտոյ զգրաստն ի մութն տուն մի, որ այլ մարդ չկենայ, ու լից զայս շող ջուրս ի վրայն՝ ինչվի գայ ու պտոշն կախէ։ Եւ առ հետ այնոր քաղցր ամպակ գինի ու լից ընդ քթափողքն ի վայր, ու փռընքտացոյ. նա ի յայն պահն գոզէ։

ՁԶ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՐՈՎԱՅՆ Ի ԴՈՒՐՍ ԳԱՅ

Նշանն այս է. յայտնի իր ցաւուն։

Բժշկութիւնն է.

Ջոր աւել||(139բ) միս ի դուրս կենայ, նա կտրէ. խիստ պատրաստ որ ի յորովայնին բոլորն չհասնի։ Եւ առ քացախ ու ջուր ու եղկցոյ և կամ աղոխջուր ու լից ընդ քթափողքն ի վայր ու փռընքտացոյ, ու յիրմէ լից ընդ փողքն ի վայր։

ՁԷ. ՅԱՂԱԳՍ ՔՈՒՍԱՅԻ, ՈՐ Է ԱԶԳ ՄԻ Ի ԳԱՅԼՑԱՒԷՆ

Նշանքն է. մեկնի շլնիքն որպէս փայտ, կանգի ակընջվին, արցվէ աչվին, բերանն գայ յիրար ու չկարէ բանալ, զլեզուն չկարէ շարժել, և ոչ ուտէ և ոչ խմէ, ու չկարէ զշլնիքն դարձնել, ու եբ կենայ ու երթայ՝ նա զոտվին ի քաշ տանի, և ամէն տեղի յինք չորնայ, և չկարէ գոզել, և ի յերթալն||(140ա) ի յետի ոտացն ի վրայ հաստի, և եբ նստի՝ նա ի կէզն նստի, և թուլնայ մէկ ձուքն ու

9—1034

մէկն ի վեր քաշվի։ Եւ եբ այս նշաննիս կենայ, նա դժար կարէ բժշկել. ապա դու զջանքն դիր։

Բժշկութիւն[ն] է.

Առ քաւշի ճրագու ու սագու ճրագու, բեեկի խէժ ու հոռոմ ձէթ և անպակ գինի, զայն չակքն, որ զիրենք շաղղէ ու հալէ ընդ իրար, ու աւծնէ զամէն մարմինն մազ ի վեր։

Այլ դեղ։ Առ քուշնայ ու գարի ու եփէ, և առ զջուրն ու շող շող ծփէ զգլուխն։

Այլ դեղ, փորնքտալիք։ Առ խունկ թուղթ մի ու հին գինի թուղթ մի, ու լեսէ զխունկ ու խառնէ յիրար, ու դիր ի ներս հոռոմ ձէթ ու բուրակ‖(140բ), ու լից ընդ քթափողքն ի վայր, ու փռընգտացոյ։

Այլ դեղ։ Առ պախրէի ճրագու ու բեպբեկի խէժ՝ յամէն մեկի թուխթ մի, հոռոմ ձէթ՝ նուկի մի, խառնէ ի հետ քչիկ մի աղ և ամպակ գինի, ու շինէ աւծնելիք։ Եւ ածնէ զամէն մարմինն շող շող։ Եւ խառնէ զգարին ու զսիսեռն ընդ իրար ու տուր, որ ուտէ։ Ու զջուրն, որ խմցնես, նա բուրակ դիր ի ներս։ Ու ի ջեր տեղ կանգնեցո ու ծածկէ ճլերով։

ՁԸ. ՅԱՂԱԳՍ ՄԿՐԻՍԻ (=ՆԿՐԻՍԻ)

Նշանքն այս է, որ ծանդրանայ ոտվին որպէս զֆնտու և չկարենայ աղէկ քայլել, և չուտէ աղէկ, քաշվի մէկ ձուքն ու կախվի մէկայլն, և եբ‖(141ա) կանգնի, նա ձեռաւքն քաշէ զթրիքն, նա փակչի ի սմբակն ի տաքութենէն, և կախվի տոշն։

Բժշկութիւնն է.

Առ ջուր ու հոռոմ ձէթ և շողցոյ ու ծփէ զոտվին։ Եւ արա մեղրջուր ու դիր ի ներս բուրակ։ Եւ դիր հոռոմ դեղ։ Եւ թէ չբժշկի այսով՝ նա կտրէ, որ բժշկի։

Այլ դեղ։ Առ կաղամբ, խաշէ ջրով ու շող շող դիր ի վրան ոտիցն։

Այլ դեղ։ Առ ոսպն, լեսէ ու մաղէ ու դիր ի յինք վարդի ձէթ ու քացախ, ու աղա ու շինէ տիմէտ, ու դիր ի վրայ ոտացն, եւ պատեհ է, որ անցմնցեցնեն զգրաստն, որ քրտնէ։ Եւ առ երակ ի յերեսն և հետ եաւթն աւուրն առ երակ ի յերկու ձեռքն‖(141բ) և առ ի յանդամացն ի յայն երկու մեծ երկնին, որ կոչի անսայ, և

զայս, զոր յիշեցաք, ի ցաւուն սկիզբն արայ։ Եւ զջուրն եղկցոյ ու դիր ի ներս ցորենի ալոյր ու բուրակ, ու տուր, որ խմէ։ Եւ փռընքտացոյ զինք հայխնկով և ամպակ գինով երեք աւր՝ յամէն աւր թուղթ մի։ Եւ առ զսաւսին ծառի կեղևն ու ճակընդեղ ու հոռոմ ձէթ, եփէ ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ քանի կարես զգրաստն ի լոյծ պահէ, զի լուծումն իր աղէկ է, ու խոտ տուր, որ ուտէ, և թէ չընկնի խոտ, դու զինչ տաս ուտելոյ՝ նա բուրակ ու ջուր ցանէ ի վրայ։

ՁԹ. ՅԱՂԱԳՍ ՌԱՅՍԱՅԻ*, ՈՐ Է ԲԵԻԵՌ‖(142ա) ՀԱՍՆ

Նշանք այս է, որ չկարենա զսմբակն դոյր ի վրայ գետնին դնել։

Բժշկութիւնն է.

Տաշէ զսմբակն մինչև ելնէ ի յիրմէ թարախ և կամ ջուր. և եբ ելնէ ամէնն ու սրբի, դու առ աղ ու քացախ ու ջուր, լուայ իրովն զսմբակն։ Ու առ սոխ ու սխտոր ու ճրագու, ծեծէ ընդ իրար ու դիր ի վրայ սմբակին. ու սխտորն թող աւելի լինի։

Այլ դեղ։ Յորժամ բացվի վերև սմբակին, խեչ կոճացն ու կամ յայլ տեղ, դու առ պախրէի թաժայ թրիք ու լեռին այրած դաղձն, ու քացախն ու աղ ու հոռոմ ձէթ, ու շինէ տիմէտ ու դիր ի վրայ այն տեղացն, զի պիտի քաշէ զգիճութիւնն։ Եւ մէկայլն աւրն հա‖(142բ)լէ ճրագու ու փիճոյ խէժ ու լից ի յայն ծակն, որ ներքև կայ։ Եւ եբ քիչ մի աղէկնայ, նա շինէ զայս կակղցաւղ դեղերս։ Եւ եբ լինի այս ցաւս և շատն ի յոտվոյն, նայ ընդ խիստ ցաւէն ոչ ուտէ և ոչ խմէ ու պիտի պառիկի ու թմբրի։ Դու առ քացախ, որ չլինի խիստ գազան, ու խառնէ ի ներս աղվեսու արոյն, ու լից ընդ փողքն ի վայր, և աւծնէ զգլուխն կղբու ձուով. նա ողջնայ։

Ապայ չգտնուս զսմբակն ու ոչ զբևեռն, դու առ թեփ ու սխտորի կեղև ու լից ի վրայ ջուր, ու եփէ ու հան շողշող, լից ի քիսէ կտոր մի և կապէ ի վրայ սմբակին։ Տարպայնի զայս արայ, զէդ խարկելիք, նա երևնայ տե‖(143ա)ղին, ուր կայ խոցն։ Դուն բաց ու հան ի յիրմէ զինչ գտնուս, և առ աղ ու հոռոմ ձէթ ու մուշախայ, ու դիր ի վրայ, ու հայնցու յերկու աւրն զայս արայ, և յերեք աւրն ցանէ ի վրայ ծակուն արջասպն. նա աւկտէ աստուծով։

---

* Ցանկում՝ ասահար։

Ղ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՆ ՏՁՐՈՒԿ ԼԻՆԻ ԿԼԵԼ

Նշանքն է. երթայ ընդ բերանն արոյն՝ քանի ի փողքն կենա, և եբ իջնու ի փորն, նա հալի ու մաշի գրաստն ու մեռնի։

Բժշկութիւնն է.

Թէ յերևան լինի, որ կարես զձեռքդ մտցնել ու հանել, դու առ թզենոյ տերև և կամ խոշոր քթեթ ու այնով առ։ Ու թէ ի վայր լինի ու չկարենաս հանել, նա զինչ իսկի խմելիք կու տան գրաստուն, նա ամէն կու||(143բ) ահոկէ գրաստուն ու չէ ի սպաննել ու ի հանել զտզրուկն։

Ապա զբուն ու զաղէկն ու զաւկտակարն, որ գովել եմ ես. նա առնու զհոռոմ ձէթն ու լնու ընդ գրաստուն փողքն ի վայր։ Նա յորժամ ձէթն ի յինք հասնի, նա պիտի խլի ի տեղացն ու սատկի։

Եւ այս է հնարքն, որ գրաստն տզրուկ չառնու.

Ի տեղի, ուր զգրաստն ի ջուրն տանիս ու գիտնաս, որ տզրուկ կենայ, նա դարտակ տաւպրակ ի գլուխն դիր ու այնով ջուր տուր, որ խմէ։ Եւ թէ զտզրուկն տեսնուս, որ փակել է ի փողքն կամ ի լեզուն, նա դու ծայր մի մանդր աղ հասոյ ի տզրուկն, ընկնի։

ՂԱ. ՅԱՂԱԳՍ ԽՈՑՏԿԻ*

Նշանքն այս է. ||(144ա) թուլնայ շլնիքն, բռնվի զաւղվածքն, ու դողայ ու փրփրայ բերանն։

Բժշկութիւնն այս է.

Առ հոռոմ ձէթ ու գինի ու դիր իր հոռոմ դեղ, և աւծնէ զձեռքդ հոռոմ ձիթով ու մտոյ պատրաստ ի յորովայնն ու սրբէ ու հան զագռն ու զշորութիւնն զինչ գտնուս։

Եւ առ նատիֆ ու սակամունի ու շինէ զէդ հաւուկիթ մի ու դիր ի յորովայնն։

Եւ առ գինի նուկի մէկ ու հոռոմ ձէթ՝ կէս թուղթ ու կաղամբի ջուր՝ նուկի մէկ, ու լից ի յիրմէ ընդ ձախ քթափողն ի վայր։

Եւ յորժամ շատնայ խոցտուկն ու յաեյնայ ելնելն ու նստելն, դու առ պզրղատուն ծեծած՝ թուղթ մի, ճաւ||(144բ)շիր՝ կէս թուղթ, եղին աղջոյրի խիզարուկք՝ թուղթ կէս, ու դիր ի հետ մեղր ու անն-

* Ցանկում՝ խոստկի։

խի ջուր՝ թուղթ մի, ու կասլայի ծառի մատղաշ ծլերն, և եփէ ու լից ընդ փողքն ի վայր։ Ու աղէկ պէտ արայ, որ չձգէ ի գոզարգելն։ Ու խմցոյ իր քաղցր հոռոմ ձէթ ու եփած քաղցու, որ հաւիճնով լինի։ Եւ այսպէս ծառայէ. նա ողջնայ։

ՂԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱԻՋՆ ԽԱՅԹԷ

Նշանքն այս է, որ փշանայ մազն ու ուռենայ պռկունքն ու աչվին և բերանն խփի ու մազն ի վայր գայ։

Բժշկութիւնն այս է.

Առ սպիտակ պղպեղ Լ(30) հատ, և թէ չգտվի սպիտակ՝ դու առ սև Կ (60) հատ,||(145ա) լեսէ ու խառնէ ի թուխ անպակ գինի ու լից ի գրաստուն բերանն ի վայր։

Այլ դեղ։ Առ հաշշաւ ու բարձվենեկ՝ յամէն մեկէ նուկի մէկ ու լից ի վրայ չորս նուկի գինի և եփէ, որ մնայ երեք ակն ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։

ՂԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿՈՐՆ ԼԻՆԻ ԽԱՅԹԵԼ

Նշանքն է. փոխի մազին գոյնն, ու կտրի յուտելոյն, և երթայ ընդ քիթքն ջուր, և կենայ ու երթայ ու քթահրի, ու կարէ լինել, որ զագին ի վեր կալնու։

Բժշկութիւնն է.

Առ թրակէս ու տրորէ յամպակ գինին ու լից ընդ փողքն ի վայր։

ՂԴ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՆ ՀԵՏ ԽՈՏԻ ՍԱՐԴՈՍՏԷՆ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն||(145բ) այս է. ուռենայ աչվին, ու պտղնին ի ներս երթայ, ու կտրի յուտելոյ։

Բժշկութիւնն է.

Խարէ զգրաստն և խմցոյ իր խանդիկոնի շարապ, ու կամ խառնէ յայտ շարապտ եղին խախաց։

ՂԵ. ՅԱՂԱԳՍ ՓՈՂՑԻՈՅ

Նշանքն է, որ քնատեղացն երեակքն զայրնայ, և լարի ամէն երակքն գլխոյն ու աչվոյն, ու կալվի ստուգն, որ չկարէ ուտել և ոչ խմել։

Բժշկութիւն[ն] է.

Առ ամպակ գինի ու հին հոռոմ ձէթ ու լից ընդ քթափողքն ի վայր ու փորնգտացոյ։

Եւ ասցած է, թէ եփէ զխնձորն և առ զիր ջուրն և խառնէ յինք բուրակ ու լից ընդ փողքն ի վայր. նա աւկտէ։

||(146ա) Եւ առ զչուհոստ մուղլն և հալէ ի հոռոմ ձէթն, և ածնէ զգլուխն ու զխամծեկքն, ու եբ հահընդի ցաւն, դիմէ գրաստն ի կերն, դու տուր իր դալար խոտ։ Թէ արծես՝ նա այլ լաւ է։ Եւ թէ չլինի ժամանակն կանաչ խոտի, դու թաց զչոր խոտն ու ցանէ ի վրայ բուրակ։ Նոյն զգարին հայնց արա։ Եւ թէ ի ճիտքն երակ առնուս, աւկտէ իր։ Եւ յայլ տեղ մի՛ առնուլ երակ։ Եւ հետ մէկայլ աւուրն առ սատանայի խիարուկն ու զբուրակն, եփէ ջրով ու լից ի փողքն ի վայր, նա լուծէ զինք և բժշկի։

ՂԶ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒ, ՈՐ ԴՈՂԱՅ Ի ՋԱՒԴՎԱԾԱՅՆ

Նշանքն է, որ դողայ ձեռվին ու պռկներն։ Եւ այս ցաւ է ||(146բ), որ յղուղն կենայ, զի քաշվի զաւդվածնին ու դողայ ու փրփրայ բերանն։ Եւ այս պեղծ ցաւ է, յանկասկած սպաննէ զգրաստն։

Բժշկութիւնն է.

Առ սատանայի խիարուկ և բուրակ, եփէ ու լից ընդ փողքն ի վայր, նա լուծէ զինք, և այլ չառնու զինք այս ցաւս, քանձ խիստ սակաւ։

Եւ ասցել են ոմանք մի, թէ առ զծովու կրիայի արոյնն ու հոռոմ ձէթ ու լից ընդ փողքն ի վայր. նա հահընդի ցաւն։ Եւ կան ոմանք մի, որ խառնեն հետ այս արոյնիս քացախ ու գինի ու անգուժատ ու լնուն ընդ քթափողքն ի վայր ու փորնգտացնեն։

Եւ ղորդ ծառութիւն այս ցաւուս, որ լուծես զբը||(147ա)նութիւնն եաւթն աւր այն դեղերովն, զոր նախ յիշեցաք ի յայս ցաւս, [և] մեղրջրով։ Եւ հետ այնոր առ հոռոմ ձէթ ու զգինին և ածնէ զայն զաւդվածն։

ՂԷ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒ, ՈՐ ՎԱՅՐԻ ԿԱՂԱՄԲ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն այս է, որ թուլնայ ոտվին ու չկարէ երթալ։

Բժշկութիւնն է.

Առ տանոյ կաղամբ, ծեծէ ու հան զջուրն, և եփէ զթուզն, և առ զիր ջուրն, ու խառնէ ընդ իրար զջրերն, ու լից ի ներս այծու կաթն, և խմցոյ, ու յիրմէ լից ի քիթն ու փորնգտացոյ. նա աջողնայ։

ՂԸ. ՅԱՂԱԳՍ ՃԻՃՈՅ, ՈՐ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՓՈՐՆ ԿԵՆԱՅ

Նշանքն է. շփէ զագետակն ի պատն, և ճիճին հետ ի հետ ||(147բ) երևնայ։

Բժշկութիւնն է.

Ածնէ զձեռքդ ձիթով և մտոյ ի յորովայնն և հան զինչ գտնուս ճիճի ի հետ ու հետ։

Եւ առ ճաւշիր և անպակ գինի և հոռոմ ձէթ, խառնէ ընդ իրար ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր, նա լուծէ զինք և հանէ զճիճին։

Եւ առ դաղձն և պզրղայտուն և աղ, և լեսէ ու խառնէ ընդ իրար, ու ցանէ ի վրայ խոտին ու տուր գրաստուն, որ ուտէ։

ՂԹ. ՅԱՂԱԳՍ ՅԱՒՈՒՆ, ՈՐ ՊԵՂԾ ԽՈՏ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է. թուլնայ զաւդվածքն ու դժար կանգնի և ջանայ, որ արծի, նա զոտվին ի հետն ի քաշ տանի։

Բժշկութիւնն է.

Առ քուռթի ջուր չորս դրամ,||(148ա) քացախ՝ նուկի Բ(2), խառնէ ընդ իրար, և արայ երեք բաժին, և յամէն բաժին մի լից ընդ փողքն ի վայր։

Այլ դեղ։ Առ ամբրաւ կէս նուկի, մրտի տակ՝ կէս թուղթ, լից ի վրայ չորս լիտր ջուր, ու ձգէ ի ներս գարի ալոյր՝ ճանկ մի, եփէ ու քամէ ու լից ընդ փողքն ի վայր։

Ճ. ՅԱՂԱԳՍ ՍՏԱՄՈՔՅԻՈՒ

Նշանքն է, որ պահէ զգլուխն ի կախ, և տոշն ու ձուքն ուռենայ, և կարի յուտելոյ։

Բժշկութիւնն է.

Առ մաղտաքէ մէկ մասն, աննխի հունդ՝ կէս մասն, խառնէ ընդ իրար ու լից ի վրա ջուր, եփէ ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ

թէ չըժշկի՝ դու առ բևեկ և սպիտակ պղպեղ ու լից ընդ փողքն ի||(148բ) վայր։ Եւ գոզին մտիկ արայ, թէ զաֆրնի գոյնով լինի՝ աղէկ է, և թէ ոչ որ այս գունովս լինի, դու զայս դեղս խմցոյ երեք աւր։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ վարդ չորս դրամ, սանուպար՝ երեք դրամ, լեսէ ու խառնէ ի մեղրն, և տրորէ շող ջրով ու լից ի փողքն ի վայր. աւկտակար է կամաւքն աստուծոյ։

ՃԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀԱՒՈՒ ԾԻՐՏ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ ԳՐԱՍՏՆ

Նշանքն է, որ թուլնայ գրաստն ու կարմիր գողէ։

Իր ստածումն այս է.

Առ սպիտակ հաւու ծիրտ չոր, լեսէ ու խառնէ յանպակ գինին ու տուր, որ խմէ գրաստն։

Այլ դեղ։ Առ գարի փոխինդ և ամբրաւ, տրորէ, և անպակ ||(149ա) գինի, ու լից ընդ փողքն ի վայր եաւթն աւր։

ՃԲ. ՅԱՂԱԳՍ ԹՈՔՅԻՈՒ

Նշանքն է. այս ցաւս առաւել ի գարնան աւուրքն լինի, ապա գրաստն վատուժնայ և հազայ հայնց, որ կարծես թէ ոսկոր է կլել, և իջնու խլնիքն պաղ պաղ ընդ քիթն ի վայր, և ուննայ ծարաւ ու խմէ ջուր շատ, և հևայ պատուժ, ու տանի զբերանն ու խածնէ զքովքն, և հազա ու ձգէ մաղձ կամ թարախ, և կամ ձգէ զէդ այն կեղևն, որ ի վրայ խոցի կենայ, և այն լինի ի խոցերոյ, որ ի թոքն կենայ։ Ու կայ, որ զբերանն բանայ ու հեվայ, նա քովքն լարի ու պեղծ հայեցք ուննայ, և կամ||(149բ) որ եբ ծամէ զկերն, նա թացվի ու ձգէ, նայ երբ հոտտան՝ նա հոտած հոտ գայ, և որ կտրել լինի ի թոքն, նա ծանդր շնչայ և ելնէ յիրմէ սուր ու շող շունչ։

Բժշկութիւն է թոքցուն այն ազգին, որ եբ ծամէ ու ձգէ, նա հոտած հոտ գայ.

Առ կասլայի պտուղ չոր և բեպեկի խէժ՝ յամէն մեկէ մասն մի, մեղրջուր զայն չակքն, որ շաղէ զինք, և լից ի յինք սակաւ մի քացախ, ու լից յերկու քթափողքն։ Նա թէ գոզէ արոյնխառն կամ թարախխառն, դու առ սամիթ մթխալ մէկ, բուրակ՝ մթխալ

մէկ, մեղրջուր՝ չակք մի, լեսէ ու խառնէ զդեղերն ի ներս ու լից ընդ փողքն ի վայր երեք աւր||(150ա)։ Եւ հետ այսոր խմցոյ իր Գ (3) աւր մեղրջուր ու տուր իր խոտ, որ ուտէ։

Բժշկութիւնն է այն ազգ ցաւուն, որ հազայ ու զէդ խոցի կեղև ձգէ, և այն ի գանէ լինի, որ թոքն կենայ.

Առ անմեռկի հնդի ջուր և վարդի ձէթ, խառնէ ընդ իրար, ու խմցոյ երեք աւր կամ հինգ աւր կամ եաւթն աւր։ Եւ հետ այսոր առ քթիրայ և աղվանաղի, և թրջէ ի քաղցր գինին և խառնէ ի հետն կաթն, ու թէ չկենայ կաթն՝ դու [առ] գարէջուր և խմցոյ իր եաւթն աւր։

Եւ թէ ցաւն ուժով լինի, որ զոր փաղզայ ու ձգէ, նա հոտած լինի, դու տուր իր զայս դեղս. առ կաւստ կէս նուկի, սալիխա՝ կէս նուկի, լեսէ||(150բ) և խառնէ ի գինին կամ ի չամչին ջուրն, և լից ընդ փողքն ի վայր և հանգո զգրաստն։

Եւ թէ ի թոքէն տեղ լինի կտրել, դու առ այծու կաթն ու գարէջուր ու թրմզի ջուր, ու լից ընդ փողքն ի վայր։ Ու թէ չլինի կաթին ժամ, դու առ գխողին ոտվին ու զատալայնին ու եփէ, ու առ գիր ջուրն ու լից ընդ փողքն ի վայր։

Եւ թէ ձմեռն լինի, նա դուն լից ի յիր ջուրն ալոյր ու տուր, որ խմէ, ու թէ ամառն լինի, դու զարէ ալոյր տուր։

ՃԳ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ, ՈՐ ԽՈՋՔ ՈՒՆՆԱՅ

Եւ այս ցաւս շատն ի քուռկնին լինի և կոչի քուռկցաւ։

Նշանքն այս է. լինի այս ցաւս ի քուռկնին և ի մեծ գրաստնին, ելունդնի||(151ա) է պինդ, որ լիննայ ի ներքև խամծեկացն, և թէ պէտ չայնեն՝ պատռի, և երթայ գինճութիւն ընդ քիթն, և ձգէ զինք ի խունանն կամ ի յռիպն։ Եւ է ցաւս սպաննող, թէ պէտ չայնեն։

Բժշկութիւնն է.

Բռնէ աքցնաւքն ու ճեղքէ նշդրկովն բոլոր, որ կարես հանել զխոզքն ղոյրութեամբ, և մտոյ զմատնդ ու քաշէ ի վերևէ, և ապաժ զմատդ ի շուրջ ու խլէ զինք ընդ ամէն դեհաց, ու ջանայ, որ անարատ հանես զինք, զի աղէկն այն է։ Եւ թէ չելնէ անարատ, որ կտրտի, դու ջանայ, որ զամէնն սրբես, որ իսկի չմնայ իրք, զի թէ մնայ, նա այլ վայր ընձայի ու մեծնայ, և այլ պեղծ լինի, քանձ առջև։ Եւ երբ սրբես ու հանես, դու ||(151բ) ջրխռնած քացխով

լուայ գինք, ու լուայ ու ծառայէ զէդ խոց մին այլ։ Ու քո ամէն ջանքն այն է, որ չթողուս, որ շատ երթայ արոյնն։ Եւ առ բուրդ ու թաթխէ ի բարկ քացախն ու ցամքցոյ զխոցին բերանն ու ածնէ զինք շող ձիթով ու մոմով։ Ու թէ կտրի արիւնն՝ դու սև ձոյթ հալէ ու ի վրայ շփէ։ Եւ ի քուռկնին այս հեշտ ելնէ և ի մեծ՝ մեծն դժար։

ՃԴ. ՅԱՂԱԳՍ ԽՈՑԻ, ՈՐ Ի ՅԱՂԻՔՆ ԼԻՆԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն է, որ արիւնախառն թրքէ և գայ որովայնն ի դուրք։

Բժշկութիւնն է.

Կարէ զայն աւել միսն. պատրաստ, որ յորովայնին բոլորն չխառես։ Զի թէ խառես զորովայնին բոլորն՝ մեռնի գրաստն։ Ապա եբ||(152ա) կտրես զայն աւել միսն, որ որովայնն անարատ մնայ, դու առ երեք նուկի քացախ ու ջուր, ու դիր ի ներս նռան կեղև, ու եփէ ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ առ գղթոր մի ու լեսէ, ու շաղղէ քացխով ու ջրով, և արայ զինք կլաւրակ մի, ու ձգէ ընդ գրաստուն փողքն ի վայր. նա բժշկի։

ՃԵ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՏՈՇՆ ԿԱՆԳՆԻ ԵՒ ԱՅԼ ՉՆՍՏԻ

Եւ այսոր նշանքն յայտնի է։

Բժշկութիւնն է.

Մտոյ զինք ի գետ մի, որ ուժով լինի և զարք ունենայ։ Եւ առ բուրակ ու խոզտի ու մոմ ու շինէ ածնելիք, ու սերտ ածնէ զտոշն, ու լից ի վրայն շատ պաղ ջուր։ Ու թէ ծով կենայ ի սահմանքն՝ դու աղ լից ի ջուրն։

Եւ այլ աղէկ դեղ այն է||(152բ), որ բարակ աղաւմ խոթէն ի տոշգլուխն։ Ու լից ի վրայ իրենն քացախ. նա բժշկի։

Եւ հոռոմ դեղ այս ցաւուս։ Առ Բ(2) կուտ մուշկ և երկու կուտ կղբու ձու ու լից ի վրա անպակ գինի, ու տրորէ, ու լից ի փոքր տկճորակ, ու դիր ի տոշփողն. նա բժշկի։

ՃԶ. ՅԱՂԱԳՍ ԱՐԾՎԵՑ[ԱՒՈՒ]

Նշանքն է. ուռենայ փորն և ոտվին ու ձուերն, և եբ դնես զմատդ ի վրայ ուռեցին և սեղմես, նա փոսնայ ի յոտվին։

Բժշկութիւնն է.

Ճլէ զգրաստն շատ ճլերով ու կանգնեցոյ յարեգակն, որ քրտնի, և շփէ զինք մազ ի վեր, և տուր, որ ուտէ զբողկին տերևն ու զքրեֆսն և այլ տաք խոտեր՝ զէդ ստեպղնի տերև կամ առվոյտ։ Եւ||(153ա) թէ չգտվի կանաչ խոտ, դու թրջէ զսեսեռն ի ջուրն ու տուր, որ ուտէ։ Եւ հետ աւրերոյ հետ պորտոյն չափէ երեք մատն ու ծակէ, ու դիր ի յինք եղէգն մի՝ զէդ լուլայ, որ ջուրն վազէ, և զծակն փոքր արա՝ զէդ որ մատդ մտէ, կամ այլ փոքր։ Եւ եբ ելնէ ջուրն, դու ծառայէ զծակն զէդ խոց մի այլ։ Եւ եբ թարխուի խոցն՝ դու հեծիր զինք, որ քրտնի, ու ելնէ այլ յեվերվծերն։ Ու եբ ջուր տաս՝ դու լկամովն տուր, որ սակաւ խմէ. նա բժշկի։

ՃԷ. ՅԱՂԱԳՍ ՍՊԻՏԱԿ ՅԱՒՈՒՆ

Նշանքն այս է. սպիտկութիւն, որ չկենա ի մարմինն, և յետոյ լինի ի տեղոց տեղ, ու ի պռկունքն աւելի, ու ի յաչվին||(153բ). և կայ, որ ճապղի յամէն մարմինն որպէս։

Բժշկութիւնն է, որ շառտէ զտեղն և աղնով ծակտէ.

Եւ առ հացի մէջ ու լից ի շառտտուքն։ Եւ զայս շատ տարպայնի արա, նա սննա։ Եւ յաչքն թէ կենայ, դու առ քուռթի ջուր ու խառնէ ի հետ շաքար ու ծայրրէ զաչքն այսով։

Այլ դեղ, որ եբ ի շլնիքն լինի կամ ի յայլ տեղ։ Առ խիչփրի ճրագու ու լեսէ, աւշնան և մեղր և աղ, խառնէ ընդ իրար։ Եւ թէ յաչքն է՝ դու ծայրոյրէ, և թէ յայլ տեղ՝ դու ածնէ։

Այլ դեղ։ Առ անծրութ դրամ մէկ, կաքֆու լեղի՝ դրամ երկուք, շաքար՝ դրամ երկուք, մամիրան ու քաֆուր ու սպիտակ պղպեղ ու յերկայն պղպեղ՝ ||(154ա) յամէն մէկէ դանկ մի, լեսէ ու մաղէ ու ծայրրէ իրովն զաչքն։ Եւ թէ սպիտակ կենայ ի յաչքն, զայն այլ տանի։

Այլ դեղ։ Առ արդար եղ և գարէ փոխինդ, խառնէ ընդ իրար ու դիր ի վրայ աչիցն, ու կապէ հինգ աւր։ Եւ հետ հինգ աւուրն հան զայն դեղ։ Եւ առ զրնճպիլ ու զաֆրան ու պենիրճ՝ յամէն մէկէ դրամ մէկ, մուշկ՝ չորս կուտ, խառնէ և լեսէ և մաղէ և ձգէ յիրմէն ի յաչքն, ու կապէ քթեթով, ու թող հինգ աւր։ Ու հետ հինգ աւուրն արձկէ ու դիր զմէկայլ դեղն, ու կապէ երեք աւր, և արծկէ ու դիր զայս մէկայլ դեղս, ու կապէ երեք աւր։ Եւ արծկէ ու տես, թէ աչքն խոցուել է, դու երեք աւր||(154բ) հետ իրաց պաղ ջուր քշտէ ի յաչքն, և հետ երեք աւուրն դէղ դրէ կովուց եղով. նա բժշկի։

ՃԸ. ՅԱՂԱԳՍ ԵԼԸՆԴԻ, ՈՐ Ի ՓՈՂՔՆ ԵԼՆԷ

Նշանք. ունենայ ներքև խամծեկացն՝ խեչ փողիցն մէկ ելունդ։ Եւ լինի, որ ի յիրմէ բախի և ընդ քիթն երթայ։

Բժշկութիւն[ն] է.

Շողցոյ զդմակն և կապէ ի վրայն տարպայնի, ինչուր փլչի։ Եւ թէ կակղնայ ու չփլչի՝ դու պատռէ, և ծառայէ զէդ այլ խոցեր. և բժշկի աստուծով։

ՃԹ. ՅԱՂԱԳՍ ԲԱՐԱԿՅԱՒՈՒ, ՈՐ Ի ԹՈՔ<Է>Ն ԼԻՆԻ

Նշանքն այս է, որ ուռէ զալի<ք>կն կատարեալ, ու քանի երթայ՝ նա աւրղնայ հայնց, որ ի հալ ու ի մաշն ձգէ, և փաքայ, և հևայ, և կտրի ||(155ա) աչվին։

Բժշկութիւնն է.

Առ վեց հաւուկիթ, կոտրէ ի յաման մի և դիր ի վրայ վարդի ձէթ՝ կէս նուկի, կովուց եղ՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար, և արայ երեք բաժին, ու յամէն աւր բաժին մի ընդ փողքն ի վայր լից։

Այլ դեղ։

Առ թուզ նուկի մէկ ու դիր ի պտուկ մի ու լից ի վրայ ջուր՝ նուկի մէկ ու կէս, և եփէ, որ մնայ յերեք բաժնէն մէկն։ Եւ հան զթուզն ու դիր հաւանն ու ծեծէ ու լից ի վրայ գարէջուր, ու կոտրէ ի ներս երեք հաւուկիթ ու միամորթէ, որ զէդ տայհին դառնայ, ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր։ Եւ զայս տարպայնի արա։ Եւ աւրեր տուր իր գարէջուր։ Հաւուկիթ||(155բ) ի ներս կոտրած աւկտակար է կամաւքն աստուծոյ։

ՃԺ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒ, ՈՐ ԿՈՉԻ ԹԱՎԱՍՈՒՑ

Նշանքն. ցաւս այս նման է ի շուկակ և լինի ի կոճքն ու չաճի ի բազուկն։

Բժշկութիւնն է.

Առ ի յայն ջրէն, որ ձիթապտուղն է ի ներս սնուցած, և լուայ այն ջրովն զկոճքն, և քթեթ մի, ու թաթխէ ի հոռոմ ձէթն և ի ջուրն, և բարդէ զկոճքն, ուր ցաւն կայ։ Եւ առ չոր թուզ, թրջէ ի քացախն աւր մի և գիշեր մի, և մէկայլն աւրն հան ու դիր ի հաւանն ու ծեծէ, որ զէդ մորհամ լինի։ Եւ դարձեալ առ զայն քացախն, որ թուզն էր ի ներս թրջած, ու լուայ զկոճքն ու զմբակն, ու||(156ա) դիր զայն թուզն ի վրայ ու կապէ. ու թէ թուզն հայնց լինի, որ խակ ի ծառէն ի վայր լինի ընկ<ն>ել ու չորցել, նա այլ աւկտակար է։

ՃԺԱ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒ, ՈՐ ԿՈՏՐԻ ՈՍԿՈՐՆ ՈՒ ԾՈՒՌ ԼԻՆԻ ԿՑԵԼ

Նա դեղերն այսպէս է. կապէ զգրաստն բարձր, որ չկարէ շարժել, և առ զտուղտն ու քչտէ, ու հան ի քթան քթեթ ի վերայ ու փակոյ ի վրայ այն տեղացն, որ ծուռ լինի կցել. նա քաշէ զքամին։ Եւ թող զինք այսպէս եաւթն աւր ի կախ, որ նստի, ու ծածկէ ջեր, և հետ եաւթն աւուրն արձկէ։

ՃԺԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՔԹԱՀՐԻԼ ԼԻՆԻ ԳՐԱՍՏՆ ՈՒ ՑԱՒ ԼԻՆԵԼ (=ԼԻՆԻ) ՏՎԵԼ

Նշանքն է, որ կամ լինի ի քթահրելոյ||(156բ) և կամ ընդ նեղ դուռն ի դուրս լինի ելել և ուսքն դիպել, կամ պառիկել լինի՝ նա յանկարծ կանչեն ի վրայն՝ նա յոտն ելնէ, ու ուսքն ի մսուրն դիպի քամքար, ընկնի ի վրայն։ Եւ այսպէս ի պատահմունքն, որ լինի։

Բժշկութիւնն է.

Առ երակ յերեսքն, և առ զայն արոյնն ու խառնէ ընդ իրար, և արայ տիմէտ ու դիր շող ի վրայ։

Առ հոռոմ ձէթ և երեք հաւուկիթ և գինի և լովիաս ու սխեռն՝ յամէն մէկէ չաք մի, զոր լեսելոյ է լեսէ ու խառնէ ընդ իրար, և արա տիմէտ, և դիր շող ի վրայ այն տեղացն, ու թող աւր մի։ Եւ մէկայլն աւրն հան ու աճռէ ձեռաւքդ պինդ, որ թուլնայ կայշին ի մսէն||(157ա)։ Եւ թէ խոց կենայ ի յայն տեղն, դու դիր ի յինք եղէգնէ լուլայ մի, ու շփէ, որ վերնայ կաշին, և դիր ի վրայ իր աղ և քացախ այն աւրն, և հան զայն ու ծփէ շող ջրով երկու աւր հետ իրաց, և հետ երկու աւուրն աւծնէ հոռոմ ձիթով. աւկտէ աստուծով։

ՃԺԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿՈՏՐԻ ՈՍԿՈՐ ԿԱՄ ԹԱՓԻ ՁԱՒԴՎԱԾ

Նշանքն այս է. ի քայշ տանի զոտքն կամ զձեռքն և բնաւ չաջողնայ, զի գրաստուն ոսկորն, երբ կոտրի՝ չաջողնայ և ոչ կ<տ>ցի։

ՃԺԴ. ՅԱՂԱԳՍ ԱԶԳ ՄԻ ԱՅԼ ՖՆՏՈՒԻ

Նշանքն այս է. եբ կենայ ու ելնէ գրաստն յախոռոյն, նա զէդ փաշխտած ելնէ, և երբ պահ մի երթայ, ապա ղորդի գնալն, և շոյտ աչողնա||(157բ), երբ ի գարոյ կտրեն։

Բժշկութիւնն է.

Առ հին խոզմիս ու խորվէ ընդ դէմ կրակին, որ չորնայ, և լեսէ, ու շաղղէ անպակ գինով և աւծնէ զկուրծքն։

Այլ դեղ։ Ծփէ շող ջրով և առ ի բազկունքն երակ։

ՃԺԵ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒՈՒՆ, ՈՐ Ի ՍՄԲԱԿԲԵՐԱՆՆ ԼԻՆԻ

Նշանքն է, որ եբ տանիս զձեռքտ ի սմբակբերանն, նա շող լինի, և եբ յիրար տաս, նա զձեռքն ի վեր կալնու։

Բժշկութիւնն է.

Առ զողտին տակքն ու եփէ ի ջուրն, ու ծփէ ի ջուրն իրովն աւերն զսմբակքն, որ գայ ու կակղնայ, ու պընդի ի ներքևէ։

Եւ հետ այնոր առ հին ճրագու և սխտոր, հալէ զճրագուն, ու||(158ա) ծեծէ զսխտորն ու խառնէ ի հետ, ու դիր ի ներքև սմբակին ու կապէ։ Եւ մանդր չոր թրիք դնեն ի ներքև սմբակին, որ կակուղ կենայ, և կանգնեցնեն ինն աւր անշարժ։

Այլ դեղ յասացելոց Ապի Ուսուֆին։ Առ հոռոմ ձէթ ու սխտոր ու ծեծէ, ու շողցոյ ու դիր ի վրայ սմբակին ու կապէ։

Այլ դեղ։ Առ դմակ ու խայծղան և լեղի նշի ձէթ, միամորթէ ընդ իրար ու դիր շող ի վրայ սմբակին. աւկտէ։

ՃԺԶ. ՅԱՂԱԳՍ ՍՄԲԱԿՑԱՒՈՒ, ԵՒ ՈՐ Ի ՍՄԲԱԿԲԵՐԱՆՆ ԼԻՆԻ

Նշանքն, որ լինի նաւսր սմբակ ու պեղծ, նայ յորժամ ի վրայ քարի կոխէ, նա ընդ ներքսէ արոյնի։ Եւ թէ չկարես ճանչել՝||(158բ) դու ի վրայ խճերոյ անցմնցեցոյ՝ նա քթահրի։

Բժշկութիւնն է.

Առ սև նաւթ և աւծնէ աւրեր զայն տեղն, հետ այնոր դմակեղ խառնէ և աւծնէ զայն տեղն, ու կամ կապէ զդմակն ի վրայ. նա աւկտէ աստուծով։

Զսմբակցաւուն դեղերս մեկ են վասն սմբակբերնին։ Եւ վասն սմբակի ցաւուն զԲ(2)ն արայ։

ՃԺԷ։ ՅԱՂԱԳՍ ԹԹԻ, ՈՐ Ի ՍՄԲԱԿՆ ԿԵՆԱՅ

Նշանքն. խոց է, որ լինի ներքև սմբակին ի մէջն, և երթայ յիրմէ ազռ, և քանի երթայ՝ մեծնայ։

Բժշկութիւն[ն]է.

Կտրէ և խարէ, և շող խայծղան կաթեցոյ ի վրայն աւրեր, և ցանէ ի վրայ կիպռաւսցի արջասպն, և ի ջուր մի՛ մտցներ։

||(159ա) ՃԺԸ. ՅԱՂԱԳՍ ԱՋԱՑԻՈՒ, ՈՐ ԿՈՋԻ ՔԱՄՆԱՅ

Նշանքն է, որ գրաստն յառջևն մէն տեսնու։

Բժշկութիւնն է.

Առ գարէ ալոյրի խմոր, չորցոյ և այրէ ու խառնէ յուղիանին ջուրն բուրակ ու մեղր. և դեղդրէ զաչքն։

ՃԺԹ. ՅԱՂԱԳՍ ԽՈՑԻ, ՈՐ ԳԱՋՆԻ ԽԱԾԱԾ ԼԻՆԻ

Նշանքն է*.

[Բշկութիւնն է].

Զինչ իսկի գազնի առած լինի ի յամառն և ի ձմեռն՝ լուայ պաղ ջրով, և առ շան գլուխն ու հան զլեզուն և այրէ ու խառնէ ընդ արջասպն՝ քանի զինք ի յիր շակքն, ու ցանէ ի վրայ խոցին։

Այլ դեղ, որ ունծն լինի առել։ Առ գորտն և ճեղքէ զփորն ու դիր ի վրայ. աւկտէ։

Այլ դեղ զարկուց, որ երկթով լինի քշտած։ Առ բոլոր զրևանդ, լեսէ և||(159բ) մաղէ ու շաղղէ մեղրով ու դից (=դիր) ի խոցն։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ զնշդարենի ծառին կեղևն, զներքինն այրէ ու մաղէ ու լից ի խոցն. ցան լիք, որ կտրէ զարոյնն ի խոցոյն։

Եւ այս շատ լինի, որ ի զարկուց կտրի երակ և երթայ արոյնն, մեռնի գրաստն՝ թէ չարգելեն զարոյնն։ Առ նո ոսֆունկառ(°), թաթղէ զինք ի սև ձոյթն և այրէ։ Եւ առ զայրուկքն և լեսէ ու ցանէ ի յայն տեղն ու կապէ։

Այլ արիւնակապք։ Առ զառիկ և կիր և արջասպն՝ յամէն մէկէ մասն մի, լեսէ ու մաղէ ու ցանէ ի խոցն. աւկտէ աստուծով։

---

* Ձեռագրում բացակայում է նշանների նկարագրությունը։

ՃԻ. ՅԱՂԱԳՍ ՑԱՒԻ, ՈՐ ՅՈՐՈՎԱՅՆ ԼԻՆԻ

Կայ, որ ելնէ յորովայնէն ճիճի։ Առ խարբախ ու կիր, որ ի ջուր չլինի‖(160ա) հասել, և արջասպն, լեսէ ու ցանէ ի յորվայնն, նա մեռնի ճիճին։

Այլ դեղ, որ սրբէ զորովայնն։ Առ վայրի կանափ և մորմենոյ տակ և քուշնայի ալոյր՝ յամէն մէկէ մասն մի, լեսէ ու մաղէ ու շաղղէ մեղրով ու դիր յորովայնն. ակտէ։

ՃԻԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՇՈՂ ԼԻՆԻ ԱՌԻՆ ԳՐԱՍՏՆ

Նշանքն է, որ ավղնայ գրաստն ու քովքն երթայ ի ներս, կտրի ի կերոյ և հևայ ուժով։ Եւ այս պեղծ նշանք է, որ մեռցնէ զգրաստն։

Բժշկութիւն[ն] է.

Առ ճաւշիր և քապրցախ, լեսէ ու մաղէ ու լից ի քիթքն, որ փռընգտայ։

Եւ առ շիրիկ ձէթ և հին գինի՝ յամէն մեկէ երկու նուկի, ամբրաւ չորս նուկի, եփէ զամբրաւն և առ զջուրն և խառնէ‖(160բ) հետ գինոյն և ձիթին։ Եւ առ ցրդոյ պտուղ ու չաման՝ յամէն մէկէ Ե(5) դրամ, աղ՝ երկու դրամ և կէս, լեսէ ու մաղէ։ Եւ առ երկու հաւուկիթ և կոտրէ յաման մի, ու լից զայս դեղերս ի վրայ, ու խառնէ զայն ջրերն ի ներս, ու հոռոմ դեղ շինէ. ագտէ։

Եւ առ կաւ ու թրջէ ջրով ու դիր ի գլուխն և թող երեք աւր։

Եւ եփէ գարէջուր ու խմցոյ գրաստուն։

ՃԻԲ. ՅԱՂԱԳՍ ՈՒՌԵՑԻ, ՈՐ ՅՈՏՎԻՆ ԼԻՆԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ, ԵՒ ՈՐ ՋՈՒՔՆ ԹՈՒԼՆԱՅ ՈՒ ԲԵՐԱՆՆ ՀՈՏԻ

Եւ այսոր նշանն յայտնի է։

[Բժշկութիւնն է].

Եթէ ձուքն ուռենայ, առ գարէ ալոյր և կտրածու աղ՝ յամէն մէկէ մասն մի, այրած խարտաս՝ կէս մասն, խառնէ ի գինի և ի մեղր,‖(161ա) բաժին մի դիր ի վրայ ոտվոյն և բաժին մի խմցոյ գրաստուն։

Այլ դեղ, որ ուռենայ տոշն և ձուքն։ Առ չաման ու բակլայ և ալոյր ու չամիչ՝ հանած ի կտէն, ծեծէ զամէնն, և քան ի զամէնն խառնէ ի հետ մեղր ու հոռոմ ձէթ, ու շինէ տլէ, ու դիր ի վրայ։

Այլ դեղ, որ ոտվին լինի ուռուցել։ Առ տուղտ և շահմիհանդալ, լեսէ և մաղէ ու խառնէ ի խոզտին ու դիր ի վրայ ուռեցին։

Այլ դեղ, որ թէ ի բերանն խոցեր լինի ելել ու հոտել։ Առ արջասպն, լեսէ ու խառնէ ի մեղրն ու շփէ ի բերանն։

ՃԻԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱՋՔՆ ՍՊԻՏԿԻ ԳՐԱՍՏՈՒՆ

Նշանքն այսոր յայտնի են։

[Բժշկութիւնն է].

Առ սպիտակ պղպեղ կէս նուկի, սև‖(161բ) պղպեղ՝ կէս նուկի, կտրածոյ աղ՝ չորս մթխալ, մուռ՝ երկու մթխալ, զա<ր>ֆրան՝ երեք մթխալ, ծովու խիչիփար՝ երեք մթխալ, պալասանի ձէթ՝ զայն չաքն, որ զդեղերն շաղղէ, լեսէ զդեղերն ու մաղէ ու շաղղէ պալասանի ձիթով ու դիր ի յաչքն։

Այլ դեղ, որ թանձրացել լինի սպիտակն ի յաչքն։ Առ սպիտակ պղպեղ ու հլելիճ ու յերկայն պղպեղ, նշատիր, ոսկի խլիմիայ և արծթի, հնդկցի թութիայ և անծակ մարգրիտ, զաֆրան, քաֆուր՝ ամէն մէկէ դրամ երկուք, լեսէ ու մաղէ մանդր ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։ Առ խիստ հին եղէգն, կտրէ և զոստերն ձգէ ու զեղէգն լեսէ խիստ մանդր‖(162ա) ու ձգէ յաչքն։

Այլ դեղ։ Առ սակաւ մի պղպեղ ու զաֆրան, լեսէ և մաղէ ու ձգէ յաչքն։

Այլ դեղ։ Առ խիչիփար ու չորցոյ ի շուքն, լեսէ և մաղէ ու ձգէ յաչքն։

Այլ դեղ։ Առ հաւկթի խեճեպ, լեսէ մանդր և խառնէ ի հետն սերկևլի կուտ, լեսէ և մաղէ ու ձգէ յաչքն։

Այլ դեղ։ Առ զկտրածոյ աղն, լեսէ և ծամէ և թուք ի յաչքն։

Այլ դեղ։ Առ խալիզոն, չորցոյ ու մաղէ ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։ Առ զտորվանտակն, չորցոյ, լեսէ ու մաղէ ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։ Առ մուռ երկու նուկի, հայխունկ՝ երկու նուկի, ժանգառ՝ կէս թուղթ, աղայ ու լից ի վրայ Բ(2) դրգալ գինի ու աղայ ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։‖(162բ) Առ ախլիմիայ թուխթ մի, սպիտակ ար-

10—1034

ջասպն՝ կէս թուխթ, սև պղպեղ՝ թուխթ մի, ժանգառ՝ կէս թուխթ, լեսէ ու մաղէ ու շաֆ արայ ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։ Առ զաֆրան կէս թուխթ, հացհամեմ՝ թուխթ մի, մուռ՝ կէս թուխթ, պղպեղ՝ կէս թուխթ, լեսէ ու մաղէ ու շաղղէ մեղրով ու դիր ի յաչքն։

ՃԻԴ. ՅԱՂԱԳՍ ԱՄԷՆ ԱԶԳ ՀԱԶԻ*

Նշանքն է. եթէ ի հովութենէ լինի, նա քանի աւթքն պաղի՝ հազն շատնայ։ Եւ թէ ի տաքութենէ լինի, նա ի փողիցն հազայ ու շունչն շող լինի։

Եւ թէ փետուր լինի կլել, նա խորու հազայ ի կրծացն։ Եւ քուռկնին հազան ի քամոյ, զի քանի չլինին լկամ||(163ա)ած՝ նա զբերնին չբանան խիստ, և եփ լկամեն՝ զբերնին բանան, նա մտէ քամին ի ներս ու հազ շարժէ։

Եւ լինի հազն ի պղտոր ջրէ և ի մախրէ, որ հետ ալկին ուտէ, և յարոյնէ՝ եբ խոնճեցել լինի, և ի փոշոյ, և ի թոքցաւերոյն, և ի կրծոց ցաւերոյն, և ի խռչակին խոշորութենէն. և բաժին մի յայսոց զամէն մէկ ի յիր տեղն յիշել ենք։

Բժշկութիւն[ն] է.

Գիտացիք, որ փորձել եմ շատ դեղեր հազին և չեմ գտել աւգտակար դեղ հազի, քանձ զայս, զոր յիշել կամիմ։

Առ խարտեշ չամիչ, հանած ի կտէն, կէս նուկի, կասլայի պտուղ՝ կէս թուխթ**, մարտակուշի հունդ՝ կէս թուխթ, հին ճրագու, որ||(163բ) չլինի աղած, կէս նուկի, սխտոր այրած՝ կէս թուխթ. այրէ զչոր դեղերն ու ծեծէ զայլն և խառնէ ընդ իրար և արա երեք բաժին. և առ յամէն աւր բաժին մի և դիր մեղրջուրի հետ, ու արա քուռճայ մի ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ երեք աւր այսպէս արա, նա զարմանաս ի յիր գործոյն։

Այլ դեղ հազի, որ ի հովութենէ լինի։ Առ սխտոր ու չամիչ, կոտման հունդ, ցրտի պտուղ, չաման՝ յամէն մէկէ կէս թուխթ, լեսէ ու մաղէ, ծեծէ զսխտորն ի հետ, ու լից ի վրայ շրիկ ձէթ, որ զէդ տաճին լինի, և արայ եաւթն բաժին։ Եւ եբ կամենաս զգրաստն դեղդրել, դու կտրէ ի կերոյ ի կէս գիշերվէն (164ա) ի վեր, ինչ-

---

* Ցանկում՝ փաքալոյ։

** Ձեռ. Նուկի. լուսանցքում ուղղված է Թուխթ.

վի արեգակն ցայթէ, և լից ի յայս դեղէս բաժին մի ընդ փողքն ի վայր։ Եւ լից ի հետ այնոր հին գինի երկու նուկի՝ ընդ փողքն ի վայր։ Եւ այսպէս արայ եաւթն աւր, մինչև բժշկի։

Այլ դեղ, որ ի հովութենէ լինի։ Առ տասնևհինգ գղթոր, այրէ և լեսէ ու խառնէ ընդ անգուժատ հինգ դրամ, և լից ի ներս հոռոմ ձէթ՝ երկու նուկի, և կոտրէ վեց հաւուկիթ և խառնէ ընդ իրար ու լից ընդ փողքն ի վայր։ Եւ եբ տեսնուս, որ կու սակվէ հազն ու կու մաւտենայ ի յաղեկնալ՝ առ չամիչ և հան զկուտն, ու ծեծէ ու խառնէ ի հետ ռզիանի հունդ՝ լեսած, ու դիր ի ներս մեղր սակաւ մի, ու միամորթէ ի հաւանն ||(164բ), ու շինէ զէդ ընկուզնի, ու ձգէ փողքն ի վայր երկու երեք մի։ Եւ առ չամիչ ու հան ի կտէն ու տուր, որ ուտէ յամէն աւր նուկի մի։ Եւ թէ չբժշկի, դու խմցոյ իր խոզի արոյն շող շող. նա բժշկի աստուծով։

Այլ դեղ հազի, որ ի փոշոյ լինի կամ ի շողոյ։ Առ երեք հաւուկիթ ու դիր ի քացախ, որ նաւսրանայ կեղևն և կակղնայ, ու ձգէ յամէն աւր երեք հաւուկիթ ընդ փողքն ի վայր և խմցոյ իր գարէջուր։

Այլ դեղ, որ ի քամոյ լինի ու թեթև հազայ։ Ձգէ ընդ փողքն կարագ՝ աւրեր. նա բժշկի։

Այլ դեղ հազի, որ խիստ ուժով լինի, և անյուսել լինիս ի բժշկելոյ։ Առ տփխս թուղթ մէկ, խառնէ ի հետ հոռոմ||(165ա) ձէթ՝ թուխթ մի, ու հալէ զ[տ]իփխն ի ձէթն, ու լից ի վրայ անպակ գինի՝ նուկի մէկ ու կէս ու լից ընդ փողքն ի վայր։

ՃԻԵ. ՅԱՂԱԳՍ ԳԼԽՑԻՌԻ, ՈՐ ԿՈՉԻ ՊՐՍԱՄ

Նշանքն է. ուռենայ աչվին և խփչի, և ուռենայ ամէն գլուխն, և յորժամ այջ ուսն բարձրնայ՝ դու գիտացիր, որ չապրի։ Եւ այս դժար ցաւ է, զի թէ ողջնայ, նա կարէ լինել, որ կուրնայ։

Բժշկութիւն[ն] է.

Տուր ուտելոյ դալար խոտ՝ զէդ սէզ ու մատղայշ գարոյ հասկ կամ բոյս և հինդպէ կամ կուդայ և յամէն ազգ հով խոտէ։ Եւ կան ոմանք մի, որ կու փռընքտացնեն այս դեղովս. առ բաշխտակ ու քաֆուր ու աղա||(165բ) վարդջրով, ու լնուն ընդ քիթն ի վայր ու փռընքտացնեն։ Եւ կան ոմանք մի, որ խարեն զայս ցաւս, ու այն խիստ վնասէ, զի ի վրայ կրակին կրակ կու լնուն։ Եւ ես կու ասեմ, որ այս ցաւուս բնաւ դեղ չկայ։

ՃԻԶ. ՅԱՂԱԳՍ ԲԵՐՆՑԱՒԻ, ՈՐ ՏԱՅԱՐ ԼԻՆԻ

Նշանքն է. այս ցաւս երկու ազգ է. մէկ ազգն, որ ի տեղի մի ելնէ ու չարծի ի բերանն, և գայ ի բերնէն հոտած հոտ, և փրփրայ բերանն. և մէկ այլ ազգն՝ խոցեր ելնէ ի բերանն, ու չգայ յիրմէ հոտած հոտ և ոչ փրփուր։

Բժշկութիւնն է.

Այս ցաւս ի գրաստուն դաշութենէն լինի։ Եւ դեղն այն ազգին, որ հոտած հոտ գայ ի յիրմէ, այս է. առ կիր, լեսէ մանտր, ||(166 ա) և թաթխէ քթան քթեթ ու շփէ ընդ առաստախքն, ու թող պահ մի զգլուխն ի կախ և լուայ ջրով։ Եւ վեց աւր այսպէս ծառայէ. աւկտէ։

Այլ դեղ մէկ այլ ազգին, որ շտեր ելնէ ի բերանն ու չգայ հոտ. առ ձիթենոյ տերև, լեսէ ու մաղէ, և առ քթան քթեթ ու թաթխէ, ու ամէն բերանն շփէ, և թող աղէկ պահ մի, ու լուայ։ Եւ վեց աւր այսպէս արա. նա բժշկի աստուծով։

ՃԻԷ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՏՈՇՆ ԿԵՂԵՒԻ

Նշանքն այս է. ցաւ, որ բնակի ի գրաստուն տոշն և պատճառն լինի, որ ի մատկին ամաւթքն կենայ իբրև զբոր, նա որձն յորժամ ի վրայ վազէ, կեղևի տոշն։ Եւ թէ այս ցաւս որ||(166բ)ձոյն լինի ու վազէ ի վրայ մատկին, նա որձն աջողնայ ու ի մատակն փոխի։

Բժշկութիւն[ն] է.

Առ շրիկ ձէթ ու հոռոմ ձէթ ու պաղ ջուր, խառնէ ընդ իրար և լուայ զգրաստուն տոշն։ Ու թէ չբժշկի, դու վազցոյ ի վրայ մատկին. նա աղեկնայ։

ՃԻԸ. ՅԱՂԱԳՍ ԱԿԱՆՋՑԱՒՈՒ

Նշանքն է. երթայ ընդ ականջն գիճութիւն որպէս մեղր։

Բժշկութիւն[ն] է.

Առ քուշնայի ալոյր և մեղր, խառնէ ընդ իրար ու արայ պատրոյգ, ու դիր յականջն։ Եւ թէ հեռու լինի տեղն ու պատրոյգն չհասնի, առ քու[ռ]թի ջուր ու խառնէ ի մեղրն և սակաւ մի քացախ, ու լից ընդ ականջն ի վայր։

Այլ դեղ։ Առ պաղլեղ, լեսէ ու ||(167ա) խառնէ ընդ մեղրջուրն ու լից ընդ ականջն ի վայր։

ՃԻԹ. ՅԱՂԱԳՍ ՏԱՐՖԱՅԻ, ՈՐ Է ՋԱՐԿՔ Ի ՅԱՉՔՆ

Նշանքն է, որ խփշի աչքն ու չկարէ բանալ ու արտասուէ։

Բժշկութիւն[ն] է.

Առ կտրածոյ աղ, ծամէ ու թուք ի յաչքն. բժշկի։ Եւ [թէ] ուժով լինի՝ առ լղպոր աղվնի ձագ մի, զենէ, և առ զարոյնն, խառնէ ընդ քուռթին ջուրն ու լից ի յաչքն։

ՃԼ. ՅԱՂԱԳՍ ՍՊԻՏԱԿՈՒԹԵԱՆՆ, ՈՐ ԼԻՆԻ ՅՈՏՔՆ ԿԱՄ Ի ՁԵՌՔՆ

Եւ այսոր նշանքն յայտնի է։

Բժշկութիւն[ն] է.

Խարէ ու ծեծէ զյիշոցքն, ու խառնէ ի խայծղանն, ու շփէ ի վրայ։ Եւ թէ չկենայ սպիտակ ու ուզես, որ սպիտակի, դու յամառն ի շող||(167բ) ամիսն առ աւաղ միս պախրի, որ յայն պահն լինի զենած, և կապէ և հինգ աւր թող ի վրայ, նա մազն գայ ի վայր, ու սպիտակ բուսնի։

ՃԼԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԾՌԵԼ ԼԻՆԻ ՇԼՆԻՆ

Եւ այսոր նշանքն յայտնի են։

Պառկցոյ զգրաստն ի ծուռ դեհին վերայ և սերտ մարձէ, որ զաւռվածնին ի տեղ ընկնի։ Եւ առ երեք մոշի փայտ շլնեցն յերկայնաւքն ու ծակէ զքաշին (=զկաշին) ի վերի դեհն ու ի ներքինն և անցոյ զփայտերն ի ներքև կաշոյն և աւծնէ հոռոմ ձիթով զտեղն ու կապէ պինդ, և յամէն աւր աւծնէ քացխով ու հոռոմ ձիթ[ով], և թող ինչուր կտըրտի փայտն և ի վայր գայ։ Եւ ծառայէ զծակտին զէդ||(168ա) խոց մի այլ. նա բժշկի։

ՃԼԲ. ՅԱՂԱԳՍ ԹԸԹԻ ԵՒ ՏԱՖՐԱՅԻ (=ՏԱՐՖԱՅԻ), ՈՐ ԶԷԴ ԶԵՂ Ի ՅԱՉՔՆ ԼԻՆԻ Ի ՎՐԱՅ ՍՊԻՏԱԿՈՒՅԻՆ

Նշանքն այս է. ելք, որ ելնէ ի յաչքն ու զէդ թութ լինի, և երթայ յիրմէ ագռ։ Եւ քանի երթայ՝ մեծնայ, ինչուր ծածկէ զլոյսն։

Բժշկութիւն[ն] է.

Կտրտէ մանտր զթութն և հան ի տեղացն։ Ու ծառայէ մլհամով զէդ խոց մի այլ։

Այլ դեղ տաֆրայի (=տարֆայի)։ Տուր բռնել զգրաստն ու

մտոյ ծնուրթայնի ու վերոյ. ու կտրէ բոլոր։ Եւ եբ կտրես դու, քացխով ու ջրով լուայ, ու կապէ զինք երեք աւր։ Եւ հետ երեք աւուրն ծառայէ այս դեղովս. առ զայն կավն, որ կոչի կիմուլիայ, թուխթ մի, ||(168բ) թութիա՝ կէս թուխթ, մատուտակ՝ մթխալ երկուք, լեսէ ու մաղէ և մեղրով շաղղէ ու դիր ի յաչքն։

ՃԼԳ. ՅԱՂԱԳՍ ՍԱՊԱԼԻ, ՈՐ Ի ՅԱՉՔՆ ԿԵՆԱՅ

Նշանքն է. քամի, որ լինի ի յաչքն, ու խփէ զմէկն ու բանայ զմէկն, ու կարէ լինել, որ ուռենայ կոպքն։

Բժշկութիւն[ն] է.

Առ ոսկոյ աղլիմիայ և արծաթոյ, անծրութ, սպիտակ պղպեղ, սև պղպեղ՝ յամէն մէկէ երկու դրամ, մարտսանգ, զաֆրան՝ յամէն մեկէ երկու դրամ, լեսէ ու դիր ի յաչքն։ Ու թէ մեղրով շաղղէս ու դնես՝ նա աւկտէ։

ՃԼԴ. ՅԱՂԱԳՍ ՅԱՐԱՂԱՆԻ*, ՈՐ Ի ՅԱՉՔՆ ԼԻՆԻ

Եւ այսոր նշանքն յայտնի է։ Եւ թէ պէտ չայնեն՝ նա կուրնայ։

||(169ա) Բժշկութիւնն է.

Լից ի յաչքն ռզիանի ջուր կամ վարդի ջուր։

ՃԼԵ. ՅԱՂԱԳՍ ԿՈԼԸՆՋԻ

Նշանք, որ նստի շատ և թափլի ու ոչ թրքէ ու ոչ գողէ, և ծեծէ ոտաւքն ու ձեռաւքն, և քրտնի անթքն, և հոտվայ ի թրիքն։

Բժշկութիւն[ն]է.

Առ բուրակ չորս դրամ, լեղկի ունդ՝ տասն դրամ, տուղտ՝ ափկից մի, հոռոմ ձէթ՝ կէս նուկի, աղ՝ ճանկ մի, ծեծէ զլեղկին հունդն ու լից ի վրայ ութ նուկի ջուր և եփէ, որ մնայ կէս նուկի, քամէ ու խառնէ զայլ դեղերն ի հետ, ու դիր հոռոմ դեղ. եւ թէ չարծկի՝ դու առ սակաւ մի ճաւշիր ու երեք նուկի ամբրաւ, տրորէ յայն եփած ջուրն, ու լից փողքն ի վայր. աւկտէ աստուծով։

||(169բ) Այլ դեղ։ Առ հայխունկ կէս թուխթ, լեսէ ու մաղէ, և

* Յանկում՝ արեխանւ

առ մեղր չորս դրգալ, հին գինի՝ երեք նուկի, քացախ՝ հինգ դրգալ, խառնէ ընդ իրար երեք բաժին ու լից յամէն աւր բաժին մի ընդ փողքն ի վայր, և ծածկէ չեր, և ած ի շուրջ։

ՃԼԶ. ՅԱՂԱԳՍ ՀԵՐՔՈՅՆԻ

Նշանքն է. ցաւ է, որ լինի յոտվին ու յակընջվին ու քիթն՝ զէդ շուշկակ, և ծծմայ, ու երթայ ի յիրմէ ջուր։ Եւ աւուրք մի յաեւնայ և աւուրք մի սակվէ։

Բժշկութիւն[ն] է.

Առ մարտսանգ կէս նուկի, շրիկ ձէթ՝ կէս թուխթ, արծթի քափշայ, ոսկոյ աղլիմիայ, սպիտակ դեղ, ժանկառ, քաֆուր՝ յամէն մէկէ ութ||(170ա) մէն մեկէ կէս թուխթ, չարհոտ ն զաֆրան՝ յամէն մէկէ ութ մթխալ, լեղի նուշ, կարմիր սանդալ, այրած զառիկ, հինայ, անծրութ՝ յամէն մէկէ կէս թուխթ*, այրած խաընճող, գղթոր, պլեւիճ, սպիտակ մոմ՝ յամէն մէկէ կէս նուկի. լեսէ զդեղերն և մաղէ, ու լից ի վրայ քացախ, և աղայ ու հալէ զմոմն, և ի յայն չակքն վարդի ձէթ, որ զինք շաղղէ, և արայ մորհամ. և ի բան տար։ Եւ մարդկաց այլ աւկտէ։

ՃԼԷ. ՅԱՂԱԳՍ ԻՐԻԿԱՄՆԱՅԱԻԻ

Նշանք է, որ եբ կենայ ու երթայ՝ զոտվին ի քաշ տանի և ծեծէ զգետինն, և հաստի ի պատն, և գողէ զէդ արոյն այլ պղտոր։

Բժշկութիւն[ն] է.

խարէ զձվատակքն, ու առ վայրի քրեֆսի հունդ և սասրաւն՝ յամէն մէկէ կէս թուխթ, պղպեղ՝ սակաւ մի, և խանտիկոնի շարապ. լեսէ||(170բ) զդեղերն ու խառնէ յայտ շարապտ կամ հիլիանի, և լից ընդ փողքն ի վայր. նա աւկտէ սատուծով։

ՃԼԸ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՃՖՆԻ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է. ուռենայ ոտվին ու երթայ շողիքն ընդ բերանն։

Բժշկութիւնն է.

Քերէ զմատուտակն և ջանչխէ և եփէ, և տուր զջուրն, որ խմէ։

* Ձեռ. հաջորդում է լեսէ, բայց վրան փոքր նշան է դրած, իսկ լուսանցքում՝ մի կետ. ըստ երևույթին բառը ավելորդ է, որովհետև հաջորդ նախադասությունից հետո է պահանջվում նշված դեղերը լեսել:

ՃԼԹ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԿԻ, ՈՐ ԱՐԳԱՆԴՆ Ի ԴՈՒՐՍ ԼԻՆԻ ԵԿԵԼ

Եւ այսոր նշանքն յայտնի է, զնոյն, և թէ գինութիւն երթայ ընդ քիթն։

Բժշկութիւնն է.

Պառիկցոյ զգրաստն ի վրայ ողինն՝ երեսք ի վեր, ու լից շող ջուր ի վրայ արգանդին շատ աղէկ՝ երկու պահ, և խոթէ յինք թարակ աղաւմ։ Եւ առ նռան կեղև ու գինի ու հոռոմ ձէթ, եփէ ու ծփէ իրովն||(171ա) զարգանդն, և մտոյ զարգանդն ի ներս և կարէ, ու թող տեղ, որ գողն ելնէ։ Եւ առ կասլայի պտուղ ու այրէ, և խառնէ յանպակ գինին, ու լից ի վրայ կարծին (=կուրծին) ու թող որ քամին ելնէ. նա բժշկի։

ՃԽ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀԱՒԿՈՅՐ ԼԻՆԻ

Նշանքն է, որ եբ արեգակն մայրի. նա լոյս չտեսնի, և այլըն-դայլ ձգէ զոտվին ու զձեռվին։

Բժշկութիւնն է.

Առ այծմնու լեղի և քուռթի ջուր և մեղր, խառնէ ընդ իրար ու դիր ի յաչքն։

Այլ դեղ։ Առ քաւշի լերդ ու ցանէ ի վրայ պղպեղ, ու խորվէ դէմ կրակին։ Ու առ զայն գինութիւնն ու դիր ի գրաստուն յաչքն։

ՃԽԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՀՈՏԱԾ ՀՈՏ ԳԱՅ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՄԱՐՄՆԷՆ

Եւ այնոր նշանքն յայտնի է։

Բժշկութիւնն է.

Առ գարէ ալոյր ու շաղղէ||(171բ) ի քացախն ու շփէ ի գրաս-տուն մարմինն։

ՃԽԲ. ՅԱՂԱԳՍ ԿՈՃԱՅՆ, ՈՐ ԹՈՒԼՆԱՅ

Նշանք, որ քթահարի, և եբ յիրար տաս զկոճքն, նա ցաւ տայ իր ու ի վեր կալնու։

Բժշկութիւն[ն] է.

Աւծնէ սպիտակ նաւթով աւրեր, նա բժշկի։ Եւ թէ խառնէս խայծղանի հետ, այլ աղէկ է։

ՃԽԳ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ Ի ՀԱԼԾՆԱՅՆ ԿԱՐՄՐԻ ԱՉՔՆ

Նշանք[ն] է, որ լինի յխստակ կարմիր և կենայ պղտորութիւն։

Բժշկութիւնն է.

Լից վարդի ջուր ի յաչքն աւրեր կամ աղչքն (=աղչֆան) մաւր կաթն՝ բժշկի։

ՃԽԴ. ՅԱՂԱԳՍ ԲՈՐՈՅ

Նշանքն է. կիծ է, որ ընկնի ի մարմինն և ելն[է] շտեր, և ի շատ քերելոյն մազն ի վայր գայ։

Բժշկութիւն[ն] է.

Բորն ի գրաստնին յերկու ազգ իրաց լինի՝ ի մաղձէ և յարոյ-նէ, որ եփէ զինք աւտ||(172ա)ար տաքութիւնն, և ի դրուցէ մարմ-նոյն քշտէ։

Եւ առ գիտունքն խիստ հեշտ է այսոր բժշկութիւնն։

Եւ այս ցաւս ի յայն ցաւերոյն է, որ փոխի յայլ գրաստվէ։ Պարտ է զատել զայն գրաստն ի յայլ գրաստնոյ և չծածկել բնաւ, և առնուլ իր երակ ի ճիտքն և ի քթացն յերակքն, որ յերեսն կայ, ի մէկ աւր, զի այս ցաւս ի մէկ զարկք ի դուրս կու փչէ, զի թէ զքթացն երակքն մէն առնուս, նա ընթանուր յսեւլվածքն ի ներքի զաւդվածքն իջնու, և դժար կարես հանել։ Եւ թէ զճիտքն մէն առ-նուս՝ նա յսեւլվածն ամէնն ի սրտին դեհն իջնու և սպաննէ զգրաս-տըն։ Վասն այնոր պարտ է զերկու երակն հետ իրաց կտրել։ Եւ հետ երկին [կտրելոյ] առ կրակաց մախրի ջուր և սև ձոյթ||(172բ), եփէ ընդ իրար ու աւծնէ զգրաստն, որ քաշէ զամէն յսեւլվածն ի դուրս։ Եւ հետ այսոր տուր գարէ ալոյր։ Եւ լից ի վրայ ջուր և հոռոմ ձէթ ու եփէ ու աւծնէ զգրաստն, որ քաշէ զամէն յսեւլված ի դուրս։ Եւ հետ երեք աւուրն եփէ զկրակաց մախրին ջուրն ու լուայ զգրաստն իրովն, նա շրջի կաշին։ Եւ առ մազեղէն ու շփէ ի վրայ։ Եւ հետ այնոր շփէ զայս դեղերս ի վրայ։ Առ սև ձոյթ և հոռոմ ձէթ և զիր մրուրն և դեղին ծծում՝ յամէն մեկէ նուկի մի, լեսէ և մաղէ և խառ-նէ ի ձէթն և աւծնէ զգրաստն։ Եւ առ սատանայի սեխուկ, բուրակ՝ յամէն մեկէ երեք դրամ, լեսէ և մաղէ և խառնէ ի մեղրջուրն, ու տուր դահ գրաստուն թուխթ մի* և մատղայշ գրաստուն, որ ինչվի

* Ձեռ. նուկի չորս, սակայն դրանց վրա նշան է դրված և լուսանցքում՝ թուխթ մի։

||(173ա) յերեք տարին լինի՝ կէս թուխթ, և քուսկին՝ կէս թխթի կէս։

Այլ դեղ բորոյ, որ ուժով լինի։ Առ դմակ երեք նուկի, խայծաղան՝ երկու նուկի, սև նաւթ՝ երկու նուկի, կաթն՝ երեք նուկի, սևուկ ճնդիկ՝ նուկի մի, ծծում՝ թուխթ մի, յիշոցք՝ երկու դրամ, աղ՝ ափկից մի, խառնէ զամէն դեղերն ընդ իրար լեսած և մաղած, և խառնէ ի ձիթերն, ու աւծնէ զգրաստն, և թող վեց աւր, և հետ վեց աւուրն լուա շող ջրով և շփէ իր թրքով ու լուայ, որ ելնէ. բժշկի։

Այլ դեղ։ Առ կասլայի ձէթ նուկի մի, յիշոցք՝ կէս թուխթ, սինապ՝ թուխթ մի, թուխթ մի՝ ցմխտակ, լից ձիթերն ի վրայ ու դիր ի շիշ մի, ու կախէ յարեգակն, որ սնանի։ Եւ յորժամ սնկիս՝ դու առ յիրմէ||(173բ) նուկի մէկ, ու լից ի վրայ հոռոմ ձէթ նուկի մէկ, և առ ճանկ մի սևուկ ընդիկ ու ճանկ մի աղ, լեսէ և խառնէ ի հետ և եփէ, որ եռ մի երկու եռայ, և առ ու աւծնէ զգրաստն, և կանգնեցոյ յարեգակն յամէն աւր պահ մի։ Ու դիր յառջևն ջուրն, որ թէ ուզենայ, նա խմէ։ Ու հետ երեք աւուրն աւծնէ շրիկ ձիթով կամ դմակով ու լուայ. բժշկի։

Այլ դեղ, որ կիծ ունենա։ Առ կասլայի ձէթ նուկի մէկ ու ձգէ ի ներս ճանկ մի սևուկ ընդիկ լեսած, եփէ ու թող որ հովնայ, ու շփէ ուր կիծ կենայ. նա բժշկի աստուծով։

ՃԽԵ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԽՈՆՃԵՑԵԼ ԼԻՆԻ ԳՐԱՍՏՆ

Բժշկութիւն[ն] է.

Առ գինի և մեղր, խառնէ ընդ իրար ու լից քիթն ի վայր ու փռընգտացոյ։

Եւ թէ ուռեց կենայ||(174ա) յաճուկն, դու զայտ դեղտ մի՛ այներ, ապա առ զաֆրան և տրորէ յեղկ ջուր և լից ի ձախ քթափողն և փռընճտացոյ։

Եւ առ իր երակ և առ զարոյնն ու լից ի ներս եֆրատ ալոյր և շաղղէ, և հան ի վրայ քթեթի մի, և յորտեղ ուռէց կենայ՝ ի վրայ դիր։

Եւ առ թուզ և թրջէ ի քացախն։ Եւ առ զայն քացախն ու ծփէ զոտվին, նա բժշկի։

ՃԽԶ. ՅԱՂԱԳՍ ԳՐԱՍՏՈՒ, ՈՐ ՋԱԼԻԿՆ ՋՈՒՏԷ

Առ պենիթ և զընճպիլ՝ յամէն մէկէ դրամ տասն, և անգուժատ՝ դրամ վեց, աղ՝ մթխալ հինգ, չաման, ցրդի պտուղ, կոտման ունդ, նանխաւհ, ծայթրին՝ յամէն մէկէ դրամ հինգ, լեսէ ու մաղէ ու խառնէ յանպակ գինին՝ վեց նուկի, և թող աւր մի և գիշեր մի, մէկայլն աւրն քամէ ու խառնէ ի հետ չորս նուկի ջուր։ ||(174բ) Եւ առ յիրմէ երեք նուկի ու լից ընդ գրաստուն փողքն ի վայր. նա բժշկի աստուծով։

ՃԽԷ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՆ ՋԳԱՐԻՆ ԱՆԱՐԱՏ ԱՆՑՆԷ*

Բժշկութիւն[ն] է.

Առ գինի ու հոռոմ ձէթ և թաթխէ զձեռքդ ու մտոյ յորովայն և սրբէ։ Եւ առ մեղր և խառնէ ի հետ սակամունի, և շինէ զէդ հաւուկիթ մի և դիր յորովայն։

ՃԽԸ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՐԱՍՏՈՒՆ ԱԳՈՅՆ ՄԱՋՆ Ի ՎԱՅՐ ԳԱՅ ԿԱՄ ԲԱՇՆ Ի ԿԾԷ

Առ տահին նուկի մէկ և ալոյր՝ թուխթ մի, զաֆրան՝ կէս թուխթ, յամբար՝ երեք կուտ և զայն խոտն, որ կոչեն իր փրփին՝ դրամ տասնևերկու, քաչու ղունգն՝ թուխթ մի, լեսէ և մաղէ և խառնէ ի տահինն ու շփէ ի գրաստն։

Այլ դեղ, որ յերկայնցնէ զմազն։ ||(175ա) Լուայ մարդոյ գոզով։ Եւ առ զմլուխի տերևին ջուրն և կաղամբի և տղտի ջուր և քիչ մի հոռոմ ձէթ և անպակ գինի, խառնէ ընդ իրար ու շփէ ի գրաստն։

Այլ դեղ։ Առ աղուվեսու ճրագու և աւծնէ զագին և զբաշն՝ մազն գայ։ Եւ փեղի ճրագուն այլ աւկտէ։

Այլ դեղ։ Առ հացհամեմի ունդ և կտաւատ՝ մասն մի, և լից ի վրայ քացախ և եռցոյ, և աւծնէ զագին և զբաշն։

Այլ դեղ։ Առ գի պտուղ, ծեծէ և հան զջուրն և աւծնէ զտեղն։

Այլ դեղ։ Եփէ ճակընդեղն և առ զիր ջուրն ու լուայ զբաշն և զագին, և աւծնէ շրիկ ձիթով. նա աւկտէ։

* Յանկում՝ prfէ։

ՃԽԹ. ՅԱՂԱԳՍ ՄԱՏԿԻ, ՈՐ ՁԳԷ ՁՔՈՒՌԱԿՆ

Առ թուզ երկու նուկի ու լից‖(175բ) ի վրայ չորս նուկի կաթն, եփէ և լից ի ներս լուացած գարի և թրջէ և տուր, որ ուտէ եաւթն աւր։ Եւ թէ չբժշկի՝ դու տուր տասնուչորս աւր։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ պղպեղ նուկի մի, զընճպիլ՝ կէս նուկի, զաֆրան՝ երեք դրամ, անգուժատ՝ մէկ դրամ, շաքար՝ կէս նուկի, թմբրհնդի՝ քսան դրամ, գարէ ալոյր՝ ճանկ մի, եփէ, և առ ի յիրմէ և եփէ ի հետ խոզտի, և լից ի վրայ գինի և ջուր ու խառնէ, որ լինի զէտ տահին։ Եւ յամէն աւր նուկի մի ընդ փողքն ի վայր լից։

ՃԾ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՄԱՑՆ ԹԱՒ ԼԻՆԻ ԵՒ ՈՒՋԵՍ, ՈՐ ՔՋԿՆԱՅ

Առ երկու ափկից սիսեռն, թրջէ ի ջուրն և խառնէ ի գարին ու տուր, որ ուտէ երսուն աւր։

ՃԾԱ. ՅԱՂԱԳՍ ԽՈՅԼԵՐՈՅ, ՈՐ ԵԼՆԷ Ի ՓՈՐՆ

Առ‖(176ա) երակ ի շլնիքն և ի կուրծքն։ Եւ առ չարհոտ տասն դրամ, կովուց եղ՝ կէս նուկի, անպակ գինի՝ կէս նուկի, խառնէ ընդ իրար ու հան ի վրա քթեթի և դիր ի վրայ փորոյն։ Եւ հետ աւրերոյ առ զգարէ ալոյրն և լուայ, ու կոտրէ հաւուկիթ ի ներս, և աղայ, որ լինի զէդ մորհամ, ու շփէ ի վրայ խոյլերոյն։

ՃԾԲ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԱՐՈՅՆ ԳԱՅ ԸՆԴ ՔԻԹՆ

Առ գորտներ, այրէ և խառնէ ի սև ձոյթն ու դիր պատրուգով ընդ քիթն ի վեր, նա կտրի արոյնն։

ՃԾԳ. ՅԱՂԱԳՍ ԱԿՌԱՅԱՑՆ, ՈՐ ՇԱՐԺԻ

Առ սևուկ հնդիկ, աղընձէ և լեսէ ու աղայ քացխով ու դիր յակռայտակքն։

ՃԾԴ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՅԱԿԱՆՋՆ ՔԱՐ ԼԻՆԻ ԸՆԿԵԼ

Շինէ պատրոյգ և աւծնէ տփխով կամ‖(176բ) բևեկի խիժով ու դիր յականջն, նա փակչի քարն՝ դու հան։

ՃԾԵ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԳՈՐ[Տ]Ն ԵԼՆԷ Ի ԲԵՐԱՆՆ

Առ սոյսր և լից ի վրայ ջուր ու աղայ և շփէ զբերանն. նա աւկտէ։

ՃԾԶ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԿԱՆԱՅՋ ԳՈՐՏՆ ԼԻՆԻ ԿԵՐԵԼ

Նշանքն է, որ պիտի մազն ի վայր գայ ու այլընդլի գրաստն։ Բժշկութիւն[ն]է.

Առ գորտներ և եփէ և լից ի ներս հոռոմ ձէթ ու դիր ի ներս հացի մէջ և տուր, որ ուտէ։

ՃԾԷ. ՅԱՂԱԳՍ ԱՒԵԼ ՄԱՁԻ, ՈՐ ԵԼՆԷ Ի ԿՈՊՔՆ

Առ խիշիփրի ճրագու և լեսէած աւշնան ու մեղր ու քիչ մի աղ, ծեծէ ընդ իրար, շինէ զէդ մորհամ ու խլէ զմազն ու դիր ի վրայ։

ՃԾԸ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՒՏՎԻ ԼԻՆԴՔՆ ԵՒ ԱԿՌԱ(177ա) ՏԱԿՔՆ

Առ տոլոյ մկրատկներ և ազոխ և թթու նուռն և աննուխ, ծեծէ, և առ զամենին ջրերն, և բաղդէ քթեթ մի ի փայտն և թաթխէ ի ջրերն և քշտէ զլինդքն։

Առ կոր, այրէ և լեսէ, և շփէ յակռայքն և ի լինդքն։

ՃԾԹ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ԼԻՆԴՔՆ ՈՒՌԵՆԱՅ

Առ քապրցախի տերև, լեսէ և խառնէ ի քացախն, և շփէ ի լինդքն։

Այլ դեղ։ Ծեծէ զխակ նուռն իր կեղևովն, և առ զջուրն և խառնէ ի հետ ազոխջուր, ու շփէ ի լինդքն։

ՃԿ. ՅԱՂԱԳՍ ՆԱՍՈՒՐԻ

Յասացելոց Ապի Ուսուֆին։ Առ եղրդակն և ոսպն ու կիր՝ յամէն մէկէ մասն մի, լեսէ և մաղէ և խառնէ ընդ կովուց եղ, ու շինէ պատրոյգ, ու դիր ի նասուրն՝ ողջնայ։

ՃԿԱ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՅՈՐՈՎԱՅՆԷՆ ԿԱՄ Ի ՏՈՇԷՆ ‖ (177բ) ԱՐՈՅՆ ԵԼՆԷ

Առ ղալար ընկուզի կեղև նուկի մէկ, ճուլինար՝ երկու նուկի, ալոյր՝ կէս նուկի. թէ ի հովութենէ լինի՝ դու գինով եփէ ու լից ընդ խրշակն ի վայր, և թէ ի տաքութենէ է՝ դու ջրով։

ՃԿԲ. ՅԱՂԱԳՍ ԿԾԻ, ՈՐ Ի ՍՄԲԱԿՔՆ ԿԵՆԱՅ

Եփէ զաւշնանն ու լուայ իր ջրովն զոտքն։ Եւ առ խակ թուզ և թրջէ ի քացախն։ Եւ լուայ այն քացխովն զսմբակքն։ Եւ ծեծէ զթուզն, որ զէդ մորհամ լինի, և դիր ի վրայ ոտիցն ու կապէ։

ՃԿԳ. ՑԱՂԱԳՍ ԽԻՉԻՓՐԻ, ՈՐ ՆԵՐՔԵՒ ԱՆԴԱՄՈՑՆ ԼԻՆԻ ԿԱՄ Ի ՅԱՅԼ ՏԵՂ

Մտիկ դիր, որ յորժամ շարժի, նա առ գետուտի խիչիփար և այրէ և խառնէ ի մեղրն կամ ի քացխի մրուր. և փռընքտացոյ։

Եւ առ սանաւրի ծառի տերև ու մատուտակ||(178ա) և շաֆքաւրան և սատանայի սեխկի տակ, լեսէ ու մաղէ, և շաղղէ պաղ ջրով, և դիր ի վրայ։ Եւ թէ բացվել լինի՝ դու գինով շաղղէ, ու թէ ի տեղ լինի խաչիփարն, որ կարես հանել, դու հան. և ծառայէ զէդ խոց մի այլ։

ՃԿԴ. ՑԱՂԱԳՍ ՑԱՒՈՒ, ՈՐ ՅԱՃՈՒԿՆ ԼԻՆԻ ՁԷԴ ՈՒՌԷՑ ԿԱՄ ԻՋՎԱ

Հանգոյ զգրաստն աւրեր և ծփէ շող ջրով։ Եւ առ ամպակ գինի և եռցոյ, ու սպուկգռով խարկէ զտեղն։ Եւ առ մոմ ու ձէթ և այծու ճրագու և անգուժատ ու քացախ, և շինէ աւծնելիք և աւծնէ։

ՃԿԵ. ՑԱՂԱԳՍ, ՈՐ ՇԱՏ ՀԱԼԾՆԱՑՆ ՆՍՏԻ ԵՒ ՁՈՏՎԻՆ Ի ԾԱԼ ՊԱՀԷ

Առ ամպակ գինի և ջրխառնէ, և լից ի քիթն ու փռընքտացոյ։ Եւ ջեր պահէ զգրաստն ու զջուրն եղկ||(178բ) տուր, որ խմէ, նա աւկտէ։

ՃԿԶ. ՑԱՂԱԳՍ ԽՈՋՄԱՁԻ*, ՈՐ ՅԱԳԻՆ ԼԻՆԻ

Այս մազս յորժամ յագին ելնէ, զագին ի պատերն շփէ, նա պարտ է զայն խոշոր մազերն փետել։ Եւ ճեղքէ յագոյն ծայրէն զէդ կէս թիզ։ Եւ եփէ զթուզն, և լուայ այս ջրովս, և լից մանդր աղ ի յայն տեղն, որ ճեղքեցեր, և թող աւր մի, և մէկայլն աւրն լուայ թզի ջրով, և աւծնէ զտեղն պախրէի լեղով։ Եւ տարպայնի այսպէս ծառայէ։

ՃԿԷ. ՑԱՂԱԳՍ, ՈՐ ԱՐԻՒՆ ԳՈՁԷ

Առ անխոռն և քրեֆսի ունգ, լեղի նուշ, աւշինդր՝ յամէն մէկէ դրամ մէկ, լեսէ և մաղէ, և առ յիրմէ երեք դրամ և խառնէ ի մեղրջուրն ու լից ի փողքն ի վայր։

---

* Յանկում՝ մազկեր։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ զրևանդ յերկայն ||(179ա) երկու մթխալ, եփէ ի ջուրն և լից ի փողքն ի վայր։

ՃԿԸ. ՑԱՂԱԳՍ, ՈՐ ՊՆՉԵՐՆ ՅԻՐԱՐ ԳԱՅ

Որ դի որ քթահարի գրաստն և երթայ ի վրա քթացն և կոտրի պինչն և չկարենայ հանապազ երթալ, զի արգելի շունչն։ Եւ պիղծ ցաւ է։

Բժշկութիւնն է.

Ծփէ զինք շող ջրով և մարձէ, որ ղորդի, և շողցոյ զգինին, և սպունկգռով խարկէ։ Եւ առ քաւշի ճրագու և մոմ, հոռոմ ձէթ և սակաւ մի քացախ, յարապիկ խէժ, շինէ աւծնելիք և աւծնէ զքիթքն. նա աւկտէ։

ՃԿԹ. ՑԱՂԱԳՍ ԽՈՑԻ, ՈՐ ԿՈՉԻ ՄԵՂՐԱԳՈՅՆ

Այս խոց է, որ ելնէ ի զաւդվածնին ի գիջութենէ, և կապի այն գիջութիւնն՝ և լինի զէդ մեղր։ Եւ վասն այնորիկ կոչեցաւ անունս այս իւր։

Բժշկութիւնն է.

Առ հոռոմ||(179բ) ձէթ չորս նուկի, աւշակ՝ նուկի մէկ, սպիտկդեղ ֆռասկցի՝ նուկի մէկ, ռասուխտ՝ կէս թուղթ, ժանգառ՝ կէս նուկի, լեսէ և շինէ մորհամ. և դեղդրէ զխոցն։

Այլ դեղ այս ցաւուս։ Խարէ պղընձէ խարչնով զայս խոցս և զամենայն շռտած խոցեր. պատրաստ, որ ի ջեղն չհասնի և կարճընայ։ Եւ ծառայէ այս դեղովս. առ սինապ, դեղին ծծում, աֆիոն, ճֆնոյ տակ, լեսէ և մաղէ. և ծառայէ զէդ խոց մի այլ։

ՃՀ. ՑԱՂԱԳՍ ԹԸԹԻ, ՈՐ ՔԻԹՔՆ ԵԼՆԷ

Թէ յերևան լինի՝ դու կտրէ և շփէ արջասպով և քացխով շատ տարպանայնի (=տարպայնի)։

Այլ դեղ։ Առ զրևանդ, եփէ ի հոռոմ ձիթի մրուրն և շփէ ի կտրուքն, և թէ չլինի յերևան՝ չկայ իր դեղ։

ՃՀԱ. ՅԱՂԱԳՍ ԽՈՒՄՐՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԿԱՏՂԵՆ*...

[ՃՀԲ. ՎԱՍՆ ԱՒԿՏԱԿԱՐ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՂԻ]

[ՃՀԳ. ՎԱՍՆ ՈՐ ՋԱՄԷՆ ԱԶԳ ՊԻՆԴ ԵԼՈՒՆԴ ԿԱԿՂՑՆԵՆ]

...‖(180ա) ղտ լեսէ ու մաղէ ու շաղղէ քացխով ու դիր ի վրայ ելընդին։

ՃՀԴ. ՅԱՂԱԳՍ ՏԵՌԻ

Առ մնջանի տակ և փիճոյ խէժ, արոյն աղբրաց, անծրուք, խունկ, յամէն մէկէ մասն մի, լեսէ ու ցանէ ի վրայ տեռին։

Այլ դեղ։ Առ սապոն, մուռ, անծրուք, աղբրաց արոյն, խունկ աղտորի խէժ, փիճոյ խէժ, սաւնապրի խէժ, զընճուֆր, ժանգառ, բամբկի կտի մէջ, ճուլինար, լեսէ ու մաղէ և ի բան տար։

Այլ դեղ տեռի։ Առ խախիայ, Մսրի մտէտ՝ յամէն մէկէ մասն մի, շրէշ՝ երկու մասն, լեսէ և մաղէ և ի բան տար։

ՃՀԵ. ՅԱՂԱԳՍ ՍԵՒ ՄՈՐՀԱՄԻ

Առ սև ձոյթ, բևեկի խէժ, անզուժատ, լից ի վրայ սև ձոյթին հոոոմ ձէթ և արդար եղ‖(180բ), որ ծածկէ զինք, և հալէ ու մորհամ արայ և ի բան տար։

Այլ մորհամ։ Առ սև ձոյթ տասն դրամ, անծրուք՝ երկու դրամ, խնկի փոշի՝ երկու դրամ, ժանգառ՝ երկու դրամ, չարհոտ՝ երկու դրամ, շրէշ և լից ի վրայ ձէթ ու մլհամ արայ, աւկտէ ամէն ազգ տեռի և փուտ միսի։

ՃՀԶ. ՅԱՂԱԳՍ ԲԵՒԵՌՀԱՍԻ

Քաշէ զբևեռն և բաց։ Եւ առ նրճէսի սոխ և ըղտու կուտկակ, ծեծէ ընդ իրար և դիր ի յայն տեղն, որ կակղնայ։

Այլ դեղ։ Առ կտրածոյ աղ, լեսէ և մաղէ և խառնէ և դիր յարդար եղն, և դիր ի վրայ և ասայ բանք զայս.

Յանուն աստուծոյ հայհրնդեաց, զաւրութեամբն աստուծոյ հահրնդեաց, մեծութեամբն աստուծոյ հահրնդեաց, կարողութեամբն աստուծոյ հահրնդեաց։

---

* Ձեռագրից թերթ է ընկած: Էջահամարները դրվել են թերթի բացակայության ժամանակ: ՃՀԲ, ՃՀԳ գլուխների վերնագրերը բերվում են ըստ ցանկի:

‖(181ա) Այլ դեղ։ Թէ ծնկունքն լիննայ ուռեցել, առ սինապ, լեսէ և շաղղէ ճակընդղի ջրով ու դիր ի վրայ ծնկվոյն ու կապէ։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ Քրմանի բուրակ երկու դրամ, հընդըկցի աղ՝ երկու դրամ, լեսէ ու շաղղէ կովուց եղ և դիր ի վրայ ուռեցին. նա ցրվի աստուծով։

Այլ դեղ, որ զարկք կենայ ի ջեղն, նա կարէ լինել, որ փաշխտի գրաստն և կակղնայ և լինի զէզ ֆնտու, և գայ ի մէկ տեղ, կապի և ոստրի։

Եւ իր բժշկութիւնն այս է. առ սպիտակ թուզ՝ հասած, թրջէ ի քացախն երեք աւր, և քանի հնանայ ի քացախն՝ լաւ է, և առ յիրմէ, ծեծէ ու դիր ի վրայ ոստռած ջղին ու կապէ, ու թող երկու աւր և հան ու փոխէ ու նոր դիր։ Տարպանայնի (=տարպայնի) այսպէս արայ՝ նա բժշկի։

‖(181բ) ՃՀԷ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՄԱԶՆ ՈՏԻՑՆ Ի ՎԱՅՐ ԳԱՅ

Լուայ սապոնով երեք աւր և ցամքցոյ։ Եւ առ անծրուք հինգ դրամ, հացհամեմ՝ հինգ դրամ, լեսէ ու մաղէ և դիր յերկթէ շերեփ մի ու լից ի վրայ կաթն ու եփէ, որ գայ ու կապի։ Եւ շփէ ի յայս դեղէս ի վրայ, ու կապէ ու թող չորս [աւր] ի վրայ, և հետ չորս աւուրն արծկէ ու հանգոյ աւր մի։ Եւ այլ վայր զդեղն դիր ի վրայ չորս աւր. և այսպէս արայ տարպայնի, ինչուր մազն բուսնի։

Այլ դեղ. Ապի Ուսուֆին ասացեալ. փորձած։ Առ կեղևած սխտոր և քան ի զինք դմակ, և դիր ի հաւանն ու ծեծէ, որ զէգ մորհամ լինի, ու լուայ սապոնով, ու դիր ի վրայ ու կապէ, որպէս զմէկայլն, որ ասացաք։

Այլ դեղ։ Առ թակնի խնձոր հինգ դրամ‖(182ա), բուրակ՝ տասն դրամ, հացհամեմ՝ տասն դրամ, լեսէ ու մաղէ և եփէ կաթաւ ու դիր ի վրայ։

Այլ դեղ։ Առ սոյրս (=սոյսր) երկու նուկի, գխթոր՝ նուկի Ա (1), լեսէ ու շաղղէ մեղրով ու դիր ի վրայ։

Այլ դեղ, որ թէ ծնկացն մազն կամ արմնկացն ի վայր լինի եկել։ Առ խնկենոյ տերև, ծեծէ ու դիր ի վրայ ու կապէ։

Այլ դեղ այս ցաւուս։ Առ այգոյհաւտ և այրէ, ու առ զիր մոխիրն ու խառնէ ի քացախն ու դիր ի վրայ։

11—1034

ՃՀԸ. ՅԱՂԱԳՍ ԽՈՅԼԵՐՈՅ, ՈՐ ԵԼՆԷ Ի ԿՈՃԱՑՆ Ի ՄԷՋՆ

Տես, որ բնաւ չխարես, զի թէ խարես՝ աւերէ, նա մեծ յայպ մնայ։ Ապա առ զտարարին ու խայծղան ու դիր ի վրայ ու կապէ։

Այլ դեղ։ Ծեծէ զսեուկ հնդիկն ու քացխով շաղղէ ու դիր ի վրայ։

Այլ դեղ։ Առ մատուտա||(182բ)կի տերև, լեսէ ու մաղէ և շաղղէ քացխով ու մեղրով ու դիր ի վրայ ու կապէ։

ՃՀԹ. ՅԱՂԱԳՍ ՃԱՐԱՏԻ

Ծեծէ զյիշոցքն և խառնէ ի քացախն ու շփէ ի ճարատն։

ՃՂ. ՅԱՂԱԳՍ, ՈՐ ՈՒՌԷՑ ՈՒՆՆԱՅ Ի ԾՈՒՆԿՆ

Ծեծէ զյիշոցքն և խառնէ ի խայծղանն ու դիր ի վրայ, և պատրաստ կալ, որ ոտքն չդիպի ի մսուրն՝ վասն ճանճալոյ։

Տմէտ, որ ակտէ պինդ ուռէցի, որ ի ծունկն լինի։ Առ քաւշի ճրագու և ամբրաւ, ծեծէ, որ զէդ մորհամ լինի, ու դիր ի վրայ ուռեցին և կապէ։

ՃՂԱ. ՅԱՂԱԳՍ ՇՈՒԿԱԿԻ, ՈՐ ՈՒՆՆԱՅ ԳՐԱՍՏՆ

Տես, որ բնաւ ի ջուր չմտցնես։ Ապայ առ պախրէի միս ու դիր ի քացախն ատր մի և գիշեր մի, և քրըզմէ զոտքն||(183ա), և դիր զմիսդ ի վրայ ու կապէ՝ զէդ երկու պահ, և արծկէ. նա ելնէ յիրմէ մանտր որդներ և բժշկի։

Այլ դեղ։ Լուայ շող ջրով և ճանկ մի հացհամեմի ունդ լեսէ և եփէ կաթաւմ, դիր ի վրայ ու կապէ։

Այլ դեղ։ Առ արապիկ խէժ և ռեանդ, լեսէ և լուայ զշուկակն աւշնանով և ցանէ ի վրայ զդեղն ու կապէ։

Այլ դեղ։ Քրըզմէ զոտքն և շաղղէ զբուրակն քացխով ու դիր ի վրայ։

Այլ դեղ։ Առ մոմ ու ձիթենոյ խէժ, հալէ ի հոռոմ ձէթն ու շինէ զէդ մորհամ և ի բան տար. ակտէ աստուծով։

ՃՂԲ. ՅԱՂԱԳՍ ԱՉԻՑ ՑԱՒՈՅ, ՈՐ ԿՈՉԻ ՍՈՒԼԱԽ

Նշանք. հանապազ երթայ ագռ ընդ աչքն և կարմրի աչքն։ Բժշկութիւնն է.

Առ անծրութ դրամ մէկ, ||(183բ) կաքֆու լեղի՝ դրամ երկու, շաքար՝ դրամ երկուք, մամիրան ու քաֆուր և սպիտակ պղպեղ ու յերկայն պղպեղ, յամէն մէկէ՝ դանկ մի, լեսէ և մաղէ ու դեղդրէ զաչքն. բժշկի աստուծով։

* * *

Գիրքս այս Բժշկարան է ձիոյ և առհասարակ գրաստնոյ, յաղագս դեղոց և նշանաց, որ ճանչենան զաղէկն ու պիղծն։

* * *

Փառք, պատիւ և երկրպագութիւն Հաւր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Արդ գրեցաւ Բժշկարանս ձիոյ և առհասարակ գրաստնոյ, որ ճանչենան զաղէկն և զպեղծն, հրա[մա]նաւ քրիստոսայ||(184ա)սէր արքային հայոց Սմբատայ իմաս[տ]նո և մտախոհի և հանճարաշատին և բարեպաշտի, որոյ աջն Քրիստոսի աստուծոյ միշտ հովանասցի նորա փառաց ի փառս բարձրանալ նմայ, երկար կենաւք։ Ամէն։ Եւ ի հայրապետութեան տեառն Գրիգորիոսի թարգմանեցաւ գիրքս այս ի յարապ գրէ ի հայ բառ, որ է Բժշկարան ձիոյ և այլհասարակ (=առհասարակ) գրաստնոյ, ի բազում իմաստասիրաց և Փիլիսոփայից Ծընայ և Ապի Ուսուֆին և Ըռայշիտայ և այլ բազում հնդկաց և Պաղտըտայ իմաստասիրացն ասացեալ, որոց զանուանքն չենք աստ գրել։

Եւ արդ ես նուաստ բժիշկս՝ Յարայճս, հրամանաւ տեառն իմոյ սուրբ արքային յանձն առի բազում աշխատանաւք և թարգմանեցի զսա զորդ և յստակ բառիւ, զի յոյժ||(184բ) հմուտ էի և վարժեալ յարուեստս բժշկութեան ի մեծն Պաղտատ բազում ամաւք։ Եւ իմ ազգաւ և հաւատով ասորի, աստուածապաշտութեամբ կատարեալ ուղղափառ։ Եւ աշխատեցայ թարգմանել զբժշկական և զիմաստասիրական գիրքս ի մայրաքաղաքս Սիս։

* Ձեռ. *այլ հասարակ։*

Արդ ես, Թորոս տրուպ քահանայ, տեսեալ զիս Ցարաճ բժիշկս այս, և յոյժ աղաչեաց զիս և շատ հարկեաց և բազում խոստմունս խոստացաւ ինձ և բազում երդմունս երդուեալ ինձ կատարեալ ի սուրբ և յընտրեալ արքայէն: Եւ ես յորժամ լուայ զփափաքումն սուրբ արքային վասն սորին, ես ապա յանձն առի և գրեցի ի սմին և ապա վերստին նորոգեցի և գրեցի մեծ գիր ի յարապ գրէ ի հայ բառ, զորդ և յստակ... (Ձեռագիրն ընդհատվում է):

Ի ԳՐԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՐԱՆԷՆ ՓՈԽԱԾ*

Ա. ՅԱՂԱԳՍ ԿԱՂՆԱԼՈՅ

Գրաստուն կաղալն երկու .ցեղ է. է որ ի ծածուկ կաղայ և է որ յայտնի. և որ կամենա ճանաչել՝ այս է նշանքն. որ ի մէկ ոտիցն կաղայ՝ նա ի գլխոյն շարժելն ճանչուի և ի կալօփցնելն և յորժամ հալծեցնեն զձին և կանգնեցնեն որ պաղէ և ձեռօք փնդռեն յերին և ի ծունկքն և ի կոճքն և ի սմբակքն և ի յետի ոտւին՝ նա երևնայ թէ ուստի կու կաղայ, և յորժամ ի դոյր քարոտ գետին կալօփցնեն՝ նա թէ ի սմբակն կենա կաղութիւն նա երևնա, և թէ չլինի ի սմբակն՝ նա եբ ընդ դար ի վեր հանեն կամ որ ի սանդղմատն կոխէ նա ի վերայ բազկացն վախ հաստի, և յորժամ թապլի գրաստն՝ նա առաւել յայտնի կաղութիւնն. և երբ յանկասկած ի շուռ ածեն զգրաստն ի մէկ դեհն ու ի մէկ այլն՝ նա թէ ի կուրծքն կամ ի բէճքն կենա կաղութիւնն նա երևնա:

Բ. ՅԱՂԱԳՍ ՖԸՆՏՈՒԻ

Գրաստ որ ֆընտու լինի՝ հևայ խիստ և լարի պինչքն, թուլնա գլուխն և ամէն զօդվածքն, փայտնայ ոտվին, կտրի ի կերոյ և ի սկիզբն մինչև յերեք օրն շունչն տաք լինի և ապա պաղէ շունչն և այլընդլի. աչվին խփի և դժար շարժի ամէն զօդվածքն, և տքալով գողէ և դժար քայլ փոխէ, և թէ ընկնի դժար ելնէ ի յոտն, և լինի որ քրտնէ անդմունքն:

Բժշկութիւնն է այս ցաւուս:— Երակն, որ չորս օր չուտեցնել գարի, յետ չորս աւուրն կանգնեցնել զինք երեք օր ի գնացք ջուր, որ թաղվի ինչվի քովքն ի ջուրն, ու յամէն օր տարպա մի հանեն ի ջրէն և օծնեն ամպակ գինով և հոռոմ ձիթով աղէկ, ու մարձեն դէպ

* Տպագրվում է ըստ «Բազմավէպի», 1867, էջ 354—357՝ առանց փոփոխու-թյան:

ի վայր եբ ոտվին կակղնա ու լանա որ աղէկ քայլէ՝ նա անցմընցեցնեն ու արծեն։

Գ. ՅԱՂԱԳՍ ՔԱՄՈՅ ԵՒ ՈՒՌԵՑԻ, ՈՐ ՉԿԱՐԷ ԹՐՔԵԼ ԵՒ ԳՈՋԵԼ

Նշանքն այս է։ Գրաստն քթահրի ու ջանայ որ նստի ու դառնա որ դէպ ի յետ հայի։

Բժշկութիւնն է։ Առ հին գինի լիտր երկու և ջուր լիտր տասն, լից ի վերայ և առ խոզտի լիտր մի և անգուժատ դրամ տասն, ծեծէ զանգուժատն և խառնէ ի հետ քչիկ մի ալոյր ու խառնէ ի ջրած գինին ու եղկցոյ ու դիր հոռոմ դեղ, և ապա առ կանաչ գնձի ջուր լիտր մի և կէս և խմցո քչիկ քչիկ։

Դ. ՅԱՂԱԳՍ ԹԹԻ ՈՐ ԼԻՆԻ Ի ԳՐԱՍՏՈՒՆ ՏՈՇՆ ԿԱՄ Ի ՁՈՒՔՆ

Քաշեն ձար մի յագոյն ու կապեն զթթին տաքն պինտ ու թողուն հինգ օր ու ծխեն ներքև անծրութ, նա կտրի ու ընկնի։— Այլ դեղ։ Առնուն սոնօպրի կեղև դրամ հինգ, եփեն յամպակ գինի և ծփեն զտեղին։

Ե. ՅԱՂԱԳՍ ԿՈԼԸՆՁԻ

Նշանքն է որ թուլնա շլնիքն, բռնվի զօդվածքն, դողայ, նստի ու թապլի և ելնէ ի բերնէն փրփուր։

Բժշկութիւնն է։ Առ թառանգուպին դրամ տասն, տրորէ զինք յերեք լիտր շողջուր ու լից ընդ փողքն ի վայր և անցմնցեցո, և թաթխէ զձեռնդ ի մեղրն և ի ձէթն՝ և մտոյ ի գրաստուն որովայնն և սրբէ։— Այլ դեղ։ Առ հայխունկ նուկի մի, լոսէ ու մաղէ, ու առ մեղր դգալ երեք, հին գինի լիտր երեք, քացախ դգալ հինգ, խառնէ ընդ իրար, երեք բաժին արա ու լից յամէն օր բաժին մի ընդ փողքն ի վայր, ծածկէ ջեր և ած ի շուռ։

Զ. ՅԱՂԱԳՍ ՔԱԾՊԱՐԻ

Նշանքն է որ ի շուկակն ի նման լինի բայց չառնու զամէն ձեռն և ելնէ յիրմէ գիճութիւն և թարախ։

Բժշկութիւնն է։ Առ երակ ի բազկունքն ընդ ներքսէ և ընդ դրացէ, և լուա զխոցն շողջրով սպկիկ ու թող որ ցամքի. և առ մեղր դրամ քսան ու դդմի կտոր, այրէ որ լինի գործելի, լեսէ ու

խառնէ հետ մեղրին ու կապէ քթեթով երեք օր. ու ապա բաց, թէ չլինի ողջցել՝ դու երկու երեք հետ այլ արա։

Է. ՅԱՂԱԳՍ ՄԿՆԱՏՄԵՐՈՅ

Եփէ զօշնանն ու ջրովն լուա սպկիկ ու ցամքեցո, ու օծնէ զինք բաղցր կարագով ի յօրն երկու տարպա, ու մի՛ թամբեր ու հեծնուր ինչվի ողջանա։

Ը. ՅԱՂԱԳՍ ԸՌԱՄԱՏԻՍԻ

Նշանքն է, որ իջնու ջուր ի քթէն որ չլինի հոտած, և փաքայ որ արցվէ աչքն։

Բժշկութիւնն է։ Լից ընդ քիթն ի վայր մանուշկի ձէթ ու փռընքտացո երեք օր, որ խաշէ զաղի ձուկնն ու լից զջուրն ընդ քիթն՝ ի վայր որ փռընքտա, ու ծխէ ընդ քիթն ի վեր՝ յատպէ ու խունկ։

Թ. ՅԱՂԱԳՍ ՑԱՐՍՆԻ

Առ սպիտակ կեղեմինտր որ չլինա հասել յինք ջուր, ու շփէ զֆարսնին ակներն աղէկ վաղն ու յիրիկունն, ու լուա զինք պախրի գօզով. նա ելնէ յիրմէ զեղ կորեկհատեր. և առ աղէկ կալեքար, լոսէ ու մաղէ ու ի վերայ ցանէ ու լուա զխոցերն վաղն ու յիրիկունն։

Ժ. ՅԱՂԱԳՍ ԳԱՅԼՑԱՒԻ

Նշանքն է. լարի շլնիքն և ակընջվին, քաշվի աչիցն սևուցն որ սպիտկուցն շատ երևնա, և փայտնա շլնիքն որ չհասնի ի գետինն, և կտրի յալկէ և ի ջրէ, և պատճառն լինի ի հովէ և ի քըրտընելոյ որ դիպի յինք քամի և պաղի և յայնոր որ յարեգակն կապեն։

Բժշկութիւնն է։ Կապէ զգրաստն ի մութնտուն, ու քերթէ զմաքին ու զմորթին շող շող հագոյ ի վերայ գլխոյն ու շլնեցն, ու աղէկ կարէ, և զբուրդն ի դուրս արա և շողցոյ զարդար եղն ու լից ընդ ականջքն՝ ի վայր ու օծնէ զամէն կռնակն ու զողնն ու զքովքն. ու տուր առվոյտ ու ի մօտ կեցիր ու բարձր կապէ որ չնստի. ու զմոշին ու զխնկի փոշին ծխէ ներքևն. ու վառէ ի խեչն զմոշին կամ հայնց փայտ որ մուխ չայնէ, և լից ընդ փողքն ի վայր խանդիխունի շարապ. բժշկերն գիտեն։— Այլ դեղ։ Առ խոզտի, փիճոյ

խէժ, բևկի խէժ ու հոռոմ ձէթ· շինէ զայս օծնելիք ու օծնէ զգրաստուն ամէն մարմինն մազ ի վեր*։

. . . .

Այլ դեղ· Առ մոմ ու ձիթենոյ խէժ, հալէ ի հոռոմ ձէթն և շինէ զեղ մորհամ և ի բան տար։

ԻԹ. ՅԱՂԱԳՍ ՍՐՕՍԻ

Նշանքն է։ Լինի ի սրօնքն զեղ ոսկոր ուռեց խիստ պինտ, և թէ ի զօդվածն մտէ աւիրի գրաստն։

Բժշկութիւնն է։ Քրիզմէ զտեղն և սպրկցո ի մազէ, և ապա առ ակիշ որ լայնքն սրօսին չքօք լինի, շանթցոյ և կալ ընդդէմ յերակ որ խիստ տաքնա սրօսն ու բոյթաւմտ աճռէ ու տրորէ սերտ յօրն երկու հետ· ու եբ լեղենաս յաճռելն, դու լեսէ տաշեղ զառիկ ու շաղէ ու ի վերայ դիր սրօսին չքօք ու կապէ· ի յօրն երկու հետ արա զդեղտ ինչվի հալի սրօսն։—Այլ դեղ։ Նոյն նշանօքտ քրիզմէ և շողցո և աճռէ· և առ անլուա սապոն ու մարդո խիզով տրորէ ու ի վերայ դիր· և այս կերպովս արա մինչև հալի սրօսն· և քանի մատղաշ լինի գրաստն նա շուտ ողջանա։

Լ. ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱՑ ՃԱՆԱՉԵԼՈՅ ՁԻԱՒ ԳՐԱՍՏՆ ԵՒ ՋՎԱՏԹԱՐՆ

Երեսն աւաղ, յակընջէ ականջ արձակ· բերանն մեծ· շրթունքն նօսր· քթափողքն արձակ· դունչն ի պախցտեղոյն ի վայր պարկեշտ· աչքն մեծ և յիստակ, և պտուղն թուխ, և յիրացմէ ի հեռու, կոպքն նօսր· ականջքն ի ցից և յերկայն· տակքն բարակ մինչև ի մօտ ի մէջն և քանի ի վեր երթա նա լայննա, և ծայրն սուր, և լինի ականջն պարկեշտ և նօսր և երբ բռնես պինտ· դուբէթն կակուղ և յերկայն, և մանտր մազն որ ի հետ կա կակուղ, և ոսկրն որ ներքև դուբէթին կա՝ ցած՝ շլնին յերկայն, և փողքն և ճիտքն բարակ և նօսր, և շլնոյն երկու ջեղն որ յուսէն ինչվի ծոծրակն է ներքև բաշին՝ եբ բռնես նա պինտ լինի և ի լար· և շլնոյն մէջն բարձր, և շլնոյն ներքև մորթն ի կախ զեղ եղին։ Նքթէպն և բիճգլխնին ի թաղման, և երբ բռնես նա լինի պինտ, և բիճացն մէջն ի դուրք, և ողնշարն զորդ որ շլնոյն վկայէ· կուրծքն արձակ, և կրծոցն երկու ձկունքն ի դուրս, և մորթն որ ի վերայ է կակուղ,

* Հրատարակիչը նշում է, որ ձեռագրից թուղթ է ընկած։

և երկնին որ ի յինք կա՝ հաստ։ Ծղիքն կարճ և հաստ, և յետի կարթքն լայն և յետի ձկունքն հաստ և երկնին շատ և յերևան, և կարթքն ի յոտն։ Երբուծն նօսր և ցած· կողքն լայն և հաստ, ծունկքն պարկեշտ և ի մօտ յիրար· և ջղերն որ ի վերայ բազկացն սփռեալ է նա աղէկ յերևան լինի։ Կոճքն կարճ և աւաղ ի մսէ· և ջիղքն կարճ և ի թաղմնի, որ ոչ աւելի ի յոտն լինի կոճքն և ոչ աւելի կակուղ քան զշաքսն։ Սմբակքն մեծ և կակուղ և գուշ, և կրկունքն դէպ ի դուրս և գորտն ամուր և չոր։ Մսանքն որ ինչվի ի վերայ քովացն հասնի, վերի դեհն հաստ, և ներքինն նօսր և արձակ յիրացմէ։ Մէջքն ի նքթէպէն ինչվի պճկոռացն հուլն կարճ և հաստ· և պճկոռացն յերկայնքն և լայնք և բարձրութիւնն ի չափ։ Անդմացն շքեռքն արձակ, և ագետկուն ներքև միսն հաստ և պինդ, և մորթն լաւ ի փակման· անդամն լայն, և պրճուկն ի բարձր վիցած ի չաք· և խնծորքն ի չաք ի դուրս վիներս· և ոռն հեռու ի ձվոցն և արձակ, որ կոճքն զիրար չծեծէ· և անդմոցն ձկունքն ներքսինն և դրուցինն հաստ և լայն և մսլի և պինտ· և այն մեծ երակն որ ներքև անդմացն կենա հաստ և կարճ· և կոճքն կարճ, և ջեղն հաւասար ի յետի կոճացն ի վայր· և լինի առջևոտ* . . . .

* Հրատարակիչը նշում է, որ ձեռագիրը այստեղ ընդհատվում է։

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Միջին հայերենի բառագանձի ուսումնասիրությանը նպաստելու, ինչպես նաև հրատարակվող հուշարձանն ընթերցողներին մատչելի ու հասկանալի դարձնելու համար աշխատասիրողը նպատակահարմար է գտել սույն բառարանում բացատրել և, անհրաժեշտության դեպքում, ստուգաբանորեն ներկայացնել՝

1. Մեր բառարաններին անծանոթ այն բոլոր հայերեն բարդությունները, որոնք օգտագործված են միայն հրատարակվող «Բժշկարանում».

2. «Բժշկարանի» բնագրում առաջին անգամ հանդիպող բոլոր փոխառյալ բառերը.

3. Բոլոր այն բառերը, որոնց հնագույն գրավոր վկայությունը տալիս է «Բժշկարանը».

4. Այն բառերը, որոնք ուղղագրական աննշան տարբերություններով մեկ կամ երկու վկայությամբ պահպանվել են միջին հայերենի հուշարձաններում, մասնավորաբար 13-րդ դարի երկրորդ կեսին արաբերենից հայերենի փոխադրված «Գիրք Վաստակոցում»։ Այս բառերը նպաստում են հաստատելու և ցուցաբերելու հայերենի կիլիկյան բարբառի, հատկապես գյուղատնտեսական բառապաշարի միասնությունը.

5. Բառերի բարբառային տարբերակները.

6. Մի շարք բառեր, որոնք մեր ստուգաբանական ու բացատրական բառարաններում անստույգ են դիտվել կամ ճիշտ չեն ստուգաբանվել։

Բառարանում հիմնականում չեն ընդգրկված ամփոփված ձայնավորներով բառերը. օրինակ առւել (=առաւել), եոցնել (=եռացնել), զարկնել (=զարկանել) և այլն, ինչպես նաև ա ձայնավորից հետո յ ունեցող բառերը՝ օրինակ՝ այջ, կանայշ, մառղայշ և այլն։

Բառարանը կազմված է հետևյալ սկզբունքով. նախ տրվում է բառի այն ձևը, որ պահպանված է հրատարակվող բնագրում (եթե

բառը ունի նաև այլ ուղղագրություն՝ տրվում է և այդ ձևը), այնուհետև փակագծերում նշվում է բնագրի այն էջը, որտեղ բառը հանդիպում է առաջին անգամ. հաճախ նշվում են նաև բառի կիրառման այլ օրինակների էջերը։ Բառի բացատրականում հիմնականում տրվում են տվյալ գրքում բառի ունեցած իմաստը, երբեմն նաև այլ առումները։ Անհրաժեշտության դեպքում, մանավանդ եթե բառը առաջին անգամ է հանդիպում մեր մատենագրության մեջ, վկայակոչվում է բնագրի այն նախադասությունը (կամ նախադասությունները), որտեղ օգտագործված է բառը։ Որոշ հիվանդությունների և դեղաբույսերի անուններ տրվում են նաև լատիներեն. դրանց համար հիմք են ընդունված Ամիրտովլաթի «Անգիտաց անպետի» 1926 թ. հրատարակության Կ. Բասմաջյանի ծանոթագրությունները և Ա. Բեդևյանի «Բուսանունների պատկերազարդ բազմալեզվյան բառարանը» (Կահիրե, 1936)։

Բառը ստուգաբանելիս առանձին տողով նշվում է փոխառյալ լեզուն, այնուհետև բերվում է բառի արաբատառ ձևը, որին հաջորդող փակագծերում տրվում է տառադարձությունը։ Առանձին պարբերությամբ, ի հարկին, տրվում են բառի ստուգաբանման հետ կապված որոշ մանրամասներ։

Բոլոր այն բառերը, որոնք մեր բառարաններում չեն գրանցված, ցույց են տրվում + պայմանանշանով։

Եթե բառը ծանոթ է մեր բառարաններին, սակայն նորովի է ստուգաբանվում կամ լրացուցիչ նոր բացատրություններ են տրվում, ապա այն ցույց է տրվում ○ պայմանանշանով։

Բարբառային տարբերակները ցույց են տրվում □ պայմանանշանով։

Հայտնի է, որ արաբական բառերն ու տերմինները միջնադարյան հայ գրականության մեջ միօրինակ տառադարձություն չունեն, որի հետևանքով մեր բառարաններում դրանք հաճախ գրանցված են այլևայլ գրերի ներքո. այսպես օր. յարաղան «դեղնություն» հիվանդության անունը Աճառյանը վերցրել է Մխիթար Հերացուց, որ տառադարձել է արական ձևով, Գրիգորիսը այն տվել է արաղան և եարաղան, իսկ մեր հուշարձանը յարաղան ու արեխան տառադարձությամբ։ Հետևաբար բառարանից օգտվողները պետք է նկատի ունենան, որ այստեղ բառերը տրված են միայն այն ձևով, ինչպես հանդիպում են «Բժշկարանիս» բնագրում։

Բառարանը կազմելու համար օգտագործված են՝

1. Արիկեան Մ., *Երեքլեզուեան ընդարձակ բառարան՝ տաճկերէն-հայերէն-գաղիերէն, Կ. Պոլիս, 1888։*

2. Ալիշան Ղ., *Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895*=Հայբուսակ:

3. Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976*=Է. Աղայան:

4. Աճառյան Հ., *Հայերէն արմատական բառարան, հ. Ա-Է, Երևան, 1926—1935*=Աճառ. ՀԱԲ:

5. Ամատունի Ս. վրդ., *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912*=ՀԲԲ:

6. Ամիրտովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկութեան։ Խմբագրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940*=Օգ. բժ.:

7. Ամիրտովլաթ Ամասիացոյ *Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց։ Ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա, 1926*=Անգ. անպէտ:

8. *Առձեռն բառարան, Բ. տպ., Վենետիկ, 1865*=ԱԲ:

9. *Բառգիրք հայոց արարեալ.... Երեմիայ վարդապետէ, Յալիկոռնայ, 1698*=Երեմիա Մեղրեցի:

10. *Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975*=ԲՀ:

11. *Բժշկական եռալեզվյան բառարան, 1438 թ.* (Karst J., Das trilingue Medizinalglossar aus MS 310 der Wienner Mechitaristen Bibliotek, „Zeitschrift für armenische Philologie“, B. 2, H. 2, Marburg, 1903)=1438 թ. բժշկ., ZFAP.

12. Բիւզանդացի Նորայր, *Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Կոստանդնուպոլիս, 1884*=Նորայր ֆրանս. բառ.:

13. *Գիրք վաստակոց։ Թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ։ Վենետիկ, 1877*=Գիրք վաստակոց:

14. Գրիգորիս, *Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց։ Աշխատասիրությամբ Ա. Ա. Կծոյանի, Երևան, 1962*=Գրիգորիս:

15. *«Թարգմանութիւն անուանց դեղոց յայլ լեզուաց ի մերս», Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռ. 1821, 1294 թ., էջ 143—146 (օգտագործված է մանրաժապավենը)*=1294 թ. ձեռ. բժշ.:

16. Մառուրյան Թ. Գ., *Բույսերի անունների լատիներեն, հայերեն, ռուսերեն բառարան, Երևան, 1970*=Մառուրյան:

17. Կարապետեան Պ. Զ., *Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912*=Կ. Զեքի:

18. Կարստ Ժոզեֆ, *Միջին հայերենի բառարան (գերմաներեն), անտիպ, Մատենադարան, Դիվան, Այլևայլ թղթեր*=ՄՀԲ:

19. Կիրակոսեան Գ., *Բառարան պարսկերէն-հայերէն, Թեհրան, 1933*=Կիրակոսյան:

20. Հովնանեան Ղ., *Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրա, 1897*=Ղ. Հովնանյան:

21. Մալխասեանց Ստ., *Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Դ, Երևան, 1944—1945*=Մալխաս.:

22. Մխիթար Աբբա, *Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա—Գ, Վենետիկ, 1769*=ՀՀԲ:

23. Մխիթարայ Բժշկապետի Հերացւոյ *Ջերմանց Մխիթարութիւն, Վենետիկ, 1832*=Մխիթար Հերացի:

24. Մուրադյան Մ. Հ., *Բառագիտություն, տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Երևան, 1972, էջ 168—296*=ԱՄԳՀՊ:

25. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա և Բ, Վենետիկ, 1836—1837*=ՆՀԲ:

26. Պողոսեան Հ. Պ., *Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Լոս Անճելըս, 1942*=Պողոսյան:

27. Պօզաճեան Յակովբոս Վ., *Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ, Վիեննա, 1841*=ՊՅ:

28. Ջախջախեան Մ., *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837*=ՋԲ:

29. *Абусаид,* О строении человека. К изданию подготовила С. А. Варданян, Ереван, 1974 =Աբուսայիդ:

30. *Баранов Х. К.,* Арабско-русский словарь, Москва, 1957.

31. *Миллер Б. В.,* Персидско-русский словарь, Москва, 1953.

32. Персидско-русский словарь в двух томах, под редакцией Ю. А. Рубинчика, Москва, 1970.

33. *Bedevian A. K.,* Illustrated Polyglottic Dictionary of Plant Names, in Latin, Arabic, Armenian, English, French,

German, Italian and Turkish Languages, Cairo, 1936=Բեդևյան:

34. *Clauson G.*, An Etymological Dictionary of Pre-Thirteenth Century Turkish, Oxford, 1972.

35. *Redhouse J.*, A Turkish and English Lexicon, Constantinople, 1921.

36. *Steingass F.*, Persian—English Dictionary, London=Շտեյնգաս:

37. The Faras-nama of Zabardast Khan, Calcutta, 1911=*Պարսկ. տպ. ձիամատյան:*

38. الفاظ ادویه تصنیف نورالدین محمد عبدالله شیرازی *(Դեղորայքի բառարան, աշխատասիրությամբ Նուր ադ-Դին Մոհամեդ Աբդուլլա Շիրազիի) [19-րդ դ. Հնդկաստան]:*

39. الفاظ الدویه میزان الدویه فرهنگ نصیریه انیس المعالجین *(Դեղորայքի բառարան և չափերը, Նասիրիյեի բառարան, բուժողների բարեկամը) [19-րդ դ. Հնդկաստան]:*

40. دهخدا، لغت‌نامه، تهران، ۱۳۲۵ *(Դեհխոդա, Բառարան, Թեհրան, 1325/1946):*

41. فرنود سار یا فرهنگ نفیسی، جلد ۱–۵، تهران، ۱۳۱۷–۱۳۳۴ *(Հանրագիտարան կամ Նաֆիսու բառարան, հ. 1—5, Թեհրան, 1317—1334 1938—1955):*

* * *

Արաբերեն և պարսկերեն բառերի լատիներեն տառադարձությունը տրված է ժամանակակից արևելագիտության մեջ ընդունված տառադարձման հետևյալ համակարգով:

ء	ʼ	ر	r	ف	f	ای	ā	ـَو	aw
ب	b	ز	z	ق	ḳ	و	ū	ـَي	ay
پ	p	ژ	zh	ك	k	ي	ī		
ت	t	س	s	گ	g				
ث	th	ش	sh	ل	l	ـَ	a	ـّيّ	ıyy(ı)
ج	dj	ص	ṣ	م	m	ـُ	u	ـُو	ū
چ	č	ض	ḍ	ن	n	ـِ	i	ة	a, at
ح	h	ط	ṭ	ه	h				
خ	kh	ظ	ẓ	و	w				
د	d	ع	ʻ	ى	y				
ذ	dh	غ	gh						

Ագէտակ *(47),* ագիտակ *(59)—ագիի, պոչի տակի հատվածը. «Ագէտկուցն միսն, որ կայ յետև անդմացն, նա լինի հաստ և պինդ» (47):*

Ագէտակ *վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 201):*

O Ակռ *(132, 143, 149)—որևէ հեղուկի նստվածք, աղտ, դիրտ. «Աւծնէ զձեռքըդ հոռոմ ձիթով ու մոռյ պատրաստ ի յուղովայնն, ու սրբէ ու հան* զակռն *և զլորութիւնն զինչ գտնուս» (132). «Ելք, որ ելնէ ի յաչքն, ու զէդ թութ լինի, և երթայ յիրմէ* ակռ*» (149):*

— արաբ. عكر ('akr, 'akar) — *նույն նշ.:*

Գիրք Վաստակոցի բառարանը, նրա հետևողությամբ նաև Աճառյանը (Ա, 17), առանց նշելու բառի ծագումը, ուղիղ են մեկնում՝ «Դիրտ կամ մրուր քաղցուի կամ մեղեր, և աղտ վիրաց» (էջ 239): Մալխաս. (Օգ. բժ., 547) ակռ *մեկնում է «փորի ավելորդ աղբ»:*

Մ. Մուրադյանը (ԱՄԳՀՊ, 260) ակռ (ագռ)*-ից է բխեցնում* ակռմէջ (ագռմէջ) *«կենդանու սրունքների և բարձերի մեջտեղի մասը»: Ուղղելի. Աճառյանը (Ա, 839) իրավացիորեն* ակռմէջ *կամ* ակմէջ *մակաբերում է* ակ *«ոտք» ձևից:*

□ Ագկիկ *(70)—ազգիկ, տոհմիկ, նրբակազմ, նրբին. «Աղէկ ազգ ձի* ագկիկ *և անարատ իր զաւդվածաւքն»:*

□ Ագոխչուր *(129, 157)—ագոխաչուր, խակ խաղողի հյութ, ժռաչուր: Տե՛ս* ագոխ:

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 223): Պահպանված է բարբառներում: Մալխասյանցը ունի ագոխաչուր:

Ալիկ *(67, 69), արաբ.—անասնակեր.*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 211 (Աճառ. Ա, 53):

Ալկել *(67, 82)—անասունին կեր տալ:*

Վկայված է Անսիզքում, էջ 79 (Աճառ. Ա, 53):

□ Ալոյր *(106, 108)—ալյուր:*

Ախլիմիա *(145)—տե՛ս* աղլիմիայ:

\+ Ահնաֆ *(89)—ծուռ ոտք. «Ոռութիւն կա [սմբակի], որ ներքսէ լինի և ասեն իր* ահնաֆ»:

—արաբ. حنف (ḥanaf), *հոգն.* احنف (aḥnaf) — *նույն. նշ.:*

\+ Ահոկրար *(86)—վնասարար, վնասակար. «Ջի աղցած գարին այլ քէիկ* ահոկրար *է»:*

Կազմված է ահոկ *«վնաս» արմատից և* արար *վերջածանցից:*

\+ Ահսաֆ *(57)—բառացի՝ սպի. «Թէ լինի քովքն սպիտակ, ասեն* ահսաֆ»:

—արաբ. احصاف (aḥṣāf) — *նույն նշ.:*

O Աղբրաց արոյն (160)—աղբրաց արյուն։

Տե՛ս Հայբուսակ (§ 53)։ Մալխասյանը հիշատակում է այս բույսի տարբեր անունները՝ աղբերաց, աղբոր կամ յոթն աղբերաց արյուն, յոթն եղբոր կոան արյուն, աղբերանց ծաղու, աղբրան կամ աղբոր արյուն, որ համապատասխանում է լատ. Anoplanthus Tournefortii կամ Bibersteinii, իսկ Բեդևյանը (§) 2632) դնում է լատ. Phelypaea coccinea Poir.

O Աղլիմիայ (150), ախլիմիայ (145), խլիմիայ (145)—արծաթի, ոսկու կամ այլ մետաղի խարամ, աղտ. «Առ ոսկոյ աղլիմիայ և արծաթոյ անծրութ» (159)։

—արաբ. اقليميا (aḳlīmiā) — նույն նշ.։

Գիրք Վաստակոցը (էջ 113) ունի ագլիմիա ձևով. իմաստը ճիշտ է մեկնում Վաստակոցի բառարանը (էջ 239)՝ «աղտք ոսկւոյ և արծաթոյ»։ Մալխասյանցը Օգ. բժշկ. բառգրքույկում աղլէմիա մեկնում է «քիմիական նյութ, թթվուկ՝ որ մետաղը հալելու ժամանակ նստում է ամանի կողերին. հնոցի կադմիա»։ Աճառյանը (Ա, 12) ագլիմիայի ծագումը անստույգ է համարել, սակայն ունի նաև որպես առանձին բառ ախլիմիա, որ Կարստը բացատրում է «մի տեսակ բույս. cadmia» (անդ, էջ 63)։

1438 թ. բժշկարանում հիշատակված է որպես արաբ. բառ. «Ախլիմիա, արապերէն խլիմիա. լադին՝ գադիմիա» (տե՛ս ZFAP, 121)։

+ Աղլուտ (74)—սլացքի ժամանակ ձիան ընդդիմադիր լինելը. «Որ եբ հանդիպի ի պատերազմն ու աղլուտ լինի, նա չառնու գիր առջի բնութիւնն»։

— արաբ. اخلاط (ikhlāṭ) «խառն, խառնուրդ» բառից՝ վերը բերված առումով (ըստ Կամուսի. թուրք. թարգմ., հ. 2, 430)։

O Աղծրի (54)—աղածրի, տհաճ, տգեղ, պիղծ. «Կայ զաւդված, որ աղծրի թվենայ, նա ի մեծութիւնն աղվորնայ»։

ՆՀԲ (32)՝ «Աղածրի. ա. գտանի գրեալ և աղարծի. Բառ անյայտ՝ իբր Երախայ, մատաղ, կամ Համախումբ որպէս խաշն դիմեալ յաղ. *Անկեալ աղաչեն աւասիկ ամ աղածրի երամ երամ բազմութիւն տղայոց». յն. ամ կամ համօրէն բազմութիւն տղայոց. Գ. Մկ. գ. 12»։ Աճառյանը (Ա, 107) աղածրի կամ աղարծի մեկնում է «փափուկ, մատղաշ»։

Գիրք Վաստակոցը (էջ 189) ունի աղծրութիւն, որ բառարանում (անդ, 239) բացատրված է «աղիութիւն»։ Աղծրութիւն չունեն ՆՀԲ, Աճառ. և Մալխաս.։ ՆՀԲ տալիս է աղծեալ «աղած, աղ դրած»։

Աճառյանը (Ա, 151) առանձին անգործածական աղծ արմատը բացատրում է «աղտ, կեղտ». սրանից կազմված են աղծութիւն «կեղտոտութիւն», աղծապիղծ «գարշելի», աղծապղծութիւն, աղծել «պղծել, ապականել, կեղտոտել»։

Մեր աղբյուրում բառս հակադրվում է աղէկ, աղվոր հասկացությանը. «Եւ քուռակն, որ ծծկան լինի, նա չկարէ մարդ զաղէկն ու զպիղծն ճանաչել, զի երևնայ զաւդված ի քուռկութիւնն, որ աղվոր թվենայ, ու եբ մեծնայ, նա հաստնայ ու յերկայնայ կամ լայննայ, ու ելնէ ի հնդամէ (իմա՝ տեսքից—

Բ. Զ.), հանցու կայ զաւդված, որ աղծրի (իմա՝ պիղծ, տգեղ, տհաճ) թվենայ, նա ի մեծութիւնն՝ աղվորնայ» (էջ 54)։

Այստեղից Վաստակոցի աղծրութիւնը պետք է հասկանալ «տհաճ համ, պղծություն». խոսքը վերաբերում է աղ դրած չոր միրգը տհաճ համից ազատելուն. «երբ հասանի՝ հան ու լուա, որ ելանէ աղծրութիւնն» (էջ 189)։

Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Ա տետր, 106) ունի բառս առանց բացատրության, սակայն Առ. Սյունեցուց բերած նրա վկայությունը հաստատում է «տհաճ համ» իմաստը. «Զհամ աղծրութեանըն տաղտկալի»։

□ Աղջոյր (58բ, 90, 182)—1. եղջյուր, կոտոշ. 2. նման. կճղակ. «Գազթանն աղջոյրն ցածն գոված է» (58բ), «Զբևեռգլխնին այլ փոքր, քան լուսնին (իմա՝ պայտի) լայնքն, որ բռնէ զղունկն, որ ոչ թողու, որ աղջոյրն կոտրտի» (90)։

□ Աղսիբաղս (95)—անկարգ, խառնագնաց. «Եբ գահէ՝ նա [ձին] աղսիբաղս երթայ»։

Վարդան պատմիչը («Հավաքումն Պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 52) ունի ախցիփեխց. «Եւ ընկեցեալ զուրբն Սահակ, կարգեն ի տեղի նորա զՍուրմակ չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՝ հալածի. և դնեն զԲրքիշու ասորի, ամ մի. և ապա զՇմուէլ ի նոյն ցեղէ, ախցիփեխցf և վատավարքս»։ ՆՀԲ մեկնում է «Թուլամորթ, անկարգ, խառնագնաց»։ Արդանայի բարբառում կա աղցբեղց: Աճառյանը (Ա, 70, Զ, 1077) սրա հետ նույնն է համարում ցղբեղ, դուրս թողնելով ՆՀԲ-ի «խառնագնաց» իմաստը. վերջինս պետք է վերականգնել։

Հավանաբար աղսիբաղս նույն աղցիփեղց (աղցբեղց) ձևի տարատեսակությունն է՝ ց>ս անցումով։

+ Աղվանաղի (105, 137), աղվանեղի (127)—աղվանիձների կարգին պատկանող դեղաբույս (°)։

1294 թ. բժշկ. ունի «աղվանարօտ՝ աղվնու ծիրտ» (էջ 143), իսկ Օգ. բժշկ.՝ աղաւնարօտ. Հայբուսակը (21) իրար մոտ է դնում աղաւնարօտ, աղվանարօտ, աղունեճարօտ, աղաւնեկ, աղաւնին, աղվնու ծիրտ ձևերը՝ նշելով, որ «առաջինին և վերջինին մեջ տարբերութիւն պիտի ըլլայ, այսինքն տարբեր բոյսք պիտի ըլլան, բայց դժար է որոշելն», սակայն ելնելով բույսի ամիրտովլաթյան նկարագրությունից, աղաւնարօտ համարում է լատ. Verbena, իսկ աղաւնու ծիրտն՝ արաբ. խուրու էլ-համամը: Արմ. Բեդևյանը 1936 թ. (§ 3573—4) աղաւնարօտ, աղաւնին նույնացնում է Verbena officinalis-ի, իսկ ճապարակ աղաւնարօտը Verbena hybrida-ի հետ։ Թ. Ծատուրյանը (1970 թ., 107) աղավնարոտի դիմաց դնում է Spergula, торица, шпергель, իսկ աղավնինի դիմաց՝ Verbena.

□ Աղվութիւն (68)—տե՛ս աւղութիւն:

□ Աղվոր (52...)—գեղեցիկ, սիրուն։

O Աղվցնել (67)—տե՛ս ավղցնել:

Աղփուրք (76) | իմաստները անստույգ. «Զքեզ աղփուրք գտնու ի թամբքն և ձգէ
Աղփրբել (76) | զքեզ կամ աղփրբէ»:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» (208—9) աղփրբութիւն

12—1034

(կամ ախփrքուքիճ) «անասունի սատկելու համար է» գործածված. Կարսաը մեկնում է «անզսպություն, ստահակությոէն» (Աճառ. Ա, 164)։

Նորայր Բյուզանդացին (ԲՄՀ, Ա, 133), մի Ոսկեփորիկից քաղելով, բառս մեկնում է «ափեղցփեղ». «Եւ ի խօսելն զլօղ պատուոյն միշտ պահէ, և շարժմանց և բանից և գործոց ամենեին բանիւ ոչ լինի, և աղփուռն ոչ խօսի» («Բազմավեպ», 1848, 370ա)։

□ Անուկ (42, 154)—աքումեշ, ցայլք, երանք։

ՆՀԲ և Աճառյանը ունեն որպես ռամկական բառ՝ քաղված Ցրա Մարթինի պատմության ԺԴ դարի թարգմանությունից։ Մեր աղբյուրը տալիս է բառիս հնագույն գրավոր վկայությունը։

□ Անռել (121)—աճառել, տրորել։

Վկայված է Մխ. Հերացու մոտ (էջ 11) և Գիրք Վաստակոցում (էջ 184)։

□ Ամ (59, 87...)—1. բայց, 2. արդ (Մալխաս.), 3. ուրեմն. «Ամ ի յայսոց (59) «Ամ պահէ զքեզ» (76), «Ամ քանի կարես կակուղ արա զպախուցքն» (88)։

+ Ամանցի (52)—Ամանի երկրից, ամանեցի, ռամանական։

Ամբակ (121, 128)—տե՛ս ամպակ։

Ամպակ (129, 130, 133)—տե՛ս անպակ։

+ Այլընդայլիլ (112), այլընդիլ (106, 110, 156, 157)—այլայլվել. «Այլընդայլի գրաստն և լարվի պնչերն» (112), «Հետ երեք աւուրն պաղ լինի շունչն ու այլընդիլի» (106)։

Գրաբարյան այլ ընդ այլոյ արտահայտությունն է, որ Կիլիկյան հայերենում բայական ձև է ընդունել։

□ Այլոr (71, 76...)— այլօր, վաղանդ, մյուս օրը։

Բարբառներում պահպանված է էլօr (Աճառ. Ա, 251)։ Մալխաս. ունի այլօr։

□ Այլվա (50, 52)—դարձյալ, նորից։

□ Այնել (44, 67...)—առնել (արարի), անել։

□ Այշ (147)—աչ։

□ Այշողնալ (104)—հաջողել. «Արա զայս տարպայնիս (իմա՝ մի քանի անգամ) ինչվի այշողնայ»։

Այպ (38...)—տե՛ս յայպ։

+ Այսամ (58)—մեկ կամ երկու ոտքը սպիտակ ձի. «Թէ մէկ ոտն լինի սպիտակ ու ի ճակատն չկենայ նշան, նա կոչեն իր այսամ»։

— արաբ. عصم ، اعصام ('aṣām, 'aṣam) «առջևի մեկ կամ երկու ոտքը սպիտակ, իսկ մարմնի մյուս մասերը այլ գույնի ձի». (Դեհխոդա)։

□ Այտ (48...)—այդ, դա։

+ Այտցեղ (71)—այդպիսի, այդ կերպ. «Որ զայտցեղ բնութիւնդ չունի»։

□ Անդամ (47)—ազդր. «Ազէտկուցն միսն, որ կայ յետև անդմացն, նա լինի հաստ և պինդ»։

Պահպանված է Ջուղայի բարբառում (Աճառ. Ա, 307), իսկ Ղարադաղի բարբառում՝ անդմ (ըստ Օ. Եգանյանի «Ղարադաղի բարբառ» անտիպ աշխատության)։

+ Անդև (51)—այնտեղ. «Աստև ու անդև ծծին յիստակ լինի գոյնն»։

Տեղ ցույց տվող և մասնիկի համար հմմտ. առջև, յետև, վերև, ճերfև, միջև (Աճառ. Բ, 603)։

+ Անդիմակաց (58)—ոչ տոկուն. «Եւ շահրիկքն ու յարապ ձիան լինի անդիմակաց ի շող աշխարք»։

+ Անդմմէջ (55) —անասունի ետևի երկու ոտքերի ներսի կողմը, աճուկ, երանք, աքումեշ (տե՛ս). հմմտ. անդամ. «Եւ անդըմմէջն կարմիր դեղնգոյն»։

Պարսկ. ձիամատյաններում համապատասխան բաժնում գործածված է تهیگاه (tuhīgāh) «երանք, աճուկ»։

□ Անժաժ (76)—անշարժ։

Անծrուք (113—139), պարսկ.—անձրութ, անզրութ (Sarcocolla)։

O Անկածնիլ (76)—տկարանալ, թուլանալ. «Երբ ձին անկածնի, նա դուն ի յետ վաղէ կամ ի յետ ընկիր ի ձիոյն առջուցն»։

Բայական սույն ձևի հնագույն գրավոր վկայությունն է։ Մալխաս. ունի անկածել. «նվաստանալ, արհամարհվել, թշվառանալ»։

□ Աննիշ (60)—առանց նշանների, բծերի. «Լինի թուխ՝ աննիշ սև»։

□ Անուվն (61)—անուն. «Գրվի տաղերն (իմա՝ դաղերն) և իրենց անուվներն»։

Ըստ Հյուբշմանի անուն առաջացել է *անվան, *անուվան նախաձևից (Աճառ. Ա, 369)։ Պետք է ենթադրել, որ մեր օրինակի վ-ն գալիս է այս նախաձևից։

Անպակ (107, 110, 130), ամբակ (121, 128), ամպակ (129, 130, 133)—անապակ, անխառնուրդ, մաքուր. հմմտ. ապակ։

+ Անսայ (128, 130)—նստատեղի ջիղերը, որոնք ձգվում են ազդրից մինչև գարշապար. «Առ երակ յերկու բազուկն, զայն մեծ երկու երակն, որ կա անդմացն ներքսև, որ ասէ յարապն իր անսայ» (128)։

— արաբ. նասայ (տե՛ս) բառի հոգնակին է։

□ Անցմնցել (37, 48, 68), անցմնեցել (107) անցմնցեցել (67, 73), անցմնցեցնել (68, 97), անցմնցիցել (122)—քայլեցնել (ձիու մասին). «Եւ հեծ իր ու անցմնցեցոյ պահ մի» (67), «Եւ իր աղէկ դեղն այն է, որ հեծնու ու անցմնցիցէ զինք» (122)։

Մալխասյանցը մեկնում է՝ «գեղեցիկ, ներդաշնակ շարժումներով շրջագայել՝ խաղալ (ձիու մասին)»։

Նորայր Բյուզանդացին (ԲՄՀ, Ա տետր, 335) մեկնում է «շարժում ընել»։

O Անցնել (155)—թրքել, ի բաց անցանել. «Յաղագս, որ գրաստն զգարին անարատ անցնէ»։

Հուշարձանիս ցանկում (էջ 41. գլ. ճխէ)՝ «Վասն, որ զգարին անարատ պrfէ»։ Գրաբարում՝ ի բաց անցանել նշանակում է «նստել ի կարիս որովայնի» (ՆՀԲ, 249)։

+ Աշխառ (58)—ձի, որի ոտքերը սպիտակ են, բայց խառնված սև մազերով. «Ի

յոր ոտք որ կենայ սպիտակ ու կենայ ի յինք սև մազեր խառն, նա ասեն իր աշխառ»:

— արաբ. اشغر, اشقر (ashghar, ashḳar) «տարբեր երանգներ ունեցող կարմիր գույն՝ մերթ սպիտակավուն կարմիր, մերթ շագանակագույն կամ խարտյաշ (ձի)»:

Մեր հուշարձանի բացատրությունը փոքր ինչ հեռանում է արաբ. բառի հանրահայտ իմաստից:

\+ Աշհալ (58)—պոչի, բաշի կամ ականջների վրա սպիտակ նշան ունեցող ձի. «Յորժամ կենայ ագոյն բոլորն սպիտակ նշան, կոչեն իր աշհալ»:

— արաբ. اشعل (ash‘al) — նույն նշ.:

\+ Ապակ (116)—անմաքուր, ջրախառն. «Ապակ կիր»:

Տե՛ս Աճառ. Ա, 286, անապակ բառի ստուգաբանությունը:

Ապիգոված (37, 44)—ապագոված, պարսաված, վատ, անարգ:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 214 (ՆՀԲ, 276):

□ Ապոբեճաճ (60)—ապարանջան:

□ Առաստախ (148)—առաստաղ, քիմք:

□ Առջի (101, 83)—1, առջևի. 2. առաջին. «Եւ շատն յառջի ոտվին լինի» (101), «Պարտ է գֆառայն ցանել ի յառջի ամիսն ի ձմռան» (83):

Ասահար (40)—տե՛ս ռայայ. «Վասն ասահար ցաւումն»:

\+ Ասլ (89)—ցեղական, իսկական. «Նա չլինի աղէկ ու չգայ ի յասլ»:

— արաբ. اصل ('asl) «ծագում, ցեղ, իսկական»:

Վկայված է ասլի Գիրք Վաստակոցում (էջ 35): Ծագումը ուղիղ մեկնեցին Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, 417) և Կարստը (ՄՀԲ, Թղթպ. 249, վ. 5, թ. 38): Տիրայր արք. (Ցրիկ, էջ 631) դնում է որպես պարսկ. բառ: Պարսկերենը փոխ է առել արաբերենից:

\+ Աստաֆ (89)—ձիան զիստերի առավել մոտիկությունը՝ սրունքների բացվածությամբ. «Եւ ծռութիւն... որ դրուցնէ լինի և ասեն իր աստաֆ»:

— արաբ. صدف (ṣadaf), հգ. اصداف (aṣdāf)—Նույն նշ.:

\+ Աստև (51)—այստեղ. «Աստև ու անդև ծծին յիստակ լինի գոյնն»:

Տեղ ցույց տվող և մասնիկի համար հմմտ. առջև, յետև, վերև, ներքև, մինչև (Աճառ. Բ, 603):

\+ Աստղաճակատ (57)—ճակատին աստղ ունեցող (ձիու համար). «Թէ լինի ճակատն բոլոր կամ չորեք կոյս կամ երեք կոյս սպիտակ, նա կոչեն իր աստղաճակատ»:

Ավղութիւն (68, 69)—տե՛ս աղութիւն:

Ավղցնել (35, 65)—նիհարացնել. հմմտ. աւաղ:

\+ Ատալայ (137)—մկան. «Առ զխոզին ոտվին ու զատալայնին ու եփէ»:

— արաբ. عضلة (aḍale) --Նույն նշ.:

Բառս ազգային տառադարձությամբ ունի Աբուսայիդը, որ ուղիղ մեկնեց Ս. Վարդանյանը (Աբուսայիդ, 222): Մխիթար Հերացին հիվանդին տրվող մի ուտելիք է առաջարկում, որը պատրաստվում է ուլի ոտներից և ատալայից. ըստ Աճառյանի (Ա, 749) «տավարի կճղակներից վերև գտնված ազդրի փափուկ մասերը», որ փոխառություն է վրացերենից, իսկ ըստ Մալխասյանի՝ թուրքերենից: Սա նույն ատալաճ է տ-ից առաջ r-ի հավելումով (ինչպես ատոռալ>արտոռալ):

\+ Ատհամ (55)—սև ձի՝ մուգ կանաչի հակումով. «Կան ի ձիանին թուխ սև և փայլկտուկ. եւ յարապն ասէ իր անուն ատհամ»:

— արաբ. ادهم (adham) — Նույն նշ.:

□ Ատոռալ (90)—արտորալ, շտապել: Տե՛ս արտոռալ:

\+ Ատրայայ (57)—մարմինը սպիտակ, իսկ գլուխն ու վիզը այլ գույնի ձի. «Եւ կան ի ձիանն չալ ձի, որ լինի իր ամէն մարմինն սպիտակ ու գլուխն ու շլնիքն այլ գոյն, զինչ որ լինի. ասէ իր յարապն ատրայայ»:

— արաբ. ادرع (adra‘a) «սև գլխով սպիտակ ձի կամ ոչխար» (ըստ Նաֆիսիի), «գլուխը և վիզը սպիտակ ձի» (ըստ Բրիտանական գրադ. պարսկ. «Ջիամատյանի», ձեռ. 6623, էջ 25):

Արապիկ խէժ (162)—տե՛ս խէժ արապիկ:

Արատկաճ (85)—տե՛ս արօտկաճ:

Արեխաճ (41)—տե՛ս յարաղաճ:

\+ Արիւճակապ (143)—արյան հոսքը կտրող դեղ:

□ Արծկել (115, 117, 139), արձկել (139)—1. արձակել, բացել. 2. լեցնել, գցել (մի բանի մեջ). «Հետ երեք աւուրն արծկէ [զքթեթ]» (117), «Առ թառանգոյն... ու արծկէ զինք յերեք նուկի շող ջուր» (115):

Արծվեցաւ (138)—արծվիք հիվանդությունը (տե՛ս):

○ Արծվիf (40)—ջրգողության հետևանքով մարմնի տարբեր մասերում՝ ստամոքսում, լյարդում, փայծաղում, աչքի ու մատների վրա առաջացած այտուցներ, պալարներ:

Բառս ունի ՀՀԲ.: Աճառյանը (Ա, 692) բացատրում է «մի տեսակ ջրգողություն», Մալխասյանցը՝ «փորի ջրգողություն», «փայծաղի հիվանդություն» (արծվեցաւ):

Գրիգորիսի մոտ (էջ 149—150) արծվիf հիվանդության դիմաց տրվում է արաբ. անվանումը ըստըսխայ [= استسقا istisḳā], որ ըստ նրա երեք տեսակ է. տապլի («թմբուկային» այտուց, որ հարվածելիս թմբուկի ձայն է հանում), զխտի («փորի ջրգողություն» oedema) և լահմի («մաշկի և ենթամաշկային ցանցաշերտի այտուց, anasarca). այս տերմինները բացատրել է Հ. Դ. Փափազյանը (տե՛ս Գրիգորիս, 229, 222, 223): Ըստըսխայ բառացի, ըստ Դեհխոդայի, նշանակում է «ծարավ» (այս հիվանդությամբ տառապողները միշտ ծարավի զգացողություն ունեն) և տալիս է վերը արծվիfին տրված բացատրությունը:

\+ Արղպել (94)—ծռել, կորացնել, կեռել. «Ջագին արղպէ ի վրա գաւկին»:

— արաբ. عقرب ('aḳrab) «կարիճ. պոչը բարձր ու կեռ» և հյ.ել լծորդությամբ կազմված: Հայերենում աղրապ բառի մեջ տեղի է ունեցել ղր հնչյունների դրափոխություն՝ արղպ(ել):

○ Արմուտի (38, 73)—կծան գրաստ (էգ). «Յորժամ կամենաս հեծնուլ արմուճի գրաստ, դու խափ տուր ու զլկամն ի գլուխն դիր» (73):

— արաբ. ارم (arm) «կծան, խածնող» և հյ. ուճի վերջածանցով կազմված:

Բառս մեկ անգամ գործածված է Գիրք Վաստակոցում (էջ 197). «Պարտ է զձին երկու իրօք փորձել՝ մէկ տեսակաւ, և մէկ՝ ներգործութեամբ... Եւ զարմունին՝ տեսակաւ միայն»։ Հայցական հոլովով դրված բառը Վաստակոցի բառարանում վերցվել է որպես ուղղական և մեկնաբանվել՝ «մատակ ձի որ պահի վասն սերնդեան»։ Այստեղից էլ անցել է Ն. Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն բառարանին, Մալխասյանցին ու Աճառյանին (Ա, 713)։ Աճառյանը այն բխեցնում է հայերեն արմ «արմատ» բառից։ Ն. Բյուզանդացին իր միջին հայերենի բառարանը կազմելիս նորից է անդրադարձել այս բառին և տվել է ճիշտ բառաձևը՝ արմունի (ԲՄՀ, Ա տետր, 518), որ նա մեկնում է «ամեհի»՝ ելնելով Հովհան Մամիկոնյանի պատմության Աբրահամ Երեցի ձեռագիր ընդօրինակությունից, որտեղ նույն պատմության տպագրի ամենի (Վենետիկ, 1889, էջ 48) բառի փոխարեն կա արմունի: Մաշտոցյան Մատենադարանի № 4584 ձեռագիրը (1668 թ.), որ Աբրահամ Երեցի ընդօրինակած Հ. Մամիկոնյանի պատմությունն է, համապատասխան հատվածում նույնպես ունի արմունի: Պետք է ենթադրել, որ ուշ միջնադարի այս գրիչը բառիս իմաստը իմացել է ընդհանրապես «խածնող գրաստ», ուստի և այն կիրառել է նաև ջորիների նկատմամբ. «Արդ առեալ սոցա զհարիւր արմունի ջորիսն՝ ածին յեզր բանակին. եւ այր մի ի տասն ջորին՝ որ զհետ երթայր. Եւ իբրև խթեցին զջորիսն սրով և արկին ի բանակն, եւ ինքեանք զհետ մտեալ զփող պատերազմին հնչեցուցին, եւ առ ձեռն սկսան կոտորել. եւ կանչեալ զարհուրեցան ամենեցուն յոյժ. քանզի և ջորիքն ընդ ձայն ապարացն, եւ ընդ զօրացն աղմըկելն, եւ ընդ փողոցն բախելն խրտուցեալ յամենայն կողմանց լռկ արշաւէին ի բանակն» (ձեռ. 4584, էջ 184բ)։

\+ Արմունութիւն (73)—կծանություն. «Պիտի որ յեվելցնես ի յիր արմունութիւնն». տե՛ս արմունի:

□ Արոյն (101...)—արյուն։

Արտորալ (68), արտորալ (90)—շտապել։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 203 (Աճառ. Ա, 766)։

□ Արցվել (129)—արտասվել։

Աճառյանը (Ա, 770) դնում է նոր բառերի մեջ՝ արտասուել>արտսուել>արցուել անցումով։ Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

\+ Արօտկահ (85)—արոտավայր. «Ի յարաւտկահն (=յարօտկահն), որ արծես, դու մի՛ հալծել զգրաստն»։

Կազմված է հյ. արօտ և իրան. գահ (gāh «տեղ, վայր») բառերի բարդությամբ։ Ըստ Աճառյանի (Բ, 21) գահ հնում փոխ է առնվել հյուս. պահլավերենից *gāh «գահ, աթոռ, բազմոց», իսկ հետագայում նաև «դար, բարձր տեղ, ժայռերի գլուխ» իմաստներով։

Գահ նոր պարսկերենում ունի «տեղ, վայր» իմաստը, որ գործածվում է բարդությունների մեջ. այսպես՝ چراگاه (čarā-gāh) «արոտավայր»։ Հավանաբար այս իմաստը վաղուց անտի գործածվել է և հայերենում, որը պահպանվել է արօտկ(գ)ահ և որսագահ բառերում։ Վերջինս վկայված է Մկրտիչ Նաղաշի

տաղերում (Երևան, 1965, էջ 247)։ Արդի պարսկերենում սրա համարժեքն է شکارگاه (shikār-gāh) «որսատեղի»։

○ Աւաղ (45, 65)—նիհար, վատուժ։

(Բառիս հնագույն գրավոր վկայությունը պահպանված է 1294 թ. բժշկարանում (տե՛ս Գ. Հովնանյան, էջ 143)—խմբ.)։ Աճառյանը (Ա, 793) վերցրել է Առձեռն բառարանից։ Վերի իմաստը Մալխասյանցը չունի։

□ Աւեր (83)—ավերված, փճացած. «Եւ այն [ֆառայն՝ խոտի ցողունը], որ կարճ լինի, աւեր է»:

□ Աւրղնալ (80)—նիհարել. տե՛ս աւաղ:

Աւր (146)—տե՛ս օր:

Աւրխաւր (105)—տե՛ս օրխոր:

□ Աւիրել (77, 85)—քայքայել, փչացնել, վնասել. «Ջի զօղն ու թրիքն խիստ ահոկէ և աւիրէ զգրաստուն ոտքն» (85)։

□ Աւիրիլ (52, 53, 75)—քայքայվել, վնասվել. «Աւիրի քաւկին սմբակքն» (52)։

Աւկտել (131, 134)—տե՛ս օկտել:

Աւկտութիւն (83)—տե՛ս օկտութիւն:

Աւղ (95)—տե՛ս օղ:

□ Աւղութիւն (46, 54), աղվութիւն (68), ավղութիւն (68, 69)—ավաղություն, նիհարություն, թուլություն. համմտ. աւաղ:

Ափկից (86)—երկու ափը միացրած, երկու բուռը կցած։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 166։

□ Աֆռամէջ (56)—սրունքների և բարձերի մեջտեղը։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է. Աճառյանը (Ա, 839) վերցրել է Նորայր Բյուզանդացու ֆրանս-հայերեն բառարանից, էջ 463բ։

\+ Աֆ (94)—սմբակի կեղև. «Եւ այն, որ զկոճքն ընդ իրար ծեծէ և կամ ի յաֆէ է կամ ի ձանձրանալոյ»։

— արաբ. اف (aff, uff)— նույն նշ.։

Բ

Բարճֆար (77)—բաքանաքար, բաքանով նետելու քար։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։ ՆՀԲ վերցրել է Մխիթար Ապարանեցուց (ԺԴ դար)։

□ Բաղդել (69, 94)—փաթթել, փաթաթել։

□ Բաղդոց (69)—փաթթոց, փաթաթան։

\+ Բալ (77)—թև, բազուկ (՞). «Լավ է քեզ բալէ անապար (իմա՝ առանց վահանի) լինել»։

— պարսկ بال (bāl)—նույն նշ.։

○ Բահրակ (88)—բաժին (անասնակերի). «Թէ խիստ յիմէ (իմա՝ ծարաւէ), նա ի շաբաթն աւր մի տուր բահրակ, թե հանգիստ կենայ գրաստն»։

—պահլավ. bahrak, նոր պարսկ. بهره (bahre) «բաժին» (Դեհխոդա)։

Աճառյանը (Ա, 919) բառս «ընդեղեն կամ արմտիք ինչ անծանօթ» իմաստով վերցրել է Ջախջախյանի Հայ-իտալերեն բառարանից։ Ջախջախյա-

նը, առանց վկայության, նշել է որպես նորահայտ բառ և նշանակությունը մոտավորապես ճիշտ է կռահել: Մեր աղբյուրը խոսում է գրաստների սնման կարգի մասին և հանձնարարում է շաբաթվա մեջ մեկ օր **կերի բաժինը** չտալ:

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:

Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Ա տետր, 610) **բահրակ** բառը, առանց ծագումը նշելու, մեկնում է «մանավանդ», որ չի համընկնում մեր բնագրի իմաստին: Նա Վաստակոցի ձեռագրից երկու վկայություն է բերում, որտեղ գործածված է **բահրակ**, բայց որոնք տպագրում փոխարինված են **մանաւանդ**-ով: «Եւ թէ տեղն ցուրտ լինի՝ մինչև գկէսն Թաղեա զկարասն. **բահրակ** (տպ. մանաւանդ) թէ գինին նօսր լինի». Վստկ. ՃԻԴ. 88. «Ասացին ոմանք ի փորձականացն՝ եթե փոփոխէ ոք զսերմանքն յետ բնական տեղւոյն ի յայլ տեղի, նա այլ առաւելուն և գիրանան. **բահրակ** (տպ. մանաւանդ) երբ ի լերանց ի դուր տեղիք տանիս». Վստկ. Ի, 18:

Բայտար (114), արաբ.—պայտար, անասնաբույժ:

☐ **Բարազ** (74)—բարակ, մանրամասն, ճշգրիտ (Մալխաս.). «Ջոր կարէ ջանալ ի **բարազ** մտիկ դնել մտաւք և փորձելով»:

☐ **Բարկնալ** (45, 128)—բարականալ, բարակել:

☐ **Բարձկցնել** (82)—բարձրացնել. «Աւր քանձ զաւր **բարձկցոյ**»:

Բարձվենեկ (133)—բարձվենյակ, բարձվենիկ:

\+ **Բարձրաքոլորգոյն** (109)—բարձր ու կլորաձև. «Մէջ երկու ձեռացն պինդ ուռեց լինի ու **բարձրաքոլորգոյն**»:

\+ **Բերնվախ** (72, 73, 95)—բերանը ինչ-որ բանից վախեցած (ինչպես ունենք՝ «աչքը վախեցած»). «Մի՛ զարկներ զբերանն լկամաւն, որ **բերնվախ** լինի» (72):

Բերնցաւ (148), **բերնցվութիւն** (41)—բերանացավ, բերանի խոց:

Մալխասյանցը չի տալիս «բերանի խոց» իմաստը, որ ունի ՆՀԲ: Մինչդեռ մեր հուշարձանը այս հիվանդության նկարագրության մեջ ասում է, որ «խոցեր ելնէ ի բերանն»:

\+ **Բևեռգլուխ** (90)—բևեռի, մեխի գլխամասը. «Լինի... զբևեռնին բարակ և **զբևեռգլխնին** այլ փոքր»:

\+ **Բևեռհաս** (42, 90, 131, 160), **բևեռհաս** (42)—արաբ. **ռայսա** (տե՛ս) հիվանդությունը՝ չափից երկար բևեռի մխրճվելը սմբակի մեջ. «Թէ ղորդ լինի բևեռն, նա ղորդ երթայ ընդ սմբակն ու **բևեռհաս** այնէ»:

☐ **Բէն** (46, 58բ), **բէչ** (92)—թիակ, թևակ, ուսոսկր (ինչպես Բուլանըխի բարբառում. Աճառ. Ա, 1084):

○ **Բէնգլուխ** (46, 58բ), **բինգլուխ** (101)—ուսոսկրի գլուխը, ուսագլուխը. «Բարձրութիւն երկու **բէնգլխոյն**, որ թաղվել լինի նքթէպն»:

Մխիթար Հերացու մոտ (Բ. 4) վկայված է **բինգլուխ** (տե՛ս Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Ա տետր, 706): Մալխասյանցը Օգ. բժ. բառգրքույկում մեկնաբանում է. «ողնաշարի վերին մասը», իսկ ողնաշարը մեկ հատ է, մեր վկայակոչման մեջ հիշատակվում է **երկու** բէնգլուխ:

\+ **Բէնցաւ** (101)—թիկնոսկրի ցաւ. տե՛ս **նքբէպցաւ**:

Բինգլուխ (101)—տե՛ս **բէնգլուխ**:

○ **Բոլոր** (55, 58)—ձիու մարմնի վրա տեղ-տեղ շրջանաձև ոլորված մազեր. «Յաղագս... **բոլորնոյն**, որ կենայ ի գրաստն» (13):

Հուշարձանիս Ի գլխում բացատրված է բառի իմաստը. «Յաղագս **բոլորնոյն**, որ լինի ի մազ» (17):

☐ **Բոկիկ** (127)—1. բոբիկ, 2. մերկ՝ առանց համետի ու թամբի գրաստ:

Վկայված է Ներսես Շնորհալու հանելուկներում. (տե՛ս Ուրբաթագիրք և Տաղարան (1512—1513), Վենետիկ, 1975, Տաղարանի էջ գ—15).

«Կարի տեսայ ես շատ կարւան.
Որ կու իջնոյր ի խորասան.
Իշւին **բոկիկ** են 'ւ անկուտպան,
Մերկիկ բառնան և դառնան գան: (Մուշիմ):

Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Ա տետր, 737) բերում է այս հանելուկի մի այլ տարբերակը.

«Իշուին **բոկիկ** էր ու անփալան,
Մեկիկ հատիկ բառնան ու գան»:

☐ **Բուտակ** (121), **բուրակ** (106, 110, 161)—բորակ:

Գ

☐ **Գազան** (131)—ուժեղ, բարկ, թունդ:

Այս իմաստով գործածված է Գիրք Վաստակոցում, էջ 186, 188 (Աճառ. Բ, 9):

\+ **Գազանառ** (41)—գազանի կծած, խածած. «Վասն **գազանառ** խոցի» (ցանկ. գլ. ՃԺԹ):

Ցանկի այս վերնագիրը բնագրում ձևակերպված է. «Յաղագս խոցի, որ գազնի խածած լինի» (143):

Այս ձևով կազմված ունենք **գայլառ** «գայլից հափշտակված», **շնառ** «շնից հափշտակված» և **մարդառու** «մարդ խածնող (ուղտ)» (Աճառ. Ա, 482):

☐ **Գազնալ** (79)—գազանանալ, կատաղել:

\+ **Գահըլնալ** (106)—թուլանալ, դանդաղկոտ դառնալ, հիվանդանալ. «Գրաստն **գահըլնա** ու ուռենայ կուրծքն»:

— արաբ. كاهل (kāhil) «դանդաղ, ծույլ, հիվանդ» և հյ. **ալ** լծորդությամբ կազմված:

Ցրիկը ունի **գահալ**. «Աղէկն, որ ի քո ձեռացդ ի վեր գայ՝ **գահալ** մի՛ կենալ», որ ուղիղ մեկնեց Տիրայր արք. (Ցրիկ, Դիվան, 635): Աճառյանը (Բ, 226) **գհալ** վերցրել է Երեմիա Մեղրեցու բառարանից և համարում է «անհայտ բառ», որ պահպանված է **յամր, անազան** բառերի բացատրության մեջ. այսպես՝ «**յամր, անազան** կամ **գհալ**»:

Գհալ նույն ինքը **գահալ** (**գահըլ**) ձևն է, որ նշանակում է «համր, անազան», իսկ **յամր** նշանակում է «դանդաղ» (ՆՀԲ). **անազան** ՆՀԲ թարգմանում

է «ոչ կանուխ, հետին և համր (իմա՝ «դանդաղ»)։ Աճառյանը (Ա, 277) վերջին առումը չի վերցրել։ Այս իմաստը կա և ազան «ժրաջան, անդանդաղ» դրական ձևի մեջ։ Աճառյանը (Ա, 6) ուշադրություն չի դարձրել սրա ժխտական անազան ձևի «համր, դանդաղ» իմաստին, ուստի և գրում է՝ անազանի նշանակությունը տարբեր է։ Ուղղելի։

+ **Գանլցնել** (80)—թուլացնել, հիվանդացնել. «Ծրագուն յորժամ յևելնա, նա գանլցնէ և աւիրէ զգրաստն». հմմտ. գանրլնալ։

+ **Գայլցաւ** (39, 40, 107, 120, 129)—ցրտառություն. «Վասն գայլցաւի, որ է հովութին»։

Հիվանդության նկարագրության մեջ (էջ 129) ասված է. «Պատճառքն լինի ի հովէ և ի քրտնելոյ»։ Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 213)՝ առանց բացատրության։

+ **Գաւկել** (10)—գավակին նստեցնել. «Եւ հնար է գաւկես թեթև տղայ ի վրայ գրաստուն»։

O **Գետուտ** (158)—ջրային, գետային, գետաբերուկ, գետի բերած որևէ բան. «Նա առ գետուտի խիչիփար»։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։ Աճառյանը (Բ, 137) ունի որպես նոր բառ գետուտի։

□ **Գրոտատել** (88)—գրգռել. «Գրոտատէ աղիքն»։

Զեյթունի բարբառը ունի գ'րողադիլ «բարձր բղավել» (Աճառ. Բ, 275)։

□ **Գիճային** (89)—գիջային, խոնավ։

□ **Գիճանալ** (71)—գիջանալ, խոնավանալ, ջրոտվել։

□ **Գիճացնել** (88)—գիջացնել, խոնավացնել, ջրոտել։

□ **Գիճութիւն** (103)—խոնավություն, ջրոտություն։

+ **Գլաւի** (88)—կտավե տոպրակ, ծածկոց. «Եւ ամառն՝ գլաւիեր դիր ի վրայ գրաստուն գագթանն»։

— արաբ. غلاف (ghilāf), հգ. غلف (ghuluf) — նույն նշ.։ Արաբերեն հգ. ձևը հայերենում վերցված է որպես եզակի։

+ **Գոլ** (88)—անուր, օղակ, կապ, սանձ, վարավանդ. «Ի գոլերն աչվոյն վերև չվաննի կապէ, որ զճանճն քշէ»։

— արաբ. غل (ghul) — նույն նշ.։

+ **Գորգզալ** (72, 80, 81, 82)—գայլի պես վազել (ձիան վազքի ձև). հմմտ. գորգզան։ «Կայ [գրաստ], որ զյեչավն աղէկ ունենայ, կայ ի կալափցնելն և կայ, որ ի դուրս վազելն ու ի պորտքայն, և կայ ի գորգզալն, և կայ որ ի քայլելն և մանտր գնացքն» (72). «Կայ [գրաստ], որ գորգզայ ու զշնիքն զխովն ի հետ ի դեհաց դեհ ձգէ. և սաէ իր յառաջն մղայնեխ» (80)։

+ **Գորգզան** (38, 79, 81, 82)—գայլի վազք ունեցող ձի. «Կան ոմանք մի, որ ի վրայ գորգզան գրաստուն ի յետ տայ թամբել» (79), «Այն ազգ գրաստն, որ... մղայնեխ սաեն իր, նա նշանքն այն է, որ ի գնացքն զէդ գորգզան լինի ու տուբէթն ու ականջվին ու շլնին ի հետ շարժի» (82)։

— իրան. *gurgzan. կազմված գորգ (gurg) «գայլ» և զան (zana-) «կերպ, տեսակ» բառերի բարդումով։ Հայերենում զան պահպանված է մի

շարք բառերում՝ արքազան, այլազան, բազմազան և այլն (Աճառ. Բ, 891)։ Որանից բայական *գորգզանալ ձևը, որից ան-ի ամփոփումով՝ գորգզալ։

Մալխասյանցը ունի գորգզնալ, որ առանց վկայության մեկնում է «ձիու խրխնջալ»։ Կարծում ենք սա գորգզալ բառն է։

Պարսկ. տպագիր ձիամատյանում նմանատիպ վազքը ավանդվում է گرگ‌دو (gurg-daw) «գայլավազք»։

+ **Գորգզացնել** (37, 48)—գայլի վազքով ձին վարել. հմմտ. գորգզան։

+ **Գորոփ** (92)—աչքի անկյունները. «Եւ որ լինի խոր ու աչվին և գորոփն մեծնայ»։

— արաբ. غرب (gharb), հգ. غروب (ghurūb) — նույն նշ.։

Գորտ (47, 90, 101, 156)—ձիան սմբակի միջի կլոր մասը։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Աճառ. Բ, 287)։

O **Գորտն** (42, 156)—լեզվի տակ թաղանթային ծալք։

Բառս վկայված և բացատրված է Գրիգորիսի մոտ (էջ 98). «Եւ այլ ուռից, որ ելնէ բերանն ներքև լեզուին և անուանի գորտն, զի գորտն ի նմանէ է»։

Աճառյանը (Բ, 287) բառս վերցրել է Նորայր Բյուզանդացու ֆրանս. բառարանից՝ էջ 129ա, 616ա, որտեղ մեկնված է որպես «ձիու կամ եզան լեզվի տակ թաղանթային ծալք», մինչդեռ ըստ Գրիգորիսի մարդու լեզվի տակ ևս գորտեր են լինում։

+ **Գորտնփոխ** (90)—ձիան սմբակի միջի մասի փոփոխումը. հմմտ. գորտ. «Երբ գրաստն գորտնփոխ լինի, նա դնեն ներքև լուսնին (իմա՝ պայտին) սեկ և լուսնեն»։

+ **Գում** (111)—ճահճային կնյուն, որի արմատները եղեգնանման են. արաբերեն օրխոր (տե՛ս) է անվանվում. «Առ խոզի գումն և պատռէ ի ներս և դիր ի յինք քիչ մի չաման»։ Ծագումը անստույգ։

O **Գումարեցնել** (77)—չփոթեցնել, շշկլեցնել. «Ու մի գիտնար փոքր զարկք զձիոյն կամ զըռըմբին (իմա՝ նիզակին) զարկքն... թէ ծածկվխ՝ նա դուն զայն ամեն տախտակն ինչ կու շալկես շլնովըդ և կու գումարեցնես զքեզ»։

Աճառ. (Բ, 304) գումարել բառի իմաստի զարգացումից հանում է «անճարել, շշկլված մնալ». տվյալ դեպքում բառս այս իմաստով է գործածված։

□ **Գովիլ** (86)—գտնվել, լինել. «Թէ առվոյտ կամ ֆառայ գովի»։

Դ

O **Դաբդաբ** (92), պարսկ.—թմբուկ։

Դաբդար այնել—թմբկահարել. «Թոյլ պռկնին, որ երբ յիշվեցնես՝ նա զիրար դիպի և դաբդաբ այնէ»։

Մխ. Հերացին ունի դաբդաբայ ձևով (Աճառ. Բ, 364)։

O **Դահ** (53, 85)—1. ծեր, տարեց. 2. հնացած, քարթու, դալարությունը կորցրած։ «Իրենց հայրն ու մայրն դահ լինի» (53), «Տես զառվոյտն, որ միջակ լինի, որ ո՛չ դահ լինի և ո՛չ մատղաշ» (85)։

— պարսկ.—արաբ. داه (dāh) «ծեր, անպիտան, անարժեք»։

Գիրք Վաստակոցը քանիցս ունի բառս, որ նրա բառարանում ուղիղ է բացատրված՝ «քարթու, հնացյալ» (էջ 243)։ ՆՀԲ և Աճառյանը նույնպես ուղիղ են մեկնել՝ «1. հնանալով կամ չատ մեծանալով կարծրացած, ղարթ և 2. պառավ», որ այլևս ծնունդից դադարել է»։ Աճառյանը (Բ, 379) ծագումն անստույգ է համարել։

\+ Դաճնալ (544, 83)—դաժանալ, ծերանալ, կնճռոտվել. տե՛ս դաճ։

\+ Դաճութիւն (148)—ծերություն, տարեցություն. տե՛ս դաճ։

Դանկ (139, 1663)—դանգ, ծանրության կշիռ, «Երկու գարւոյ կշիռն դանգ մի է» Վրդն. եւ. լ. 19 (ՆՀԲ)։ «Դանգի կշիռը զանազան ազգերի մեջ տատանվում է $0{,}09\,{}^{4}/_{9}$ գրամից մինչև $0{,}75\,{}^{5}/_{9}$ գրամ» (Մալխաս.)։

\+ Դաշտիկ (390)—արյունոտ այտուց, խոց (գրաստի ագետակում), որ նույնն է ինչ կերիչ կամ ուտիչ ցավը (տե՛ս). «Վասն կերիչ ցաւն, որ է դաշտիկն»։

Գրիգորիսը ևս ունի դաշտիկ հիվանդությունը (էջ 180), որի դիմաց դնում է արաբերեն մաշարայ։ Վերջինս բառարանում (անդ, էջ 225) կասկածով բացատրված է որպես «բծավոր տիֆ». իրականում արաբ. մաշարայ ماشرا (māshara), որ ասորերենից փոխառյալ բառ է, նշանակում է «արյունոտ այտուց» (ըստ Շտեյնգասի)։ Հավանաբար վերքի արյունոտ լինելն էլ թելադրել է հայերեն բառը բխեցնել դաշտանիկ-ից։

□ Դարձվորել (107, 111)—դարձվորել, այլակերպվել։

□ Դարտակ (455, 47, 54)—դատարկ։

□ Դարտկութիւն (46)—դատարկություն։

\+ Դեղդրել (1005, 143, 159, 163)—ոսկրե կամ փայտե փոքրիկ գործիքով դեղ քսել. «Պարտ է դեղդրել որպէս այլ խոցերն» (105), «դեղդրէ զաչքն» (143)։

Գիրք Վաստակոցը ունի դեղդիր գոյականը (ՆՀԲ)։

\+ Դեկնախայտ (56, 59)—դեղին խայտուցներով ծածկված (ձիու մասին). հմմտ. դէկան. «Ե. կայ [ձի] դեղին դեկնախայտ, որ լինի յիր մարմինն իր գոյնովն բոլոր բոլոր զէդ դէկնի»։

○ Դեղապետեալ (102)—բուժում, դարմանում. «Գրենք զիր ամէն ցաւերն ու զայպերն ու զդեղապետեալն»։

Գրիգորիսը ունի դեղապետել (էջ 145) իմա՝ «բուժել». «Եւ նաաուրն ելունդ է... կա որ մինի ի խորու և ոչ դեղայպետի»։

□ Դէկան (56)—դահեկան, դրամ (նաև ոսկյա)։

□ Դժար (71)—դժվար։

□ Դիմացկոտ (681)—դիմացկուն։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 97)։

□ Դնդղալ (58բ)— շարժման ժամանակ մարմնի մսերի երերալը. «Ի վազելն դնդղայ միսն և կաշին»։

ՆՀԲ ունի դնդղանք «ալիք, ծփանք», իսկ Աճառ. (Բ, 588)՝ դնդող, «երերում, շարժում», որից և ունենք դդդղալ, դնդղկտալ (Մալխաս.) և մեր ձևը։

□ Դոյր (77, 963)—դյուր, հարթ, տափարակ. «ի դոյրն և ի դաշտն»։

□ Դոյրութիւն (137)—դյուրություն, հեշտություն։

\+ Դունճ (53, 554)—կաթնատամ. «Դունճն սկսնու ի սենալ» (53), «Եւ առջի ակռայքն, որ բուսնի քուռկին, նա դունճն է» (54)։

— արաբ. دُرّ (durr) «մարգարիտ», որ ծագում է در (darr) «կաթ» արմատից, որանից է և درر (durar) «սպիտակատամներ»՝ հյ. ն հավելումով, հավանաբար դունճ ձևի հետևությամբ։

□ Դուս (71)—դուրս։

□ Դրամակշէռ (66)—դրամակշիռ, մի դրամի կշիռ։

□ Դրուց (99)—դուրսը. «ի դրուցէ լինի»։

□ Դրուցև (89, 99)—դուրսը. «Որ կու գայ ի դրուցևէ»։

Վկայված է Սմբ. պատմ. մեջ. էջ 73 (Աճառ. Բ, 603)։

Ե

□ Եբ (54), եփ (54, 127)—երբ։

\+ Եզնգաւակ (58բ, 93)—եզի պես լայն ու տափակ գավակ ունեցող (գրաստ). «Սուր գաւակ... և եզնգաւակն յայպած է»։

□ Ելել (101, 115)—ելնել, դուրս գալ, վեր կենալ. «Ելէ յիրմէ կտոր մի ոսկոր» (101), «Ել ու ելէ, որ վազէ» (115)։

□ Եռաջ (74)—առաջ։

□ Եվելված (71)—ավելված, հավելված, ավելորդություն։

□ Երեակ (133)—երակ։

Երիկամնացաւութիւն (41), իրիկամնացաւ (151)—երիկամների ցավ։

Երիկամնայցաւ վկայված է Գրիգորիսի մոտ (141...)։

□ Երկթև (90)—երակաթև. «Եթէ [նշդրակն] երկթևն շառնու ի յինք և ի յայլ տեղ առնու խեչ իր, նա սպաննէ գրաստն»։

□ Երկին (90)—երկայն, երկար։

\+ Երկոֆ (67)—որևէ ծածկոց՝ անասունի մորթ, վերմակ, կարպետ. «Ծածկէ ճլով ու երկոֆով»։

Բառս հավանաբար առաջացել է արկ արմատի երկ տարբերակից, ինչպես ունենք՝ առաջ ~ եռաջ (30), արվեստ ~ երվեստ (26)։ Ըստ Աճառյանի, հնում արկ առանձին արմատ գործածական չի եղել. նա նշում է «ձգել» (գցել) իմաստը, սակայն իր բերած վկայություններից կարելի է եզրակացնել, որ արկ ունեցել է նաև ծածկ իմաստը. այսպես՝ արկնոց «գազանների կամ հավեղենի վանդակ» (իմա՝ ծածկոց. մինչև վերջին ժամանակներս որպես արկնոց օգտագործում էին մեծ կողովներ—Բ. Զ.), արկանել «ծածկել, վրան առնել», արկանելի «ծածկոց, զգեստ, վերարկու, հագուստ, գլխի ծածկույթ, անասունի մորթ, վերմակ, գլխարկ, գլխի ծածկ», յարկել «վրան ծածկել» (Աճառ. Ա, 694—698)։

Մեր վկայության մեջ -ոֆ(օֆ) և -ով վերջածանցները գործ. հոլովի կրկնակի հոլովիչներն են, որոնցից առաջինը քարացած է. սկզբնական ուղիղ ձևը կարելի է ենթադրել *երկֆ «ծածկոց»։

Որ երկոֆ «ծածկոց» նշանակությունը ունի, հավաստում է էջ 69-ի նույնիմաստ հատվածը, որտեղ երկոֆ-ի փոխարեն ծածկոց է օգտագործված. «Դու յեվելցոյ զճլերն ու զծածկոցնին ի վրայն»։

□ Երջի (83, 97)—առաջին. առջևի. «Ջոր ի յերջի ցան լինի» (83), «Այպն, որ յերջի ոտքն լինի» (97)։

□ Եւշf (39, 127)—անստույգ նշանակությամբ բառ. «Վասն քամոյ, որ յեւշfն լինի»։

□ Եւվեստ (71, 74)—արվեստ։

□ Եփ (54)—տե՛ս եբ։

Զ

□ Զառեկ (116)—տե՛ս զառիկ։

+ Զառզուռի (56)—պսպղուն բծերով (ձիու մասին). «Եւ կա պաւզ [ձի], որ սպիտակ լինի և խառնի ի յինք սև մազեր և ասեն իր զառզուռի»:

— արաբ. زرزوری (zarzūrī) — նույն նշ.։

Զառիկ (114), զառեկ (116), իրան.—մկնդեղ (Arsenicum).

+ Զառտ (56)—դեղին. «Եւ կա [ձի] ի բաց դեղին, որ լինի սպիտկգոյն եւ լինի տուբեթն ու բաշն ու ագին սպիտակ։ Եւ կոչէ իր անուն պարսիկ զառտ»:

— պարսկ. زرد (zard) «դեղին», որից և զարդա زرده (zarda) «դեղներանգ ձի»։

Բառս պահպանված է զարտագոյն կամ զարտագուն «ներկի համար գործածված մի տեսակ դեղին ծաղիկ կամ քրքում» և զարտակ «դեղնագույն» բառերի մեջ (Աճառ. Բ, 911—912)։

Զարդ (116, 121), զարդի (116)—զարթ, բացի։

Անսիգզ (էջ 47) ունի զարբ ձևով (Աճառ. Բ, 909)։

Զարդել (48), զարդել (83)—զարթել, բացի։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 27), իսկ Անսիգզում (էջ 45)՝ զարբել ձևով (Աճառ. Բ. 909)։

□ Զաrf (138)—զարկ, հարված (ալիքի). «Մտոյ զինք ի գետ մի, որ ուժով լինի ու զաrf ունենայ»։

Զաւդված (37, 40...)—տես զօդված:

+ Զաֆրնգոյն (55)—քրքումի, զաֆրանի գույն՝ դեղին։

□ Զեղ, զէղ (45, 57, 60...), զետ (57)—զերդ, ինչպես որ, նման։

□ Զըլըմփիլ (76)—զուլամբ երթալ. գլխիվայր գլորվել, վիզ կոտրել. «Եւ հեծնաւղն, որ հեծնի, նա հայնց ամուր կենայ, որ քաւել ձին ընկնի, որ ինք զըլըմփի»:

Աճառյանը (Ե, 617) ունի ուլն՝«վիզ, ճիտ», որից՝ զուլամբ երթալ «վզի վրա գլորիլ», իսկ Մալխասյանցը (Բ, 37)՝ զուլամբել:

+ Զըմըն (100)—աշխատանքից կամ տարիքից առաջացած վնասվածք (բեռնակիր անասունների). «Եւ ցաւն, որ կոչեն իր զըմըն. Նշանն այս է, որ յորժամ կենայ գրաստն ու երթայ, նա պայթըռտէ խալիկն (բազկոսկրը)»։

— արաբ. زمن (zaman)—նույն նշ.։

+ Զընճուֆր (160)— բրիկոն, կինուբարիս (Cinabaris), խրակ, քիմիական նյութ, բաղադրություն ծծմբի և սնդիկի.

— պարսկ. زنجفر (zindjafr)—նույն նշ.։

Ամիրդովլաթը Օգ. բժ. (550) ունի զինճէֆր ձևով և նույն նշ.։

Բառը շպիտի շփոթել զանճապիլ, զրնճպիլ բույսի հետ։

+ Զիար (99, 95, 96)—լանջապանի և ողնաշարի միջև ձգվող առասանը կամ թոկը. «Եւ կա [ձի], որ զիարն ի պռունգն չթողու» (96).

—արաբ.—պարսկ. زيار (ziyār) — նույն նշ.։

Զուկակ (73) }
Զուղաղ (96) } արաբ. — նեղ ճամփա, նրբանցք, փողոց։

Աճառ. (Բ, 989) ունի զուկակ՝ որպես նորագյուտ բառ։ Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է հայերենում։

O Զուֆայ (105)—զոպա, զուփա, մշտիկ։

— արաբ. زوفا (zūfā) — նույն նշ.։

Բառս հնում զոպա ձևով փոխ է առնված ասորերենից (Աճառ., Բ, 980)։

+ Զպիպճպել (115)—խաղողախոտ, ոջլախոտ (Delphinium Staphisagria L.)։

— արաբ. زبيب الجبل (zabīb al-djabal) — նույն նշ.։

Կարստը (ՄՀԲ, թղթ. 250, վ. 11, թ. 124) ունի բառս, որ քաղել է 1438 թ. բժշկարանից։

Ամիրտովլաթն ունի զապիպ ըլ ճապալ (Անգիտ. անպէտ, 635, Հայբուսակ, § 65)։

Զօդված (զաւդված) (37, 40...)—հոդ, կապակցություն։

Ը

□ Ըղվիլ (78)—ուղղվել. «Ինքն այլ ըղվի ու երթայ»։

+ Ըղտացա։ (39, 126)—«Ցաւ, որ բնակի ի յետի կիցքն (իմա՝ ոտները) ի գաւակի» (126)։

+ Ըղտի կուտկակ (160)—բուսանո՞ւն է, թե՞ կտրտոր. «Առ նրճէսի սոխ և ըղտու կուտկակ, ծեծէ ընդ իրար և դիր ի յայն տեղն, որ կաղնայ»։

□ Ընդելնալ (48)—ընտելանալ։

□ Ընդիr (71)—ընտիր։

□ Ընթանուr (153)—ընդհանուր։

+ Ընթիշար (98,99)—ոտքերի երակների հիվանդություն (Diffusion), բառացի՝ ցրվել, սփռվել. «Ընթիշարն, որ թարքմանի ցրքիլն և մէկնելն, որ լինի ի ջղերն ի յառջի ոտացն ու վերջի... նա լարվի ու ցրքի երկնին ու ջղերն յիրացմէ ի յետ» (98)։

— արաբ. انتشار (intishār) — նույն նշ.։

Բառս ունի Օգ. բժ., որ Մալխաս. թարգմանում է «ցրվել, սփռվել (դեղի՝ մարմնի մեջ,լույսի՝ բրի լայնանալուց» (էջ 553)։ Անգիտ. անպէտ (էջ 106) ունի ինթիշար ձևով։ Ծագումը ճիշտ է նշել Ս. Վարդանյանը (Աբուսաիդ, 224)։

O Ընձել (85)—հնձել. «Յորժամ գֆառայն ընձես, նա մենակ այն առվաւտուցն վերայ, որ արեգակն ի վրայ չցայթէ ու թառմի»։

Ձևս պահպանված է Ննխ. բարբ.՝ ընձել, Ոզմ. ընձիլ (Աճառ. Դ, 398—399)։ Հ-ի ը հնչյունափոխության այլ դեպքեր ևս ունենք մեր հուշարձանում ճնդիկ սևուկ>ընդիկ սևուկ (154), ճամբերելի>ճմբերելի>ըմբերելի (76)։

\+ Ըռախմաքէն (55)—գրաստների զիստերի անմազ հատվածները. «Եւ կան ի քուռկնին, որ բազկունքն ի ներքուէ դարտակ լինի ի մազէ ...կոչէ յարաղն ըռախմաքէն։»։

— արաբ. رقمتان (raḳmatān) — նույն նշ.։

\+ Ըռիալան (107)—ինչ որ հիվանդության անուն. «Եւ լնի այս ցաւս ի ջրին խմելոյն, եւ առաւել՝ եբ կալնու զայն ցաւն, որ ասեն իր ըռիալան»։

□ Ըռումբ (71, 76, 77)—ռումբ՝ նիզակ. «Մի իջեցներ արմունկդ, որ կոտրի ըռումբն» (76)։

□ Ըռուպ (56), արաբ.—ռուպ, ռուբ, մրգի եփած մուգ կարմիր գույնով հյութ. «Թուխ խարտեշ, նման է ի յըռուպի գոյն»։

□ Ըռպգոյն (160)—Թուխ խարտայշ, կարմիր բոցագոյն. Հմմտ. ըռուպ։

Ընդհանրապես միջնադարում ռուպի գույնը վերագրվում էր նռան հյութի գույնին։

\+ Ըռfապի (100)—ծնկի հետ կապված ինչ-որ հիվանդություն. «Եւ կայ ցաւ, որ ասեն իր ըռfապի, որ թարգմանի ի հայն քամախ յանլված, որ իջնու ի յակն ի ծնկացն հաստ»։

—արաբ. ركبة (rakba) — նույն նշ.։

O Ըռfէպ (72, 75, 76, 77)— ասպանդակ. «Յորժամ կամենաս, որ զգրաստն կանգնեցնես՝ դու զըռfէպfդ լարէ ու կանգնեցոյ» (72)։

—արաբ. ركب (rikib), պարս. ركاب (rikāb) —նույն նշ.։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։ Ըռբեկ ձևով ունի Աղթամարցին, հրատ. Կոստ. 125. կեբ>բեկ շրջումը կատարված է հաջորդ տողի հանգի հետ համաձայնեցնելու նպատակով (Աճառ. Բ, 1063—64)։ Ճիշտ ձևով պահպանված է ըռfեպդար «թագավորական ախոռապետ կամ ձիակալ» բառում. Սմբ. դատ. 88 (անդ, 1065)։ (Մոկսում և Շատախում, որոնք Գրիգորիս Աղթամարցու ծննդավայրին կից են, գործածվել է ըռfէբ ձևով.—խմբ.)։

Թ

□ Թարղել (143)—թաթախել. «Թարղէ զինք ի սև ձոյթն»։

O Թախթան այնել (44)—սրարշավ ընթանալ. «Սիրած է մատակ ձիանն, որ յեշաւ այնեն ու թախթան, զի սուր յեշվեն»։

— պարսկ. تاختن (tākhtan) «1. սրարշավ ընթանալ. 2. ավարել, կողոպտել»։

Թախտան որպես գոյական ունի Աճառյանը (Բ, 1091) «ավարում, թալան» նշանակությամբ, որից և թախթնել «ավարել, կողոպտել»։

Թաղառ (86, 122)—խեցեղեն գոգավոր կամ կոնքաձև աման։

Թաղար ձևով վկայված է Գիրք Վաստակոցում (Աճառ. Բ, 1107)։

Թաղասուֆ (40)—գրչական վրիպակ է. տե՛ս թավասուֆ։

□ Թաղրփփիլ (68)—թաղաթափ լինել, հավանաբար ոթափվել, քնից հետո խելքը գլուխը գալ. «Ի վաղվնէ հան զինք [զձին] ու սվլէ, որ ճապկտի (խմա՝ մարմնով ձգվի) ու թաղրփփի»։

Աճառյանը (Բ, 1101) ունի թաղաքափ «գլխաբաց, մերկ գլխով», իսկ Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Բ տետր, 599)՝ թաղքափիմ, որ մեկնում է «բաբախել սրտի». «Օգտէ վատուժ ստամոքի և սրտի թաղքափելոյ և խափանեկի (խափակնի)». Ամիրտ. Բժ. Ա. 68, «Վասն խափականի որ յանկարծու ինգնա։ Յորժամ խափական ցաւն դիպի, նշան այս է. յանկասկած ուժն գնա, նուաղի, սիրտն թաղրփի». անդ, 336»։

□ Թամf (73, 75)—թամբ։

Պահպանված է որոշ բարբառներում։ Այս ձևով վկայված է նաև Առաք. պտմ. 82 (Աճառ. Բ, 1115)։

\+ Թամfող (58բ)—այն ողները, որոնց վրա թամբն է դրվում, «թամբուց տեղը» (էջ 93). «Թամfողն ու կզողն ու ծուռ ողն յայտ է»։

□ Թապլել (67), թապլիլ (67, 68), թապլտիլ (115), թափլիլ (85, 89)—թավալվել.

Գիրք Վաստակոցը ունի թապալ «թաւալումն, թապլտրկիլ» (էջ 189, 244)։

□ Թապլեցնել (82), թափլեցնել (89)—թավալեցնել. տե՛ս թապլել։

Թառանգոյն (115), պարսկ.—գազպեն, մանանա։

Աճառյանը (Բ, 1147) թառանկուպին բառի տակ հիշատակում է «Թառանկոյն Մխ. բժշ., թառնգին բժշ. ունի միայն Հայբուս. § 770»։ 1294 թ. բժշ. ունի «թառնգին, մանանան», որ է, հավանաբար, Հայբուսակի աղբյուրը։

\+ Թավասուֆ (41, 140)—գրաստների հիվանդություն՝ կոճերի վրա երևան եկող ճաքեր. թավասուփ «նմանէ ի շուշակ (տե՛ս) և լինի ի կոճքն» (140)։

— արաբ. توسف (tawassuf) — նույն նշ.։

□ Թարբևուճf (57)—թարթիչ, արտևանունք։

Աճառյանը (Բ, 1150) ունի թարբևաճf, իսկ Ախց. բարբ.՝ թէրբէվուճf։

□ Թարխռել (139)—թարախել, թարախակալել։

Օգ. բժ. (էջ 552) ունի թարխրել։

□ Թափլիլ (85, 89)—տե՛ս թապլել։

□ Թափլեցնել (89)—տե՛ս թապլեցնել։

\+ Թեվզեն (81)—հավասարաչափ, հավասարակշիռ. «Շատ գնալն և յեշվելն քայլան ձիոյն չէ՝ թեվզեն մեկնելովն լինի»։

— արաբ. توازن (tawāzun) — նույն նշ.։

□ Թըթխել (95)—վրան թթվեցնել, ստամոքսը թթվեցնել. «Եւ կտրած լեզուն յայտ է, զի չկարէ զգարին աղէկ ուտել, շողէ, թըթխէ զինք»։

Հավանաբար թթխմորել բառի ամփոփումից առաջացած։

□ Թիչիկնետ (67)—հավանաբար՝ թաշկինակ. «Որ խոց ի ձեռքդ չկենայ՝ թիչիկնետղ եղէ»։

O Թմբռհնդի (156)—հնդկարմավ։

— պարսկ—արաբ. تمر هندی (tamri hindī) նույն նշ.։

Աճառ. թմբռհնդի ձևով քաղում է Հայբուսակից, և հետևելով Հյուբշմանին, իսկ սա էլ Seidel-ին, ծագումը դնում է արաբերենից՝ تمره الهندی (tam-

13—1034

ra-ul-hindī), *մինչդեռ հայերենը համապատասխանում է պարսկականին՝* tamri hindī. *վերջինս գործածական է և արաբ. գրականության մեջ։ Մեր տարբերակում* **ṙ** *բաղաձայների միջև բ-ի հավելում է տեղի ունեցել (ինչպես* **արմաւ>ամրաւ>ամբրաւ. թմրիլ>թմբրիլ)**: *1294 թ. բժշ. ունի* «**թ[մ]պրճնդի.** *ի հնդկաց կա» (էջ 143)։*

\+ **Թեշիr** *(114)—պղնձե, լայնբերան կաթսա. «Առ ի յայն քարէն, որ գտվի ի կրին մէջն, որ չլինի այրած, լուայ, և* **թնջrով** *առ յիրմէ քառսուն դրամ, լեսէ և մաղէ»։*

— *պարսկ.—արաբ.* طنجير (tindjīr) — *նույն նշ.։*

O **Թութ** *(39, 41, 42, 113, 143, 159)—ուռուցք, բշտիկ. «Յաղագս* **թըթի**, *որ լինի ի տոշն և ի ձուքն» (113)։*

Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 43). «Եւ [նեղ], որ **թութ** *անուանի, նայ իւր ընծայիլն ի մորթին լինի և երևնայ ի յամէն տեղ... և է* **թութ նման**»:

Աճառյանը (Բ, 1292) առանց վկայության ունի «1. լեզվի ծայրին վերք. 2. ձեռքի վրա գորտնուկ» իմաստներով։

O **Թութիա** *(145), պարսկ.—աչքի թութի՝ պղնձի անգույն օքսիդ, որ աչքի դեղ է։*

Աճառյանը քաղում է Հայբուսակից և դնում «Մի տեսակ ծաղիկ, որ աչքի դեղ է լինում»։ Ծագումը՝ արաբերենից ու պարսկերենից և իմաստը ճիշտ են տալիս Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Բ տետր, 796) և Մալխասյանցը։

Թուխթ *(145...)* | **պարսկ.**—*ծանրության չափ, միջնադարում հավասար 15.449 գրամի*
Թուղթ (104...) | *Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 108 (Աճառ. Բ, 1299)։*

□ **Թվենալ** *(48, 53, 103)—թվալ, համարվել. «Աղվոր* **թվենայ** *քեզ» (48)։*

Թրակէս *(133), հուն.—թերիակէ, թյուրակե, դեղաթափ՝ դեղ թույնի դեմ։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 8, 131 (Աճառ. Բ, 1203)։

Ժ

□ **Ժաժել** *(66, 75)—շարժել. «Քանի զալիկն* **ժաժէ**՝ *նա փոշի ի վայր լցուի»։*

Այս ձևը պահպանված է Ալշ. և Մշ. բարբառներում (Աճառ. Ե, 302)։

□ **Ժաժիլ** *(75)—ժաժ գալ, շարժվել. հմմտ.* **ժաժել**:

Վկայված է Ամիրտ. բժ. Ա, 29՝ «ժաժիլ սրտի» (Ն. Բյուզ., ԲՍՀ, Բ տետր, 809)։

□ **Ժաժցնել** *(81)—շարժել. հմմտ.* **ժաժել**:

□ **Ժաւնալ** *(74)—տե՛ս* **ժօնալ**:

□ **Ժմուն** *(79)—պատշաճ ժամանակ, հարմար ժամանակ։*

Վկայված է Գանձակեցու մոտ (Աճառ. Գ, 10)։

□ **Ժուռ ածել** *(78)—շուռ ածել, ման տալ. «Գիշերն ի* **ժուռ** *կուտայի* **ածել**»:

Պահպանված է Սեբաստիայի բարբառում (Աճառ. Ե, 432)։

□ **Ժօնալ** *(74)—ճռճվել, երերալ. «Յորժամ առնուս լկամն ու արգելես, նա* **չըժաւնայ**»:

Աճառյանը արձանագրում է միջին հայերեն **ճօնկալ** *ձևը (Դ, 701)։ Մեր օրինակը կամ վրիպակ է և կամ տարնմանությամբ բառասկզբի* **ճ–ճ** *վերածվել է* **ժ**–*ի։*

Ի

\+ **Իազուֆ** *(57)—սպիտակ հատվածներ ձիու երեսի վրա, «Թէ լինի քթին վրա սպիտակ, զէգ խազ խազ և չհասնի ինչվի ճակատն ու կամ ի յաչքն, նա ասեն իր* **իազուֆ**»:

— *արաբ.* يعسوب (y'asūb) — *նույն նշ.։ Բառավերջի* ب (b)> *հյ.* **ֆ**. *տառադարձությամբ։ Ըստ Շտեյնգասի պարս.-անգլ. բառարանի՝ Մոհամմեդ մարգարեին պատկանած ձիու անունն է։*

□ **Ինչուr** *(90, 117)—մինչև։*

□ **Ինչվի** *(45...),* **ինչնվի** *(47)—մինչև։*

O **Իջուվածf** *(100)—հիվանդություն. մարմնի որևէ հոդի դուրս ընկնելը* (Hernie) *(Մալխաս.), «Եւ այն, որ կոճրխի* **իջուվածf** *է, որ իջնու ի մէջ կոճին որպէս ոսկոր»։*

Գիրք Վաստակոցը (էջ 205) և Գրիգորիսը (էջ 103) եա ունեն **իջված**f, *բայց «գրիպ» իմաստով։*

□ **Իrակ** *(71)—երակ։*

\+ **Իrթէհաշմ** *(192)—հիվանդության անվանում՝ «է ցաւ, լինի ի ձեռացն և ի ջղացն ի թուլութենէն... նա դողա ձեռքն և գիպի յիրար»։*

— *արաբ.* ارتهاش (irtihāsh) — *նույն նշ.։*

Բառավերջի մ-ն հավելագրություն է։

□ **Իrիկամնացաւ** *(151)—տե՛ս* **Երիկամնացաւութիւն**:

□ **Իrիկամունf** *(47)—երիկամունք։*

□ **Իrիկացf** *(88)—երեկո։*

□ **Իrf** *(54...)—որևէ բան։*

Պահպանված է Պոլսո բարբառում (Աճառ. Գ, 124)։

Լ

O **Լանբակ** *(119)—լանդակ. «Ծեծած ցորենից (կամ բրնձից) պատրաստած կերակուր խաշիլի նման, որի վրա յուղ և կաթ են ածում և ուտում ինչպես հարիսա» (Մալխաս.). «Առ գարէ ալոյր ու բարկ քացախ ու շինէ* **լանբակ**»:

ՆՀԲ ունի **լանդակ** *որպես գվռ. բառ։ Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։*

Լար, ի լար *(47, 48)—լարված, ցցված, կանգուն. «Եւ մեծ երակն... լինի հաստ ու կարճ և ի* **լար**» *(47)։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199, 246։

□ **Լեզել** *(88)—լիզել։*

□ **Լեսել** *(103, 104)—մանրել, փշրել, ծեծել, «***Լեսէ** *և մանդր աղայ և մաղէ»։ (104)։*

□ լինալ *(98)*, լիննալ *(125)*—*լինել, դառնալ։*

լկամ *(70,71)*, *պարսկ.—սանձ։*

Վկայված է ԺԳ դարից (Աճառ. Գ, 235)։

լկամել *(95)*—*անսասունի բերնին սանձ դնել, տե՛ս* լկամ:

□ լմնցնել *(53)*—*լրացնել, ամբողջացնել.*

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 61, 67, 225)։ Պահպանված է նաև բարբառներում (Աճառ. Գ, 207)։

□ լոսել *(127)*—*տե՛ս* լսել:

O լուլա *(141)*—*խողովակ. «Դիր ի յինք եղէգնէ* լուլայ *մի»։*

— *պարսկ.* لوله (lūla) — *նույն նշ.։*

Բառս լիւլէ *ձևով վկայված է Գիրք Վաստակոցում. «Փարչ շինեա երկու* լիւլէով» *(էջ 82), որ սխալմամբ թարգմանված է՝ «ծակ կամ բերան ըմպանակ անօթոց» (էջ 246)։ Կարստը (ՄՀԲ), Վաստակոցից քաղելով, և Մալխասյանցը ծագումն ու իմաստը ճիշտ են նշել։*

□ լուսնել *(38, 85)*—*պայտել. «Կան ոմանք մի, որ գրաստն* լուսնել *տան, երբ առվոյտ տան»։*

լուսին *«պայտ» իմաստով հաղորդված է Լաստիվերտցու մոտ (Աճառ. Բ, 254) և մեր հուշարձանում (էջ 49), որից և* լուսնել:

Վկայված է Վարդանի առակներում (Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Բ տետր, 1131)։

Համբրնի բարբառում պահպանված է լուսնիէլ *ձևով (Հ. Պողոսյան)։*

Խ

O խալապայ *(74)*—*խուռն բազմություն, ամբոխ, ժխոր. «Եւ հանապազ զինք (իմա՝ ձիան) ի* խալապայի *և ի ժողով ի շատ մարդկաց մէջ տար»։*

— *արաբ.* غلبة (ghalaba) *«1. բազմություն, առատություն, 2. հաղթություն, 3. հարձակում, 4. կարողություն, 5. իշխանություն, տիրապետություն։*

Աճառյանը բառս վերցրել է Անսիզքից և Սմբատ Սպ. Դատաստանագրքից «կռիվ, շփոթություն» առումներով և ծագումը ուղիղ է որոշել։

խալիզոն *(145)*, *արաբ.—խխունջ։*

O խալիկ *(46, 98...)*—*բազկոսկր. «Մեծութիւն* խալկին *ու փոքրութիւն կռճացն»։*

Աճառյանը (Գ, 323) բառս վերցրել է Ս. Գաբամաճյանից՝ «Նոր բառգիրք հայերէն լեզուի», Պոլիս, 1892։ Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է հայերենում։

+ խալս *(51)*—*անխառն, մաքուր. «Որ չինի* խալս *մատակ»։*

— *արաբ.* خالص (khālis) — *նույն նշ.։*

Մխիթար Հերացին ունի խալըս *(էջ 92), որ բացատրում է «յիստակ», իսկ Ֆրիկը՝* խալաս. *«ապա զինչ փորձած ոսկի, քուրայէն ի դուրս գաս* խալաս» *(տաղ ԽԱ, 72)։ Ուղիղ մեկնեցին Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տետր, 15), Կարստը (ՄՀԲ, թ. 251, վ. 14, թուղթ 18) և Տիրայր արք. (Ֆրիկ, 648)։*

O խալսիլ *(78, 103)*—*ազատվել, փրկվել. «Հանդարտութենով* խալսի *և ելնէ յայն բնութենէն» (78), «Քչիկ գրաստ* խլասի *յիրմէ» (103)։*

— *արաբ.* خلاص (khilās) — *Նույն նշ.։*

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում։ Ուղիղ մեկնեց Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տետր, 15)։ Մալխասյանցը խալըսել *ձևով համարում է արաբ.* khālis*-ից, որ մեր նախորդ բառն է. ուղղելի։*

Պահպանված է Համշենի բարբառում՝ խըլասիլ *(Հ. Պողոսյան), Շատախում* խլըս(ն)ել, *Մոկսում* խըլլըս(ն)իլ *(տե՛ս Մ. Մուրադյան, ԱՄԳՀՊ, 209)։*

□ խալտենալ *(81)*—*խալատ (ղալաթ) անել՝ սխալվել. «*խալտենայ *ի գնացքն»։*

խալատ, խալտիլ, ղալտիլ *(տե՛ս Աճառ. Գ, 319)։*

O խախաց *(133)*—*մակարդ. «Խառնէ յայտ շարապտ եղին* խախաց»:

ՆՀԲ և Աճառյանը որոշակի «պանրի մակարդ» են բացատրում, մինչդեռ մեր օրինակը վկայում է, որ ընդհանրապես «մակարդ» է նշանակում։

O խախիայ *(116, 117)*—*ուլկումիլի խեժը։*

Աճառյանը ախախիա *դնում է իրավացիորեն արաբ.* اقاقيا (akākiā)*-ից «*ախախիա*՝ ակացիա ծառը», որից և պարսկ.* قاقيا (kākiā)*։ Մեր օրինակը ունի պարսկականի ձևը։*

խախուլայ *(111)*, *արաբ.—հիլ։*

Աճառյանը (Գ, 879), Հայբուսակից քաղելով՝ ունի կակուլա, ղաղուլէ, *իսկ 1438 թ. բժշկ. (Կարստ. ZFAP, 124)* խախուլէ *ձևերով։*

□ խածնան *(89)*—*խածան, խածնող։*

O խամծել *(45, 50...)*—*ծնոտ, կզակ։*

Վկայված է նաև խամծէrf, խամծէf, խամծեծf *ձևերով (Աճառ. Գ, 352)։*

O խամնել *(71)*—*մորակել. «Յուշիկ յուշիկ գահէ ու հայնց, որ* խամնես *և մահմիզես». հմմտ.* խռամնի:

Մալխասյանցը ունի ղամշիել *ձևով։*

խայծղան *(126, 142...)*—*խայտաղան, ռետնային նյութ։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 146 (Աճառ. Գ, 363)։

□ խայծղնել *(118)*—*խայծղանել, խայծղանով օծել. հմմտ.* խայծղան:

խանդակ *(73, 77)*, *արաբ.—խրամ, փոս։*

O խանդարիուն *(105)*—*ծծմոր, կապուտիկ, կապուտածաղիկ, ամբար, խաղողիկ* (Centaurea Cyanus L.) *(Բեդևյան, § 940)։*

— *արաբ.* قنطوريون (kantūriyūn) — *նույն նշ.։*

Աճառ. ունի խանդարեկ *և* խանդարիա Cichorium intybus *«վայրի եղրդակ»։ Ծագումը ճիշտ է տալիս 1428 թ. բժշկ.՝ «*խանդարիան. *արաբերէն* խընդուրիուն» *(Կարստ, ZFAP, 124)։ Մեր ձևը բառիս հնագույն գրավոր վկայությունն է և ճշգրիտ տառադարձումը։*

+ խանդիխուն *(120)*, խընդխուն *(105)*, խանդիկոն *(133)*, խանտիկոն *(151)*—*մեղրից ու հին գինուց պատրաստված խմիչք. «*խանդիխունի *շարապ» (120), «Խմցոյ իր շարապ* խընդխունի» *(105)։*

— *արաբ.—պարսկ.* خندیقون (khandīkūn) — *Նույն նշ.։ (Մուհամմադ Աբդուլլահի (Նուր էդ-Դինի) դեղանունների բառարան, էջ 114, [19-րդ դար,*

Հնդկաստան]): Ամիրտովլաթը (Անգ. անպէտ, 219) ունի խանդիղոճ ձևով, «Ինքն շարապ մըն է, որ մեղրով և հին գինով շինեն, եւ անուշահոտ դեղեր կու խառնեն. տաք և չոր կու լինի բնութիւնն. աւգտէ ծերոց»:
խանդիկոճ (133)—տե՛ս խանդիխուճ:
□ խանկրել (69)—խանգարել. «Չի յորժամ ցաւի խանկրած ոտքն»:
խանտիկոճ (151)—տե՛ս խանդիխուճ:
□ խառանչել (52, 53)—զռալ. «Յորժամ կենայ [էշն]... ու խիստ խառանչէ»:
Վկայված է Վարդանի առակներում խառնչել (Աճառ. Գ, 393):
O խաս (74)—1. ազնվացեղ, ազնիվ, 2. ընտիր, լավորակ. «Զխաս ձին չկանկնեցնեն»:
— արաբ. خاص (khās) — նույն նշ.:
Գիրք Վաստակոցը (էջ 203) ունի «զխաս տաճիկ ձիոյն սահմանն», որ բառարանում մեկնվում է «ընտիր» (տե՛ս անդ, 246): Ծագումը ճիշտ են նշել Մալխաս. (Բ, 247) և Կարստը (ՄՀԲ, թղթ. 251, վավ. 14, էջ 109):
O խասիաթ (71)—բնավորություն, հատկություն. «Նա պեղծ խասիաթ է»:
— արաբ. خاصيت (khāsiyyat) — նույն նշ.:
Մխիթար Հերացու մոտ վկայված է խասլիաթ (էջ 110) և խասիաթ (էջ 120), որ ինքն իսկ բացատրում է՝ «որ է առանձինն իւր յատկութիւն» (այս փաստի վրա աշխատասիրողի ուշադրությունը հրավիրեց գրքիս խմբագիր Մ. Մուրադյանը): Գիրք Վաստակոցը (էջ 87) ունի այս բառը, որ բառարանում մեկնվում է որպես «ներգործութիւն, ազդեցութիւն. և՝ օգուտ». ուղղելի վերին իմաստով: Ծագումը և իմաստը ճիշտ են տվել Մալխաս. (Օգ. բժ., 554) և Կարստը (ՄՀԲ, թղթ. 251, վավ. 14, էջ 110):
+ խարինճ (60)—մոխրագույն ձի. «Կան ի ձիայնն խարինճ. և այն է գոյնն, զի ի մաւտ է յայս սպիտակս»:
— արաբ. *كرنج (karandj)<պարսկ. كرنگ (karang) — նույն նշ.: Պարսկ. گ (g)> արաբ. ج (dj), որ հայ. տալիս է ջ կամ ճ:
խարիչ (159)—դաղելու գործիք. «Խարէ պըղնձէ խարչնով»:
Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 139:
+ խարտաս (144)—մագաղաթ. «Առ... այրած խարտաս... խառնէ ի գինի և ի մեղր, բաժին մի գիր ի վրայ ոտվոյն»:
— արաբ. قرطاس (ḳarṭās), قرطس (ḳarṭas) — նույն նշ.:
Հնում ունենք քարտէս «թղթի կամ մագաղաթի թերթ», որ փոխառված է հունարենից (Աճառ. Ջ, 1428):
□ խարտեշ (55, 56)—խարտյաշ:
խարտուկ (106)—խարտուք, խարտելուց թափված թեփ, փոշի:
Մալխասյանցը ունի խարտուք: Բառիս հնագույն գրավոր վկայությունն է:
խաւարանֆ (88)—տե՛ս խօուրանֆ:
խեչ (45...)—տե՛ս խէչ:
խէժ արապիկ (162)—արաբական խեժ. տե՛ս սամղ յարապի:

խէչ (48...), խեչ (45...)—հետը, մոտը, կողքին:
Հաղորդված է Գիրք Վաստակոցում, էջ 79 (ՆՀԲ), (ինչպես նաև 1271 թ. պարոն Կոստանդինի արտոնագրում. տե՛ս Ղ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ոամկօրէնի վրա, Վիեննա, 1897, էջ 258, խմբ.):
խըր (86)—տե՛ս խուր:
խընդխուճ (105)—տե՛ս խանդիխուճ:
խր—տե՛ս խուր:
խիարուկ (134), խիար սատանայի (106)—ելունդ, խաղավարտ (Bubo), «Առ սատանայի խիարուկն ու զըուրակն, եփէ ջրով, ու լից ի փողքն ի վայր» (134):
Բառիս ծագումը արաբ.-ից ճիշտ է նշել և մեկնել Մալխասյանցը Օգ. բժ. բառգրքույկում: Աճառյանը (Գ. 476) ունի անորոշ ձևով՝ «վարնգաձև մի տեսակ պալար»:
խիզարուկ (132)—խզարելու ժամանակ թափված թեփը.
Մալխասյանցը ունի խզարուք: Բառիս հնագույն գրավոր վկայությունն է:
խիճիփար (42)—տե՛ս խիչիփար:
խիմաղիա (113)—տե՛ս կիմուլիա:
□ խիչիփար (99...), խիճիփար (42)—խեչափառ, խեցգետին:
խլիմիայ (145)—տե՛ս աղլիմիայ:
+ խլխտիս (105)—պղնձարջասպ. «Առ ժանգառ և արջասպ և խլխտիս»:
— արաբ. قلقديس (ḳulḳadīs) — նույն նշ., որ փոխառյալ է հուն. χαλκιτης-ից (Շտեյնգաս, Պարսկ.—անգլ. բառ.):
+ խլուփի (55, 59)—մուգ դեղնավուն՝ կարմրի մոտ. «Կայ խարտեշ խլուփի, որ լինի դեղ զաֆրնգոյն» (55):
— արաբ. خلوقى (khlūḳi) — նույն նշ.: Ըստ Դեհխոդայի բառարանի՝ խլուղ(խ) օծանելիք է, որի հիմնական մասը զաֆրան է և գույնը կարմրավուն կամ դեղնավուն: Բրիտանական գրադ. Or. 3483 ձեռ. պարսկ. Ջիամասպյանը (էջ 24b) այս գույնը հետևյալ կերպ է նկարագրում. «Աշխարը (շագանակագույն կամ խարտյաշ ձի) մի քանի հազար երանգ է ունենում, ոմանք խլուֆի (خلوفى khlūfī) են ասում, որ դեղին է և մազերը զաֆրանի գույնի»: Այստեղ գրիչը արաբ. ق (ḳ) շփոթել է ف (f)-ի հետ:
O խնձոր (47), խնձոր (126)—1. կրունկների դուրս ցցված կլոր գլուխը. 2. ձիան հետևի անդամների մասնները, գավակ. «Երկու խնձորք կրնկացն ի դուրս» (47):
Երկրորդ առումով ունի գիրք Վաստակոցը՝ էջ 199:
O խոամճի (76)—ղամչի, մտրակ. «Զիր ամէն երսնակն ունենայ և զանպատեհ խոամճին»:
Սա թուրք. ḳamčī բառն է, որ Մալխաս. ունի ղամչի տառադարձությամբ: Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:
խոզ (111)—ջրի մամուռ. «Առ խոզի գումն և պատռէ ի ներս և դիր ի յինք քիչ մի չաման»:
Վկայված է խօզ Գիրք Վաստակոցում, էջ 182 (Աճառ. Գ, 695):
խոզմազ (158)—խոզամազ, խոզի մազի նման կոշտ (Մալխաս.):
Բառիս հնագույն գրավոր վկայությունն է:

խոզտի (104) — խոզաճարպ։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 168 (Աճառ. Գ, 539)։

խոյաքիթ (45) — մեծ կամ ոչխարի նման քիթ ունեցող (ԱԲ)։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

□ **խոյլ** (91) — խուլ, պալար, ուռեցք։

+ **խոյլ** (44) — զորք, բանակ, գումարտակ. «Եւ սիրած է... ձվաւք ձիանն, որ... դիպին ընդ չարկամն ու փլցնեն ու **խոյլ** հեծելնի»։

— արաբ. خيل (khail), հգ. خيول (khuyūl) «1. ձիեր, ձիերի երամակ, 2. այրուձի, հեծյալ բանակ, 3. զորք, գումարտակ»։

+ **խոյլ** կամ **խուլ** (121) — խլածաղիկազգիներին պատկանող բույս, մնթուր (տե՛ս). «Առնուին զչուհուտ մուղլն և հալէին ի **խլին** ձէթն, որ է մնթուրն, և շինէին աւծնելիք»։

Մալխասյանցը ունի **խլածաղիկ**, որ է նույն **խոյլենի**, **խլաբոյս** (խուլաբույս) (ըստ Բեդևյանի, § 3123, Scrophularia nodosa L.)։

Մեր բնագիրը **խոյլ** նույնացնում է **մնթուրի** հետ, որ է ըստ Բեդևյանի (§ 2234) **մեմփածաղիկ**, **մնթուր** (**պարտիզալ**)՝ Matthiola oxyceras DC., իսկ վերջինիս համազորներն են **դեղին շահոքրամն** և **շահպրակը**՝ Cheiranthus cheiri L., որ պատկանում է խաչածաղկավորներին (Jam. Cruciferae) (տե՛ս Բեդևյան, § 993)։

□ **խոննել** (146) — խոնչել։

□ **խոչքոր** (111) — խոճկոր։

խոստուկ (40) — փորացաւ, խիթ (Eloncement). տե՛ս և **խոցտուկ**։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 206 (Աճառ. Գ, 633)։

խորասան (77, 88) — նահանգ հյուսիս-արևելյան Իրանում։

+ **խորասնցնակ** (90) — թեք. ծռված դիրք, վիճակ (՞). «Խեղդես **խորասնցնակ** որպէս խեղդեն զֆնտուն»։

Արդյո՞ք պարսկ. خرسان (xorsān) «ծռված, թեք ընկած» բառով է կազմված։

□ **խոցնալ** (118) — խոց գոյանալ, խոցոտել։

Վկայված է Մխ. Հերացու մոտ. ԻԳ. 48, 49 (Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Գ տետր, 310)։

□ **խոցրել** (101, 104, 139) — խոցոտել։

□ **խոցտուկ** (132) — փորացավ, խիթ, **խոստուկ** (տե՛ս)։

+ **խութ, խըթ, խթ** (82, 83, 86) — առվույտ և կամ նրա սերմը. «**Խթ**, որ է առվոյտին հունդն» (82), «Առնուն **զխութն** ու կտրեն մանտր մանտր» (86)։

— արաբ.-պարսկ قت (ḳut) «առվույտ», قت (ḳatt) «չոր կամ թարմ առվույտ. դաշտային վայրի բույսի հունդ, որ քոչվոր արաբները սովի ժամանակ ալրում և հաց են թխում» (Նաֆիսի, Պարսկ. բառ. 2623)։

+ **խուման** (101) — ծնկներից իջնող ուռուցք, որ կաղություն է առաջացնում. «Եւ **խումանն** ուռէց է, որ իջնու ի ծնկացն»։

— արաբ. خماع (khumā‘) «կաղացող». սրանից էլ հիվանդության անվանումը։

○ **խումր** (39) — ջերմ, գլխացավ. «Վասն ցաւուն, որ **խումր** է գրաստն»։

— արաբ. خمار (khumār) «1. ջերմ, գլխացավ, 2. գլխացավի պատճառած տառապանքը, 3. հոգնություն, վրդովմունք»։

Միջին հայերենում հաղորդված կա արաբ. փոխառյալ **խումար** «զարթխում, արբեցությունից նոր սթափված», որից և **խումրութիւն** «հարբեցության թմրությունը» (Աճառ. Գ, 653—54), ինչպես նաև «հարբածություն և խելագարություն» (Օգ. բժ. բառգրքույկ)։

Ցանկի այս ՄԸ գլուխը բնագրում այսպես է՝ «Յաղագս **խումրութեան** գրաստու» (էջ 75)։

+ **խումրել** (42) — 1. ջերմել, 2. վրդովվել. հմմտ. **խումր**. «Վասն **խումրելոյ**, որ զեղ կատղած լինի»։

+ **խումրնալ** (79) — խումարանալ, հոգնել, վրդովվել. հմմտ. **խումր**. «Եբ **խումրնա** գրաստն, նա այլ առաւել գաղնայ»։

խումրութիւն (112, 169) — ջերմ, գլխացավ. հմմտ. **խումր**։

+ **խունան** (38, 102—106, 117), **խուննան** (137) — գրաստների ինչ-որ հիվանդություն։

— արաբ. خنان (khunān) «քթի հիվանդություն. ուղտերի հարբուխ» (ըստ Կամուսի թրք. թարգմանության և Նաֆիսու Պարս. բառ., էջ 1406). սակայն հիվանդության նկարագրությունը մեր հուշարձանում ավելի լուրջ հիվանդության է վերաբերում։

○ **խուրս** (106, 112) — գնդիկաձև դեղահատ. «Շինէ **խուրսեր** մթխալ մթխալ» (106)։

— արաբ. قرص (ḳurs) «1. գնդիկաձև որևէ իր, 2. դեղահատ»։

Մխիթար Հերացին ունի **ղուրս** և **կուրս** (43, 50, 85...) տառադարձությամբ. «Ապա թէ տաքութիւն շատ լինի և ուժով, դու տուր հետ թանին զայս **ղուրսս**» (էջ 43)։ Կարստը մեկնել է «դեղ» իմաստով (Kil. Gr. § 31 և 37, տե՛ս ՄՀԲ, թղթ. 251, վավ. 14, էջ 311)։ Մալխասյանցը (Օգ. բժ. բառգրքույկ) **ղուտս, ղուրս** կամ **կուրս** թարգմանում է. «Ընդհանուր անուն ներս ընդունելու դեղերի»։ Մ. Մուրադյանը (ԱՄԳՀՊ, էջ 265) ունի **խուտս** (**կուտս, ղուտս**) ձևերը, որ տալիս է «դեղ» նշանակությամբ։

Աճառյանը (Ա, 96, նաև Բ. տպ. էջ 111) Գաբամաչյանի բառարանից քաղել է **ակրաս** «դեղերի զանգված, pastille», իբր արաբ. բառ, որ «գիտէ նաև Քաջունի, հտ. Գ, էջ 5բ», բայց չի տվել արաբ. տառադարձությունը։ Սա մեր բառի հոգնակի ձևն է՝ اقراص (aḳrās) «1. գնդիկաձև իրեր, 2. դեղահատներ»։

+ **խպիթէ** (91) — ուռուցք, խուլ. «Եւ թէ կամենաս **խպիթէ** հանել, որ կա խոյլ ընդ ականջթոռն և ընդ փողըն ի մէջ»։

— արաբ. حبط (habat) — նույն նշ. արաբ. **հ** (ح)-ի **խ** (خ) ընթերցումով և կամ **հ**>**խ** փոփոխությամբ։

□ **խոընննաւղ** (54), **խոընննող** (151) — խխունջ։

ՆՀԲ (Ա, 986) ունի **խոնչող** ձևով։

□ **խտխտիլ** (92) — գրգռվել. շլանալ որևէ փայլուն բանից. «**Խտխտի** աչքն դէմ արեգականն»։

ՆՀԲ ունի **խտղտել** ձևով։

☐ Խրխնճալ (92) — խրխնչալ։
☐ Խրչաճ (70) — խրտչան, խրտնող։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 198)։

☐ Խրչիլ (73...) — խրտչել։
+ Խռուփիճ (96) — խրտնելը, շլանալը, աչքերը մթագնելը. «Եւ խրտչիլն լինի ի սրտին վատուժութենէն, և լինի ի խռուփենէճ և ընդ խումրութենէն»։
O Խփշիլ (147, 149) — աչքը փակվել, կուրանալ. «Ուռենայ աչվին և խփշի» (147)։

Նույն իմաստով խափ արմատից Աճառյանը (Գ, 446) բերում է խափճուլ։ Վկայված է նաև խափշիլ, որ «մարիլ, հանգիլ» իմաստն ունի (տե՛ս անդ)։

☐ Խօսրաճֆ (խաւսրաճֆ) (88) — խոսարան, լեզու. «Ձի խաւսրաճֆ չունի, ծառայէ առանց լեզուն»։

Ծ

☐ Ծագ (98) — ծակ։
☐ Ծածկտել (116) — ծակծկել, ծակոտել. «Ու ծածկտէ զտերևն երկու երեք տեղ»։
O Ծայր (79, 88, 122) — փոքր-ինչ, քիչ, կաթիլ, պտղունց. «Առնուն ծայր մի աղ» (88), «Ձգէ ի ներս ծայր մի չոր գինձ» (122), «լից ծայր մի ջուր» (122)։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 195), որ անդ տողատակում բացատրված է «սակաւ մի կամ կիսաբաց»։ Նույն վկայությունը Ն. Բյուզանդացին մեկնում է «փոքր ինչ» (ԲՍՀ, Գ տետր, 408)։

☐ Ծայրոյրել (57, 139) } — ծարուրել, ծարիր քսել։
☐ Ծայրրել (139) }
☐ Ծառայվիլ (84, 114) — խնամվել. «Եւ թէ նոր լինի ցաւն, նա ծառայվի այսպէս» (114)։
☐ Ծառ կանգնել (73) — ծառանալ, ծառս լինել, հետևի ոտների վրա կանգնել «Կենայ ի գրաստն շատ յայպեր, որպէս... ծառ կանգնեյն»։

Մալխասյանցը ունի ծառս կենալ, էգ. Աղայանը՝ ծառս կանգնել։

☐ Ծառութիւն (78, 84, 103) — խնամք, սպասարկում, ծառայություն. «Ի յայս ցաւուս ծառութիւն, զոր իսկի կարցաք մեք փորձեցաք» (103)։
Ծառուբրար (68, 84, 95) — խնամող, սպասարկող, ծառայություն անող. «Եւ պատեհ է, որ ծառուբրարն ձիոյն, որ հայնց ծառայէ զինք» (68), «խածնան լինի ի ծառուբրում (=ծառութրարում) շատ ծեծելոյն» (95)։

Վկայված է Սմբատ Սպ. Դատաստանագրքում, էջ 101 (Աճառ. Գ, 745)։

☐ Ծարվենալ (84) — ծարավել։

Բարբառներում գործածվում են ձառվենալ, ձառվնալ (Աճառ. Գ, 751)։

☐ Ծարվեցցնել (68) — ծարավեցնել։
☐ Ծխի (46) — ծղի, բազկոսկր։
☐ Ծծմալ (151) — ծմա՞լ (տե՛ս). «Հերքոյն... ցաւ է, որ լինի յոտվին ու յակընջին ու քիթն՝ պէդ շուշկակ, և ծծմայ...»։
+ Ծղատակ (46) — ծղիի՝ բազկոսկրի ներքևի մասը. «Կակղութիւն մըսին, որ կայ ի ծղատակէն յերչի դեհին վերայ»։

O Ծմալ (126) — տնքալ (անասունների). «Հանապազ [գրաստն] ծմայ ու զգլուխն ի լերդին դեհն դարձնէ»։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է, որ ունի Մալխասյանցը։ Հավանաբար նույն արմատից է ծմին «փոքրիկ շնչահան»՝ վկայված Գիրք Վաստակոցում, էջ 122. «Ծեփեա զբերանն և փոքր ծմին (այլ ձ. ծակ մի) թող, որ շունչն ելանէ» (Աճառ., Գ. 797)։

+ Ծնաբերան (51) — արգանդի բերան. «Ձգէ զամէն ախտն ի ծնաբերնէն»։

Բառս ունի Ն. Բյուզանդացին (Ֆրանս. բառ. 881 և ԲՍՀ, Գ տետր, 496)՝ քաղված Անգիտաց անպէտից։ Ղարաբաղի բարբառում ծին նշանակում է «Կովի արգանդ» (Աճառ. Գ, 778)։

+ Ծնուրբայ (150) — 1. արյուն ծծելու սպակե խողովակ. 2. տզրուկ. «Տուր բռնել զգրաստն ու մտոյ ծնուրբայնի [յաչքն] ու վերոյ [զագոն]»։

— արաբ. زنورة (zanūrat) — նույն նշ.՝ ز (z)-ի ծ տառադարձումով, ինչպես մարզպան — մարծպան, անզրուժ — անծրուժ։

O Ծոլուկ (77, 88) — նետաձիգ, աղեղնավոր. «Հեծնի զինք անգէտ ծոլուկ կամ տղայ» (77), «Եւ մազէ ճուլ մի ձգեր ի վրա մատակ ձիաննոյն և ոչ ի վրայ ջորեստնոյն, որ կիծ չայնէ, և պնդէ զծոլուկն» (88)։

— արաբ. زلوق (zalūk) — նույն նշ.՝ արաբ. z > հյ. ծ. հմմտ. ծնուրբայ։

Մատթ. Ուռհայեցին (1898, էջ 427) ունի ծլուկ. «Ունելով ընդ իւր մարդս հազար, ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ խարուանդայ, ընդ հետևակ», որ Աճառ. (Գ, 789) հարցականով մեկնում է «ծառա», միաժամանակ նշելով, որ Կամուսի թրք. թարգմանության մեջ կա زلوق (zulūk) «արագընթաց երիվար», «որ իմաստով անհարմար է»։ Կարստը (ՄՀԲ, թղթ. 251, վավ. 15, էջ 60) ծլուկ թարգմանում է «թեթև հետևակ»։ Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տետր, 529), հետևելով Դյուլորիեին, Ուռհայեցու ծոլուկ-ը ուղղում է ծոլակ, որին զուգահեռ է դնում թուրք. սօլաք՝ «անձնապահ, թիկնապահ» իմաստով։ Մեր օրինակը առայժմ երկրորդ վկայությունն է հայերենում և մերժում է բառի մեջ ու>ա փրիպակի առկայությունը, հետևաբար և թուրքերենից ծագելու Բյուզանդացու վարկածը։

Մեր մեկնությամբ Ուռհայեցու վերը բերված նախադասության իմաստը ավելի հասկանալի է լինում։

+ Ծուծոսկոր (98) — ծուծ պարունակող ոսկր։

Կ

Կալաւպել (89) — տե՛ս կալօպել։
☐ Կալաւփցնել (68, 74, 96) — տե՛ս կալօպել։
Կալօպել (=կալաւպել) (89) — ձին քառասմբակ վազեցնել։

— Ֆրանս. galop — նույն նշ.։

Ճիշտ է մեկնել Ն. Բյուզանդացին՝ հիմք ունենալով հուշարձանիս վենետիկյան պատառիկը (տե՛ս «Բազմավեպ», 1867, 354). Աճառյանը (Գ. 867) վերցրել է Բյուզանդացու ֆրանս. հայ բառարանից (էջ 585ա)։

☐ Կակղցաւղ *(=կակղցօղ)* *(131)—կակղեցնող, կակղացուցիչ. «Շինէ զայս* կակղցաւղ *դեղերս»։*

☐ Կաղճալ *(96)—կաղալ. «Կաղնալն մէկ ոտիցն ի գլխոյն ճանաչվի»։*

○ Կամար *(70, 82),* ҩամար *(66)—հավասար. «Ի զօդվածքն չլինի հաւասար ու* կամարՓ» *(70), «Նա թէ ի քոյն այլ աւելի լինի աղէկ նշաննին, նայ դու գրաւէ, և թէ* ҩամարՓ, *նա դու մի գրաւել» (66), «Ջերկու աոջի ոտքն* կամարՓ *ձգէ» (82)։*

— արաբ. قامة (ḳāmat) *— նույն նշ. (Կամուս, թրք. թարգմ. հ. 3, էջ 545)։*

Աճառյանը (Գ, 907) բառս քաղել է Սմբատի Դատաստանագրքից ու Անսիզքից և ճիշտ է տվել իմաստը՝ «հաւասար»։ Ն. Բյուզանդացին ևս տալիս է «հավասար» իմաստը և Գիրք Վաստակոցի ձեռագրից բերում հետևյալ քաղվածքը. «Եւ այլքն զմոմն և զձիւթն կամարՓ *առնեն, և հալեն, և ձիւթեն» (էջ 90)՝ նշելով, որ տպագրում բառս փոխարինված է* ҩաւասար *(ԲՍՀ, Գ տետր, 605), սակայն թե՛ Աճառյանը և թե՛ Բյուզանդացին ծագումը չեն որոշել։*

○ Կամկեկ *(73, 126)—կամաց, հանդարտ, նրբորեն. «Ջթամբն ողբնաւք ու ի* կամկեկ կամկեկ *ի վրայն դիր» (73), «Անցմնցեցո զգրաստն* կամկեկ» *(126)։*

Գիրք Վաստակոցը (Բառք, էջ 248) կամկէՓ *և* կամկէկ *մեկնում է «կամացուկ, հուշիկ, մեղմիկ», իսկ Օգ. բժ. բառգրքույկում (էջ 555) Մալխասյանցը* կամկեկ *բացատրում է «ըստ կամի, կամավոր կերպով»։ Աճառյանը (Գ, 910) «կամաց, դանդաղ» իմաստով ունի* կամկար՝ *հաղորդված 17-րդ դարից և պահպանված բարբառներում։*

☐ Կամփէ *(121)—կանեփյա. «Առ* կամփէ *չուան ու կապէ զագէտակն պինդ»։*

○ Կայտ *(60)—կետ, պուտ. «Այն ձին, որ [ուննայ] սև* կայտեր *և ի վրայ պըրկանն կամ ի ներքսէ կամ ի դրացէ՝ որպէս զշուշմայ (իմա՝ քունջութ) կետեր... չէ շնոֆոր»։*

ՆՀԲ բառիս իմաստը անհայտ է համարում. «Թերևս խայտուցք, կամ կէտք և կիտուածք նշուլից, իբրու կայծեր. «Այապաստրն է մարմարիոն սպիտակ, պարզ իբրև զապակի, և ունի կայտեր *բազում» Բրս. մրկ.» (1325 թ.)։ Աճառյանը (Գ, 940—41) նույնպես անստույգ բառ է համարում՝ «մարմարիոնի վրա գտնված երակներ կամ նշաններ» իմաստով, և ավելացնում է՝ «Բառարանները դնում են* կայտեր *իբր եզակի։ Թվում է թե հոգնակի է* կայտ *ձևից»։ Մալխաս. ևս համարում է «անհայտ նշանակությամբ բառ»։*

Մեր օրինակը, որ բառիս հնագույն վկայությունն է, ավելի պարզություն է մտցնում իմաստի մեջ. սև կայտեր, *որ նման են շուշմայի (քունջութի) կետերի։ Հետևաբար Աճառյանն իրավացի է* կայտեր *համարելու* կայտ *բառի հոգնակին, իսկ իմաստն ավելի ճիշտ տալիս է ՆՀԲ՝ դնելով «խայտուցք, կէտք»։ Հավանաբար* կայտ *հնագույն ձևն է* կէտ*-ի* (կէտ)՝ այ>ե>է. *վերջինս հոլովման ժամանակ, ինչպես նշում է Աճառյանը (Գ, 1173), դառնում է* կետ: *Այս ձևից՝* կետադրեալ, կետաճարութիւն *(անդ, 1174)։*

☐ Կանայչ (87)
☐ Կանաեչ *(87)*
☐ Կանաչ *(85, 108)*
— կանաչ։

☐ Կանիփայտիգ *(115)—տիզկանեփատ, տզկանեփատ (*Ricinus communis L.*)։*

☐ Կանկնան *(50)—կանգնող. «Գոված է մատակ ձին, որ լինի շատ* կանկնան *ու նստի քչիկ»։*

☐ *1.* Կանկուն *(48)—կանգուն՝ ոտքի վրա կանգնած։*

☐ *2.* Կանկուն *(68, 41)—կանգուն երկայնության չափ։*

○ Կասլայ *(103, 127, 152)—դափնի (*Laurus nobilis L.*), նաև արաբական կասիա, դարչնածառ, կինամոն,* Cassia.

— պարսկ. كسيلا (kasīlā) *«արաբական կասիա» (Շտեյնգաս, Պարսկ. անգլ. բառարան),* كسيله (kasīla) *«կասիայի մի տեսակը՝ ժմիրակ, դարչնածառ»։*

Աճառ. (Գ, 1015) (նաև Մալխաս.) ըստ Հայբուսակի (§ 1333) դնում է դափնի», միաժամանակ համեմատելով արաբ. kasīla*-ի հետ, գտնում է, որ վերջինս, «ձևով էլ շատ չի համարում մեր բառին (արաբ.* ك k = *հյ.* Փ, *իսկ* կ= ق q (ķ)»*։ Կարստը ևս փոխառյալ է համարում արաբ.* قصلة (ķaṣla) *«դափնի» (ՄՀԲ, թղթ. 251, վավ. 16, էջ 109)։*

Նաֆիսին և Շտեյնգասը բառս պարսկերեն են համարում. այս դեպքում պարսկ. ك (k)*-ի* կ *տառադարձումն օրինաչափ է, անգամ չի բացառվում, որ այն պահլավերեն լինի՝* *kasīlā, *որից և պետք է փոխառված լինի արաբ.* كسيله(kassīlā) *«մի տեսակ դեղ, ծառի կեղև» (Նաֆիսի, 2890)։*

1438 թ. ձեռ. բժշկարանը բառիս դիմաց դնում է արաբ. ղար [= غار], *որ ըստ Նաֆիսու (էջ 2444) է «մշտադալար ծառ, որի փայտը այրելիս հաճելի հոտ է արձակում. օգտագործվում է դեղագործության մեջ»։*

Ըստ Բեդևյանի (§ 2048) կասլային *հոմանիշ են՝* դափնի, սարդենի, ղարի, եզրեղի, ճոփի *(*Laurus nobilis L.*)։*

☐ Կարէճալ *(49)—կորցանալ.* «Ջկարէճայ *մարդ տեսնուլ»։*

Պահպանված է Երևանի բարբառում (Աճառ. Գ, 1047)։ Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

Կարծ *(152)—կո՞րծ. հավանաբար տառասխալ է.*

Կաւճ *(50)—տե՛ս կօճ։*

Կաւշկաւշ *(92)—տե՛ս կօշկօշ։*

Կաւստ *(137)—տե՛ս կօստ։*

☐ ԿաՓաֆ *(139, 163)—կաքավ։*

○ Կերիչ *(39)—արյունոտ խոց, դաշտիկ կամ* ուտիչ *վերքը (տե՛ս). «Վասն* կերիչ *ցաւն, որ է դաշտիկ»։*

Որպես հիվանդություն չի հիշված բառարաններում։

☐ Կէզն *(129)—թեք։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 215 (Աճառ. Գ, 1169)։

☐ *1.* Կզող *(45)—թեքող։*

\+ *2.* Կզող *(58բ)—այն ողները, որոնք կզություն են առաջացնում և բարձրացնում են թամբի տեղը (տե՛ս էջ 93). «Թամքողն ու* կզողն *ու ծուռ ողն յայտ է»։*

Կրխա *(105), ասոր.—կթղա, փոքրիկ բաժակ, ըմպանակ։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 119, 120 (Աճառ. Գ, 1176)։

\+ Կիլիստռել *(60)—անստույգ նշանակությամբ բառ. «Թէ [ձին] լինի թուխ՝ աննիշ սև... ու ի վրայ գագթանն ի մազին փայլկտուկ՝ զէգ ճանփնի, որ նման է յերկնի, զէգ* կիլիստռած կտաւ, *նա հրեղէն է»։*

Կիծ *(42, 85, 88, 121)—հիվանդություն՝ եռք, սաստիկ քոր։*

Կ. Բասմաջյանը (Անգ. անպ. 721) հարցականով տալիս է լատ. Prurit.

O Կիմուլիա *(150),* խիմաղիա *(113)—կավեղեն հող, որ հին ժամանակներում և այժմ գործ է ածվում իբրև օճառ, բուրդը թաղկելու, և իբրև դեղ. «Առ զայն կավն, որ կոչի* կիմուլիա» *(150), «Առ* խիմաղիա կաւ, *լեսէ» (113)։*

— արաբ. قيموليا (ḳīmūliya) *— նույն նշ.։*

Աճառ. (Գ, 489) ունի խիմուլակաւ՝ *քաղված Ն. Բյուզանդացու ֆրանս. բառարանից՝ էջ 245ա («*Խիմուլակաւ, *ինքն ի բուռն ի մօտ լինի, լրջգոյն տրամ հող»)։ Աճառյանը ծագումը դնում է հուն.* χιμολια*-ից, միաժամանակ վերապահություն անելով, որ «*K *ձայնի դեմ* խ՝ *ցույց է տալիս, որ բառը արաբերեն տառադարձության միջոցով է անցել մեզ»։ Հիրավի այն արաբերեն է՝ նույն նշանակությամբ, իսկ արաբ.* ق (ḳ) *հայերենում տառադարձվում է և՛* կ, ղ, *և՛* խ:

Մեր աղբյուրը տալիս է բառիս հնագույն գրավոր վկայությունը հայերենում։

☐ Կղիմիտր *(67, 120)—կղմինտր։*

O Կոլինջ *(39, 41, 115), արաբ.—փորի սաստիկ ցավ, գալարումով և շամփրոտելով, սանջու, խիթ* (colica abdominis)*;*

Աճառյանը (Գ, 643) ունի խուլինջ *և մեկնում է «մեջքի վրա մի տեսակ ուռեցք»՝ նշելով, որ ՀՀԲ, ՁԲ, ԱԲ, ՓԲ բառիս վկայությունը չունեն։ Նորայր Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տետր, 891) հիշատակում է, որ ըստ Պողաճյանի կա արաբ* գուլունջ *«թիկնացավություն» և պարսկ.* ֆիուլենճ *«ցավ, խիթք»։ Աճառյանը տալիս է բառի արաբ. ճիշտ ձևն ու իմաստը* قولنج (ḳūlindj) *«աղիների հիվանդություն»։ Մալխասյանցը* կոլինջ *մեկնում է «փորի սաստիկ ցավ, գալարումով...»։ Այս բացատրությունը, ինչպես նշում է Մ. Մուրադյանը (ԱՄԳՀՊ, էջ 202) «համընկնում է Գրիգորիսի և Ամիրդովլաթ Ամասիացու գործածությանը»։ Աբուսաիդը* ղուլինջ *ձևով (էջ 132) և մեր աղբյուրը ևս այս հիվանդությունը կապում են փորի ցավերի հետ։*

Պարսկերենում այս հիվանդությունն անվանվում է նաև پرنيش (purnīsh) *«փորացավ» (հետաքրքիր զուգադիպություն հայ.* փոր*-ի հետ. պարսկ.* փոր *բառի «որովայն» նշանակությունը հայտնի չէ)։ Պարսկերենում* كولنج (kūlindj) *տառադարձությամբ նշանակում է նաև «կողացավ»։*

Անգ. անպէտն ունի ղուլինճ, ղուլնջ *ձևերով, որ Կ. Բասմաջյանը (անգ, 726)* colique *հիվանդությունն է համարում։*

☐ Կոկվիլ *(104)—գոգվել, փոս ընկնել. «Քաշվի ջղերն և* կոկվի *դէպ ի ներս»։*

\+ Կոճբերաճ *(58բ, 85)—վեգի դուրս ցցված մա՛սը. «Եւ հանապազ* զկոճբերաճն *զոտվոյն ու գձեռվոյն սրբէ»։ (85);*

\+ Կոճրուխ *(100)—«Եւ այն, որ* կոճբխի *իջուացք է, որ իջնու ի մէջ կոճին որպէս ոսկոր»։*

☐ Կոտոշ *(11)—եղջյուր.*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 208, 212, 224 (Աճառ. Գ. 1351)։

\+ Կոտրտուկ *(39, 108)—ցրտառության հետևանքով մարմնի հոդերի ջարդոտումը, ճմկոտումը։ «Յաղագս ցաւուն, որ կոչի* կոտրտուկ»:

Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 13, 23)։

Կորի ագի *(107)—կորու ագի, կարիճատուտ բույսը* (Scorpiurus L.)*, «Դու տուր զայն խոտն, որ ասեն իր* կորի ագի».

\+ Կուկեռ *(107)—կոր, կարիճի պոչի պես դեպի վեր ծռված. «Ծայրերն լինի* կուկեռ՝ *զէթ կորի ագի»։*

O Կուղունճ *(90)—կճղակ. «Բևեռին թող ծուռ լինի, որ ընդ* կողունճն *ի ներս երթայ, որ եբ բևեռվի՝ նա թաղվի յինքն»։*

Աճառյանը (Գ, 1291) ունի կողինջ *ձևը «խղունջ» իմաստով, որ վերցրել է ՀՀԲ, ՓԲ և ԱԲ-ից (վերջինը* խղունջ *բառի տակ՝ իբրև գավառական ձև), իսկ Նորայր Բյուզանդացին (ֆրանս. բառ, 749) որպես միջ. հայ.* կոխլանջ<կողլանջ, կողինջ: *Մալխասյանցը տալիս է* կողունճ *«1. գիհի ծառի կեղևը. 2. Հացի կեղևը,* կողինճ», *իսկ վերջինս՝ «պտղի կորիզ, որ ունի փայտե կարծր պատյան»։*

Կուտ *(139, 155)—ծանրության չափ, հավասար 0,1839 գրամի (Օգ. բժ. 556)։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 106 (Աճառ. Գ, 1420)։

Կուտկակ ըղտի *(160)—տե՛ս ըղտի կուտկակ։*

☐ Կչիկ *(73)—տե՛ս* ֆըչիֆ:

☐ Կրճնմտիլ *(58բ)—կնճռոտվել. «Մսանացն միսն* կրճնմտած»:

Պահպանված է Ակնա բարբառում (Աճառ. Գ, 1258)։

☐ Կտրածու *կամ* կտրածոյ աղ *(113, 114)—կտոր աղ։*

☐ Կտրուֆ *(159)—կտրված տեղ (Ն. Բյուզանդացի, Գ տետր, 1072)։*

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 33 և 52։

Կօճ *(=կաւճ) (50)—կոճ, կոճիկ։*

\+ Կօշկօշ *(=կաւշկաւշ) (92)—երկար ու կախ ականջներ. «Եւ յերկայն ականջվին և ի կախ՝ որպէս կովու... կոչեն իր* կաւշկաւշ»:

— պարսկ. گوش (gūsh) *«ականջ» բառի կրկնությունն է, հավանաբար* լօշլօշ *«լայն, լայն (ականջ)» նմանությամբ։*

Կօստ *(=կաւստ) (137), արաբ.—կոստ, քուշտ, կապարասի։*

Հ

\+ Հալած *(45, 67, 68, 70)—քշելը, վարելը, վազեցնելը (ձիու). «Ի* հալածն *հեշտ» (45), «Եւր քանց աւր յեվեյցնէ* զհալածն» *(67), «Եւ թէ թոյլութիւն ընկնի ի գրաստն վասն* հալծնացն, *դու հանգոյ զինք» (68)։*

Աճառյանը (Դ, 23) նշում է, որ այս արմատի առանձին գործածությանը ծանոթ չէ։

+ Հալաճ (56)—բամբակ. «Եւ թէ լինի սեւ աւելի, քանձ սպիտակն, նա ասէ իր յարապն պաւզ հալաճոյն»:

— պարսկ.—արաբ. هلاج (halādj) — նույն նշ.։

Այս բառը շպիտի շփոթել արաբ. حلاج (ḥallādj) «գզրարի» հետ։

O Հալծել (68—70)—վարել, քշել, վազեցնել, հալածել (ձիու). հմմտ. հալած, «Պատրաստ կալ զինք հալծելոյ» (68), «Աղէկ ծառայէ ու հալծելովն ավզցնէ» (68)։

Աճառյանը (Դ, 23) ունի «չարչարել, չարաչար գործածելով նեղացնել» (Սմբ. Դատ. 3)։

□ Հալծեցնել (67—70)—վազեցնել, հալածացնել (ձիու). հմմտ. հալած. «Եւ այսպէս ծառայէ ու հալծեցոյ» (68), «Եւ գիտացաք, որ զձիոյն յեշաւն չկտրէ, քանձ հանգիստ պահելն ու չհալծեցնելն» (68)։

Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Գ տետր, 1128) մեկնում է «սաստիկ աշխատացնել»։

□ Հահրնդիլ (134)—հանդարտվել, մեղմանալ. հմմտ. հայհանդ. «Եբ հահրնդի ցաւն»։

Աճառյանը (Դ, 36) հահանդ բառի տակ տալիս է որպես բարբառային ձևեր՝ հահանդիլ, հեհնդիլ, ահնդիլ, հարհանդիլ, հերհտալ:

□ Հահրնդցնել (88)—տե՛ս հահրնդիլ։

Համամտ (67)—վրիպակ է՞ համամայ (տե՛ս), թե՞ համատ. «Մոլաթզենի, ժանտաթզենի, Syconorum» (տե՛ս Օգ. բժ.)։

O Համանք (70, 72)—հրաման. «Եւ դու կարենաս լկամովն ի համանք կալնուս որպէս ուզես» (70), «Ջերմակն բոլոր բռնես ու ի համանք կալնուս զգրաստըն» (72)։

Աճառյանը (Դ, 423) Անսիզքից (13, 19) վերցրել է համան նույնիմաստ ձևը։ Կարստը ունի համանք (ՄՀԲ, թղթ. 156, վ. 18, էջ 49—50)։

□ Համբերկոտ (53)—համբերող. «Համբերկոտ ի վրայ սովոյ»։

□ Համբրել (66, 127)—համբարել, համրել, հաշվել.

Պահպանված է բարբառներում (Աճառ. Դ, 65)։

+ Համր (38, 106)—գրաստների հիվանդություն, որ առաջանում է շատ գարի ուտելուց։

— արաբ. حمر (ḥamar, ḥamr) — նույն նշ.։

□ Հայեցք (51,136)—հայացք։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 158)։

□ Հայրնդիլ (107)—տե՛ս հահրնդիլ:

□ Հայհանդ (32)—հահանդ, հանդարտ, խաղաղ. «Ի հայհանդ տեղի գրաստըն զորդենն»։

Աճառյանը (Դ, 36) բառիս հահանդ ձևը վերցրել է Ն. Բյուզանդացու ֆրանս. բառարանից (էջ 421բ).

□ Հայհանդել (71)—հանդարտել, խաղաղել, մեղմանալ . հմմտ. հայհանդ:

□ Հայնց (48, ...) } — հանց, այնպես, ինչպես, նման. «Հայնցեղ թուխ
□ Հայնցեղ (60) } խաղեր» (60)։

+ Հանաֆ (94), հգ. ահնաֆ (տե՛ս)— ծուռ ոտք. «Եւ հանաֆն, որ լինի ի ամբակըն ի մատ դէպ ի ներս»։

— արաբ. حنف (ḥanaf) — նույն նշ.։

□ Հանկչիլ (128)—հանգչիլ։

□ Հանչաք (105)—այնչափ. «Խմցոյ իր հին գինի ու սև մորհամ հանչաք մի... որ կարէ առնուլ գրաստն»։

Վկայված է Ներսես Շնորհալու հանելուկներում (Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Գ տետր, 1200. նաև՝ Ուրբաթագիրք և Տաղարան (1512—1513), Վենետիկ, 1975, Տաղարան, զ-3) և Անսիզքում, էջ 51 (Աճառ. Ե. 735)։

□ Հասկնած (84)—հասած, հասունկնած. «Ի յայն փառայնէ չտաս, որ հասկնած լինի»։

+ Հավնդեղ (118)—հավանի մեջ պատրաստված դե՞ղ. «Շինէ հավնդեղ ու ածնէ»։

+ Հատ (45)—սահման. «Դունչն... քանի երթայ բարկնայ ինչվի պոնկին հատն»:

— արաբ. حد (ḥadd) — նույն նշ.։

+ Հարաւի (56)—դեղնակապույտ ձի, որի պոչն ու բաշը սևավուն են. «Եւ կան [ի ձիանին] ի դեղնոյն, որ լինի ընդ դեղին ընդ կապոյտի մէջ, և տուբեթն ու բաշն ու ագին մշկի գույնով։ Եւ թագաւորքն անուն կոչեն հարաւի»:

— արաբ. هروى (haravi) — նույն նշ. (ըստ Բրիտանական գրադարանի ձեռ. Չիամատյանի՝ Or 3483, էջ 85 a)։

+ Հարուն (38, 52, 70, 77, 78)—կամակոր (ձի). «Գիտացիք, որ կայ գրաստ, որ ի հեծնուլն և ի քաշկելն սոսկայ, անգէտ հեծնաւղն հայնց գիտէնայ, թէ այն հարուն է» (77)։

— արաբ. حرون (ḥarūn) — նույն նշ.։

Կարստը (ՄՀԲ, թղթ. 156, վավ. 18, էջ 186) բառս ստուգաբանում է հար-ուն «հարվածող», ինչպես գրդուն, որ ճիշտ չէ։

+ Հարունթիւն (78)—կամակորություն. հմմտ. հարուն. «Եւ շատ ենք այս կերպովս գրաստնի զորդել և հանել ի հարունթենէ»:

+ Հարտ (101)—թիկնոսկրի ցավ. «Հարտքն, որ նքթէպցաւն է, յորժամ ցաւ դիպի զնքթէպն ի տեռէ (իմա՝ մտրակից) և ի զարկուց»։

— արաբ. حرد (ḥarad)—«գրաստների ոտքերի մկանների կարճացումն է, որ առաջանում է ծնկակապից» (Նաֆիսի, Շտեյնգաս)։

Հաւիճ (133), արաբ.—անուշահոտ համեմունք։

O Հաւկոյր (41, 92, 152)—աչքի տկարություն. «Երբ արեգակն մայրի, նա լոյս չտեսնի»։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։ Ունի նաև Անգ. անպէտը (էջ 189)։ Աճառյանը (Դ, 209) դնում է նոր բառերի թվում։

Հաւն (77...)—տե՛ս հօն։

□ Հեծելվոր (70, 71)—հեծյալ, հեծնող։

□ Հեծելվորութիւն (79)—ձի հեծնելը, «Նա չէ զորդ հեծելվորութիւն»:

14—1034

□ Հեծման (70, 72)—հեծյալ. «Թեթև հեծմանն լաւ է, քանձ ծանդր հեծմանն» (70), «Բուն ու մեծ վնասն այն է, որ յորժամ ղորդես, նա ի հեծման կանկնիս ու ընդ մարդ զրուցես» (72)։

□ Հեռենալ (51)—հեռանալ։

□ Հեռվութիւն (92)—հեռու լինելը, հեռավորություն։

□ Հերքոյն (41, 151)—հերքուն, որքին, որքյուն, էկզեմա։

Հինդիպէ (147), արաբ.—հնդիպե, եղերդ բույսը, եղերդակ։

+ Հլելին (39, 119)—այտուցային հիվանդություն, որ լինում է գրաստների ականջում։ Այսպես է անվանվում, որովհետև նման է հլելին բույսին (տե՛ս). «Յաղագս ցաւուն, որ կոչի հլելին, որ լինի յականջն ի գրաստուն... իր ելունդն նմանէ ի հլելինն» (119)։

Որպես հիվանդության անվանում առաջին գրավոր վկայությունն է հայերենում։

O Հլելին դեղին (115, 119)—դեղին հալիլա (Terminalia citrina). «Առ դեղին հլելին հանած ի կուէն»։

— արաբ. هليلج اصفر (halīladj aṣṣfar) — նույն նշ. (Բեդևյան, § 3369).

Օգ. բժ. (556) ունի հալալին ձևով, որ Մալխասյանցը (անդ) մեկնում է «հալիլա... չոր պտուղ սալորի կամ գղձորի մեծության, որ քաղում են Terminalia ծառից»։

O Հլելին սև (125)—սև հալիլա. տե՛ս հլելին դեղին։

+ Հմլայն (80)—հանդարտ կամ դանդաղ քայլվածք ունեցող ձի կամ այլ գրաստ. «Կան ի գրաստնին, որ լինի քայլան. և ասէ իր յարապն հմլայն»:

— արաբ. هملاج (himlādj) —նույն նշ.։

+ Հնդամ (54, 68, 69, 80)—մարմնի ձև, տեսք, կերպարանք. «Ու ելնէ ի հնդամէ» (54), «Որ առել լինի զավղութեան հնդամն» (68)։

— արաբ. هندام (handām) —«մարմին, մարմնի ձև»։

Սա պարսկ. اندام (andām) (=հյ. անդամ) բառի արաբականացված ձևն է (տե՛ս Կամուս, Թուրք. Թարգմ., հ. Գ, 579)։

□ Հնդկցի աղ (125)—կարմրժեռ աղ, որ բերվում էր Հնդկաստանից (Մալխաս. Օգ. բժ. բառարան, 558)։

□ Հննդաճf (121), եզ. հունդ—ընդեղեն. «Տուր զսեսեռն և զամէն հննդաճf»:

□ Հոռոմ ձէթ (103)—ձիթապտղի ձեթ (Մալխաս. Օգ. բժ. բառարան, 558)։

+ Հովամուտ (85, 87)—քամու, հովի համար մուտք ունեցող վայր. «Եւ զայն տեղն, որ յառվոյտն դնես, նա տես, որ արտքաց տեղ լինի ու հովամուտ»:

O Հովութիւն (39, 146)—ցրտառություն, գայլցավ (տե՛ս). «Վասն գայլցաւի, որ է հովութիւն» (39)։

Այս հիվանդությունը, ըստ բնագրի, «լինի ի հովէ և ի frտնենլոյ» (էջ 120)։

Հնում բառս օգտագործված է «զովություն» իմաստով (ՆՀԲ, հ. Բ, 123), սակայն որպես հիվանդություն բառարաններում չի գրանցված։ Աճառյանը (Դ, 376) ունի հով–ծով «հողացավ»։

Գրիգորիսը գրում է (էջ 13). «հովութիւն ստամոքացն պաղեցնէ զինքն»։

□ Հոտվել (150)—հոտ արձակել. «Հոտվայ ի Թրիքն»։

+ Հուայ (55)—սև կամ սևորակ. «Եւ կան ի ձիաննին, որ յարապն ասէ իր հուայ, և լինի ի բաց սև գոյն»։

— արաբ. حواء (ḥawā') — նույն նշ.։

Բրիտանական գրադարանի Or. 3483 ձեռ. պարսկ. Ձիամատյանը (էջ 20b) մեկնում է որպես «կանաչախառն սև»։

□ Հուք (118)—հյութ։

□ Հօն (հաւն) (77, 78)—այնտեղ։

Ձ

□ Ձենել (91)—ձայնել, կանչել։

+ Ձիախոց (119)—ելունդներ ձիու մարմնի վրա. «Յաղագս վիրաց, որ ի ֆրացինն, որ կոչի ձիախոց»:

Հիվանդության նկարագրության մեջ ասված է՝ «Ելնէ ելընդնի ի գրաստուն երեսն ու ի բազկունքն և ապա հաւսրի և յամէն մարմինն» (119)։

□ Ձղի (58բ)—ծղի, բազկոսկր։

□ Ձոյք (115, 126)—ձյութ։

□ Ձոյն (92)—ձյուն։

O Ձուկն (47)—ոլոքին կպած երկայն մկանը՝ ձկան ձևով (Մալխաս.)։ «Եւ լինի անդմացն ձկունքն ներքսի դեհն և դրսի դեհն հաստ և լայն, և միսն շատ ի վրայ, զի ձիոյն ամէն ուժն և յիշաւն ի վրայ այս ձկանցս է»։

ՆՀԲ և Աճառ. այս իմաստով չունեն բառս։ Հնագույն գրավոր վկայությունն է։

+ Ձվատակ (47, 151)—ձվարանի ներfևի մասը. «Խարէ զձվատակfն» (151)։

«Եւ պորտոյն և ձվտկո[ւ]ցն ցոփութիւնն գոված է» (47), «Լինի որովայնն ի ձվտկուցն ի հեռու» (47)։

Ղ

□ Ղորդ (45, 58բ, 75)—ուղղորդ, ուղիղ, կանգուն, շիտակ, ճշմարիտ։

□ Ղորդել (38, 69, 70)—ուղղել, շտկել, վարժեցնել։

□ Ղուղ (85, 112)—ուղեղ. «Յեւեցնես ի յղուղն և զաւղվածքն աղեկցնես»։

□ Ղունգ, ղունկ (90)—եղունգ։

□ Ղունգ fաշու (155)—տե՛ս fաշու ղունգ:

Ճ

O Ճաղ (46, 99)—բազկոսկր և սրունքի երկու ոսկորները՝ ոլոք և նրբոլոք. «Ջղերն փռած ի վրա բազկացն յերևան և ճաղերն ի թաղման» (46), «Եւ կայ [յազար ցաւն], որ խլի բազկին ճաղն» (99)։

Աճառյանը (Դ, 574) փոխառյալ է համարում վրացերեն ჭალი (ճալի) «ցանցից, սայլի կողքի ճաղերը» բառից, նշելով, որ ուտիերենը ունի ճալ «ցանկապատ, շրջափակ, վանդակապատ», նույն իմաստով՝ նաև թուրքերենը։ Պարսկ. ունի جل (djal) «կոթ, դաստակ (մուրճի, դանակի ևն)», որ «ճաղ»

իմաստը ունի: Պետք է ենթադրել, որ այս բոլորը մի հիմքից են առաջացել: Հայերեն հնագույն վկայությունն Աճառյանը բերում է ԺԵ դարից (Թլկուրանցի, 49), բայց միաժամանակ նշում է, որ «անշուշտ, շատ ավելի հին է, ինչպես ցույց է տալիս ղ ձայնը՝ փխ. լ» (Դ, 574—575): Մեր աղբյուրը հաստատում է Աճառյանի ենթադրությունը, որ և բառիս ավելի հին վկայությունն է:

□ ճամբան, ճամփայ (53)—ճանապարհ:

\+ ճանել (94)—անստույգ նշանակությամբ բառ. «Այն [ձին], որ ճանէ զագին... յարապն յայպել է»:

\+ ճաննալ (125, 162)—անստույգ նշանակությամբ բառ. «Ուզենայ, որ ճաննայ ու չկարէ » (90), «Ծեծէ զյիշոցքն և խառնէ ի խայծղանն ու դիր ի վրայ [ծընկին], և պատրաստ կալ, որ ոտքն չդիպի ի մսուրն՝ վասն ճաննալոյ» (162):

□ ճանչենալ (51...)—ճանաչել:

□ ճանչվիլ (96)—ճանաչվել. «Կաղնալն մէկ ոտիցն ի գլխոյն ճանչվի»:

□ ճանչվորութիւն (91)—ճանաչողություն, իմացություն. «Եւ զոր իսկ ի հնար կայր վանց ճանչվորութեան»:

\+ ճանփ (60)—անստույգ նշանակությամբ բառ. «Ի վրայ զագթանն ի մազին փայլկտուն՝ զեղ ճանփնի, որ նման է յերկնի»:

□ ճապկտել (68)—հորանջելով ձգվել, ճապուկվել:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 212 (Աճառ. Դ, 607):

\+ ճարատ (42, 94, 162), ճերատ (99, 100)—ուռուցք ձիու կամ ուղտի ծնկներում. «Այն որ լինի... ճարատն ի ծնկղոյ» (94), «Եւ ճերատն... ինք յանելված է, որ լինի ի ծնկացն ի չղերն» (99):

— արաբ. جرذ (djaradh), պարսկ. جرد (djarad) —նույն նշ.:

Բրիտ. գրադ. or 3483 Ջիամատյանը (էջ 101 a) جرد (djurd) է կարդում: «Կաբուսնամեում» (ԺԱ դար) բառս պահպանված է جرد (djard կամ djarad) ձևով՝ արաբ. ذ (dh)-ի կետի անկումով, որի հետևանքով dh-ն d է կարդացվել, ուստի և այդ հուշարձանի ռուս. թարգմանության ծանոթագրություններում Ե. Բերտելսը նշել է՝ «բառը անհասկանալի է» (տե՛ս «Кабус-намэ», M., 1958, էջ 281, ծանոթ. 11):

ճերատ (99, 100)—տե՛ս ճարատ:

\+ ճրտյայ (53)—կաթը չորացած կենդանի. «Եւ երբ յերկու տարին մտէ 'վ ինչվի որ լնու զերկու տարին, նա յարապն իր անուն ճրտյայ կոչէ»:

— արաբ. جداء (djaddā') — նույն նշ.:

ճրփն—տե՛ս ճփնի:

□ ճիրք (45)—ճիտ, պարանոց, վիզ. համմտ. ճիտ. «Որձ ձիոյն ճիրքն, որ լինի մսալք, նա զոված է»:

ճիտք «կոշկի վիզ» իմաստով Աճառյանը (Դ, 652) տալիս է որպես նոր բառ:

O ճին (118, 126)—ձիերի սպեղանի հայկավից պատրաստած. «Թէ ուժով լինի գրաստն, դու խայծղնէ զինք ու դիր ի յինք զճինն, որ կոչի յիշոցք»:

Բառս առանց վկայության ունի Մալխասյանցը: Հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:

\+ ճինար (52, 70)—անստույգ նշ. բառ. «Ջի թէ ուննայ պեղծ գնացք և կամ լինի հարուն և կամ լինի ճինար» (52), «Ի բնութենէ լինի ճինար ու խրչան» (70):

\+ ճինարել (95)—անստույգ նշ. բառ. տե՛ս ճինար. «Եւ այն [ձին], որ չթողու թամբեն և կամ լկամեն, և ճինարէ», «ճինարէ ընդ ցաւէն»:

□ ճիտ (99)—վիզ, պարանոց:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Աճառ., Դ, 651—2):

\+ ճլել (38, 49, 88, 127)—ճոլով (չուլով) ծածկել. տե՛ս ճոլ.

— Կազմված արաբ. جل (djul) «ձիու ծածկոց» և հյ. -ել լծորդությամբ:

□ ճկմկել (49)—ստեպ ճկել, թեքել, ծռմռել. «Ջի ճկմկէ զվիզն ի դեհաց դեհ»:

—ճուկ «թեքում, ծռվել» արմատից, որից միջին հայերենը ունի ճկիլ («Նորայր Բյուզանդացի, Բառ. ֆրանս. 591ա), ճուկումուկ «ոլորապտույտ zigzag (անդ, 1292 ա) (տե՛ս Աճառ. Դ, 689):

Մեր բառը առաջացել է ճուկումուկ-ի ու-երի ամփոփումով:

O ճշմարտագէտ (117)—ճշմարտությունը գիտեցող. «Եւ աստուած է ճշմարտագէտ»:

Բառս գործածվում է ժամանակակից հայերենում (տե՛ս Է. Աղայան):

Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է:

□ ճոն (53)—ճոթ, ծայր:

O ճոն (196)—հաճար, գարի. «Առ ճոն, աղայ ու արա ալոյր».

— արաբ. جون (djawn), հզ. djwn «սևավուն կանաչ, նաև կարմիր, սպիտակ ու սև բույս. գարի»:

Աճառ. (Դ, 682) ծագումն անստույգ է համարել և, Հայբուսակից քաղելով, տալիս է «հաճար» իմաստը, «կարելի է կարծել նաև «որում, այծակն կամ մի տեսակ ցորեն» ըստ Ամիրտովլաթի (անդ):

O ճոլ (67, 69, 77), հգ. ճլեր (67, 69)—չուլ՝ ձիու ծածկոց. «Երբ [ձին] թապլի, նա սրբէ զինք ու ձգէ զճոլն ի վրայն» (67):

— արաբ. جل (djul) — նույն նշ.:

Մալխասյանցը ունի չուլ վերոհիշյալ և դրանից աճած իմաստներով որպես գավառական բառ: Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է: Մալխասյանցը այն փոխառյալ է համարում տաճկերենից: Իրականում տաճկերենն է փոխ առել արաբերենից:

O ճուլինար (157, 160), արաբ.—վայրի նռան ծառ և նռան ծաղիկ (Բեդևյան, § § 600 և 1339):

Աճառ. (Դ, 688) նշում է, որ բառս ունի միայն Հայբուսակը (§ 1904): Վերջինս որպես աղբյուր տալիս է հին բժշկ., որ է, հավանաբար, 1294 թ. ձեռ. բժշկարանը (էջ 143): Օգ. բժ. ունի կուլինար, ճուլնար ձևերը՝ նույն նշ.: 1438 թ. ձեռ. բժշկարանը տալիս է բառի ծագումը՝ «արապկերէն ճլնար ի լադինն պալարպդրում» (=balaustium) (տե՛ս Կարստ, ZFAP, էջ 127, 142):

O ճփնի (151, 159), ճրփն (41)—1. ճփնի, դափնեվարդ. 2. խաղողի վազի արմատ. «Յաղագս, որ ճփնի լինի կերել» (151), «ճփնոյ տակ» (159), «Վասն, որ ճրփն լինի կերել (41)»:

— արաբ. جفن (djafn) — խաղողի վազի արմատ. խաղողի տեսակ. բու-

բավետ ծառ (ըստ Նաֆիսու Պարսկ. բառարանի)։ 1438 թ. ձեռ. բժշկ. **եփեի**-ի դիմաց տալիս է արաբ. **տֆլէ**, լատ. **մէնևանէր**, որ ըստ Կարստի է Nerium Oleandr (տե՛ս ZFAP, 142)։

Աճառ. (Դ, 700) ծագումն անհայտ է համարում և տալիս է «երիցուկ ծաղիկ փափատիա», «դափնեվարդ» իմաստները՝ նշելով, որ ֆ ձայնը օտար ծագում է ենթադրում։

Մ

\+ **Մազբերան** (90)—ճաքի, ճեղքի բերանը, բացվածքը. «Երբ գրաստն գոտնփոխ լինի, նա դնեն ներքև լուսնին (իմա՝ պայտին) սեկ ու լուսնեն ու թողուն աւելի ի կրընկանն ի դեհն զէդ չորս մատն, որ կապեն չուանով վերև **մազբերնին**, որ առնու այն աւելի սեկն ի վրայ»։

— Բառս կազմված է իրան. *māz, պարսկ. ماز (māz) «ճաք, ճեղքվածք» և հյ. **բերան** բառերի բարդությամբ, ինչպես ունենք **վիրաբերան** «բերան վիրի կամ նոր խոցուածոյ»—Դատ. Գ, 22 (ՆՀԲ, 825)։ Բառարաններում վկայված կան բարբառային **մազկլել** և **մազկոտ** ձևերը, որոնցից առաջինը Մալխասյանցը (Հ. Գ, 233) բացատրում է «մազի բարակությամբ **ճաքել**, **մազաճաք** լինել», օրինակ բերելով՝ «կուժը **մազկլել** է այստեղից», իսկ երկրորդը Սահակ Ամատունին (ՀՀԲ, 453) մեկնում է «կանանց և անասնոց ծծի ուռչելը, քարի նման պնդանալը, և պտուկի վրա խոց գոյանալը, օր. «ծիծը **մազկոտ ա**, **տա**նից չի կարըմ դուս գալ» (ընդգծումները մերն են—Բ. Չ.)։ Բերված **օրինակ**ները լիովին պարփակում են **մազ**-ի «ճաք, ճեղքվածք» իմաստները, հետևաբար պետք է ենթադրել, որ հնում **մազ**-ը հայերենում, ինչպես պարսկերենում, ունեցել է բերված իմաստները, որից և առաջացել են վերոհիշյալ բարդությունները։

□ **Մազծայր** (55, 60)—մազի ծայրը. «Լինի **մազծայրքն** զէդ ոսկէգոյն քումայթի» (60)։

○ **Մազկեր** (42)—խոզի մազին նման կոշտ մազ. «Վասն **մազկերի**, որ յագին լինի»։

Բառս վերոհիշյալ իմաստով ունի Մալխասյանցը։ Բայց նա ունի նաև՝ «մազերի հիվանդություն, որի ժամանակ մազերի ծայրերը երկճղվում են, կոտրատվում ու թափվում»։ **Մազկեր**-ի «կոշտ մազ» իմաստը տվյալ դեպքում ճիշտ է, որովհետև բնագրի ԾԿՋ գլխում **մազկեր**-ի փոխարեն դրված է **խոզ-մազ**. «Յաղագս **խոզմազի**, որ յագին լինի»։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

\+ **Մազքալած** (56)—հղկված, փայլեցված. «Կայ խիստ դեղին՝ որպէս **մազքալած** ոսկի»։

— արաբ. صقل (şaķl) «փայլեցնել, հղկել» արմատից՝ مصقل (maşķal) «հղկիչ, փայլեցնող գործիք», որից և հյ. **մազքալել**։

Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» Ասար Սեբաստացու (ԺԸ դար) խմբագրությունը ունի **մազկալած** (ավելի ճիշտ է **մասկալած** տարընթերցումը)՝ «ինքն ընդ դրուց յիստակ և պայծառ և կոկ, զետ **մազկալած**» (էջ 182), որ բառացանկում Ստելլա Վարդանյանը, ըստ երևույթին հետևելով Մալ-

խասյանցին (**մազկլել**. տե՛ս վերը **մազբերան** բառահոդվածը), թարգմանում է «Նուրբ ճեղքվածներ ունեցող» (էջ 227)։ Ուղղելի։

□ **Մախիր** (112, 122, 146, 153)—մոխիր։

○ **Մահմէզ** (77), **մահմեզ** (75), արաբ.—խթան, կոշիկի խթան. «Եւ **զմահմեզացն** հասցնելն ի ձին» (75)։

Աճառյանը (Է, 164) բառս քաղել է Ալիշանի Սիսականից (էջ °), որից և կազմված **մահմիզել** (տե՛ս ստորև) վերցրել է Մխիթար Այրիվանեցուց (ԺԴ դար), էջ 18ա։ Մեր աղբյուրը տալիս է հայերենում այս երկու բառերի հնագույն գրավոր վկայությունը։

Մահմիզել (71)—խթանել. հմմտ. **մահմէզ**։

○ **Մաղտել** (91)—կտրել, անջատել. «Դու հան զինք զայն խուլն ու **մաղտէ** նշդրիկին ծայրովն ի վրայ լեզուին և ի վրայ ակընջվոյն»։

— արաբ. مقطع (maķta') «կտրում, բաժանում» և հյ. **ել** լծորդությամբ կազմված։

Վկայված է գիրք Վաստակոցում (էջ 209), որ բառարանում (անդ, էջ 252) մեկնվում է «շառտել, որ է նշտրակով կամ ածելիօք **ճաճամաք** անել»։

Աճառյանը (Դ, 734) Վաստակոցի **մաղտել**-ը ուղղում է **մախթել** և բխեցնում է **մախաք** «մեծ ասեղ, հերյուն» բառից՝ մեկնելով «մախաթով կամ նշտրակով **մարմինը** ծակծկել, շառտել»։

Կարստը (ՄՀԲ, թղթ. 252, վ. 21, թղ. 45) մեկնում է որպես «Մաղկատել, ծակոտել», բայց **մաղկատել** ունի «խածանել, խայթել, հարկանել օձի, կծանել, մորմոքեցուցանել» (ՆՀԲ) իմաստները, որոնք չեն համարում տվյալ նախադասության նշանակությանը։

\+ **Մայտմի** (55)—սևավուն կարմիր. «Եւ յանդմէն ի վայր դէպ ի յոտքն քանի իջնու, նա դեղնգոյն լինի. և յարապն ասէ իր **մայտմի**»։

— արաբ. مدمى (madmī) — նույն նշ.։

□ **Մայրիլ** (152)—մարել, մայր մտնել. «Երբ արեգակն **մայրի**»։

Գիրք Վաստակոցը (45) ունի **մարիլ** (Աճառ., Դ, 801)։

□ **Մանըր** (45...,), **մանտր** (57...)—մանր։

Բարբառային այս ձևերը Աճառ. (Դ. 829) բերում է ԺԳ դարից (Կիր. Գանձակեցի, Կոստ. Երզնկացի)։

○ **Մատն** (77)—բարձունք, հողակոշտ. «Ի դոյրն և ի դաշտն և ի լեռն և ի **մատներն**»։

— արաբ. متن (matn) —նույն նշ.։

Բառս չորս անգամ օգտագործված է Գիրք Վաստակոցում (էջ 17, 43, 53, 177). «Արժան է ի շող և ի ջերմային վայրսն, ուր **մատներ** և նօսր գետինք լինին և սպիտակ ի նոյեմբեր ամսոյ մուտն սկսանիլ և տնկել զայգիսն... բայց ի ծանր և գիջային գետնի ի փետրվարի նոյնպէս... պարտ է վաստակել և փորել» (էջ 43). և նույնաբնույթ մի այլ վկայության (էջ 53) հիման վրա ՆՀԲ **մատներ** վերցնում է որպես անեզական բառ և մեկնում «Անօսրահող (վայր). մատնաչափ և եթ թանձր, կամ մատն մատն հերձոտեալ»։ Աճառյանը (Դ, 875—876) նույն Վաստակոցի երկու այլ վկայությունների («Պարտ է շրջեն զկարմիր գետինն... և զչորն, որ ցամաք լինի ի հիւթոյ և բլրնով լինի և

մատներով ի ձմռան աւուրքն»—էջ 17, «Բարձրագոյն կողերն և մատներն և տափերն՝ ես առաւել լաւ են, զի օդն անդ լաւ բանի»—էջ 177) հիման վրա մատն եզակի ձևը մեկնում է «բլուր»՝ նախազգուշացնելով չշփոթել «մատներ» բառի հետ, որ եզակի ուղղական է և իբրև ածական է գործածվում»։ Աճառյանը միաժամանակ ավելացնում է. «Արմատիս հնագույն գործածությունը ցույց է տալիս մատոյց «զառ ի վեր», որ մեկ անգամ գործածված է Յես. ԺԵ, 7, «իջանեն ի Գաղգաղ, որ է հանդէպ մատուցին (Եբր. զառ ի վերին) Եղոմիմայ»։ Աճառյանը դիտել է, որ մատոյց ձևի գործածությունը ցույց է տալիս, որ պատահական նմանություն ունին արաբ. متن (matn) «բարձրավանդակ» (Կամուս, Թրք. Թարգմ. Գ, 705) բառին։

Մալխասյանցը ՆՀԲ մատներ բառին տրված մեկնությունը անստույգ է համարում (Հ. Գ, 269)։

Աճառյանի դիտած արաբ. matn ձևը, որ ավելի ճիշտ նշանակում է «բարձունք» և փոխառված է նաև պարսկերենում, բառարաններում թարգմանվում է «հողակոշտ և բարձունք»։ Այս առումները միանգամայն հստակ են դարձնում վերը բերված վկայությունների իմաստը։ Հետևաբար ի դեմս մատն և մատներ-ի մենք ունենք ոչ թե առանձին տարբեր բառեր, ինչպես կարծում է Աճառյանը, այլ՝ մատն-ի հոգնակի ձևը, որ փոխառյալ է արաբերենից։ Ինչ վերաբերում է մատոյցին, ապա ճիշտ է ՆՀԲ, որ այն թարգմանում է ոչ թե «զառ ի վեր», այլ «յառաջ մատչումն. դիմեցումն. ելք զառ ի վեր»։

\+ Մարդձայն (71, 75, 96)—աղմկոտ (տեղ). «Եւ գոված է, որ ի հայհանդ (իմա՝ խաղաղ) տեղի զգրաստն զորդեն, որ առնու բնութիւն աղէկ ու ապա ի մարդձայն [տեղի] մտցնեն» (75)։

Մարծպան (110)—մարզպան, հեղուկների կամ ընդեղենների չափ՝ վեց քոռ տարողությամբ։

O Մարտակուշ (146)—մակիրան, մյուռոնածառ, անճարակ, թորթիկ (Բեդևյան, § §2184, 2481)։

— արաբ. مردقوش (mardaḳūsh) — անմոռուկ (Myositis). պարսկ. مرزنگوش (marzangūsh)-ից (ըստ Շտեյնգասի Պարսկ.- անգլ. բառարանի)։

Աճառյանը (Դ, 912) ունի մարզանգոշ «մկան ականջ, ռեհան ինչ կանաչագույն և հույժ անուշահոտ», որի տարընթերցումներից հիշատակվում է և մարտակուշը: Վերջինս պարսկ. բառի արաբացված ձևն է՝ Myosotis բույսը, որ ըստ Ծատուրյանի (էջ 23) հայկական «անմոռուկն» է, իսկ մկնականջը՝ Anagallis-ը (էջ 22)։ Ավիցեննայի երկերի ռուս. թարգմ. II հատորում (էջ 399) կա մարզանջուշ՝ պարսկ. گ (g) > արաբ. ج (dj) անցումով, որ հրատարակիչը համարում է լատ. Origanum majorana.

Մաւրմուր (112)—տե՛ս մօրմուր:

☐ Մարտսանզ (150), մարտսանճ (118), պարսկ.—մարդասանկ, արծաթաքար։

Մգլանոտ (82)—բորբոսահոտ։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 100 (ՆՀԲ)։

☐ Մերկիկ (77)—մերկ՝ անթամբ (ձի). «Երբ մերկիկ հեծնուն»։

Սովորական «մերկ» իմաստով պահպանված է Ն. Շնորհալու առակներում (Ն. Բյուզանդացի, ԲՍՀ, Դ տետր, 604) և բարբառներում (Աճառ., Դ, 997)։

\+ Մզմուն (45, 52)—պարսավելի, ապիզոված. «Եւ որ լինի [քիթն]...փոս զէդ մզմունի» (45), «ծնանի փոքր ջորի, և կոչի իր անուն մզմուն» (52)։

— արաբ. مذموم (madhmūm) «արհամարհված, պարսավելի, ապիզոված»։

Հայերենում բառիս վերջին m-ն տարնմանությամբ հնչյունափոխվել է n-ի։

☐ Մէկայլ (51...)—մյուս։

\+ Մըֆալաս (56)—ձկան թեփուկ. «Եւ թէ լինի այս գոյնովն (իմա՝ «սև մազերն ի սպիտկին մէջն»), որ բոլոր բոլոր լինի, ասէ իր յարապն մըֆլաս (=մըֆալաս)»:

— արաբ. مفلس (mufallas) — նույն նշ.։

Բրիտ. գրադ. Or. 3483 ձեռ. Ջիամատյանը նշում է. «Մըֆալաս է կոչվում, որովհետև սպիտակը սևի հետ ֆլսի (ձկան թեփուկի) նման խառնված է իրար» (էջ 24 b)։

Մթխալ (103...), արաբ.—ծանրության չափ։

\+ Միամորել (72)—միավորել (Կարստ, ՄՀԲ, թղթ. 252, վավ. 22, թղ. 53). «Մեծէ զամէնն ու միամորէ»:

Միամորիլ (109)—միավորվել. տե՛ս միամորել. «Լեսէ և մաղէ և քշտէ, որ միամորի ընդ ձէթն և ընդ քացախն»։

Մլհամ (160), արաբ. —սպեղանի։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 201 (Աճառ. 1059)։

O Մլուխ (155), արաբ.—քարախնկենի, մուկլենի աֆրիկյան (Բեդևյան, § 1136). Համմտ. մուղլ ջուհուտ. «Առ զմլուխի տերևի ջուրն»։

Աճառ. (Դ, 1146) Հայբուսակից (§ 2124), իսկ վերջինս Ամիրդովլաթից, վերցրել է մուկլ (մուղլ, մուխլ) և ծագումն ու իմաստը ճիշտ է նշել։ Մեր օրինակում, որ հնագույն գրավոր վկայությունն է հայերենում, արաբ. مقل (muḳl) տառադարձելիս դրափոխություն է տեղի ունեցել՝ մլուխ, իսկ մուղլ ջուհուտ (տե՛ս) ճիշտ է տառադարձվել։

\+ Մկնատամ (118), հգ. մկնատմեր (39, 95, 118)—որքին, ջրջրուկ, էկզեմա։

Վկայված է Աբուսաիդի մոտ (էջ 227), ինչպես նաև Ձգ. բժ. (էջ 563)։

☐ Մկնացաւ (39)—մկանացավ, ռևմատիզմ. «Վասն մկնացաւուն անուն է»։

☐ Մկնացաւութիւն (115)—մկանացավություն, ռևմատիզմ. տե՛ս մկնացաւ։

Մկրատ (157)—խաղողի որթի ծիլ. «Առ տոլոյ մկրատկներ և ազոխ և թթու նուռն»։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 53 (Աճառ. Դ, 1068)։

Մկրիս (130)—գրչական վրիպակ. ուղղելի՝ նկրիս, նըկրիս (տե՛ս)։

\+ Մղայնեխ (80, 82)—անստույգ նշանակությամբ բառ. «Եւ կայ, որ զորգզայ ու զշնիքն գլխովն ի հետ ի դեհաց դեհ ձգէ և ասէ իր յարապն մղայնեխ»:

\+ Մշկաբաշն (59)—սևավուն բաշ. «Մշկաբաշն և տուբեթն սև». տե՛ս մշկագոյն:

\+ Մշկագոյն (160)—սևավուն, մուշկի գույնով. համմտ. մուշկ. «Ապա այլ ցած է քանձ մշկագոյնն և այլ ի հետ քարկապոյտքն, հայնցու թուխ սև, որ խսկի սպիտակ նշան չունենայ»։

— մուշկ անուշահոտ նյութը սևավուն գույն ունի և պարսկերենի մի շարք

բարդություններում «սև» իմաստով է գործածվում. օր. مشكدار (mashkdār) «հաճելի ձայնով մի սև թռչուն», مشكفام (mushkfām) «սիրունիկ սև ծամերը», مشكينپرند (mishkīnparand) «գիշեր, սև ամպ» և այլն։

+ Մորել (103)—շաղախել. «Առ հաւուկիթ հում, ծակէ և հան մէջն ու լից զԴ յաման մի, ու չափէ երկուքովն մեղր, ու մեկովն աղէկ մորէ»:

Կազմված է մոր «տիղմ, ցեխ, գայր, շաղախ, ջրախառն» (ՆՀԲ) արմատից։

Մորհամ (42, 105, 159), արաբ.—սպեղանի. տե՛ս և մլհամ:

+ Մուլաճ (101)—գրաստների հիվանդություն. ձիան ծնկների ուռուցք։

— արաբ. ملاح (mulaḥ) — նույն նշ.։

+ Մուլաճամաճ (56)—խայտաբղետ, բծավոր ձի. «Թէ խառնի ի սպիտակ մազերն կարմիր, նա կոչէ իր յարայն՝ մուլաճամաճ»:

— արաբ. ملمع (mulamma‘) — նույն նշ.։

+ Մուհաճալ (57)—սպիտակագույն ոտք (ձիու մասին). «Թէ լինի չորս ոտքն բոլոր սպիտակ, նա ասեն իր մուհաճալ չորս ոտօքն». «Երեք ոտօք մուհաճալ»:

— արաբ. محجل (muhadjdjal) — նույն նշ.։

Մուղլ ջուհուտ (109, 121, 134)—մուկլ, մուխլ. հմմտ. մլուխ:

— արաբ. مقل اليهود (muḳl al-yhūd) «հրեական մուղլ»։

O Մուշախայ (116, 134)—հին կտոր, լաթ կամ բամբակ. «Առ մուշախայ ու թաթխէ գինք ի ջուրն» (116). «Առ աղ ու հոռոմ ձէթ ու մուշախայ, ու դիր ի վրայ (խոցոյն)» (134)։

— արաբ. مشقة (mishḳa, mushḳa) — նույն նշ.։

Գիրք Վաստակոցի բառացանկում բառս մեկնված է «մոմշոր»։ Աճառ. (Դ, 1164) այն համարում է «թերևս սխալ գրչություն՝ փոխանակ լինելու մուշամպա, մուշամբա <արաբ. مشمع (mushamma‘) ինչպես ունին արդեն ձեռագրերից ոմանք»։ Թե՛ Վաստակոցի համապատասխան վկայությունից («Հունտն ի մէջն դիր և յիրեար բեր և մուշախայով փաթաթեա»—էջ 164) և թե՛ մեր աղբյուրից հստակ է, որ «մոմլաթի» մասին չէ խոսքը, այլ մի բանի, որ կարող է ջուր ծծել, որը լրիվ համընկնում է արաբ. մուշախայ բառին։

Կարստը (ՄՀԲ, թղթ. 252, վավ. 22, էջ 183) Վաստակոցի մուշախաճ, հավանաբար ելնելով Աճառյանի ստուգաբանությունից, «մոմշոր» («մուշամպա») է թարգմանում, միաժամանակ 1438 թ. ձեռագիր բժշկարանից քաղելով նույն բառը («Առ զկանփի մուշախայն»), իրավացիորեն մեկնում է. «կանեփի սանտրուք, թափթփված մանրուք» և տալիս է արաբ. հիմքը։

1. Մուշկ (56) պարսկ.—բուրավետ յուղային նյութ սև գույնով. «Բաշն ու ագին մշկի գոյնով»։

2. Մուշկ (73), պարսկ.—«Պերիտ լեռան վրա աճող մի տեսակ մշկահոտ բույս է (Աճառ. Դ, 1167, վկայված է Զեյթունի բարբառում)։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում։

+ Մուպայտաճ (57)—մեջքն ու փորը սպիտակ ձի. «Թէ լինի մէջքն ու փորն սպիտակ, ասեն իր մուպայտաճ»:

— արաբ. مبطن (mubaṭṭan) — նույն նշ.։

Մուտ (104...)—զմուռ։

Վկայված է հին բժշկարաններում և Վաստակոցում՝ էջ 100, 106, 206 (Աճառ., Բ, 962)։

+ Մուտլայ (57)—ուսկեզօծ. «Թէ լինի ի տեղոց տեղ սպիտակ և ի տեղոց տեղ այլ գոյն, նա ասեն իր մուտլայ»:

— արաբ. مطلاع (muṭlāa‘) — նույն նշ.։

+ Մուտրաֆ (57)—գլուխը, վիզն ու պոչը սպիտակ ձի. «Լինի գլուխն ու շլնիքն ու ագին սպիտակ... ասեն ի մուտրաֆ»:

— արաբ. مطرف (maṭarraf) — ըստ Բրիտ. գրադարանի Or. 3483 ձեռ. պարսկ. Զիամատյանի՝ «Երբ ձիան մարմնի վրա սպիտակը գերակշռի ու գլուխն ու վիզը սպիտակ լինի» (էջ 25a), նաև «Երբ գլուխն ու պոչը սպիտակ լինի»։ Ըստ Շտեյնգասի և Նաֆիսու՝ «Գլուխն ու պոչը սպիտակ կամ սև, իսկ մարմնի այլ մասերն ուրիշ գույնի ձի»։

Մսր (160)—Եգիպտոս. «Առ խախիայ, Մսրի մտետ՝ յամէն մէկէ մասն մի»։

— արաբ. مصر (miṣr) — նույն նշ.։

Մսրցի (152, 100)—եգիպտական, եգիպտացի, հմմտ. Մսր:

Հաղորդված է Գիրք Վաստակոցում, էջ 26, որից և քաղել է Կարստը (ՄՀԲ, թղթ. 252, վ. 22, էջ 207)։

+ Մտէտ (160)—շնախոտ (Cynachum acutum L.) (ըստ Բեդևյանի, § 1311).

«Առ խախիայ, Մսրի մտետ յամէն մէկէ մասն մի»։

— արաբ. مديد (muddayd. պարսկերենում՝ madīd) — նույն նշ.։

☐ Մտիկ (97) (նվազականն միտ բառի)—ուշադրություն. գործածվում է դնել բայի հետ (Մալխաս.). «Գլխոյն մտիկ դիր»:

Աճառյանը (7, 1052) որպես նոր բառ է դնում մտիկ անել։ (Հնագույն գրավոր վկայությունը պահպանված է Մխիթար Հերացու մոտ՝ «Այլ դու մի՛ մտիկ դնես իւր նոպային», էջ 88. խմբ.):

O Մրջմնց (101)—մաշկային հիվանդություն՝ թարախային պալարներով, կարմիր քամի. «Մրջմնցն ցաւ է, որ լինի ի սմբակքն և յայլ տեղեստան... ելնէ ի յիրմէ թարախ ու աւիրի սմբակքն»։

Գրիգորիսը արաբ. նմլէ [نملة — namla] հիվանդությունը երկու անգամ թարգմանում է մրջմնց (էջ 30 և 86)։ Հ. Դ. Փափազյանը Գրիգորիսի օտար տերմինների բառարանում (էջ 226) ճիշտ է որոշել արաբերեն բառի իմաստը՝ «արաբ. բառացի մրջյուն՝ نمل [naml]—մանր ցան, որ տարածվում է մարմնի վրա՝ մրջյունի պես, հավանաբար եղջատենդ, urticaria»։

Աճառ. (Դ, 1291) մրջմնց ձևով վերցրել է Երեմիա Մեղրեցու բառարանից (էջ 217), որտեղ մեկնված է՝ «խաղաւարտ բղբշտացեալ» («Բառգիրք հայոց» 1975 թ. հրատ. մեջ՝ բշտբշտացեալ)՝ «մի տեսակ մաշկային հիվանդություն, որ այժմ էլ ծանոթ է գվռ. մրջմուկ, մրջնբոյն, մրջիմնց, մրջիւննց, մրջիւննցք ձևերով, մորթը թեփոտվում է, միշտ բորբոքվում և սաստիկ քոր գալիս»։

Մրփալաս (56)—գրչական վրիպակ է՝ տե՛ս մրփալաս:

\+ **Մքուք** *(66, 82)—ընդեղենի և հեղուկների չափ՝ հաւասար կես մանի (մեկ մանը տարբեր երկրներում տատանվում է 3—12* կգ *միջև). «Տաս* **մքուք** *մի ընտրած գարի»։*

— *արաբ.* مكوك (makkuk) — *նույն նշ.։*

\+ **Մօրմուր** *(մաւրմուր) (112)—արենածաղիկ* (Lythrum Salicaria L.)։

— *թուրք.* مرمور (mirmūr) — *նույն նշ. (ըստ* J. Redhouse-*ի թուրք.-անգլ. բառ.)։ Այս բույսը, նույն աղբյուրի համաձայն, թուրքերեն անվանվում է նաև* مردار آغاجى (murdār āķādjī), *անգլ.* The common purple loosestrife, *որ ըստ Բեդևյանի (§ 2175) հյ.* **արենածաղիկն** *է։*

Յ

\+ **Յազար** *(38, 99, 101)—անասունների ինչ-որ հիվանդություն, «որ է տաքութիւն, որ կենայ ի չորս ոտքն»։*

\+ **Յազր** *(191)—անստույգ նշանակությամբ բառ. «Եւ* **յազրն** *սովորութիւն է, որ գրաստն հանապազ ի մէկ դէհի վրա դնէ»։*

\+ **Յախալ** *(100)—գրաստների ոտքերի խեղում. «Եւ ցաւն, որ կոչի* **յախալ**, *որ լինի յետի ոտքն ջեղն, որ կայ յանդամանցն ի վեր ի խաղն»։*

— *արաբ.* عقل (‘aķal) — *նույն նշ.։*

\+ **Յաճ** *(106)—փղի ժանիք, փղոսկր. «Առ ...* **յաճի** *խարտուք՝ թուղթ մի»։*

— *արաբ.* عاج (‘ādj) — *նույն նշ.։ Մուհամեդ Աբդուլլահի «Դեղաբայքի բառարանում» (էջ 50) նշված է որպես դեղանուն։*

\+ **Յամմիր** *(87)—ամեն տեսակի ռեհան. «Եւ այն ալիկին, որ ասեն իր* **յամմիր**»:

— *արաբ.* عمّار (‘ammār) — *նույն նշ. (ըստ Մոհամեդ Աբդուլլահի «Դեղաբայքի բառարանի», էջ 196)։*

O **Յայպ** *(38...),* **այպ** *(38...), արաբ.—թերություն, արատ։*

Գիրք Վաստակոցը (97, 103) ունի **այպ** *(Աճառ. Ա, 258)։ Մեր օրինակում արաբ. բառի կոկորդային* ع (‘) *հնչումը, ինչպես այս հուշարձանի արաբերենից փոխառյալ մի շարք բառերում, տառադարձված է* **յա**:

\+ **Յայպել** *(194)—արատավորել. «Նա խիստ* **յայպած** *է»։*

— *արաբ.* عيب (‘yb) *(տե՛ս* **յայպ**) *և հյ.* *-ել լծորդությամբ կազմված։*

\+ **Յասամ** *(102)—հոդերի կարծրացում, որից ոտքերն ու ձեռքերը ծռվում են. «***Յասամն** *ցաւ է, որ քաշվի ձեռացն ջեղն ու շրջի սմբակին»։*

— *արաբ.* عسم (‘asam) — *նույն նշ.։*

\+ **Յատասի** *(59)—ոսպե, ոսպնյա, ոսպնախայտ. «Կոչեն իր սամանդ* **յատասի**, *որ թարգմանի իր սպնախայտ (իմա՝ ոսպնախայտ)»։*

—*արաբ.* عدسى (‘adasī) — *նույն նշ.։*

O **Յատպէ** *(119), արաբ.—մոշենի, մոշենու փայտը։*

Աճառ. (Դ, 1257) Ամիրտովլաթի վկայության հիման վրա Հայբուսակից քաղելով, բառս մեկնում է «մոշայի պտուղ»։ Հայբուսակը, հիրավի, բառիս ծագումը դնում է արաբ.-ից عدبة (‘adba), *Աճառ. նույնպես, բայց* Seidel-*ին*

□ Յերկարացնել (97) — երկարացնել։
□ Յերկրել (87) — երկարել։
□ Յերջի (46, 79, 83) — առջևի. «Յերջի դեհին վերայ»։
□ Յենլնալ (86...) — ավելանալ։
□ Յիմացութիւն (79) — իմացություն։
+ Յիմել (88) — ծարավել. «...որ չտա զաղն, և թէ խիստ յիմէ, նա ի շաբաթն աւր մի տուր...»։

— արաբ. عيم ('aym) «ծարավ» և հյ. ել լծորդությամբ կազմված։
□ Յիմնալ (54) — իմանալ, գիտակ լինել։
□ Յիշաւ (37, 47) — տե՛ս յեշավ։
+ Յիշոց (118, 126, 149) — անստույգ սպեղանի, որ գործածվում է ոտքերի հիվանդության ժամանակ. «Դիր ի յինք զճիճն (իմա՝ սպեղանի), որ կոչի յիշոցf» (118). «Առ յիշոցfն ու խայծղանն, խառնէ ընդ իրար և ածնէ ղանդամացն ղատդվածքն» (126), «Ծեծէ զյիշոցfն և խառնէ ի խայծղանն» (149)։

Բրիտ. գրադարանի Or 3483 ձեռ. Չիամատյանը (էջ 101a) ճարատ (ուռույց ձիու ծնկներում) հիվանդության համար առաջարկում է օգտագործել կուպր և դեղին մոմ։ Արդյո՞ք յիշոցf «կուպր» է նշանակում, թե նման մի բան։
□ Յիշվել (53) — տե՛ս յեշվել։
□ Յիշվեցնել (69) — արշավեցնել, հմմտ. յեշվել։
□ Յիրիկուն (87) — իրիկուն։
□ Յուշկիկ (97) — հուշիկ, ուշադիր, հանդարտ։
+ Յոիպ (137) — 1. ուռած վերք 2. ստամոքսի խանգարում. «Զգէ զինք ի խունան կամ ի յոիպն»։

— արաբ. عرب ('arib) — նույն նշ.։

Ն

+ Նազար (103) — արագաշարժ, սրամիտ (ձի). «Երբ զարկնես ձեռաւքդ ի վերայ քովացն, նա զէդ նազար ձայն տայ»։

— արաբ. نظّار (naẓẓār) — նույն նշ.։
Նանխաւ(օ)ն (155), պարս. — հացադեղ, փուշխախոտ։

Հաղորդված է նանխու, նոնախուա, նանախաւա, նանխաւայ ձևերով (Աճառ, Ե, 41)։ Մեր տարբերակը պարսկերենի՝ نانخواه (nānkhāh) ճշգրիտ տառադարձումն է՝ ā-ի o հնչումով։
O Նաշ (114) — բարակ, մանր (ալյուր). «Լեսէ և մաղէ ի նաշէ մաղ»։

Աճառյանը (Ե, 43) ունի նաշին «ընտիր բարակ ալյուր»։
+ Նասայ (49), հգ. անսայ (տե՛ս) — նստատեղային ջիղ, որ ձգվում է ազդրից մինչև գարշապար. «Եւ այն երակն, որ կայ յանդմացն ներքսևէ, որ կոչի իր նասայ, նա լինի կարճ ու պինդ»։

— արաբ. نسا (nasā) — նույն նշ.։
Նասուր (42, 157), արաբ. — կոշտուկ մարմնի վրա, խուղակ (Hemorrhoidei Fistule)։

+ Նատիֆ (132) — օճառախոտ, օշնան։

— արաբ. نظيف (naẓīf) — նույն նշ.՝ արաբ. ظ (ẓ) > տ տառադարձությամբ։
Նատրուն (106), արաբ. — բորակ, հայրբորակ։

Հաղորդված է Գիրք վաստակոցում նադրուն և նատրուն (Աճառ. Ե. 8)։
Նաւդ (126), նաւթ (142) — նավթ։
Նաւսրասմբակ (89) — տե՛ս նօսրասմբակ։
+ Նեղնրել (47) — սեղմել, ճնշել. «նեղնրէ զսիրտն ու դադրի»։
□ Ներfի (45, 46...) — ներքևի. «Քթափողքն լայն լինի և ներfի դեհն լայն և վերի դեհն բարակ»։

Այս ձևը պահպանված է Համշենի և Թիֆլիսի բարբառներում (Աճառ. Ե, 98)։ Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է։
□ Ներfուն (49...) - ներս։

Աճառ. (Ե, 99) նոր բառ է համարում։ Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է։
+ Նեfթաֆ (101) — «Թարգմանի բէճցու»՝ թիկնոսկրի ցավ. հմմտ. նfթեպ։

— արաբ. كتف (kataf) «գրաստների կաղությունը թիկնոսկրի ցավից». տե՛ս նfթեպ։
□ Նըգալ (110) — նքալ, նքոց ունենալ. «Նըգայ ի թրքելն»։

Գրիգորիսը գրում է. «Կարէ լինել, թէ նիգն ի չոր արտաքսէ լինի, որ լցեալ է ի յաղիքն և փակեալ, և նգայ և ոչ լինի լոյծ» (էջ 140)։

Մալխասյանցը ունի նfալ, ինչպես նաև նըf «հառաչ, հեծյուն», իսկ Սահակ Ամատունին (էջ 503)՝ նիգ տալ «կենդանիների ծնած ժամանակ ույժ տալը»։ Աճառյանը (Ե, 119) նիf տալ մի քանի բարբառներում մեկնում է՝ սեղմվել ուժ տալու համար.

Նըկըրիս (49)
Նըկրիս (139) — արաբ. — ոտների հոդացավ։

Գրիգորիսի բառարանում մեկնված է հոդատապ, padagra (էջ 226). Մալխաս. ունի նիfրիս «ոտքի ցավ, հոդացավ ոտների»։
+ Նոռսֆունկառ (143) — անստույգ նշ. բառ. «Առ նոռսֆունկառ, թաթղէ զինք ի ձոյթն և այրէ»։
+ Նուֆախ (100) — ուռույցք, փքվածք. «Եւ կայ ցաւ, որ ասեն իր նուֆախ, որ թարգմանի փուքք, որ ուռեցվոր լինի ի ծնկացն»։

— արաբ. نفخ (nafkh) — նույն նշ.։
Նրնէս (160), արաբ. — նարգիս ծաղիկը։

Հաղորդված է այլևայլ տառադարձությամբ, նաև՝ նռնէս (Աճառ. Ե, 56)։
+ Նfթեպ, նթfէպ (46, 47, 50, 58, 59, 93, 101), նfդէպ (58բ) — թիակ, ուս, թիկնոսկր. «Եւ բարձրութիւնը նfթէպին աղէկ է» (46), «Վերի դեհն նfթեպին պինդ լինի» (46)։

— արաբ. كتف (katf, kitf, katef) — նույն նշ.։

Արաբ. f > հյ. փ > պ տառադարձության մի քանի օրինակներ կան, ինչպես kufl > կողպ(ել), sadaf > սատապ։ Տարակուսանք է առաջացնում բառասկզբի

հավելյալ Ն-ն։ Թվում է, որ պետք է բառս թարգմանչի օրինակում ճիշտ եղած լինի, սակայն գրքի ընդօրինակման ժամանակ հավանաբար խմբագրող Թորոս քահանան (տե՛ս հիշատակարանը), ծանոթ չլինելով արաբերեն բառին, առաջին իսկ նախադասության մեջ, որտեղ գործածվել է բառը (տե՛ս վերը), նախորդ բառի Ն որոշիչ հոդը (բարձրութիւնքն) միացրել է ֆքէպ-ին, որից և ստացվել է Նֆքէպ: Արդ, մի անգամ թույլ տրված սխալը շարունակվել է ողջ գըրքում։ Որ իրավի Նֆքէպ նշանակում է «թիկնոսկր», ցույց է տալիս Նեֆքաֆ (տե՛ս) հիվանդությունը, որ էջ 62-ում թարգմանված է քէնցաւ «թիկնոսկրի, ուսոսկրի ցավ»։ Տե՛ս նաև Նֆքէպցաւ:

+ Նֆքէպցաւ (101)—թիկնոսկրի հիվանդություն. հմմտ. Նֆքէպ. «Նֆքէպցաւն է. յորժամ ցաւ դիպի զՆֆքէպն ի տեղէ (իմա՝ մտրակից) և ի զարկուց, նա աւրի ոսկորն ու ելնէ յիրմէ կտոր մի ոսկոր»։

+ Նօւրամքակ (Նաւրամքակ) (89)—նուրբ ամքակ. «Եւ գրաստ, որ Նաւրամքակ է, դու խուլ լուսնով լուսնէ զինք»։

Շ

Շահմիհանդալ (118, 145), արաբ.—շահմիանդալ, վայրի ձմերուկ, հանդալ։

Հաղորդված է Գիրք Վաստակոցում, էջ 81 (Աճառ. Ե, 236)։

+ Շահրի, շահրիկ (52)—ազնվացեղ սևորակ գրաստ. «Եւ թէ վազցնէ վլախ ի վրայ ի յարապ մատկի, նա այն քուռակն, որ ի յիրմէ ելնէ, նա կոչեն շահրի, և լինի դիմակաց և սուր» (52). «Եւ շահրիկքն ու յարապ ձիան լինի անդիմակաց ի շող աշխարք» (52)։

— արաբ. شهريه (shahriyya) — նույն նշ.։

Շահրիկ «հին պարսկական կրոնը հավատարմությամբ պահող ցեղ» իմաստով օգտագործել է Թովմա Արծրունին (Աճառ. Ե, 241), որ պհլ. shahrīk նոր պարսկ. shahrī «քաղաքացի» բառն է. ունի և «ազնվական» իմաստը, որանից էլ արաբականացած shahriyya ձևը՝ վերոհիշյալ իմաստով։

☐ Շաղղել (109, 142), շաղել (106)—շաղախել։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 157 (Աճառ. Ե, 246)։

☐ Շաղղծոյ (115)—շողացող, պսպղուն. «Առ... ամբրաւ շաղղծոյ՝ դրամ երեք»։

Մալխասյանցը ունի շաղաղ «շողացող, փայլուն», որպես գավառ. բառ։

Շամք (84)—Շամ, Սիրիա։

Շայէորէն (111)—շահթառեն (՞)։

Աճառյանը (Ե, 235) ունի պարսկ.-ից փոխառյալ շահքառակ, որ հաղորդված է շաքառէն, շէտառէն, շէտարան, սաքառին ձևերով։ 1438 թ. բժշկ. տալիս է սրա արաբականացված ձևը՝ շահքռէն (Կարստ, ZFAP, 129)։

+ Շանքեալ (115)—բոցավառվել, կրակվել (աչքերի մասին). «Շանքեալ աչվին»։

Շառտել (105, 139)—նշտարով կամ ածելիով մարմինը ճեղքոտել։

Վկայված է Մխ. Հերացու մոտ շառոտել, իսկ Գիրք Վաստակոցում՝ շառտել (Աճառ. Ե, 282)։

+ Շառտուկ (117), շառտուք (139)—նշտարով մարմնի վրա կատարված ճեղքվածքներ. «Շփէ զինք խնչվի հաստնայ ու թանձրնայ շառտուկքն» (117). «Առ հացի մէջ և լից ի շառտուքն» (139)։

— Կազմված է արաբ. شرط (shart) «վիրաբույժի դանակ, նշտար» և հյ. ուկ բազմաբառային վերջամասնիկով։

Շաքապ (105, 133). արաբ.—ամիչք, ընպելիք։

Շաֆ (146),—լուծիչ պատրույգ՝ բժշկական.

Վկայված է Մխիթար Հերացու մոտ, էջ 67 (Աճառ., Ե, 316)։

Շաֆքաւրան (158)—մոլեխինդ։

Աճառյանը (Ե, 311) ունի շաւքարան, Օգ. բժ.՝ շաֆքարան: Երեք ձևերն էլ արաբ. شوكران (shavkarān) բառի տարբեր ընթերցումներն են։

Շիտ (148)—«մաշկի վրա գոյացած կորեկաչափ կամ ոսպի չափ կարծր հանգույց, որ առաջանում է մաշկի գրգռումից կամ որոշ հիվանդություններից (պապուլա)» (էդ. Աղայան). «Շտեր ելնէ ի բերանն ու չգայ հոտ»։

Հոգնակին՝ շտեր ձևով վկայված է Մխ. Հերացու մոտ, էջ 66 (Աճառ. Ե, 361), իսկ եզակին՝ Գրիգորիսի մոտ (էջ 82, 145)։

☐ Շլնի (38)—պարանոց, վիզ։

☐ Շլնէտակ (92)—շլինքի, վզի տակի մասը։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Աճառ., Ե, 371)։

O Շնորհոր (102)—գովելի, շնորհալի. «Գրաստ, որ պարտ է պահել և կապել, նա մէկն ուղտն է և ի շնորհոր»:

Բառարաններում հաղորդված է տարբեր ձևերով՝ շնոֆոր, շնաֆօր և այլն (տե՛ս Աճառ., Ե, 385—388)։

☐ Շնոֆոր (58, 59, 69)—գովելի, շնորհալի, հմմտ. շնորհոր:

Շնչատել (68), շնչատտել (67, 68)—շունչը կտրվել (Մալխասյանց). «Թէ աւելի շնչատէ ու թուլնայ պնչերն» (68), «Աւելի շնչատտէ զի ի հետ ամէն շնչալոյ քրտինք պիտի գայ» (67)։

Վկայված է Գիրք Վաստակոցում (էջ 212)։ Ն. Բյուզանդացին (ԲՍՀ, Դ տետր, 1350) բացատրում է՝ «շոյտ շոյտ և ընդհատ շունչ առնուլ և տալ»։

☐ Շողուքին (51)—ջերմ, տաքություն, գրգռվածություն. «Անցնի իր շողութիւնն»։

Համշենի բարբառում՝ շողուղին (Պողոսյան, 324)։

☐ Շողոել (87)—շողել, տաքացնել. «Մի դնել տաւլրակ, որ չշողոէ գրաստն»։։

☐ Շողոտել (41)—շողել, ջերմել. հմմտ. շողոել. «Վասն որ շողոտէ և խաշվի»։

☐ Շոյտ (106, 142)—շուտ։

Շուղաղ (40)—տե՛ս շուկակ:

+ Շուկակ (100, 117, 140, 162), շուկաղ (40)—հյուսվածքի ճեղքվածքներ, ճաք գրաստների սմբակներում և մարդու կրունկներում (Gerçure), «Շուկակն լինի ի տաքութենէ և ի չորութենէ» (100)։

— արաբ. شقاق (shiķaķ) — նույն նշ.։

Անգ. անպէտ (էջ 107) ունի կրնկի շուկակ: Գրիգորիսի բառարանում (էջ 226) Հ. Դ. Փափազյանը ճիշտ է տվել ծագումն ու իմաստը։

☐ Շուղնալ (111)—նաև՝ շողնալ (51)—շողանալ, ջերմանալ, տաքանալ. «Շուղնա շունչն»։

15—1034

Շուշկակ (151)—հավանաբար գրչական վրիպակ է՝ շուկակ (տե՛ս)։

+ Շուռնախ (117)—Թարախակալ վերք, պատռվածք գրաստի սմբակներում. հմմտ. ճացպար. «Յաղագս շուռնախի, որ է քացպարն»։

— արաբ. شرنقة (sharnaḳat) «կտրեց և պատռեց»։

□ Շուրջանիկէ (116)—շուրջանակի. «Կապէ ներքև ականջթռացն խէչ փողացն ու պատռէ շուրջանիկէ»։

□ Շուրջել (83)—շրջել. «Դու շուրջած մի՛ կանգնեցներ»։

□ Շուֆ (84)—շոգ։

□ Շռտել (159)—շառտել՝ նշտարով մարմինը ճեղքել, արյուն առնելու համար։

□ Շրիկ (109)—շիրիկ, սուսամի յուղ։

O Շֆել (51)—շեքել, լայն բանալ. «Շֆելով նա չկարեն ճանչենալ, թէ պահցել, թէ չէ».

ՆՀԲ Բ հատորի հավելվածական բաժնում՝ առանց վկայության, ունի շէգ, շէֆ որպես «ագռմէջ» (երկու սրունքների միջև եղած միջոցը) և բերում է արաբ. շէգր «առականք»։ Աճառյանը (Ե, 334) Երեմիայի բառարանից (էջ 245) բերում է շեֆ «քայլ կամ միջոց երկուց ոտից» և դնում է ծագումը ասորերեն šaqa «բարձրոսկր» ն. ասոր. šäqä «սրունք» (եբր. šoq, արամ. šaq, արաբ. ساق (sāq) «սրունք»)։ Սեմական այս ձևերը իմաստով մոտ են հյ. շեք-ին, բայց ավելի ճիշտ է ՆՀԲ-ը, որ ծագումը դնում է արաբերենից՝ չնայած որոշակի արաբ. բառը չի նշում։ Արաբ. ունի شق (shaḳḳ) «ճեղք, հեշտոցի երկու կողմերում գտնվող միջոցները» (փոխառված է և պարսկերենում—Նաֆիսի), որից և հայերեն շէգ, շեֆ։ Այս նույն բառը՝ շաֆ «պատուհան» ունի Քաջունին, որի ծագումը Աճառյանը դնում է վերոհիշյալ արաբ. shaḳḳ ձևից (Դ, 312), սակայն չի նույնացնում շեֆ-ի հետ։ Աճառ. (Դ, 334) շեֆել համարում է շեֆ-ից առաջացած նոր բառ։ Սրանից են ծագում նաև շֆելել ու շֆելի (տե՛ս ստորև)։

Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

□ Շֆելել (90)—ճեղքել, նշտարակով կտրել. հմմտ. շֆել. «Դու բանէ գնշդրակն... զերակն գտնուս, և շֆելէ»։

□ Շֆելի (100, 103)—երկու սրունքների միջև եղած միջոցը. հմմտ. շֆել. «Կոճբխի իջուածք է, որ իջնու ի մէջ կոճին որպէս ոսկոր և շֆելիին տեղն յերկու դեհն... ցաւ տայ» (100). «Կապէ զպախուցքն ի ձեռքն ի շֆելեացն ի տեղն» (103)։

Ո

O Ոլլել (72, 97, 100, 101)—ոլորել, շրջել. «Ոլլէ զերսնակն» (72), «Դու զերեսնակն ոլլես յայն դեհն» (72), «Դու զգրաստն յանկասկած ոլլէ ի հետ ի մէկ դեհի վրա» (97)։

Ոլորել>ոլրել>ոլլել. ր-ն լ-երի առնմանությամբ՝ լ։

+ Ոռաղի (112)—ուղիղ աղի. «Մտոյ զձեռքդ ընդ գրաստուն ոռաղին ու սրբէ»։

Բառս ծանոթ է Ն. Բյուզանդացուն (տե՛ս Ֆրանս.-հայ բառ. 334 ա, 1044բ)։

□ Ովտակ (50), նաև յովտակ (50)—հովատակ. «Մատակ ձին չընդունի զովտակն՝ մինչվի մտէ ի յերեք տարին». «Վաղցնեն յովտակն»։

□ Որք (144)—հորթ։

□ Ուժվորել (97)—ավելի ուժեղացնել. «Առաւել ցաւն ուժվորէ»։

□ Ուժվորնալ (127)—ավելի ուժեղանալ. «Եփ ուժվորնայ այս քամին»։

+ Ուկուդայ (69)—Հնդկաստանում բրինչալ կոչվող պտուղը (Շտեյնգաս), «Տուր հնդի ուկուդայ, որ ուտէ»։

— արաբ. وغد (waghd) — նույն նշ.։

□ Ունծ (143)—ինձ՝ կատվի ցեղին պատկանող չորքոտանի. «Այլ դեղ, որ ունծն լինի առել»։

Վկայված է ունձ, ուծ ձևերով (Աճառ. Գ, 82)։

□ Ուռեցվոր (100)—ուռուցք ունեցող. «Ուռեցվոր լինի ի ծնկացն»։

Մալխաս. ունի բարբառ. ուռուցուոր ձևը։ Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

□ Ուտիճ (114), ուտիչ (116, 117)—մարմնի վրա արյունոտ խոց, դաշտիկ հիվանդություն (տե՛ս). «Այլ դեղ այս ցաւուս և այն, որ ուտիճ կոչվի» (114), «Յաղագս ուտիչ ցաւու» (116)։

Էջ 114-ում հիվանդության բուժման ժամանակ ասված է, որ հանձնարարվող դեղը «ցանէ ի վրա խոցին», երկրորդ վկայության մեջ հիվանդությունն այսպես է նկարագրված. «Խոցն աւր ըստ աւրէ ուտվի ու լինի խիստ հոտած» (116)։

ՆՀԲ բառս մեկնում է «քաղցկեղ», իսկ Մալխասյանցը՝ «հյուծախտ»։ Մեր հուշարձանը ավելի հստակ է բացատրում՝ «բաց խոց մարմնի վրա» և բուժելի (81), որ և ցանկում կերիչ ու դաշտիկ (տե՛ս) է անվանված, իսկ դաշտիկը «արյունոտ խոց է գրաստի ագետակում»։

Չ

O Չալ (57, 58)—երկգույն, ընդհանրապես կարմիր և սպիտակ մազեր ունեցող (ձի). «Եւ կան ի ձիանն չալ ձի, որ լինի իր ամէն մարմինն սպիտակ ու գլուխն ու շնիքն այլ գոյն» (57)։

-- պարսկ.—արաբ. چال (čāl) — նույն նշ.։ Թուրք. čāl Ջ. Քլաուսոնը (էջ 417) մեկնում է՝ «Սև ու սպիտակ գույներով, երբեմն մոխրագույնի խառնուրդով (մազեր)»։

Մալխասյանցը բառս դնում է ստճկերենից փոխառյալ՝ «մորթի կամ փետուրների միապաղաղ գույնի վրա տեղ-տեղ այլ գույնի կետեր կամ գծեր ունեցող, խատուտիկ, պտպտիկ» իմաստով։ 13-րդ դարում բառիս օգտագործումը հայերենում, ըստ որում հնագույն վկայությունը, ենթադրել է տալիս դրա փոխառությունը պարսկերենից և կամ արաբերենից։

+ Չալիշել (73)—կռվել. «Եւ այնպէս զօրգէ, քանի խակի կարես վասն պատերազմի գնեսելն ու զչալիշելն»:

— պարսկ. چالش (čālish) «կռիվ» և հայ. ել լծորդությամբ կազմված:

Չալիշ պարսկերենում ունի նաև «ջանք, նրբանկատ վերաբերմունք», որ մեր բարբառներում պահպանված է չալիշ գալ «ջանք անել». Մալխասյանցը դնում է տաճկերենից (ՀԲԲ, Դ, 8): Ուղղելի է փոխառման աղբյուրը:

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:

+ Չախել (110)—ջերմից այրվել, կրակվել (գլխի ցավից). «Չախէ զգլուխն, դողա բազկունքն, թուլնայ ակընջվինս»:

— պարսկ. چقیدن (čaḳīdan) — նույն նշ.՝ īdan դերբայական լծորդի դեմ հյ. ել: Պարսկերենը čaḳ «վառել, բոցավառել» ձևը հնում փոխ է առել թուրքերենից (ըստ Ջ. Քլաուսոնի, 405):

Աճառյանը (Ե, 720) Պոլսի բարբառից բերում է չախ «հանդիմանություն, կշտամբանք» իմաստով (որից և չախել) և ծագումը դնում է պարսկ. چخیدن (čakhīdan) «կագել, վիճել, իրար հետ կռվել»: Պարսկ. čaḳīdan և čakhīdan բայերի հիմքը թուրք. čaḳ (čag)-ն է՝ բառիմաստի ընդլայնումով:

Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում:

□ Չակf (66, 68)—չաք, չափ:

Աճառյանը (Ե, 735) չափ բառի տակ բերում է չաf, չաfu, չակ՝ որպես «ռամկական կամ միջին հայերեն» ձևեր:

□ Չարշfել (85)—չարչարել, նեղել. «Կամակ թէ գահեն և կամ չարշfեն»:

Մալխասյանցը ունի չարշrկել (հմմ. ձև չարչարել-ի):

□ Չիկ (76)—չիք, ոչ. «Չիկ լաւ էր քեզ, թէ մայրն զքեզ չէր բերել»:

Պ

+ Պախrեցաւ (39, 112)—տավարացավ:

+ Պախցտեղ (88), պաղցտեղ (45)—ձիան բերանի սանձատեղը. հմմտ. պաղուց. «Պախուցն չհարու զպախցտեղն» (88), «Դունչն ի պաղցտեղացն ի վայր պարկեշտ [լինի]» (45):

Պաճնալ (37, 50, 51)—հղիանալ (ձիու և այլ կենդանիների):

Վկայված է Գրիք Վաստակոցում, էջ 202, 221 (Աճառ. Ե, 789):

□ Պաղուց (45, 73), նաև պախուց (88, 103)—սանձ, երասանակ:

+ Պաղտացի լիտր (83), պաղտացի լիտր (66)—Բաղդադի լիտր (կշռի միավոր). «Ուտէ քառսուն լիտր պաղտացի» (83), «Տաս մքուք (կշռի միավոր) մի ընտրած գարի, որ լինի կշէռքն տասնուհինգ լիտր պաղտացի (66):

+ Պաղտացի կանկուն (82), պաղտցի կանգուն (49)—Բաղդադի կանգուն (չափի միավոր). «Լինի արձկութիւնն որպէս տասն կանկուն պաղտացի, (82), «Վեց կանգուն պաղտցի կենայ» (49):

Պաղցտեղ (45)—տե՛ս պախցտեղ:

+ Պաճար (101)—փորը ուռած. «Եւ պաճարն, որ է հատուածն, որ լինի ի գրաստնուն պորտն»:

— արաբ. باجر (bādjir) — նույն նշ.:

□ Պայրոտել (100) (հմմ. ձև պայթել-ի)—պայթել, ճաքճքել. «Պայրոտէ խալիկն (խմա՝ բազկոսկրը) ու արիւն կենայ»:

□ Պառիկիլ (128, 131)—պառակիլ՝ կողի վրա ընկնել, պառկել:

+ Պատխունամ (39, 118)—խունամ հիվանդության վատ ձևը (°): Հիվանդության ժամանակ «գրաստուն ոտքն ուռենայ հետէն, ու հետէն նստի. և կարէ լինել, որ ելնէ յիրմէ դեղին ջուր» (118):

Նաֆիսու պարսկ. բառ. տալիս է գրաստների մոտ հանդիպող خنام (khunām) հիվանդությունը՝ առանց այն նկարագրելու: Պարսկ. بد (bad) «վատ» բառի հավելումով՝ պատխունամ՝ ըստ երևույթին այդ հիվանդության ավելի վատ, ծանր տեսակը:

□ Պատոտիլ (94) (հմմ. ձև պատառել-ի)—պատառոտվել. «[Սմբակն] հանապազ պատոտի ու փշրի»:

Պաւզ (56, 60)—տե՛ս պօզ:

○ Պենիր (122, 139), պարսկ.—զտած շաքար. «Խառնէ ի հետ լիտր մի սպիտակ շաքարու պենիր» (122):

Աճառյանը (Զ, 1202) բերում է փենիտ ձևը՝ նշելով, որ «ունին միայն ԱԲ և Նորայր. Բառ. ֆր. 422բ, իբր մհյ.»: Հետևաբար մեր աղբյուրը տալիս է այս բառի հնագույն գրավոր վկայությունը հայերենում:

+ Պզմիլ (78)—հակառակվել. «Որ պզմի ու չերթայ»:

Կազմված է պիզմ «հակառակություն, կռիվ» արմատից, որ վկայված է Շնորհալու թղթերում (ՆՀԲ):

○ Պզրղայտուն (129, 135), պզրղատուն (99)—բզրկատուն, գաղտիկուրի մի տեսակը:

Աճառյանը (Ա, 1079) Հայբուսակից բերում է բզրկատուն, պզրկատուն ձևերը: Վենետիկի 1294 թ. ձեռ. բժշկ. (էջ 145) պզրկատուն մեկնում է «հունդ է նմանակ տավտի և այլ փոքր է»: Օգ. բժ. (էջ 569) ունի պզր ղատունէ, պզր ղատի: Ամիրտովլաթը Անգիտաց անպէտում գրում է՝ «պարսկերէն ասպաղաւլ կասեն», իսկ վերջինս ըստ Հայբուսակի ջղախոտն է կամ գաղտիկուրը (Plantago): Աճառյանը բառիս արաբ. ձևը տալիս է بذرقطونا (bdhrḳaṭū-nā), իսկ Նաֆիսին ու Բեդևյանը՝ بزرقطونا (bazrḳaṭūnā): Բեդևյանը (§ 2737) սրան հոմանիշ է դնում հյ. լուախոտ և կտուախոտ:

□ Պէտ այնել (100, 137)—պետ առնել, հոգ տանել, խնամել. «Թէ պէտ այնեն, նա ճարտար ողջնայ»:

Պիսկոտիլ (49)—պիսկոտել, բորոտել, քոսոտվել:

+ Պլատ (58բ)—անստույգ նշ. բառ. «Պլատն անդամն լաւ է և զօրդն յայպած է»:

+ Պլուզ (72)—բրդե հաստ գործվածք. «Եւ կապէ ի յիր լկամն պլուզ ծրարոց ակ մի ադ»:

— արաբ. بلس (bulus) — նույն նշ., որ արաբ. بلاس (ballās) բառի հոգնակին է: Սա պարսկ. پلاس (palās) «բրդե հաստ գործվածք, փալաս» բառի արաբականացած ձևն է:

Աճառյանը (Ե, 1072) բառիս ծագումը անստույգ է համարել: ՆՀԲ պլուզ

դնում է որպես «փոքրիկ» ու «կապուտակ» և բերում է Շնորհալու հետևյալ հանելուկը (առակը). «Տեսայ փոքրիկ մոնոզոնակ, 'ւ ուներ պլուզ խրըն կընկղակ, առաւօտուն սկըսնոյր մինակ, պաշտէր անուշ քաղցր եղանակ (արտոյտ թռչուն)»: Այստեղ պլուզ-ի իմաստը հստակվում է մեր բերած նշանակությամբ, իմա՝ «արտույտը ուներ բրդից գործված կընկղակ (կնգուղ)»:

Բառիս այս նոր առումը չի ջնջում այլ բնագրերում նրա «փոքրիկ» և «կապուտակ» իմաստները: Պլուզ-ի «փոքրիկ» իմաստի համար ճիշտ է Աճառյանի նշած արաբ. بلز (biliz) ձևը, որ ըստ «Կամուսի» թուրք. թարգմ. ունի «կարճահասակ» նշանակությունը: Վերջինս նույն իմաստով փոխ է առնված պարսկերենում (Նաֆիսի, 637):

Պղինծ (128)—պղինձ՝ կաթսա:

Պղինձ այս իմաստով վկայված է Գիրք Վաստակոցում՝ էջ 161 (Աճառ. Ե, 1076):

+ Պեկոռ (47, 50, 93)—ուսագլուխ. «Կարճութիւն միջացն ի նքթեպէն՝ ինչեւվի պեկոռացն ոսկորն»:

Կարստը (ՄՀԲ, թղթ. 253, վավ. 28, էջ 232) պեկոռ բխեցնում է պրճուկ «վերին կողմն դմակի և ագւոյ ձիոյ» (ըստ Գիրք Վաստակոցի բառարանի, 257) բառից՝ պրճուկ-ոռ > պրճըկ-ոռ > պեկոռ, և մեկնում է «ձիան հետույքի հատվածը»:

Բառս հավանաբար առաջացել է բէշ > պէճ «ուսոսկր» և կոռ «վեգի նման մի ոսկոր» (ՀՀԲ) բառերից «ուսագլուխ, բէճգլուխ (տե՛ս)» իմաստով:

Գրիգորիսը ունի պոճկոռ (174), որ թվում է զիստերի հատվածն է:

□ Պորտֆալ (50)—պորթկալ, ցատկել. «Եւ սիրած է ի մատակն, որ չորս ոտաւքն պորտֆայ»:

Մալխասյանցը ունի պորֆալ:

Պուխար (86), արաբ.—գոլորշի:

Բուխար ձևով հաղորդված է Հովհան Երզնկացու «Յաղագս երկնից» երկում (Աճառ. Ա, 1192) և Գրիգորիսի մոտ (էջ 4, 11 և այլն):

+ Պուճուրտել (71,77)—անստույգ նշանակությամբ բառ. «Պարտ է, որ հեծելվորն գիտուն լինի, որ թէ ուզէ ի վրայ ըռըմբի զորդէ..., թէ ուզէ ի վրայ պուճուրտելոյ» (71), «Շատ մի ըռըմբնի կոտըրտէր և պուճուրտէր» (77):

O Պտոյտ (37, 38)—ձիու մարմնի վրա տեղ-տեղ շրջանակաձև կուտակված մազեր. «ԺԶ. Վասն գոյներոյ և պտուտնոյ ի ձին» (37), «Ի. Վասն պտուտնոյ, որ ի մազն լինի» (38):

Այս բառը օգտագործված է Բժշկարանիս ցանկում, իսկ բնագրի մեջ համապատասխան գլուխներում այն փոխարինված է բոլոր-ով. «ԺԶ. Յաղագս... բոլորնոյն, որ կենայ ի գրաստն» (55), «Ի. Յաղագս բոլորնոյն, որ լինի ի մազն (58):

Պրսամ (147)
Պրսեմ (41) } պարսկ.—բրսամ, պլէրիտ (Մալխասյանց):

Բրսամ ձևով հաղորդված է Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» մեջ (Աճառ. Ա, 1231):

Պօզ (պաւզ) (56, 60), պարսկ.—գորշ, մոխրագույն ձի:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199 (Աճառ. Ե, 1179):

Ջ

O Ջանդիանէ (193)—բոզ, օձի դեղ, օձի սխտոր

— արաբ. جنطيانا (djintiyānā) — նույն նշ.:

Աճառյանը (Դ, 667) բերում է ճենդիան ձևը Հայբուսակից (§ 1890) և դնում արաբ. جنطيان (djantiyān) հոմանիշից: 1294 թ. ձեռ. բժշկ. (էջ 145) ունի ջանդիանա՝ «երնջնանի տակ՝ ի Կրիտն լինի»:

□ Ջանջխել (151)—ջնջխել, ջախջախել:

Ջանջախել ձևով վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 100, 115 (Աճառ., Ե., 1187):

□ Ջերմնոտ (125)—ջերմոտ, տենդով բռնված (Ficireux). «Թէ գարի ուտէ, նա չէ ջերմնոտ»:

Գրիգորիսը ունի ջերմոտ (12), իսկ Անգիտաց անպէտը՝ ջերմնոտ (էջ 739):

O Ջող (84)—ջոխ, ճիպոտ, գերան. «Նա այնեն խոր ու փոս ու դնէ ի վրայ հաստատուն փայտեր, կաղնի ջողեր ու շարէ ի վերայ այն փոսին զէդ մատունք ի կարգն»:

— պարսկ. جغ (djugh), جوغ (djūgh) —նույն նշ:

Ջոխ ձևով մեկ անգամ հաղորդված է Վրք. հց. ա, 694, որ Աճառյանը (Ե, 1225) փոխառյալ է համարում վրաց. ჯოხი ջոխի «փայտ, գավազան բառից»: Ճիւղ բառի ծագման կապակցությամբ Աճառյանը (Դ. 657) վկայակոչում է Հ. Թիրյաքյանին, որ հյ. ճիւղ բխեցնում է պարսկ. چوغ (čūgh) կամ چيغ (čīgh) «բարակ ճյուղերով հյուսված վարագույր» բառերից, և առարկում, թե ըստ Բուրհանի պարսկ.-ը փոխառյալ է թուրք.-ից և, հետևաբար, պիտի տար հյ. ճուզ: Մեր աղբյուրի վկայությունը, հատկապես غ (gh)-ի դիմաց հյ. ղ-ն հաստատում է բառիս փոխառությունը պարսկական ձևից: Վրացերենն ու թուրքերենը նույնպես կարող են փոխ առած լինել պարսկերենից:

Ջուճուտ մուղլ—տե՛ս մուղլ ջուճուտ:

□ Ջրխռնել (107, 111, 112)—մի բան ջրով խառնել. «Առ քացախ և ջրխռնէ ջրով» (107), «Խառնէ ի յայն ջրխռնած գինին» (111):

□ Ջրտեղ (111)—ջրոտ, թաց տեղ. «Կանգնեցոյ զինք ի ջրտեղ»:

□ Ջրցնել (87)—ջուր ցանել. «[Գրաստնին] ի հովամուտ տեղ կապեն ու ջրցնեն ներքին»:

O Ջրփող (113)—1. միզանցք, 2. խողովակ, որի միջով հոսում է ջուրը. «Խոթէ բարակ սաղամ ի տոշփողն (իմա՝ միզանցք)... Կայ, որ եղճով կու քշտէ ի ջրփողն»:

Գրիգորիսը ունի առաջին իմաստով (էջ 157). «Ճանապարհ գոզոյն՝ ջրփողն, որ է բերան փաղայքշտին՝ նեղէ ի տղայսն»: Ս. Ամատունին (ՀԲԲ, էջ 579) բառս երկրորդ իմաստով քաղել է 1231 թ. մի արձանագրությունից:

Ռախմարէն *(55)—տե՛ս* **բռախմարէն**:

О **Ռամատիս** *(39,119)—վերին շնչական ուղիների բորբոքում, հարբուխ. «***Ռամատիսի** *նշանքն այս է. իջնի ընդ քիթն ջուրն ու չլինի հոտած և փաքայ և արցվէ աչքն»:*

Բառս **ռամատես** *ձևով վկայված է Գիրք Վաստակոցում , էջ 164 (Աճառ. Ե, 1260): Աճառյանը տալիս է «մի տեսակ հիվանդություն» անորոշ բացատրությունը՝ բառի հիմքը համարելով «հուն.* ῥευματισμός *«ներքին հյութերի հոսում», որ ծագում է* ῥεῦμα *«հոսում» բառից. սրանից է* **ֆրանս.** rhumatisme *«հոդացավ». մեր բառը ստացված է արաբական տառադարձության վրայից, ուր, ինչպես սպասելի է, ընկած պիտի լիներ վերջաձայն* m»: *Մալխաս.* **ռամատես** *«ռևմատիզմ, հոդացավություն» հունարեն ձևի աղավաղությունն է համարում: Աճառ. (անդ) բերում է նաև Վաստակոցում Ալիշանի տված բացատրությունը. «Կամ աչացաւութիւն է.* **ռէմէտ***, ըստ արաբաց, և կամ քոստութիւն»: Վաստակոցի բնագրում հիվանդության նկարագրությունը բացակայում է, ուստի տեղիք է տվել կասկածի , մինչդեռ թե՛ մեր հուշարձանում և թե՛ Գրիգորիսի մոտ մանրամասն նկարագրված է հիվանդությունը, ավելին՝ Գրիգորիսը (էջ 104) տալիս է նաև հիվանդության արաբերեն մի այլ անվանումը. «Եթէ այս յաւելուածս (իմա՝ գիճութիւն) ի յերկու քթայփողն իջանի, նա անուանի* **զուգամ***, որ է* **բռամատիս***», իսկ* **զուգամը***, ինչպես ճիշտ բացատրված է Գրիգորիսի բառարանում, «հարբուխն» է՝ «վերին շնչական ուղիների բորբոքումը» (էջ 222):*

+ **Ռայսայ** *(131),* **ասաճար** *(40)—ամբակների քայքայման հիվանդություն, որ առաջանում է քարին զարնվելուց և այլ նման պատճառներից. «Յաղագս* **ռայսայի***, որ է բեեռհասն» (131). «Վասն* **ասաճար** *ցաւուն» (40): Բեեռհաս հիվանդության նկարագրության մեջ ասված է՝ «Թէ զօրդ լինի բեեռն, նա զօրդ երթայ ընդ սմբակն ու բեեռհաս այնէ» (90):*

— *արաբ.* رهصة (rahṣa) — *նույն նշ.:*

Հետաքրքիր է **ասաճար** *ձևը, որը արաբերեն* rahaṣa *բառի ընթերցումն է հակառակ կողմից: Արդյոք թարգմանչի գրչական խա՞ղն է:*

+ **Ռայֆիմէ** *(57)—ձիու գլխի, ռունչի սպիտակությունը մինչև շուրթը. «Թէ լինի մանտր կետ կետ թուխ ու սպիտակ կամ կարմիր լայն, և թէ լինի վերի պռու[ն]կն սպիտակ՝ շատ կամ քիչ, կոչեն իր անուն* **ռայֆիմէ***»:*

— *արաբ.* رثمة (rathma) — *նույն նշ.:*

Ուշադրության արժանի է արաբ. ث (th, s)-*ի* **ֆ** *տառադարձումը հայերենում: Ընդհանրապես արաբ., նաև պարսկ. այս հնչումը հայերենում կայուն տառադարձություն չունի. հիմնականում այն տառադարձված է* **ս***, իսկ երբեմն նաև* **դ** *կամ* **թ** *(տե՛ս Բ. Չուգասզյան, Պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի հայատառ միջնադարյան մի բառարան, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 156, § 12):*

+ **Ռասուխտ** *(159)—ծարիր՝ աչքին քաշելու սև դեղ (*antimony*):*

— *պարսկ.—արաբ.* راسخت (rāsuxht) — *նույն նշ.:*

*1428 թ. ձեռ. բժշկարանում (*ZFAP*, էջ 131) նշվում է, որ* **ռըսուխտ** *«արաբկերէն» է:*

+ **Ռավան** *(95)—ընթացք, հավասարակշռություն. «Այն ձին, երբ գահեն, նա ելնէ* **յռավնէն***»:*

— *պարսկ.* روان (rawān) — *նույն նշ.:*

Կարստը (ՄՀԲ, թղթ. 253, վավ. 30բ, թղ. 6) **ռեվան** *(***ռովան***) ձևով քաղել է Ա. Զոպանյանի «Հայրեններու բուրաստանին մեջ» գրքից (էջ 541) և ճիշտ է որոշել ծագումը*

+ **Ռեպու** *(87),* **ռիպ** *(39)*
+ **Ռեպցաւ** *(39)* — *շնչարգելութիւն, հեղձանք, ասթմա. «Նշանն է [***ռեպցաւուն***]. յորժամ շնչայ, նա տայ քովացն»:*

— *արաբ.* ربو (rabū) — *նույն նշ.:*

Բառս վկայված է Գրգորիսի մոտ (էջ 107, 189). ծագումը ճիշտ է որոշել Հ. Դ. Փափազյանը (անդ, էջ 228):

+ **Ռէշ** *(54)—ատամնաշար. «Յերայնայ ակռայքն ու ընկնի դահ (իմա՝ ծերացած)* **ռէշքն***».*

— *պարսկ.* رج (radj) — *«շարք (նաև ատամի)» (Նաֆիսի, Պարսկ. բառ., 1633):*

Ռիաւալն *(107)—տե՛ս* **բռիաւալան**:

+ **Ռուղան** *(95)—թեքվող, մի կողմի վրա գնացող ձի. «Եւ այն ձին, երբ գահեն, նա ելէ յռավնէն (իմա՝ հավասարակշռությունից), նա կոչէ յարապն իր* **ռուղան***»:*

— *արաբ* روغان (rawghān) — *նույն նշ.:*

Ռիպ *(137) —տե՛ս* **ռեպու**:

Ռումբ *(76, 77)—տե՛ս* **բռումբ**:

Ռուպ *(56)—տե՛ս* **բռուպ**:

Ռֆապի *(100)—տե՛ս* **բռֆապի**:

Ռֆէպ *(72,77)—տե՛ս* **բռֆէպ**:

Ս

Սազել *(77)—համարեցնել, տեսքի բերել, պատրաստել. հականիշ՝* **սազբըփել** *(տե՛ս):*

Վկայված է Կոստանդին Երզնկացու տաղերում, էջ 108 (Աճառ. Զ, 18):

+ **Սազբըփել** *(77)—ձևից հանել, տեսքից գցել. հմմտ.* **սազել**. *«Հեծելվորն... չթողու, որ հեծնի զինք անգէտ ծուլուկ կամ տղայ և* **սազբըփէ** *ու աւիրէ»:*

— *պարսկ.* ساز (sāz) *«ձև, պատկեր» և հյ.* **բափել**:

Սալար *(44)—ամբողջ. «Եւ սիրած է կրտած ձիան... զի* **սալար** *կենան»:*

+ **Սակվել** *(151)—սակավել, նվազել. «Աւուրք մի յաւելնայ և աւուրք մի* **սակվէ***»:*

Բայական այս ձևը առաջին անգամ է հանդիպում:

+ **Սաճնէ** *(119)—մանր աղի ձկով պատրաստված խորտիկ. «Առ զայն ջուրն, որ ելնէ ի* **սաճնէէն***, որ կու շինվի մանր ձկամ»:*

— *արաբ.* صحناء (ṣaḥnā') — *նույն նշ.:*

Ամիրտովլաթը (Անգ. անպէտ, 521) բառիս իմաստը համարյա ճիշտ է տալիս. նա գրում է. «Սաճճայ. կու կարծեմ թէ ինքն խաւիարն է. ի ձկնէն կու շինեն... ոմանք ասեն թուռշի ձուկն է»:

O Սաղրի (88)—ձիու կամ այլ գրաստի գավակ. «Ջրին խմելն շատ օկտութիւն է իր... արձկցնէ զսաղրին, պնդէ զմիսն»:

— թուրք.—պարսկ.-արաբ. سغری (saqrī) — նույն նշ., նաև «գրաստ-ների գավակի մորթուց պատրաստված կաշի»:

Վերջին առումով Մալխասյանցն ունի որպես տաճկերենից փոխառյալ: Մի-Նաֆիսին, Շտեյնգասը և Կիրակոսյանը նշում են որպես պարսկ. բառ: ժԱ դա-ջինասիական աղբյուրներում որպես թուրքերեն բառ հիշատակվում է ժԱ դա-րից (տե՛ս Չ. Քլաուսոն, 815):

+ Սամանդ (56, 59, 60)—սև բաշով ու պոչով խարտյաշ ձի. «Եւ կան ձիաննին, որ կոչեն սամանդ. և իր գոյնն է սևգոյն դեղին» (56):

— պարսկ. سمند (samand) — նույն նշ.:

+ Սամղ յարապի (122)—արաբական խեժ. ստացվում է ակացիայի տարբեր տեսակներից:

— արաբ. صمغ عربی (ṣamghi ʻarabī) — նույն նշ.:

1294 թ. բժշկարանը (էջ 146) ունի «սամխ յարապի. տաճիկ կոեզ», իսկ Օգ. բժ.՝ զամխ արապի, որ մեր հուշարձանում տրված է նաև թարգմանաբար՝ խէժ արապիկ (162):

+ Սայլևառ (71)—անստույգ նշանակությամբ բառ. «Տես աղէկ սայլևառ, որ ոչ նեղ լինի և ոչ արձակ», «Եւ քանձ ամէն զլկամնին սայլևառն աղէկ է, զի երբ սայլևուաւն զորդես, նա ամեն ազգ լկամովն կարես ղորդել»:

O Սանդալ (151)—ճանդան, սանդալ ծառը. լինում է սպիտակ կամ կարմիր: Վեր-ջինս դեղձաբեղնանին, բուսաբանորեն է (Adenathera Pavonina L.), ինչպես նաև ճանտալին, կարմիր կրփոլը (Pterocarpus santalinus L.) (Բեդևյան, § § 109, 2865):

— արաբ. صندل (ṣandal) — նույն նշ.:

Արաբերենը փոխառյալ է հին պարսկ. چندان (čandān) (հյ. ճանդան) կամ چندال (čandāl) ձևից (Նաֆիսի, հ. 3, 2171), հետագայում պարսկե-րենը իր հերթին արաբ.-ից փոխ է առել սանդալ ձևը: Հայերենը հնում («Աշ-խարհացոյց») փոխ է առել ճանդան, իսկ ավելի ուշ (Դարանաղցի) նաև սան-դալ «մի տեսակ բուժախոտ» (Աճառ.) իմաստով. Դարանաղցին (էջ 496) գրում է. «Սանդալն փայտ է կարմիր և խպիտակ, որ ի Հնդկաց գայ. այս խոտ դեղ է ուռեցի, կրծոց, ձիոց, ջորոց և իշուց և կարի դառն է»: Աճառ. չնայած ճանդան-ի ստուգաբանության ժամանակ հիշատակում է արաբ. sandal-ը, բայց հյ. սանդալ-ի ծագումն անստույգ է համարել: Ն. Ակինյանը (Գր. Աղթամարցի, Վիեննա, 1958, էջ 134) սանդալ փոխառյալ է համարում տաճկերենից: Ուղղելի: Գր. Աղթամարցին ունի սանդալի: Արաբ. ծագումը որոշել է Բ. Չուգասզյանը 1963 թ. (տե՛ս Գր. Աղթամարցի, աշխատ. Մ. Ավ-դալբեգյանի, էջ 354):

Մեր աղբյուրը տալիս է բառիս հնագույն գրավոր վկայությունը հայերե-նում:

+ Սապալ (41, 150)—աչքի հիվանդություն կամ արատ, արնակալած աչք, բժոտ աչք. «Յաղագս սապալի, որ յաչքն կենայ»:

— արաբ. سبل (sabal) — նույն նշ.:

Գրիգորիսը (էջ 80) ունի սըպըլ (սպըլ) ձևով, Կարստը (ՄՀԲ, թղթ. 253, վավ. 31, թուղթ 77) բառս քաղել է 1438 թ. ձեռ. բժշկարանից: Ե՛վ Կարստը, և՛ Հ. Դ. Փափազյանը (Գրիգորիս, 228) ճիշտ են որոշել ծագումը:

+ Սատաֆ (93), հգ. սստաֆ (տե՛ս)—երանքների, զիստերի մոտիկությունը և ամբակների հեռավորությունը իրարից. «Եւ այն, որ սատաֆ կոչեն իր... նա լինի ամբակքն դէպ ի դուրս և ծունկքն դէպ ի ներս»:

— արաբ. صدف (ṣadaf) — նույն նշ.:

☐ Սարդոստէն (133)—սարդոստայն:

Սարել (70)—սարքել, պատրաստել:

Այս իմաստով վկայված է Սմբ. պտմ. 17, 67 (Աճառ. Չ, 123):

+ Սաւն (164)—նմանողություն, ընդօրինակություն. «Գրեցի ի սաւն, և ապա վերստին նորոգեցի և գրեցի մեծ գիր»:

— պարսկ. سون (sūn) — նույն նշ.:

Աճառյանը հուշարձանիս նկարագրության մեջ (Ցուցակ հայերեն ձեռա-գրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 138) հիշատակարանի այս բառը ընդգծել է և ծանոթագրել. «Թուի նշանակել սևագրություն, իբր և սեաւն, որմէ յետոյ նորէն մաքուրը գրեր է մեծ գիր»: Կարծում ենք, որ այստեղ վրիպակ չկա. Թորոս գրիչ-խմբագիրը նախ ընդօրինակել է («գրեցի ի սաւն») «Բժշկա-րանիս» բնագիրը, ապա խմբագրել է («վերստին նորոգեցի»), ինչպես ցան-կացել է թարգմանիչ Ցարաչը և, ի վերջո, մեծ գրերով արտագրել բնագիրը:

O Սաւնաւպար (122, 158), սաւնուպար (136), սաւնապր (160)—սնոպար, բար-դիի մի տեսակը, իտալական սոճի (Pinus Pinea L.):

— արաբ. صنوبر (ṣanawbar, ṣanūbar).

Աճառ. (Չ, 312), Նորայր Բյուզանդացու վրա հիմնվելով, նշել է արաբ. ծագումը, բայց չի կարողացել ստուգել, որովհետև Նորայրը «արաբ. բառը բնիկ այբուբենով կամ գիտական տառադարձությամբ չէ նշանակած»: Վերը դնելով բառի արաբ. ձևը, վերջնականապես ճշտվում է նրա ծագումն ու իմաստը:

+ Սաւտայ (39, 110)—սև մաղձ, լեղի. «Յաղագս ցաւուն, որ ի սաւտայէ լինի»:

— արաբ. سوداء (ṣawdā') — նույն նշ.:

Վկայված է Աբուսաիդի և Գրիգորիսի մոտ: Ծագումն ու իմաստը ճիշտ է որոշել Կարստը (ՄՀԲ):

Սեխուկ սատանայի (153, 158) } —վայրի վարունգ:
Սեղուկ սատանայի (114) }

«Պարտ է լուծել զփորն բուրկով և սատանայի սեղկով (77), «Առ սատանայի սեխուկ» (123):

էջ 134-ում նույն դեղատոմսն է առաջարկվում՝ միայն սատանայի սե-խուկի փոխարեն նշվում է սատանայի խիարուկ: Իսկ քանի որ երկուսն էլ պատկանում են Cucurbitaceae ընտանիքին, հետևաբար մեր հուշարձանում

նույնացվել են։ Հունարեն սեկիտին (σιχύδιον) «սեխիկ կամ սեխուկ» է թարգմանում Գաղիանոսը (տե՛ս ՆՀԲ, սեխ), իսկ Աճառյանը (Չ, 172) հուն. σέχυς, σίχυς, σίχυος, σιχύα դնում է «վարունգ, սեխ, կամ դդում», հետևաբար չի բացառվում, որ հայերենում խիարուկը փոխարինվեր սեխուկով և ընդհակառակը։

□ Սեսեռ (121, 139)—սխեռ։

Սեռւկ ճնդիկ կամ ընդիկ (154)—շուշմա, քունջութ (Մալխաս.)։

+ Սինապ (110, 154)—մանանեխի և չամչի (կամ չոր արմավի) խառնուրդից պատրաստված համեմ՝ մսի համար։

— արաբ. صناب (ṣināb) — նույն նշ.։

+ Սիսլախ (57, 91)—անստույգ նշանակությամբ բառ. «Թէ լինի [ձին] սպիտակ ու խարտեշ, նա ասեն խարտեշ սիսլախ» (57), «Յորժամ ձննես՝ նա չլսէ, նա գիտացիր, որ խուլ է, և շատն ի սիսլախն լինի» (91)։

Մալխաս. ունի սսլախ՝ «կայտառ, կտրիճ, աշխույժ». բառը ստուգաբանված չէ և իմաստով չի բռնում։

□ Սիրենալ (78)—սիրել. «Եւ կայ, որ յախոռն սովրել լինի ի գրաստ ու սիրենայ զընկերն»։

□ Սիրտն ճասնել (104)—կյանքը սպառվել. «Եւ յորժամ կտրի ի կերոյ, գիտացիր, որ սիրտն ճասել է, և ոչ բժշկի»։

□ Սլվլել (68)—արագ-արագ ման ածել. «Ի վազվնէ հան զինք ու սլվլէ»։

Աճառյանը (Չ, 263) Մշո բարբառում նշում է սլվլալ «թռչունների արագ թռչելը»՝ սլանալ-ից, Մալխասյանցը՝ սլվլալ «փայլփլել», սլվլել «սուլել, ճլվլալ», իսկ Ամատունին սլվլալ մեկնում է «արագ-արագ շարժվիլ, գնալ գալ». այս վերջինը համընկնում է մեր օրինակի նշանակությանը։

Սղանճ (108)—սղանգ, զրևանդ (Aristolochia). «Առ... սղանճի տակ»։

ՆՀԲ ունի սղանկն և սղանգն, ռամկ. սղանկ ձևերը։

O Սղար (44), արաբ,—բերդ, պարիսպ։

Արաբ. hisār նույն նշ. բառի շրջուն ձևն է հ-ի ղ հնչյունափոխությամբ։ ՆՀԲ և Աճառյանը (Չ, 292) տալիս են «պաշարումն, փխբ. անձկություն, նեղություն» իմաստներով։

+ Սմբակբերան (40, 89, 142)—սմբակի գորտի ծայրամասերը. «Քիչ մի լինի բացած լուսինն (խմա՝ պայտը) ի սմբակբերանն» (89)։

+ Սմբակցաւ (40, 142)—սմբակի բարակության հետևանքով առաջացած վերք. հիվանդության նշաններն են. «Լինի նասր սմբակ ու պեղծ, նա յորժամ ի վերայ քարի կոխէ, նա ընդ ներքսէ արոյնի»։

Սճիկ (111) ասոր.—պետք, կարիք, կարոտություն։

Վկայված է Անսիզքում, էջ 75 (Աճառ. Չ, 309)։

Սճկել (76, 114)—պետք ունենալ. տե՛ս սճիկ։

+ Սնուկ, սունակ (58բ)—անստույգ հիվանդություն. «Խունանն և սնուկն ի քիթն յայպ է», «Քթին սունակն նասր՝ գոված է»։

Սոքել (67), սոքքել (67, 71)—ամփոփել, վեր քաշել. տե՛ս սոքոք։

Սոքոք (58բ)—ամփոփ. «Քաշքն բարձր ու սոքոք՝ գոված է»։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199 (Աճառ. Չ, 314)։

□ Սոյur (156), սոյru (161)—հավանաբար սուսր՝ կարմրադեղ, սիղիկոն. «Առ սոյúr և լից ի վրայ ջուր» (156)։

Սոյru (161)—տե՛ս սոյur։

+ Սուլախ (42, 163)—աչքի բշտիկ (Anchilops). «Յաղագս աչից ցաւու, որ կոչի սուլախ»։

— արաբ. سلاق (sulāķ)—բշտիկ կոպի վրա, որի հետևանքով կոպը կարմրում և թերթևունքները թափվում են։

Օգ. բժ. բառարանում (էջ 511) տրված է ճիշտ իմաստը, բայց չի նշված ծագումը։ Ունի նաև Անգիտաց անպէտը՝ էջ 742։

+ Սուղաէ (107)—մի տեսակ անորոշ խոտ. «Առ սուղաէ, որ է խոտ»։

+ Սունակ (58բ)—տե՛ս սնուկ։

+ Սուսանի (57)—կապտավուն, շուշանագույն. «Եւ կայ, որ լինի կապոյտ աչք... և ասեն իր անուն սուսանի»։

— պարսկ.—արաբ. سوسنی (sūsanī) — նույն նշ.։

Օգ. բժ. ունի սուսան «շուշան ծաղիկը»։

O Սոփ (45)—ողորկ, հարթ. «Երեսն լայն և կակուղ ու սոփ՝ աղէկ է»։

— արաբ. صاف (ṣāf) — նույն նշ.։

Բառս ունի «մաքուր, ջինջ, պարզ, անկեղծ, ամբողջ, անվնաս» իմաստները, որ պահպանված է սափ (Աճառ. Չ, 155) և սօֆ (Ֆրիկ, Դիվան, 678), իսկ Սվեդիայի բրբռ.. սուպ (սուբ) ձևերով։

+ Սպավայ (42)—անստույգ նշանակությամբ բառ. «Վասն խիճիփրի, որ վերի սպավայճն լինի»։

Այս վերնագիրը բնագրում հետևյալ կերպ է թարգմանված. «Յաղագս խիչիփրի, որ ներքև անդամոյն լինի» (էջ 127)։

Սպկիկ (66, 71)—տե՛ս սպrկիկ։

□ Սպճախայտ (59)—ոսպնախայտ, ոսպնաբիծ. «[Ձին], որ մշկաբաշն ու տուբեթն սև [լինի]... և կենայ ի յինք սպիտակ դեղին մազեր նա խառն, կոչեն սամանդ յատասի, որ թարգմանի սպճախայտ սամանդ»։

Այստեղ սպճախայտ գրված է արաբ. عدسی ('adasī) (տե՛ս) «ոսպանման» բառի դիմաց. ոսպն բառի ո-ի անկումով՝ սպճ։

Հայրուսակը (§ 2827) հարցականով ունի սպօf։ Ալիշանը գրում է. «Եթէ սխալ չէ (թէև ընտիր է գրուածն) անուամբ անծանօթ՝ այլ իրօք ծանօթ ընդեղէն կամ հասարակ ուտելիք մը պիտի ըլլայ, որովհետև Ս. Բարսղի հարցմանց մեկնիչն կ'ըսէ (ԽԴ). «Կերակրոյն գիտ՝ յԱստուծոյ շնորհեցաւ Ցորեանն և Սպօfն, գործել գնոսա և ապա կերակրել»։ Աճառ. (Չ, 414) բերում է Ալիշանի բացատրությունը։

Նկատի առնելով մեր օրինակում ո-ի անկումը բառի աճման ժամանակ (ոսպճախայտ—սպճախայտ), կարելի է ենթադրել, որ սպօf-ը ոսպ-ի հոգնակի գործիականն է՝ ոսպօf>սպօf, սակայն անհասկանալի է գործիական ձևի օգտագործումը ուղղական ցոrեանի հետ։

Մաղաքիա աբեղան («Պատմութիւն վասն ազգին նետողաց», Պետերբուրգ, 1870, էջ 7) մոնղոլների արտաքինը նկարագրելիս գրում է. «Երեսքն... սպանմամբ դեղով ծեփէին» (Երուսաղեմի հրատարակության մեջ՝ սպանման): Եթե ընդունելու լինենք ոսպն>ոսպ բառի ն-ի անկումը նաև այս բարդության մեջ, ապա այստեղ խոսքը ոչ թե «սպանող դեղի» մասին է, այլ «ոսպանման» դեղի, որ ակնարկ է մոնղոլների դեմքի գույնին:

\+ Սպունկգուռ (159)—սպուկգուռ (158)—շնախաղող. վերջինս ըստ Մալխասյանցի է «մորմազգիների (Solanaceae) կարգին պատկանող թուփ, կեռասի մեծությամբ փայլուն սև պտուղով, որ շատ թունավոր է». «Սպունկգռով խարկէ (իմա՝ այրէ), (159), «Սպուկգռով խարկէ զտեղն» (158):

— պարսկ. سپنگور (sapangūr) — նույն նշ.:

Պարսկ. սապանգուր, սխալ ընթերցումով նաև՝ սապունգուր, առաջին վանկի ա-ի ամփոփումով տալիս է *սպանգուր կամ *սպունգուր: Ժողովրդական ստուգաբանությամբ այս բառը հավանաբար մեկնվել է «սպունգ» և «գունդ» (իմա՝ «բաղնիքի ավազանի սպունգ»), որը և պիտի տար *սպունգգուռ> սպունկգուռ (գրծ. սպունկգռով), իսկ ն-ի անկումով՝ նաև սպուկգուռ:

ՆՀԲ Թովմա Արծրունուց (Գ, 2) բերում է սպուզ բառը՝ «Ջփքինս (իմա՝ նետերը) կապարճիցն սպզով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւն թռուցանէր ընդդէմ սրբոցն», և մեկնում («եթէ չկայցէ սխալ գրչաց, լինի որպէս պարսկ. սէպէ). կերակուր խւզով և չոր թանով կազմեալ, ախորժ ուտելի, խայծ, կեր... Այլ լաւ ևս երևի ընթեռնուլ սպնգով, որ լինի փոխաբերութիւն»:

ՆՀԲ սպունգ բառի տակ բերում է «ընդ սպունկաւն ծածկեալ ունէր զերկաթն (Նաթան ի յանդիմանելն զԴաւիթ ոճով)» վկայակոչումը (Ոսկ. ապաշխ. 49), և եզրակացնում է. «Ի սոյն նմանութեամբ թուի բերել և բանն Արծր., որ եդաւ ի բառն սպուզ»: ՋԲ և ԱԲ նույնպես սպուզ «կերակուր» իմաստով են տալիս: ԱԲ ավելացնում է «ընդ սպնգով կամ սպրնգով ծածկեմ զերկաթ», զնետ—«վարպետութեամբ խրատել կամ յորդորել»:

Աճառ. (Չ, 408, 409), բերելով վերոհիշյալ բացատրությունները և ավելացնելով, որ Վարդանյանը (ՀԱ, 1920, 337) «սպուզ իբրև սպունգ, կցում է ասոր. spūgā ձևին, որ նույնպես զուրկ է ն ձայնից», սպուզ-ը «անստույգ բառ» է համարում:

Մալխասյանցը ընդունում է Վարդանյանի կարծիքը և բառը «սպունգ» է մեկնում, ավելացնելով, որ «կերակուր» նշանակությունը սխալ է:

Արդ համադրելով մեր հուշարձանի սպունկգուռ>սպունգուռ (գրծ. սպունգգռով>սպնգռով) «շնախաղող» թունավոր բույսը Արծրունուց վկայակոչված գրծ. սպզով բառի հետ, կարելի է ենթադրել, որ վերջինս գրչական սխալ է, պետք է լինի գրծ. *սպգռով>սպնգռով, որով Արծ. նախադասության իմաստը ճշգրտվում է. «սատակչական զօրութիւն» ունեցող թունավոր շնախաղողի հյութով «ծածկեալ» փքիները (նետերը) թռցնում են դեպի սրբերը»:

Այս մեկնությամբ հստակվում է նաև Ոսկ. ապաշխ. ՆՀԲ վկայությունը:

Սպրկիկ (52), սպկիկ (66, 71)—մաքուր, զերծ արատից:

○ Ստամոքբերան (21)—ստամոքսաբերան. կերակրափողից մուտքը ստամոքս.

«Աղէկցնէ զստամոքբերանն ու զուարճ պահէ զինք»:

Վկայված է Գրիգորիսի մոտ (էջ 84...), Անգիտաց անպէտում (էջ 743): Ունի Նորայր Բյուզանդացին (ֆրանս. բառ. էջ 881a):

○ Ստուգն (133)—կերակրափող. «Կալվի ստուգն, որ չկարէ ուտել»:

Բառս վկայված է եղել միայն ստգամբ գործիական հոլովով. ՆՀԲ դրել է ուղղական ստիգ կամ ստուգն, իսկ ԱԲ և Աճառյանը՝ միայն ստուգն:

Մեր աղբյուրը բառիս ուղղականի հնագույն վկայությունն է և հաստատում է ԱԲ և Աճառյանի բերած ձևի ճշտությունը: Գրիգորիսը (էջ 97, 102, 104...) ունի ստոյքն, ստուկքս, ստունկքն ձևերով:

Սրաւնք (47)—տե՛ս սրոնք:.

Սրաւ (98, 100)—տե՛ս սրու:

☐ Սրտբաց (85)—սրտաբաց, սիրտ բացող. «Սրտբաց տեղ լինի ու հովամուտ»:

Աճառյանը (Չ, 254) դնում է որպես նոր բառ: Մինչդեռ մեր օրինակը տալիս է բառիս հնագույն վկայությունը:

☐ Սրտելնել (73)—բարկանալ, նեղանալ. «Ջթամքն... ի վրայ դիր՝ ու սրտելնելով կամ հանց որ քշտես»:

Ցրիկը ունի սիրտ ելնել «բարկանալ, զայրանալ, խոժոռել» (էջ 677), իսկ Մալխասյանցը՝ սրտնել «մեկի վրա նեղանալ» իմաստներով:

☐ Սրոնք (սրաւնք) (47)—սրունք:

Սրու (սրաւ) (98, 100)—ձիու սրունքի վրա կարծր այտուց:

— ֆրանս. suros—նույն նշ.:

Բառս Նորայր Բյուզանդացին վերցրել է մեր հուշարձանի Վենետիկյան պատառիկից (հրատ. «Բազմավէպ» 1867, էջ 357: Տե՛ս ֆրանս. բառ. 1184ա):

Վ

☐ Վազվզտել (54)—ցատկոտել. «Վազվզտէ (քուռակն) ի վրայ մաւրն»:

☐ Վազցնել (50)—վազեցնել՝ անասուններին զուգավորել:

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 200, 201 (ՆՀԲ):

☐ Վաքար (38)—վատթար, վատ, պիղծ. «Վասն խրատուց և ճանչելոյ գրաստն ամենայն դիմաւք զլաւն ի վաքարէն»:

○ Վաղ (87)—առավոտ. «Ջառվոյտն և զֆառայն աւելի ձգէ ու զգարին թաց՝ վաղն ու յերիկունն, ու տուր, որ ուտէ»:

☐ Վանց (37, 48...)—վասն, համար, պատճառով:

☐ Վառք (91)—փայլ. «Ծայրքն մազին սպիտակ փայլկտուկ լինի, որ վառք ունենա»:

☐ Վատուժ (46)—տկար, թույլ:

(Վկայված է Գրիգորի դեղագրում՝ 1036 թ. տե՛ս Ղ. Հովնանյան, էջ 415—416. խմբ.):

☐ Վատուժիլ (69)—տկարանալ, թուլանալ. հմմտ. վատուժ: «Վատուժի ու ի յուժէ կորի»:

☐ Վատուժցնել (103)—տկարացնել, թուլացնել. հմմտ. վատուժ:

□ Վառուժութիւն (54)—թուլություն. հմմտ. վառուժ:

\+ Վլախ (44, 45, 52, 80, 82, 86)—ձիու ինչ-որ տեսակ (՞). «Որ լինի բարակ քթին ոսկորն՝ աղէկ ազգ է, և երբ լայն լինի՝ վըլախ է» (44), «Յորժամ վազցնեն վլախ ի վրայ իշու» (52)։

— արաբ. والقى (wālakkī)—ձիու տեսակ, որ օգտագործել է «արաբական խիզախ քոչվորական ցեղը» (Կամուսի Թուրք. թարգմ. հ. 3, էջ 67)։

\+ Վլախգոյն (70, 74)—վլախ (տե՛ս) տեսակի ձի. «Այս ազգ ձիս, որ վլախգոյն ձի է»։

S

\+ Տակշուր (79, 87, 122)—գրաստներին սպասարկող անձ (՞). «Եւ զայս [թամբելը] տակշուրնին կու այնեն» (79), «Եւ տակշուրնին առնուն զաւաղ գրաստնին» (87), «Եւ կան ոմանք մի ի տակշուրնին, որ աղընձեն զգարին և այնեն որպէս փոխինձ ու տան գրաստնուն» (87), «Տակշուրնին գիտեն, որ կապք կու այնեն յառվոյտն» (122)։

\+ Տաճիճ (146, 155), տայճիճ (140)—քունջութի ձեթ. «Հան զթուզն... ծեծէ, ու լից ի վրայ զարէջուր... ու միամորթէ, որ զէդ տայճիճ դառնայ» (140), «Զէդ տաճիճ լինի» (146)։

— արաբ. طحين (ṭaḥīn) — նույն նշ.։

Պահպանված է դաճնագոյն բարդության մեջ (Աճառ. Բ, 386), Աճառյանը վերցրել է Փ. Բ. հավելվածից, նշելով՝ «չէ գործածված մեր հին մատենագրության մեջ»։ Ճիշտ է մեկնել Կարստը (ՄՀԲ, թղթ. 254, վավ. 34, թուղթ. 18)։

O Տաճրկել (76)—սասանել, թափահարել, ընկճել. «Ինչվի զբազուկդ տաճրկէ զարկքն»։

— արաբ. تحريك (taḥrīk) «սասանում, թափահարում» և հյ.ել լծորդությամբ կազմված։

Բնագրում բառիս հայերեն հոմանիշը օգտագործված է հաջորդ իսկ նախադասության մեջ. «նա զարկքն ու բռումբն չարկամուն թափաճրել լինի» (էջ 33)։

Աճառյանը, բառս վերցնելով Վարդանի առակներից, Անսիզքից և Աղեքսանդրի կաֆաներից, մեկնում է «հաղթել», սակայն ծագումը հայտնի չէ նրան։ Ձգ. բժ. բառարանում Մալխասյանցը «ընկճել» է թարգմանում։ Կարստը (ՄՀԲ, թղթ. 254, վավ. 34, թուղթ. 21) բխեցնում է *տակ-ճարել կամ *տակ-ա-ճարել ձևից «հաղթահարել» նշանակությամբ և *տակճրել>տաճրկել անցումով։

Տաղ (38—61), պարսկ.—ղաղ, խարվածք, խարան։

\+ Տայար (41,148)—պատրաստություն. «Յաղագս բերնցաւի, որ տայար լինի... զայ ի բերնէ հոտած հոտ»։

— արաբ. دعر (da‘ar) — նույն նշ.։

\+ Տայխաւն (99)—ինչ-որ հիվանդություն. «Տայխաւնն... լինի յոտքն ու ի ձեռքն, որ է ցաւ, որ ի կոճին մէջն լինի յեվելված՝ իբրև զկատու կամ այլ մեծ»։

Տայճիճ (140)—տե՛ս տաճիճ։

□ Տասնևերկուf (54), տասներկու (113).

□ Տասնուերեf (66).

□ Տասնուճինգ (66).

□ Տասնումէկ (51).

\+ Տարարիճ (162)—խարանաճանճ, սպանիական ճանճ (Cantharis vesicatoria կամ Musca bispanica). «Առ զտարարիհն ու խայծղան ու դիր ի վրայ (խոյլերոյն) ու կապէ»։

— արաբ. ذراريح (dharārīḥ) — նույն նշ.՝ ذ (z)-ի տ տառադարձությամբ։

Տարեշքայf (87)—տե՛ս տրաշքայf:

□ Տարէկճակ (53)—տարեկան. «Զուննայ երկու տարէկճակն գնացքն»։

O Տարպ (75)—հարված, զարկ. «ի տարպն և զմահմեզացն (իմա՝ խթաններ|ի) հասցնելն ի ձին»։

— արաբ. ضرب (ḍarb) — նույն նշ.՝ ض (ḍ)-ի տ տառադարձությամբ։

Աճառյանը (Զ, 836) ունի տարպայ ձևը՝ նույն արմատից ضربة (ḍarba) «անգամ», սակայն բուն «զարկ» իմաստով վկայություններ չենք ունեցել։

Տարպայ (50, 51, 117), արաբ.—անգամ. տե՛ս տարպ. «Վազցնեն որպէս զառջի տարպայն» (8)։

\+ Տարֆա (149)—հարված աչքին, որից աչքը ջրակալվում է. հարվածի հետևանքով աչքի վրա առաջացած կարմրություն. «Յաղագս տարֆայի, որ է զարկեքով ի յաչքն»։

— արաբ. طرفة (ṭarfa) — նույն նշ.։

□ Տափֆիր (45)—տափակաքիթ։

\+ Տեռ (42, 102)—մտրակ, խարազան. «Յորժամ ցաւ դիպի զնքթէպն ի տեռէ և ի զարկուց» (101)։

— արաբ. ذرر (dhirr) — նույն նշ.՝ ذ (dh)-ի տ տառադարձությամբ։

Աճառյանը (Զ, 863—867) ունի հյ. տեռ, տեռն այլ իմաստներով։

Տիմետ (130,131,141), տմէտ (162), արաբ.—սպեղանիով վիրակապ։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 166 (Աճառ. Զ, 905)։

Տիփիխ (147), տփիխ (156), արաբ.—տիպխ, կոստղ (մի տեսակ խեժ) (լատ. Viscus)։

Վկայված է տիպխ, տիպղ, տապղ ձևերով (Հայբուսակ, § 2954, Աճառ. Զ. 910)։

Տլէ (144), արաբ.—կակղացուցիչ դեղ, սպեղանի։

O Տոլի (156)—սև խաղողի որթ, սև խաղող. «Առ տոլոյ մկրատկներ և ազոխ և թթու նուռն և աննուխ»։

— արաբ. دوالي (dawālī) — նույն նշ.՝ aw = աւ>օ>ո անցումով։

Աճառ. (Զ, 935) առարկելով Հայբուսակի (§ 2972) տված բացատրությանը («դդում կամ ուրիշ տարածվող բույս»), գտնում է, որ Վաստակոցի (213) վկայությունը ավելի հարմարում է «խաղողի տերևներին»՝ «Թէ տաքու-

16—1034

թին դիպի պախրէին... տոլոյ տերև տուր արածել»։ Այնուհետև Աճառ. բառի ծագումը որոշելու համար բերում է ուտիերեն tul (տուլ) «խաղող» և արաբ. دوالی (dawālī) «մի տեսակ խաղող» և ավելացնում է՝ «այս երեքի հարաբերությունը դժվար է որոշել»։

Հարցի լուծմանը նպաստում է Նաֆիսու Պարսկ. բառարանը, որը Աճառյանի հիշած dawālī բառը բացատրում է որպես «սև խաղողի մի տեսակ, որ պարսկական խուրման է. ուտելի»։ Որ հիրավի մեր աղբյուրները տոլի «սև խաղողի որթ» են հասկացել՝ հաստատում է Վաստակոցը (էջ 24). այստեղ սպիտակ խաղողը հակադրվում է տոլիին. «Բայց սպիտակ ազգն, որ մանրապտուղ է, և զտոլի սիրէ ինքն և գծաււ ի ջերմային գաւառսն, լաւահամ գինի առնէ»։

O Տոշ (39,40...)—ձիու առնանդամ։

— պարսկ. توش (tūsh) նշանակում է «ուժ». արդյոք սրանի՞ց է ծագում մեր բառը։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199, 201։ Աճառյանը (Չ, 950) բառիս ծագումը անստույգ է համարել։

Ըստ Օ. Եգանյանի տոշ Ղարադաղի բարբառում նշանակում է «երկանքի ներքևի քարի կենտրոնի ցից փայտը, որի վրա հագնում է վերի քարը» (տե՛ս նրա «Ղարադաղի բարբառ» անտիպ աշխատությունը)։

☐ Տոշգլուխ (138)—ձիու առնանդամի գլուխը. հմմտ. տոշ. «Բարակ աղաւմ խոթէ ի տոշգլուխն» (105)։

☐ Տոշփող (113, 138)—ձիու առնանդամի միզանցքը. հմմտ. տոշ. «Խոթէ բարակ աղաւմ ի տոշփողն»:

\+ Տորվանտակ (145)—նորահաս միրգ. «Առ զտորվանտակն, չորցոյ, լեաէ ու մաղէ, դիր ի յաչքն»։

— իրան. *turwandak, պարսկ. تروندە (turwanda) — նույն նշ.։

Կարստը (ՄՀԲ) Նոր ժողովածուից (III, 22) քաղելով բառս՝ տալիս է պարսկերեն ձևը։

Տուբեք (38, 45, 58, 59, 91), տուբէք (91)—մազի ցցունք ձիու ճակատին։

—Ֆրանս. toupet — նույն նշ.։

Դուբէք ձևով Ն. Բյուզանդացին վերցրել է հուշարձանիս Վենետիկյան պատառիկից («Բազմավեպ», 1867, 357. տե՛ս նաև ֆրանս. բառ. 1225)։

\+ Տուպիայ (114)—անստույգ նշ. բառ. «Այլ դեղ ելընդի, որ կոչի տուպիայ»:

Տուտէն (60), արաբ.—սալամբ թռչունը։

Աճառյանը (Բ, 60) ունի դուտէն ձևով։

\+ Տրաշպայֆ (86), տարեշպայֆ (87)—անորոշ բույս. «Եւ այն ալիկն, որ անուանեն իր տրաշպայֆ» (86), «Այս է տարեշպայֆն, որ յետև առվոյտին տան» (87)։

Տֆրնտել (71)— արգելակել, արգիլել. «Տֆրնտէ զու իր (իմա՝ ձիուն) ու կանկառ»։

Հաղորդված է նաև տֆնդել՝ ԺԳ դարից (Աճառ. Չ, 1026)։

Ց

Ցրդի (111, 155), ցրտի (146)—ցիրդ, ցրդենի։

☐ Ցրֆիլ (198)—ցրվել. «Ընթիշարն, որ թարգմանի ցրֆիլն և մէկնելն, որ լինի ի ջղերն»։

Մալխասյանցը ունի ցրֆել «թափել, ցիրուցան անել» բարբառային ձևը։ Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է։

Փ

Փաղաբուշտ (12)—միզափամփուշտ։

Աճառյանը (Ա, 1204) տալիս է նաև բաղաբուշտ, բաղափուշտ, փալաբուշտ, փաղափուշտ, փալափուշտ ձևերը։

Գրիգորիսի մոտ (էջ 11, 69 և այլն) վկայված է այս ձևը։

\+ Փաղցալ (137)—վնասել (՞). «Թէ ցաւն [ստամոքսի] ուժով լինի, որ զոր փաղցայ ու ձգէ, նա հոտած լինի»։

Աճառյանը (Ա, 920) Մագիստրոսի Գամագտականից բերում է բաղձել «անստույգ բառը»՝ վկայակոչելով Գ. Մենևիշյանին («Հանդես ամսօրյա», 1911, 551)։ Վերջինս Ա. Գր. և Երեմիայից քաղում է բաղձութիւն՝ «վնաս. տկարություն» իմաստով։

Չնայած բաղձել, բաղձութիւն բառերի ծագումը ստույգ չէ, սակայն տրված «վնաս» իմաստը ավելի հավանական է, հատկապես եթե նկատի առնենք բաղձել>*բաղձալ>*փաղձալ>փաղցալ անցումը։ Վերջինիս «վնասել» նշանակությունը միանգամայն ընդունելի է մեր բնագրում։

☐ Փայլկտուկ (55, 60, 91)— փայլփլուն. «Ի վրայ գագթանն ի մազին փայլկտուկ» (69)։

☐ Փայծաղնացաւութիւն (40)—փայծաղի ցավ (Sple´nopathie)։

Գրիգորիսը (էջ 182) ունի փայծաղնացաւ, իսկ Ամիրտովլաթը (Անգիտ. անպէտ, 749)՝ փայծղանցաւութիւն:

\+ Փաշխտիլ (83, 142, 161)—գրգռվել, շփոթվել. «Յորժամ իջնուս ի գրաստվէն ու տեսնուս որ կենայ ու փաշխտի, նա դու ի շուրջած մի կանգնեցներ» (83)։ «Երբ կենայ ու ելնէ գրաստն յախոռոյն՝ նա զէդ փաշխտած ելնէ» (142)։

— պարսկ. پشخیدن (pashkhīdan) — նույն նշ.։

Փառայ (86)—տե՛ս ֆառայ:

Փաֆալ (40, 119, 140)—հազալ (անասունների)։

Հաղորդված է Գիրք Վաստակոցում, էջ 207 (Աճառ. Չ, 1191)։

☐ Փեղ (155)—փիղ։

☐ Փնդռնել (97)—փնտրել։

☐ Փոխփոխել (77)—փոփոխել։

O Փորոֆ (39, 110, 123)—խորշ, խոռոչ. «Վասն ցաւուն, որ փորոֆացն ներքև լինի» (39), «Բժշկէ զամէն ցաւ, որ ի գրաստուն փորոֆ լինի» (110)։

Վկայված է Ամիրտովլաթի Անգիտաց անպէտում (էջ 751), որ Կ. Բասմաջյանը թարգմանում է vicéres։։ Մալխասյանցը ունի «սրտի երկու խորշերից յուրաքանչյուրը» իմաստով։

Գրիգորիսը ունի փորոզ (էջ 61, 113) և փորոք (էջ 124), որի դիմաց դնում է արաբ. աճուաֆ, որ ճոֆ (جوف—djawf) բառի հոգնակին է՝ խոռոչ իմաստով։

Փրչել (112)—ազատվել, պրծնել։

Վկայված է Անսիզքում, էջ 81 (Աճառ. Ջ, 1326)։

O Փրփիչ (155)—հավանաբար փրփրիչ խոտը, մշտականաչ քարբեկ։

Հայբուսակը (637) ունի փրփրիչ խոտ, իսկ Բեդևյանը (170)՝ փրփրիչ, փրփրիճակ (Aizoon canariense L.)։

□ Փքոիլ (108)—փքվել, ուռչել։

Այս բառը միակն է, որ Աճառյանը մեր հուշարձանից քաղել է 1906 թ., երբ Թավրիզում ծանոթացել է ձեռագրին (Ջ, 1311)։

Ք

O Քածպար (39, 117), քացպար (117)—ճաքաճման վերք (անասունների). «Յաղագս շունախի, որ է քացպարն»:

Գիրք Վաստակոցը (էջ 223) ունի քածպոր (քածբոր), որ ՆՀԲ մեկնում է «ազգ բորոյ իբրև բորոտութիւն շան», իսկ Աճառյանը (Ջ, 1338)՝ «մի տեսակ բորոտություն»։

Հիվանդության նկարագրության մեջ (էջ 117) ասված է՝ «նման է այս ցաւս ի շուկակն, ու չառնու զամէն ձեռն (իմա՝ ձիու առջևի ոտը), և ելնէ յիրմէ գիճութիւն և թարախ», իսկ շուկակը գրաստի ոտների վրա եղած ճաքերն են. արաբ. շուռճախ ևս նշանակում է «պատռվածք գրաստի ոտների վրա»։

Քանրապա (110), պարսկ.— սաթ։

Աճառյանը (Ջ, 1427) ունի քառուպա և քանրիպար ձևերով։

□ Քաղցեցնել (68)—քաղցածացնել. «Ավղցնելն չէ հայնց, որ քաղցեցնէ կամ ծարվեցցնէ»։

Քամար (66)—տե՛ս կամաթ։

+ Քամախ (100)—անստույգ նշ. բառ. «Եւ կայ ցաւ, որ ասեն իր ըոքապի, որ թարգմանի ի հայն քամախ յենլված, որ իջնու ի յակն ի ծնկացն հաստ»։

+ Քամնայ (41, 143)—տեսողության մթագնում, աչքի կարմրություն և քոր. «Յաղագս աչացաւու, որ կոչի քամնայ»:

— արաբ. كمنة (kamnat, kamna) — նույն նշ.։

Մալխասյանցը Օգ. բժ. բառարանում բացատրում է՝ «աչքի հիվանդություն, երբ թվում է, թե աչքում ցախեր և ավազ է ածած», բայց բառի ծագումը չի նշում։

+ Քամքար (141)—անգիտակցաբար. «[Գրաստն] յոտն ելնէ, ու ուքն ի մաուրն դիպի, քամքար ընկնի ի վրայն»։

— պարսկ. كمكار (kamkar) — նույն նշ.։

Բառս հնում պահլավերենից փոխ է առնվել կամակար ձևով «ինքնակամ, ազատ, ինքնիշխան» նշանակությամբ, իսկ քամքար նոր պարսկ. ձևն է, որ «անգիտակցաբար» նշանակությամբ փոխ է առնվել ավելի ուշ։

O Քայլան (38, 79, 80, 81)—հանդարտ քայլվածք ունեցող ձի. «Կան ի գրաստնին, որ լինի քայլան. և ասէ իր յարապն հմլայճ» (80)։

Աճառյանը (Ջ, 1379) դնում է որպես նոր բառ։ Մալխասյանցը բացատրում է «լավ քայլք ունեցող», արաբ. հոմանիշը՝ հմլայճ (տե՛ս) նշանակում է «հանդարտ քայլվածք ունեցող»։ Բնագրում քայլան որպես որոշակի հասկացություն է օգտագործվում՝ «Յաղագս գորգվան և քայլան գրաստուն»։

□ Քանձ (51, 53...)— քանց, ինչպես, ոնց։

Քաշ, քաշք (59, 58բ, 93)—սնակուշտ. «Եւ [բոլորնին] ոչ ատած է և ոչ սիրած... որ լինի ի քաշքն» (59), «Քաշքն բարձր ու սոթոթ գոված է» (58բ)։

Բառս մեկ անգամ հաղորդված է Բարսեղ Կեսարացու թղթերում (ՆՀԲ, Աճառ. Ջ, 1392)։

Քաշիկ (70, 123)—ձիու փորքաշ, թամբի տակ։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 198 (Աճառ. Ջ, 1392)։

□ Քաշկել (77)—գրաստին փորքաշ անցկացնել, հագցնել. հմմտ. քաշիկ. «Կայ գրաստ, որ ի հեծնուլն և կամ ի քաշկելն սոսկայ», «Առաւել ափրի գրաստն... եք մերկիկ հեծնուն և եք առաւել պինդ քաշկեն»։

Քաշտեղ (95)—գրաստի փորքաշի հարած տեղը. հմմտ. քաշիկ. «Եւ այն [ձին], որ չթողու, որ թամբեն... նա լինի ի շատ մկնատմերոյն (իմա՝ չըչրուկ), որ ելնէ... ի քաշտեղն»:

□ Քաջու ղունգ (155)—դևի եղունգ խեցեմորթը, որ ծովային կենդանի է. «Առ քաջու ղունգն... լեսէ և մաղէ և խառնէ ի տահինն ու շփէ ի գրաստն»։

Միջնադարյան բժշկական գրականության մեջ ունենք դևի եղունգ, որ Ալիշանը (Հայբուսակ, § 587) որպես բույս է ընդունել։ Նորայր Բյուզանդացին («Հանդես ամսօրյա», 1921, 103) աշտիպ բառը ճշգրտում է Գաղիանոսի մի տարընթերցումով և Ամիրտովլաթի Անգիտաց անպէտի մի վկայությամբ, որտեղ հիշատակված է արաբ. ազֆալ ըլ տիպ ծովային կենդանին. վերջինիս հայերեն անվանումը ըստ Ամիրտովլաթի դիւու ըղունգ է՝ «յերկայն, ի սատաֆ կու նմանի»։

Դեհխոդայի Պարսկ. բառարանը շատ մանրամասն տալիս է այս խեցամորթու նկարագրությունը. արաբ. ճշգրիտ անվանումը ազֆար աթ-թիբ է— اظفارالطيب (aẓfār al-ṭīb), որ պարսիկները դևի եղունգ, արջի եղունգ, սատաֆի եղունգ են ասում. Դիսկորիդոսը սատաֆի տեսակ է համարում, որ ստացվում է հնդկական կղզիներից, կարմրավուն է և հաճելի հոտ ունի, օգտագործվում է որպես օծանելիք. օգտակար է ստամոքսի, լյարդի և այլ հիվանդությունների բուժման համար։

Հայտնի է, որ հնում հայերի մոտ քաջքերը համարվում էին «դևեր ու սատանաներ», հետևաբար պետք է ենթադրել, որ քաջու ղունգը նույն ինքը դևի եղունգն է:

+ Քարաք (39, 109)— հիվանդություն՝ քոսով վարակված, բշտիկներ ու քոր ունեցող կենդանի. «Յաղագս ցաւուն, որ կոչի քարաք» (109)։

— պարսկ. گرگ (garg) — նույն նշ.։ Պարսկ. گ (g) գիրը միջնադարյան պարսկ. և արաբ. ձեռագրերում գրվում էր և կարդացվում նաև ك (k) որից և հայ. քարաք:

□ **Քարկապոյտ** (56, 60)—կապտավուն. «Եւ թե լինի սև մազերն ի սպիտկին մէջն, որ կապոյտ գոյն քշտի. ասեն իր **քարկապոյտ**» (56)։

Մալխաս. **քարկապոյտ** մեկնում է «Մի տեսակ բաց կապոյտ ներկ»՝ որպես գավառական բառ։ Մեր օրինակը բառիս հնագույն գրավոր վկայությունն է հայերենում։

\+ **Քարտուշ** (55)— խարտյաշ. «Եւ կայ ի բաց խարտեշ, որ լինի մազծայրքն և մազտակքն սպիտկգոյն ու բաշն ու ագին ու տուբեթն սպիտակ։ Եւ կոչէ պարսիկն իր **քարտուշ**»:

Բառս պարսկերեն բառարաններին ծանոթ չէ, իսկ հայերեն **խարտեաշի** ծագումը ևս անհայտ է։ Երկու բառերի մեջ ընդհանուր է տուշ-տեաշ (երբեմն՝ տեշ) վերջնամասնիկը։ Պետք է ենթադրել, որ սա իրանական آتش (ātash) «կրակ, բոց» բառն է, որ ā-ի անկումով կիրառվում է և ժամանակակից պարսկերենում tash ձևով։ Հայտնի է, որ հյ. **խար** արմատը (առանձին անգործածական) իր մեջ ունի և «կրակ» իմաստը (**խարել** «այրել», **խարույկ** «կրակ») (տե՛ս Աճառ. Գ, 397)։ Հյ. **խարտեաշ** և պրսկ. **քարտուշ** բառերը, որ ունեն «դեղնակարմիր, ոսկեգույն դեղին» նշանակությունը, ենթադրում են իրանական *khārtash հիմքը։

Քաւել (51, 68, 76)—բացի, միայն, միայն թե, ոչ այլապես քան։

Վկայված է Անսիզքում 21, 51 (Աճառ. Ջ, 1433)։

Քացպար (117)—տե՛ս **քածպար**:

O **Քափշայ** (151)—փրփուր, քափ. «Առ արծթի **քափշայ**, ոսկոյ ալլիմիա... լեսէ գդեղերն և մաղէ»։

— պարսկ. كفچ (kafč), كفچه (kafča) — նույն նշ.։

Կարստը (ՄՀԲ, թղթ. 254, վավ. 37, էջ 97) ճիշտ է նշում ծագումն ու իմաստը։ Աճառյանը (Ջ, 1437) բառս քաղում է Երզն. երկն. ԻԲ «Շանթն... յոր ինչ դիպի այրէ և անցանի և մնայ որպէս երկաթի **քափշայ**» և մեկնում է որպես պարսկ. kafča կամ kapča «շերեփ», որ Երզնկացու տվյալ բնագրում հասկանալի չէ. մինչդեռ «փրփուր» նշանակությունը հստակ է դարձնում նախադասության իմաստը. շանթը դիպչելով որևէ իրի՝ այրում է և «երկաթի **քափշայի (փրփուրի)**» պես հետք է թողնում։

O **Քաֆուր** (125), պարսկ.—քափուր (Camphora)։

Բառս հնում փոխ է առնված պահլավերենից **քափուր** ձևով, իսկ ավելի ուշ նաև՝ պարսկ.—արաբ.-ից كافور (kāfūr) **քաֆուր**:

\+ **Քըմ** (44)—բերանակապ (անասունների). «Եւ սիրած է կրտած ձիան, որ **քըմի** դնէն»։

— արաբ. كم (kam) — նույն նշ.։

□ **Քըմճիաճ** (44)—բերանկապը հանած (անասուն). Համմտ. **քըմ**. «**Քըմճիաճ** երթան»։

□ **Քըշիք** (46), **քշիկ** (51), **կշիկ** (73)—քչիկ, քիչ, սակաւ։

□ **Քթաճարիլ** (141) — գայթելով քթի բերանի վրա ընկնել. «Ջի երբ [կոճն] ղորդ լինի՝ նա կանկնի ջեղքն, ու երբ էջ՝ նա **քթաճրի**»:

Մալխասյանցը ունի **քթաճարել**: Մեր օրինակը հնագույն գրավոր վկայությունն է։

□ **Քթաճրաճ** (94), **քթաճրկոտ** (94)—սայթաքող, գայթող. Համմտ. **քթաճարիլ**. «[Գրաստը] խիստ **քթաճրաճ** լինի» (94)։

□ **Քթաճրել** (40, 73, 141), **քթաճրիլ** (76)—տե՛ս **քթաճարիլ**:

Քթաճ (141, 148), պարսկ.—քաթան, կտավ։

Քթեր (107, 112)—քաթանից պատրաստված վիրակապ, պատրույգ։

\+ **Քթիրայ** (122, 137), **քիթիրէ** (105)—գազախէժ, խազիրան (Astragalus Tragacantha L.)։

— արաբ. كثيرا (kathīrā), պարսկ. كتيرا (katīrā) — նույն նշ.

1438 թ. ձեռ. բժշկ. բառիս դիմաց դնում է «արաբ. **քթիրէ**, լատ. տրակակդում (= tragacanthum) (Կարստ, ZFAP 146)։ Oգ. բժ. ունի **քթիրա**, իսկ Անգիտաց անպէտը՝ **քաթիրայ** ձևերով։

Քիթիրէ (105)—տե՛ս **քթիրա**:

O **Քիսէ** (88, 131)—տոպրակ, քսակ. «Ջմեռն ի վրայ ճլին **քիսէ** անցոյ» (88)

— պարսկ. كيسه (kīsā) — նույն նշ.։

Բառս հնում **քսակ** ձևով փոխառյալ է պահլավերենից (Աճառ. Ջ, 1544), իսկ հետագայում նոր պարսկ-ից՝ **քիսէ**: Մալխասյանցը տալիս է **քիսա**, **քիսիկ** գավառական ձևերը։

\+ **Քիքք** (10)—աչքի բիբ. «Իջնու ընդ քիթն թարախ **քիքքին** և չուննայ հոտ»։

— պարսկ. كيك (kīk) — նույն նշ.։

\+ **Քլաֆ** (55)—սևախառն կարմիր կամ դեղնախառն սև. «Եւ կա ոսկէգոյն քումայթ (իմա՝ արմավագոյն), որ է դեղին փայլկտուկ կարմրգոյն, այտ նման է յոսկոյն գոյնն. եւ ասէ իր յարապն քումայթ **քլաֆ**»:

— արաբ. كلف (kalaf) — նույն նշ.։

Քլիլմելէք (105)—աքլիլմելիք, արքայապսակ։

Հաղորդված է **էքլիլ մէլիք**, **էքլիլ-իւ-մէլիք** (Աճառ., Ա, 844), և **աքլիլըլ-մէլէք** (ZFAP, 135) ձևերով։

O **Քճատեղ** (133)—քունք. «**Քճատեղացճ** երեակքն ղայրնայ»։

Բառիս հնագույն գրավոր վկայությունն է։ Մալխաս. տալիս է որպես հազվադեպ բառ։

Քուբ (148)—տե՛ս **խուբ**:

Քումայթ (55), արաբ—արմավագույն ձի։

Վկայված է Գիրք Վաստակոցում, էջ 199 (Աճառ. Ջ, 1519)։

\+ **Քուճյախա** (105)—անորոշ տեսակի բույս. «Եւ ապա [առ] աղցած **քուճյախա**»:

Նման մի բառ ունի Նաֆիսու Պարսկ. բառարանը՝ արաբ. كنها (kunhā), որի տերևները նման են սրճի թփի տերևներին։ Շտեյնգասը նույնը բացատրում է որպես «գինի նմանվող բույս»։ Եթե **քուճյախա**-ն նույն արաբ. kunhā-ն է, ապա հասկանալի է արաբ. h-ի տառադարձումը յ-ի, բայց պարզ չէ **խա** վերջավորությունը։

\+ **Քուռկցաւ** (40, 37), քուռակների խոզք՝ գեղձախտ հիվանդությունը. «Այս ցաւս [խոզք] շատն ի քուռկնին լինի և կոչի **քուռկցաւ**»:

\+ **Քունճայ** *(119, 146)—անստույգ նշ. բառ. «Լից ամէն քթափողն* **քունճայ** *մի» (119), «Արա* **քունճայ** *մի ու լից ընդ փողքն ի վայր (146)։*

\+ **Քուսայ** *(40, 129)—ցրտառության մի տեսակ. «Է ազգ մի ի գայլցաւէն» (129), որ «է հովութիւն» (107)։*

— *արաբ.* كساح (kusāḥ) *«գրաստների հիվանդություն»։*

Չպիտի շփոթել **քոսակ, քոսա** *«մազազուրկ դեմք» բառի հետ։*

□ **Քչկնալ** *(110)—քչանալ (Մալխասյանց)։*

□ **Քչկցնել** *(66)—քչացնել, պակասեցնել։*

O **Քրըզմել** *(162), հուն.—մազը թափել բաղնիսի ցեխով. «***Քրըզմէ** *զոտքն և դիր զմիսդ [պախրէի] ի վերայ»։*

Ն. Բյուզանդացին (ֆրանս. բառ. 1107բ) ունի միջ. հյ. **քրիզմա** *«մազ թափելու արևելյան դեղ, բաղնիսի ցեխ», որի ծագումը Աճառյանը (Զ, 1552) դնում է հունարենից։ Սրանից էլ կազմված է* **քրըզմել**։

Քրման *(161)—Քիրման՝ նահանգ հարավ-արևելյան Իրանում։*

Օ

□ **Օթ** *(146)—օդ։*

Օթխօր (աւթխաւր) *(105), արաբ.—վաղամեռուկ, տղմի կնյուն։*

Աճառյանը (Զ, 40) ունի **աթխար**. *հաղորդված է նաև* **ադխար, օթխար, իթխիր** *ձևերով։*

□ **Օկտել** *(131, 134)—օգտել, օգնել։*

□ **Օկտութիւն** *(83)—օգուտ, օգտակարություն։*

□ **Օղ** *(95)—ողն։*

Ֆ

\+ **Ֆախատ** *(100)—ազդրի հիվանդություն. «***ֆախատ** *ցաւ է, որ քաշվի կոճացն չեղն ու կարճնայ»։*

— *արաբ.* فخذ (fakhdh) —*«ազդր, զիստ», արաբ.* ذ (dh)*-ի հյ.* **տ** (դ) *տառադարձությամբ։*

\+ **Ֆախր** *(118)—բժշկության մեջ օգտագործվող ընդեղենի տեսակ. «Առ զդեղն, որ կոչի* **ֆախրի** *հութ»։*

—*պարսկ.* فاخره (fākhrah) — *նույն նշ.։*

\+ **Ֆառայ** *(38, 83, 84—87),* **փառայ** *(86)—խոտի ցողուն. «Յորժամ տաս* **զփառայն** *կամ զառվոյտն»։*

— *պարսկ.* پره (parra) — *նույն նշ.։*

Բառս **փարայ** *ձևով հաղորդված է Գրիգոր Մագիստրոսի ԺԴ թղթում. «ափրոդիտականն նուաղեալ թառամի կարօտացեալ* **փարայի** *ի ծարակածպտել այս օգնականութեան». իսկ* **փառայ** *ձևով Գիրք Վաստակոցում՝ էջ 52. «Եւ այլ ոմանք* **զփառային** *կոթէքն (այլ ձեռ. կոթերն) փետեն ի գետնէն և ի վերայ զտունկն ծածկեն, նոյնպէս և ներքև, նա լաւ պահէ. և թէ զնոյն ինքն* **փառայն** *դնես»։*

ՆՀԲ բառս մեկնում է «կանեփուկի նման գետնաճապաղ և գրգռիչ բոյս»։ Սա Գիրք Վաստակոցի հրատարակիչ Ղ. Ալիշանին, ըստ երևույթին, չի բավարարել, ուստի նշել է, որ «փառայ բոյս անծանօթ է մեզ» (անդ. էջ 52, տողատակ)։ Հայբուսակում նույնպես այն բացատրված չէ։ Աճառյանը և Մալխասյանցը ևս կասկածով են ընդունել ՆՀԲ բացատրությունը։

\+ **Ֆասխ** *(99)—անասունների ոտքերի տեղից դուրս ընկնելը. «***Ֆասխն**, *որ լինի յոտքն և ի ձեռքն... թուլնայ զաւզվածքն և ելնէ ի տեղացն»։*

— *արաբ.* فصخ (faskh) — *նույն նշ.։*

\+ **Ֆարխութզին** *(103, 105)—մրտենու տակ. «Դեղ, որ ասեն իր* **ֆարխութզին**՝ *մրտի տակ»։*

Այս բուսանունը մեզ մատչելի բառարաններում չենք գտել, սակայն Բրիտանական գրադարանի Or. *3483 պարսկերեն ձեռ. Զիամատյանը (էջ* 25b) *հիշատակում է* برخودزين (barkhūdzīn) *հոտավետ բույսը։ Մեր «Բժշկարանում, ինչպես բերված է վկայակոչման մեջ, բառս բացատրվում է որպես* **մրտի տակ**, *իսկ* **մուրտը** *կամ* **մրտենին** *հոտավետ է։ Հետևաբար կարելի է ենթադրել, որ այստեղ ունենք նույն բառը՝ պարսկ.* b*-ի հյ.* ֆ *տառադարձությամբ. հմմտ.* **բազուֆ, ֆնտու**։

\+ **Ֆարպիուն** *(126)—իշկաթնուկ* (Euphorbium)։

— *արաբ.—պարսկ.* فربيون (farbiyūn) — *նույն նշ.։*

*1438 թ. ձեռ. բժշկ. ունի «***ֆարպիուն**». *արաբկերէն* **ֆրպիուն**. *ի լատինն էոյֆաւրպիում»* (=Euphorbium) *(Կարստ.* ZFAP, *135, 148)։ Օգ. բժ. ունի* **ֆարֆիոն**, *որ բառիս արաբական ձևն է՝* فرفيون (farfiyūn)։

Ֆարցին *(39)—տե՛ս* **ֆրացին**։

\+ **Ֆնտու** *(38, 40, 83, 88, 106, 127, 130, 142, 161)—տիզ միջատը (՞). «Ու գարի մի տաս և ոչ ջուր, զի* **ֆնտու** *այնէ» (83), «***Ֆնտուն** *այնէ ու աւիրէ զամբակքն» (88)։*

Արդյոք պարսկ. بندو (bandū) *նույն նշ. բա՞ռն է՝ պարսկ.* ب (b)*-ի հյ.* ֆ *տառադարձությամբ։*

Ֆռանկ *(111)—տե՛ս* **ֆռանճ**։

\+ **Ֆռասկցի** *(159)—ֆրանսիացի, ֆրանսիական. «Առ... սպիտկդեղ* **ֆռասկցի**»։

— *Միջնադարում պարսիկները ֆրանսիացիներին* **ֆրասիսի** *են կոչել՝* فراسيسى (farāsīsī). *Թերևս հյ. սրանից է առաջացել.*

O **Ֆրանճ** *(111),* **ֆռանկ** *(111)—ֆրանգ, եվրոպացի, եվրոպական. «Առ...* **ֆրանճի** *մուշկի ունդ», «Առ* **ֆռանկի** *մուշկի ունդ»։*

— *պարսկ.* فرنج (farandj), فرنگ (frang) — *նույն նշ.։*

\+ **Ֆրացին** *(119),* **ֆարցին** *(39)—ձիու ուսի ջիղ (՞). «Յաղագս վիրաց, որ ի* **ֆրացինն**, *որ կոչի ձիախոց».*

— *արաբ.* فريصة (fariṣat) — *նույն նշ.։*

Ֆրիկ *(53)—Բահրեյն կղզում անապատ (*فريق (Farik), *ըստ Շտեյնգասի)։*

\+ **Ֆրպուլ** *(67)—Ֆարպիո՞ւն (տե՛ս). «Երբ ցամքի [քրտինքն]՝ նա դու սրբէ* **ֆրպուլովն**»։

ЛЕЧЕБНИК ЛОШАДЕЙ

(Резюме)

На территории армянской возвышенности лошадь была известна еще с древнейших времен. Как свидетельствуют источники, на востоке Малой Азии уже в 1900—1700 годах до н. э. использовали лошадей, впрягая их в военные колесницы. На древнем Востоке, в Малой Азии, Сирии, Армении и в горных районах Кавказа, наряду с рогатым скотом, в качестве вьючных животных использовались и лошади[1]. Уже в первом тысячелетии до н. э. Армения была известна как страна, где разводили породистых лошадей и других вьючных животных, где коневодство было одной из основных отраслей хозяйства. Лошади использовались здесь и в земледелии, и в садоводческих работах и в виноградарстве, а также скотоводстве. Их постоянно использовали также в военных целях[2].

«Нагорья Ирана и Армении,—пишет И. М. Дьяконов,—предоставляли прекрасные возможности для развития коневодства: не только во II, но и в начале I тыс. до н. э. разведение лошадей, по-видимому, плохо удавалось на равнинных территориях Передней Азии, и поэтому хотя свое коневодство было развито и здесь, но основным источником для пополнения конского состава древневосточных армий оставались горные районы, особенно восточная Армения, бессейн озера Урмия—Резайе и северные районы Ирана»[3].

---

[1] См. *С. К. Межлумян,* Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972, стр. 89.

[2] См. *Н. В. Арутюнян,* Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 20.

[3] *И. М. Дьяконов,* Предыстория Армянского народа, Ереван, 1968, стр. 42.

О развитии коневодства в древней Армении свидетельствует Ксенофонт (430—354 гг. до н. э.) и Страбон (I в до н. э.). Ксенофонт в своем известном труде «Анабасис» пишет, что в Армении для персидского царя разводили лошадей, посылаемых ему в качестве подати[4]. Ксенофонт, являющийся одним из первых знатоков коневодства (см. его «Искусство объезживания лошадей»[5]), добавляет, что «Тамошние (т. е. армянские) кони меньше персидских, но много их горячее»[6]. Три века спустя более интересные подробности сообщает Страбон, согласно которому Армения «имеет прекрасные пастбища для лошадей, в чем она не уступает Мидии, так что несайские лошади, которые служили персидским царям, воспитываются и здесь, а армянский сатрап посылал Персу ежегодно до 20 000 жеребят для празднества Митры»[7].

В Библии имеется сообщение о том, что в городах Финикии продавались лошади и мулы, привозимые, «Из дома Фогарма» (Книга пророка Иезекииля, гл. 27, § 14).

И армянские и иноязычные источники подтверждают, что Армения еще до арабских завоеваний, особенно во время правления Аршакидов, имела мощную военную конницу.

Позднее, в X в., как сообщает Ибн Хаукал, армянские шахри (черные породистые мулы) своей выносливостью, красотой, живостью и терпеливостью были известны в Ираке, Сирии и Хорасане[8].

Традиции коневодства продолжались в Армении и в последующие века. После образования Киликийского армянского царства в XI в., развитию коневодства также уделяли большое внимание. Это вполне понятно, ибо укрепившееся в стране армянское государство расширяло свои политические

---

[4] См. *Ксенофонт,* Анабасис. Перевод, статья и примечания М. И. Максимовой, М.-Л., 1951, стр. 113.

[5] *Xenophon,* VII, Scripta Minora, Translated by E. C. Marchant and G. W. Bowersock (Loeb Classical Library), 1968, p. 296—369.

[6] *Ксенофонт,* там же.

[7] См. *Арутюнян Н. В.,* указ. раб., стр. 174.

[8] См. Opus Geographicum auctore Ibn Haukal, ed. J. H. Kramer, Lugduni, 1938, p. 346.

и экономические связи со многими соседними и дальними государствами и княжествами, улучшились сравнительно и условия мирной жизни народа. Для укрепления политической и военной мощи страны, для обеспечения обороны против усиливающихся внешних врагов, армянские правители должны были уделять еще большее внимание развитию и укреплению экономики страны и, в частности, развитию сельского хозяйства, расширению внутренней и внешней торговли. Все это, естественно, создавало благоприятные условия для расцвета практических наук.

Самые ранние письменные свидетельства о ветеринарии дошли до нас из древнего Египта, Вавилона. В Индии, Иране, древней Греции и, по всей вероятности, в Урарту, имелись ветеринары-специалисты по лечению коней. В греческих источниках упоминаются авторы руководств по коневодству и ветеринарии, такие как Ксенофонт (430—354 гг. до н. э.), Иероклей (III в. до н. э.), Апсирт (IV в. до н. э.), Феомнест (время его жизни не известно) и другие[9], а в X веке, по поручению императора Константина Порфирородного, были составлены общие руководства по коневодству и земледелию, под названием «Геопоника» и «Гиппатрика», в которых были обобщены достижения древних специалистов в этих областях. Отдельные руководства по коневодству и ветеринарии сохранились в индийской, арабской и персидской литературах.

В одном из древнейших произведений персидской литературы, в «Кабуснамэ» (XI в.) 25-ая глава содержит интересные сведения по коневодству[10]. Имеющиеся в этом памятнике описания достоинств и пороков лошадей, перечисление их масти, названий их заболеваний—свидетельствуют об обширных познаниях автора в коневодстве и ветеринарии, а наличие в этом произведении арабской терминологии говорит о том, что знания арабов в области коневодства в XI веке имели уже глубокие традиции, и соседние народы, в том числе и персы, уверенно их использовали.

Целостные арабские рукописные тексты по коневодству известны уже с начала XIII в.[11]. К этому же времени относятся и сохранившиеся персидские рукописи по коневодству[12].

Несколько арабских и персидских пособий по коневодству позднего средневековья были изданы в начале двадцатого века вместе с французским и английским переводами. Из них нам известны «Коневодство» Рангина и одноименная работа Забардастхана, которые были переведены на английский язык Д. С. Пиллоттом, прослужившим 30 лет в английском кавалерийском полку в Индии[13]. Хорошо зная местные традиции, он смог уточнить основную терминологию, использованную в этих книгах, особенно если принять во внимание, что терминология по средневековому коневодству полностью не отражена в словарях или не всегда правильно истолкована. Следует отметить также усилия Л. Мерсье и Г. Леви Делла Виды в деле перевода арабских коневодческих трудов[14].

Самостоятельные работы по коневодству не известны в средневековой Армении, но поскольку на ее богатых пастбищах паслись сотни тысяч коней, надо предполагать, что лечение и уход за ними должны были осуществляться коневодами и ветеринарами, имевшими специальные практические знания.

---

9 См. *Геопоники,* Византийская сельскохозяйственная энциклопедия X века. Введение, перевод с греческого и комментарий Е. Э. Липшиц, М-Л., 1960, стр. 345—346.

10 قابوس بن وشمگیر زیار، قابوسنامه، باتصحیح و مقدمه و حواشی عبدالمجید بدوی، تهران، ۱۳۴۲، ص ۱۰۵. (*Кабус ибн-Вешмгир Зиар,* Кабуснамэ, Введение и комментарии Абд ол-Маджида Бадави, Тегеран, 1342/1963, стр. 105).

11 ابراهیم شبوح، فهرست المخطوطات المصورة، الجزء الثالث، العلوم القسم الثانی، الطب، القاهره، ۱۹۵۹، ص ۱۶۹. (*Ибрахим Шабух,* Каталог иллюстрированных рукописей, т. 3, Науки, ч. 2, Медицина, Каир, 1959, стр. 169).

12 См. Catalogue of the Persian MS in the British Museum, by Charles Rieu, v. II, p. 480—482.

13 *Zabardast Khan,* The Faras-nama, Edited in the Original Persian with English notes by D. C. Phillott, Calcutta, 1911.

14 La Parure des Cavaliers et l'Insigne des Preux, par Louis Mercier. Paris, 1924; Les „Livre des Chevaux" de Hišam Ibn al-Kalbi et Muhammad Ibn al-Arabi, par G. Levi Della Vida, Leyde, 1928.

Известные в армянской средневековой литературе произведения по коневодству, в хронологическом порядке следующие:

1. «О свойствах и породах лошадей и кобылиц, ослов и жеребят, советы и лечение».—Таково содержание 16-ой главы греческой книги «Геопоника», которая включена в армянскую «Книгу труда» (XIII в.), занимая в ней 294—310 главы. Сведения, имеющиеся в этой (то есть в 16-ой) главе, «об уходе за лошадьми, лечении их, об ослах, верблюдах,— пишет автор научного перевода «Геопоника» на русский язык Е. Липшиц (1960 г.),—находят немало аналогий у древних писателей—авторов «Гиппиатрик» и «Кинегетик». Они сравнимы и со сведениями, имеющимися у римских агрономов—Варрона (II в.), Колумеллы (VI в.), Палладия (IV в.), а также у Плиния (VIII в.)[15].

2. «О лечении лошадей».—По распоряжению армянского царя Гетума II этот труд был переведен на армянский язык в 1263 году неким Степаносом, одновременно с текстами, касающимися сталеварения, кузнечного и оружейного дела и астрологии. Однако эти произведения, к сожалению, до нас не дошли[16].

3. «Лечебник лошадей...».—Это пособие по коневодству, на котором мы подробнее остановимся ниже, было составлено врачом Фараджем на армянский язык по приказу армянского царя Смбата в 1296—1298 годах.

4. «Из лечебника для вьючных животных».—Рукопись эта, состоящая из 5-ти листов неполного текста, находится ныне в Библиотеке венецианских Мхитаристов (имеет 1—19 и 29—30 главы). Она была опубликована в Вене в 1887 году в журнале «Базмавеп». Первое же сравнение с предыдущим «Лечебником» показывает, что данный отрывок является кратким изложением некоторых частей «Лечебника» Фараджа.

[15] См. «Геопоника», стр. 345.

[16] См. журнал «Базмавеп» (на арм. яз.), Вена, 1867, стр. 354.

5. В 1788 году по заказу принца, сына последнего грузинского царя, Георгия, с армянского языка на грузинский был переведен труд по коневодству. Основой для грузинского перевода послужил список «Лечебника» Фараджа, переписанный в городе Себастии в 1504 году.

Грузинский перевод был осуществлен священниками Осесдзе и армянином Тер-Петросом, при участии Филиппа Гайтмазяна и его сына Тер-Самвела[17].

6. «Лечебник для лошадей и мулов, и ослов, который повелел написать царь Хосров».—Этот небольшой текст написан в 1696 году в ванском монастыре Огоц, рукою вардапета Лазаря. Рукопись эта хранится в Матенадаране им. Маштоца, под № 454.

7. «О заболеваниях и опухолях лошадей».—Этот текст в двух страницах находится в Лечебнике, написанном в XVIII в. и хранится сейчас в Матенадаране под № 550 (стр. 18—19). Место создания рукописи неизвестно. Здесь вкратце дается описание приемов лечения некоторых заболеваний лошадей.

* * *

Среди перечисленных врачебников и пособий по коневодству наиболее ценным и целостным является издаваемый «Лечебник» Фараджа, рукописный список которого в 1906 году видел в Тебризе (Иран) известный арменовед, проф. Г. Ачарян. Это произведение он характеризует как «редкую по содержанию и письму» рукопись. Ачарян, не имея достаточного времени, успел лишь познакомиться с рукописью, описал ее и переписал памятную запись. По этому поводу он пишет: «Это редкая и очень интересная рукопись является сокровищницей армянских терминов по коневодству и ветеринарии, так что полное изучение этой книги даст как общее представление о знаниях в этой области, так и обогатит многими новыми словами армянский словарный фонд.

[17] См. газету «Советакан Айастан» (на арм. яз.), 1968, 24 июля, № 171.

До последних лет следы этой рукописи были утеряны и лишь в 1972 году нам посчастливилось увидеть ее в США, в городе Лос-Анджелесе у одного армянина—Заре Сараджан, и получить ее микрофильм. Рукопись хранилась бережно и заботливо и находилась в том же состоянии, в каком она была при Ачаряне.

Описание рукописи.

Время—XIII в. (1296—1298 гг.). *Место*—г. Сис. *Писец*—священник Торос. *Заказчик*—царь Смбат III. *Листов*—184. *Материал*—бумага. *Размеры*—16×18. *Письмо*—болоргир. *Строка*—17. *Миниатюры-рисунки*—философ Джна (4а), рисунок коня, с характеристиками положительных и отрицательных черт частей его тела (33б), клейма коня (37б, 39б), заставки (7а, 34б), маргинальные украшения (7а, 8а, 34б, 40а, 101а), *орнаментированные инициалы* (7а, 34б, 40а, 101а). *Переплет*—дощечка, обтянутая кожей. *Защитный лист*—пергамент (X—XI вв.)—2 (А, Б)+2 (Г, Д). *Состояние*—хорошее.

Примечание: В начале рукописи не хватает перечня I—XII глав, а в конце—части памятной записи. Оглавления выполнены киноварью.

Памятная запись (стр 183—184):

«Написан Лечебник лошадей и вообще вьючных животных, чтобы познали хорошее и плохое, по приказу армянского христолюбивого, мудрого, вдумчивого и талантливого и благочестивого царя Смбата. При патриаршестве армянского католикоса владыки Григориса эта книга Лечебник коней и вообще вьючных животных была переведена с арабского на армянский язык, с трудов многочисленных ученых и философов Джна, Аби-Юсуф, Рашид и многих других ученых Индии, Багдада и т. д., имена которых не называем.

И я, ничтожный врач Фарадж, по приказу моего повелителя святого царя, предпринял и с большими усилиями перевел правильным и ясным слогом, так как я был очень умелым и много лет изучал искусство врачевания в великом городе Багдаде. По национальности и верованию я—сириец и православный. Осуществил этот перевод в столице Сисе.

Меня, Тороса, ничтожного священника, увидел врач Фарадж и упросил, и настоял, и много пообещал, и поклялся от имени святого и избранного царя. И когда я узнал волю святого царя, я предпринял и переписал и снова обновил [т. е. отредактировал] и написал крупными буквами с арабского письма на армянское правильно и ясно...» (продолжение отсутствует).

Лечебник состоит из 182 глав. Первая глава имеет характер маленького предисловия, 2—4 главы посвящены познанию лошадей, 11—15 главы—беременности и жереблению лошадей, 16—21 главы—мастям, отметинам и закрученной шерсти (закрученной форме шерсти на теле лошадей), 22—31 главы—уходу за ними, 32—47 главы—порокам разных частей тела, 48—187 главы полностью посвящены заболеваниям лошадей и их лечению.

Упоминание в памятной записи о переводе этого «Лечебника» с арабского языка не следует понимать в прямом смысле слова. Известно, что и в средние века, и позже, вплоть до конца прошлого века, с переводимыми трудами обращались довольно свободно. Нередко переводчик делал собственные добавления и сокращения. Большой знаток истории армянской медицины, проф. Л. Оганесян пишет, что в средние века в медицинской литературе под словом «перевод» чаще всего понимали работу, составленную на основе иноязычных источников[18]. В этом смысле и следует понимать запись Фараджа о переводе.

Сравнение данного армянского труда по коневодству с доступными нам арабскими и персидскими пособиями такого рода выявляет определенную общность их структуры и содержания. Но есть и явные несходства и авторские вмешательства, что заставляет нас думать, что врач Фарадж, сле-

[18] См. *Л. А. Оганесян,* История медицины в Армении, ч. II, Ереван, стр. 173.

дуя арабским коневодствам, написанным «Джна, Абу-Юсуфом, Рашидом и др.,» по подобию их трудов составил свое пособие.

И действительно, следует отметить сложность и чрезмерную подробность аналогичных арабских и персидских средневековых трудов, в частности, большое значение, которое они придают мастям и их неуловимым оттенкам для познания положительных и отрицательных черт коней. Это очень усложняет повествование и затрудняет восприятие материала, тогда как описание заболеваний коней и методы их лечения занимают сравнительно мало места. Кроме того, нужно отметить, что в персидских коневодствах, исходя из суеверного подхода к масти, десятки страниц посвящены описанию событий жизни пророка Магомета и его сподвижников, обращая особое внимание на роковое значение того обстоятельства на коне какой масти они сидели во время сражений. В нашем памятнике врач Фарадж уделил сравнительно мало места описанию мастей и их оттенков, и наоборот, широко осветил вопросы, касающиеся ухода, заболеваний и лечения коней.

Что «Лечебник» врача Фараджа действительно является самостоятельным произведением, свидетельствуют следующие факты: первая глава текста, которая носит характер предисловия, изложена с точки зрения христианского мировоззрения. Даже более, в ней имеются определенные следы армянского мышления. Само армянское слово *дзи* «лошадь» связывается с прилагательным *дзиг* «натянутый, стройный», и народной этимологией истолковывается как «стройно выступающий и быстро скачущий»; среди клейм, выжигавшихся на лошадях, упоминаются клейма с армянскими буквами; в разделе о талисманах приведен один из них с армянскими буквенными знаками; к числу добавлений, сделанных переводчиком, вероятно, можно отнести и те замечания, которые сделаны от первого лица и в которых сказано, что предлагаемое то или иное лечение испробовано на опыте; иногда же предлагается иной, новый метод лечения. Переводчик Фарадж, как он сам говорит, в течение многих лет в г. Багдаде приобрел большое умение и опыт в «искусстве врачевания», следовательно, в данном «Лечебнике» должна была отразиться хотя бы часть этого опыта.

Обширное заглавие труда—«Лечебник коней и вообще вьючных животных»—не полностью соответствует содержанию, которое в действительности относится и к вопросам коневодства и лечения коней. Дело в том, что в средние века, как утверждают специалисты, в арабской науке, и следуя этому в данном памятнике, коневодство (hyppologie) не отличается от ветеринарии.

Врач Фарадж осуществил свою цель со всей добросовестностью специалиста: он упоминает свои источники, называя их авторов по именам, как в тексте, так и в памятной записи, даже в начале рукописи поместил графический портрет ученого Джна.

С целью облегчить понимание текста Фарадж нарисовал лошадь и рядом с каждой частью тела написал ее положительные и отрицательные черты.

В настоящем этапе развития ветеринарии, когда придается большое значение опыту прошлого, средневековому и народному лечению, несомненно большой интерес могут представить и армянские средневековые медицинские пособия, оригинальные или переводные. Известно, что до позднего средневековья, лечением людей и животных мог заниматься каждый, носящий имя врача. В лечении людей и животных названия заболеваний и средства их лечения были почти одинаковыми.

Оценивая настоящий памятник как важное явление в культурном наследии средневековой Армении, следует отметить также его значение как *памятника среднеармянского языка.* Как в XII в. армянский ученый медик Мхитар Гераци написал свое сочинение «Утешение при лихорадках» на доступном народном языке, чтобы оно «было понятно всем читателям», так и в XIII в. целый ряд сочинений, имеющих практическое значение, в том числе и «Лечебник» Фа-

раджа, были изложены на разговорном народном языке. Этим объясняется наличие в труде Фараджа многочисленных армянских сложных слов (105 слов), а также иностранных, в основном, арабских, иранских и даже несколько французских слов и коневодческих терминов (всего 146), не записанных в армянских толковых словарях. Надо предполагать, что эти армянские сложные слова и часть заимствованных слов были издавна употребляемыми в армянской разговорной речи.

Названия лекарственных трав, упомянутых в лечебнике достойны внимания. Известно, что средневековая армянская медицинская литература уже с X—XI вв. использовала «Словарь» врача Галиана, во время создания нашего «Лечебника», в конце XIII в., а точнее в 1294 г., уже в армянских рукописях переписывался словарь под названием: «Перевод имен лекарств».

Возможно, что врач Фарадж и священник Торос имели под рукой этот и аналогичные словари и пользовались ими. Но необходимо сказать, что в их «Лечебнике» есть имена нескольких лекарственных трав, которые не записаны в армянских словарях.

В «Лечебнике» сохранены также названия некоторых мер и весов, использовавшихся в Киликийской Армении, которые представляют интерес с точки зрения изучения экономической жизни Ближнего Востока.

Учитывая исключительную ценность этого «Лечебника», в этой книге полностью публикуется его текст. В конце книги прилагается обширный словарь, где истолковываются все те слова и термины, которые впервые встречаются в армянской литературе. В словарь включены и диалектные формы, встречающиеся в тексте «Лечебника».

Книга снабжена двумя предметными указателями: указатель болезней лошадей и других вьючных животных и указатель названий лекарств.

ՑԱՆԿ

ՁԻՈՒ ԵՎ ԱՅԼ ԳՐԱՍՏՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[1]

Ագոյն ոսկրին կոտրելն 101
Ագու փետելն 41
Ականջացաւութիւն 41
Ականջացաւ 148
Ակռա թուլնալն ու շարժիլն 42, 156
Ակռաց ու լինդքին ուռվիլն 41
Աչացաւ, որ կոչի քամնայ 143
Աչացաւութիւն 42
Աչից ցաւ, որ կոչի սուլախ 163
Աչքի սպիտակումն 41, 145
Ասահար տե՛ս ռայսայ
Արգանդի դուրս գալն 41, 151
Արեխան տե՛ս յարաղան
Արիւն գողելն 158
Արծվեցաւ 138
Արծվիք 40
Արոյն գալն ընդ ռոն 42
Արոյն գալն ի քթացն 41, 156
Արոյն շռելն 42
Աւել մազ ի կոպքն 157
Աւ(օ)ձի խայթ 133

Բարակցաւ 40, 69, 103, 140
Բերնցաւ, որ տայար լինի 148
Բեեոհաս 42, 90, 181, 160
Բէճցաւ 101
Բոր 41, 148, 153, 154

Գայլցաւ, որ է հովութիւն 39, 40, 107, 120, 129
Գարի անարատ թրքելը 41, գարու անարատ անցումը 155
Գլխացաւ 89, 123
Գոզարգել 40, 127, 128, 129, 133
Գորտն ի բերանն 42, 156
Գորտն (կանաչ) ուտելն 157
Գրաստուն խոնճացումն 154

Դաշտիկ 39

Ելունդ ի փողքն 39, 40, 140
Ելունդ, որ կոչի տուպիայ 114
Երիկամնացաւութիւն 41, երիկամնացաւ 151

Զարկք ի յաչքն 149
Զաւ(օ)դվածաց դողոցն 40, 134
Զըմըն 100
Զօդվածաց դողոցն տե՛ս զաւդվածաց դողոցն

Ըղտացաւ 39, 126
Ընթիշար, որ է ցրքիլն ու մէկնելն 98
Ըռքապի 100

Թավասուֆ 41, 140
Թութ ի սմբակն 41, 143
Թութ ի տոշն և ի ձուքն 39, 112
Թութ ի քիթն 42, 159
Թութ յաչքն 41
Թուլնալն կոճաց տե՛ս կոճաց թուլնալն
Թոքցաւ, թոքցաւութիւն 40, 136

[1] Անծանոթ հիվանդությունների բացատրությունները տրված են Բառարանում:

Իրթէհաշմ 102
Իրիկամնացաւ տե՛ս երիկամնացաւութիւն

Լերդացաւ 126, լերդացաւութիւն 39
Լնդացն ու ակռատկոցն ուռվիլն 157
Լնդացն ուռենալն 157

Խայթ օձի տե՛ս աւձի խայթ
Խայթ կորի տե՛ս կորի խայթ
Խիճիփար ի վերի սպավայքն 42
Խիչիփար ի ներքև անդամոցն 158
Խիչիփար յոտքն և ի ձեռքն 99
Խոզմազ յագին 158
Խոզք 137
Խոյլ 162
Խոյլ ի կոճացն 42
Խոյլ ի փորն 41, 156
Խոյլք, որ ելնէ ի յողնն և յայլ տեղատան 102
Խոստուկ տե՛ս խոցտուկ
Խոց գազանարի 40, 143
Խոցեր 105, 117, 120
Խոց մեղրագոյն 42, 159
Խոց յաղիքն 40, 138
Խոցտուկ 132, խոստուկ 40
Խումահ 101
Խումրութիւն 39, 42, 112, 160
Խունան 38, 102, 106, 137
Խունան անդմաց 103
Խունան զաւ(օ)դվածաց 103, 117
Խունան չոր 103, 104
Խունան սրտի 103

Ծածուկ կաղալ տե՛ս կաղութիւն

Կաղամբ (վայրի) ուտելն 40, 134
Կաղութիւն ծածուկ 96, 38
Կանաչ գորտն ուտելն 157
Կերիչ ցաւ, որ է դաշտիկ 39
Կիծ 85, 88
Կիծ ի սմբակնին և յոտվին 42, 157
Կոլինչ 39, 41, 115
Կոճաց թուլնալն 41, 152
Կոտրած, որ ծուռ կցի 40
Կոտրտուկ 39, 108
Կորի խայթ 40, 133

Հազ 146
Համր 38, 106
Հարտք 101
Հաւկոյր 41, 92, հաւկուրութիւն 152
Հաւու ծիրտ ուտելն 40, 136
Հերքոյն 41, 151
Հլեյիճ, ցաւ 39, 119

Ձիսխոց 119

Ճարատ 42, 94, 162, ճերատ 99, 100
Ճիճ ի գրաստուն փորն 40, 135
Ճփնի ուտելն 151

Մազեր ի կոպքն 42
Մազկեր յագին 42
Մազն ոտիցն ի վայր գալն 161
Մաղձ, որ զաւրնայ 39, 108
Մկնատամ 39, 95, 118
Մկնացաւ 39, մկնացաւութիւն 115
Մուլահ 101
Մրչմոց 101

Յաղար 38, 99, 101
Յախալ 100
Յասամ 102
Յարաղան 150, արեխան 41

Նասուր 42, 157
Նեքթաֆ, որ է բէճցաւ 101
Նըկրիս, նկրիս 40, 130
Նուֆախ 100
Նքթէպցաւ 101, տե՛ս նաև նեքթաֆ և բէճցաւ

Շլնիին ծռութիւն 149
Շող առնելն 141
Շուղաղ տե՛ս շուկակ
Շուկակ 42, 100, 117, 140, 162, շուղաղ 40
Շունախ 117
Շտեր ի բերանն 148

Ոչիլ բնակիլն ի գրաստ 114
Ոռի դուրս գալն ու շրջիլն 40
Ոսկոր կոտրիլն 141
Որովայն ի դուրս գալն 129
Ուղտացաւ տե՛ս ըղտացաւ
Ուռէց և քամի ի փորն 39
Ուռէց ի ծունկն 162
Ուռէց յարանքն և ի ձուքն 114
Ուռէց յոտվին 41, 144
Ուտիճ, ուտիչ 116, 117

Պախրէցաւ 39, 112
Պաճար 101
Պատխունամ 39, 118
Պիսկոտումն գրաստի 40
Պնչերաց յիրար գալն 159
Պրսամ 147, պրսեմ 41

Ջերմ 39, 125

Ռամատիս 39, 119
Ռայսայ, որ է բևեռահաս 131, սասահար 40
Ռեպու ցաւ, ռեպցաւ 39, 121, 137
Ռքապի տե՛ս ըռքապի

Սապալ 41, 150
Սարդոստէնի ուտելն 133
Սաւտայէ լինող ցաւ 39, 110
Սմբակբերանի ցաւ 40
Սմբակցաւ 40, 142
Սպիտակցաւ 139
Սպիտկութիւն յոտքն կամ ի ձեռքն 149
Ստամոքցաւ 40, 135
Սրաւ(օ)ս 98, 100
Սրաւ(օ)ս ի խալիկն 98
Սրաւ(օ)ս ի ծունկքն 98
Սրաւ(օ)ս ի սրաւ(օ)նացն 98
Սրտացաւութիւն 40, 127

Վզի ծռումն 41

Տայար 41, 148
Տայխաւ(օ)ն 99
Տարֆայ տե՛ս զարկք ի յաչքն
Տզրուկ կլելն 132
Տզրուկի փակչումն 40
Տոշի յարումն ու չնստելն 40, 138
Տոշի կեղեքումն 41, 148
Տոշի ու ձուքի ուռենալն 39
Տուպիայ 114

Ցաւ ի գրաստուն գլխոյն ղուղն 110
Ցաւ ի գլուխն տե՛ս գլխացաւ
Ցաւ ի յաճուկն 42, 158
Ցաւ ի յորովայնն 141
Ցաւ ի սաւտայէ 39
Ցաւ ի սմբակբերանն 142
Ցաւ ի փորքաց ներքսեն 39, 109, 123
Ցաւ յարանքն ու ի ձուքն 113
Ցաւ յոռն 41
Ցրքիլ ու մեկնել տե՛ս ընթիշար

Փայծաղնացաւութիւն 40, փայծղան ցաւ 128
Փողցաւ 133, փողցաւութիւն 40

Քածպար 39, 117, քացպար 117
Քամի ի փորն 39
Քամի յերչքն 39
Քամնայ աչացաւութիւն 41, 143
Քարաք 39, 109
Քար ընկնիլն ի յականչն 156
Քացպար տե՛ս քածպար
Քթահարում 141
Քուռակ ձգելն 41, 156
Քուռկցաւ ի կզակն 40
Քուսայ, որ է ազգ ի գայլցաւէն 40, 129

Օձի խայթ տե՛ս աւձի խայթ

Ֆախատ 100
Ֆասխ յոտքն ու ի ձեռքն 99
Ֆնտու 38, 40, 83, 88, 106, 127, 130, 142, 161

ՑԱՆԿ ԴԵՂՈՐԵԻՑ[1]

Ազոխ 157
Ազոխջուր 129
Ալոյր 144, 155, 157
Ալոյր բակլայի 113, 117
Ալոյր գարէ (գարի) 135, 144, 153, 156
Ալոյր Եփրատ 159
Ալոյր ցորենի 131
Ալոյր քուշնայի 117, 119, 144, 148
Ալոյրի խմոր 143
Ախլիմիայ (ոսկոյ) տե՛ս աղլիմիայ ոսկոյ
Աղ 130, 131, 132, 135, 139, 141, 144, 154, 155, 157, 158
Աղ հնդկցի 125, 161
Աղ կտրածու 144, 145, 149, 160
Աղ մանտր 118, 119
Աղ պարսիկ 108
Աղբրաց արոյն 169
Աղլիմիայ արծաթոյ 150, խլիմիայ արծրթի 145
Աղլիմիայ ոսկոյ 150, 151, ախլիմիայ (ոսկոյ) 145
Աղջոյրի խիզարուկ 132
Աղվանաղի 105, 137, աղվանեղի 127
Աղվէսու արոյն 131
Աղվէսու ճրագու 155
Աղվնի լղպոր ձագի արոյն 149
Աղտոր 112
Աղտորի խէժ տե՛ս խէժ աղտորի
Ամբրաւ 115, 125, 135, 136, 144, 150, 162
Այգոյհաւ(օ)տ 161
Այծի (այծու) կաթ տե՛ս կաթ այծի
Այծմնու լեղի տե՛ս լեղի այծմնու
Այծու ճրագու տե՛ս ճրագու այծու
Անգուժատ 108, 121, 134, 147, 155, 156 158, 160, անկուժատ 125
Անիսոն 158
Անծրութ 113, 139, 150, 151, 160, 161
Անկուժատ տե՛ս անգուժատ
Անմեռկի բազկի ջուր 104
Անմեռկի հնդի ջուր 137
Աննխի հունդ տե՛ս հունդ աննխի
Աննխի ջուր 132, 133
Աննուխ 157
Արդար եղ տե՛ս եղ արդար
Արծթի քափշայ տե՛ս քափշայ արծթի
Արծվոյ ճրագու տե՛ս ճրագու արծվոյ
Արոյն աղվէսու տե՛ս աղվէսու արոյն
Արոյն աղվնի լղպոր ձագի տե՛ս աղվնի լղպոր ձագի արոյն
Արոյն խոչքորի տե՛ս խոչքորի արոյն
Արջասպ 105, 131, 143, 144, 145, 159
Արջասպ կիպրաւ(օ)սցի 143
Ասարաւ(օ)ն 151
Ատալայ 137
Արծաթոյ աղլիմիայ տե՛ս աղլիմիայ արծաթոյ
Արծթի խլիմիայ տե՛ս աղլիմիայ արծաթոյ
Արծթի քափշայ տե՛ս քափշայ արծթի

[1] Անծանոթ դեղամիջոցների բացատրությունները տրված են Բառարանում:

Աւ(օ)թխաւ(օ)ր 105
Աւ(օ)շակ 159
Աւ(օ)շընդրի ջուր 104
Աւ(օ)շինդր 158
Աւ(օ)շնան 109, 118, 139, 157, 162
Աւ(օ)շնան սպիտակ 116
Աֆիոն 159

Բակլայ 121, 127, 144
Բակլայի ալոյր տե՛ս ալոյր բակլայի
Բամբկի կտի մէջ 160
Բաշխտակ 111, 125, 147
Բարձվենեկ 133
Բերեկի, բեպբեկի, բեպեկի, բեեկի խէժ տե՛ս խէժ բեեկի
Բեեկ 120, բերեկ 127, բեպբեկ 130, բեպեկ 136
Բողկի հունդ տե՛ս հունդ բողկի
Բողկի տերև 139
Բուրակ 106, 110, 113, 114, 116, 117, 121, 122, 126, 127, 139, 134, 136, 138, 143, 150, 153, 162, բուռակ 121
Բուրակ հացի 110
Բուրակ Քրմանի 161
Բվի լեղի տե՛ս լեղի բվի
Բվի ղուղ տե՛ս ղուղ բվի

Գարէ ալոյր տե՛ս ալոյր գարէ
Գարէջուր 137, 140, 144, 147
Գարէ փոխինդ տե՛ս փոխինդ գարէ
Գարի 107, 112, 120, 130
Գարի ալոյր տե՛ս գարէ ալոյր
Գարի փոխինդ տե՛ս գարէ փոխինգ
Գի պտուղ 155
Գինի—132, 141, 154, 156, 158
Գինի ամբակ տե՛ս գինի անպակ
Գինի ամպակ տե՛ս գինի անպակ
Գինի անապակ 109
Գինի անպակ 107, 110, 117՛ 121, 122, 155, 156, գինի ամբակ 128, գինի ամպակ 114, 123, 129, 130, 131, 133, 134, 136, 142, 147, 158
Գինի հին 105, 108, 111, 116, 125, 144, 147, 151
Գինձ չոր 122
Գխտոր տե՛ս գղթոր
Գղտոր 117, 138, 147, 151, գխթոր 161
Գոզ՝ խոզի (որձ) 112
Գոզ պախրէի 120
Գորտ 143, 157
Գում 111

Դաղձ 135
Դաղձ այրած 131
Դաղձ լեռին 106
Դաղձ վայրի 106
Դդում 117
Դեղնխունկ 111, 112
Դեղ հոռոմ տե՛ս հոռոմ դեղ
Դեղ սպիտակ տե՛ս սպիտակ դեղ
Դմակ 140, 142, 154
Դմակի եղ տե՛ս եղ դմակի

Եղ արդար 110, 112, 119, 120, 139, 169
Եղ դմակի 142
Եղէգ 112
Եղէգ հին 145
Եղի ջուր 110
Եղ կովուց 139, 140, 157, 161
Եղիճ 113
Եղրդակ 157
Եղրդկան ծաղկի հունդ 122
Եփրատ ալոյր տե՛ս ալոյր եփրատ

Զաուկ 143
Զաուկ այրած 151,
Զաուկ դեղին 114, 116
Զաուկ կարմիր 114, 116
Զաֆրան 104, 105, 106, 111, 122, 139, 145, 146, 150, 151, 154, 155, 156
Զրնճուֆր 160
Զրնճպիլ 105, 116, 139, 155, 156
Զուֆայ 105
Զպիպճեպէլ 115
Զրևանդ 105, 111, 125, 143, 159

Ջրևանդ յերկայն 159

Ըղտու կուտկակ 160
Ընկուզի (դալար) կեղև—157
Ըռզիան 123, ռզիան 143

Թառանգոյն 115
Թզենոյ տերև 132
Թզի ջուր 158
Թմբրհնդի 156
Թուզ 118, 135, 140, 141, 157, 158
Թուզ խակ 157
Թուզ սպիտակ 161
Թութիայ 150
Թութիայ հնդկցի 145
Թրակէս 133
Թրմզի ջուր 137
Թրմուզ 115

Ժանգառ 105, 106, 107, 145, 146, 151, 159, 160
Ժանգջուր 105

Լանթակ 119
Լեղի այծմնու 152
Լեղի բվի 112
Լեղի կաքֆու 139, 163
Լեղի պախրէի 131, 158
Լեղկի ունդ 150
Լովիաս 141

Խալիզոն 145
Խախաց 133
Խախիայ 116, 117, 160
Խախուլայ 111
Խաղող սպիտակ 104
Խայծղան 126, 142, 143, 149, 152, 154, 162
Խանդարիուն բարակ 105
Խանդիխունի, խանդիկոնի, խանտիխունի, խընդխունի շարապ տե՛ս շարապ խանդիխունի
Խաշխշի քամուկ 104
Խարբախ 144
Խարբախ սպիտակ 108
Խարտաս 144
Խէժ աղտորի 160
Խէժ բևեկի 120, 121, 130, 156, 160, խեժ բեբեկի 127, խէժ բեպեկի 136
Խէժ յարապիկ—159, 162. տե՛ս նաև սամղ յարապի
Խէժ ձիթենոյ 162
Խէժ փիճոյ 118, 120, 131, 160
Խընդիխունի շարապ տե՛ս շարապ խանդիխունի
Խիար սատանայի 106, խիարուկ սատանայի 134
Խիզարուկ աղջոյրի տե՛ս աղջոյրի խիզարուկ
Խիմաղիայ կաւ 113
Խիշիփար 145
Խիշիփար գետուտի 158
Խիշիփար ծովու 145
Խիշիփրի ճրագու տե՛ս ճրագու խիշիփրի
Խլի ձէթ տե՛ս ձէթ խլի
Խլիմիայ արծթի տե՛ս աղլիմիայ արծաթոյ
Խլիմիայ ոսկոյ տե՛ս աղլիմիայ ոսկոյ
Խլխտիս 105
Խմոր ալոյրի տե՛ս ալոյրի խմոր
Խնկենոյ տերև 161
Խնկի փոշի 120, 121, 160
Խնձորի (եփած) ջուր 134
Խնձոր՝ թակի 161
Խոզի աղբ 117
Խոզի (որձ) գոզ 112
Խոզի գում 111
Խոզի միս 142
Խոզկաղնի 104
Խոզտի 104, 108, 118, 120, 121, 138, 145, 156
Խոշքորի արոյն 111
Խութ, խըթ, խթ 82, 83, 86
Խունկ 119, 126, 130, 160
Խուպայզ 104
Խըրնճող այրած 151

Ծայթրին 155
Ծարոյր 118, 139
Ծծում 127, 154
Ծծում դեղին 153, 159

Կաթ 113, 122, 137, 161
Կաթ այծի 135, 137
Կաթ մաւ(օ)ր 153
Կալէքար 116, 120
Կաղամբ 104, 130
Կաղամբ տանոյ 135
Կաղամբի ջուր 129, 155
Կաղըմբի տերև 116
Կանափ վայրի 144
Կանիփայստիզ 115
Կապնդեղ 123
Կասլայի ձեթ տե՛ս ձեթ կասլայի
Կասլայի ծառի մատղաշ ծիլ 133
Կասլայի մատղաշ տերև 129
Կասլայի տերև 128
Կասլայի պտուղ 103, 127, 128, 136, 146, 152
Կարագ 147
Կարագ քաղցր 118
Կաւ ու ձէթ 128
Կաւ(օ)դայի հունդ տե՛ս հունդ կաւ(օ)դայի
Կաւ(օ)ստ 137
Կաքֆու լեղի տե՛ս լեղի կաքֆու
Կիմուլիայ կաւ 150
Կիպերոս 105
Կիր 143, 144, 148, 157
Կիր ապակ 116
Կղբու ձու 131, 138
Կղիմիտր սպիտակ 120
Կովուց եղ տե՛ս եղ կովուց
Կոտման հունդ (ունդ) տե՛ս հունդ կոտման
Կոր 157
Կորիագի 107
Կուդայ 147
Կտաւատ 128, 155
Կրիայի (ծովու) արոյն 134
Կօդայի հունդ տե՛ս կաւ(օ)դայի հունդ
Կօստ տե՛ս կաւ(օ)ստ

Հազրի հունդ(ունդ) տե՛ս հունդ հազրի
Համամայ 105, 106
Հայխունկ 111, 128, 131, 145
Հաշայ 133
Հացհամեմ 69, 146, 161
Հացհամեմի ունդ տե՛ս հունդ հացհամեմի
Հաւիճ 133
Հաւկթի խեճեպ 145
Հաւուկիթ 103, 109, 111, 125, 140, 141, 144, 147, 156
Հաւու (սպիտակ) ծիրտ 136
Հիլիաւ(օ)նի շարապ տե՛ս շարապ հիլիաւ(օ)նի
Հինայ 117, 151
Հինայի ձէթ տե՛ս ձէթ հինայի
Հինդպէ 147
Հլելիճ դեղին 115, 119
Հլելիճ սև 125
Հնդիկ սևուկ տե՛ս սևուկ հնդիկ
Հոռոմ դեղ 107, 108, 110, 115, 127, 130, 132, 138, 144, 150
Հոռոմ ձէթ տե՛ս ձէթ հոռոմ
Հոռոմ ձէթի մրուր 117, 153, 159
Հունդ աննխի 135
Հունդ բողկի 107, 127
Հունդ (ունդ) լեղկի 150
Հունդ կաւ(օ)դայի 104
Հունդ կոտման 146, 155
Հունդ (ունդ) հազրի 104
Հունդ հացհամեմի 155, 162
Հունդ մարտակուշի 146
Հունդ մոշոյ (սև) 125
Հունդ մուշկի (ֆրանկի, ֆրանճի) 111
Հունդ ռզիանի 147
Հունդ քրեֆսի (քրէֆսի) 151, 158

Ձէթ 158
Ձէթ խլի 121

Ձէթ կասլայի 154
Ձէթ հինայի 109, 112
Ձէթ հոռոմ 103—110, 121—123, 126—135, 141, 142, 144—150, 152, 155, 157, 159, 160, 162
Ձէթ մանիշկի (մանուշկի)—103, 119
Ձէթ մրտի 103
Ձէթ մրտի (վայրի) 121
Ձէթ նշի (լեղի) 142
Ձէթ շիրիկ 109, 111, 114, 144, 146, 148, 151, 154, 155
Ձէթ պալասանի 145
Ձէթ վարդի 105, 113, 118, 125, 130, 137, 140, 151, ձեթ վարթի 104
Ձիթապտուղ 140
Ձիթենոյ խէժ տե՛ս խէժ ձիթենոյ
Ձիթենոյ տերև 148
Ձոյթ սև 109, 115, 117, 126, 138, 143, 153, 156, 160
Ձուկ աղի 119

Ղուղ բվի 112
Ղունդ քաչու տե՛ս քաչու ղունդ

Ճակընդեղ 131, 155
Ճակընդղի բազուկ 110
Ճակընդղի ջուր 164
Ճաւ(օ)շիր 105, 109, 111, 121, 135, 144, 150, ջաւ(օ)շիր 105
Ճիճ 126
Ճոն 106
Ճուլինար 157, 160
Ճրագու 131, 142
Ճրագու աղվէսու տե՛ս աղվէսու ճրագու
Ճրագու այծու 121, 158
Ճրագու արծվոյ 112
Ճրագու խիշիփրի 139, 157
Ճրագու հին 146
Ճրագու պախրէի 113, 130
Ճրագու սագու 130
Ճրագու փեղի 155
Ճրագու քաւ(օ)շի 130, 159—162
Ճփնոյ տակ 159

Մաղտաքէ 135
Մախրի ջուր 153
Մամիրան 139, 163
Մանիշկի, մանուշկի ձէթ տե՛ս ձէթ մանիշկի
Մատուտակ 122, 126, 150, 151, 158
Մատուտակի տերև 162
Մարգարիտ անծակ 145
Մարեմայ տակ 115
Մարտակուշի հունդ տե՛ս հունդ մարտակուշի
Մարտսանգ 150, 151, մարտսանք 118
Մաւ(օ)րմուր 112
Մաքոյ պճեղ տե՛ս պճեղ մաքոյ
Մեղր 103, 106, 109, 110, 114, 115, 117, 119, 122, 123, 126, 127, 132, 136, 139, 143, 144, 145, 147, 148, 150, 152, 154, 155, 157, 158, 161, 162
Մեղրջուր 103, 104, 105, 110, 130, 134, 136, 137, 146, 148, 153, 158
Մլուխի տերևի ջուր 155
Մկնսոխ 106
Մնթուր 121
Մնջանի տակ 160
Մոմ 113, 117, 118, 123, 138, 158, 159, 162
Մոմ սպիտակ 151
Մոշի փայտ 149
Մոշի փոշի 120
Մոշոյ (սև) հունդ տե՛ս հունդ մոշոյ (սև)
Մոշոյ (սև) տերև 125
Մոշոյ ցախ 128
Մորհամ սև տե՛ս սև մորհամ
Մորմենոյ տակ 141
Մորմենոյ տերև 112
Մուղլ ջուհուտ 109, 121, 134
Մուշրխայ 116
Մուշկ 138
Մուշկի (ֆրանկի, ֆրանճի) հունդ տե՛ս հունդ մուշկի
Մուռ 104, 105, 106, 128, 145, 160

Մտէտ մարի 160
Մրվայ գինի 122
Մրտի ծաղիկ 103, 111
Մրտի ձէթ տե՛ս ձէթ մրտի
Մրտի տակ 103, 111, 115, 135
Մօրմուր տե՛ս մաւ(օ)րմուր
Մօր կաթ տե՛ս կաթ մաւ(օ)ր

Յամբար 155
Յամմիր 87
Յատպէ 119
Յերդ 112
Յիշոցք 118, 126, 149, 154

Նանխաւ(օ)հ 155
Նատիֆ 132
Նատրուն 106
Նարընջի ծաղկի ջուր 107
Նաւդ, նաւթ սպիտակ 126, 152
Նաւթ 154
Նաւթ սև 142
Նշադիր 145
Նշդարենի ծառի տերև 143
Նշի (լեղի) ձէթ տե՛ս ձէթ նշի (լեղի)
Նոոսֆունկառ (՞) 143
Նուշ 109
Նուշ լեղի 151, 158
Նուռ թթու 157
Նուռ խակ 157
Նռան կեղև 138
Նրճէսի սոխ տե՛ս սոխ նրճէսի

Շահմիհանդալ 145
Շահմիհանդալի տակ 118
Շայէորէճ (՞) 111
Շան լեզու 143
Շարապ խանդիխունի 120, 133, շարապ խանդիկոնի 133, 151, շարապ խանտիխունի 151, շարապ խընդխունի 105
Շարապ հիլիաւ(օ)նի 151
Շաքար 111, 113, 116, 139, 156, 163
Շաքար սպիտակ 122

Շաքար տապարզի տե՛ս տապարզի շաքար
Շաֆքաւ(օ)րան 158
Շիրիկ ձէթ տե՛ս ձէթ շիրիկ
Շուշմայ 60
Շրէշ 160

Ողկուզուկ 126
Ոսկի խլիմիայ տե՛ս աղլիմիայ ոսկոյ
Ոսկոյ աղլիմիայ տե՛ս աղլիմիայ ոսկոյ
Ոսպ 130, 157
Ուկուզայ 69
Ուղտի կուտկակ տե՛ս ըղտու կուտկակ

Չաման 111, 125, 144, 146, 155
Չամիչ 113, 146
Չամիչ խարտեշ կտէն հանած 146
Չամիչ կտէն հանած 122, 144, 147
Չամչի ջուր 137
Չարհոտ 109, 118, 127, 151, 160

Պալասանի ձէթ տե՛ս ձէթ պալասանի
Պախրէի գոզ տե՛ս գոզ պախրէի
Պախրէի լեղի տե՛ս լեղի պախրէի
Պախրէի թաժա թրիք 131
Պախրէի (պախրի) ճրագու տե՛ս ճրագու պախրէի
Պախրէի (պախրի) միս 149, 162
Պաղլեղ 114, 115, 118, 148
Պանի պտղի քամուք 128
Պապունիճ 110
Պենիթ 122, 139, 155
Պզրղայտուն 129, 132, 135
Պլելիճ 151
Պղպեղ 103, 111, 122, 145, 146, 152, 156
Պղպեղ երկար (յերկայն) 139, 145, 163
Պղպեղ սև 133, 145, 150
Պղպեղ սպիտակ 133, 136, 139, 145, 150, 163
Պճեղ մաքոյ 116

Ջանդիանէ 103
Ջաւ(օ)շիր տե՛ս ճաւ(օ)շիր
Ջուհուտ մուղլ տե՛ս մուղլ ջուհուտ
Ջրկոտիմ 105, 123

Ռասան 116
Ռասուխտ 159
Ռեանդ 103, 104, 122, 162
Ռզիան տե՛ս բոզիան
Ռզիանի հունդ տե՛ս հունդ ռզիանի
Ռզիանի ջուր 150

Սագու ճրագու տե՛ս ճրագու սագու
Սալիխա 137
Սակամունի 115, 132, 155
Սամիթ 136
Սամղ յարապի 122, տե՛ս նաև խէժ յարապիկ
Սանդալ կարմիր 151
Սապո 105, 106, 160
Սատանայի խիար, խիարուկ տե՛ս խիար սատանայի
Սատանայի սեխկի տակ 158
Սատանայի սեխուկ 153, 158, սատանայի սեղուկ 114
Սաւ(օ)նուպար 136
Սաւ(օ)նապրի խէժ 160
Սաւ(օ)նաւ(օ)պրի ծառի տերև 158
Սաւ(օ)նաւ(օ)պարի կուտ 122
Սաւ(օ)սի ծառի տերև 130
Սեխուկ, սեղուկ սատանայի տե՛ս սատանայի սեխուկ
Սեսեռ տե՛ս սիսեռ
Սերկևլի կուտ 145
Սև մորհամ 160
Սևուկ հնդիկ, ընդիկ 154, 156, 162
Սինապ 110, 154, 159, 164
Սիսեռ 130, 141, 156, սեսեռ 121
Սխտոր 131, 142, 146, 161
Սխտոր այրած 146
Սղանճ 108
Սնդիկ 115
Սնֆուլ 111
Սոխ 131
Սոխ նրճէսի 160
Սոյսր 156, սոյրս 161
Սուղաէ 107
Սպիտակ դեղ 151, 153
Սպունկգուռ 159, սպուկգուռ 158
Ստեպղնի տերև 139
Սօնուպար տե՛ս սաւ(օ)նուպար
Սօսի (սաւսի) ծառի տերև 130

Վարդի ձէթ տե՛ս ձէթ վարդի
Վարդջուր 147, վարդի ջուր 150, 153

Տայհին 140, տահին 146, 155
Տապարզի շաքար 111
Տարարիհ 162
Տիմէտ 141
Տարեշթայք տե՛ս տրաշթայք
Տիփխ 147, 156
Տլէ 144
Տղտի ջուր 155
Տղտի տակ 118, 142
Տոլոյ մկրատկներ 157
Տորվանտակ 145
Տուղտ 141, 145, 150
Տրաշթայք 86, տարեշթայք 87

Ցմխտակ 154
Ցորեն 107
Ցորենի ալոյր տե՛ս ալոյր ցորենի
Ցրդի (ցրդոյ), ցրտի պտուղ 111, 144, 146, 155

Փեղի ճրագու տե՛ս ճրագու փեղի
Փիճոյ խէժ տե՛ս խէժ փիճոյ
Փոխինդ գարէ 139, գարի փոխինդ 112, 136
Փրփիչ խոտ 155

Քահրպայ 110
Քաղցու եփած 133
Քապրցախ 144, 157
Քաջու ղունգ 155
Քացախ 106—108, 112—115, 118, 119, 127—129, 131, 134—136, 138, 140, 148—152, 154—157, 159, 161, 162
Քացխի մրուր 158
Քաւ(օ)շի արոյն 121
Քաւ(օ)շի լերդ 152
Քաւ(օ)շի ճրագու տե՛ս ճրագու քաւ(օ)շի
Քափշայ արծթի 151
Քաֆուր 125, 139, 145, 147, 151, 163
Քթիրայ, քթիրէ 105, 122, 137
Քլիլմելէք 105
Քունյախա 105
Քուշնայ 120, 130
Քուշնայի ալոյր տե՛ս ալոյր քուշնայի
Քուռաթ 104, 135
Քուռթի ջուր 123, 139, 148, 152
Քրեֆս 139
Քրեֆսի (վայրի) հունդ 105, 106, 109
Քրեֆսի (քրէֆսի) հունդ (ունդ) տե՛ս հունդ քրեֆսի
Քրէֆս վայրի 123
Քօշի արոյն տե՛ս քաւ(օ)շի արոյն
Քօշի լերդ տե՛ս քաւ(օ)շի լերդ
Քօշի ճրագու տե՛ս քաւ(օ)շի ճրագու

Օթխօր տե՛ս աւ(օ)թխաւ(օ)ր
Օշակ տե՛ս աւ(օ)շակ
Օշինդր տե՛ս աւ(օ)շինդր
Օշնան տե՛ս աւ(օ)շնան

Ֆախրի հութ 118
Ֆարխութզին 103, 104
Ֆարպիուն 126
Ֆռասկցի սպիտակ 159

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ *(բնագիր)* 35
Հավելված՝
Ի գրաստուն բժշկարանէն փոխած 165
Բառարան 170
Лечебник лошадей (резюме) 250
Ցանկ ձիան և այլ գրաստների հիվանդությունների 261
Ցանկ դեղորեից 264

ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ
ԳՐԱՍՏՆՈՅ (ԺԳ ԴԱՐ)

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր Ա. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Ջ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ

ՎՖ 04767 Պատվեր 1034 Հրատ. 5116 Տպաքանակ 1000
Հանձնված է շարվածքի 22. 08. 1979 թ.: Ստորագրված է տպագրության. 29. 05. 1980 թ.: Տպագրական 17,0 մամուլ+2 ներդիր, պայման. 15,81 մամուլ, հրատ. 14, 73 մամուլ: Թուղթ № 1, 60×84 1/16: Տառատեսակ՝ «գրքի սովորական», տպագրություն բարձր: Գինը 2 ռ. 55 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, Барекамутян 24-г
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան
Типография Издательства АН Арм. ССР, Ереван, Барекамутян 24.